



ԵԱՀՈՎՈՐ
ԽԱՆՈՒԹՅՈՒՆ





ՍԵՐՈ ԽԱՆՉԱԴՅԱՆ



ԾԱՌԾԻ

Վ Ե Պ

ԵՐԵՎԱՆ «ՆԵՐԻՐԻ» 1991

ԳՄԴ 84 Հ 7-4

Խ 240

ԽԱՆՁԱՂՅԱՆ Ս. Ն.

Խ 240 Ծուշի: Վեպ (Սիրո Խանզադյան). —Եր.: «Նախրի»,
1991. — 480 էջ.

Վեպում պատկերված են 18-րդ դարի վերջին քառորդի Արցախ-
Ղարաբաղյան իրադարձությունները, թե ժամանակագրական, թե
ազգային-ազատագրական պարբարի առումով «Ծուշի» «Միջթար-
Մայրապետի» շարունակությունն է:

Մերօրյա արցախյան շարժման արմատները շոշափելի են պատ-
մական անցյալի այդ շերտերում:

4702030201 ()
Խ 765 (91) 91 7.91

ԳՄԴ 84 Հ 7-4

ISBN 5-550-00581-6

© «Նախրի» հրատարակչություն, 1991



Ճշմարտությունը չի կարող ծածկված
մնալ և լույսը գիտելի տակ լինել:

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱԾԻ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԳՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Աւպատ տիկինը ետ քաշեց իր ընդարձակ վրանը կիսող
ոսկեճամուկ վարագույրը: Կարծես բաց արեց երկնքի զըռ-
ները: Համաշշեցա նայեց ինձ, խոսեց խոնարհ:

— Օ՛, դժբախտ Գոհար, մատաղ միանձնու՞ի, համեցիր:
Գոհացա անձիդ գալստյամբ:

Ես եռմեռացի ինքս ինձ՝ ե՞ս եմ դժբախտը, թէ՝ դու, գե-
ղեցկության անհծված խտացում, որ իմ հեռավոր, մարած
օրերի պատկերն ես:

Նա ոսկեթել հյուսվածքով բարձեր դրեց տապանակ գոր-
գին:

— Սո՞ւրճ:

— Գինի:

Վրանի մի անկյունում մեղմ կրակով խեժ էր խնկարկ-
վում: Երկի ինչ-որ թափառական աղթար! էր վառել: Սայի-

1 Աղթար-գրքաց:

սամկ գինի բերեց կավե անոթում, երկու գալաթ՝ սկսուանդի
վրա՝ զիզները արևի լույսին երկարած կարապներ։ Սփռոցը
դժուարած կաշի էր։ Հայը գինին պահում է ժժումբով կամ
ճարպով թրծած կարասում։ Վրանի մուտքի եզրերին հանգ-
չում էին մետաքս ոսկեկար, ողորկ զիպակներ։ Ասպապ
տիկինը ինքնավատահ ու համառ էր։ Երկու տարուց ավելի
է, նա թափառական է, ոչ իր օրինավոր ամուսնու ծոցում...
Եուն էլ չէր ապրի նրա ամուսնու հետ։ Ասում են նրանից
կզարսի գարշ հոտ էր գալիս։ Շամախի քաղաքի պարոնտերն
էր։ Թուրքացավ։ Գեղուղեց ահեկինը սպանեց նրան ու փախավ։

— Չե՞ս տենչում Շամախին։

— Ո՞ւ։ — Տիկնող աշքերը կայծ ավեցին։ Թե կպշեն վա-
րագույրներին կամ իր մատնեհատած ապարոշի շղարշին,
կայրեն։

Ես եալենագետի հովտում եմ։ Շամախին հեռու է այս-
տեղից։ Պետք է ձիգ լարես ահեղ լեռների ճեղքերում, և, եթե
ձիգ լճարի, երկու օրում կհասենս Պարտավ, այնտեղից մի
օրում։ Եիրան, ապա ևս մի օր հետո ոտք կդնես աստծու
մորուք ահեղ կավկավ լեռան ստորատը, դողաս նրա սառցե
կապաններում ու նորից երկու օր իջնես գեալի գաշտ։

Կրկնեցի՝ չե՞ս տենչում Շամախին՝ բույնը քո։
— Ո՞ւ։

Նրա «ոչը» «այո՞» ժայթքեց։ Ա՛խ, դո՞ւ, գեղեցկությամբ դժուախատ։ Բորբոք են հոգուդ ժայթքերը։ Քո իզությունը որձ է
որոնում։ Դառե՞լ է։ Դառե՞լ է։ Եոր ամուսին ունի

— Ինձ դողացավ։ — Բքելու պես պողները ծոմռեց նա,
որից ավելի կախարդող գարձավ։ — Ինձ բռնարարելով՝ լը-
կեց... Ապա ուրացավ իր հայությունը։ Ես սպանեցի նրան
ևս հիմա ընդամենը մի բող եմ։ Բո՞զ եմ, ով ուխտեալ միանձ-
նում, օ՛, մայրապետ դժբախտների։ Բո՞զ եմ...»

Ես միիթարական ոչինչ շունեի ասելու։ Իսկ նա զոշեց։

— Ես նպատակ ունեմ։ Ես ո՞ւխտ ունեմ...»

— Ուրեմն, սատակի՛ր, — հանդարտ ասացի ես։ — Քեզ
Ժայռից ցած զցիր։

Տիկինը բրդաց, որից ալիք տվին վրանի մետաքսները,
Եւ նուրբ են այս անշունչ գոյությունները։

— Տառապանքից զերծվելու դյուրին միջոց ես առաջար-

կում, օ՛, կուսանաց վանքի միանձնու՞ի: Հասկացիր, իշխանու՞ի Դոհար: Ես նպատակնե՞ր ունեմ... Երթառ բարով:

Ես հանեցի կուսակրոնիս ուրարը, մյուս սևերը, ու հագահարյուրապետի այն զգեստս, որով մտել եմ Մարադայի ճակատամարտ: Ե՞րբ էր: Երեխ աշխարհի արարշության առաջին օրը:

Դեռ չէի մոտեցել ձիում, Ասպար տիկինը տագնապով ասաց.

— Աչեղ բուք կլինի: Գուցե շմեկնե՞ս:

Դյխիս քաշեցի հարյուրապետի մորթե ցցուն գղակս: Դրա վրայի արծիվը, որ Հասան Զալալյան տոհմի զինանիշն էր՝ ճանկերում էր գայլ, կարծես սարսուաց բրի մոտենալուց: Այդ պղնձե տոհմանիշը Սաթենիկ տիկինը նվիրեց ինձ, երբ...

Հորիզոնը մայրամուտի էր՝ թանձր կարմիր:

Ուղեկիցս, որ նսայի բեկն էր քաջուղեջ պատանի, բռնեց ասպանդակը:

— Երկինքը արյուն է ուզում:

Երկինքը ոռնաց: Մոռվ լեռան գագաթները ժայթքեցին: Է՛, հայոց լեռներ, մինչև ե՞րբ զղրդաք իմ զլխին:

Մտանք անտառ: Նսայի բեկը բոխի ծառից երկու բարակ ձող կտրեց: Կարող է բուքը մեզ ծածկել, Եթե այդպես, ապա մենք ցցած ձողերը կշարժենք, ձյան թմրերի տակից անցը կպահենք, որ օգ ունենանք:

Ետ նայեցի: Ասպար տիկինը երեսը շրջել էր կողքին կանգնած նոր ամուսնուց, նայում էր իմ հոտեից: Ի՞նձ է երանի տալիս: Ինչո՞ւ է՛, մի քսան տարի առաջ տեսնեիր ինձ, գառնուկս: Ես շխզճացի նրան՝ ոնպատակ ունեմք: Ի՞նչո՞ւ Մեր նպատակը մի է: Ի՞նչո՞ւ 0°, Միսիթարս... 0°, սպանված տերս, մորթված աստվածս: Բայց ես էլ քեզ հետ էի, չէ՞: Քո սովորը, քո ոտքի փոշին: Ե՞ս... Եզ մենք փրկեցինք Հայոց պետական տունը՝ Նախիջևանի հոգտից մինչև Կուր զետի Գանձակը: Կա՛ Հայաստանը: Այս, կա անընկում ու զե՞ւ: Կա՛: Ուրեմն դու էլ կաս, Միսիթա՛րս...

Ես շվատարանեցի Ասպար տիկինոցը՝ «բո՞ղ եմ»: Հրաշը է՛ բո՞ղ եմ»: Ի՞նչ որրություն:

Անտառից դուրս եկանք: Նսայի բեկն ասաց.

— Մեր ճանապարհը պիտի շեղենք:

— Դեպի սարահա՞րթ:

— Դնալի ձորը: Հեռան ուսովն անցնելը խելահեղություն է, սրբակրոն միանձնունքի: Դեպի ձորը:

Բուքը մրգկում էր: Այսպես ապականեալ եղավ աշխարհա ամենայն: Ծ, շեղած տեր, օ՛, ուրացող տեր, զութդ համայն արա, եթե նման բարիք ունես: Դու նորեն զարթնեցրիք ոհմակները Արևելից ցեղերի գեպի աշխարհն Հայոց: Ամաշի՞ր արարքիցդ:

Բուք է, սարսափ: Մտքիս մեջ շիկացած մեխ կա խրված՝ Ասպար տիկնող ահեղ հայացքը՝ առանց մեղքի, էզ հովազի նրա ձայնը: «Ես նպատա՞կ ունեմ: Սակայն ի՞նչ, ի՞նչ...

* * *

Բուքը մեզ քշեց լեռներից ցած և լուսաբացին մենք՝ ես ու պատանի նսայի բեկը մեզ գտանք Հակարո գետի հովտում, որ իմ հորենական ժառանգության ծայրն է: էհե, մեզ բնդունող կա, հա՞:

— Ողջույն, Մելիք-Օհան իշխան:

Զագեձորի տերը ցնծաց ձիու թամբին:

— Դիզակի դաշտը երևաց...

Ես սարսուով նայեցի փետրվարյան լուսաբացից շառագունած անհորիզոն դաշտին: Վատա՞նգ կա:

— Թագրիզից եմ գալիս: Իշանը Դիլահորդի կիրճով: Արաքսը տակավին չի պղառովիլ, անցանք ոտքներս ժամկետից ձիերի թամբերին: Վատա՞նգ կա:

Հակարո գետի եղեղնուար նոսր կանաչել է: Ծեպոի տերեները պոկվել են հողից, ավլախուար ցնծում է, երիցուկի զլուխը թեթե ինչ ճերմակել է: Գարունը մեր այս հովտում շուտ է գալիս: Երկնքում կռունկների երամ երևաց, որ շվում է զեպի Հայոց աշխարհի հովիաներից: Ժայռերից արծիվ ու բազե են նայում կռունկներին: Գիշատող հայացքները կիրք, որ իր բնույթով նաև մարդկան է՝ հոշոտել միմյանց, ոչ համակերպելի, այլ՝ ամբաստանելի— Ծ, մարդիկ, իմաստուն եղեք և ոչ վարկապարազի անեք խնդրի վրայով: Թող ձեր մեջ արթուն լինի աղղեցությունը հոգվույն, որ կարող է իմաստուն դարձնել անխելքին՝ և անբանին՝ բանավոր: Հաս-

կացեք, ամեն ինչ ըստ կամաց հորինվի և կազմվի՝ թե երեւ-
գույթը և թե աներեւութը։ Անշարժությամբ դատեցեք, որ
ինդրողին հասցնի խնդրելիքը։ Խոկացեք ինչպես մարդարեն
Մովսես՝ որդին Խորայէլի։

Դժվարով սթափվեցի գրոց խրատերի մշուշից։ Դարձա
կողքովս ձին բշող Մելիք-Շահն իշխանին։

— Նոպատակը։

— Թափրիզի գաղտնաբաններում ինզիզի մարդկանցից
զինք առաջան, նաև փամփուշտ, վառող։ Հաջողեցի։
Ռուբ կհրամայես, իշխանունի։

— Տող։ Դեպի Տողարերդ։

Ես տեսա, որ իմ կես խոսքը հրամանի ուժ ունի, ինչպես
տուազ էր։ Տեսնում եմ Զագեձոր գավառի տերը զանազանել
գիտի պիտանին խոտանից։ Հաղթող զորապետ է՝ հսկայաբար
քաջությամբ։ Դիտեմ, այս իշխանը մերժեց նրանց, ովքեր
փոխանակ զինքն իրենց աստվածք դարձնելու, գուստաններով,
վարձկաններով և հարճերով էին շատանում։ Եվ զրանից է,
որ հաճախ շարիքներ հասան մեզ ու կալան ամենայն աշ-
խարհ։ Այնքան էին հղվացել մեր նախնի իշխանները, որ
թշնամու ձայնը հալցնում էր նրանց, լուժանովում էին կորովի
ձեռքերը, կապարճի դոփյունն ահարեն անում։ Յուրաքան-
չյուրն իր աշքի առջև իր օրհամն էր տեսնում, սակայն բթա-
նում էր որովայնի թանձրությամբ։

Օրը գնաց մթեց։

* * *

Լուսաբացին դիմ առանք Դիզափայտի ձյունած լիռնա-
ժայուերին։ Եսայի բնկը ձին մղեց մի նեղ ձորում կծկված ձիթ-
հանքի երախը։ Կազնեփայտն ծանր գուռը ճռնշաց։ Նոր կա-
լաս արած հալածուկի թանձր բույր կպավ քթիս։ Ես իշա-
թամրից, շոյեցի ինձ ուղեկցած տղայի երեաը։

— Բարուրիցդ եմ ճանաշում քեզ, Եսայի բեկ։ Խիզախ ես,

Նա ձեռքերը ողջույնի կից արեց։

— Օ՛, Գոհար տիկին, օ՛, սրբակրոն միանձնունի, ծա-
ռադ եմ։

Նստեցինք զետենին փռած զորգերին։ Եսայի բեկը Արեկ-

յան Հայաստանի իշխանապետության գերազա՞ն իշխան Մելիք-Ալվան իշխանի որդին է։ Նա խորոված խոզ դրեց մեր առաջ։

— Մեր ժմակներում սրանք վխտում են արտամկների պղիս։

Քահանա չկա, որ սեղանն օրհնեի։ Թմծիծաղեցի՝ ի՞նչ բարի բան եմ գտել այդ օրհնանքի մեջ, որ ուղում եմ։

Մելիք Օհան իշխանը կարծես կռավեց։

— Օսմանլու սուլթանի սերասկեր Արիֆ Ահմեդ փաշան, լսել եմ, գալիս է մեր Գանձակ քաղաքի վրա։ Վաթուն հազար զորքով։

Կրկնվում է այն, ինչ եղավ բանն տարի առաջ։ Քահան տարի առաջ Հայաստանում կործանվեց սուլթանի բանակը։ Հիմա ի՞նչ կլինի։

— Իմացեք, — խոցեց իշխանը։ — Հայոց աշխարհը նորից գտանգի մեջ է։

Եսայի բեկը, որ թեթև ինչ գինով էր, երգեց։

Ինչ կլինի ինձ ձեր տուն տանեա,
Բոլոր նոնքը ծացնդ հանես,
Գիշի խմենք՝ ահուշ անես;
Մեկ խմի, մեկ տուր նազան,
Իմ նորդիւն,
Նոր սիրելի

Այս երգը խիստ հարազատ է ինձ։ Դեռ օրորոցում էի, որ
դա թափվեց հոգուս խորերը։ Իմ մեջ կորած զգացմունքներ
արթնացան։ Այդպես սրտառաք երգում էր նա... նա։ Գե-
րեզմանը հիմա կանչում է։ Միայն մարմինը... Վեր կացաւ։
— Մեկնեցինը...

* * *

Անտառի խորքում նորից սուզվեցի այրող հուշերի մշու-
շը։ Երանի նրան, ով հուշ շունի, կամ շուտափույթ կսթափվի
գրանց մղձավանցից։ Դիզակի հարավային լեռնանցքի կղեր-
սուրում ինձ ընդառաջեց ինքը։ Հայոց պետության գերազա՞ն
իշխան Մելիք Ալվանը, հետք՝ ինձ ծանոթ ուս գնդապետ իվան
Կալաջինը, որ դեսպան էր մեր երկրում։

— Թթված ես, պոլկովնիկ: Ուրախ եմ նորից տեսնելով
ձերդ պայծառափայլությանը:

Նա ինձ գլուխ տվեց:

— Թթվածությունս երևի այս բարձրերից է: Սովոր շեմ:
Նկատեցի՝ ուսւաց կայսրուհու Հայաստանի ղետպանը
այնքան էլ զոհ չենք հանդիպելով: Մի երկու ամիս առաջ
գերազա՞ր ողջունալիր ընդունեց Պարսկաստանի գահակալ
Նազիր շահի ղետպանին: Ինձ ասաց: — Մենք հիմա երկու
ձեռք ենք բռնել՝ Հյուսիսի և Արևելքի: Գուցի թե երկուսն էլ
բարեկամ լինեն մեզ:

Տամարել է սերե աշխարհի տերերի միջից, ուժուացել է
անգթությունը, որից և ազգեր են դառնամա՞ն լինում:

Գնում ենք...

Գերազա՞ր զրեթե շեր խոսում: Ես նկատեցի, որ նա,
ինչպես մերայիներից շատերը հնում, իրեն պատրաստում է
հանգչելու մարտիրոսական մահվամբ:

— Մարդ եմ ուղարկել Արզում՝ սովորանի բանակը, —
ասաց նա: — Խոչա Արրաջամ Երեանցուն:

— Երրորդ ձե՞սքն ես ուզում բռնես:

— Քավ լիցի: Մուլթանի ձեռքը թունավոր իժ է: Մեր Կա-
րին-Արզում քաղաքում թուրք Արիֆ-Ահմեդ փաշան բազ-
մագունդ զորք է կուտակել... Իմանամ միտքն ի՞նչ է:

Ես հասկացա նրան: Նաև ճանաշում եմ վաճառական Ար-
րաջամ Երեանցուն:

— Ե՞ս է եկել:

— Տակավին ոչ: Հույս՝ կգա:

Արևի բոցը թրթուում է կաղնիների լերկ կատարներին:
Անցանք ահազին տեղ, խրվեցինք մասրենիների թփախճողքի
մեջ: Դառնացա՝ մի անգամ սաստիկ նախատեցի Արրաջամ
երեանցուն և անտեղի: Զհաշտվող բնույթ ունեմ ես... Զզըզ-
քացի: Չէ որ նոյն կոշտությամբ եմ երբեմն վարվում նույ-
նիսկ մեր ահա այս գերազա՞ր իշխանի հետ՝ քիչ մտերիմ,
շատ՝ խորթ: Ես ինքս իմ աշխարհն ունեմ, որ բնավ նման չէ
մեկ ուրիշին: Հորժամ ի նեղությունս արկանիցիք, համբե-
ցեք:

Ընդհանուպես Տող բերդավանին: Ես իմ ձին անփույթ
բոլորից առաջ մզեցի: Զիու վրա ես կատարյալ բռնակալ եմ

դառնում և այդ պահերին ինձնից առ են առնում շատերը։
Մի փորձիր լեռան ստորատից նայել Թիզակի այս Տողասա-
րին՝ վրան ահոելի բերդը, աշքերդ կշաղվեն։ Նաև մի նայեր
մի քիչ ձախում ցցված կատարին, վրան նորից բերդ՝ Գտիչ։
Գլուխսդ ցցելով վիզդ կղմբրի ու աշքերդ կուլ կգնան։ Թվում
է հենց հիմա բերդի պարիսպները, որոնք ամրախիլ փակել
են նեղուցներն ու կիրճերը, կիսուակվեն գլխիս։

Կարմիր հորիզոնի մեջ սև կայծակ շանթեց՝ արծիվ ճախ-
րեց գեպի անդունդ։ Արծիվը վերև չի բարձրանում, առ ունի

Սկսցինք գրեթե մազցելով բարձրանալ մեր իշխանա-
պետության մայրաքաղաք բերդը։ Ես պահեցի իմ նժույզը,
ձեռքով մոտ կանչեցի գնդապետ Իվան Կալաշկինին։ Ինձ հա-
մար բոլորովին անսպասելի սիրալիր նայեցի նրան։

— Դուք երեխ մեր Հայաստան աշխարհի այս մասերին
ժանոթ չեք, այսու, ձերդ... .

— Ես առաջին անգամն եմ Հայաստանում, — հեղ
ասաց նա։

— Այս բերդը հազար հինգ հարյուր տարի առաջ իմ հայ-
րենի Առանշահիկ նախարարության նստոցն էր։ Այս Տող ու
Գտիչ բերդերից էր արծիվի նման հրեն, մեր Մուղան մեծ
դաշտին հակում հզոր Եսայի Արք։ Մուսն իշխանը։ Հայերս
իշխում էինք Արաքսի դաշտ տեղերում երևացած արար զոր-
քերին զարկելու։ Զարկում էինք և զուրս վանդում մեր աշ-
խարհից։

— Ես, — ասաց Կալաշկինը, — զիտեմ, որ դուք ևս հզոր
զորապետ եք եղել, միանձնու՞՞։

— Հուշերով չեմ ապրում։ Ես միայն արձան կանգնեցրի
իմ գլխատված սիրույն, բայց ոչ ըստ նմանության Արիսո-
գոմյան քարի։ — Ես զգեստիս ատակ թաքցրած սուրս ցույց տվի
նրան։ — Այս է իմ գոյության արմատը, ոչ միայն զրոց պատ-
գամը։ Եվ եթե դու իրոք բարեկամ ես մեղ, ապա ապրենք կա-
տարյալ առաքինությամբ։ Եվ մի սպասեք, որ մեր երկնակամա-
րում երեա աստղը գիսավոր, իբրև նշանակ սրածության և
գերեվարության։ Լսեցի՞ք, թուրքը պատրաստվում է մեր զիմ
գալու։

Գտիչ վանքի զանգերը զողանշեցին հառաշանքի հանգով։

Գնդապի կալաշնիկով գդակը հանեց ու երեսին խաչ քաշեց, Ես ծիծաղեցի:

— Ո՛, պարոն, մի՛ լուր, թե զերմեռանդությունդ կմեզմիշարի կիրքը: Հարեցի ազգ ազգի վերա և թագավորություն՝ ի թագավորության, և այն ասաց՝ սկիզբն է երկանց: Մեր հայի խաչը վաղուց խոռով է մեզանից: Ո՛չ, ժամանակը մի հասել իր վերջին: Նեռի կարապետներն իզուր են գուշակում կորստյան որդու գալուստը...

Զայնս ներս առա, խորացա մեջս: — Մի մոռանաք ասուծու խոսքը՝ ես կենդանի մարդկանց աստվածն եմ, ոչ թե մեռյալների: Կնազգեաց ագռավներն ո՞ւմ են պետք: Դոնե հաշան կտուրին պազգած շների նման ու իրենց նախահոգակ հաշոցով ազգ անեն մեր ազգի կոչը՝ ելե՛ք, ելե՛ք: Մեր ձայնը հասցրեք ա՛յ, թեկուզ այս ժանդը երեսին գնդապնտին, որ միայն իր ժայիտով շկերակրի մեզ:

Մտանք բերդ: Գերագահ իշխանը ձին պահեց:

— Իմ ընտանիքը բեզ ընդունում է Արքահամի սահմանածով: Համեցիր:

Ծս նրան ոչ առանց հանդիմանության ասացի՝ մի մոռանա, որ քո իշխանունի տիկինը իմ հոր քույրն է: Դու այս ասա՞ քո հպատակների կիները հղի՞ն են, տեր իշխան:

Շատերը շշմեցին իմ այդ հարցից: Ես հրճվեցի: Արքայաձիրք գերագահը ամուր ու արդար ձեռք ունի և շի վարանի նույնիսկ որդուն կամ եղբորը պատժելուց, եթե հարկ լինի:

Իշխանական ապարանքի նախամիջանցքում, որ ընդարձակ էր, յոթ հզոր կամարներով պսակիչած, ալենրած զորապետեր և շատ կանայք, երես մի հիսուն սիրունիկներ երեացին: Հարե՞մ: Ո՛չ, ո՛չ, հայր բազմակին շէ: Կանայք հագնեցված էին հանդիսավոր ու շքեզ: Հատկապես իր սամույր մուշտակով, կանաչ մույկ-բոշերով, որ ընդելուզված էին արծաթե ձողիկներով, և գլխի բարձր թագուպսակով, առանձնանում էր իշխանի խանում-խաթուն տիկինը, որը, ասացի, իմ հորաբույրն էր: Նրա խոշոր, թուխ-մուր աշքերից կրակ էր թափվում կապայի վրա, որ պրկել էր նրա նազելի իրանը: Նրա մեջքը հմայքով սեղմված էր արծաթե թանձր գոտիով: Դրա բռաշափ ճարմանդին, որ փոքրափորի վրա էր, բանդակված էր կենաց ժառի արուական կլորը՝ պաղավորող նշանակը:

Մյուս զույգ ճարմանդները զուտ ոսկուց էին: Դա Արցախի տոհմապետ թագավորաշուր Եսայի Արու Մուսեի զինանիշն էր: Գիտեմ, Հորաքույրս հատուկ խնամք ունի դեպի իր այդ զոտին: Ես ձեռքերս տարածեցի ու ջերմությամբ ընդունեցի դեպի իմ գիրկը ճախրող Հորաքրոջս: Նա երեխայի պես լաց եղավ ինձ գուրգուրելով:

— Ա՛խ, հարազա՞տս, Հոգի՝ ս...

Առաջին գիշերն անցավ կերտվառումի մեջ: Ես հանել էի հարյուրապետի զգեստս, մտել իմ կանացի զուքսի մեջ: Դիտեի՝ այդպես ես կատարյալ Հրեղեն եմ և դրա բոցը իմ զլխի ապարոշ արտախուրակ մետաքսն փաթեթն էր:

Մելիք-Ավան իշխանը սուրճանդակներ հղեց Հայոց իշխանների բերդերը: — Փութացեթ Տող, ժամանել է ոռուսաց կայսրունու դիսպանը: — Մեկուսի ինձ ասաց: — Պարսից դեսպանին պատվիրեցի իր թագավորին Հայտնել իմ բարեկամության հավասատիքը: Պայմանն այս է՝ պարսիկները պետք է Վասպուրականի կողմերից զսպեն թուրքական վտանգը, իսկ մենք՝ մեր ուժերով դեմ կելնենք Արիֆ-Ահմեդ փաշային, իթե նա արշավի Գանձակի վրա:

* * *

Ես՝ տրուպ ու ողորմելի Արրահամ Երևանցիս, ես աշխարհը ոտքիս տակ տված վաճառականս, ահա Տող բերդում եմ, կանգնած ահեղ իշխանունի Գոհար միանձնունու դեմքիմաց: Կարինից եկել եմ Երևան, ապա Գեղարքունյաց լեռների ուսերով իջել Զբարերդ: Այնտեղ միացել եմ Մելիք-Աստվածապովի ու նրա եղբայր Ազամ բեկին ու եկել: Միանձնունին առաջինը դիմավորեց ինձ, Հայացքում խոցող հարց՝ ի՞նչ ես բերել, Հո՞ւյս, թե՝ անհուսության սարսափ:

— Թե աղետ է, — ասաց, — ապա լեզուդ սեղմած պահիր: Թե տագնապի աղաղակ ես բարձրացրել, փթած ակռաներգ մեկ-մեկ կհանիմ:

— Ա՛խ, իշխանունի, ա՛խ, միանձնունի ահեղ ուժ, Հոգիս առ...

Արրահամ Երևանցին բարձրահասակ է, վիզը երկար, ուղարի քաշքաղածությամբ: Աշքերը մանր են, — թափանցող,

կշռող։ Դրանց մեջ վաճառականի ամեն ինչ զննող շոշափուկներ են աներառույթ ցցված, սակայն ոչ խորամանկի։ Ո՞ւ... Քանի որ գերագահը զբաղված էր զորքով, ևս մենակս շոքեցի նրա բկին։

— Դու, խոզա Արքանամ, որ տակավին ջահել ես, տեսնում եմ՝ կշիռ բանող խելք ունես, թեև զլուխդ գդումի կերպ ունի ու մազերդ խոզանակ են։ Ուրեմն, դու, խոզա պարսն, դու, Արքանամ նախամարգարե մեր, հենց հիմա իմ առաջ բաց արա կարին կատարած այցիդ երեսներն ու զաղունաբանները։ Դե՛...

— Ա՛խ, իշխանուհի՛, — հառաշեց նա։ — Ա՛խ, սրբակրոն միանձնուհի՛, մի՛թե դու զեռ լես մարել քո միշից զորականի կրակը։ Ինչ տեսա, թշնամին շտեսնի։ Բավ է, սպառսպուռ է՛ Ո՞ւ, ո՞ւ...

— Բայց դու մի՛ զլանա օգտակարն անելուց, մարդ։ Կարծես առաջին անգամ պիտք է փետրագրիշ առնես ձեռքք վանքի մանուկ սանի պես ու լեզուդ հանես ատամներիդ տակից։ Փորձված զայլ ես։ Գիրդ կարգացել եմ, էն, որ հյուսել ես տասը տարի առաջ։

Ես անզուսպ ծիծաղեցի, որից ահ զգաց լավ մարդը։ Հիշեցի, նա իր այդ մի մատյանի զլխին վարժ զրել է։ Աղալում եմ շաղարտել աշխատությունս, քթով շինչեք և հոնքով շպոտեք անուսմունք գործիս համար։ — Հենց այդպես։ Նրա հաստ շրթունքները, որ իրար վրա տափակած երկու գորտ էին, շպալացին թաց։

— Է՛, հա՛, զրել եմ... Որ ի՞նչ։

— Հիմա էլ շարադրիր կարինում տեսածդ։

— Տե՛րը կամեսցի։

— Ե՞ս կամեսցեմ։

Նա շարողացավ օձիքն ազատել իմ ճանկերից։ Մի շարաթ հետո զրոտած թղթերի մի տրցակ զրեց առաջս։

— Հրամանդ ի կատար արի, քույր իմ։ Համեցիր...։

Ես սկսեցի լափել մելանի բույրով զբավող զիրը։

Աշնանամուտի օր էր։ Գերագահ իշխան Մելիք-Ավանն ինձ իր սեղանակիցն արեց։ Ես փրկեցի տկի պես, որ փշում են։ Երբ ես հերթական գավաթն էի տանում զեպի բերանս, նա ձեռքիցս առավ։

— Վաղը կմեկնես Կարին:

Իմ աշքերն իրենք իրենց չովեցին: Կարծես խոթացա, մշուշվեց քավարանն այս աշխարհաբույժ: Գերազահը թափահարեց ուսերս:

— Իմացիր, խոշա Արրահամ, սուլթանի երկրում նոր ծնված մի ուղի մասին անգամ պետք է տեղյակ լինեմ ես: Պիտի մեկնես:

— Ուրիմն, ասացի, աշխարհը երեք կողմ ունի:

— Չո՞րս, — ուղղեց նա: — Չորրորդը մենք ենք: Մենք երեք ձեռք ունենք, մեկը, ոչ ողորմածությամբ հյուսիսին պարզած՝ այլ՝ վատաշության ուժով, մյուսը արևելք՝ Պարսից կողմը, ծովուելու ամեն կերպ, երրորդը՝ սրով է՝ մեր ազգի Հոգեառ Օսմանլուի գեմ: Պա՞րզ է:

Տողի բերդերի վրա իշել էր ոչ սև, այլ կապույտ գիշեր: Դա էլ հետպհնտե սպիտակում էր լիալուսնի բարձրանալով: Ես մեկնեցի Տաղից: Ես գողացի՝ ըմբռնելով ինձ սպասվող վտանգները: Աստված, այս ի՞նչ պատիժ հղեցիր ինձ վրա՛ Զի՞նչ տաց տրիտուր Տեառն ընդ ամենի, զոր և ետ ինձ: Գուցե թե կորչեմ Կարին-Արզրումի ճանապարհին, չիմանաւ լով էլ, թե ում ավանդեցի իմ Հոգին:

Քարավան կազմեցի: Հեծա ձիս: Երեք ձեռք խաչակնքեցի ինք, բնավ հույս լուսնենալով, թե դրանով կթեթեացնեմ իմ վիճակը: Քարավանիս գլխին օրն ի բուն պտտվում է աշնան սև փոշին: Բեռներս կաշի է, կտորեղեն, մետաքս, նաև... Նառ ուղտը ոունգերը փեռում է, արցունքով մաքրում երկար թարթիլների վրա նստած փոշին, մեզ առաջնորդում անժայր ճանապարհներով:

Սրմանց լեռների ուսերին սառցային մշուշ փաթաթվեց մեզ ու ես զգացի, որ ատամներս կափկափում են: Կարնո մեծ դաշտում ինչ-որ շափով տաք էր: Սպիրի ու Թորթումի լեռները ճերմակ ապարոշներ էին հագել: Խաղաղ Առին բարձրավանգակի վրա միաշարք կանգնել էին տասներկու վանք, որոնք, ինչպես ինձ թվաց, մեկը մյուսի ետեւց փախչում էին աշարեկ: Սառցն շերտերով խտղտում էին Դերջանի ու Մանաղի լեռնաստերը: Նրանց ծալթերում ծխում էին անհամար հայոց գլուղեր: Զմայլվեցի եղեգնութի ասեղնագործ կանաչ շապիկի մեջ կապտին տվող Մոր լճով:

Անցանք Անահիտ շաստվածունու մկրտարան Եփրատ գետը, որ ծով-ժամկալ մեկնվել էր զեպի Հայաստանի հարավը: Ողբաշմ զբեզպ...

Կարմիր, կապույտ, ճերմակ հափրուկ, մրտոց, քաջվարդ, պուտ ու էլի-էլի ժաղիկների կղզյակներում արքայաշուր նազում էր հողը զուգած աղբերաց արյունը:

Եղանակը պայծառ էր, գաշտը ակնահաճութեամբ... Կարնո դաշտը...

Մոր լճի հերձված կապույտում լողում էին երեխ հենց երեկ հյուսիսից այստեղ էջք արած անհամար կարապներ՝ ճերմակ առագաստներ: Քուրը հերկում էին նաև մոխրագույն սագեր, կարմրակուոց բաղեր: Արռաները երեմն սուզվում էին ջրի մեջ, ապա թաց թերթը շողացնելով արևի տակ՝ ճախր անում...

Կարնո դաշտը... Այստեղ մեր հայն ապրել է արարշության օրից, իսկզբանե, և ոչ այնքան ճեռքով, որքան իր սրտի ելուստներով կենդանացրել այս հողը...

Քանի օր է, քանի շաբաթ: Այս, քանի-քանի վտանգեր անցանք: Քարը քարին կերա՞վ... Բայց համբերիր, տառապած հոգի իմ, աստված մեծ է: Ահա, վերջապես երևացին կարին-Արզուումի մոնշացող պարիսպ-ատամները, բռունցքրունցը աշտարակները:

Կարծես մուկը կրծած երեսով մի թուրք սիփահի լավիւրիեց մեզ:

— Ի՞նչ մարդ ես, էլ...

— Արիֆ-Ահմեդ փաշայի կունակն եմ: Թող մարգարեներկար պահի նրա զորությունը:

— Ա՛...

Քարտանս մտավ քաղաք: Խոզի երամ-զորախմբեր էին խլբառում նեղվածք իշխանատների, խաչ ու կիսամահիկ եկեղեցիների ու մեջիդի բակերում, նեղ, կեղտակուր փողոցներում, հայի, հույնի, քնուդի տներում:

Այսպես՝ ութ օր:

Լույսը մութից նոր էր զատվում, երբ կրպակիս առջե ութ, թե ինը հեծյալ ենիշերի տնկվեցին:

— Դո՞ւ ես խոզի թաթ էրմենի գլավուր Աբրահամ խոշան:

— Ե՞ս եմ, — թուքս բերանումս չորացավ:

Միջնաբերդը բարձր է, պարիսպներով պնդած: Ահանի

քարազանգվածը մուլ ակնախռովշներով բվեճների դորությամբ ահեղ իշխում էր քաղաքի վրա:

Զիերից իշանք ու մտանք խաշայի Մովով Սարայ պալատը:

Սանր դռների մոտ կանգնած էին երկու պահապան ասկիյար՝ թրերով ու հոլանդական ատրճանակներով: Դրվագքանդակներով մուտքի երկու կողմին պղնձե երկու աշտարակ էին ցցված: Դրանց մեջ ևս ասկյարներ կային: Կարճահասակ, շարժուն աշբերով սենեկապետը քրթմնջաց:

— Ալլահի շուքն ընկել է քեզ վրա, խոչա Արրահամ Երեվանցի: Պատերազմի ենք Հաղովում: Կաշվի ու մահուդի զինը երկինք է թառնլ: Մարդ ուզում է Հարազատ զավակին էլ մաշկի, կաշին ոսկի շինի: Հի՞: Հի՞...

Թուրք ցայտեց իմ կրծքին անատամ բերանից: Ինձ ընդառաջեց զեպի պալատի խորքերը: Միջանցքներում այնպիսի լուսիլուն էր, որ եթե ճանձ տզար-բզար, կընկալեիր անմնացորդ: Միայն երկու տեղ բարձրաստիճան զորապետեր նկատեցի: Դուրս էին գալիս մթին մեղքերից ու ստքերի թաթերի վրա քայլելով, հեռանում: Սենեկապետը ինձ խօթեց մի փոքր սրահ: Պատուհան շկար: Մի-մի փթանոց երկու մոմեր մշուշել էին պատերը: Սենեկապետը նորից փուլնեց:

— Կաշվի մի կտոր-հատին քատնհինդ դրամ կուզես: Ձեր հայերը քուղներից պակաս պլոկող չեն: Մեր ողորմած փաշայի համար միննույնն է, թե ինչ մայր է ծնել վաճառականին, միայն թե շահ ունենա ձեզ նմաններից: Առևտուրը աստված շունի, ազդ ու ցեղ չի ճանաշում: Քանի դրամ մի կտորին, հասկացա՞ր, խոչա Արրահամ էրմենի: Ամեն կտորի երկու գրամն ինձ կտաս: Կտավի զինն էլ բարձր է: Դնում ենք պատերազմի: Բանակը տկլոր է ու բորիկ: Ա՛խ, ա՛խ, շատ փող է քամու բերան ընկնում: Ա՛խ, ա՛խ... Ուրեմն, երկու դրամն իմ բուռը պիտի սահեցնես, լմուանաս, էրմենի: Էլ ի՞նչ ես բերել:

Ուրբից-գլուխ դեղին հագած մի պատանի սպասյակ երեւաց, հինայած հոնքերը ձգմգեց.

— Իմ տերն սպասում է խոչա Արրահամ էրմենիին:

Մանր դող անցավ մարմնովս, բեղերիս ժայրերն ընկան, շնաշարիս վրայով կարծես մրջուններ վազվղեցին: Սպա-

սլակը բաց արեց վարագույրներով ծածկված մի դռւու կու-
րացա լույսի առառությունից: Եռևէս բռնվեց:

Օդը հեղձ էր: Երեսնիվայր փովեցի սպիտակ թաղիքի
վրա: Մի կերպ նշանաբացի ոսկեթել պատմուման հագած Արիֆ
Ահմեդ փաշային: Մի փորբ էլ շրեխոք մոտեցա դեպի նա,
դեպի նրա կանաչ կոշիկները: Փաշան ձեռքով նշան արեց,
որ ստրի կանգնեմ: Ես միայն մեջքս ուղղեցի ու գլուխս բարձ-
րացնելով՝ մնացի ծնկած, ինչպես սրբապատկերի առաջ:
Գետք է ժուժել, տոկալ:

Զիային գլխով, երկար բեղերով, ժանգագույն հոնքերով
փաշան խռուեց մեղմ:

— Անվտանգ անցար ճանապարհ, խոշա:
— Ալլահին փառք, — ասացի հեզ: — Անվտանգ է երջանիկ
սուլթանի աշխարհի ամեն անկյունը: Որտեղ աստծո փոխ-
նորդ սուլթանն է, այնտեղ արդարություն է ու երկրպագու-
թյուն: Մի ուղարի մազ էլ շկորցրի ճանապարհին: Եկա քո-
րարի երեսը մի անգամ էլ տեսնելու, հզոր փաշա, համբո-
րելու քո խնկաբույր ստքը:

Համբուրեցի թաղիքը, բորիկ ստքերի համ զգացի:

— Բերածդ կաշին, կտավը, մահուղը ևս կառնեմ, — ասոց
փաշան: — Գի՞նը:

— Փեշքեշ է...

— Գի՞նը, — փաշայի ձայնը սպառնալի մղվեց իր գիշա-
բույն կրծքից:

— Քանչինգ դրամ՝ կաշվի հատին: Մահուղի շափը՝ լոթ
դրամ, ողորմած փաշա, կտավինը՝ ևս: Չնշինն եմ ուղում,
ինքդ գիտես: Ճանապարհները, մարտերը...

Փաշան լռեց երկար: Իմ հոգին հասավ կրունկիս՝ ի՞նչ է
վճռում արևակոծ աշբերով, բազեկտուց քթով այս թուրքու-
Ահը, սակայն, չէր ընկնում ինձ, ոչ էլ ինքս ինձ խղճում էի:
Համոզված էի, որ ինչպես փոթորկված ծովի ալիքներն են
խորակվում հենց իր՝ ծովի մեջ, այնպես էլ այս բռնակայի
բարկությունը կփշրվի իր իսկ սրտի մեջ: Ես կատարում եմ
հայրենիքին հրամանը: Արժեք շունի իմ կյանքը նման պա-
րագայում:

Փաշան հարցուփորձեց Պարսից աշխարհի մասին: Բաներ
առացի, որոնց մեջ վտանգ չկար անձիս համար:

— Նադիր շահը սարսափի մեջ է, ողորմած փաշա: Նա հույսը զբել է ոռուների վրա: Մարդ է ուղարկել Ռուսիո կայսրունու գույքը, թե ինչ է նպատակը, մարդարեի մոր ծիրանի գոտին վկա, չզիտեմ:

Գոհ եղա, որ խորամանկեցի: Դե, պետք է թուրքերի բարեւթյունը շրջել պարսիկների վրա: Փաշան հոնքը կեռեց:

— Դուք էլ եք ընկել ոռուաց կայսրունու ոտքերը, Հայեր: Զեր մարդիկ հաճախ են ծեծում Պետերպուրիսի գոները:

— Դա իմ իմանալու բանը չէ, մեծ ու հզոր տեր իմ: Ես այն աշխարհի ծառան ու հպատակն եմ, որտեղ իմ բարավանեն ապահով է:

Փաշան աշքի մեկը թեթևակի կկոցեց:

— Ի՞նչ են մտածում ձեր Հայ իշխանները:

— Չխառնվել ոչ մի տերության գործերին, ապրել իրենց լեռներում:

— Զորք ունե՞ն:

— Ի՞նարկե: Արեւիքի Հայոց տերությունը կանոնավոր զորք ունի: Այդ երկրում բոլոր Հայերը զինված են: Հայ իշխանները, որքան եկատեցի, Համոզված են, որ բախտ կունենան շահելու բոլոր զորքած բարեկամությունը, փաշա: Փաշան հոհուաց:

— Իսկ եթե ես ալլահի ստվեր սուլթանի ամենազոր բաներներով գնամ Հայերիդ վրա՞:

— Քո կամքն է, ողորմած տեր:

— Եթե ներխուժեմ Հայաստանի Գանձակ ու Շամինը, որպեսզի փակեմ ոռուսի ճանապարհը զեպի մեր աշխարհը:

— Դա ես բոլորդար իրավունքն է, ալլահի ստվեր փաշա, օ՛, մեծ, օ՛, իմաստուն: Ես ինչպե՞ս բոլոր ծառային անգամ խորհուրդ տամ: Բայց մի բան հաստատ գիտեմ, Հայերը կկովեն բոլոր գեմ... Գուցե այդպես, գուցե՝ ոչ: Ներող եղիր, բշպառ ինչ կարող է գուշակել:

Նկատեցի, որ նա հաստատուն վճիռ ունի՝ արշավել Հայաստանի հյուսիսը: Սթափիվեցի նրա ձայնից:

— Երկանո՞վ եկար, խոզա: Ի՞նչ կա Երևանում:

— Պարսիկ ավարառուները կողոպտել են Երևանա երեխը: Հաց չկա, ձեռւ ապուտ չկա: Ամեն ինչ խաները հափրշ-

արակել են: Արարատի աշխարհում սով է: Հայերը թռղնում են իրենց սուն ու տեղերը և փախչում, հեռանում:

Ահք բռլորովին հնուացել էր ինձնից, խոսում էի հանդարտ, նույնիսկ սիրտ էի անում մեկ-մեկ ուղիղ նայել փաշայի զար-հուր պատճառող աշքերին:

Փաշան ձեռքը մեկնեց գեղի ելքը: Ետ-ետ անելով հասա-գուանը ու գոււխ տալով շաւապեցի ինձ զցել միջանցք, սա-կայն մեխվեցի տեղս, լսելով փաշայի դաժան ձայնը:

— Չեր հայ իշխաններին հասկացրու, որ հեռու մնան ոռուանից ու պարսիկից, լընկնեն իմ ոտքերի տակ, կճզմեմ: Այսօր-վաղը ես կղնամ մարգարեի թշնամի ոռուաց զա՞ի վրա: Ով ընկնի իմ առաջը, կոչելանա:

Արգեն միջանցքում եմ: Սենեկասպետն ինձ տարավ իր կացարանը, հյուրասիրեց սև սուրճով, տպա խաշած լորի կերանք միենույն ամանից:

Երեք օր հետո ես իմ ողք ապրանքը հանձնեցի փաշայի սենեկապետին, գրամն ստացա, նրա բաժինը ավել ու շտա-պեցի վերադառնալ Տող:

* * *

Կացարանիս պատերը մոտենում են իրար՝ սպառնում անձիս:

— Արթնացե՛ք:

Քարե մուալլությունն իմ ճիշը ետ մզելով՝ փլցրեց հենց ինձ վրա:

— Ծպտակարն ես կատարել, Արքահամ եղբայր իմ, ո՛, խոչա պարոն, խիզախն ես: Եվսերիոսը թողեց պատմությունն իր և Թրոնիկոնն՝ Աղամի կերպից մինչև գալուստը Թրիս-տոսի և դադարեց... Դու՝ ես:

Այսպիս ասացի ես Արքահամ Երևանցուն: Նա մուալլեց.

— Իմ արածը, սրբունի, պարտիս շնչին հատուցումն է:

— Ժամանակի ամեն հատված իր եսն ունի, իր ոգին է ընդգծում, — սաստելով նրան՝ ասացի ես: — Մի՞թե այդպի-սին շէր ճշմարտության ողի Մովսես Խորենացին: Այդպիս էին Փավստոս անշառը, մյուս Մովսեսը, որ հենց մեր Ար-ցախի Կաղանկատութից ծագեց, և Կիրակոսը՝ Գանձակի

լույսն ու խիղճը, և էլի՛: Այդպի՛ս... Եվ դու, որ Օսմանի Նեռին տեսար քո աշբով, նրան լսեցիր քո ականջով, ընդունելի ես: Հազորդեցի՛ր տեսածդ գերազա՞հ իշխանին մեր: Մանրամա՞սն:

Արրահամ Երևանցին շնչաց հեզ.

— Ուժերս ներածին շափ:

Ես գնացի տիկնունի: Հորաքույրս խանդավառ էր իր բազում հյուրերով: Ավա՛ղ այդ խանդավառությանը: Անմեղ հոգի, իմացիր՝ թուրքը գալիս է: Չուզեցի աղարտել նրա լույսը: Նա վեհ էր, ինչպես շքեղ թիսմայրը՝ քսանմեկ ճռւակը հանդիսում:

— Ժամ է ապաշխարանքի, հորաքույր իմ: Բաց արա քսմառանի գոները, ինչպես բաց ես արել քո բարի սրտի փեղկերը: Սակայն միայն տիկնունի խնջույք կուզեմ, նվազաժուներն ու դուսանները՝ որձեր:

Ես իմ կանացի զուզսի մեջ եմ, ոչ թե միանձնուչի, այլ՝ իշխանական վաղեմի փառքիս հորիզոնում: Ոչ միայն զորական տղամարդիկ, այլև կանայք իրենց աշքը շեն կտրում ինձնից: Ավա՛ղ ասեմ քեզ, օ՛, կյանք իմ հանգած: Դե ո՞վ իմանեա, թե տիրապետող ուժիս հետ ես նաև դժբախտ եմ:

Եսայի բեկի հետ հորաքույրս Տող ժամանած իշխաններից պարարբութի հրավիրեց միայն վարանդայի մելիք-Հովսեփի ելլրայր Շահնազար բեկին, որ հազիվ քսանի մեջ էր: Ես նկատեցի, որ պատանի բեկը հմայված է հորաքրոջս աղջբեկանով, որի անունը Սոնա է: Նա այնպես էր նայում աղջկան, ինչպես կատուն կնայեր շարժվող տերեին: Ես փաթտթվեցի իմ այդ զարմուհուն:

— Ահա դու արդեն գրավչության կրակ ես, ինչպես աշեանը արոտից տուն դարձող երինջը, գեղեցիկ իմ Սոնա, անտառում մոլորված կիստար...

Զնեող նայեցի նրանով հրապուրված Շահնազար բեկին: Քարձրահասակ է, բարեկազմ, գեղն անխառն ու կորովի, թուխ հոնքերը սերտաճած: Երևում է՝ և բազուկն է ամուր և խելքը՝ ոչ սակագ: Մատու թափ տվի վրան:

— Դե, գե, վարանդայի որձածագ, դու քեզ բախտավոր դդու, որ մեր տակ ցանկալի հյուրն ես: Իմացիր, կայծակը

արծվին շի հարգածում։ Խիստ լինելը դյուրին է, գթասիրաց լինելն է դժվար։

Եանազար բեկը զլուխը խոնարհեց մինչև գետին։ Ես նկատեցի, որ նա դա արեց իմ նկատմամբ իր ահն ու առելությունը թաքցնելու մղումով։ Ես նրա հետ խոսեցի ավելի խիստ, և առ նախատելով։ Օ՛, այս ինչ ըմբռատ աշխարհի է կուտակված իմ մեջ։

Ողջ գիշեր խրախճացանք։

Երբ զրեթե բոլոր կանայք խննթացել էին պարից, որ նազելի էր, երգից՝ գայթակղող, նաև, ինչ խոսք, քիչ-միշ ու գինի խմելուց, և կանգնեցի մի աթոռակի, ձեռքիս արծաթե սկուտեղ։

— Հսեցեք, տիկիններ։ Զեր ամուսինների առաջ փակ պահացեք ձեր ծոցերը, եթե նրանց մեջ առ տեսներ թուրքից։ Հայոց մեր երկիրը ի սկզբանե, նոյնի աշխարհ գալուց սկսած Հայաստան է։ Առ այսօր աղատ ու ինքն իրեն է Հայաստան աշխարհի կնոք՝ Գուգարքի Բողնովուրն լեռնաճյուղերից մինչև Արարսի եղեղնուտները, Կուր և Արարս գետերի ջրախտոնուրդից մինչև Գոլդանի ու Երնջակի տափարակները։ Այս նա բաջարար պահում է իր ազատ գոյությունը, ինչն իրեն թի հարկ լինի, ձեր ամուսիններին մղեցեք մարտի։ Գերադասելի է ընկնել սուրբ Հոչակով, քան ապրել ստրուկ։ Այսուհետ ևս մենք մեր կրծքով պատենեց կկանգնենք մեր հայրենիքին։ Երբ մեկին ճշմարիտ սպասավոր ես, ապա մեկ ուրիշից մի երկնչիր։

Աթոռակից իջա, իմ ձեռքով ինձ համար գինի լցրի, խմեցի դանդաղ, թափահարեցի Շահնազար բեկին՝ կառշելով նրա հզոր ուսերից։

— Եթե դու զարտուղես հավատարմության շավդից և ցագացնես իմ զարմուհի Սոնայի քնքույշ սիրտը, նրա, որ քո կինը կլինի հենց այսօր, ապա... Այնպիս գործիր, որ քո բախտը լլու քեզ։

Նորից խրախճացանք բուռն։ Իմ մեջ մարտ կրակներ էին արթնանում։

Եահնազար թեկն ամուսնացավ իմ փեսա գիրազա՞ իշխանի դստեր՝ Սոնայի հետ։ Եկեղեցուց առն դարձանք պսակի արարողությամբ մաքրված։ Հուսինը ահուելի խոշոր է, որի գափայտի լեռների հորիզոնը՝ մուգ կարմիր։ Ինչ է, կոտրվել էր մեր այդ լեռների բախտի կուժը։ Երկինքը գալիս էր աներեսության աշխարհը կուլ տալու։ Ամեն կողմից զալիս էր աներեսության առաջոտ, որ մգռած էր։ Օ՛, ահավոր երկինքը, թե զուգեացիր, մարդ ոչ կարա մեկնեսցե, ամենայն շար խորհուրդ քեզնից է բխում։

* * *

Գերազա՞ իշխանը իվան Կալաշկինին ասաց, թե ինքը մեկնում է Գանձառար՝ Հայոց Ժողովի գումարումին, եթե կամենում է, ապա կարող է միահեալ իրեն։ Իվան Կալաշկինը համաձայնեց իսկույն։

Երկինքը պարզկա է։ Աստղերը, որ կարծես պոկվել են երանից, արտակարգ լուսավոր են։ Երբ հավաքվել էինք մեկնելու, ահսա, որ իշխանունի տիկինը խառնվել է։— Ո՞ւր է իմ զարմունի Գոհար միանձնունին։ Ո՞ւր է։— Սկսեցին պալատում ու բերդում ապարդյուն որոնել Գոհարին։

Լուսաբացը ոսկի էր ցնցուղում կոթող-կոթող լեռնեսի ուսերին։ Իմ մեջ ողորմելու բուն կիրք ժագեց՝ մխիթարություն քեզ, ո՞վ տագնապած երկիր մեր։ Բերդի կաշկառը բրբջաց թանձրամած։ Աստղը թերվել է զեպի արևմուտք։ Ավագը տեղ է ուզում, արյուն է ուզում ավագը։ Իսկ քամին արեի ժագի կողմից է։

Անսպասելի երեաց Գոհարը։ Միանձնունու սպիտակ կենզուղով էր, ոև ուրարով և էլի սեերով։ Երեկվա շքնաղ տիրուշուց, մյուս օրվա հզոր զորապետից ոշինչ շէր մնացել։ Հավաքվածներից ոմանք նույնիսկ երկյուղեցին՝ կախա՞րդ է։ Ես ավելի ծանր բան գուշակեցի՝ երկնային ողի՞ հայտնվեց։ Նրա սքեմը վանող էր, ծոված շղթայով երկաթե խալը՝ կարիճի շանչ։ Սկ սյան նման, իրրե երկյուղի երեսութ, նա մի փոքր առաջ եկավ։ Ես նույնիսկ ետ-ետ զնացի։ Այս, երեկվա հզոր զորականից միայն տիսուր փշրանքներ էին մնացել։ Նա կանգնեց ձիգ, խաշակնքեց բոլորիս։

— Օրհնություն որդվա Դավթի, Օրհնեալ, որ գայլը հանուն տեսան: Օրհնություն ի բարձունա... նա՛ էր, որ կենդանաբար աղբյուրի ջրի պես զովացնում էր տառապած աղպէս հայոց: Նա՛ էր... նա, որ նահատակվեց հօրս անե՞ր՝ դավաճանի ձևոքվ: Ճշմարտության համար մաքառոզերի մեջ հաղթող ախոյան էր նա: Փառքի համար չէր անում իր կոփվը, բանզի նա փառավորված էր աստծու և մարդկանց կողմից:

Ես հասկացա, որ նրա մեջ եռում է իր նահատակ սիրեցյալի հիշատակը...

— Մնացեք բարյա՞վ,— հանդարտ, բայց սահմանող ասաց նա:— Ոչ մեկդ լհետեւք ինձ: Ծ, տե՛ր, եթե անիրավ եմ խոսում՝ վկայիր, եթե ոչ՝ ընդե՞ր հարկանես:

Նա մռացեց զերագահ իշխանին, բայց ոչ ընդհուպ:

— Օրհնում եմ ճանապարհող, որ զժվարին է: Հավատացած եմ, հավատարիմ կմնաս մեր նախնեաց ավանդներին: Թող քեզ տեսնելով օսմանյան ազվեսն իմանա, որ հայոց արծիվների ճանկերից ինքը չի կարող ազատվել: Ո՞վ արքայաշուր իշխան մեր, սիրիր աստծուն, բայց արա այն, ինչ կամ ենում է անձու: Համբերությամբ զինվիր: Իշխանավորի ուժը նաև համբերություն ունենալն է: Բարեկամացիր պարսից հետ: Մեղք չէ միակամ լինել թշնամուդ թշնամու հետ իմացիր, զիվարեակ է նադիր շահի հոգին, նրա խորքերը մտնելուց զգույշ... Նրա աշբին շատ մի՛ երևա, սատանան երա նման է: Ամեն մարդ իր խաչն իր ուսին է տանում, իսկ մենք մեր մեջքին կրում ենք երկու խաչ: Կամքս է, որ ծաղկի հայոց իշխաններից միասնությունը և ես այդ ծաղկի պսակի վրա զերեղման գնաւմ:

Նա սասառդ հայացքով ետ մղեց դեպի իրեն բազեատարած դեպող հօրաբրոջն ու հեռացավ...

1744 թվականի գարնան սկիզբն էր:

* * *

Հասանք Գանձասար: Ես համբուրեցի տաճարի քարենշխարները: Հսկա կազնիների թաց ստվերները երկարում էին դեպի տաճարի ավագ դուռը, ասես այնտեղ ապաստան

գտնելու: Մտքիս անմեղ զուլալը պղտորվեց Արիֆ Ահմեդ փաշայի ահեղ երևույթից:

— Լաց ընդ լացողս, այսպես առե մարդարին Պավղոս: Ես՝ Արրաջամ խոչաս, ես՝ Արրաջամ Երևանցիս մենակեմ զգում ինձ: Գիշերները հանգչում եմ սառը խցիկի շոր տախտակների վրա: Կողերս քերվում են, կարծես շուն է կծոտում: Մշուշի մեջ տնկվում է Արիֆ Ահմեդ փաշան: Արթնանում եմ սարսափով, իմ ահը խտանում է: Ես մենակ եմ: Ավաղ, զրավշության ոգի Գոհար միանձնուցին, գոնե այստեղ լիներ, որ հոգուս վրայի ուն շերտը ճեղք տար՝ լույսի համար: Զանձրույթը սպանիլ է:

Տաղտուկը ցրող միտք կայծակեց մեզս: Չթրչվող մախաղիցս հանեցի իմ նշխարարան մատյանը, որի խշշացող թերթերին շարահյուսել էի հենց երեկվա փոթորիկների ոգին: Սև մելանը դեռ բույր ունի: «Թվին ՌՃՇԴ», ևս մեղսամեծա: Սա ե՞ս եմ: Ե՞ս եմ: Եվ գիրս իմ շունչն է՝ Քրոնիկոնի 1735: Կատարյալ շէ, բայց ի՞նչն է այս աշխարհում կատարյալ: Փետրի գրիշա մելանեցի, որ զրածիս թերին անթերի անեմ: Ուրեմն ունկն զրեց իմ ձայնին և իմ միջով տեսեք այն, ինչ կատարվեց ուղիղ ինը տարի առաջ:

* * *

Կողմանք Արևելից Հայոց գերազա՞ն իշխան Մելիք-Ավան ծգանը կարծես ոչ իր, այլ ահեղ լեռների կամքով հրահանգեց:

— Սկսի՞ր...

Ինչ-որ տեղ կաղնի ճեղքվեց, զրաղացի քար ոստոստաց ինքն իրեն: Գերազա՞ր կաշվե լայնթաթ գոտու արանքից պոկեց երկփող ատրճանակը՝ խավարի ճակատին կրակելու: Վարանդայի տեր Մելիք-Հուսեինը, որ կանգնած էր զորապետների համախմբի մեջ, կարծես հենց իր համար ասաց.

— Վաղ չէ:

Նաև խոսեց Զագեձորի Մելիք-Օհան իշխանը՝ նույն կերպան հանգով:

— Կրակները վառենք: Խավար է:

— Արակ շվառել, — Հակառակեց գերագահը: — Խավարը
մեզ զինակից է:

Գտնվում ենք Եամիսոր գետի կիրճի ձախ ելուստի վիճի
մեջին, այնտեղ, ուր գետը խեղպվում է անդունդի մեջ, բըր-
քըրում ինքն իրեն, անթժում ինքն իրեն, Հույս լունենալով,
թե զուրա կգա նեղոցքից, կմեկնվի Գանձակի դաշտում, ծույլ-
ծանծաղ կծզվի դեպի մայր Կուրը: Հենց մեզնից ցած, խոր
ձերում Բարսում մեծ ավանն է՝ խաչակիր իննը եկեղեցինե-
րով, մի քիչ զիրեա՝ Գառնակեր գյուղը: Մոռվ լեռան նեղքե-
րից եկող միակ ճանապարհը՝ քարե ատամները սեղմած մի
ուղրք, անցնում է կիրճի միջով, հեծած քարեկամար երեք
կամուրջների մեջքերով, մերթ աչ, մերթ՝ ձախ:

Տասնհինգ օր առաջ Երևանից լուր բերին՝ թուրքը գալիս
է: Կարսում օսմանլու սուլթանի մի անեղ բանակը Եփրատի
պես ճեղքվել է, զարձել երկու: Մեկը Եփրակի հող ու քարը
լափելով երկարում է գետի Արարատյան աշխարհը՝ գլուխ
ունենալով սերառներ Թոփրլու Արդուլլահ փաշան, մյուսը
գալարվելով Ազստեհի քիչ ինչ մեզմական հոտով, մղվում է
գետի Հայոց Գանձակ մեծ քաղաքը:

1735 թվականի ամառն է:

Պարսից զորքերի սարդար Նադիր խան Աշրաֆի սուրհան-
դակը թուղթ Հղեց մեզ: «Թուրքը գալիս է: Ետապում եմ
Երևան: Ինքդ, եղբայր իմ Ավան-Եղան իշխան, քո լեռներում
փակիր սուլթանի ճանապարհը: Կարող ես: Հավատում եմ»:

Կիրճի կղերսուքներում ժայռված հետախուզ աշբա-
կանչները թեք ժայռալանչները մագլցելով, իրար ետեից հա-
սան մեզ:

— Սարը Մուտաֆա փաշան է, զորքը՝ վաթսոն հազար:
Իմ պողը ճարեց: Մենք ախր, տասներկու հազար ենք...

Դեռ երեկոյան, երբ սկ բոթը չէր հասել մեր զժբախտ
ականջներին, գերազահը՝ Գյուլիստանի զորքը Հղեց ցած:—
Բոնեցեք Տիգրան Մեծի կամուրջը: Խցանեցեք նրա աչ ական-
չը: Մի թուրք անգամ շպիտի անցնի Տիգրան Մեծի կամըր-
ջը: Հատա՞կ է:

Գանձակ լարված, իրենք իրենց մեջ նոացող զորապետ-
երին:

— Կորակ-մբակ լանեք: Թշնամին թող մրափի: Վայսուն
հազա՞ր...

Նրան ի տրիտուր կանացի ձայն ճեղքեց խավարը:

— Սարի Մուստաֆա փաշա՞ն: Հո՛, գալիքն ճանալ եմ:
Պարավեց վարանդայի ճակատամարտում: Հազիվ հազ ճո-
ղոպրեց Մխիթար Սպարապետի ճանկից: Ակա եմ:

Բոլորս շրջվեցինք ձայնի կողմբ: Ո՛, ողորմած աստված,
Գոհար իշխանուհին է: Նա՛ է: Նա՛ է: Գիտեմ: Միրնկարթ վան-
քում, որ Գառնակերի խաղողի այսինքնի մարգարիտն է,
դպրանոց է հիմնել մի յոթ, թե ութ տարի առաջ: Էլի է դրա-
բացներ հիմնել Սյունիքում, Արցախում: Մի օր հարցրի՝ պե՞տք
են զրանք այս խառնակ ժամանակներում: Գոհար միանձ-
նուհին քրթիչի ապահով շպրտեց երեսիս: — Մի՛ ցցիր տիսմա-
րությունդ, Արքա՞նամ Ծրեանցի: Հոգին լույսի է կարոտ, իմա-
ցիր: Հոգու լույսը, որ հողից է ժագումը ուժ է տալիս զենքին:

Դերագա՞նը ատրճանակը պարպեց անսպասելի: Խավարը
ճեղքվեց: Մի պահ այնպիսի լուսիքուն եղավ, որ կարծես
աշխարհը տեղնուտեղը դիակացավ: Ապա՝ զղրդոց:

— Սկսի՞ր...

Ես ինձ գտա իշխանուհի Գոհարի կողքին: Երկուսով ճիդ
արինք, քաշեցինք իրար մոտ թմրացած գերանակապ քա-
րակույտերից մեկի պահպանակը: Քարերը թուն գեպի ան-
դունդի հատակը, գեպի քարեղնն իսողովակ ճանապարհը, որ-
տեղ զիշերային դադարի էր շնթռկել թուրքական բանակը:
Սկսվէ՞ց...

Պայթեցին, փլվեցին, դղրդացին, գեպի ձորը խուժեցին
երկու հազար քարակույտեր: Արևդ սիրե՞մ, Հայաստա՞ն...
Բախտդ բուռ-բուռ է, քարդ՝ հեղեղ-հեղեղ:

Ամառնամուտի ցայզը շողաց ցնծության շառագունով:

Լուսաբաց է: Շամիսը գետի հոսքը խափանվել է քարերի
ու թուրքի զիակների խցանից: Մեր զինվորները քարահե-
ղեղից չնշուիս եղած ասկյարների անթիվ-անհամար լեշեր
էին հանում, դարսում կույտ-կուտակ: Հատուկինտ ողջեր կան:
Իշխանուհի Գոհարը թղենու արմատներով պնդած ժայռաճեղ-
քից դուրս քաշեց մի թուրքի: Թափ տվեց նրա զգեստը, մատ-
ներով տրորեց քիթ-բերանը:

— Նորի՞ց ողջ մնացիր, Սարը Մուստաֆա փաշա...

Թուրքը դողգոջ նայեց նրան:

— Դու ո՞վ ես: Ո՞վ ես...

— Միսիթար Սպարագետին հիշիր:

Փաշան վրասոթ արեց:

— Օ՛...

Մեր հաղթանակը կատարյալ էր: Գերազա՞ր գուեց.

— Այժմ զեզի Երևան...

* * *

Կուտակ ամպերի երամը մթնեցրել էր Հայոց նիգ ու Արագածոտն լեռնագավառները, լցվել Քարսահ գետի անկողինը: Մելիք-Ավան իշխանը իշխանել էր Երևան քաղաքի պարոնտեր իշխան Մելիք-Մկրտչումի տանը: Երբ տեսավ ինձ, Հոգագի հանգով ցատկեց անկողնուց, ոտքերը դժվարով խրեց փափուկ մույկերի մեջ:

— Եկա՞ր, շարաբոթ Արրահամ խոչա: Կուպո՞ց է:

— Թուրքի զորք-շանշանան բռնել է Կարսի սարադաշտը, տեր իշխան: Թոփրլու օղլու Արդուլլահ փաշան միայն հիսուն հազար սիպահի ունի:

Մենք դուրս եկանք փողոց, լզիտեմ կորովի՞ն, թե՝ կոտրու Անձրեն խշշում էր միապաղադ, ծեծում Երևանի դուռ ու պատուհան, ուղցնում տափակ կտուրները: Ես ցալացի մերոնց համար՝ կդիմանա՞ն ահռելի ուժերին, որ մեզ վրա էր քշում թուրքի սուլթանը:

Մելիք-Ավան իշխանը հեծյալ ու հետեակ զնդերը շարել տվեց սպառագին ու կազմ: Պարսիկ խաները կանգնեցին նրան թիկունք: Իշխանի աջ թեռում տնկված Զրաբերդի Մելիք-Ասուվածապովի հաստ, մսալի շրթուեքները դոզում են: Ամուր բռնեք, ասում էր, աստծու փեշը, բայց և չմերժենք հարևանի մեկնած ձեռքը: Չէ՞ որ սկ ուղարք էր արգեն լոքած մեր տան շեմին:

Ես անվերջ ծամում էի Սուրբ գրքի կողը: Տե՞ր դատիք գու նրանց, ովքեր մեր դեմ զեմք են հանում:

Գերազահ իշխանը մերկացրեց սուրբ: Աքլորի առաջին կա՞նչն է, որից սատանաները խրտնում են: Նա մեր երկրում գետերութիւնի գեսպան Խվան Կալաշկինին ասաց:

— Մի բան լազ իմացիր, գոստադին պուկովնիլ, մենք՝

Հայերս ոչ թե ողորմություն ենք աղերսում ձեր աստվածաւ-
լին կայսրուհուց, այլ՝ եղբայրական ձեռք, աղնիվ դաշինք:

Հրազդանի ձորը ցնծում էր տաք գույներով, Երրեմն ձորի
մի ճեղքից երևում էր Մասիսը՝ շլացնող սպիտակ:

* * *

Մեկ, թե երեք օր հետո Այրարատյան դաշտ ժամանեց
մեր դաշնակից պարսից բանակը:— Կարծես թե լուսը բաց-
վում է,— ասաց գահագլուխը:— Քամին մեր կալի ուղղու-
թյամբ է փլում:— Մասիսները մայրական ճերմակությամբ
ժպտում էին մեզ: Երրեմն մառախուզի մի սե ծվեն էր պոկ-
վում ու հանելով Հրազդանի բարձր քարափին կուտակված
իմ ծննդյան օրորոց Երևան քաղաքի ատամներին, հավում
ինքն իրեն:

Գերազա՞ն իշխանը մեր զորաց պետ Մելիք-Աստվածա-
պովին ուղարկեց Երևան՝ Նազիր խանին ողջունելու: Ինձ ևս
գրեց նրա շքախմբում, իրրե թարգման: Քաղաք մտանք արե-
վածագի հետ: Մելիք-Աստվածապով իշխանը բերդակալ
պարսիկ սպայից պահանջեց մեզ անհապաղ ներկայացնել
սարգարին: Պահանջն ասաց Հայերեն, թեև պարսիկի լեզուն
դադիի շափ գիտեր: Ես նրա պահանջը թարգմանեցի գոհա-
նալով: Չէ որ մենք մեր պետությունն ունենք ու մեր լեզուն: Մունետիկն առաջ ընկավ՝ գոտուց պղնձե լայներախ փող
կախած: Դրանով է նա փողոցներում կամ զորքի մեջ ազգա-
րարում իրեն հանձն արված հրամանները: Սա իր հաստ
գլուխը ցցեց զեպի Աստվածապով իշխանը: Ուզեց ինչ-որ
հարցնել, իշխանը կանխից նրան:

— Մոռութ ծանոթ է ինձ, շառչի Փանազ: Ազդ արա իմ
գալումատը:

Մեզ տարան մեծ սարդար Նազիր խանի նստոցը: Նա էր
Պարսկաստանի միահեծան տիրակալը, իրրե մանուկ շահի
խնամատար, որին ամեն տեղ ման էր ածում հետը: Մեզ տա-
նողները ասացին՝ հենց որ տեսնեք ամենազորին, կփովեք
գետնին: Մեր իշխանը քմծիծաղեց ճերմակած, խիտ բեղերի
արանքում:

Պարսից բանակի գլխավոր զորավար սարդարն ապրում

էր բերդի նեղ հրապարակում տնկված շքեղ վրանում։ Ամեն
քայլափոխի պարսիկ զորականներ էին հանդիպում մեզ։
Զեռքները կից էին անում։

— Բիսմիլլահ¹։

Մեր զորագարը, ոչ այնքան զերմեռանդ, որքան հենց այն-
պես պատասխանում էր։

— Մաշալլահ²։

Շքեղ վրանից դուրս եկավ դափուշի բաշին։

— Ձկա աստված ալահից բացի, և Մուհամմեդը ալլահի
մարգարեն է։

Մեր իշխանը նրան շարձագանքց։ Ղափուշի բաշին ձեռքի
լայն շարժումով մեզ հրավիրեց խանի վրանը, ինքը ետ տա-
նելով ծանր վարագույրը, որից չոր խոտի ու մկան հոտեր
էին գալիս։ Նա այնպես էր բայլում, կարծես ոտնացուալ էր
հագել և այնպիս ինքնագոհ էր, ինչպես ճանճը՝ կաթի մեջ։
Ներս մտնելիս նկատեցի, որ վարագույրի ծոպերը տեղ-տեղ
կրծված են։ Իմ աշքին զարնվեց կանթեղի ծակող լույս։ Ղա-
փուշի բաշու ձայնը խոցեց սիրտս։

— Խոնարհություն և հեազանդություն։ Սունկի՛ եկեք։
Ես փորձեցի ծունկի գալ, սակայն Մելիք-Աստվածապով
իշխանը բաշեց փեշո՞ երբեք։ Ինքը կանգնեց վեհ ու հպարտ։

— Հայոց աշխարհի փառավոր զերագահ իշխան Մելիք-
Ազան-Եգանից ողբույն պարսից զորաց Առյուծ նազիր խա-
նին։

Վրանում եղած պարսիկ մեծամեծերը զունատվեցին, նրանց
արանքով դժգոհության շշուկ անցավ, ինչու այս հայերը
ծունկի լեկան։ Խորամանկ է պարսից սարդար նադիր խանը։
Նա ինքը շտապեց կանխել տհաճությունը։

— Ոտքի վրա մնացեք, երենի հայեր։ Բարի տեսաւ Ինչ-
պես է իմ եղբայր մեծափառ Ազան-Եգան իշխանը։

— Քո արեշտության համար ազօթում է տիվ ու գիշեր։
Խանի ակնարկով Ղափուշի բաշին բազմոց մատուցեց մեր
զորապետին։ Առատ լույսով ողողված վրանը շքեղ էր։ Հա-
տակի գորգերը վառվում էին երմի զրախտից բերած ներկերի

1 Հանուն ասուծու

2 Ասուծ բարի է։

կենդանությամբ։ Վրանի պատերը ևս գորգերից էին, մետաքսյա ժապավեններով ընդհլուզված։ Դաշնավորակը, որին նստած էր մեծ սարդար Նադիր խանը, ցածրազիր էր, վագրի մորթի բալիշներով ճոխացած։ Նադիրը, թեև ընդամենը խան էր, բայց զլխին դրել էր արքայական խոյը՝ ոսկեթել ժոպերով։ Նրա երեսը, որ նեղ-երկարուկ էր, լավ սափրած էր։ Ցցված կզակը փայլում էր։ Մե, երկար բեզերը սրած էին։ Դրանցից աջը, ինչպես նկատեցի, մանր ցցվում էր՝ մուկ տեսած կատվի պոշի պիս։ Մելիք-Աստվածապովը նստեց ու նորից ողջույնի խոսքնը ասաց։ Ես դա թարգմանեցի գրեթե իմաստին անգիտակ։ Իմ զարմանքը շատ եղավ, երբ վրանում, ահեղ խանից բավականին հեռու, գորգի վրա ժալապատիկ նստած տեսա Ամենայն Հայոց կաթողիկոս Արքանման Կրետացուն։ Մի պահ միայն մեր Հայացքները խաշաձևեցին ու ես զգացի, որ նա ակնարկով խրախուսում է մեղ՝ արի ու ինքնավատահ եղեք, նաև արժանապատիվ։

— Կողմանք Արևելից Հայոց աշխարհի հզոր ու անպարտելի գերազահ Մելիք-Ավան իշխանից ու բոլոր զորապետներից, զորքից ողջույն ու սալամ մեծ խանիդ, հզորիդ, հաղթողիդ, արևածինիդ։

Մելիքի այս ասածը ես թարգմանեցի միանդամայն անշփոթ ու գոհ մնացի ինքս ինձնից։

— Ալլահ քերիմ! — ասաց խանը։ — Ժամանել է։

— Աստծու ողորմությամբ ու Քրիստոսի խաչի զորությամբ Հայոց գերազահը զորքով ու զորապետներով բանակել է Երևանի մատուցներում, մեծ խան։ Սպասում է բարի կամքիդ ու ողջունիդ, օ՛, վալի ասր²։

Նադիրը խոշոր, սեխանման գլուխը բարձրացրեց։ Նրա աշքերը վագրի էին, թեթև ինչ շեղ։

— Հայոց զորքը կո՞ւշտ է, կո՞ւռ է։

— Աստծու կամեցողությամբ՝ կուշտ և կուռ։

— Ինչի՞ եք կարոտ, օ՛, Հայեր։

— Հարուստ ենք, — պատասխանեց մեր իշխանը։ — Աղքատ շենք։ Աղքատը հացի է կարոտ, հարուստը՝ ամեն բանի։

1 — Աստված մեծ է։

2 — Դարաշրջանի տիրակալ։

Նաղիրը հզոր ժիժաղեց, հարցական շեշտվածությամբ
նախեց իր զորապետներին: Սրանք միևնույն հանգով գլուխ
տվին, նստած տեղերից կանգնելով, գոտկատեղից այնպիս
երկուակվելով, որ կարծես հիմա կփշրվեն:

— Այդպե՞ս...

Նաղիրը գոմոաց այս մի հատիկ բառը: Նրա սուր ժնոտը,
որ կացնանման էր, ավելի կացինվեց, հզոր բեղերը լար-
վեցին զետ մտնող ցուլի ագիր հանգով:

Մեզ հուրասիրեցին փլավով ու շերբեթով: Բոլորս թեր-
վեցինք արծաթե սինիների վրա ու Նաղիրի հոնգով, ձեռքե-
րով սկսեցինք ուտել: Եթե խանը շարրաթ էր խմում, ապա
բոլորս վերցնում էինք մեր առջե զրված կավե սրվակները
Երբ նա գավաթը ցած էր գնում, մննը ևս նույնն էինք ա-
նում: Ռւտելիս ոչ ոք չէր խոսում:

Փլավից հետո մեզ սուրճ մատուցեցին: Խանը սսկեկտը
կապայի փեշով սրբեց յուզոտված բեղերը, անսպասելի դար-
ձավ ինձ:

— Օ՛, առարինի խոշա Արբահամ, հաճելի է ինձ նորից
տեսնել քեզ: Դործերդ հաջո՞ղ են:

— Աստծու կամեցողությամբ՝ այս,— խսկույն պատաս-
խանեցի ես: — Քեզ այցելելը աստծուն ներկայանալ է նշա-
նակում, օ՛, մեծ, օ՛, հզոր:

Մյուս օրվա կեսօրին Նաղիր խան Աֆշարը իր զորա-
պետների նույն կազմով, ինչպես երեկ էր, նորից ընդունեց
Միլիթ-Աստվածապով իշխանին, այս անդամ արդեն առանց
փլավի ու սուրճի: Ես նրանից ալժիրյան օճառի հոտ զգացի,
երևում է հենց նոր է գուրս եկել բազնիրից:

Նաղիրը զկրտաց ազմուկով: Ցի՞ն է:

— Արդյոք, իմ թագավորի դաշնագրությունը ընդունե-
ցին ձեր հայերը, ժողովուրդը, զորքը, զերագահ իշխանը:
Կամքս է, որ Հայոց զերագահ իշխանը լինի ինձ բազկակից,
բարձակից, սեղանակից:

— Եղիցի, — ասաց Աստվածապով իշխանը: — Ընդունե-
ցինք ամենը:

Խանն իր զերագրիս հայացը մղեց զեպի իր զորա-
պետները: Սրանք իրենց ժանրացած զլուխները, որոնց լերկը
ծածկված էր ցցուն զգակներով, լայնքով կարմիր, զեղին կամ

կանալ ժապավեն քաշած, կպցրին իրենց ծնկներին, ասացին համորեն:

— Թռ կամքը ալլահինն է, օ՛, մեր զլուխների տեր: Նադիրը շեշտ նայեց Աստվածապով իշխանին:

— Թուրքը ահռելի ուժերով է զալիս:

— Դա մեզ չի վախեցնում, իւա՞ն,— ասաց Աստվածապովը:

— Թուրքը կարող է նվաճի Հայաստանը:

— Հայաստանից հետո հերթը Պարսկաստանին կհասնի,— ասաց Աստվածապովը:— Ուրեմն, միասին կանգնենք սուլթանի դեմ:

— Սուլթանը այժմ ուժեղ է, բան երբեմ, — ասաց Նադիր խանը:— Դուք փոքր եք, նա ահռելի մեծ:

— Փոքր ենք, բայց մեր ուժին վստահ:

— Ի՞նչ հույսով եք եկել այս կողմերը:

— Հաղթելու:

Սոսկում պատճառող, ո՛չ, ոչնչացնող էր Նադիր խանի Հայացքը, հատկապես ձայնը: Բայց ես տեսնում էի, որ նրա արձակած ահի շանթերը բնավ լեն թափանցում Մելիք-Աստվածապով իշխանի սիրտը: Նադիրը ուժգին խնչեց մետաքսի աշկինակի մեջ, ձեռքերը բսեց երեսին:

— Իսկ եթե ես իմ զորքերով հեռանամ Հայաստանից, ձեզ լքե՞մ:

— Այն դեպքում մենք կմիանանք սուլթանին:

Մելիք Աստվածապովն այս ասաց անշփոթ, հանդարտ: Ինձ թվաց, թե հիմա Նադիրը կպայթի զայրույթից: Նա նույնիսկ ինչ որ շարժում արեց, որ շատ տհաճ էր: Ապա միանգամից փոխվեց ու հեղ երկյուղածությամբ շշնչաց.

— Լա իլլահ իլլա ալլահ¹: Մենք մարարուա² ենք: Զեր՝ Հայերիդ օգնությունը մոռանալ, նշանակում է ուրանալ ալլահին:

— Մենք՝ հայերս էլ քո օգնությունը լենք ուրանա, եթե լինի, — ավելացրեց իշխանը:

Ես նկատեցի, որ մի կողմ անշարժ նստած Աբրահամ

1—Զիա աստված, ալլահից բացի:

2—Իշխանության եմ տալիս:

Կրետացի կաթողիկոսի ճերմակ երեսով գոհունակության նոր շող անցավ։ Պարզ է, Հավանում է մեր արժանապատիվ կեցվածքը։ Նադիր խանը ասաց երբ միացյալ ուժերով կոտրենք սուլթանի զորաց մեջքը, ապա Երևան քաղաքը ևս կմտնի Հայոց իշխանապետության մեջ։ Ավելացրեց, թե Երևանին ու Գողթանի գավառները, ինչպես և Նախիջևան քաղաքը Հայոց երկրինեն են, երանից անկողոպատելի։ Չերք մեկնեց մեր զորավարին։

— Ես իմ երդման տերն եմ։ Մեր գաշինքը ձեզ հետ, Հայեր, անքակտելի է։

Խոր շնչեց գաղջ օդը, իր լեզվով ինչ-որ աղոթք քրթմնշաց, որ ավելի շուտ ձիու խրխնչոց էր, ապա Հաստ մատներով թաթը մեկնեց Աստվածակովին։

— Թիսի՞ գա։ Եղիցի՞։

Դրսում նորից խոնարհումներ արեց խիստ բարձրահասակ մուսեաթիկ-ջառչի Փանահը։ Նրա լայն, զորաի երախ հիշեցնող բերանը ժպտում էր քծնանեքով։

— Ես միշտ ձեզ բարեկամ կլինեմ, Հայեր, — լահիկեց նա։ — Երդմում եմ Սարաջալու ցեղին պատվով։

Ես զզվեցի նրանից, ձիու սանձը խլեցի ու շտապեցի հեռանալ։ Մեեք վերագարձանք մեր բանակատեղին։

* * *

Նադիր խանից խնդրակ եկավ։ Բուրքաց բանակների անցել են Սպիտակի լեռնանցքը, Կարբիի վրայով իշխում են զեպի Երևան։ Գերագահ իշխան Մելիք-Ավան-Եղանը զորապետներին ասաց, թե պետք է թշնամուն քաշենք զեպի Եղվարդի դաշտը։ Ասաց՝ թուրքերը ֆռանգի ժանրահարված թնդանոթներ ունեն։ Այնպես անենք, որ ոչ մի թեզանոթ շանցկացվի Քարսահ գետը։ Այլապես ֆռանգի զեեքը շարիք կդառնա մեր գլխին։

Հարժեցինք համախումբ։ Մատնք Եղվարդ գյուղաբաղդար։ Կուտակ է, լեռան ստորոտին, Հրազդան զետի աջում, ոտքերի տակ՝ մեծ դաշտը։ Եղվարդիներին մենք զտանք ոզեվոր, ինքնավատառ։ Այդ մեր հին բերդարադարը միայն մի անցք-ուղիով էր կապված զրոյի աշխարհի հետ, ու էլ այն-

քան նեղ էր, որ հազիվ մի ձիակառք անցներ: Հայն այստեղ քնակնորդած է այն օրերից, երբ զեռ մարդը չէր հնազանգեցրել կրակը և կիստարի միաը կերել է հում:

Աղատ կյանքի ու եռուն պատերազմների սովոր էր մեր զորապետ Զրաբերդի տերը: Շատերից նա զատված էր չեր-մեռանդ հավատի նկատմամբ իր խորշանքով: Հազվադեպ է եկեղեցի գնում, տանն ապրում է հեթանոսի կերպով: Եղ-վարդի եկեղեցիները զողանչեցին: Բոլորս, բացի Աստվածա-պոջից, երեսներս գարձրինք մայր եկեղեցու կողմը ու երկ-յուղած խաչ հանեցինք: Իշխանը քմծիծաղեց թավ թեղերի արանքից.

— Ի՞նչ բարիք ստացաք այս ականջ խտղտող կռավո-ցից, որ խրանցիք աղվեսի հուտ առած հավերի պես: Բախտող սիրեմ, հայ, զանգի զողանչեցից երկլուղում ես ամուսնուց սարսափած կնկա նման: Աշքներս լույս...

Ես ինչ-որ շափով նախանձում էի նրան: Նա սաստիկ որդ-նունց, երբ Եղվարդի մեծ վանքի գռանը անհամար խաշեր նկատեց:

— Մատաղի գառան խեղճությամբ զիշեր-ցերեկ տիրոջ անունն ենք մայում, նրա բար ոտքերը լիզում, իսկ նա ան-օրենի թուրը լի հեռացնում մեր շլինքներից: Իրեն հայհոյող գել ու գաղան աշխարհս քանդեցին, իսկ նա՝ մեր քրիս-տոս աստված, բերանը չուր է առել: Չունենա՞մ նման աստ-ված...

— Մեղա-մեղա՝,— մրմնչացի ես: — Մարդ էլ այսքան անհավա՞տ լինի: Նա, երեկի զգաց տարակուսանքս ու հա-յացքով խոցեց ինձ:

— Էդ ո՞վ է անհավատը, Արքահամ երեանցի խոշա: Ե՞ս երանի՝ թե գու ու քեզ նմանները գոնե մի տիզի չափ հավատ ունենայիր այն բանին, ինչ օգտակար է ազգիս հայոց: Այն ժամանակ օտարի ահից ճկուած չէր մնա մեր ազգը:

Երեկի նա այսպես երկար ձավարի աներ: Նրա զլխին տընկ-ցեց գերազա՞ն իշխանի բաները: Փոշոտ էր, հոգնած, շար: Մոռացա՞վ, թե դիտմամբ լողջունեց ոչ մելիքներին, ոչ՝ ինձ: Երկար ժամանակ թամրին հարվելուց ճոճվող ոտքերը պիեց գետնին, խոսեց անփույթ:

— Ողջ եղեք տիրոջով։ Թուրքի զորքը հասավ Քարսահին։
անցավ նրա ձախը։

Մելիք-Աստվածապովն իր նժույգն արշավեց նեղվածու-
թյունից ճաքող փողոցներով։ Զիերը, ազատ տարածություն
տեսնելով, վրնջացին։ Իմ կուրծքը ուռավ՝ հպարտ պատանի
եմ, բայց՝ զինվոր։ Մի քիչ ձախ, Եղվարդի դաշտի հենց պոր-
տում երևում էր այն բլուրը, որի վրա պարսկական զորաց
սարդարի վրանն էր։

Մելիք Աստվածապովը սուրբ մերկացրեց։

— Բացվի՞ր... Գրոհո՞վ... օ՛, վարձս բարեաց, ժամա-
նի՞ր...

Նկատեցի, որ մխրճվել ենք թշնամու խտության մեջ։ Ահա
ինձ ծանոթ թուրքը՝ փաշա, բեկ, հազարապետ։ Դե, ի՞նչ,
եկել են անզնդային ախորժակով։ Նրանց ձիերը պերճացած
էին ոսկեկար քմփուշներով, արծաթապատ սանձ ու ոսկալով։
Զիու զիլիին հազցրած բարձր սուլթանը արժե տասը գերի
կամ հիսուն կով։ Օ՛, Հո՛, Հո՛... Իրենց քրտինքը չէ, զավթել
են Հունաց տանը, Վալախիայում կամ Բուլղարի երկրում,
Արգրումի ու Բիթլիսի հայերից։ Փաշաներն ու բեյերը վատան
իրենց հազթանակին, բանակի հետ իրենց հարեմներն էլ էին
բերել՝ լեհունի, վրացի աղջիկ, բուլղար տիկին, Հույն կույս
կամ հայ գեղջկունի։ Բերել են ուրիշից խլած սայլի մեջ, սրե-
դուկների արանքում, գորգերի ու մետաքսի տաք փառթեթնե-
րում։ Այս փաշաներն իրենց ձիերի սմբակներով ու յաթաղան
թրերով ջարդել են Երրորդայի կեսը, Արարիս աշխարհները,
Ռուսաստանի հարավը և բուրգ-բուրգ, վայրենի ախորժա-
կով եկել Երևանի վրա... Նրանց ձեռքերին Թավրիզի արյուն
կա, Բաղդադի մանկան ջնջխած ուղեղի շորուկ, Վանի ոսկե-
րիչ հայի մատանի։

Ո՞վ տեր, ո՞վ տեր...

Մխրճվել ենք գայլային այս ոհմակի մեջ։ Կովում ենք։

* * *

Սաստիկ շոգ է։ Աւզդակի հայվում, խանձվում ենք։ Օգը
եռում է շերտ-շերտ։ Մի օր առաջ ընկածի գիակը հոտում,
գարշում է։ Կովի ահից աղռավ, ցին ու բազե շէին մօտենում

գիտելու հաշոտելու: Գիշերը ևս ժամը էր, առօթ, քրտինքի գանգվածներ, շնչելու ուժել չկար:

Եղբարդի դաշտը նման է Հոկա տաշտի, մի եղբ պոկված՝ Քարսահի կիրճը: Տաշտը պորտ ունի՝ Զորաց բլուրը, Արա լեռը՝ Հոկա վրան: Զորաց բլրի վրա էր պարսից ու մեր բանակի զորակայանը: Մարտի մտնելուց մենք՝ Հայերս կարմիր շուրջառներ էինք՝ հագնում, որպեսզի արյունը լերնաւ:

Երեկոյան մեր բանակատեղին եկավ ինքը՝ սարդար Նադիր խանը: Ես, որ թիշ չէի տեսել նրան, այս անգամ սարսափեցի այն երեխայի պես, որ կապը կտրած ցուլ է տեսնում: Այս անգամ նրա երեսը սաստիկ նեղ թվաց, երկարությամբ միշտ կիսած վարունգ, բեղերը խիտ ու սուր էին՝ մի-մի դաշույն: Հայ իշխանները արժանապատիվ ողջունեցին նրան: Նա ձեռքով բարեկց միայն մեր գերագահին:

— Դու, եղբայր իմ Ավան իշխան, Հավատացած եմ, սթափի եմ: Մեր շահած այս Հաղթանակը գեռ վերջը չէ: Քափրուու օղին, թու նրա ծծած կաթին, խորամանկ է: Հա՛, իմացիր: Զգուշացիր...

Մինչե դիշերվա կեսը նա մնաց մեր զորակայանում, թե այլևս ինչ զրուցեց զորապետների հետ, չիմացա:

Առավոտյան, զեռ ազոթարանը շշառագունած, թուրքական զորքերը փորձեցին ճեղքել շրջապատման օղակը: Նախ մեծ ուժերով զրուցին մեզ՝ Հայերիս վրա: Մելիք-Ավան-Եղանը սուրը հանեց.

— Միունվենք թշնամու շարքերի մեջ: Դե՛, Հա՛...

Մեր Հեծելազորը հեղեղ-հեղեղ մտավ թուրքական բանակի թիկունքը: Դիմացից Հակառակորդի վրա գրոհեց հետևակը:

Եղբարդի դաշտը դղրդում էր հունիսյան բարկ արևի տակ: Հիշեցի՝ օրը հինգշաբթի է:

Թուրքական առաջապահ զորազանգվածը ոչնչացավ գըլիովի:

* * *

Լուսացավ 1735 թվականի հունիսի երկրորդ կիրակին:

Այս մի ճակատամարտը ավելի կարճ տևեց: Պարսից զորքերը Հարավի կողմից ալիք-ալիք զրոհում էին թուրքերի կու-

տակների վրա։ Հյուսիսը անմատչելի է՝ լեռան քարահերձերը, արևմուտքը վիթխարի գերեզմանախրամ՝ գետի անդունդը։ Արևելյան կողմում մենք ենք։ Երեք կողմից սեղմված թուրքերը գահավիժում էին գետի անդունդը։ Այդ խուճապված խմբերից մեկի մեջ ես նկատեցի թուրքաց սերասկեր Թոփրլու օղլու Արդուլլահ փաշային։ Ես մեր զորավարին ցուցավիր նրան ու ասացի, թե ով է։ Մերոնք ձիերը լարեցին։ Մելիք-Ավան-Եղանը գալարաթոկ նետեց փաշայի շինքին։ Ճողովական քաշեց շան լակոտի նման։

— Ա՛, ողջույն, Թոփրլու օղլու Արդուլլահ փաշա։ Ճողովական ես։ Ճանաչիր ինձ։

Գերի փաշան վարից վեր նայեց մեր գերագահին։ Նրա աշքերում փրկության հույս ճառագեց։

— Ճանաչ եմ, օ՛, բարեգութ քաջատոհմիկ։ Ուրախ եմ, որ քեզ նման ասպետ գերեց ինձ, օ՛, խան, օ՛, հավատիս եղբայր պարսիկ զորավար։

— Հե՞... Ես հայ եմ, փաշա՞։

Թոփրլու օղլու Արդուլլահ փաշայի աշքերը թուան ճառատին։

— Էրմենի՞ն, — լավլից նա։ — Ո՛չ, ո՛չ։ Անպատճեթյուն է անձիս, իմ սուլթանին։ Ես զյավուր հայի գերին։ Ո՛չ, ո՛չ։ Օ՛, զինն, զի՞նն։

Մելիք-Ավան-Եղան իշխանը ձեռւ վրայից կռացավ, որով կտրեց փաշայի գլուխը, հազցրեց նիզակի ժայրին, ավեց ինձ։

— Հասցրու նադիր խանին։

Ես վախեցա, նաև զգվեցի կտրված գլխից, որ գեռ տաք էր ու վրան անհամար բզեզ-բռուեր էին կուտակվում։ Սլացա ետ։

Նադիր խանը կանգնած էր Զորաց բլրի լանջին, մի երկար ու խոր խրամափոսի մոտ։ Ներքնում գետնատարած փուլել էին երեսի ութ-ինը հազար գերի թուրքեր։ Խանը նկատեց ինձ։ Նախ զարմացավ, ապա զգվանքով հարցրեց, թե ում գլուխն է ձեռքիս։ Ես ասածու անունը տալով սիրտ արի ու բարձր ասացի, թե Թոփրլու օղլու Արդուլլահ փաշայի կարկածն է։ Նադիր խանը քրքջաց։

* * *

Երկու օր հետո նազիր խանը հրովարտակ հղեց շահական մարզպան խաններին, հրամայելով անհապաղ հեռանալ Հայաստանի նախիջևան, Թողթան, Երնջակ, Կարքի գավառներից, Երևանից: Հայաստանի Արարատյան նահանգն ու Նախիջևանի գավառները այլևս հարկատու չեն Պարսկաստանին: Նազիր խանը փաթաթվեց մեր գերազանին, ասաց բարձրագու:

— Ուրախ լեր, եղբայր իմ: Երևանն ու Նախիջևանը քննն են:

— Իսկ ե՞րբ չեն իմը եղել, խան:

Մենք դուրս եկանք Երևանից: Անցանք Գեղամա լեռների սարավույթ ու զով տեղերով, հասանք Սյունիքի Քաջաթաղ գավառի վերևները, որտեղից իր կապույտ ակունքներն է առնում Արցախի նեղոս՝ Թարթառ գետը: Զորքն իր հետ բերում էր հարյուր ուղտի բեռնած հրացան, երկու հարյուր հակ վառող, ութ հազար ձի ու էլի շատ ավար, որ վերցրել էինք Եղվարդի դաշտում, զիլովին կործանված թուրքական բանակից:

Քաջաթաղում հանգրվանեցինք երեք օր:

Իննը տարի առաջ եղավ այն, ինչին ականատես եղա ու պատմեցի:

* * *

Հերթական հանգրվանից դուրս եկանք վազ առավուտյան: Մինչեւ Սանկտ-Պետերբուրի մնացել է մի խոր շնչի Երկարություն, ձեռք տաս կրոնես նրա ճերմակ մեջքը: Դերդագահի ակնարկով Խորայել արեղան Հայոց աշխարհի զրոշակը պարզեց արևի նորելուկ տապով հագեցած հուլիսյան երկնքին: Արծվի բաց թեմքի նման դրոշակի ստվերը վազեց հրաշալի հղկած լայն ճանապարհի մեջքով: Տափարակ, ճախճախուտ տեղեր են: Կարծես նաև ուրախ ենք: Ինչո՞ւ չէ, թիկունք-օգնության հույսով ենք եկել այս աշխարհը, ոչ ողորմության կամ՝ ավարի, ոչ էլ մազապուրծ: Մենք, հենց մենք երևել շարդեցինք օսմանլու թուրք Սուլթանի ամբոխ-ամբոխ

գործը, որ մտնելով մեր տուն, մղվում էր դեպի այս մուսիոն հարավային փեղերը։ Հաղթող ենք։ Հաղթանակի երեսը աստվածային է։

— Լուսաբացը բարի է, — ասաց Մելիք-Ազան-Եգան իշխանը։ — Ահա տեղ ենք հասել քառասուն օր ոտք թակելուց հետո։

Հայաստանից դուրս ենք եկել Քունիսի առաջին ուրբաթ օրը։ Կասպից ծովքը բարի-խաղաղ էր, մտերիմ... Աստրախանցի վաճառական հայերը, որ գալիս էին հարավի էնզելից, մեղ, մեր բերած երեսուն արցախյան նժույգներն ու բեռները վերցրին իրենց նավերի վրա։ — Վարձ պետք չէ, տե ո մեր գերազա՞ն, — ասացին մեր իշխանին։ — Զեր հովանին վայելող էջմիածնի մի օր հությունն էլ բավական է մեղ։ Աղքատ չենք։

Անցանք մուսիոն մեծ գետի՝ Վոլգայի ջրերն ակուելով, մինչև... Մինչև այստեղ։

Եռաձի շրեղ կառքերով մեղ գիմավորեցին Իսախանյան-Ջուղայեցի եղբայրները և միասին արքունիքի թիկնապահ բանակի մի հեծյալ հարյուրակ։ Ջուղայեցի եղբայրները երկվորյակ էին, հին հայոց մահույն կապաներով, արծաթի գոտիներով պնդած։ Դգակները մորթի բրդածի էին, թեր լայնքով Տիգրան Մեծի դրոշակին հանգույն կարմիր ժապավեն քաշած։

— Նախ զսպենք նժույգները, որ շալանան տափաստանով իրենց զլինու, — ասացին։ — Ազնվազարմ, բայց և հանգույն են արցախյան մեր այս ոսկեթև բազեները։

Մուս հեծյալ դրագունները միաշարժ հանեցին սրերը։ Նրանցից մեկը, որ իշխանի զարմ էր, գուեց։

— Պատիվ ունեմ, հօսուձ հայեր... Ողջո՞ւն։

Իրենց ձիերի թափորի մեջ առան իրար կապած մեր նժույգների երամակը, զլուխները շրջեցին ու մեղ ընդառաջեցին զեպի քաղաք։ Մեր քարավանի կառքերը, որ քառանիվ եռաձի ութ հատ էին, հետեւցին երանց։ Հեծյալները երբեմն գալարափող էին հնչեցնում։

Վերջապես, ասես մեր երթը կասեցնելու համար, երեացին ամրոցի գլուխների Դրանց աղյուսի ատամները, սակայն, փայլեցին մտերիմ: Խորայի արեղան, որ այս քաղաքում եղել էր, երեսին խալ հանեց.

— Մտնում ենք Սանկտ-Պետերբուրիս, Մեծն Պետր Ալեքսեիչի շինած քաղաքը:

Ճերմակ կեշիների բեաշարքի արաերից դուրս եկավ թագավորական մի այլ, ոչ մեծ շքախումբ՝ տասն, թե մի քիչ պակաս բոյարներ: Սառախմբին զուգահեռ երկարում է նևս մեծ գետը: Քաղաքը շինված է այդ գետի տասներկու ճյուղ գետաբերանում: Տակավին ծովը, ծովի ծոցը շի երևում, միայն ձիերն զգացին երա մոտիկությունը, ու ազդ արին իրենց խռնավ փոշտոցներով: Առջնից եկող բոյարը զղրդաց.

— Ոզդու լին, և օրհնություն Հայոց աշխարհի մեծ իշխանին:

Մենք միմյանց օգնելով, խանգարելով իշանք մեր կառքերից: Գետինը փափուկ, ավագային տաք էր: Մոտեցանք, ողջադուրվեցինք ուսւ իշխանների հնատ: Գոհար իշխանուհին, որ միանձնուհու սեներով էր, լայն օծիքը ճերմակ: Քիչ կողմ կանգնած միայն թեթև գլուխ խռնարհեց: Կախվելով փայլեց երա բավականին խոշոր արծաթե լանջախալը: Բոյարներից մեկը, որ, երևի, ավագանուց էր, բավականին էրկար հարցուփորձեց՝ Հո շատ շենք նեղվել ճանապարհին, խորշակը շատ շի՞ բրբրել մեզ: Ապա նորից երկար բարիմ աղթանքի խոսքեր ասաց:

Մեզ տարան գետի եզերքով: Նժույգները զիլ խրխնջացին մոտալուս հանդրվան-ախոռի հոտ առնելով: Ինչ-որ տեղից մատակ չի զիլ արձագանքեց երանց: Գետի մեջ մանր կըզգյակներ էին պմնված, մի քիչ առաջ նազաշինարանն էր: Սա հիմնել է ինքը՝ Պետրոս Ալեքսեևիլ ցարը, դրանով հիմք զնելով բաղաքին, երեսուն տարի առաջ, երբ հենց այստեղ ծանր կոհվեներով հաղթեց Եվեղի թագավորին՝ զորքով ու, ինչպես ինքն է կոշել՝ «Ռուսիայի համար պատուհան բացեց» դեպի արևմուտքի ծովերը:

Գետի վրա բեռնանավեր են լողում կամ օրորվում: Իսախանյան հղբայրներն ասացին, թե նևսն լճածին է, ծագում

է կազուս մեծ լնից, մտեռում թալթիկի դիրկը: Բայց հզոր է, խոր ու լայն: Լնից մինչև ծովը ձիով մեկ օրվա ճանապարհ է:

Ամբոցի մոտ, որ կղզու վրա էր, պալատական նոր գորախումբ զիմավորեց մեզ: Սպաները պապտուր զգեստով էին՝ համայն երանգը բաց կապույտ, կաշվե լայնշի գոտիները սպիտակ, ուսակապերը՝ ևս: Նրանցից մի փոքր զատված կանգնած էին Սանկտ-Պետերբուրգի հայ վաճառականները, մահուղի, կաշվի, մետաքսի, երշիկ պատրաստող գործատըների տերեր: Ահա սա Արտեմ աղա Մանվելլանցն է, կողքինը՝ Բոգդան-Աստվածատուր Ավետիսյանցը: Նրանց հետ է նաև բազականին երիտասարդ Պետրոս-Եփրամ Մանուչար բեկը, որին ևս լավ գիտեմ: Քաղաքի հայերի անունից մեզ ողջունեց Արտեմ աղան, հզոր ձայնով, որ կարծես եկեղեցու բարձր կամարներից էր թափվում: Ծուռ և հայ հոգեորականների խումբն առանձին էր, խաչ ու խաշվառով, ութը ոսւս, երկուսը՝ հայ: Մելիք-Ավան-Եղան իշխանը շոշափեց բենակառի ժանրոցները: Պարկի մեջ էջմիածնի օրհնված հող է բերել, որ դրանով օծի հայոց նորաշնն եկեղեցին: Ունեն, սակայն փայտից է, փոքր: Պետք է դրա տեղը քարից շինել, Սուրբ իշման տեղի հողը կլցնի դրա հիմքերը:

* * *

Մեզ տեղափորեցին կայսրունու պալատին մոտիկ մի ոչ մեծ, բայց շքեղ ապարանքում:

Գիշերն անցրինք հոգնածության պարպումով: Մեզ խնամելու էին զրել երեք բոյար-իշխան, դեսպան Իվան Կալաշնինին, նաև երկու խորտկարար: Առաջոտյան աղոթքից, հացութացից հետո մեր գերադա՞շը դեսպան գեղապետի միջոցով մեր բերած նվեր նեռվագները, երկար ու ձանձրալի հանդիսությամբ հանձնեց կայսրունու անձնապահ հեծելազորին:

Մյուս օրը մասնակից եղանք հայոց նոր, քարե եկեղեցու հիմունքները զցելուն: Այդ գործը զիխավորեց Խորայել Արեգան, որ ճարտարապետ էր: Հավաքվել էին ոչ միայն շատ ուսւներ, այլև Սանկտ-Պետերբուրգում բնակություն հաստատած բոլոր հայերը, երեխ հազար հոգի՝ մեծ ու փոքր: Հայ

և ոռւս քահաները կականաբարձ սաղմոսներով օրհնեցին սրբատան քարինը: Գերազա՞նը, էջմիածնի Հոգը Համբուրելով, Հավասար գծով թափեց փոսերի խորքի երկայնքով: — Օրհնի՞ր, ամենակա՞լ տեր: Ընդունիր քո վաղագոյն իշման տեղի նշխարը, և Հավիայան լուսս վոր արա ալպն այս:

Մի ամբողջ շաբաթ մենք կարծես մոռացված մնացինք՝ ինքներս մեղ հետ:

* * *

Գերազա՞նը զարմացավ, ես՝ ոչ: Գերազա՞ն ասաց՝ Գոհար իշխանունի, կայսրունին ցանկություն է Հայունել քեզ քնակեցնել իր Հարկարամնում: Ասացի՝ Հույս, որ Աննա Իվանովնան ինձ չի դարձնի իրեն գահակից: Երեկի գիտի, որ արքայական գարմ եմ՝ Բագրատունի:

Հիմա ես կացարան ունեմ թագունու պալատում: Նույնիսկ մեր գերազա՞նի Տողի ապարանը սրա ճռիսությունը չունի: Չունի: Գուցեց թե մեր վաճառաշահ Ազուլիս քաղաքի իշխանական բնակաշենքը մի քիչ Հավասարվի սրան:

Թահնաք-մելանս երրեմն տարանում է պղնձե սրգակի մեջ ու անդուր հոտ անում: Երեկ Իվանի գուտար կայսրունի Աննան ինձ՝ Գոհարիս բնթրիքի կանչեց: — Օ՛, քո զինվորական Համբավը լսել եմ, — ասաց, — ուրախ եմ, որ սեղանակից եմ Հզորիդ, Հրեշտակամայր քույր իմ: Հայաստանի Այրարատյան աշխարհի, Երբակի, Գուգարք նահանգի, Նախիջևան աշխարհի, Սյունիքի ու Արցախի արթուն պետական ոգուդ, ողջույն: Այցդ բարության մղում է...

Ես լսեցի նրա այդ ասածը և մտովի թռա մեր լեռնաշխարհ: — Իմ խոնարհումները Հաղորդիր Ռուսիո ամենակալ իմպերատրիցային: — Այսպիս Հղեց ինձ Հայաստանը: — Ասա՝ կամբս է բարեկամ լինենք: — Մեր գուրս գալու օրը պարսից սարդար Նադիր խանը, որ Աշրաֆ ցեղից էր, մի գույդ կարմիր, երկարաճիտք կոշիկներ էր ուղարկել Մելիք-Ավան-Եղան գերազա՞նին: — Հագնվիր արքայաշուր: — Հիշեցի Սարս Մուստաֆա փաշայի լպրծած մոռմթը: — Զեր՝ Հայերիդ իշխանապետությունը նոր է, մեր սուլթանինը՝ հին: — Այգու վերջին զյադան է հաշում, ասացի, Հայոց թագավորությունը

Երեք հազար հարյուր տարվա է՝ Հայկ Աղեղնավորից սկսած
մինչև օրս։ Այդպես։ Քո նախնի սուլթան Օսմանը Օրխանը
ընդամենը երկու հարյուր հիսուն տարի առաջ թագ դրեց
ինքն իր զիսին։ Թափառական վայրենի ցեղից էր քո նախնի
Օսման Օրխանը՝ հեռավոր Զին ու Մաշինի հարակից թուրանի
տափառակներում, և ձիու միսը հում էր լափում, շիմանալով
ինչ բան է հացը։ Իսկ իմ նախնի հայ արքաները Բարելոնի
Նինոսի հետ տաճարներ էին կառուցում՝ մեջը երկնքի ու օվ-
կիանոսի խորհուրդները։ Քո նախնի Օսման Օրխանին հայ
թագավորը իր պալատում իրրե ճահի անդամ շէր պահի։—
Ողորմա՛ անձիւ, աստվածուհի՛, ասաց փաշան, երբ ես նրան
քարաճեղից հանեցի։— Երբե՛ք, — ասացի, — մենք արդեն
սովորել ենք ողորմության արժանացնել միայն նրանց, ով-
քեր ողորմալ զիտեն մարդ արարածին։ Դու անողորմ ես,
փաշա, և արժանի շես ողորմության։ Թեզ ու քո նմաններին
ես մի այն տեսակ պատուհաս կրերեմ, որի նմանը լի կա-
տարվել երկնքի ներքե, աշխարհի արարման սկզբից ու դարձ-
յալ լինելու չէ։

Այսօր էլ ահա ես Ծուսաց կայսրուհու հյուրն եմ, նրա
հրամերով, պարզ է։ Այսօր սակայն ես ոչ թե կուսակրոն մայ-
րապետի տապանք զուրջառի մեջ եմ, այլ հագել եմ զորական
զգեստս, որով մզմեցի ճակատամարտի Հալիֆօրի տակ, Մա-
րադայի գաշտում, շատ տեղեր ու տարիներ հոլով։ Այսօր ես
ինձ տասնապատիկ անկախ եմ զգում։

Կայսրուհի Աննա Իգանովնան հարցրեց.

— Զէի՞ր սոսկում կռվի մեջ մտնելուց, քույր իմ։— Այն-
պես նայեց ինձ, կարծես ես վանքի արեղա լինեի։

— Երբե՛ք։

Մարազայի կովում ես այնպես էի քրանաթուրչ եղել, որ
կարծես ընկել էի մոտիկ մեր Երասխ գետը՝ Հոռափերին
կամրջի տակ, որտեղ նա խիստ ժավալված ու խոր է։

Եքեղ հազնված, բմբուկ կլոր գդակներով, օծանելիք բու-
րող երկու բոյարուհի տիկին ինձ ընդառաջնցին կայսրուհու
մոտ։ Նրանք ժարիբած աշքապոշերով այնպես էին նայում ինձ,
կարծես ես հիմա կհռչոտեմ իրննց փափուկ բազուկները։

Երևի հայ հարյուրապետի զգեստս, Մխիթար Սպարապետի ինձ նվիրած կարճ թուրք, արծաթե կումբավոր գոտուս արանքը խրած ատրճանակս (ա՞ն, իմ սիրելի) նրանց զարմանքի հետ նաև առ էր պատճառում:

Կայսրություն հարկարաժինը ոտքի վրա էր: Այս ինչպես են հետաքրքրվում ինձնով, տե՛ր ողորմած: Մի դուռ ասես ուժդին քամուշ փակվեց, մի ուրիշը կիսարացվեց և արագիլի ճտեր՝ աղջիկների զլուխներ երեացին ու շրացան իսկույն:

Կաղնեփայտյա զանգվածեղ, նախշակիր դռներ են: Դրանք իրար հետևեց ետ տալուց հետո, բոյարուհիներն ինձ հասցրին մամերի անհամար լույսերից շլացած մի սրահ: Ես աշքերս կկոցեցի, լույսի հեղեղի մեջ դժվարով նշմարեցի կայսրուհուն: Մոտեցա, աշ ձեռքս զրի սրտիս, աշ ոտքս մի թիթե ծալեցի, ու ողջունեցի ոչ երկուտակվելով, ինչպես անում էին ուրիշները, այլ՝ թիթե զլուխ տալով, այն էլ այն պատճառով, որ նա ինձնից հինգ տարով մեծ է (լսել եմ): Ես... Ես այս աշնան կդառնամ երեսունյոթ: Անհա Իվանովնան իջավ զահից, և, որովհետև խիստ գեր էր, ժանրաքայլ մոտեցավ ինձ:

— Օ՛, քո՛ւր իմ, հպարտ եմ այցովզ:

Նա ինձ նստեցրեց իր զահավորակին հավասար փափուկ բաղկաթուի, հենց իր դիմացը: Մեր արանքում լիրանայան մայրի փայտից ցածրադիր նգույր էր, եզրերը՝ ոսկեօդ: Դրա վրա առաջ քաղցրավենի, միրո ու օշարակներ էին դրած սակե անոթներում, կարծես նաև զինի: Ճիշտ և ճիշտ ագույսան իշխանուհի տիկնոր բացած սեղան:

Պատուհանները բնեկվեցին մայրամուտի կրակներից: Լսելի էր ծովի խշջոցը: Լույսի մի բարակ շյուղ խաղաց կայսրուհու զանգվածային պերստ մատանու շեղըրին: Երբ կայսրուհին շարժում էր ձեռքը, որ ժանր էր երեսում, ևտ էին սահում նրա թեակալ ժանյակները, մատները շողում էին անհամար շափյուղյա, ոսկե ու մարգարտե զարդերից:

Ոտքերիս տակ թուրքական կիսալուսնով խեղված գորդ նկատեցի: Նոր, շատ նորագործ էր երեսում: Ահա՝ մեզանից առաջ են թուրքերը շտապել Ծուսիս ոտքը: Սովորանը կայսրուհուն երեխ ասել է՝ մեծ բան շնմ ուզում, միայն մի խանգարեր, որ ես մտնեմ Շամախի քաղաքը՝ մետաքսի հոտ տանելու իմ երկիրը, և Բաքու մտնեմ՝ մի քիչ նաևթ իսմելու:

Ո՞վ էր երեկ շշուկով ասաց, թե կայսրունու երակներում գերմանի արյուն կա: Իսկ զերման Կուրֆյուրստ կայսրընախիր իշխանը Կոստանտինոպոլսի դռները լիզողներից է: Տեղյա՞կ է Մելիք-Ավան-Եղան իշխանն այս բանին, թե՝ քնած է: Ո՞ւ, տեղյակ է: Ճանապարհին, երբ Հայաստանից գալիս էինք, նա ասաց. Երևում է թուրքը մեզանից շուտ է մտել Ռուսիությունիքը: Բոլորը դա տեսնում են, ասաց, Աննա Իվանովնան՝ ոչ:

Ես նգույրի վրայից վերցրի կիսով շափ ֆրանսիական թերեակնով գավը:

— Օ՛, մեծ կայսրունի Աննա Իվանովնա, քո մեջ քո ազգական հզոր Պետրոս Մեծի արյունն է եռում, տեսնում եմ: Իրա՞վ եմ: Պետրոս Մեծի հետ զինակից էինք մենք՝ ձեր գահի թշնամի թուրքի դեմ:

Այս ասելով ես ոտքովս տրոքեցի թուրքական կիսալուսինը: Կայսրունին կռաճեց միտքս, ակնարկից ու զորգը իսկույն տարան, ուրիշը փոխեցին իր ու իմ ոտքերի տակ: Նախաշ քաշեց երեսին: Այս անգամ չէ, հետո ինձ ասացին, թե Պետրոս Մեծն իր այդ զարմունքուն, որին քնքշանքով ստուպայացաւ—ըթամիտ էց ասում, մի անգամ կանչում, զրկում է: Իմ ստուպայա, զու պիտի մարդու գնաս Դերմանիա, գերմանացու:— Աննան լաց է լինում, սակայն հնագանդվում: Ամուսնանում է Կուտիլյանդի հերցոգի հետ: Հինգ տարի հետո ամուսինը մեռնում է: Այսպես է եղել: Աննային կանչում են տուն և նստեցնում կայսերական գահին:

Կայսրունին ևս բաժակ վերցրեց, դարձավ ինձ.

— Զորապե՞տ էիր, կնյագինա, Դոհար քույր իմ:

— Չորս տարի ձիու թամբի վրա էի, — ասացի ես: — Չորս տարի սրտիս սիրելի սպարապետի հետ բազկակից էի: Ամեն օր սպատերազմի մեջ էի, մինչև հաղթեցինք Հայոց աշխարհի թշնամիներին: Դավաճանը կտրեց սիրեցյալիս զլուխը: Դավաճանը եղբայրս էր:

Պալատական կանայք հառաշեցին: Ոմանք սկսեցին աղոթք մրմնջալ: Ինձ նայում էին իրեն երկնքից իշած արարւուի...
— Հետո՞:

— Դավաճան եղբայրս հայոց սպարապետի զլուխը, որ

նաև գահերեցն էր մեր աշխարհի, թոցնում, տանում զցում
է թուրք սերասկեր Քոփրլու Արդուլլահ փաշայի ոտքի տակ:

— Ահեղ է, ահեղ է, — ՀՀնչաց կայսրուհին: — Հետո՞ւ

— Ես ներկայացա Արդուլլահ փաշային, կարողացա նրա-
նից խնդրել եղրորս: Տվեց: Իմ ձեռքով երկրին ու ազգին դա-
վաճանած եղրորս շնորհին ժանր քար կապելով, զցեցի գետը
և մեռցրի:

Պալատական կանայք սարսափով իրար անցան: Ես դա
նկատել շտվի: Դինին պարպեցի մի հանգում: Կայսրուհին
հարցրեց:

— Հետո՞ւ:

— Մտա վանք:

— Ապաշխարհնելո՞ւ:

— Ո՞չ, — ասացի, — կրթական գործի լծվելու: Հաջողեցին
Այն ազգը, որ զենքի հետ կրթական խորաններ լունեցավ,
կմեռնի:

Ես նկատեցի, որ կայսրուհու մեջ ինչ-որ շափի արհամար-
հանք ժագեց իմ նկատմամբ: Բայց նա դա ցույց շտվեց,
հարցրեց՝ Հայաստանում շա՞տ են վանական եղբայրները:

— Համենայն դեպս քիչ էլ չեն:

— Իսկ միանձնուհինե՞ր, — հարցրեց նա: — Շա՞տ են:

— Ոչ: Միանձնուհիները խիստ սակավ են: Տղամարդիկ
մզվում են վանական դառնալու: Վանականը այնքան պար-
տարույժ է, որ ասել լի լինի: Վանականը ապրում է մառան
ընկած առնետի նման, որ երկու գույնի են՝ սև ու սպիտակ,
դալլարար լափում են, մինչև փորները քթներին է դեմ առ-
նում, ինչպես լինում է ութ ամսվա հղի կնոջ մոտ: Իսկ երբ
քայլում են, փորները լկվում են՝ զրով լիքը տիկ, զորու
վրա: Մեր երանելի Դավիթ-Ռեկը տղամարդ վանականներից
տասից ինի գլուխներն ու մորուքները խուզեց, զինվոր դարձ-
րեց:

— Գովելի է, — ասաց կայսրուհին: Սակայն այս անգամ
էլ ես նրա ձայնի մեջ դժգոհության երանգ նկատեցի: Մտովի
տեսնում էի հայրենի թաց երկինքը, որից ասես աստվածամոր
արցունքեւ էին կաթկթում Տողասարի մրկած, վաղեմիու-
թլունից ու թե զառամած, այլ՝ բյուրեղացած ժայռերին: Պա-
լատը շնչում էր երկունքի ցավերից գալարվող առաջնեկ ունե-

ցող կնկա պես: Օ՛, աստված,— խոսեցի ինքս ինձ:— Դու
ինձ շտմիր երկունքի հաճույք: Չտղի՞ր... Դո՞ւ, ո՞վ աստված,
հասու շես իմ տառապանքին: Բայց իմացիր, ևս հպարտ եմ
հենց նրանով, որ տառապանք ունեմ:

— Խոր կիսորհնս,— ասաց կայսրուհին:

— Ոչ այնքան,— ասացի ես:— Միտք եկավ մեջ՝ ով
տառապանք չունի, նա պարզապես ոչ է բանական:

Կայսրուհին նորից շշմած նայեց երեսիս: Ոսկե գավաթը
մեկնեց ինձ:

— Վայելիր այս գինին, իշխանուհի: Դու արժանի ես
մեծարանքի:

Մինչև զիշերվա կեսը խրախճացանք:

* * *

Արքայական պալատների մոտի ընդարձակ հրապարակում
զորաժողով է՝ հայ զեսպանության պատվին: Առավատվանից
զողանքում են Սանկտ-Պետերբուրգի եկեղեցիների զանգերը՝
«Դին-դան»: Գերազա՞ն Մելիք-Ավան-Եղան իշխանը մեզ
ասաց.

— Պատրաստվեցիք, Նորին տիեզերական մեծություն
կայսրուհի Աննա Իվանովնան մեզ հրավիրել է բանախոսու-
թյան: Ժամանակն է:

Հայոց Արքախոսի պետության եռանկյունի դրոշակը փող-
փողաց մուտքու մայրաքաղաքի կապույտ, թեթև ինչ խոնավ
երկնակամարում: Երեկի դրա շողարձակումից սև ազուավ-
ների երամներ խշշոցով փախան: Այս քաղաքում անհամար
շատ ազուավախմբեր կան:

Մեզ զեպի արքայական պալատ էր ընդառաջում կայսե-
րական դրազունական զորքերի մի հեծյալ սպայախումբ: Փողային նվազը, թմբուկների գափրը զդրդացնում էր քաղա-
քը: Մեր հայերիս պարկեցածողով զեսպանախմբին են միա-
ցել նաև քաղաքի հայ ազնվական մարդիկ ու երկու հայ քա-
հանա, զլուխ ունենալով Արտեմ ազտ Մանվելյանցին:

Նրանք զալիս են մի փոքր մեզնից անջատ:

Օրը ամառային տաք է: Հրապարակի շուրջկանով տնելված,
տափակած կամ երկարած անհամար կրպակ-խանութները

իսկույն փակվեցին: Մուրացկանների ամբոխ երեաց հրապարակի գանազան կողմերից: Աղքատ, դժբախտ ամբոխները Մտրելեց զինվորները հրացարանների խզակոթերով ու հայէոյական տարափով նրանց քշեցին: Գոհար իշխանուհին, որ չայլում էր իմ կողքով, ասաց:

— Այս մայր քաղաքում էլ աղքատներ կա՞ն:

— Որտե՞ղ չկան, — ասացի ես: — Աշխարհքս մի մեծ աղքատանոց է:

Մեզ շուքով հասցրին կայսերական պալատը: Հայն բացված գարպասի առաջ հետիւոտն դարձանք բռլորս: Կամարար Տիրոջ անձայն հրամանին ենթակա Խորայել արեղան մեր դրոշակը հորիզոնական պահեց, ախր կկպչի դռների վրազոտիններին: Կիշշրվի: Նաև այդ արարքը միտք ունի, այսինքն՝ ահա մենք խոնարհվում ենք քեզ, կայսրուհի: Կրծքիս տակ ցավ խոտղտաց—մինչև ե՞րբ խոնարհվելով ապրի հայր:

Ընդունարան սրահում, որ անհամար սյուներ ուներ, շորս ձեղնահարկ ու քառասուն խորան, քար լուսիլուն էր: Անշարժ կարծես չէին էլ շնչում երեսի մի երեք հարյուր պալատական, նախարար, գեներալ, բռյառ, նաև ազնվական տիտղոսի հոգեոր գասի ոբատկոյ մարդիկ, պճնված կանայք, մորուքները հինայած վաճառականներ: Կանայք, մեծավ մասամբ խոնըլած էին ձեղուններում, հենված ոսկեզօծ բազրիքներին: Հատակ երևում է, նախարարներից, որոնք կանգնած էին գահի վրա բազմած կայսրուհու աջ և ահեակ կողմերին, տասից ութը ոռւս չեն, այլ՝ գերմանացի: Գերագահը ականջիս շշրնչաց: — Այս գերման իշխանները անշուշտ խեղղել են թագուհուն՝ մի խառնվիր Արմենիայի գործերով:

Թղենու տերեմի շափ անծուխ բոցերով հսկա մոմեր էին թրթում պղնձե եռոտանի աշտանակների վրայից: Արարողապետը պճնված ձեռքի անշնորհք շարժումով մեզ ցույց տվեց, թե սրահի ո՞ր մասում խմբվենք: Խորայել արեղային թույլ շտվեց դրոշը ներս բերել: Արեղան, սակայն, կոթունից պոկեց մեր դրոշակը, բերեց, տարածեց իր կրծքին ու հպարտ կանգնեց գերագահի թիկունքում:

Առաջինը խոսեց մեր իշխանը և մինչև վերջն էլ մեզնից միայն նա խոսեց: Նրա ձայնը հանդարտ էր, ազդու, զերծ խնդրող երանդից: Նրա ասածը թարգմանում էր Արտեմ աղա

Մանգելլանցը: Հանգամանորեն ողջունելով կայսրունուն, զերագահը ասաց:

— Կուգենանք, որ աստծու կամեցողությամբ, մեծ նուսիան եղրայրական դաշն կնքի Հայաստան աշխարհի հետ կայսրունին հենվեց արքայական գավադանին, խռով մեղմ:

— Մեծ է Արմենիա աշխարհը:

— Մեծ է, բայց կիսված: Մեծ Հայքի արևելյան կեսը՝ Այրարատյան աշխարհ, Սյունիք, Նախիջևան, Արցախ ու Գարդման աշխարհները անկախ Հայաստան են: Արևմուտքը՝ Օսման սուլթանի կրնկի տակ է:

— Բարի՛, — ասաց կայսրունին: — Ուժ ունի՞ ձեր իշխանապետությունը:

— Ունի:

— Ինչո՞վ:

— Իր երեք հազար տարվա պետական գորությամբ, իր դիմադրական կամքով, տոկունությամբ: Երեխ ձեր ազնիվ ականջին հասել է, թե քանի անգամ սուլթանը արշավից մեր երկրի վրա: Արշավեց ու գախջախվելով՝ փախավ... Առավածապահ իմպերատրիցա, մենք շատ չենք, բայց հայ ենք: Հա՞յ ենք...

Պալատական նախարարը, որ ժանգագույն կեղծամ էր կրում, գլուխ տվեց թագունուն, ապա առյօնագլուխ գավազանով ինչ-որ ակնարկ արեց հավաքված յուրայիններին: Մի ակնթարթում հանդիսական խմբերը ցրվեցին, դուրս եկան: Մենացինք մենք, կայսրունին, Համայն նուսիռ եկեղեցու պատրիարք, արքայական պալատի մինիստրը, որին «մոժօրդ» էին ասում, ապա մի տասնյակ ովոյնվորա» — զորագարներ, պետական Դումայի բոյարներ: Առենապետ-քարտուղարը փետրե զրշով սկսեց զրի առնել մեր բանակցության երկկողմ խոսքը: Ես ևս ծունկի եկա, հանեցի գիետրե զրիշում մելանի սրգակը:

Ծուս իշխանները զրեթե շէին խռոսում: Կայսրունու կամքը մեզ իմաց էին անում գերմանացի պալատականները: Օ՛, մի՛թե նուսիռ ճայնք խեղգել են այս օտարերկրացիները: Անեա թվանովնան շէր էլ նայում ուստ իշխաններին: Կա՞ն, թե՛ ոչ: Անշուշտ, այս շկամությունը արգյունք է առ նախան-

ձու: Բայց վասն ինչի՞ն, և ինչո՞ւ միայն առ այս ասեմ: Տես-
նում եմ զործը շտկելու չէ, և չիք հնարի: Երբեք ոչ անկանի
մտքից դառն օրն այս: Գերագահը մեկուսի դարձավ ինձ:—
Արդ, լիցի՞ն մեղ ամոթ, Արրահամ Երևանցի: Կարծես նվաս-
տանում ենք:— Ասացի՞ն համբեր արա, աշխատիր միջոց ու
մխիթարություն գտնել:— Զարմանալի չէ, որ նա՝ մեր գերա-
գահներ ինձ հետ ողոքելով է խոսում: Նրա համար միապարզ
ժանակելի էր այստեղ ամեն ինչ կարգադրող գերման նախա-
րարի պահպաժքը: Ականցին ասացի՞ն թող փույթ լինի քեզ,
որ գերմանի ըմբռնումները հակառակ են մեզ: Թող գերման
նախարարի ուսած բաջատեսքը շշփոթեցնի քեզ: Իմացիր,
գերման դրսածինը պատրաստ է ի տես քեզ նույնիսկ ար-
տասուր բաժանելու: Կհավատա՞ս: Չհավատաս դրա մթար
վայրապարին: Նաև իմացիր, թագուհու հոնքերի մրագարդը
գերմանի է: Զգույշ... Աշխատիր նրան բնկալել իրեն պար-
կեցտագարդ, որ իրը թե ունի հոգու զեղապանծ վայելլու-
թյուն: Այս գերման նախարարի պղերդ կամքը մի նպատակ
ունի՝ կապուտ-կողոպտել Ռուսի աշխարհը, թուրքիո սուլ-
թանին ծածուկ քրս տալ Ռուսիո հարավերի վրա:

Նրնի իմ այս ասպազեն ասածներս խրախույս եղան նրանու
նա կայսրուհուն դիմեց սիրալիր:

— Քոյիդ իմաստության և հոգուդ ու տեսքիդ զեղեցկու-
թյան համբավն ավելի մեծ է, քան զեղեցկությունն ինքը: Ես
բաջացա՝ տեսնելով իրական տառապանքը, որ մեծ է անշուշտ,
քան վայելքը: Զերդ մեծության պալատում ես տեսնում եմ
ճշմարտության գոյությունը: Ճշմարտություն, ահա մտա-
տանջող առեղծվածի լուծման միջոցը: Միակը: Դա է մարդ-
կության նպատակի բնեռք և երկրից երկինք ձգված ծիածանը:

Գերման նախարարը զլուխ տվեց կայսրուհուն և, առնե-
լով նրա համաձայնությունը, հարցրց.

— Ասացեք, հայեք, ինչո՞ւ եք հալածական անում մահ-
մեղական դինի մարդկանց ձեր աշխարհում:

Մեր գերագահը վրդովված պատ արեց իր ձայնը:

— Խոտոր ես խոսում, հերք զերման: Սուս խոսելի պա-
տիվ չէ արքայական դիրքիդ: Մեր աշխարհում մահմեղա-
կան դինի մարդիկ շկան: Մեր Գանձակ քաղաքում, նախիչ-
գան նահանգում, Երևանում կան հատուկենա մահմեղական-

ներ, որ վաճառական են կամ արհեստ գործի: Նրանք՝ այդ
պարսիկները հայերիս հետ եղալիք են:

— Իսկ թուրքե՞ր:

— Թուրք ցեղի մարդիկ չկա Արևելյան Հայաստան աշ-
խարհում, Ները նախարար, — պատասխանեց գերադանչը: —
Արդար եղեք աստծո առաջ:

Գերմանացին շրջվեց գեղի կայսրունին, զլիսիկոր ինչ-որ
հարցբեց նրան: Ետ դարձավ, զլուխոր տնկեց՝ կտուրին պճբան-
քով տնկված աքլոր:

— Համայն Ռուսիո հզոր իմպերատրիցա Աննա Իվանով-
նան հարցնում է՝ ո՞րն է ձեր խնդրանքը, հայեր:

— Մենք խնդրանք լուսնենք, — պատասխանեց Մելիք-Ավան-
եցան իշխանը: — Մենք աղնիվ ու հավատար եղայրության
կոչով ենք եկել: Մենք եղայրության ենք ձգտում Ռուսիո
հետ: Մեր նպատակն է՝ նեցուկ լինենք մեկս մյուսին: Եթե
կամ է աստվածքնոտիր կայսրունուն, ապա բարեկամության,
եղայրության, զինակցության ուխտ ու դաշինք կնքենք միմ-
յանց հետ:

— Ընդդեմ Պարսի՞ց, — հարցրեց նախարարը:

— Ո՞ւ: Ոչ ընդդեմ որևէ պետության, այլ Հանուն մեր
երկրների անվտանգության ու պատվի: Ընդդեմ միայն մեր
տները ներխուժել ցանկացող թշնամիների, որ հորիզոնից էլ
որ նրանք գալու լինեն:

* * *

Երեք օր հետո մեր ցանկացած դաշնագիրը կնքվեց: Լեզուն
երկու է՝ ուստերեն ու հայերեն: Այդ օրը, կայսրունու հրա-
մանով, Մելիք-Ավան-Եցան իշխանին շնորհվեց ռուսական
բանակի գնեներալի աստիճան: Երբ գուրա էինք գայիս պալա-
տից, շքեղ ներքնամիջանցքում մի գուռ շրինկոցով բացվեց
ու փակվեց: Գերագահը ցնցվեց: Երբ դրսում էինք արդեն,
նա ինձ ասաց.

— Սուլթանի էլլի տեսա թագունու պալատում: Բեյ է գե-
պան էլլին: Դրան տեսել եմ նզվարդի պատերազմում:

— Գիտեմ, — ասացի ես: — Երեկ իմացա, որ թուրք բեյը
եղիպատական հմայիլ է բերել թագունու համար: Եղեգիյա

պապիրուս է, վրան աղոթքների շարան, կախարզության նշան-ներ, որ պետք է իրը կայսրուհուն պահպանեն շարից:

— Մի դռնով մեզ ճանապարհեց կայսրուհին, մյուս դրո-նով մեր թշնամուն ընդունեց: Հիշիր, Արքահամ Երևանցի, Շամիսրի, ապա և Եղվարդի կոփվներում մենք՝ Հայերս փա-կեցինք թուրքի ճամփան գնալի մուսաց աշխարհը:

Երեք օր հետո Սանկտ-Պետերբուրգը մեզ մեծ շուրջով ճա-նապարհեց գեղի մեր աշխարհը՝ Հայստան...

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՒԴԻ

Դեկտեմբերի Ավագ տոնի թիւպակոխ օր է: Արևը միայն երբեմն աշքահուապ է անում ամպերի ճեղքերից, իր նիհար շողբերը քսում դիզափայտի լեռներին, ահով շոշափում ամե-հի ձորերի երախները:

Հայոց գերազահ իշխանը իր հեծյալ շքախմբով, հետը նաև ինքո՞ Արքահամ Երևանցիս, գուրս եկած Տող բերդից: Հարց-րի՝ գնալոց հրազե՞ր է, իշխան մեր: Թե՛ պահանջ, թե՛ հրա-ման: Գերազահը երկար լոեց, կարծես մտատանչ, ապա ասաց զանգաղ:

— Խաղիր խանը խնդրանքով ինձ կոշել է իր մոտ:

— Մի՞տքը:

— Թե շար լինի, ոյատասիսան կոտանա:

Մի քանի օր հետո, ժեղը-ծեղին մենք իշխանը գեղի Մու-ղանի տափաստանը, որ Հայոց աշխարհի արևելքի մեծ դաշտն էր, դարդարված Երասխ գետի ավազային ու եղեգնային ան-կողինով: Դաշտը ամայի էր: Մի հիսուն տարի առաջ այստեղ զեսես հայկական շեն ու բազմածուխ գյուղեր կային: Դրանց բնակիչները, ուշինով պարսիկ խաների անվերջ ասպատակ կողոպուտներից ու գերի գողանալուց, թողեցին իրենց բնիկ տեղերն ու բարձրացան Արքախի և Սլունիքի լեռներում բուն դնելու: Մեզ միայն ավերակներ էին դիմավորում՝ բորենինե-րի ու շնագայլերի ռռնոցներով: Զմեռն այստեղ Պարսից կող-մերից եկած ավազակների խմբեր էին վխտում, ամառը, որ այրող տոթակեղ էր, դաշտը մնում էր մարդու շնչի կարոտ:

Հաստնը Մուղանի ծայր արևելքը, այնտեղ, ուր Երասխ ու

Կուր գետերը անազմուկ զրկախառնվում են ու ջրերի տրասում ծափբով մտնում կասպից ծովը: Երևաց պարսից բանակի լայնատարած նստոցը, որ մի կատարյալ վրանաքաղաք էր Ծա զարմացա, երբ այստեղ տեսա մեր կաթողիկոս Արքահամ Կրետացուն: Առաջինը նրան ողջունեց գերագահը:

— Բարի՞ է, վեհափառ:

— Մրտառուք տուրքս եմ Հատուցում, զավակ իմ, — պատախանեց արդին ժերացող վեհափառը:

Մեզ ընդունեցին մեծ խանի վեզիր վերիները: Մելիք-Ալան-Եզանի ու վեհափառի Համար նրանք զառ-զատ տեղեր նշանակեցին բնակության համար:

Այսպես սկսվեցինք մեր օրերի ընթացքը Մուղանում: Նա Հաճախ էի այց անում կաթողիկոսին: Նա մեղմիկ առում էր: — Ո՞վ մարդիկ, եթե երբեմ ես ձեզ ասեմ սիրեցեք ձեր թշնամիներին, աղոթեցեք ձեզ տառապեցնողների Համար, ապա իրավունք ունեք երեսծիծուք տալ ինձ: Դա այնպիսի քայլ կլիներ իմ կողմից, որ դրանից դենին այլևս հեարավոր չէր այլ բան անել: Սակայն այս իմ այցը պետք էր: Հիշեցեք, Հայ ժողովրդի մեծամեծ Համայնքներ են ապրում Իրանում, Նադիր խանի սրի տակ գտնվող Արարստանում, Հնդկաց աշխարհում: Պետք է աշխարհի կեսը նվաճած զորեղի աշքը քաղցրացնել մեր պանդուխա զավակների վրա:

Էջմիածնից նա հետը բերել էր տասը ուղար, տասը քորի, տասնվեց ձի: Նրա հետ էին ութինը վարդապետ, իր գավազանակիրը, որ քաջ հրացանաձիգ էր, ինչպես և խելքի շտեմարան նրա շաթը: Մեզ հովանի եղավ Նադիր խանի էլլի Սաֆար Ալի Արդուլ Հասան միրզան: Նա էր մեր կառավարը և հոգացողը:

Էջմիածնից հետը բերած իր մեծ վրանը կաթողիկոսը Հարել ավեց սակաշեն եկեղեցու նման, զարդարեց աղդ-աղդի երանքներով, բազմաթիվ խաշերով ու ծաղկադիպակներով: Բոլոր հայերս միախումբ կատարեցինք Թրիստոս աստծու տոնն Ծննդյան: Գիշերը մեծ ձյուն եկավ, որ շատ տառապացրեց մեզ: Օր-օրի մենք սպասում էինք Իրան աշխարհի մեծ սարդար Նադիր խանի կող հրավերին:

Ծննդյան տոներից տասնհինգ օր հետո միայն մենք տեսանք խանի ամարաթ կայսարը: Հրավերը եկավ: Բոլորս ժո-

զովզեցինք ու գնացինք Նադիրին այցի: Կաթողիկոսը խանի
առջն կուտակ արեց իր բերած ժանրագին նվերները: Նադիրը
խանդադատեց ու բերկրաց:

— Բարով եկար, խալիֆայ: Խնազե՞ս ես: Երեսւմ է ճանա-
պարհին շատ նեղություններ ես կրել: Ա՛յ, վա՞յ: Ախր դու
շատ հարգարժան մարդ ես:

— Իմ խան, աստված քեզ երկար ումբ տա, — ասաց զե-
հափառը: — Հենց որ քեզ տեսա փառքի ու բարվորության մեջ,
շատ ուրախացա: Օրհնություն փերվերդի մեծին, որ քեզ ա-
ռողջ ու կայտառ է պահում:

Նադիր խանն ուրախ ժիծաղեց:

Մենք հայերս առաջինը մեր ժանրագին նվերները դար-
սեցինք նրա առաջ: Առաջ ու մեծագին նվերներ էին բերել
նաև վրացի թավաղները՝ իրենց թագավոր-խանի անունից: Հատկապես առաջ էին Թիֆլիս քաղաքի քնծաները: Դրանք
խանի առաջ, զարձյալ վրաց թագավորի անունից, զարտդար-
սեց այդ մեծ քաղաքի գլուխ Աշխարհաբեկ իշխանի որդի
Մելիք-Ազարեկը, որին ես լավ էի ճանաշում: Այդ հայը Բագ-
րատունին տոհմից էր: Մեծագին նվերներ տվեց նաև Իվան
Կալաշնիկը, որ Ռուսո կայսրունու Դեսպանն էր Հայաստա-
նում: Խանը տեսազում, շոշափում էր քնծաները:

— Տուներդ ավագ լինի: Բարով եք եկել: Գոհ եմ: Շնոր-
հակալ եմ: — Այսպես նա խոսեց ոչ կարճ, այլ՝ երկար:

Մեր գերագահը, բոլորի անոնից ոզզուննեց նրա գալը, որից
հետո մենք վերադարձանք մեր քնակվելու տեղերը:

* * *

Հայ իշխանները հաճախ էին այց անում մեր կաթողիկո-
սին: Սովորաբար դա կատարվում էր իրիկնային ազոթքի
ժամերին: Եվ բանի որ եկեղեցի շկար այս ամայի դաշտում,
ապա հավաքվում էինք զերագահ իշխան Մելիք-Ազա-
նի հանգստյան օթեան վրանում, որ քնծարձակ էր: Քահանա-
ները հերթով պատարագ էին կատարում, զինվորները մոմեր
գառում Թրիստոսի խաչելության պատկերի շորս բոլոր:

Մելիք-Ազան-Եգան իշխանը մոայլ մթնդած էր: Մի աղոթ-
քի ժամանակ կաթողիկոսը նրան մեկուսի հարցրեց.

— Դու, տեսնում եմ, մեծ ցավ ունես, տեր գերազա՞ն,
և հիվանդ լե՞ս:

Առանց աղոթքը զադարելու, գերազա՞ը մի տեսակ դժու-
հեց:

— Զես նայում շուրջո, հոտի հովիվ: Եատ բանի վերա-
համ շես: Նազիրի բանակում յոթանասուն հազար գերիներ
կան: Դրանք բերել են վրաց կողմերից ու հայոց Եամախի
քաղաքից:

— Աստծու կամեցողությունն է,— ասաց կաթողիկոսը:

— Յավս նրանք են, հայրապետ հայոց: Պետք է փրկել
գերիներին:

Մեր օրերն անցնում էին միանման ու լարված: Ոչ ոք
չզիտեր, թե վաղվա օրը ինչ է բերելու իր հետ: Աղոթք անե-
լիս մեկ էլ տեսար մերոնցից մեկը ողբաց:

— Յոթանասուն հազար գերի: Մեղա՞ն, մեղա՞...

Ավան-Եպան իշխանը կաթողիկոսից ոչ այնքան խնդրեց,
որքան պահանջեց զերիներին ազատելու միջոց գտնել:

— Թեկուզ քեզ մարու տաս, վեհափառ հայրապետ: Փոր-
ձիր: Դա հայի արդար պահանջն է: Նման իրավունք մեզ
տալիս է Եղվարդի հաղթանակը: Ինքս կիսնդրեի, սակայն,
ավա՞զ, զերվածներն իմ իշխանապետության հպատակները
չեն, ես իրավունք չունեմ նրանց վրա:

* * *

Օրը բավականին տարածամել էր: Նազիր խանը իր սի-
րելի սպասավոր էլլի Սաֆար Ալի Արդուզ Հասան միրզային
առաքեց կաթողիկոսի կացարանը և նրան խնդրեց այց անել
իրեն: Կաթողիկոսը ինձ ևս վերցրեց հետք: Ծա աղաւեցի աստ-
ծուն՝ զթալ մեղ, թագավորների ու բռնակալների մոտ գնալ
կա, ետ զալ՝ ոչ:

Գրեթե զողալով մտանք խանի վրանահյուս ամարտթը,
մի կերպ նրան ծանուցի վեհափառի գալը: Խանն խսկույն
նրան կոշեց իր առջեւ: Վեհափառն ու ես դժբախտ կանգնե-
ցինք նրա առաջ, ես ծունկի եկա, կաթողիկոսը՝ ոչ: Նազիրը
սկսեց հարցանել զասն մեր աշխարհի հարեան թուրքերի,

ինչպէս են կարավանից երթենկը, ճանապարհները ու նման բաններ կաթողիկոսը ըստ պատշաճի պատասխան տալով, գոտեպնդվեց:

— Գոհություն քո իքքալին ու գովյաթին, ո՞վ աստծուն ցանկալի: Եղվարդի հաղթանակից հետո մեր աշխարհը ահա խաղաղ է ու ապահով ամենայն կողմով: Վաճառաց կարավանների ճանապարհները բաց են ու անվանդ, զնալ-զալ կատ:

Տեսնելով, որ խանի հօգու սատանաները քեած են կամ նրա մարմնից բացակա, վեհափառը համարձակություն արեց:

— Ներող եղիք, օ՛, աստծու սիրած: Խնդրանք է Շամախի քաղաքից բերած գերի հայերին ազատություն շնորհես: Նրանք գրեթե մահվան դռանն են:

Նազիրի աշքերը, որ մինչ այդ խաղաղ ու հանգած էին, կրակի բուրաներ գարձան:

— Ալդպե՞ս... Շատ մի՛ տրամիր, խալիֆա, քանի որ թե քեզ, թե ինձ, և թե այդ գերիների համար մի բան հավասար է՝ մահը և այդ մահը միշտ կա: Հազիվ թե մեկն իմանա, թե երբ էժամանի իր վախճանը:

Ես նկատեցի, որ նա հավիտյան նետված է շար ովհների գիրկը և հազիվ թե բարություն անի մարդ արարածին, եթե զրանից շահ ու օգուտ չունի: Նրա հայացքը դարձավ զիվային և նրա բերնով նորից խոսեց շարեաց խրատատուն:

— Անհնարինա ու գժվարինս կամեցար, խալիֆա: Դերին իմս չէ, գերին զորքինն է, զինվորի իրավունքն ու ավարք, նրա թոշակ-ոռմանկը, նրա հացը, ապրուստը, ինչպե՞ս ես հացը խլամ զինվորիս բերանից ու քեզ տամ: Ուր որ է գերեվաճառներ կգան ու կզնեն-կառնեն քո այդ հայերին, որ տանեն այլ տեղեր բարձր գնով վաճառնեն: Աշխարհս առ և տուր է: Երթաս բարով:

Երբ դուրս եկանք նրա մոտից, նոր զգացի, որ ողջ եմ ու մայրամուտ է: Ես բռնեցի կաթողիկոսի ծյուրացած ձեռքը, որ լընկնի: Տեղ հասանք շգիտեմ ինչ հետով: Երեսնիվայր ընկնելով կողինքի խշտիին, կաթողիկոսը փառք տվեց Քրիստոսին, որ հզոր պատժողի ձեռքը հեռացրեց իր վրայից:

Մյուս օրը, որ սովորական էր, զնացինք դեպի եզրն Երասխի, զոնե Հեռվից դիտելու գերիների աղետյալ ճամբարը Կաթողիկոսին ողջունեցին Նազիր խանի սպասավորները՝ երկու ամլիկ գառ գրկներին:

— Ի՞նչ խնդրեք, — աշուսարսափով հարցրեց վեհը:

— Աղջությունդ, — պատասխանեցին պարսիկները: — Սքենդարի Նիշան Նազիր խանն այս թուրքանդա գառը ուղարկեց քեզ, որ ճաշակես ու օրհնես իրեն:

— Ապա, — հարցրեց, — մյուս գառն ո՞ւմ պիտի տանեք:

— Մյուսն էլ մեծ խանն ուղարկել է Մելիք-Ավան իշխանի համար, իբրև բարեկամի ուխտի կուրրան:

Հենց ձիու վրայից կաթողիկոսը շնորհակալ եղավ ու առերես համբարձմամբ ձեռաց օրհնեց խանին, զառ բերոզներին մի-մի դրամ պարզելով:

* * *

Մարտի առաջին օրերն էին: Մուղանի գաշտը լիովին կանալել էր: Բայց այդ վախվորած, նուրբ կանաչը հազիվ մինչև ամսվա վերջը մնա, կոկովեն այս կողմերի շողերը և այրուցքից պոռշները ճաքճամբած հողը կդառնա անապատային:

Մէր վրանի մի թաղքապատը ծայրից-ծայր բաց էր: Դըրառում հավաքված մեծ ամբոխ էր: Նրա մեջ հատկապես աշքի էր ընկնում կանաչ չալմայով մի դերվիշ: Նրա ականջակալ զգակը, որ թաղիքից էր, իշել էր հոնքերի վրա: Դա տեղ-տեղ քրքրված էր, ասես մուկ էր կրծել: Մահուդե կապան փոշոտ ու ցեխոտ էր: Մեջքը պրկած էր կարմիր ատլասե կտորով՝ մի քանի ժամ: Ես, որ չէի սիրում գերվիշներին, այժմ ահ զգացի նրանից: Նա երեմն անփուլթ անցնում էր մեր վրանի մոտով ու ինձ թվում էր, թէ նրա շատ խոշոր աշքերն ինձ ժանոթ են:

Շահի վիայտաշեն ապարանքի առքն սիապահիների զորախազեր էին: Կանաչ չալմայով դերվիշը ձեռքերը տարածած երանի հին քասիզներ էր ծոր տալիս: Ընդմիշնելով նա երկյուղած գոշում էր.

— Զա ֆաթի՛ Հ...

Ամբոխի միջից շատերը ձեռքերը տնկում, կրկնում էին
նրան:

— Յա ֆաթի՛չ...

Այդ անելով նրանք իրենց մատներով շոշափում էին իրենց
մորութերը:

Երբ գիշերը կիսվեց, ողջ օրը լուծ քաշած եղան նման
ջարդված ընկա վրանի հատակը ծածկած կոշտ թախտին:
Դուե փոքր ինչ քուն առնեմ: Մակայն աշքիս մեկը խուփ,
մյուսը բաց, վրանի կապերտե վարագույր դուռը ետ գնաց:
Լուսնյակի լույսի մեջ ես տեսա կանալ շալմայով պարսիկ
գերվիշին: Թիշ է ասել սոսկացի:

— Ծրագ մի՛ արա, Արբահամ Երեանցի: Նաև մի՛ գողա
ահից: Այս ես եմ: Ե՞ս եմ...

— Դո՞ւ, Գոհար իշխանուհի: Դո՞ւ:

— Ծրագ մի՛ արա:

Դերվիշի գունով ժպտված միանձնուհին նստեց ինձնից մի
փոքր հեռու:

— Ականջդ, հույս, որ քնած չէ, Արբահամ եղբայր: Նաև
խիզճդ է արթուն: Նաև... ականջովդ առ ու սրտիդ
մեջ ամփոփիր այն, ինչ հիմա կլսես իմ բերանից: Հատա՞կ
ասացի:

— Հպատակդ եմ,— տեղս նստելով ասացի հս:

Գոհար իշխանուհին, որ հիմա Գոհար միանձնուհի է,
խոսեց:

* * *

Մղձավանջից արթնացա սթափվելով: Ինքս ինձ նախա-
տեցի՝ այս ի՞նչ է, այս ճակատագրական պահին մոլորվել եմ
հուշերի մշուշում: Իսկ զերիներին տանո՞ւմ են... Ես շտապեցի
անմեղ գառնուկներին հասնելու, գուցե թե հաջողեմ փրկելու:
Մտրումս գծեցի այն ճահապարհը, որով պետք է գնամ բա-
զեների ճանկերից աղավնիներ խլելու... Ծ, Շամախի: Հինգ
տարի առաջ ես այնտեղ գորդ, ժանյակ ու դիպակ գործելու
վարժարան առեղծեցի: Շամախու հայ հարուտները նախ
դժգոհեցին:— Ի՞նչ է, ի՞նչ է: Աղջկա վարժարան: Աղջկը որ
զարձավ տասներեք տարեկան, պետք է փաթաթել մետաքսի

մեզ ու մարդու տալ: — Բայց հնագանդեցին կամքիս: Աղջիկ-ները այնպիս էին կոչում ինձ, կարծես իմ փորից էին դուրս եկել: Ախ, ես ձեզ մատաշ՝ լինեմ: — Այր-բեն, — հեզում էին նրանք: Ծվճվոցով խռնվում էին հին ձեռագիր մատյանների մանրանկարների վրա: — Ալսպե՞ս, մայրուհի, այսպե՞ս դոր-ժենք: — Ա՛խ, անողո՞րմ աստված, հիմա, ո՞վ իմանա, իմ այդ աանուհի աղջիկներս գերի են... Հոգմի բերան ընկած երամ...

Մելիք Աստվածապովը ինձ ներկայացրեց մի պատանու:

— Գյուլիստանի մելիք Բեկլարի որդի Հովսեփ բեկն է:

Սանոթ եղիր:

— Ա՛... — ես քննախույզ նայեցի տղային: — Քո ծնված օրը հիշում եմ, պատանյակ իմ: Գիր զիտե՞ս:

— Գիտեմ:

— Որտեղ ուսացիր:

— Թառինջում, քո հիմնած դպրոցում:

— Ինչո՞ւ ես եկել մոտա:

Տղայի խոչոր աշբերից ազերսանք հոսեց:

— Ինձ ես վերցրու քեզ հետ, տիկին իշխանուհի: Իմ նշանածք զերվածների մեջ է: Նա Շամախու գրշատան Մովսես պատկերահանի գուտրին է: Նա...

— Միրում ես:

Տղան նախ կարմբատակեց, ապա սպազնեց: Ես խղճացի նրան: Ես զիտեմ, թե ինչ պատիժ է սերը: Հոգին չէ միայն, որ քրքրում է, այլ հոշտում է մարմինը: Ինչպե՞ս էր ինձ սիրում այն սեղ պատանին... Օ՛, աստված անիրավ: Եթ ինչ-շո՞ւ ենք մենք հենվում քո բարեկթության վրա, մի բան, որ դու շունես, ինչպես շունի ճահճում տողած գորար:

Հովսեփ բեկ պատանուն զուգեցի արեղայի արեմով, որ հետաքերել եմ Մուղան: Երեկ նորից այց արի նրանց՝ երամ-երամ գերիներ, այս Մուղանի գաշտի մշուշիներում: Ահա ինձ են հասնում այս արևելյան հեռավոր հորիզոնից ժայթքող գեր-վածների աղաղակները: — Ա՛...: Ահա ես պարսիկ գերվիշի կանալ բրձուքի մեջ ծալոված ինձ գցել եմ այստեղ:

Վրանի դուռը բացվեց: Ահա՝ լույս կա, արևածագ է: Իր շաթրի ետևից ներս մտավ Աբրահամ կաթողիկոսը: Զարդուեց ինքն իրեն:

- Դո՞ւ, Գոհար միանձնու՞ի:
- Ե՞ս:
- Նախկին կորովի զորավար, դո՞ւ:
- Ե՞ս:
- Հիմա էլ գերվիշի՞ն կերպի մեջ:
- Եսն կերպ էլ կտանամ, եթե... եթե պետք լինի ազգիս, — ասացին նրան: — Պարսից բանակում յոթանասուն հազար հայ գերիներ կան:

Կաթողիկոսը մարդ ուղարկեց գերիների վիճակը տեսնելու: Նրանք ետ եկան իրրև գուծաբեր: Գերիների մեջ հազարավոր հղի կանայք կան, ասացին, որ սկսել են ծննդաբերել: Կաթողիկոսը հեաց.

- Ինչպե՞ս: Ախր ինչպե՞ս...
- Պիղծ են, — ասացին նրան: — Օտարից են այդ ծնվածները:

— Ո՞ւ, ո՞ւ, — գոշեց կաթողիկոսը: — Որո՞ւ զորությամբ եք այդպիս խռովոր խռովում: Թանի՞ն ամիս է, որ այդ թշվառ կանայք գերված են: Վեց, չէ՞: Աւրեմն ինչո՞ւ կզրախռուիք: Կանայք վեց ամսում հղացան ու ծնեցի՞ն: Ո՞ւ, նրանք հղացել են իրենց տների մեջ աստծո կամեցողությամբ: Նրանց պարուղը Քրիստոսինն է: Պետք է կնքել նորածիններին...

Ես հավանեցի վեհափառի վճիռը: Նա Աղուլիսի ավագերեց աեր թումային, որ իր աղամելիրակության մեջ էր, հրամայեց զեալ ու Արաքս գետի մէջ մկրտել նորածիններին: Հանձն արեց թուրքին անընաել Մուղան՝ տղա, թէ աղջիկ: Ես հագանեցի նրա արածը, ասացի՝ Հոտի հովիվը իր օրը սոսկ աղոթքներով չպիտի սպառի, այլ պետք է հոգա Հոտը զայլերի ճանկներից փրկության: Կաթողիկոսը հեծեծաց.

— Սակայն ինչպե՞ս, միանձնու՞ի դուստրս, ինչո՞վ գերիներին թափեմ: Դա անելու համար միջոց է պետք, զնրեզին՝ արծաթ ու սոկի: Աւրեկի՞ց գտնեմ: Ախ, տե՞ր աստված...

Մի շարաթ հետո ես Հովսեփ բեկի, նաև էլի հավատարիմ մարդկանց միջոցով երկու պարկ սոկի դրեցի կաթողիկոսի առաջ:

— Ահա ե քեզ սոկի, վեհափառ: Միայն չհարցնես, թե որտեղից է, միևնույն է՝ պատասխան չկս ստանա:

Կաթողիկոսը իր խցախ-բրձերը, նաև նազիր խանի նվի-

բած զրանը բեռնեց իր ձիերին ու չորիներին: Ռոկին թաքց-
րինը բեռների մեջ: Գնացինը գերիների ճամբարը: Հասանք,
զիրիների ամբոխը հույսով նայեց մեզ: Ռմանք հաղիզ էին
մեռմ ոտքի զրա, ոմանք իրենց երեսները շրջեցին մեղանից,
ինչպես արևել էին երևի նաև աստծու նկատմամբ: Փորբերը,
ժանավանդ, անմխիթար վիճակում էին: Մենք տեսանք, թե
ինչպես մի գեռատի աղջնակ, որ երևի տաս տարեկան լիներ,
կրակով այրեց ինքն իրեն ու բոցով բռնկված սկսեց վազվը-
զել:

— Սատկա՞ծ է հայի աստվածը: Սատկա՞ծ...

Նրա տեր պարսիկ զինվորը աղաղակեց:

— Ապրանքս այրվե՞ց: Ապրա՞նքս: Էհե՞լ, սատանի բաժ:

Նա երկար նիզակով խոցոտեց աղջկան, մինչև սա ըն-
կավ ու մեռավ: Պարսիկը զաղազած թռավ գեղի կաթողի-
կոսը:

— Քու պատճառով իմ ստացված ապրանքը կորուսվեց,
զե՞ւ, զի՞ւ: Ապրանքիս զինը տուր:

Ե՞ս՝ Արքանամ Երեանցիս մի ոսկի զցեցի նրա բերանը:

— Վերցրու ու շրվիր:

Պարսիկ զորապետները հավաքվեցին կաթողիկոսի զինին:

— Ա՛, մեր արև խանի բարալրդ խալիթա աղա, եկել ես
գերինե՞ր զինելու:

— Համը մի ոսկի,— առաջարկեց վեհափառը: — Բարձր
զին է: Համոզեք ձեր զինվորներին, զլուխը մի ոսկի:

— Եղիցին, — ասացին զորապետները:

Մենք սկսեցինք զերությունից թափել մեր սառապյալ
հայերին: Ես օրհնեցի կանալ շալմայով դերվիշին, թեև նման
իրավունք չունեի հավատիս բերումով: Սակայն ինչո՞ւ լսիրել
մարդ փրկողին, ինչ հավատի էլ ուզում է լինի նա:

Ութ օր շարունակ մենք մեր փրկական դործն էինք անում:
զերիներ աղատելով: Բանձր խմբերով նրանց ուղարկում էինք
Արցախի լեռնակողմերը, նաև Սյունիք: Այսպիս մենք թափե-
ցինք զրեմբ բոլոր գերիներին: Դերվիշը կաթողիկոսին ասաց.

— Մնացին Շամախի քաղաքի դժբախտները, վեհափառ:
Նրանք պատկանում են խաներին: Երեկի տեղյակ ես, որ Վե-
լինամաթ նադիր խանն ինքն իր ձեռքով հիմնահատակ բան-
դեց հայոց Շամախի քաղաքը:

Կաթողիկոսի շաթրը մեր առաջ զրիկ կերակուր գրեց: Վեհափառի խոհաբարը դա եփել էր ծեծած ընկույզից, բակլայից ու սխառորից, վրան քացախ արել: Սկսեցինք ուստի: Շարքաթ խմեցինք թունկի բերանից: Առաջինը վեր կացավ Դոհարիշխանուհի գերպիշը: Եեշտ նայեց կաթողիկոսին:

— Վերականգնիր Շամախի քաղաքը, խալի ֆա:

Կաթողիկոսը ձեռքերը տարածեց:

— Ինչպե՞ս:

— Թու սիրելի Վելինամաթից խնդրիր, թող քեզ տա Շամախու ավերակները, ապա ֆարման-իրավունք՝ դա վերակառուցելու: Դա հայերիս ամենից հին ու հարուստ քաղաքն էր Կուրի ձախակողմում: Դա զստաճելի կամուրջ էր մեր ու Ռուսիու աշխարհի միջև: Այդ կամուրջը քանդեց Նազիրը, մենք պետք է վերաշինենք: Ես գրամով կզնեմ շամախեցի գերիներին, ու նազիրից խնդրիր քաղաքի ավերակները:

— Անհնարին, է,— հեաց կաթողիկոսը: — Շամախին արքունի է: Նազիրն ինձ հող չի տա: Մի՞թե զու, հրեշտակուհի, միտք ունես նրա ձեռքով ինձ զերեղման գնելու: Անհնարին է:

— Անհնարին ուինչ չկա, — շղիշեց Գոհարը: — Թանի Պարսից աշխարհի տերը քեզ հետ բարի է, խնդրիր: Զորք չէ զորությունով շահում, այլ տերն է տկարացնում նրա հակառակորդին:

Նա դիմեց զեպի վրանի ելքը: Դռան մոտից շրջվեց ետ:

— Թե չէ ժողովրդի անեծքը կփլվի վրադ, կաթողիկոս ամենայն Հայոց: Խնդրի՛ր: Կամ կանի, կամ զլուխդ կկտրի: Դե ի՞նչ մի մեծ արժեք ունի քո կամ իմ զլուխը:

Նրա վերջին բառերը երեխ կաթողիկոսը հազիվ լսեց: Ընկավ իր խշտին, սկսեց այրովել: Նրա խորակի ամանի վրա ճանձեր հավաքվեցին: Ամեն արարած իր որովայնի ցավումն է: Ոչ մի աղոթք չեկավ զլուխս:

* * *

Մյուս օրվա առավոտյան Արքահամ Կրետացի կաթողիկոսը նստեց իր սպիտակ քորին ու, ինձ էլ հետը վերցնելով, զնաց զեպի խանական ապարանքը: Երկինքն ամպամած էր: Դեպի զետե իջնող տափարակի վրա խլրառում էր Շամախի քաղաքից

բշկած-բերած գերիների ու զանգվածը: Գետափին խոս էր ելել՝ կծոյսոր, եղինջ, թրթնչուկ, կինձ ու կաթեռւկ: Դժբախտ մարդիկ փռվել էին զետնին ու փորեների վրա ուզ տալով, պարզապես արածում էին:

Խանի զուլամները կաթողիկոսին ընդունեցին ու երեք ժամ պահելուց հետո, տարան իրենց մեծ Վալինամաթի մոտ: Նա-դիրի տրամադրությունը մի ողջ եղնիկ կերած առյուծի էր — է՛, խալիքա բարալը, հույս, որ առողջ ես, արի ես, ինչպես միշտ:

Կաթողիկոսը հավատով նայեց նրան:

— Խնդրանք ունեմ, մեծ Վալինամաթի, ասաված քեզ հա-զար տարի կյանք տա ու երկնային գերիների խմբեր:

— Ի՞նչ է, քեզ մեկնումեկը նեղացրե՞լ է: Գլուխը կկտրեմ:

— Ո՞ւ, ոչ ոք չի նեղացրել ինձ, օգոստափառ տեր մեր:

— Ուրիշմե...

— Արդ ունեմ քեզ: Ես շամախեցի հայ գերիներին կպնեմ ուկով, տեր մեր բարեգութ: Միայն հրաման տուր Շամախի քաղաքի ավերակները տան ինձ, որ այդ գերիներին տեղա-վորեմ այնտեղ:

Խանի հոնքերը դարսդարսվեցին՝ իրար մեջք հեծած ու մողեսներ: Վեհափառի ձայնը վստահ էր:

— Հայերը կշենացնեն քեզ հպատակ այդ քաղաքը: Քո զանձարանին առատ հասույթ տուրքեր կտան, բարեխնամ տեր մեր: Շամախին նախկինի պես վաճառաշահ կդառնա: Քո կամեցողությամբ նա կդառնա արքունիքի խաս, այսինքն՝ անձիդ սեփականը: Քո զանձարանը կառատանա այդ քաղաքի հարկատուրքով:

— Ուրիշ:

— Տիգ ու զիշեր ժնկածալ կաղոթեմ քո ողջության համար, ո՞վ մեծ, ո՞վ աստծու ստվեր երկրի վրա: Ազերսում եմ կրկը-նելով՝ գերությունից թափիր Շամախու հայերին, և իրավունք տուր գնան ու բնակվեն իրենց բաղաքի ավերակների մեջ, իրեն քո սեփական կալվածք: Նրանք այնտեղ նորից արշես-տի գործ ու առևտուր կտակդեն, այգի կտնկեն, արտեր կա-նեն, շերամորդ կպահեն, և հավիտյանս քեզ հպատակ ու միայն քեզ խարզատուր կլինեն: Իրավունք տուր, մեծ բա-

բերար, աղաշում եմ: Ասեմ՝ Շամախին նաև քեզ զինվոր կտա,
պակասոց-պակասը էլի մի հազար կռվող:

— Բայց Շամախու գերիներն իմը չեն, խալիֆա,— ասաց
Նազիրը: — Դրանք իմ զորապետների հալալ վաստակն են:

— Սո նրանց կգնեմ, ինչպես շատերին եմ գնել ոսկով քա
հավատարիմ զինվորներից:

Նազիրը ներ աշքերը կկոցեց: Նրա մի բեղի ժայրը դողաց:

— Մաշալլահ, խալիֆա բարալըզ: Մաշալլահ: Դու օգ-
տակարն ես մտածում: Դու ինձ մի ամրող քաղաք ես ըն-
ծայում: Մաշալլահ:

Նրա հրամանով մեծ վեզիրը ռահամ գրեց՝ կաթողիկոսի
թափած գերիներին իրավունք է տրվում գնալ իրենց տեղերը
և Շամախին վերաշինել իրենց ցանկացածի պես:

Շամախու ժողովուրդը վերադարձավ, զնաց իր տեղը: Ես
պատա, որ մեր կաթողիկոսը ավելորդ չի ապրում այս աշխար-
հում:

* * *

Նազիր խանը յուրայիններին և Հյուրերին ասուծու մի օր,
արևածագին, հրավիրեց այցելել իրեն: Հրավիրվածի կանգ-
նելու վայրը որոշված էր ու ամեն ոք իր տեղը ճանաշում էր:

Մեծ խանի վրանը զարմանք բան էր: Դա շինել, բերել էին
Ղազրին քաղաքից: Երկարությունը հարյուր տասը հալեպի էր,
լայնությունը՝ հիսուն, բարձրությունը՝ տասնութ: Սագաշեն
էր, քան սյան վրա: Սյուների գլուխները կողակածն էին, շի-
նած արծաթից, որպես միջակ ձմերուկ: Վրանի արտաքին
կողմը բռնոր էր՝ թանձր ու խորագույն: Մեզը Գիլանի մետաք-
սից էր:

Հայերս պարզեցինք մեր խաշակիր գրոշակը ու գնացինք:
Ճանապարհին Մելիք-Ազան-Եգան իշխանը կաթողիկոսին
հարցրեց.

— Արդյոք ձերդ սրբազանությանը հայտնի՞ է խանի հրա-
վերի պատճառը:

— Ոչ, զավակ իմ, — պատասխանեց վեհափառը լարվե-
լով: — Ի՞նչ կարծես դու:

— Թե զործը ներբին լիներ, հազիր թե խանն ինձ, որ
իրենից անկախ եմ, հրավիրեր, — ասաց վերագահը:

Վրանների արանքում տնկվել էր խանի համար հապշտառ կառուցած փայտաշեն ապարանքը: Դրա անհամար նեղ պատուհանների գունավոր ապակիների արանքից սառը լույս էր թափանցում ներս: Մեզ՝ հայերիս ընդառաջ եկավ էլլի Սաֆար Ալի Արդակ Հասան միրզան:

— Փոքր ինչ պիտի սպասեք, մինչև մեծ խանը ձեղ ընդունի:

Նա խոսեց հազիվ շրթունքները շարժելով: Կաթողիկոսը, որ իրեն հյուր էր զգում, նոտեց մի սև աթոռակի, որ նրան մատուցեց միրզան, մեջքը հենց գորգերով ծածկած փայտայա պատին: Ալոռ մատուցեցին նաև Մելիք-Ավան իշխանին, իսկ մյուսներս մնացինք ոտքի վրա: Կաթողիկոսի աշքերը նինջ լցվեց ու նա գրանք կկոցեց արևի տակ մեկնալած կատվի պես, աշխատելով լընել: Երբեմն կիսարացում էր մի աշքը:

Նորից երեաց Սաֆար Ալին, ձեռքերն իրար միացնելով ասաց:

— Գնանք, ժամանակն է:— Նա խնամքով բռնեց վեհափառի ձեռքը:— Դու խոհեմ եղիր, խալիթա աղա: Հիշիր, որ էջմիածնի հոռի մի մասը ցրիվ է ու գանվում է խանի իրավունքը տակ: Հնազանդ եղիր բարերարին ու կատարիր նրա կամեցողությունը, մի՛ խոսիր գերիների մասին մինչև տեսներ ասոված ի՞նչ է ուղարկելու մեղ:

— Իսկ դու ինչի՞ ես սպասում, միրզա արքար, — հարցրեց կաթողիկոսը:

— Չգիտեմ: Եվ որտեղից իմանամ անիմանալին, — նիշար ուսերը ձգեց գրեթե պատանի միրզան:— Մի քան միայն զիտեմ: Եթե մենքն ինձ բարիք խոստանա, ես նույնիսկ շնորհի հավատը կընդունեմ: Հավատը կեցուցիլ իշխանություն է: Իսկ ասոված իշխանավորին գրկարաց է ընդունում:

Միրզան մեղ տարավ Նաղիրի հարկարաժինը: Դուռը բացվելուց կերպների բոցերը թրթուացին: Սքենդերի նիշան խանը մենակ էր: Երեսում էր, որ հենց նոր է զերջացրել օրվա նամազը ու աղոթքի թմբիրի ներշնչանքով հոգնած բազմել կապերաների վրա դրած ոսկեկար բարձերի, հայացքը զցել առջին բաց դրած Պուրանին: Ընդարձակ քոշքում օդը տաք էր ու ծանր՝ ալժիրյան օծանելիքների բույրերով: Խորքի զուների մոտ կանդնած էին երկու տապարակիր սիալահիներ: Իր կա-

պույտ, բավականին տուուզ շրթունքները շարժելով խանը կարդում էր՝ Հուրանի չգիտեմ որ պատվիրանը իսլամի սուրբ գիրը, գիտեմ, իր հավատացյալներից պահանջում էր գնալ մեղ՝ զյավուրներիս բաղաբների վրա, հրով ու սրով ամեն տեղ տարածել իր հավատը: Այդ մասն էր ինքնամոռաց սերառմ Ալեքսանդրի փառքով պատակված նազիր խանը: Ինձ թվաց, թե՛ այս, հենց այդ սուրահին է դեմ առել նա, ու մտածում է՝ սակայն սուրբ գիրը, ինչպե՞ս կատարեմ ևս քու կամեցցությունը:— Մենք հասկանում էինք, որ նազիրը ամեն կերպ դանում է հայերիս բարեկամությունը ունենալ այսուհետեւ ևս: Դիտեմ, ինքը մզզում է բազմելու իրանի գահին, որ թափուր է: Դրանից էլ ձգտում է շահել մեր՝ հայերիս դաշնակցությունը: Նա մտածում է հայերիս միջոցով նաև ձեռք բերել ուստի բարեկամությունը:

Դլուխը բարձրացնելով գրքից, նա անսպասելի սկսեց անողոք պարսավել, հայնոյնի հանգույցյալ շահ Թահմազին, որ մերժել էր ուստաց կայսրությունու օգնությունը՝ Աֆղանստանի տիրակալ Միր Մահմուդ ապստամբի դեմ: Նազիրը, այս, բարեկամությունը է որոնում ուստերի հետ: Նա վեր կացավ, ձեռքով բարեկաց մեր գերազահին, նրան տարավ նստեցրեց իր մոտ, իր բարձին:

— Ողջունում եմ Պետերուրին գնալդ, եղբայր իմ սիրելի: Եղվարդում մեր միասին տարած հաղթանակը դղրդոց է խլացած ականջներին: Բարի՞ էր:

— Բարի, — ասաց Ավան-Եզնիք:— Ուստաց պետության հետ դաշն կռեցինք:

— Թուրքի սուլթանի դեմ, այդպե՞ս:

— Միայն այդպիս...

Այս, կասկած չկա, որ Նազիրի նպատակն է դառնալ իրանի միահեծան տերը: Արքայական գահն ու թագը նրան հանգիստ լին տալիս և նա կողմնակիցներ էր որոնում իր կամեցածին հասնելու համար:

Խանը շարրաթ լցրեց գերազահի ու կաթողիկոսի համար, իր ձեռքով գավաթները տվեց նրանց:

— Թուրքերը նորից ծովի ավազի շափ գորքեր են հավաքում մեր ու ձեր աշխարհները տրորելու: Ինչպես Եղվարդի կովում, այնպիս էլ այսուհետեւ, մենք համատեղ դեմ կկանգ-

եեր Օսմանլու վատանգին: Սակայն մեր մեջ մի շար դե է մտած, զինն: Զիննը խանգարում է, արգելում, որ ևս վերականգնեմ Հայոց կորուսված թագավորությունը՝ ծայրից-ծայր Գլխի՝ եք, հայեր:

Իր ձեռքով նորից գավաթը բաղցը ջուր լցրեց մոտը դրած ուսկեզօծ ջրածիկից, խմեց լշտապելով, կարծես զգչացել էր ասածի համար: Պոտուց կախած լայն գաստառակով սրբց ճերմակած բեղերն ու շարունակեց:

— Եթե հայերդ օդնեք մեր խաներից մեկնումեկին գահակալելու, թագավորելու, եթե նույնի կայսրունուն համոզեք, որ նորին այդ մեծությունը, ճանաշի մեր ընտրած թագավորին...

Մի պահ այնպիսի լուրիցուն տիրեց, որ ևս լսում էի Սաֆար Ալի Աբդուլ Հասան միրզայի բարակ շնչառությունը, նաև դրսում, ինչոր տեղից ժայթքող շան կազկանձ: Ես ցնծացի՝ հասկացա նրա միտքը, հապաղելը կորստարեր էր: Կասկածս խզվեց: Մելիք-Ավան-Եգան իշխանի ձայնը հանդպարտ ու սրտանց էր:

— Պարսկաստանի գահի միակ և արժանավոր ժառանգը դու ևս, եղբայր իմ նազիր խան Աշրաֆ: Միայն դու: Եղիշի: Եղիշի:

Կաթողիկոսը ձեռքերը մեկնեց երկնքին:

— Եղիշի... Ես ինքս երանի արքայական սուրբ կկապեմ քո մեջքին, ո՞վ խան: Միայն կամեցիր, ո՛, մեծ, ո՛, աստծոն ցանկալի հզոր:

Խանի կանալ աշքերը փայլեցին:

— Մաշալլահ, հայեր... Մաշալլահ, — ոգեորված գոլեց նա: — Ես այդպիս էլ գիտեի: Փառք ալլահին:

Մելիք-Ավան-Եգանը խոսեց նորից:

— Խան իմ, եղբայր իմ, նաև վատահ եղիր, որ նուախո կայսրունու մեջ սեր կառաջացնենք զեպի քեզ ու քո գահը:

Մենք մի կես ժամի շափ ևս խոսեցինք: Խանը մեզ արձակեց սիրալիր: Մենք մեր կացարանները վերադարձանք գոհ աստծուց և ինքներս մեզնից:

* * *

Առավուտ է: Միագումար շարվել են Նազիր խանի անձնապահ զորքերը: Երեք հաղար թվանքներ կանգնել են երկտակ ու երեքտակ, ձեռքերին՝ հրահանելի մեծամեծ թվանքներ: Նրանք իրենց գլուխներին ունեին թաղքե գդակ, որ է քեշա: Գդակը իր կողեցին երկուական երկար պոչերով իթմանջ ուներ: Գդակների վրա գրած էր: «Ալլահ: Նազար: Ով նայում էր զորքին, սոսկում էր: Սովորաբար Նազիրը երր գուրս էր գալիս իր զիվանից, նրա մի կողքին կանգնում էր յուր եղբայրը, որ գարճալ խան էր, մյուս կողմին մեծ որդին, ապա արքունիքի մեծամեծերը: Սրանք բոլորն իրենց գդակների վրա թեփուռներ ունեին, մեջները ցցած բարձր ճշաները:

Ռամաղան Բայրամի օրն էր: Հրապարակում, Խանի առաջ բերին բազում ուղարկ ու կովացրին: Ապա ըմբիշներ կոխ բռնեցին: Այս խաղերը երկար տևեցին:

Կանուխ, առաջ, քան արեգակի ժագելը, մենք հայերս եկել Խանել էինք մեզ համար սահմանված տեղում ու թամաշա էինք անում: Սաֆար Ալի Արդուլ Հասան միրզան մեզ համար խանական խոհանոցից ուտելիք բերեց, դրեց մեր առջև, սիրալիիր հրավիրեց ճաշակել:

Եղբ մենք կերել կշտացել էինք, ապարանքի կողմից աղմուկ լսեցինք: Խաներն ու սարթեփի, միրփանչ² մեծամեծերն ամեն կողմից վազում էին դեպի ապարանքի բակը: Երկինքը կարմիր էր մայրամուտից: Երեաց Նազիր խանը, մանուկ շահի օձիքը բռնած: Այդպիս ջուրն ընկած շան թուլային են քարշ տալիս: Առաջ եկավ: Լակոտին շպրտեց քարացած, կարծես մեռած խաների ու Նազիր-վեզիրների ուտքերի տակ:

— Ահա ձեր թագավորը, է՞յ: Ահա՝, ահա... վայելեցե՞ք:

Երիսան, որ ուշակորույս էր, մորթած զառան պես փովեց զետենին ու թպրտաց: Նազիրը սուրբ մերկացրեց.

— Մի՞թե սրան պիտի թագավոր ունենա իր զիսին հզոր իրանը: Մի՞թե...

Խաները թուլացած ծունկի եկան: Ոմանք ձեռքերը կարկառեցին դեպի ընկած լակոտը:

1 Սարթեփ—գեներալ:

2 Միրփանչ—Հասուկ զորախմբի հրամանատար:

— Դա է ձեզ արժանին, — փրփրեց Նաղիր խանը: — Դա...
Դիւք ձեր գլխին: Դե՛...

Նաղիրներից մեկը քար վերցրեց: Նաղիրի ձայնը դարձավ մռնչոց:

— Դե՛...

Քարը շեշտակի կողավ գետնին տապալված երեխային

գանգին:

— Դե՛...

Մյուսները ևս առաջկտրուկի հետևեցին Նաղիրի օրինակին ու քարահալած սպանեցին մանուկ թագավորին:

Ես ափովս փակեցի իմ բերանը: — Պապանձվի՞ր: Ա՛չ տեսել ես, ո՞չ լսել: Ո՞չ, ո՞չ:

Ողջ գիշեր անցկացրի մղձավանջի մեջ:

* * *

Պարսիկների Բայրամ Սելամի հանգիսության առնի երկրորդ օրը, առավոտյան, Սաֆար Ալի Աբդուլ Հասան միրզան մտերիմ խոնարհումներով դիմեց մեր կաթողիկոսին:

— Ո՞վ սուրբ օծության խալիքա, մեր բոլորիս գիրի տեր Ֆաթիխ¹ խանն իմ բերանով քեզ հարցնում է՝ արդյոք պատրաստ ես պատասխաննելու արքունիքի տված հարցերին:

— Պատրաստ ու սիրով, — պատասխանեց կաթողիկոսը:

Սաֆար միրզան մեզ՝ հայերիս տարավ մի դաշտ, որ բանակատեղից մի ձիարշավ հեռու էր: Այնուհեղ մի ուղարքոյ միրֆանչ մեզ հրամայեց բաժանվել խումբ-խումբ ու նստելու նստոտեցինք ոմանք հիսուն, ոմանք հարյուր հոգու խմբերով, ավելի և ոչ պակաս: Մեր հայ իշխանները սկսեցին խորհել միմյանց հետ՝ վասն է՞ր է այս հազարը, վասն է՞ր է զումարումն մեր:

Շուտով եկան Նաղիրի մերձավոր խաներն ու միրզաները, որը մայրաբաշի, որը սահապայար, որը սանդուխտար և կանգնեցին մի կողմէ: Ապա Պարսկաստանի ամեն երկրի մարդկանց հատուկ-հատուկ հրամայեցին իրենց մոտ: Բոլորը՝ խանոք ու քայլանթարոք, մելիքով և քետխուտով կանգնեցին

1 Ֆաթիխ— Նաղիրը:

Նրանց առաջ: Սաֆար Ալի Արդուլ Հասան միրզան պարսիկ մհեմ եծերին ասաց:

— Մեծ խանի հրամանն է: Հավաքվեցինք խումբ-խումբ և ձեր մեջ խորհեցինք ու վճռեցինք, թե ո՞ւմ եք ցանկանում, ո՞ւմ եք խնդրում լինել ձեր և երկրի կառավարող թագավոր, ձեզ ու երկիրը խաղաղությամբ և հանգստյան պահող միահեծան անք: Ահա աստծու ավշությամբ Պարսկաստան երկիրը մեր ազատվեցավ թշնամիներից, երկրից վանվեց և հեռացվեց թուրքը: Ահա խաղաղվեց աշխարհս այս: Ինքը՝ մեծ խանը կամ ենում է գնալ Խորասան, նստել իր հորենական դզյակում և աղօթել վասն իր և վասն ձեզ: Բայց ինչո՞ւ զրկվել նրանից: Ահա այդ մասին խորհեցեք դուք, մինչև իններորդ ժամը: Իններորդ ժամին կրկին հավաքվեցնք այստեղ և հատուկ-հատուկ ասացեք ձեր պատասխանը խանին:

Բոլորը գնացին իրենց տեղերը: Սակայն նորից հավաքվեցին ոչ թե իններորդ, այլ՝ ութերորդ ժամին, քանի որ վախենում ու սարսափում էին ուշանալուց: Եկան նույն սարթեփ ու միրփանջ մարդիկ: Սաֆար Ալի միրզան հավաքվածներին նույն եղանակով հարցրեց՝ պատրաստ է պատասխանը: Ամեն պարսիկ իր խոսքն ասաց, որոնց հասու շեղա ես: Եվ այդ հարցուապատասխանը տեսեց ցմուտս արեգակի: Սաֆար Ալի միրզան բոլորին լսելի հրաման տվեց.

— Դնացեք և առավոտը կանուխ եկեք:

* * *

Ես կաթողիկոսի հետ ետ եկա նրա օթեանը: Նոր էինք նստել, երբ վրանի գուոր ետ գնաց: Սաֆար Ալի միրզան էր: Կանգնեց դիք, ասաց խրոխտական:

— Եկեքդ տանուվ շտաս, խալիֆա աղա, այնպես արա, որ նորից տեսնես քո էջմիածինը: Միայն նազիրի օգտին: Միայն նրա:

Կաթողիկոսը ահուղողի ցեխն ընկավ՝ ե՞տ կգնա էջմիածին, թե միայն իր արյունոտ շուրջառը կտանեն սուրբ Աթոռ Մղձավանջի մեջ է: Երկի շի էլ զգում, որ քշփորում է պնչերը: Ճա՞նձ է մտել քիթը: Վերջապես ձայն հանեց.

— Օ՛, զավակ իմ Սաֆար Ալի միրզա: Բայց մի՞թե ես

ինչ-որ արժեմ իրանի համար: Ես ո՞վ եմ, որ իմ կամեցածը հարցնում եք:

— Ոչ այդպես,— ասաց միրզան: — Քո գահի հոտ ժողովրդի կեսը, դեռ ավելին, իրանի արքայական հովանավորության շուրջի մեջ է ու դու հավասար իրավունք ունես ինչ-պես մեր ուղածդ բեկլարբեկը¹:

— Ծնորհակալ եմ,— քիչ հուսատու ասաց մեր հայրապետը: — Եթե այդքանը զիտես, զավակս, պետք է նաև իմանաս, որ ինձ համար չկա ավելի սիրելի մի անձ, քան աստծու կենիքը ճակատին կրող մեծ Վալինամաթ նադիր խանը: Իմ կամքն է, որ նա տիեզերքի փագիշաճը դառնա: Մենք բոլորս ոչ թե նրա, այլ նրա ձիռւ ստվերն ենք, ինքը՝ ստվերն է աստծու:

Սաֆար Ալին համբուրեց նրա ձեռքն ու գնաց:

Փետրվարի վերջի հինգշաբթին էր:

Քաջ առավոտյան մենք նորից հավաքվեցինք նույն այն վայրը, որտեղ խմբվում էինք մեծ Վալինամաթ խանից լուր ստանալու: Դարձյալ յուրաքանչյուրս՝ խան, թե մելիք, զորագար, թե շեխուլիսլամ, նույն տեղում: Մի երեք ժամ այդպես մեալուց հետո, նորից մեզ տեղ տարան ու հրամայեցին հատականալ, յուրաքանչյուր բեկլարբեկ ու խան իր երկրի մեծամեծերով ու քեղյուղաներով: Եվ այդպես դաս առ դաս նստեցինք խոտավետ մերկ գետնին:

Պարսիկները իրենցից ոմանք ընտրեցին՝ նպատակով, որ եթե իրենցից բան հարցնեն, նրանք պատասխան տան: Նրանք նաև մեր կաթողիկոսին սահմանեցին, որ նա էլ պատասխան տա: Իսկ հայ իշխանները, Խուսաց գեսպանն ու թուրքաց էլշին սոսկ դետորդներ էին: Ընտրյաները համախումք պատգառնալով՝ կանգնեցին: Եկան խանի մերձավորները՝ նույն յոթ անձը, թահմազի վերիլի¹ գլխավորությամբ: Սա ասաց:

— Լսեցիք, խաներ, սուլթաններ, բեկլեր, աղաներ: Եվ դու լսիր, հայոց սերեֆրազ խալիֆայ: Մեծ խանը հրամայում է՝ այսպես ասելով: — Քանի որ դուք, պարսից զորապետեր և երեսլիներ, շթողիք և շկամեցաք, որ ես գնամ իմ

1 Արքայական լիազոր:

տեղս հանգստանալու, և ձեր ձեռքը շքարշեցիք իմ զրոշից, ուղեցիք որ ես լինեմ ձեր թագավորը, ապա թող ձեզ հայտնի լինի իմ հետեւալ երեք պայմանը: Այսպէս.— ժամանակ անց եթե հանգուցյալ շահի որդի կամ աղջական հայտնվի գահի պահանջով, ապա դուք նրա հետ շպետք է միաբանեք, նրան չօգնեք ու լընդումեք: Այս մեկ պայման: Ապա՝ նովրուզ Բայրամին ձեր երեսները շժվատեք ու շարյունոտեք ձեր գլուխուները՝ հանուն Հասան Հյուսեինի, որ անում եք: Այլ այս պայմանի ու ուխտի համաձայն մնաք անշարժ: Երբորդը:— Քանի որ ինքներդ կամեցաք ինձ թագավորեցնել, ապա իմ մահից հետո իմ օքախիս ու իմ զավակերիս ոչ մի զնաս շտար, զտրանաք, այլ հնագանդ մնաք հավիտյան: Ահա այս երեք պայմանս արձան գրով ու ահեղ անեծքներով արեք և տվեք ինձ:

Վալինամաթի այս պահանջները հայտնելուց հետո պարսիկ նույն յոթ մեծամեծ անձերը հարցրին հավաքվածներին:

— Ի՞նչ կասեք: Հանձն կառնե՞ք այս պայմանները, թե՝ ոչ:

Առաջինը մեր կաթողիկոսը ձայն առավ ու ասաց:

— Այս, կամ ենում ենք: Հանձն ենք առնում և հնագանդ վրայ:

Պարսիկները միաբերան նույնը գոլեցին:

— Հանձն ենք առնում և հնագանդ վրայ:

Մյուս օրը, որ ուրբաթ էր, նույնպես առավոտյան քաջվագ պարսիկ մեծամեծերն ու մեր կաթողիկոսը գնացին Նադիր խանին սալամի: Հինգերորդ ժամուն նրանց մուժեցին նրա առաջ: Նրանք կարգով շարված անցան՝ իրենց «սալամը» տալով և գլխով ողջունելով խանին: Ապա դուրս գալով ըսալամի» վրանից, նստեցին իրենց հանգստարաններում:

Նադիր խանը իր երևելիներին նաև ստարերկրյա հյուրերին հրավիրեց ճաշ ուտել: Բաղում բաներ խոսեց յուրայիների հետ: Ի վերջո նա նորից ասաց.

— Ձեր միջից մեկնումնեկին ընտրեցեք թագավոր, կամ այստեղ շեղած այր մի, որ կարողանա կառավարել ձեզ և երկիրը: Խնդրում եմ ձեռ վեր առնել ինձնից և թողնել որ ես գնամ իմ գլուխ եռարասան և առանձնանամ, քանի որ այլևս ուժ ու կարողություն չունեմ մրցել և վանել պատերազմները:

Այսպես ասաց նա ու շատ անգամ հրաժարվեց թագավոր դառնալուց: Պարսից մեծամեծերն ու մեր կաթողիկոսը սկսեցին ստիպել նրան, աղաշելով պաղատել, աղերսել ու հավատացնել, որ իրենց շթողնի անտերունչ ու երկիրն առնի իր ձեռքը:

Այս լսելով Նադիրը, որին, ինչպես ասացի, նաև Վալինամաթ էին ասում, ձեռքը տեսկեց.

— Դուք այդպես եք ասում, բայց ես զիտեմ որ բազում մեծահարուստ մարդիկ ինձնից վնասներ են կրել, բեղամադեղել: Նմաններն իրավունք ունեն թշնամի լինել ինձ, քանի որ ես նրանցից շատերի ապարանքները խլեցի՝ հանուն զորքի, շատերին մահացրի, ուրիշներին կորսոյան մատնելով՝ իրենց գանձն ու ոսկին խլեցի: Այս, ես շատ տեղեր եմ ավերել, երկիրս սասանեցրել ու աղքատացրել: Թող մարդիկ գոնեայսուհետև հանգչեն-հանգստանան իմ այսքան նեղություններ տալուց հետո:

Առաջ անցավ Արքահամ կաթողիկոսը ու խոսեց այսպես:

— Այս, մեծ վալինամաթ խան, ճշմարիտ են ինչ ասացիր: Բայց երկրի փրկության, զորապետության հաղթանակի հարկավորությունները դրանք էին, որ արել ես: Եթե դու այդպես արիացած լինեմիր, ամեն պարագայում, ինչպէս ապակարելի կլիներ այսքան հաղթանակները ու քաջության գործեր անել: Ահա սրանք են պատճառները, որ մենք կրկին ու կրկին ուզում ենք դու լինես թագավորը մեր: Աստված միայն քեզ է տվել Պարսկաստանի զիխավոր լինելու շնորհը: Սրանից հետո պարտավոր ենք մենք և ամենքը քեզ ու քո ասածին հնագանդ լինելու եզ մեզնից նա, ով արտուղի կզնա, քո պատժին ու զատապարտությանն է արժանի: Իսկ նրանք, ովքեր հնագանդ լինեն քո հրամանին, իրենց զործի մեջ արիանան, քո պատվին ու խալաթներին արժանի կլինեն: Եթե այսպես շարպի, երկիրս ո՛չ կառավարվի:

Նույն այս ոգով խոսեցին բոլոր խաները, սեյիդները, առավել բեկլարբեկ, շեյխ, սարդար, շեխուլիամ: Նադիր խանը նորից ծռմովեց, լեմուլում արեց, թեն արգեն մեր զրահի վրա պատվող երկնքի անկազու հավքին էլ հայտնի էր, որ հենց դրան է ձգտում նա: Երեք-չորս երեսի շեյխներ դու-

ռանից ֆաթեհներ կարգացին ճովուսի¹. առթիվ: Մեր կաթողիկոսն էլ ոտքի վրա, շտապելով կարգաց Հայր, մեղա...* աղոթքը: Վերջապես նազիրը ձեռքերը տարածեց ու ցնծությամբ գոշեց.

— Թող ալլահի ու ձեր կամքը լինի, մարդիկ...

Ապա բերին ու պարսիկ երևլիներին մատուցեցին մեծ խանի կամեցած ռահամձ² արձանազիրը, որ երկու թիզ լայնությամբ երկար թղթի վրա էր: Գրածը մանրամասն խմբագրվեց խաների ու զորապետերի կողմից, որից հետո մատուցեցին՝ ստորագրել ու կնքել: Երդմնազիրը ստորագրեցին ու կնքեցին բալորը՝ խան ու սուլթան, հազարապետ ու հարյուրապետ, քալանթարներ, իսլամի այաներն ու շեյխսլամները, զաղիները: Նախ դա արին նորասանից, Հարեթից, Մաշաթից ու Մազանդարանից եկածները, ապա մյուսները:

* * *

Ճամբարի մեծ հրապարակում հինգ, թե վեց հազար մեծ-մեծ խարույկներ արին: Եարեցին զորքը՝ յոթանասունհինգ հազար սարգազ³ քանինհինգ հազար հեծելազոր: Սարգազի յուրաքանչյուր գունդ առանձին էր, փոքր ինչ արանքով: Զինվորները լավ տեսր ու զենսու ունեին: Առաջին շարքերում թվանբշիներ էին: Բոլորի երկարուկ, զմբեթաձև փափախները մորթուց էին, որերը միանման երկար: Հետևակի սպաների գդակներին կարմիր ժապավենն էր քաշած: Յուրաքանչյուր գունդ իր դրոշակն ուներ՝ սպիտակ մետաքս, վրան հսկա առյուծ, աջ թաթին սուր բռնած, մեջբին՝ ծագող արեւը: Հատուկ նշանով, որ տարրեր էին՝ խոյի գլուխ, բորենու թաթ, առյուծի ոլոր ազի, ցույց էր տված գնդի պատկանելությունը: Հեծելազորը կանգնած էր հետեակի թիկունքում: Բոլոր ձիերի գլուխներին կարմիր կարկաչ էր հազցրած, որոնց փնջային ծայրերը օրորվում էին գարնանամուտի մեղմ քամուց: Թվում էր, թե զորքի վրայով կարմիր գետ է հոսում: Բնդանոթները

1 Ճովուս—դահակալություն:

2 Ռահամձ—հրավարապ:

3 Սարգազ—հեծեակի:

սարել էին մի քիչ ազ կողմում, յուղելու Յուրաքանչյուրին վեց, երբեմն ութ ամենի ձի էր լծած: Հեծելազորի ասպարակիր-ները երկար նիզակներ ունեին, ժայրերին պղնձե գեղարդներ, որ շողում էին: Նրանք այդ նիզակները հենել էին ձիերի ասպանդակներին ու ձոզերի մի կատարյալ անտառ ստեղծելու:

Պարսից նահանգների վալի-խաները առանձին խմբերով, ըստ երկրամասի, շարված էին իրարից մի հիսուն քայլ հեռու- եաները, զորապետները շքեղ հագուստներով էին, գոտիների արանքում երկուական ատրճանակ, նաև ոսկեղոծ պատյան- ներով սրեր: Խաներից ոմանք ազ ոտքին կարմիր երկարա- ճիտք կոշիկ ունեին, իրոն նշան հատուկ արտոնության:

Արեածագի կողմում շքեղ վրան էր տնկված, մոտը ոչ քարձր տախտամած, վրան արքայական գահավորակ: Պա- պահպանվում էր հիսուն սրամերկ սիպահիներով: Վրանի վրա Խանի արքայական դրոշակին էր փողփողում: Պատվան- դանի ազ կողմում, աթոռների վրա նստած էին հնդկահավերի պես պմնված նազիրի հարեմի կանայք, բացի մեծ տիկեռո- ջից: Օտար երկրների գեսապանները առանձին խմբով կանգ- նած էին գահապատվանդանի ազ կողմում՝ յուրաքանչյուրն իր պետության գրոշակը հովանի ունենալով: Առ նկատեցի նաև ուսւական կայսերական գրոշակը, ինչպես և գեսապան Խվան Կալաշկինին: Միայն նրա ու հայոց գրոշակի վրա էր խաչ շողում: Հայոց երկրի մեծերը՝ գերագահ Ավան-Ծգան իշխանի գլխավորությամբ, տեղ էին բռնել մի փոքր գեալի ձախ:

Արեն արդեն բավականին բարձրացել էր, երբ շահական սերայ վրանի կողմից հղոր փողհարություն և թմրկահարու- թյուն պայթեց: Հենց այդ պահին երկինք թուն երեխ տաս հազար հրավառ պարկուներ ու գղրդացին բոլոր թնդանոթ- ները: Արեն ծագման կողմից երեաց նազիրը՝ իր պալատա- կանների, մեծ տիկնող, իր զավակների ու եղբայրների հետ: Բոլորը հագնված էին ոսկեգույն զգեստ, փեշերը՝ զետնի կանաչին: Առջևից գալիս էր ինքը՝ նազիր Վալիյաթնամեն: Նրա քայլը ամուր էր, լայն, ինքնավստահ: Նա գլխարաց էր: Երկու հոգի ծիրանի ամպհովանի էին պահում նրա վրա, թեև արևը խանձող չէր և անձրն չկար: Ողջ զորքը գղրդաց ցնծության աղաղակներից: Հետեակը՝ իր առաջնորդների հետ,

Ժունկի եկամ: Հեծյալները նիզակների վրա հազրեցին իրենց գդակները:

Դաշտը դզրդում էր խենթացած ամբոխների աղաղակից:

Պալատական մեծ վեզիրներն ու սարգարները նադիրին ու նրա տիկնոջը բարձրացրին պատվանդանի վրա, փառավոր բազմեցրին գաճին: Տիկինը կանգնեց ամուսնու աջ կողմին, մատանիներով ծանրացած ձեռքը նրա ուսին դնելով: Վեզիրները մոտ կանչեցին բանակի ու արքունիքի մեծ ուլ-իսլամ-ներին, շեյխներին: Սրանք իրենց կարգով օրհնեցին Իրանի թագը, համբուրեցին ու մեծ հանդիսությամբ դրին նազիրի զլիսին: Մեծ դաշտը նորից դզրդաց:

— Յա ֆաթի՛:¹

— Կեցցե Իրանի առյուծ նազիր շահը:

Բոլորովին անսպասելի մեր կաթողիկոսի մոտ երևաց Սաֆար Ալի Արդուլ Հասան Միրզան՝ ոտքից զլուխ պնձված:

— Խալիֆա բարա, մեծ շահը քեզ է ուզում:

Վեհափառը շվոթքեց սաստիկ, տվեց աստծու անունը և շիմացավ ինչպես միրզայի հետ հասավ արքայական թառի ոտքը: Նազիրն իշավ պատվանդանից: Սաֆար Ալին պատվանդանին դրած արքայական սուրբ վերցրեց ու մեկնեց կաթողիկոսին:

— Նորընծա շահի կամքն է, որ զու, հայերի մեծ ու արգար խալիֆա, զու օրհնեն այս սուրբ, իրըն Մեծն Իրանի թագավորության տարեկից արքայական երկրի հոգեռը առաջնորդ:

Նա զլուխ տվեց ու երկու քայլ ետ կանգնեց: Արրաջամ Կրետացին սուրբ բարձրացրեց զլուից վերև, օրհնեց իր իմացածի պես, սակայն առանց համբուրեկու և ոսկեշղթա օղերով կապեց նազիր շահի մեջքին:

— Թող այդ սուրբ հատու լինի քո ու մեր թշնամիների զլիսին:

Նազիր շահը ժպտաց երկար բեղերի տակ:

— Օ՛, բարալը, հպարտ եմ, որ բարեկամ հայն օրհնեց իմ սուրբը:

Թեղանոթները նորից դզրդացին: Զորքը նորից ցնծության աղաղակ բարձրացրեց մինչև պարզ ու զուլալ երկինքը:

¹ Աստված օրհնեի...

* * *

Ես պարզապես հիացած եմ մեր ազգի հոգևոր առաջնորդ Արքահամ Կրետացու բռնած դիրքով, նրա հոգու արիությամբ: Բայց ինչո՞ւ միայն ես, ողջ ազգը: Մեր հայրապետի մեջ խացած եմ տեսնում մեր ազգի ցավը, դժբախտություններին դիմակայելու նրա վիթխարի ուժը: Մեծ ցավից է ծնվում անկոտրում ուժ: Այս մարդը մի օր, մի պահ գոնե դադար չունի: Այսվում է անմոռունչ, անծուխ:

Ահա նա նորից արդեն թագավոր-շահ օծված Իրանի Առյուծ Նազիրի մոտ է, նրա ապարանքում: Հետք վերցրել է միայն ինձ: Պարսից միահեծան տիրակալը, գիտեմ խիստ շրջանայց է՝ ըստ իր շահի, ապա նաև անսահման խորամանկ: Կաթողիկոսին զգույշ հարցրի՝ հիմա՞ ինչ առիթով ես մոտենում նրան:

— Կիմանամ շուտով, — ասաց նա: — Ոչինչ աշխարհում չենց այնպես՝ անիմաստ ու աննպատակ չի լինում: Թեռով եմ գնում ազգերի բախտի տնօրենի մոտ: Ասում են՝ բեռով հյուրի լեզուն երկար է լինում: Տեսնենք:

Նագիր շահը այս անգամ ես, աղվեսային իր բնույթով, սիրալիր ընդունեց վեհափառին, ողջունեց շուայլ խոսքերով, նրան «բարալրդ» այսինքն՝ հայր իմ կոչումով մեծարելով: Մեր կաթողիկոսը նրանից պակաս չէր: Ամենասրտառաք խոսքերով ողջունեց նրան, աշխատելով փափկացնել սառցային կոշտությամբ նրա սիրութ: Հաճախ էր կաթողիկոսն ինձ ասում այն թաթը, որ չես կարող կարել, համբուրիր ու դիր ճակատից:

Ես տեսնում էի Նաղիրի ազահ հայացքը, աշքերի գազանային խաղը՝ ինչո՞վ ես եկել մոտս, հայ: Կարծես հենց նրա այդ գիշատիչ հարցին ի պատասխան, վեհափառը ասաց.

— Փուանգի Ամստել քաղաքում ապրող մեր հայ վաճառականները, ո՞վ Առյուծ Իրանի, իրքն թագադրմանդ շնորհավորանք, տասնմեկ ֆռանգի թոփ-թնդանոթներ են ուղարկել քեզ, իրենց սարք ու զումբարով:

Շահի աշքերը թուան ճակատին:

— Որտե՞ղ են թնդանոթները:

— Սովերով արդեն հասցրել են քո աշխարհի թենդեր Արաւ նավահանգիստը:

Թագավորը ծառս եղագ գահից:

— Ինչալա՞հ, — գոշեց ոգևոր: — Աստված քեզ իր մարդուն ճանաշի, բարալը... Մի՞թե:

— Բենդեր Արասի քո ծառս բեկլարբեկը արդեն ընդունելէ Հայերիս նվերը, — Հանդարտ ասաց կաթողիկոսը: — Ինդունեղիայի Հայ վաճառական մարդիկ ևս նավեր ու թվանկ գենք են պատրաստում քո ոտքն ուղարկելու, մեծ շահ:

Նադեյրը գոշեց ողջ ապարանքով մեկ:

— Ո՞ւր եք, անիծված ծառաներս, սեղան բացեք իմ բարալըզի պատվին: Թո՛յ, թո՛յ...

Երկար նաև այսպես խանդավառվեց, կաթողիկոսին նստացրեց իր դիմացը, փափուկ բազկաթուի:

— Ուրիշ:

— Ուրիշ՝ անձիդ ողջությունն եմ կամենում, բարեգութ:

— Խեղանքդ ո՞րն է:

— Չունեմ, — ձեռքերը տարածեց կաթողիկոսը:

— Ունեցիր, — թագավորը թեքվեց գեղի նա: — Ունեցիր: Աշխարհս առ և տուր է: Առամեներովս եմ փորձել: Այն բախշիցը, որ Հատուցում չստացավ, սակավ, թե առավել, Հարամ է:

Սեր վեհափառը քիչ-ինչ կարկամեց, նեղվեց ու, ի վերջո, ասաց:

— Խնդրանքս անձիս Համար չէ, մեծ խոնդքար, և չնշին է: Քո բարեգթությանը, անշուշտ, Հայտնի է, որ մեր սուրբ էջմիածինը, որ վայելում է մեծիդ խնամքը, շատ հողային ու այլ անշարժ կարգածքներ ունի Հայաստանից դուրս, այդ թվում նաև քո ողորմության տակ բարգավաճող իրանի թավորիցում, Մակվում, Գիլանում, Ասուահանում, ինչպես և քո իշխանության տակ գտնվող Շաքի, Շամախի և անգներում: Սակայն գրանք՝ էջմիածնի սուրբ սեփականություն եղած այդ կալվածները, մի քանի տարի է, ինչ Հափշտակել է իրանի մուսուլմանների առաջնորդ, աստվածախնամ Շեյխ Ռու Խալամը:

— Քանի տարի առաջ, — Հարցրեց թագավորը: — Նշանակում է ես դեռ գարուզա զինվոր էի:

— Ո՞վ երկրի վրա մարգարեին փոխարինող Վալիաթնամն: Իմաց անեմ մեծիդ, որ նվազ է էջմիածնի Հատուցիքը և չնշին:

Աղաշանքս է՝ վերադարձրու էջմիածնին իր արդար ունեց-
վածքը. իր վազնչական իրավունքը:

Նադիր շահն այսպես կծկվեց, թթվեց, որ ինձ թվաց, թե
հիմա նա կաթողիկոսին առնվազն գուրս կշպրտի իր պալա-
տից: Առանց գլուխը բարձրացնելու, նա գոների մոտ խոնարհ
կանգնած Սաֆար Ալուն հրամայեց անմիջապես իր մոտ բե-
րել Շեյխ Ռուզին: Միրզան գուրս թուավ ու անդնուանդը
բերեց իրանի հոգնոր առաջնորդին: Նադիրը սիրալիր ողջու-
նեց նրան:

— Բուրքը նորից զենք է սրում մեր գեմ: Ի՞նչ կասես,
Մուհամեդի փոխարինող Շեյխ:

Շեյխը ազգին ազի հիշեցնող մորուքը ցցեց.

— Ինչ քոյիդ կամեցողությունն է, արև արքա, այն էլ
իմն է:

— Բարի՛, — այքերը նրա վրա ոլորելով ասաց շահը: —
Կամեցողությունս ի շահ իրանի է, շեյխ: Իմ թրի զորու-
թյանը ապավինած բոլոր տեղերում եղած էջմիածնի կալվածք-
ները՝ Հող, ջուր, խանութ, ձիթհան, ջրաղաց, բոլոր անշա-
պաղ վերադարձու հայերին, նրանց տեր էջմիածնին:

Շեյխ Ռուզի հալամը ցնցվեց:

— Անհնարինս կամեցառ, — զողղոշ ասաց նա: — Դու մեզ
զրկում ես մեր հասույթից, ոզորմած արքա:

— Բուրքի սուլթանը նորից է սպանում մեզ, Շեյխ: Ասա՞
որի՞ն աշակից որոնենք մեր կովում: Ո՞րին, բացի հայից:
Մեր աշակիցը միայն հայն է: — Թուավ զեպի Շեյխ Ռուզի հա-
լամը: — Մեր աշակիցը միայն հայն է, Հայաստանը, էջմիա-
ծները: Հայեր...

Ետ զարձագ հետեւվ, նստեց գահին: Շեյխ Ռուզի հալամը
դողում էր նկատելի ցեցումներով: Նադիր շահը հրամայեց
Հրովարտակ դարձնել իր կաթոք: Կնքեց Փարմանը, տվեց
կաթողիկոսին:

— Ստացիր ու վայելիր արդար իրավունք: Իմ անունից
ուսալամ» ուղարկիր Ամսատելի քո հայերին՝ թոփ-թնդանոթ-
ների համար: Ասա կուզիմ նրանց տեսնել իմ պալատում:

Վեր կացավ: Նամազի ժամն էր: Մոտեցավ Շեյխ Ռուզի հալամին:

— Մի՛ զողա: Մի՛ տրտեղա, բարամ: Այսօր վազր կմիւրբն-

զէմ Հնդկաց երկիրը՝ Հինգուստան, ինզիփի ծովացուկերին այնաեղից գուրս վանելու։ Այս անգամ ևս ինձ զինակից կլինեն հայերը, Հայաստանը։ Այսպիս... Դու, եղբայր իմ Եելիս Բուլ իսլամ, հետո կլինես և ես քո բերանը կլցնեմ ինզիփի տակով։ Երթաս բարով։

Նա արագ զնաց կողքի շենքը՝ նամազ անելու։ Սաֆար Ալի միրզան մեզ ուղեկցեց մինչև մեր տեղը։

* * *

Թագագրման յոթերորդ, թե ութերորդ օրվա կեսն էր՝ արև ու տար, Մենք՝ հայերս պատրաստվում էինք մեկնելու Տող, երբ լուր բերին, թե նազիր շահն ինքն է գալիս մեր զերագահին ճանապարհելու։ Մելիք-Ավան-Ծգանը, մելիքներն ու իշխանները, ինչ խոսք՝ նաև ես, շտագեցինք պատշաճին զիմավորելու իրանի նոր Առյուծին։ Արքայաշուք ընթացքով մենք կասեցինք մեր բոլոր զեն ու զարդերը ու դուրս եկանք վրան-ներից։

Նազիր շահն եկավ շքեղ զուգած նժույգի վրա, հետք դարձյալ ձիավոր իր պալատական շատ մեծամեծեր, խաներ, զորքի նախագահ սուլթանը, զույիրեկը, յոթ-ութ վեզիր, շահական դարուղան, իր անձնական թույիդարը։ Զորիների վրա եկան նաև մի քանի զայի ու գոնկույրաշի խանը։

Մենք շահն ընդունեցինք մեծ պատվով ու կատարյալ շքեղությամբ։ Շահը, ձիուց իջնելով, նույնիսկ համբուրվեց մեր զերագահ իշխան Մելիք-Ավան-Ծգանի հետ։

— Թիսմիլլահ! Ես եղբորս տունն եմ եկել։ Դո՞ւ ու վատահ եմ նրա բարեկամությանը։

— Ես էլ իմ եղբորը, իմ ազնիվ դաշնակցին եմ ընդունում, մեծ թագավոր, — ողջունելով ասաց Մելիք-Ավան-Ծգանը։ — Վատահիր մեր պարզած ձեռքին։

Երկար խրախնացանք միասին։ Նազիր շահն համախ էր կրկեռում, թե իրանն ու Հայաստանը մեկ թշնամի ունեն միայն, դա օսմանլու կայսրությունն է, դա թուրք Սուլթանն է։

1 Թիսմիլլահ — Աստված ողորմած է։

Երեք օր հետո նադիր շահը պոկվեց Մուղանի գաշտից ու զորքով, ժողովրդով, հարեմով չվեց զնաց զեպի իր երկիրը՝ Պարսկաստան։ Հայոց իշխաններս հեռացանք զեպի լեռները։ Մեզ հետ մեկնեց նաև կաթողիկոսը։ Դիզակի կիրճով նա իջազ Սյունիքի հովիտները ու բռնեց Արարատյան աշխարհ տաեռող մեծ ճանապարհ։

ԱՅԻՆ ԵՐՐԱՐԴ

Զիուս թռիչքը դժվարով զսպեցի Գանձասարի վանքի սալարկ բակում։ Զիս հեռում էր երկար վազքից քրանած ու մխած։ Դեպի ինձ վազքցին մեր փեսա Շահնազար բեկն ու նրա կեռջ՝ Սոնայի եղբայր իմ զարմիկ նոայի բեկը, որ արդեն հարյուրապես էր։ Տաճարի դռների արանքում երեաց Մելիք-Աստվածապովը։ Ես ձիուց ցած թռա, սանձը նետեցի նսայուն։

— Է՞՞որ ունես Շամախուց, Հեղինեից։

— Ոչ, քեզու դուստր, — կարկամ ասաց եղբայրիկա։ Չունեմ...

Այս անգամ էլ իմ մենաստան անապատից եկել եմ ոչ միանձնուհու առելի սևերով, այլ... հենց այն դգեստով, որի պնդերով ամփոփված, ես իմ ձին միսրացի Մարազյալի ճակատամարտի մեջ։

Ե՞րբ էր Երեմի հազար տարի առաջ։

Գնացի դեպի Հայոց ժողովի առյանը։ Զարմացած ընդառաջ եկավ Հորաբրոջ ամուսին մեր զերագահը։ Մելիք Առաջապահով սպարապետը հասցրել էր իմ զալը հայտնել նրան։ Առա հարազատիս բարեց, նրանից առաջ ընկնելով, մտա նրա հանգրվանած կացարանը, թիկնոցս շնանեցի։

— Ինձ մի հարյուրյակ ձիավոր տուր, գերազա՞։ Ազել շեմ ուզում։ Դա զիր որդութ՝ նսայի հարյուրապետի հրամանի տակ։ Համախում իմ բացած վարժարանի օրինրդներին պարսիկ հրոսակները առևանդիլ են։

Դա ես իմացա երեկո։ Տեղնուտեղը վճռեցի շտապել նրանց փրկելու։ Խաղաղ օրեր են Հայաստանում, նրա մի ժայրից-

մյուսում։ Ասածս Հայոց աշխարհի կեսը հասկացեք՝ Արևելյան մասը՝ Սրմանց լնոների ողնաշար գծով, Մասիսների գաղթներով մինչև Կուր մեծ զետի հունը։ Մյուս կեսը՝ Արևմբայն Հայաստանը, ավաղ, մեր իշխանապետության մեջ չէ։

— Երեք օր առաջ, — ասացի։ — Էսօր-էզուց կհասցնեն Արարսի զետանցին։

— Հազիվ թե, — ասաց զերազահը։ — Մուղանի դաշտում Արարսի հիմա ծովացել է, զետանց լունի։ Մուղանի դաշտում մեր զորապահակները արթուն են... Համենայն դեպս պետք է շտապել։

Ավետարանոց զյուղաբաղաբը արթնանում է Խրիսուփի կիրճի զեղին հովազի մոնշոցից։ Ոչ թե մեկ անգամ, այլ՝ երեք։ Առաջինը՝ արթեացեք, երկրորդը՝ զգուշացեք, երրորդը՝ ի զե՞ն։ Եներք զողում են, զոմեշները ահարեկ փախչում, մարդիկ շտապում զենք վերցնել։ Կանացի ձայնը ծղրտաց։

— Տարան, ա՞...

Գյուղաբաղաբի տղաներից մի հինգ հովի զինված զաղեցին զեպի Խրիսուփի ձորը։ Այնտեղ, խորքի մի պատառիկ ջրավազանում միայն վայրի սիրամարդ էր նազում։ Իզուր են ոմանք ասում, թե զա վազր է։ Ո՞չ։ Զմենը վազր մեզ մոտ չի մնում, քարայծերի հորանների ետևից հեռանում է զեպի Պարսից կողմերը։ Մոնշացողը հովազ է՝ բնիկ ու հայրենի։

Ասպատ տիկինը այստեղ է, ձորաբերանի մատուռածել մի քարայրում։ Հեռացել է իրեն առևանգած տասնակետ Միրզախանից։ Ասում է՝ նո եմ քաշում այրատան նեղ պատռհանի փեղկը, նայում ձորին։ Գուցե թե տեսնեմ հովազը։ Չի տեսել։ Նո էլ չեմ տեսել։ Ոչ ոք չի տեսել։ Քարայրի մուտքից, որ սրողված էր կարպետ-վարագույրով, լսեցի Ասպատ տիկնոջ ձայնը։ Ահա, նորից այստեղ ես, անուշի՝ կու։

— Չես տեսնի, — աներեսույթ տեղից ձայնեց նա։ — Հովազին չես տեսնի։ Չի տեսնում նաև Խորայելը՝ քաղցրիկս, թեկուզ արեղա է։ Հազար տարի է, ասում են, այդ հովազը այստեղ մոնշում է նույն սաստությամբ։ Ոչ ոք չի տեսել։ Հազար տարի։

Մետաքսի զգեստի խշշո՞ց է, թե՝ հովազի մորթին են շում, որից կայժեր են ծագում:

— Վախենո՞ւմ ես, չա՞նս:

Ասպազ տիկինը այսօր արտակարգ գեղեցիկ է՝ երկու տարեկան կիստար, որի հետեւից գեղ գալլ չի ընկել... Մահվան մասին գաղափար շունի: Երանի՛...

— Երբեմն շատ սիրելուց է ատելություն ծագում, — տիկինը քրքրաց: — Խրխուփի հովազը սուրբ է: 0՝, շանիծես նրան, աբե՛զա:

Իսրայել արեղայի ձայնը հնազանդ հնչեց:

— Իսկ եթե մե՞զը ենք անում:

— Ո՞ւ: Մեղքը հեռու է մեղանից: Մեղք շենք անում, արեղա Խարայել: Մի՞թե մեղք է անում մարդ աղավնին, երբ գուրգուրում է իր վարուժանին:

Վերևում Վարանդայի իշխանական ամրոցն է: Այնտեղ լուսատղի հետ է արթնանում Վարանդայի Մելիք Հովսեփի մայր թեզում խաթուն իշխանուհին: Այսօր էլ նույնը՝ լվացվեց, երեսին խաչ հանեց անփուլթ, տանու թթի օդի լցրեց աղավնու կտուցի շափ արծաթե բաժակը, խմեց: Երջվեց դեպի արևածագը:

— Արթնացե՞ք: Շամախու մատադ աղջիկներին...

Մատադացու գառ հանեց մառանից, զրեց ուսերին, զնաց դեպի ամրոցի եկեղեցին:

— Է՞յ, Իսրայել արեղա, մատադացուն օրնիր:

Իր ձեռքով մորթեց գառը, մորթուն ազ զրեց, ոտուզլուխն ու մի հերին հանձնեց քահանային: Մնացած միսը եփեց ու խոշոր պատառները, լավաշի մեջ փաթաթելով, բաժանեց աղքատներին: Ուխտ արեց եկեղեցում:

— Տե՛ր, դու ազատես գերզած աղջիկներին: Տե՛ր...

Երկու արծաթ տվեց արեղային:

— Պահպանիշ կարգա: Գերված հոգիների համար: Փըրկություն որոնիր...

Արեղան շրթունքների արանքից մի երկու բառ դուրս տվեց ու շրջվեց հեռանալու: Ասպազ տիկինը իրեն էր սպասում քարայրում: Բեզում խաթունը բռնեց նրա թեր:

— Պրծա՞ր: Է՞դ էր պահպանիշդ, խոզի ցեղ:

— Իշխանուհի, երկու արծաթ ես տվել թնդամենը և ուզում
ես մի ամբողջ ավետարան՝ կարդամ:

— Ավետարանը գլխիդ խոռվ մնա, — ցասումով ասաց
իշխանուհին: — Բերանդ մաքուր բաց արա, վանքի առնետ:
Երկու արծաթս աշքդ խորթեցիր երկու խոսքի համար: Մո-
ռուրդ կբանդեմ, Հա:

Կպավ արեղայի օճիբին ու տված երկու արծաթը ետ պա-
հանցեց: Գոռում էր, երեմն թքում: Խորայելը չէր կարողա-
նում պոկվել նրանից: Շահնազար բեկը փորձեց ետ քաշել
դաղաղած մորը, սակայն մայրն այնպես հրեց նրան, որ սա
գնաց կպավ մեկ ուրիշին ու գլորվեց: Դեի ուժ ունի այս
կինը, մտածեցի ես:

Կրխափորի քարայրում Ասպարագ տիկինը շոյեց արեղայի
շիկնած երեսը:

Մոտակայթում ձիերի ոտնաձայներ թնդացին: Տիկինը
պոկվեց արեղայից, գուրս թռավ:

— Ա'ն, ամա՞ն, Գոհար իշխանուհին եկա՞վ...

Հեծյալ հարյուրակը խլրտաց ժայռերի տակ: Առզեից գա-
լիս էին զենքով ժանրացած Գոհարը և Ծաայի բեկը:

— Է՞յ, Ասպարագ տիկինն, նորի՞ց:

Խորայել արեղան սարսափից շգիտեր, թե ուր մտնի: Ասենք
թաքնվելու տեղ էլ չկար: Ասպարագ տիկինը հեզ ասաց.

— Օ՛, իշխանուհի: Ինչո՞վ արժանացա քո այցին:

— Մոտդ տղամարդ կա: Ո՞վ է:

— Դիտեմ: Գնում ես զերի աղջիկներին որոնելու, միանձ-
նուհի: Գնալդ բարի: Գործիդ աջողակ: Մոտս խորայել արե-
ղան է, նոր եկավ...

Գոհարը արագ իջավ ձիուց: Արեղան շտապեց նրան
ընդառաց: Գոհարը հովազի սես թռավ զեարի նա ու ձեռքի
երկճյուղ մտրակով, որի կաշվե լախտերի ժայրերին արճիճ էր
գնդած, թափով հարվածեց նրա ուսն ի վար և տուր թե կտաս...

— Լորությա՞ն ես եկել, ստա՞նա՞կ, — լախտից ավելի
ժանր շպրտեց նրա երեսին:

Ասպարագ տիկինը կախվեց նրա ձեռքից:

— Մի՞ խփի, մի՞...

Գոհարը նրան ետ հրեց ու նորից սկսեց հարվածել արե-

զային: Իրարանցման ու գոռզոռոցի վրա ամբոխ հավաքվեց: Գոհարը հրամայեց Ասպասպ աիկնողը դեկ ավանակ էշի վրա, երեսը դեպի քամակը և պոլը տալով ձեռքը՝ ման ածել զյուղաքաղաքում: Նա օդախից մուր վերցրեց, բայց Ասպապի երեսին: Իր ձեռքով կապուտեց Խորայի արեղայի թերը, թոկով նրան քաշեց դեպի ցածի գետը, որտեղից լսվում էր հովազի մռնչոցը:

— Հիմա ես քեզ ջրակուր կանեմ:

Արեղան նրա ետևից քայլում է թակ կերած շան պես, որին տանում են ջրամուխ անելու:

Ամբոխը ցրվեց աճից: Նույնիսկ նսայի բեկը շփորձեց խնդրել միանձնունուն, որ ների արեղային: Գոհարի սրբակրոն արսափը բոլորի վրա էր: Արեղային քարշ տալով հասցրեց գետին:

Հասցրեց: Նստեց քարի:

Երկար մնաց նստած: Զեռքով մոտ կանչեց Շահնշաղար քեկին:

— Քանդիր արեղայի կապերը:

Մոտ կանչեց նաև Նսայի հարյուրապետին:

— Գնա, էշի վրայից վերցրու Ասպապ տիկնողը: Ողոքիր, զուգիր նրան ու բեր:

Խորայի արեղան ցնծաց: Ո՞ղջ է: Ո՞ղջ է: Մոտեցավ ժունկի զալու Գոհարի առջև: Գոհարը ձեռքի նշանով արգելեց: Մեղմ հարցրեց:

— Վաղո՞ւց է հովազն այսանդ:

Արեղան գլուխը թափ տվեց: Ճի՞շտ լսեց հարցը:

— Հազար տարի: Մոնշում է հազար տարի:

— Թու բախտն է, արեղա: Հովազի պատվին ողջ պահեցի քեզ: Ծեկ հովազը աստված է հայոց համար՝ ուժի և քաշության: Գնում ենք պարսիկ հրոսակներից քո քույրերին աղատելու, Խորայի արեղա: Զենքը վերցրու:

Կիրճի խոռոշից լսվեց հովազի մռնչոցը՝ մեկ, երկու, երեք... Հավանում եմ վճիռը: Հավանո՞ւմ եմ:

Նսայի բեկը ետ եկավ՝ հետը բերելով զուգմած-պարդարպած Ասպապ տիկնողը: Գոհարը շոյեց նրա գանգուրները:

— Ո՞, մե՞ղք, մե՞ղք...

Թուավ ոտքի: Յատկեց ձիու թամրին:

— Գնում ենք: Զի հեծիր, Խորայել արեղա: Գնում ենք:
Դու ևս, Շահնազար բեկ: Հույս, որ զարմուհիս՝ քո կին Սոնան
արդին ժանրոտք է: Թի սպանվես կռվում, փույթ չէ: Զավակ
կունենաս:

Նոր հեծյալներով համալիր ծսայի բեկի հարյուրակը սրար-
շավ մխրճվեց Դիզակի խորշերը: Ներքեսում Երասխի անկո-
ղին դաշտն է: Այնտեղով պիտի տանեն Շամախու գերի աղ-
ջիկներին: Միակ կամուրջն այնտեղ է՝ Հողափերին: Օ՛, անիծ-
ված կամուրջ, — Ես քո քարե սառը մեջքից Երասխի պղտոր
կոկորդը նետեցի եղրորս...

Ծանապարհը գարձավ տառապանք: Կրվեցին արդեն լավ-
տերնակալած անտառի որովայնը: Այստեղ ծառերն անսո-
վոր խոշոր են՝ մի-մի վրան, կատարներն իրար համբուրող,
շոյող, պաշտպանող:

Ծակատ-ճակատի դիմ առանք ժայռերի ու բերձերի նա-
խիրների: Կարմիր էին, նաև գորշ՝ գորտի թաց մեջք, կրա-
քարային՝ սպառնացող, մթին քարայրներով, արծվի ծավալ-
ծավալ բներով:

Իշխանիկ գետի ձորի խորում ձիավոր կայծակեց՝ ինքն էլ
ճերմակ, ձին էլ: Ա՛խ, աատանա, Ասպապ տիկինն է:

— Շտապիր, Դոհար, պարսիկները դեռ չեն հասել կա-
մբրջին: Առաջ զու հասիր: Հասի՞ր... Աղավնիներ են տանում
աղվեսների երախը զցելու:

Նա ձին մղեց զուալ ալիքների մեջ, կռացավ, ափով չուր
վերցրեց, ցանեց երեսին:

— Դո՛ւ, Եսայի բեկ, օ՛, պատանի, առավել շտապիր: Քո
հարսնացու Հեղինեն դերիների մեջ է:

Վայրի աղավնիների երամ ճախրեց հենց մեր քթի տա-
կով: Ինչ-որ հեռավոր մի ժամանակ մեր հայերն այս ապա-
ռած ու անձուկ տեղերում ճանապարհ են շինել, երկարել
դեպի ահռելի լեռների բարձր խորերը: Այս ճանապարհով
էր իշել դեպի Արաքսի եղեգնուտը՝ թշնամի ոհմակներին ըն-
ուառաց: Շատ տեղեր, ժայռերը ծխում էին: Գյուղեր են, գրե-
թե իրար կից: Բայց այդ զյուղերից ոչ ոք մեզ ընդառաջ շե-
կավ: Միայն երբ անցնում էինք դրանց մոտով, եկեղեցիների

գանդերը դողանքում էին խանդավառ: Երեխ բարի գալուստ
ու բարի ճանապարհ էին ասում ինձ՝ Գոհարիս:

Իմ ոև նժույզը հոտոտում էր գյուղերից սփովող ախոռ-
ների օդը, բորում մանր:

* * *

Տասներկու աշբ ունի Արաքսի Հոգավերին կամուրջը՝ քա-
րե կամարներ, նեղ անցք, ոտք-խելերը գետի միջից ցցված
զեղին ժայռեր: Ծ, աստվածային հորինվածք, թեզ մարդու
ձեռք չի՝ կպել, չէ՞:— Չէ՞: Մարդը ո՞վ է, որ ինձ հյուսեր
այսպես, թեկուզ անունը Տիգրան Մեծ է...

Գետը այստեղ նեղանում է, սակայն և հանդարտվում:
Զես էլ կարող ասել՝ ա՞զ է զնում, թե՛ ահյակ:

Տասներկու մերկ ձեռքեր պարզվեցին մեզ:
— Ողորմություն արեք...
— Մուրո՞ղ եք:
— Հա՞...
Երեքը հայ են, երեքը պարսիկ:
— Ո՞ր դժոխքից եք գալիս:
— Թավրիդից: Ահարից: Աշխարհից: Աշխարհին ինքը անե-
զերք դժոխք է:

— Ճանապարհին, Հայաստանի այս կողմերից գնացող
պարսիկ զինվորներ տեսա՞ք:
— Ո՞չ, ո՞չ Ողորմություն արեք:

Ես իմ մարդկանց հրամայեցի այս թշվառներին կերակրել:
Կերան: Գնացին: Մենք բռնեցինք կամրջի մատուցները: Գետը
շշնջում է:— Չի՞ք, չի՞ք... Խնչը՝ շիք: Անիծված, արնագույն
Երասխ:

Մոտս նստած է Հովսեփ բեկը: Ինքն այստեղ է, միտքը
զեպի կամուրջը բերող ճանապարհին: Ցնցված, վշտից խեղ-
ված պատանի... Բայց, սպասիր, սա կարծես ինքը չէ, այլ
արևածագի մեջ կանգնած Դավիթ մանուկը՝ սիրելիիս զավա-
կը, որ տարան: Տարան զերի... Այս, հենց նա է, աչ ականջի
բլթակին խաշանշան սև խալ: Սաթենիկ տիկինն իր այդ զա-
վակին հաճախ էր տանում Տաթեկի մատենադարանը:— Գրոց
մատյանները շոշափիր, զավակս, որ հասու լինես բո ցեղի

անցած ճանապարհին, ճանաշես ինքդ քեզ:— Փոքրիկը խորդում էր բրինձ ատամները:— Իմ խելո՛քս:— Թե կերակուրք կոշտ էր լինում, մխոխում էր ջրում, նոր ուտում: Մայրը՝ սիրելիիս տիկին Սաթենիկը թալիսման էր կարել մանկան օժիքի տակ:— Չկորցնես, զավակս: Միշտ կպահես հետդ...

Այս այսուհետ Ապա գերիների երամներ են երևում Մուղանի դաշտում, թուրքի ճանկերում: Գերիների մեջ փոքրիկ, մեռումասունը Դավիթը:

Գետը ուժգին ալիք տվեց:

Եթե այստեղից շատ չէ, հինգ օր ձիավարես զեպի Հայոց Արցախի վերեները, ապա Կուր-Ակ գետի ու մեծ Թարթառի արանքում ընկած մի ուրույն լեռնաստան կտևնեն: Դա այս պատանի իշխանազնի Հայրենիք մելիքությունն է: Սրա տոհմը, որ ծագում է Բագրատունի արքայական տնից, ութ հարյուր տարի է, ինչ իր լեռնաշխարհը պահում է օտար հողմերից զերծ: Առասպելներով պերճացած աշխարհն է մեր այս Արցախը: Ասպազ տիկինը հին զրքերի մեջ, որ կլանված կարգում է երխափորի իր քարայր զրչատանը, տեղեկություններ է գտել շատ: Նա ինձ ասաց, թե մարդը առաջին անգամ ձիուն բնտելացրել է մեր Հայաստանում:

Հովսեփ բեկից մի քիչ այն կողմ, զլուխը քարի դրած ննջողը զարմիկս է՝ նսայի բեկ հարյուրապետը, ապա զիք նստած ու գետի խորերին նայողը՝ Շահնազար բեկը, թիկունքին իսրայել արեգան: Այս գրեթե պատանի զորականների ներկայությունը նորոգում է իմ վիրավոր գորությունը:— Դո՞ւ ես, զո՞ւ ես, Մխիթա՞րս: Օ՛, մխիթարություն ազգիս հայոց: Եվ ես եթե աշխարհի հետ խոսեմ երանելի Եղիշեի հանգույն, ապա իմ ոգերության ակունքը նրա հավատն է: Վայ էն ազգին, որ չի հավատում իր վաղվա արևին: Բայց զու մի մտատանջվիր, Հովսեփ բեկ, և մի նվազիր քո կորովը: Նվազումին կհաջորդի անկումը:

— Երեխ իմ կործանումը մտա է, — անսպասելի խոսեց հաւ:— Ինձ թվում է, թե գերիների մեջ է իմ կյանքը: Կարծես լսում եմ նշանածիս ճիշը, տեսնում, թե պարսիկ սարբազներն ինչպես են խոշտանդում նրան:

Ես ձեռքիս ափով մակեցի նրա բերանը՝ մի՛ կռավիր:

Գիշերը հետախույզներ հղեցի գեղի դաշտի խորքերը՝
երեսում են, արդյոք, գերևարները:

Լուսաբացին առաջինը ետ եկավ Հովսեփ բեկը՝ իր ձիա-
վոր խմբով:

— Մեզնից քիչ ինչ ցած Սարաջալու քողվոր ցեղախումբ է
Հանգրվանել, իշխանուհի, — զեկույց արեց նա: — Դուցե թե
հրասակները նրանցից են, զուցե թե զերիները պահպամ են
նրանց վաշերում:

Ես իմ մարդկանցից մի ջոկատ թողեցի կամուրջը պա-
հակելու, հարյուրակի գլուխն անցած, արշավեցի գետն ի
մար:

Լուսաբաց էր: Գարնան քամին, պոկվելով կասպից ծովի
հեռուներից, ծավալվում էր Արարս գետն ի վար, մեռած
դաշտից խլած ավազափոշու պարսեր շաղ տալով: Թեթև
ծխեր նկատեցինք անգույն հորիզոնում: Մի երես ձորի երա-
խում, որ քիչ-ինչ ապահով էր քամուց, փովել էր Սարաջալու
ցեղի վաշը: Մեր երկիրը այս քողվորների հետ պայման ունի:
Նրանց իրավունք է շնորհված աշնանը իշնել Պարսից Փայ-
տակարան ճյունամաժ լինեներից, որտեղ անց էր կացրել ողջ
ամառը, ձմեռել Հայաստանի Մուղանի այս արձակ տարածք-
ներում՝ իրենց ոչխարի անհամար հոտերի ու ձիերի երա-
մակների համար արոտներ որոնելով:

Վաշը երկարել էր Երասխ գետի ձախ ափին: Թամին
խլում էր յուրդերի ծխերը ու ծվեն-ծվեն անելով՝ ցրում աթա-
րի հոտի հետ: Սանր մաֆուշները խայտում էին աշը ժակող
գույններով: Զիերի երամակները խլրտում էին գետափի նոր
ելած դալարիքի մեջ: Բեռնակիր եղներ, կովեր ու շատ ուղ-
տեր նստել էին, արևի ջերմությանը դեմ անելով իրենց խո-
նավ մռութները:

Եների հաշոց պայթեց: Մաֆուշների մոտից, հոտի թևե-
րից, քարերի ու սմբած ուղտափշերի թփերի տակից դուրս
պրծան անհամար գամփոներ ու մոլեզին նետվեցին գեղի
մեզ: Բայց և իսկույն ձայները կտրեցին ու կանգ առան, հենց
ոք վաշկատուն հովիվը սաստող ծկլթոցով ինչ-որ հրամայեց
նրանց:

Գիտափից գուրս եկան երեք ձիավոր։ Շահնազար բեկն ինձ ասաց, թե առջենց եկողը Սարաջալու ցեղապետ Զաւշի Փանահի եղբայրն է։

— Իմ ճանաչներից է, — ավելացրեց նա։ — Սիրալիր լինենք հետք։

Առջենց եկող ձիավորը դլխարկը հանեց։

— Ո՞, մեր գլխի վրա ես եկել, Վարանդայի մեծ իշխանի եղբայր իշխան Շահնազար բեկ։ Մեր օջախը քեզ ու քո մարդկանց տաքարան, մեր ուխարի հոտերը քեզ կուրբան, մեր գլուխները քեզ գրավ, ո՞վ հարեան մեր, ո՞վ այս դաշտի տեր, որ դու և քո եղբայրը սիրով տրամադրում եք մեզ, իրք ձմեռային օրերի ապրուստ։

— Ինչպէ՞ս է իմ մեծ եղբայր Զաւշի Փանահի ցեղապետի ախորժակը, — հարցրեց Շահնազար բեկը։ — Գիտեմ, հեռացել է շահի ժառայությունից։

— Ո՞, քաջերի և ազնիվների բարեկամ Շահնազար բեկ, Փանահ եղբայրս կարուսով է սպասում քո ոտքը տեսնելու իր շեմին։ Հիմա նա տանը չէ, սակայն ուր որ է՝ էսօր-վաղը կերևաւ։ Նա տանը չէ, ես տանն եմ։ Հրամեցեք։ Իմ բարը¹ մոտիկ է։

Գնում ենք տափակ ու անեզր դաշտի արահետներով։ Արեք ելնում էր հոգատար ջերմությամբ։ Ցեղապետի եղբայրը ամեն կերպ աշխատում էր դուր գալ հատկապես Շահնազար բեկին։ Ծուռով անհօրիզոն տափաստանում երևաց ցեղի ձեռոցի միջուկը։ Այնտեղ մի շքեղ վրան էր պերճանում։ Դրա շուրջը բազմաթիվ խարույկներ էին, ժաղկել։ Ցեղի ազապները, որ լավ զինված էին, մոլեզին պարում էին գլխարաց ու կիսամերկ, ինչ-որ գոշում իրենց լեզվով։ Թմբուկի ձայնը ականջ էր պատռում։ Ցեղապետի եղբայրը Շահնազար բեկին ասաց։

— Մեր իգիթները աղջիկ են փախցրել ուրիշ վաշից։ Ուստի խրախնանում են։ Առեանգել են սունեի բարից՝ իրենց մի ընկերոջ համար։ Հրեն, նորահարսը այն վրանի մեջ է։ Առաջին գիշերը անցել է, աղջկան պիտի տիրի ցեղապետ եղբայրս։ Ուր որ է կգա։

— Վայրենի սովորություն է, — զպանքով ասաց Եսայի
Քարյուրապետը:

— Մի՞թե, — բրդշաց ցեղապետի եղբայր: — Առաջին գի-
շերվա իրավունքը մեր իմամմերն ու զազիները խրախուսում
են: Իրենք էլ են օգովում դրանից:

Թմբուկները գզրդում էին: Ամբոխը՝ տարված խոլական
պարով, ոչ մի վերաբերմունք ցուց շտվեց մեզ: Նաև դերվիշների
խմբեր երևացին: Դե այսօր նրանց մեծ իմամի տոնն է:
Սրանք իրենց տարազով ու հարդարանքով բնավ նման շէին
այն պարսիկ դերվիշներին, որոնցից ես շատ եմ տեսել,
նույնիսկ համախ նրանց կերպը մտել: Սրանք զինարաց էին,
կանացի երկար ժամերով: Հրապարակի մեջտեղում ընդարձակ
խարույկ էր վառվում: Դերվիշները, որ փոքրիկ թմբուկներ
ունեին, երեսները դարձրին դեպի կրակը ու սկսեցին բռա-
վելով երդել:

— Լաիլա՛հ, իլ ալլա՛հ, շիլոտ իլ ալլա՛հ:

Այնքան բզավեցին, որ շատերի բերանները փրփրեց:
Ոմանք ուշաթափ փուլեցին գետնին: Նրանց շմունքան: Յու-
րաքանչյուրը պետք է ազոթքը բարձրաձայն կրկնի երեք հար-
յուր անգամ: Ով դրան շասած ուշաթափվում էր, նրան հա-
մարում են մեղսագործ: Հաշիվը պահում էր մի ծեր դերվիշ:
Սա ստեղ-ստեղ մի գունավոր քար էր հանում ձախ կողից
կախած մախաղից, գցում աջ կողինի մեջ: Վերջապես նա
հանեց երկի վերջին քարն ու սկսեց անճոռնի ցատկութել: Ամ-
բոխը ցնծության աղաղակ բարձրացրեց, թմբուկների զար-
կերը սաստկացան: Հսկում էր միննույն գոշյունը:

— Հեյա՛, հեյա՛...²:

Այնքան գորգուացին, որ զրեթե բոլորը ընկան ինքնա-
մոռացության մեջ, և իրենց թմբուկներով սկսեցին հարվածել
միմյանց: Ոմանք իրենց գլուխները խփում էին վրանների
փայտե սյուներին: Մի քանի ծեր դերվիշ վաղեցին ու մտան
բորբոքվող կրակի մեջ: Սոսկալի տեսարանը քարացրեց ոչ
միայն մեզ, այլ դրան ականատես ամբոխին: Կրակի մեջ
նետվածները մի պահ գալարվեցին բոցերի մեջ, ապա դուրս

1. Փառաբառեթյուն է Ալլա՛հն:

2. Բոլ է, ող է...

թռան, ընկան գետերին ու սկսեցին թավալզել: Ոմանք կրակ էին վերցնում ու ողորմ-ողորմ պահում իրենց ափերի մեջ Շենքերահոտք ապականեց օդը: Ով իրեն կրակի մեջ էր նետում, դասվում էր սրբերի շարքը: Այրված դերվիշների մարմիններին ինչ-որ հեղուկ ցանեցին և սկսեցին ցատկուել նրանց շուրջը: Նրանք դիմակների մոտ պարելու են մինչև երեկո, մինչև մարգարեի սիրույն զոհված սրբերի հոգիները համբարձվեն: Քառմենելի էր նայել այդ ողբակիզմանը: Հանուն ինչը:

Ցեղապետի եղբայրը բռնեց Շահնազար բեկի գոտին, խոսեց քննանքով:

— Ալլահի աշքը քաղցր է մեր աշխիրեթի վրա, որ ինքը հայոց կարանդա աշխարհի մեծ իշխանի եղբայրն է եկել իմ էլլը¹: Մեր աշքերը քո ոտքերի կոխան, մեր զլուխները քեզ ընծաւ:

Կոացավ ու մինչև Շահնազար բեկը ոտքը կփախցներ, հասցրեց համբարել նրա քղանցքը: Շահնազար բեկն իր սուրբ հանեց ու իրեն բարեկամության առհավատշյա, մեկնեց նրան: Փանահի եղբայրը սուրբ վերցրեց ու երեք անգամ ճռճելով զլիւավերենում, վերագարձրեց տիրոջը:

— Թող այս սուրբ կտրուկ լինի մեր ու ձեր ցեղերի թշնամիների շլինքներին: Ծ, ալլահ:

Մի քանի սեյիդ ու մի շեյխ, կանգնեցին նրա թիկունքում, գետեից բուռ-բուռ հող վերցրին, ուսերի վրայով ետ շպրտեցին: Ցեղապետի եղբայրը մի ճերմակ հորթ զցեց Շահնազար բեկի ոտքերի տակ ու դաշույնը հանեց.

— Ղուրրանն ընդունելի:

Հորթի զլուխը դեն զցեց, արլունուտ դաշույնի մի երեսը սրբեց իր փեշով, մյուսը՝ Շահնազար բեկի կապայի քզանցքով:

— Ամեն անգամ, երբ քո կապայի վրա տեսնես այս արյունը, հիշիր մեր եղբայրությունն ու ուխտը, բեկ իմ:

Գետափիից մինչև ցեղապետի վրանը գորգեր ու կապերաներ էին փռած: Վրանը իր համեստությամբ քիչ էր զանազանվում մյուսներից, բայց խիստ ընդարձակ էր: Քառակուսի էր,

1 Բնակատեղի:

մի մասն անջատած եղեգնյա ճյուղերով։ Այդ կողմից ձիռւ թրիքի ու մեզի հոտ եկավ։ Թաղիքի պատերի տակ դարսված էին բազմաթիվ պղնձե պլատացող անոթներ, մոտը բարձրանում էր անկողնու ծալքը, հատակը ամբողջովին գորգապատ էր։ Բնակարանի այս նախնական պարզությունը քոշվորները բերել էին իրենց հեռավոր հայրենիքից՝ իրանի հարավ արեվելքից։ Թեև զարուկես էր, ինչ նրանք ապրում էին իրանի Ատրպատականում, որ մեր երկրին հարևան է, մեր ու պարսիկների քաղաքակրթությունը շեր թափանցել նրանց կենցաղը, մեզնից խիստ կղզիացած լինելու հետեանքով։

Մեզ հրավիրեցին ճաշ անել բացօթյա։ Դա ճյուրին պատիվ տալու բարձրագույն ձևն էր։ Նստեցինք գետափին, գորգերի վրա։ Ցեղի բոլոր երենիները կտավի շապիկ-ոտաշորով էին։ Շապիկների վրայից հագել էին զացաքի¹ արխալուզներ, սրանց վրա՝ կապույտ փաստակ²։ Գլուխները ծածկել էին թաղիքի կամ մաքենի փափախով, վրան գույնզգույն թաշկինակ փաթաթած։ Պոտու տեղ շատերը կապել էին շլե կամ շալե շոր։ Թե հովիվն ու թե աղան իրենց գոտու արանքում մի-մի դաշույն ունեին։ Մի քանիսի ձեռքին թվանկ-հրացան կար։ Ումանք երկար նիզակ էին պահում ծնկներին զրած։

Հենց որ նստուեցինք, սպասարկող աղամարդիկ մեր առջև կույտերով խաշած միս զրին։ Դա այնքան շատ էր, որ կարծես ինչ-որ նախապաշտումունքի հետեանքով էին նման բան անում։ Պղնձե սինիների մեջ խորոված ոչխարի գլուխները բերին, ապա՝ փլազ։

Ցեղապետի եղբայրը առաջինը ձեռքը տարավ ոչխարի գլուխներին։

— Լիանանք եղածով, մինչև բուրբերն ու քյուլաման պատրաստեն։

Մեզնից ոչ հեռու երկու տղամարդ ոչխարի միսն ու զմակը մանր կտրտեցին, լցրին երկաթե խոր սաշի մեջ և վրան շրաբառն մածուն թափելով, զրեցին կրակի վրա ու սկսեցին փայտով խառնել։ Բուրբերը դա էր։ Ապա հողի մեջ փոս փորեցին, մեջը կրակ լցրին ու մորթած ոչխարն ամբողջովին

1 Ղացաքի — հաստ ու կոշտ կտորի տեսակ։

2 Փաստակ — թաղիքի կարճաթե բանկու։

խոթեցին հրախառն մոխրի մեջ ու ծածկեցին կրակով։ Դա
էլ քուլլաման էր։

Այս ամենը ձանձրացնելու շափ երկար տևեց։ Սա արդեն
դուրս էի գալիս համբերությունից։ Ախոր մենք անելիք ունենք։

Վերջապես ցեղապետի եղբայրը զլուխը բարձրացրեց։—
Բոլորը դադարեցին ուսելուց։

— Ալլահը մարսական անի։

Մենք հեծանք մեր ձիերն ու ետ գարձանք։

Կամրջի մոտ թողած իմ մարդիկ ինձ զեկուցեցին, թե մեր
բացակայության ընթացքում որևէ մարդ չի մոտեցել կամրջին։ Ես արդեն հուսահատվում էի...»

* * *

Մայրամուտի վարդագույնի մեջ, ոչ շատ հեռվում փոշու
կծիկներ երևացին, նախ ուղտակերպ, ապա օճագալար, որ
գետնից պոկվելով անկվում են դեպի ոսկեկարմիրը, պսպղում
շեկ բոցերով ու արագ ցրվում։ Մի քիչ հեռվում եղած զեռա-
տի զինվորը վագեց դեպի մեզ։

— Գալիս են։ Բերում են...»

Փոշու ամպը մոտեցավ ոչ արագ, այլ ծույլ դանդաղ։
Նշանակում է եկող զանգվածը հետիւնն է։ Ամպի աջ թեր,
գետի խոնավությունից ծանրացած, իջավ և, իր մարելուց
գոհ, պառկեց ջրերի մեջ։ Երբ մինչև կամրջը հազիվ մեկ-
երկու ասպարեզ¹ էր մնացել, մի դղյակ առաջ ընկավ ու,
թեև կամրջի ականջում ոչ ոք չկար, հզոր գոռաց։

— Խարբարդար²...

Եսայի հարյուրապետը մեն-մենակ կտրեց նրա առաջը։

— Ի՞նչ եք տանում, է՞՛յ։

Փոշին նստեց զալարվելով խանձված գետնին։ Ես նկա-
տեցի, որ պարսիկ ջագահրչի սարրազները³ ձիւվոր են,
երեկ մի հարյուր հոգի։ Նրանք քշում, բերում էին ձիերի արան-
քում խեղղված գերի աղջիկների խումբը։ Հովսեփ բեկը ձըգ-
վեց դեպի գերիները, ես արգելք եղա։— Համբերիր։— Բո-

1 Մեկ առպարհը 177 մետր է։

2 Խարբարդար.— Ռւշադրություն։

3 Ջագահրչի սարրազներ— պարսկական հետեկի դիեվոր։

լորբ ճանապարհի տառապանքից անկված էին, բայց և գուցե չենց նոր իրենց այցելած հույսով՝ ահա մոտեցել են կամըր-ջին ու դուրս կդան Հայաստանից։ Աղջիկներին շրջապատճած ձիավորներից մեկը գոռաց։

— Ճանապարհ ավեր, է՞լ...

Ես զգաստացա: Մի՞թե Ջառը Փանահն է, Զայնը ծանոթ էր: Եսայի բեկը գոլեց։

— Հարցեում եմ, ի՞նչ եք տանում։

— Քեզ ի՞նչ, — հոխորաց ժանոթ ձայնը: — Մենք մեր ապրանքն ենք տանում։

— Կամըրի վարձը պիտի տաք, — պահանջեց Եսային: — Մաքս պիտի տաք, հասկացա՞ր, էշի՛ գլուխ: Այս հողը Հայաստան է, կամուրջը՝ ևս։

Զինվորներիցու մեկը թռավ իմ թաքստոցը:

— Այս գոռզոռացողը Ջառը Փանահն է, իշխանուհի: Նա է: Նա է:

Ես սրիս կոթունով հրեցի Հովսեփ բեկի ուսը՝ ժամանակն է: Կապավոր զինվորս գալարափող հնչեցրեց: Մի ակնթարթ ես, և փոշեցորշ խումբը շրջապատվեց մերայիններով՝ հրացաներին ուղղած պարսիկներին։

— Անձնատուր եղեք:

Անակնալի եկած պարսիկներից մի բանիսը փորձեցին սրեր մերկացնել, մզվել առաջ, սակայն երկու-երեք բար շարած, ընկան զնդակահար։

— Այս ի՞նչ է, — ձիու վրայից աղաղակեց Ջառը Փանահնը: — Այս ինչ ավագակություն է: — է՞լ, է՞լ, մեր ավա՞րն եք խլում մեզանից, դա անարդար է: Օ՛, ալլահ, զյավորները մեզ կողոպտում են, կոտորում են...

Ես քմբիծազեցի: Զարմանալի է աշխարհի բանը: Այդ ստահակը իր ողջ կյանքում միայն կողոպտել, սպանել է, այժմ էլ ահա անմեղ աղջիկներ գերած տանում է ստրկության, և արդարության անունից է բարբառում: Իմ զինվորները կատարյալ քարդ արին: Ես եկատեցի, թե ինչպես Շահնազար բեկը թռավ ձիուց իքած, սրամարտի պատրաստվող Փանահի շլինքին, սուրբ շողացրեց ու երան դետին տապաւելով, բարչ տվեց ու զցեց Արարսի հործանուուի մեջ: Մի

ակնթարթ ևս և ավագակներից ոչ մեկը կենդանի շէր: Հովսեփի բեկը պրկեց աղջիկներից մեկին:

— Հերիքնա՞զ...

Աղջիկները լաց էին լինում աղիողորմ: Երեխ թե տակավին շէին հավատում, որ իրենք փրկված են... Երբ մի փոքր հանդարտվել էին այս գժրախտները, տեսա որ միայն Շամախու դպրոցի աղջիկները շեն գերի: Նրանց հետ գերի էին նաև հարյուրից ավելի տղա ու աղջիկ փոքրիկները: Ողջ գիշեր մենք հոգ տարանք գերիներին: Լուսաբացին Շահնազար բեկին առացի:

— Պետք է հողի երեսից ջնջենք Փանաճ ավագակի Սարչանլու ցեղը: Գնացինք:

— Գնանք,— մի տեսակ աղաղակեց Շահնազար բեկը: — Վրեմն աստծու պատգամն է: Ես սրախողիող արի Փանաճին: Նույնը կանեմ նաև նրանց ցեղի հետ...

Բոլորը ձիավորվեցին: Գերիներին դրին ավագակներից խած ձիերի ու զորիների մեջքերին: Գնացինք:

Հասանք Սարչանլու ցեղի վաշին: Սակայն դաշտը մեզ զիմավորեց ամենի դատարկությամբ: Քոշվորներից ոչ ոք չկար:

Շատ տարիներ հետո միայն իմացա, որ կատարվել է մի սարսափելի բան, որ հազիվ թե աշխարհի մի այլ անկյունում եղած լիներ...

Սակայն այդ մասին կողատմեմ հետո:

Մեծ դաշտի հեռուներից արծիվներ ճախրեցին դեպի Հովսեփիներին կամուրջը, ուր թափված էին ավագակների դիակները: Պարզ է, ուր գեղն իցե, անդք ժողովեսցին արծվիք:

* * *

Հինգ օր ձիավարելուց հետո փրկած գերիներին հասցրինք Թարթառ գետի խորերը: Իրիկնանում էր, երբ մտանք Հովսեփի բեկի հորենական Թառինչ բերդավանք: Ես շոյեցի բեկի ձիութարքին նստած աղջկա գլուխը:

— Վախեցե՞լ ես, Հերիքնաղ:

Նա լաց եղավ ամոքող հեկեկանքով:

Բերդի դռները մեր առաջ լաց արեց Հովսեփ բեկի մայրը։
Նրա ձայնը տաղնապով հնչեց։

— Աղետ է, զավակա։

Տղան աղջկան գրկած տարրավ դեպի մայրը։

— Ընդունիր հարսնացուիդ, մայր իմ։ Ահա նաև

Ես իշխ ձիուց։ Հովսեփ բեկի մայրը շտապեց համբու-
րել ձեռքս ու լաց եղավ, անշուշտ, ուրախությունից։

— Ահավասիկ ես քեզ հետ հմ, Գոհար իշխանունի, ամե-
նայն ավուրս, մինչև ի կատարումն աշխարհի։

* * *

Իմ օթնան սենյակը լավ տաքացրած է։ Նաև խիստ է ու
ներազգող։ Հին կահույք էր հանգլում մոայլ պատերի տակ։
Երեք նեղ լուսամուտ ծածկված էին կոշտ կտավի վարա-
գույրներով, որը, զիտեմ, շորս հարյուր տարի առաջ է իր
ձեռքով հյուսել-գործել այս տոհմի նախատատ Մամբան թա-
գունին։

Կեսօր էր։ Բոլորովին անակնկալ, ամրոցի սալարկ բա-
կում երեաց Ասպապ տիկինը՝ երեք-շորս սեհր հագած միանձ-
նունիների հետ։ Նրա գալուստը ես բարեպատեհ գտա։ Ինչ
էլ լինի, կարոտում եմ նրան՝ այդ մոնշացող Հովսպին։ Ամ-
բոցը խլրտաց։ Կանայք ու աղջիկները փաթաթվեցին Աս-
պապին, ոմանք լաց եղան։ Այս ի՞նչ ծավալ-ծավալ է հայ
կնոջ լացի ծովը... Ասպապ տիկինը համբուրեց ինձ։

— Հպարտ եմ խիզախ արարքովդ, Գոհար իշխանունի։ —
Ուրարից կախած լանջախաշը դեմ արեց Հերիքնապին։ — Համ-
բուրիր ոչ խաշի սասնությունը, այլ նրա զորությունը, որով
փրկվեցիր դու, որով է կենդանի ու կանգուն աշխարհն Հայոց։

Ես նկատեցի, որ նա, ինչպես ինքս, սև սրեմի տակ կարճ-
կոթ դաշույն ունի։ — Իմ աստվածն իմ զենքն է։ — Զորականը
չի լքում իր էությունը, թեև կամովին հանձն է առել Քրիս-
տոսի աղախին լինելը։

Գյուլիստանի մեծ տիկին-իշխանունին մեղ ընդառաջեց
իր հարկաբաժինը։

Մի օր էլ անցավ։ Ես տեսնում էի, որ իշխանական տոհմի

կանայք ինձ պահում են ոչ իրենց գլուխների վրա, այլ՝ հոգիների մեջ:

Այդ օրը, ճաշից հետո, Ասպար տիկինը սեղանին դրեց ձեռագիր թղթերի մի տրցակ ու սկսեց երկյուղած թերթել:

— Սա երանելի Գրիգոր Տաթևացու «Գիրք», որ կոչի Ասկեփորիկ» մատյանի իմ ընդօրինակումն է, Գոհար քույրիկս, Հոյս, որ կողքունիս: Խրիստիկի իմ այն խուցը, որի մթին Հեղքից հովազ է մոնղում, ես գրշատուն եմ դարձրել:

Ես զիրքը խաչակնեցի այն ձեռքովս, որով սուր եմ բըռնում՝ երկրիս թշնամիների դեմ, մյուսով բռնում ձիուս սանձը: Ես խղճացի իմ մատներին, որոնք կարծես ամբել, խունացած մոմեր էին դարձել: Դարձա հավաքված տիկիններին ու օրիորդներին:

— Հնարավո՞ր է, որ ձեզնից որևէ մեկը լսելի կարդա այս մատյանը: Թէ՞ Ասպար տիկինը կամ ես բաց անենք սրա մարի խորերը:

— Ես կկարդամ,— անսպասելի ասաց Հերիքնազը: Սակայն ճշաց ու սկսեց աղիողորմ հեկեկալ:— Ծնողներս հիմա ողբում են ինձ համար:

Ես ձեռքս եմ քաշեցի զրբից:

— Խաղաղվի՞ր, զավա՛կս: Ահա գու փրկված ես: Ընկերունիներդ փրկված են: Լուր կտանք Եամախուն, ծնողներից Հանգարավիր: Ոչ ոք չի զթում ոչ լացող անձին, ոչ լացող ազգին:

Հերիքնազը շալի տուտով սրբեց, թերվեց ձեռագրի վրա: Նրա ձայնը, թեկ արցունքով էր, բայց հնչեց ներշնչող:— Չորսն են տարրերը՝ հող, ջուր, օդ և հուր: Ջի առանց հողոյն շոշափումն ոչ լինի, և ոչ առանց ջրոյ՝ կալումն ու մածումն, և ոչ առանց օդոյ շարժումն, և ոչ առանց հրոյ երևումն... Երկիրը ծանր է, բայ զջուր՝ ի ներքոյ է: Եվ ջուրն քան զօդ և օդն ծանր է, բայ զհուր, զի սակավ ինչ գինություն ունի...

Աշքերս փակ լսում եմ աղջկա դողդոջ ձայնը և մտքիս մեջ հստակվում են շատ առեղծվածներ: Երկիրը կազմված է Երանելիի ասած շորս տարրից, բայց կա նաև հինգերորդը, որ եթեր է կոչվում, այսինքն մի շգոյություն, որ մեզ ան-

տեսանելի է: Ապա այդ բոլորը շարժվում են երկու տեսակ՝ գեղի կենտրոն և կենտրոնից խույս:

Սա ձեռքս դրի աղջկա նուրբ ուսին:

— Դադարիր: — Դարձա կլանված ինձ նայող տիկիններին: — Ոչ երբեք հուսահատ լինելուք: Հույսը կորցնելը կորբաթաբեր է, ինչպես ճակատամարտում կորցնես սուրդ: Վհատությունը փութացնում է անկումը: Իմացեք, հուսահատությունը տառապյալների կործանման գավազանն է: Երբեք լրնդունեք նման շարիք: Ամուր եղեք հոգով ու, մանավանդ, ուժով:

Ես զինի խնդրեցի: Խսկույն բերին: Կմեցինք ես ու Ասպարագ տիկինը, մյուսները՝ ոչ: Ջգացի, որ ձայնա նորոգվեց: Օ՛, վաղեմի կարողություններ, արթնացե՞ք:

— Անվախճան են իմաստուն Տաթեացու թված և իմ ընդունած շորս տարրերը: Եվ քանի որ ազգն մեր ևս այդ շորս տարրերի գոյությունն է, ապա նա նույնպես անվախճան է: Սակայն հիշեցեք, զրոց ուժը չէ միայն հենասյուն ազդի: Ամենից առաջ զորական կերտվածք և ուժ տվեք ձեր զավակներին:

Առավոտյան ես գրկեցի Հերիքնազին:

— Իսկ դու, աղջիկս, սիրում ես Հովսեփի բեկին:

Աղջիկը զլուխը դրեց իմ ուսերին ու հեկեկաց:

— Այգակ՞ս, — ասացի, — ամեն բարյաց սկիզբը սերն է: Օրհնում եմ:

Հիշեցի իմ հանգած օրերի հեռավոր լույսը... Սակայն՝ ոչ, ես ինձ ընավ դժբախտ չհամարեցի: Ո՛չ...

Ես սկսեցի ապրել Թառինցում: Հերիքնազը, որ չէր պոկվում ինձնից, Ասպարագ տիկնոցից ու նրա սանուհիներից, կըրքով հետաքրքրվում էր մենաստանային կյանքով: Ակզրում թե՛ ես, թե՛ Ասպապը լուսապատճեն նրան ներկայացրինք տնապատական աղջիկների ու կանանց վարքը, որ օժգած էր եկեղեցու խորհուրդներով, սակայն նկատելով, որ աղջիկը ինչ-որ ներանձնական խմորում է ապրում, առ զգացի նրա համար: Զլինի՞ն նա ես վազի գեսպի վանք, հեռանա աշխարհիկ տառապանքների կենդանությունից: Այս կասկածը իմ մեջ խորացավ՝ վտանգի սպառնալիքով:

Մի երեկո ես Հերիքնազին ասացի.

— Պատրաստվիր, շաբաթ օրը քո պսակը պիտի անենք։
Նա դողաց, ցնցվեց՝ գունատվելով։ Սակայն որևէ ինչ
չկարողանալով ասել, փախազ իմ սենյակից։ Ես դդացի, որ
իմ մեջ նորից արթնացավ զորականի ավյունը, իմ աշքը ը
կայծ տվին հրամայողի անդիջմնությամբ։

* * *

Եկեղեցու սրահում հալվում են հարսանեկան մոմերը։ Հե-
րիքնազը շողում է նորահարսի քողերի մեջ։ Նրան ու պա-
տանի Հովսեփին ինքս կանգնեցրի սուրբ քեմում, նրանց
պլուխները կպցը միմյանց։

— Եղիցին երկոքեան ի մարմին մի։

Մարմնի մի կեսը՝ աղջիկը ճիպ-ճերմակ էր։ Ճերմակ
էին նույնիսկ նրա երկարաճիտք կոշիկները։ Թեթև շղարշով
էր, որ առատանվում էր մոմերի բարկ օդից, երազի պիս նուրը,
կարծես աննյութ։ Գլուխը հեզ թեքած, մատներով մանր խա-
ղում էր թիրմանի ոսկեկար գոտու փնջիկի հետ։ Հովսեփը
բռնել էր նրա ձեռքը։ Նրա ափի մեջ լոր է թպրտում։

Ես փեշիս տակից հանեցի արծաթե պատյանով իմ դա-
շույնը, որ իմ հարսեանալու օրն էր այժմ ուրվական դար-
ձած այն աստղը կապել գոտուս, ու հազցը նորահարսի մեջ-
քին՝ քողերի տակից։

— Դրանով պաշտպանիր պատիվդ ու ազգդ, կի՞ն։

Հարսանյաց հանդեսը նեղվեց եկեղեցու խեղղոցում, քա-
հանաների ծանձրալի քարոզներից։ Ես շտապեցրի՝ դուրս
եկեք։ Ամրոցի բավականին քնզարձակ հրապարակում ծփած
բուռն խրախճանքը։ Թառինչ էին հավաքվել անշափի շատ
Նարդ, մանամանդ շրջակա զյուղերի շահելները։ Շամախուց
եկել էին Հերիքնազի ծնողները՝ ծանրազին նվերներով, ուրա-
խության շդադրող արցունքներով։ Հրապարակում քարե
կառափնարան կար, որի վրա զեռ մնում էր հազար, գուցե
ավելի տարիների առաջ կառափնածների արյան սև շերտեր։
Ես բարձրացա հողից հանած թոնքի նմանող կառափի մեջքը։

— Ականչ արեք, հարսանյաց հանդեսի հրավիրյալներ, և
դուք՝ նորապատկեների հարազատներ։ Ականչ արեք։ Տեսնում
եմ, ձեզնից յուրաքանչյուրը իր պատվի կշռի ծանրազին

նվերներով է եկել: Զեր ընծաները բերեք ու թափնցեք կա-
ռափնարանի այս խորշը, որ գանձանակ է: Եվ դուք՝ արկ-
նայք ու աղջկունք, ձեր զարդերը պոկեցեք ու նվիրեցեք գան-
ձանակին:

Ամբոխը ալիք տվեց գեղի կառափնարանի խորշը: Առա-
ջինը Հովսեփ բեկի մայրը և նրա զարմուհիները իրենց զար-
դերը լցրին գանձանակ: Ապա ժողովուրդը՝ ով ինչով եկել էր:
— Հանուն ազգի, — ազգարարում էի ես: — Հանուն հայ-
քենիրին...

Առպապ տիկնոջն ու նրա հետ եկած սանուհիներին հանձն
արի հավաքած հարստությունը զումար անել ու տանել Գան-
ձասար՝ հայոց զորքին նվեր: Զեռքս բարձրացրի:

— Այժմ բոլորդ գեղի զորահավաքի, ազգաժողովի: Թուր-
քը մոտենում է մեր Գանձակ քաղաքին: Դեպի կոի՞վ...

Ես նստեցի իմ ձին, որ մոտ բերեց Հովսեփի բեկը, և սլա-
ցա: Այս, այս, ես թեավոր եմ, ինչպես էի Մարազայի նա-
կատամարտում: Ոչ նվազ: Իմ թեավը լին կտրտվել: Իմ թե-
վերը լին հոգնել:

Ետ նայեցի: Ժողովուրդը հետեւում էր ինձ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՏՈՒԴ

Հայոց զորքը երկու կիսվեց:

Մի ճյուղը գերազահ իշխանի առաջնորդությամբ գեաց
գեղի Գյուլիստանի Թառինչ բերդավանը, մեծ զետի նեղանց-
քով իշնելու Գանձակի դաշտ, մյուսը՝ Ջրաբերդի տեր Աստ-
վածապով սպարապետի հրամանի տակ, հոսեց Մոավ լեռան
փեշերով՝ Ասկանապատ բերդավանի ուղղությամբ: Այնտեղ
նրան պիտի միանան Փառիսոսի ու Շամինորի ուղմաջո-
կատները: Զիւս թամբախուրցինում, հացի հետ պահում եմ
նոթամատյանս: Հենց այս առավոտ զրել եմ: «Եռորչ եկի
ի մեջ Օսմանցու, ի մեջ Պարսոյ, տեսի և զրեցի՝ ես Երևանցի
Հովհանի որդի Արրահամս: Ով աստվածասեր, կարդա այս
պատմությունս, ողորմիս ասե իմ հոր Հովհաննին, իմ մայր
Մարիամին և քույրերիս և վեց եղբայրներիս, որ ի ձեռն օս-

մանցու մարտիրոսացան։ Ես հառաջեցի սաստկաբար, և իմ
պնդերից ժուխ ելավ։ Ինձ ուղեկցող Ազամ բեկը տագնապեց։

— Տկա՞ր Ես, պարոն խոջա։

— Աշխարհա նորից ապականվեց, — հառաջեցի Ես։
Թուրք Արիֆ Աշմեկ փաշան մտել է Դանձակ։

Դնում ենք թանձր, խճճված անտառները ճեղքելով՝ արջի
ու վայրի վարագների ոտնաշետքերով։ Դիհի արտուճը ծաղ-
կել է զեղին։ Արահետը պմնվել է բարձր եղինցի, զինզեղարդի
ու կլոր գեղնածաղկի հեղեղով, եղնաճակատի ու երեքնուկի
երես առած թփերով։ Պառեղի լայն, գոգնոցի շափ տերմ-
ները տեղ-տեղ կպել են զետնին, ճմրթվել հենց նոր անցած
արջի թաթերի տակ։ Զիերը երրեմն փոշտում են զգալով որջի
կեղափից բուրդը բարձրագլուխ, չալ ձիու վրա է։ Եսայի բեկը
մի տեսակ ընկում է։ Զինվորները այժենակաները հանել,
ոլործուն կապել են ձիերի թարերին։ Կարճին բաճկոնով են,
մազը՝ դուրս Նրանց մորթե սրագագաթ փափախներին ան-
տառի սսկեգույն մղեղ է նստել։ Բոլորը թվանք-հրացան ունեն,
երկար սրեր, նաև նիզակներ, դաշույն ու թռկապարան։ Ամանք
թամրի կեղը խրած լայնշեղը տապար են կրում։ Իմ ետևից
նկող երկու զինվորներից մեկը կլոր, մեծփոր թմրուկ ունի,
հոնի երկու կոպալներով։ Նրա ուսից կախ է տված անձրեց
ու արնից զեղնած, սուր ժանիքները վրան վարագի ծնոտ։
Դա այրունական մունետիկության նշանակ է։ Վարագի ծնո-
տը հաճախ զարկվում է թամրի կեղին ու շոր շնկում։ Մյու-
սի կրծքից կախված է աղնձի զայտարափող, ծայրին՝ եղան
շոր սրչ։ Զիերը բրտնմասն են, ներս քաշված, հարվող փոր-
ները ցեխուտ, բայց և զարմանալի աշխույժ։

Ծուտով անտառը մի փոքր ետ գնաց ու նրա կանաչ պա-
րիսպների օղակում երևաց մի բավականին մեծ գյուղ։ Գա-
ւաղած շներ գամփռեցին դեպի մեզ։ Իրար վրա գարսված
աների սպիտակ կափած տափակ կտուրներին ու անհամար
քարայրների մզակներում մարդիկ երեացին, մի ակնթարթ
զարմացած նայեցին մեր կողմն ու շրվեցին։ Բայց ահա հայ-
տընվեցին՝ զինված կոպալներով, եռամանիներով, նիզակ-
ներով։ Մի քանիսը նույնիսկ թուր ունեին։ Մերոնք զալարա-
փող հնչեցրին։ Թմրկահարը պորտի վրա խաչածեւ փոկերի

արանքից հանեց կոպալները: Զորը ցնցվեց փողի ծկլթոցից ու թմբուկի գղրդոցից: Եներն այս անգամ ոչ թե զամփուցին, այլ հատ-էտ գնալով ոռնացին: Բակերում քուզուզող աև, շատ խոշոր հավերը փախան: Աղամ բեկը ձին մի փոքր առաջ մղեց, գոշեց:

— Է՞ս, անտառի որչաբնակներ, ականջներդ լորս արեք: Տասնյոթից մինչև քառասունհինդ տարեկան տղամարդիկ հավաքվեն, կապեն-կշկովեն: Թուրքը հասել է Գանձակ:

Նրա ձայնը սփովեց կծկված, քարաբռունցք գյուղի վրա, արձագանքեց, ժայռերի ու քերծերի մթին խռովշներում:

— Թուրքը զավթել է Հայաստանի Գանձա՞կը...

Անեղ լեռներ են, կուսական ողի: Դյուղերը շատ են: Տեղը սակավ քարապատ, առավել՝ ժայռերի մեջ, երբեմն զետնափոր: Եկեղեցիները, որ բոլոր գյուղերն ունեն, գմբեթավոր են, այնպիս նուրբ հյուսած, որ թվում է մարդու ձեռք լի կպած: Արդեն բարձրացած արևից քաջ շողաց երկաթե խաւը: Քարայրներից ու բազեի բներ հիշեցնող քերծաճեղքերից դուրս թափված գեղջուկները խլրացին: Թաղիքե կամ մաքենի գգագներով էին, ձորձից, քուրձից խորոգ հագած: Ոմանք թաղիքե անթե կաճ ունեին, որ կրում էին իրրե զրահ: Բոլորը լայնփողը տարատ էին զգեցած, ոտքերին անաղաղ¹ կաշուց տրեխներ: Զենոր դրանց գամեր են հազցնում՝ այս աճուրի լեռներից ցած իջնելու, սառցաշերտերի վրայով սահելու: Քշերը միայն երկար թևերով վերարկու ունեին: Պորտները բաց երեխաների երամներ թառնցին ժայռերի ելուստներին, ձեռքներին բարեք: Աղամ բեկը նորից կռնչաց.

— Եկեք ի զե՞ն... Գնանք թուրքին քշենք մեր Գանձակից:

Երեխաները մատները խոթեցին բերանները, սուլեցին: Եները խռապուցեցին հաշալուց, սռնալուց, կնծմնալուց:

Դյուղը թշնամանքով ղիմավորեց մեզ: Տղամարդիկ գաղագած էին՝ սրված կասկածով, կանայք՝ գլուխները բաց, համարձակ ու հանգուզն: Ամբոխի միշից լայնթաթ ու ամրավիզ մի շինական, որ հովվի հանգերձով էր, գոշեց.

— Այս տառապած գեղջուկներին հանգիստ թողեք, է՞ս, իշխաններ: Հենց հիմա շալա-շուկաներդ հավաքեցեք ու լըբ-

1 Զգաբազած:

վեցեր: Հեռացե՞ք, քանի գեռ շենք կտրտել ձեր ձիերի շլերը:

Աղամ բեկը ցատկեց ձիուց, կովան ցույի պես միտճեց
մազազիստ, բրդոտ, բարձրահասակ գեղջուկների մեջ ու
կուրժքը բաց անելով գուաց.

— Է՞լ, դու, Սուռ Ավագ, ուշը եկ, թուրքը մտել է մեր
տունը: Կարծում ես քեզ շնանաշեցի, խոռվարար: Դե, ահա
իմ կուրժքը, նիզակդ խրիր սիրտս: Խրի՛ք...

Հոկայակերպ հովիվը, որի անունը իմացա՝ Ավագ է, մա-
կանունը Սուռ, գոմոաց: Նրա հաստ պռոշները սեացան, հե-
վաց, գոմից նոր հանած գոմշացուվի մնչոցով:

— Հեռացե՞ք...

Եինականները սպառնալի ցցեցին իրենց մականները,
եռաժանիները, նիզակները: Աղամ բեկը, սակայն լընկրկեց:
Դե, եթե ձեզ հաճելի է, սպառնեցեք մեզ:

— Սպառնեցեք, որ թուրքը մտեի ձեր այս ծմակները, բռ-
լորիդ սատկացնելով, ձեր կանանց ու զավակներին գերի
տանի: Դե՛... Խարզել եք, հա՛, այս Սուռի հաշոցներից:

Սուռ Ավագը թմբկահար զինվորից խլեց թմբուկը ու այն-
պես խփեց նրա զլխին, որ մորթին պատովեց ու խեմքը մտավ
նրա ուսերը: Եսայի բեկը, որ ձիուց իշել էր, սուրը մերկաց-
րեց:

— Է՞լ, քոյի արջեր, ուշքի եկեք: Թշնամու աշքը լո՛ւյս...
Ազգուրաց գործ մի՛ անեք, մի՛ անեք:

Նա բշեց Սուռի վրա, նրան թրատելու, սակայն Աղամ
բեկը նրան ետ մղեց: Եինականները գազազեցին առավել
մժանը սրերով փորձեցին մոտենալ Եսայի բեկին, սակայն,
պատկառելով նրա անզիջում համարձակությունից, մնացին
անդները, շարունակելով գոռգոռալ:

— Մեզ հետ գործ չունեք, Է՞լ, իշխաննե՛ք: Մենք հացի
կարոտից տառապում ենք: Մենք կոխվ գնացող շենք, ո՞չ մե-
լիք ենք ճանաշում մեր զիխին, ո՞չ Հիսուս Քրիստոս: Կործան-
վե՞ն... Այ, կովի տարեք ձեր իշխաններին, հոգևոր սեա-
զգեստներին: Ապրում են մառան ընկած առնետների նման,
որ երկու գույնի են՝ սև ու սպիտակ:

Ամբոխը ալիք տվեց.

— Մե ու սպիտակ...

— Տանուտեր, իշխան, վաճառական, քահանա անամոթաբար մեզ լափում են:

— Լափում են...

— ... մինչև փորները քթներին է դեմ առեռում՝ ութ ամսվա հղի կիների պես:

— Քայլելիս լիսկում են ջրով լցրած տկերի նման:

Այսպես գոռգոռացին գլուղացիները և Հարձակվեցին բեկերի վրա: Աղամ բեկը զինվորներին հրամայեց շխառնվել կովին: Նա ու Սաայի բեկը սրերի բութ կողմերով սկսեցին ետ մղել շինականների մահակները, անվերջ պահանջելով զաղարեցնել խռովությունը:

Ես ձիում փորատակը մտած դողում էի: Սաայի բեկի հռեթը պատովեց, արյուն թափվեց ալքերը: Նրա թիկնապահ տասնապետի շրթումքը ճեղքվեց: Ա՛խ, տե՛ր աստված, նրանք մեզ կցարդեն...

Հանկարծ մի զիլ ծկլթոց լսվեց: Գեղջուկները իսկույն ետքաշվեցին: Աղամ բեկը թեքով սրբեց երեսը ողողած արյունը:

Անտառի խորքից կանանց մի մեծ խումբ վազում էր գեղի տուրուղմիոցը: Նրանց առջենց գալիս էր անքող, մազերը թափած Գոհար միանձնուհին: Մյուս կանայք ևս զիստարաց էին, մազերը ցրիվ, կուրծքները բաց, ծծերը հանած շապիկների տակից: Շատերն իրենց զիխներից վեր պահած բերում էին օրորոցի մանուկներ: Ահեղ ծղրտացին թե կանույթ, թե քարուրները: Գոհարի ձայնը սղոցեց անտառը:

— Դազա՞ր... Զեռք մի՛ տվեք հայրենիքի զինվորներին, է՛յ ուամիկներ, վայրի արջեր: Է՛, Սուռ Ավագ, ե՛տ քաշվիր, է՛տ:

Գեղջուկ կանայք թափով ճեղքեցին նրա կռնչոցից մի պահ կարկամած իրենց տղամարդկանց խառնակեծիկը և իրենց բարուրները տվին բեկերին:

— Փրկվեցեք սրանցով...

Գոհարը, որ միանձնուհու սեերի մեջ էր, բռուցքով հարվածեց Սուռի քիթմոռութին:

— Բորենու ցե՛ղ, հարամ լինի մորդ կաթը: Խռովարա՞ր ես: Իսկ քությունը պետք է այս լինի՝ սիրեսցես զրնկեր քո իրեն զանձե քո: Սունկի՛ եկ հայոց դրոշակի առաջ: Դե՛...

Նա փեշի տակից հանեց գաշույնը:

— Այս սուրը, որ թաթախված է մեր թշնամիների արյունով, քո սիրառ կմիտմամ: Ծունկի՝ եկ, խոռվարար:

Սուռ Ավագը մեջը փորած աթարի գեղի պես փլվեց նրա ոտքերի առաջ: Քրախնքը թոր-թոր ընկնում էր նրա ճակատից: Եինականները պապանձ եղան ու թուլաթափ: Իմ սարսափը մարեց: Կանայք խանձրիլով սկսեցին ժաժկել Ազամ բեկի վերքերը: Դո՞ւարը նորից ծզբտաց, սակայն արդին մեղմ:

— Դժոխքի կրակը մտահան մի՛ անեք, ուամիկնե՞ր: Թուրքը մտել է մեր աշխարհի կողքը: — Բանեց Սուռ Ավագի օձիքը: — Թող տերը կործանի քեզ, ապստամբ, ինչպես կործանեց անօրեն Հովիանոսին, որն անիծվեց սուրբ Բարսեղից: Վե՛ր կաց:

Սուռը շնթռկեց անտառախոնավով ժաղկած մի քարի ու գայլի աշքերը հեռանելով՝ տափակեց:

— Մե հոզը մեր զլիխն: Այս աղետի վերջը շի երևում: Նա, աղվես տեսած շան նման թափով պոկվեց տեղից, քրչերի վրայից թափ ավեց հողն ու ցեխը ու փախավ, անհետացավ անտառի մթիններում:

Գյուղացիներից մեկը բռնեց Դո՞ւարի ուրարի փեշը:

— Համաձայն ենք, միանում ենք զորքին: Մեղա՛, մեղամեր անխելքությանը: Բայց ախր մենք էլ մարդ ենք, մենք էլ ցավ ունենք: Թող մեր ցավերին իշխանները տեր կանգնեն:

Մյուս օրն այդ գյուղից հիսուն շահել շինական միացան մեզ: Մենք շարունակեցինք մեր ճանապարհը և նույն օրվա երեկոյան անցանք լինեների մի շերտը ևս: Գյուղերում, ճանապարհի եղրերին գեղջուկ կանայք, նաև փոքրիկներ, մոմեր էին զառում անշափ շատ ընկած ու կանգուն խաշքարերին, մամուած մատուններում, սուրբ Հոչակված մասրենու թփերում: Ո՞վ տեր, հեռու տար թուրքի յաթաղանը մեղանից: — Այսպես էին աղաղակում կանայք ու սրբում իրենց արցունքները:

Շատ տեղեր տեսա, որ կանայք կարկատում են իրենց ամուսինների ու որդիների շորերը, ուսապարկերը, նրանց պընդում, սիրտ տալիս ու հանձնում մեզ:

— Հայրենիքի զինվոր եղեք, հայրենիքին մատաղ...

Դարբինները ձիեր էին պայտում, նորոգում հին զենքերը:

Ողջ լեռնաշխարհը պատրաստվում էր մռահցող արհավիրքը զիմավորելու տօկուն կամքով։ Ոչ ոք չէր զգում, թե ինչպես է զնդում ամառը, թե ինչ արքայաշուք պերճանքներով է ժածկվել Հայոց հողը։

Այսպես մենք հասանք Գյուլիստանի բերդատակը։
— Թուրքը մտել է մեր Գանձակը...

Ինձ թվաց, թե սարսուացին հին ջրազացները, ձիթհանները, գողզողացին բրուտների դուրզերը։ Այս ձորում ևս շինականներ միացան զորքին։

Հասանք Ասկանապատ մեծ ավանը։ Էռևարացը հանգըստացնող էր իր երկնագույն, երեմեն ճերմակ, նույնիսկ մանուշակագույն խաղերով։ Տրամադրող էր նաև բարձր տեղերի ուսերին ծփացող Հորիզոնը։ Զվարթ արևածագից բոց կը տրած ամպերը մեղմություն հազորգեցին մեր բրուտած ձիերին։ Հրաշալի երեաց Գանձակի գաշտը, վրան մշուշ և մի նեղշերտ հորիզոն, որ ձգածեղ էր։

Իսրայել արեղան զերազահ Մելիք-Ավան իշխանին հայտնեց, թե Աղվանից Ներսես կաթողիկոսն այստեղ է՝ Եղնասարի վանքում։ Դա դուր չեկավ իշխանին։

— Ի՞նչ նպատակով է ժերունի Ներսեսը լվել եկել այս կողմերը։

Նրա ձայնի մեջ դժունության շեշտեր կային։ Վզի երակները լարվեցին։ Ջլինի՛ նա ատում է Ներսեսին։ Ո՛, զգուշացիր, մեծ իշխան, հանկարծ խելահեղ վճիռ շհանես Աղվանից տան կաթողիկոսի նկատմամբ, վտանգավոր է, զուցե թե նրա հետ թշնամանալը դժբախտություն բերի ժողովրդին, զուցե թե խարիսխի մեծ զոհողություններով նվաճված Հայոց աշխարհի միասնությունը։ Ո՛չ, ո՛չ, իշխաններ, խաշին ձեռք մի՛ տաք, խաշը կրակից ուժգին է այրում։

Վաղնջական է Աղվանից տան կաթողիկոսական թեմը։ Սահղօվել է 552 թվականին, ու անխախտ ենթակա է էջմիածնին, այսինքն Հայոց ժայրագույն պատրիարքարանին։ Նա իր իրավասիության տակ ունի մի ընդարձակ հայաշխարհ Արցախ-Ղարաբաղի հինգ մելիքությունները, ապա Գանձակը, Շամախին, Շիրվանը, Բարուն, Դարբանդը, Նուխին, Պարտավ հին քաղաքը, ուր նստել է Հայոց Աղվանից տան առաջին կաթողիկոսը։

* * *

Զիերի վրա անցանք նեղ ու կարճ արտահետը: Որտեղից-որտեղ նորից երեաց սեմբ հազար Գոհար միանձնուհին: Զիու վրա էր: Քիչ մոտենալով, առանց ողջույնի ասաց:

— Զգույշ եղիր խաչից, հորաքրոջ ամուսին իշխան: Խաչի անմեղ թվացող խորքում սպանի թույն կա:

Գերազա՞նը հետը վերցրել էր իր թիկնապահ հեծելախումբը՝ հիսուն զինվոր, որոնք, սակայն հետիւտն էին հիմա:

Մոտեցանք վանքին: Ես զարմացա՞ դառնանալով: Այս ինչ է, վանականներից ոչ ոք չի դիմավորում երկրի բարձրագույն իշխանությանը: Նկատեցի, որ ոչ պակաս զարմացած, ավելին՝ զայրացած էր ինքը՝ գերազա՞նը: Նրա մունետիկը դալարափող հնչեցրեց սպառնալի: Սպասեցինք մի բավականին երկար պահ ևս: Ոչ մի արձագանք: Գերազա՞նը զայրույթից դողում էր: Ես մտածեցի այսպիս՝ նա լիովին իրավունք ունի պատժելու սկազբաներին: Իր առջև կործանվել են թշնամիների շատ բերդեր ու ամրոցներ, իր զորությունից իրան աշխարհի թագավորը հնգ է նստել իր քաղաքում, այնինչ առա իր առջև փակ զտավ հայրենի վանքի դուռը: Նա հանգ արեց հրաման տալու՝ դուռը չարգել, սակայն ես առաջ ընկառ շտապելով ժեծեցի ժանր դուռը՝ բաց արեք:

Դուռը բացեց իսրայել արեղան և դժկամ խոնարհություն արեց իշխանին: Ես զարմացա, նա առավոտյան մեղ հետ էր, ի՞ր հասցրեց հեռանալ: Գիտեմ, նա ներսիս կաթողիկոսի եղբոր թոռն է: Գերազա՞նը քիչ մնաց նրան ապտակեր:

— Մեռել եք բոլորդ, ի՞նչ է:

Ես երեսիս խաչ հանեցի, զոհություն հզելով տիրոջը, որ իր հզոր ձեռքով զսպեց իշխանի բարկությունը: Երջակա խցերից դուրս վազեցին վանքի ուսումնարանի սաները, երևի հիսուն երիտասարդ ու միահամուն գոշեցին:

— Փա՛ ոք Հայոց գերազահ իշխանին: Հաղթողին ովսանեա՞...

Այնպիսի անկեղծություն ու հիացմունք կար այդ սկառզգեստ սպատանիների ցնծության մեջ, որ իշխանը բավականին մեղմացավ: Արեղաները պատշաճ տեսք ու զգեստ ունեին: Եկեղեցիների զանգերը զողանքեցին խմբով: Շուտով առաջ եկան շատ վանականներ: Մելիք-Ազան իշխանը նորից

եռաց՝ ինչո՞ւ ինքը՝ Աղվանից կաթողիկոսը մի ընդառաջ գալիս հայոց մարմնավոր իշխանությանը։ Նա խիստ նայեց իսրայել արեղային։

— Գուցե թե մեռե՞լ է տեր Ներսեսը։ Այո՞։ Առաջներում նա վանքից դուրս էր գալիս խաչ ու խաչվառով և կես օրվա ճանապարհ գնալով ոտքով դիմավորում պարսից շահի հետին մուսետիկին անգամ։ Այդպե՞ս չէ։

Արեղան միայն հեզ խոնարհումներ արեց։

Ոլ, գերագահը սեփական անձի փառքի մղումով չէ նման բանի ձգտում, այլ՝ երկրի իշխանությանը, պետությանը հարգել ու հեազանդվել է պահանջում բոլորից։

Գուցե իր սխալը զգալով ահա, վերջապես երևաց Ներսես կաթողիկոսը՝ մի երկու իր նման ծեր հոգենոր հայրերի ուղեկցությամբ։ Ողջունեց փրկած, կարծես ողորմություն անելով իշխաններին հրավիրեց ընդունարան։ Գերագահը մերժեց նրա հրավիրը։

— Աղոթելու շենք եկել։ Այլ, այլ...

Կաթողիկոսը շշմեց, շշկվեց, ձեռքի գավազանը, որին հենցել էր, տառանգեց։ Ես չգիտեի մեղքանա՞յ նրան, թե՝ ատեմ։

Միայն երեկոյան ժամերգությունից հետո գերագահը մտավ առաջնորդարան։ Այնտեղ աղոտ վառվում էին մի քանի կանթեղ։ Կաթողիկոսը ընկճված, շարացած, նեղացած նստել էր գահավորակին, երկար համրիչի հատիկներն էր զցում շափն իրար խառնելով։ Մելիք-Ավան-Եգան իշխանը նույնիսկ հարգալիք ողջունեց նրան։

— Գնում ենք Գանձակից դուրս մղելու օսմանլու թուրքերին. տեր-կաթողիկոս։ Պատերազմի ենք գնում։ Զարմացա, իմանալով, որ քո տանը չես՝ Գանձասարում։ Բայց եկանք օրհնությունդ ստանալու։

Ես հավատացած էի, որ կաթողիկոսը քարը փեշից թափած կլինի արդեն, սակայն ոլ, նա իր էշը քշեց, կծիկ կտրած դժոհությամբ ասաց։

— Դու խանգարեցիր մեր սուրբ արարողությունը, տեր պերագահ իշխան։ Մենք եկել ենք այս մենաստանում մեռն եփելու Աղվանից կաթողիկոսության թեմերի համար։ Եղեկ էշմիածնից փայեկ եկավ, ալահանչեց որ ես լհամարձակվեմ առհասարակ մեռոն եփել, այլ մեռոն բերեմ էջմիածնից,

միայն այնտեղից: Ես էջմիածնի ուղարկած փայեկին դուրս շպրտեցի: Այսօր էլ գու...

— Այդպէ՞ս,— հեզ ասաց զերագաճը, սակայն ես նկատեցի, թե ինչ ցասում կա այդ հեղության տակ: — Այդպէ՞ս... Այդ գու քանի՞ովուխ ունես, կաթողիկո՞ս Աղվանից, որ նման չըբռատության ես ձեռնարկել: Էջմիածնինը քո զլուխն է, դու նրա ստքն ես, միայն ստքը: Մեր Արևելից Հայոց աշխարհը ես էջմիածնի ենթական է և միայն նրա եփած մեռոնն է ընդունելի: Ապստամբը ես, Տեր Ներսես:

Կաթողիկոսի սմբած ձեռքերը դողացին: Նա սկսեց արդարացման բաներ թափել, սակայն իշխանը ձեռքի կտրուկ շարժումով լռեցրեց նրան:

— Զհամարձակվե՞ս պառակտել Հայ եկեղեցին, Տեր Ներսես: Դա երկրի մեջքը կոտրել կնշանակի: Դա՛, զա՞... Արգելում եմ: Խոնարհվիր ի հաշտություն:

Նա նորից մեծ ճիգով զապում էր իր բարկությունը: Վզի երակները լարվել էին, խիտ հոնքերը ցցվել:

— Էջմիածնինը միակն է ու միայն տերը: Նա Հայ ժողովորդի ու Հայոց պետության օգտին է զործում: Էջմիածնինը նույնիսկ ահեղ Նազիր շահին է փափկացրել, Մեր Հայաստանը միայն մի սրբություն է ճանաշում՝ էջմիածնի լուսապսակ փառքը:

Երկրի հոգևոր ու մարմնական իշխանները բախվեցին այն էլ անզիջում, երբեմն կոշտ: Ես ափսոսացի, որ այստեղ եմ, ես՝ Արքահամ Երևանցի դժբախտու: Ո՞ւմ պաշտպան կանգնեմ, շգիտեի:

Գերազանց իշխանն արգելեց մեռոն եփել: Մարդ ուղարկեց էջմիածնին մեռոն բերելու:

Քնեցինք արեղաների խցերում:

Երբ ժամն էր առավոտվա ապաշխարհանքի, ինձ արթնացրին: Ես շտապով կատարեցի աղոթքս, հիշելով, որ տոնն է ավետյաց՝ Սրբոյն Կուսին: Գնացի զերագաճի հրավերին: Նախաճաշ է: Զարմացա, տեսնելով, որ նրա հետ սեղան էր նստած նաև Ներսես կաթողիկոսը: Ես ողջունեցի նրանց, դռհանալով, ահա նրանք զրուցում են հաշտ ու խաղաղ: Փառք տիրոջը: Մելիք Ավան-Եղան իշխանը հարցրեց, թե Աղվանից

թեմի վանքերում քանի՞՛ զանական կանց Կաթողիկոսը քիշինչ մտածեց ու ասաց ինքնավստահ:

— Բոլորն ի միասին շորս հարյուր միաբան են, աեր իշխան: Դանձասարում՝ երեսուն, եռութավանքում՝ քսան, Ամարասում՝ քառասունշորս, Գիս սրբարանում՝ երեսուն, Եամայսում՝ քսանհինգ, Պարտավում... Միով բանիվ շորս հարյուր:

Մելիք-Ավան իշխաներ ձեռքի ձկան պատառը կուլ տվեց, վրան մի զավ գինի խմեց ու թավ բեղերը բռուցքներով սըրբելով ասաց.

— Կեղծում ես, Տեր-Ներսես: Թարցնում ես, խարում ես, իրականը չես ասում: Մի ցանիր որոմ մաքուր ցորենի վրա: Կաթողիկոսը ցնցվեց, սկսեց շարդել մատները:

— Ե՞ս, Ե՞ս...

— Դուք, — անզիջում շարունակեց գերազահը: — Մեր իշխանապետության սահմաններում դու ձրի լափող, անբան, անառակ ութ հազար յոթ հարյուր վաթուն վանական ունես: Դուք...

— Մեզա՞ եկ, իշխա՞ն, — ծղրտաց կաթողիկոսը: — Մեզա եկ առաջի աստծոյ և մարդկան:

— Քո միաբանները գող են, — թերվելով գեղի նա շեշտեց գերազահ իշխանը: — Քո քահանաները անկիրթ անառնեմ են...

Կաթողիկոսը մորուրով ժանրացած ծնոտը շեշտակի բարձրացրեց, կարծես հարված ստացավ տակից:

— Մեզա՞ եկ, մեզա՞ եկ...

Գերազահը ոտքի կանգնեց, ձկնուտ ձեռքերը քսեց վերակուի փեշերին:

— Լսիր Սողոմոնի պատգամը: Զի թե թշնամին աղաւիցե զքեզ, մի հավատար նմա, զի յոթ շարիք կան ի սիրտս նորատ Արանից բխած Հրամանս է՝ Աղվանից հայոց կաթողիկոսության վանական միաբաններից հազար հինգ հարյուր դինվոր տալ իմ զորքին: Զենք կտամ ինքս: Թուրքի բանակները մեր Դանձակ քաղաքն են ավերում, իսկ քո մարդիկ, Տեր Ներսես, իրենց փորեներն են ուղցնում, աղքահորերը պարարտացնում: Աստված մի՛ արասցե, թե զանց առնես հրամանս, կրակի վրա կխորովիմ շնազանդվողներին: Ես զաժան եմ, այս, բայց ոչ այնքան, որ կամենամ ձեռքերս թաթախել քո արյան մեջ

Կամ կատարիր հրամանս, կամ կարդալույժ կլինես իմ ձեռքից:

Այդպես, այդպես, մառվի ես ոգևորեցի իշխանին: Այդպե՞ս:
Մի օր էլ ինքո քեզ թագավոր հողակիր Հայոց աշխարհի վրա,
ինքս կպատրաստեմ գահ ու թագ, նաև...

Մելիք-Ավան-իշխանը կանգնեց գուրս գալու:

— Տաս օր ժամանակ, տեր Ներսես հովվապիտ: Հազար
չինդ հարյուր վանական կրերես, կտաս ինձ իբրև զինվոր:

Ես չնկատեցի, թե ինչպես նա դուրս եկավ լարված սրա-
չից: Եշմել էի այդ սրանչելի երևույթը տեսնելով: Կաթողի-
կոսը բռնեց զլուխն ու կերկնը գուշեց.

— Տե՛ր, դու այրիր քեզ կործանող իշխանի սիրութ: Տե՛ր...
Խորայել արեղան ծունկի եկավ նրա առաջ:

— Խո՛ւ եղիր մեզ կողոպտել կամեցողի պահանջներին,
կաթողիկոս մեր: Մի՛ անսա նրա կործանիչ հրամանին: Մի՛...

Բարկությունից Խորայելը նույնիսկ հեկեկաց: Դա ավելի
շուտ գարի տեսած ձիու քոքուց էր: Սկսեց համբուրել սրբա-
պատկերները, նաև իր պապի եղբար ձեռքերը:

— Հրամայիր հնչեցնեն երկնառաք բռղոքի զանգեր, մեր
հայր, մեր հովիվ: Եկեղեցիներում թող տիվ ու գիշեր ցասման
տղաղակ դղրգաւ: Հավաքիր քո հոգու արիությունը և դեմ
կանգնիր եկեղեցու թշնամուն: Ե՛լ, շղթաներով կապոտիր քեզ,
բռկոտն շրջիր զյուղ ու քաղաք, աստծու բարկությամբ լցրու
Հավատացյալների սրտերը, թող լսեն ամբարիշտին: Մարդ
առաքիր Հոռմի պապի մոտ, թող օգնության հասնի քեզ, որ
ետ մղես շար իշխանի զրահը, որ համարձակվում է կործա-
նել աստծու տան հիմունքները...

Չորս հինգ դառամած եպիսկոպոսներ վայնասուն բարձ-
րացրին իրենց խոպոտ, ժանգոտ, թոքարորդ ձայներով: Նրանք
սիսեցին անիծել զերազահ իշխանին, բռուցքներ թափահարելի
Մի քանիսը պահանջեցին քարահար անելով սպանել Մելիք-
Ավան իշխանին, մեկը նույնիսկ ժառավ խելազար.

— Գնանք թուրքի սուլթանի ոտքը, եղբայրնե՛ր: Գանձակի
փաշայի մոտ զնանք:

Գուրը շրինկոցով բացվեց: Ներս թափվեցին երևի մի երկու
հարյուր վանական: Բոլորը խենթացան, վերցրին խաշվառ,
որինձն անոթ, լոթուններ, ջահեր ու հոսեցին դուրս:

— Մահ անաստված իշխանին, մահ...

Այս ազռավագարութ հազիվ էր քայլ արել գեղի վանքի պարիսպը, երբ սոսկումով, ահարեկ կանգ առավ: Նրանց գեմելավ մերկացրած սուրը ձեռքին միանձնուհի Գոհարը: Ես ինձ շտապ դցեցի գերազահ իշխանի մոտ, որ պարսպի տակ, բավականին հեռու կանգնել էր, ձեռքերը կրծքին ծալած:

— Չզիշես, տեր իշխան,— ասացի հեալով: — Եթե շենթարկեն հրամանիդ, սուրդ մերկացրու: Դավաճանների որչենք ընկել:

Ինքս ինձնից գոհ մնացի: Վերջապես մի բանի պետք եկա: Գոհար միանձնուհին հզոր գոշեց.

— Ապստամբ եք, ավերակի բվեճներ: Գու ևս, Իսրայել արեղա, որ իմ վատահությունն ես վայելել: Զլանում եք, հա՞՛, կատարել հայրենիքի կամքը: Հիմա պատասխան կտաք ձեր գլուխներով: Հիմա...

Կատարվեց մի այնպիսի բան, որ հետագայում հիշելուց անգամ մազերս փշաքաղվում էին: Ինչ որ տեղից հայտնվեց Սուր Ավագը, փայտե կոթունով խալը ճոճեց վանականների վրա:

— Դադարեցրե՛ք ձեր վայնասունը, անառակ հոգիներ: Դավաճանի փշե պսակ մի՛ հազըռեք ինքներդ ձեր զլուխներին: Հնազանդվեցնեք ամենակարող իշխանի հրամանին:

Նա շրջվեց ետ, մոտեցավ Մելիք-Ավան-Եղան իշխանին, խալը գցեց նրա ոտքերի տակ:

— Ահա ես հնազանդվում եմ հրամանիդ, տե՛ր գերազահ իշխան: Կամովին զինվոր եմ դառնում հայոց ուխտին: Բնուուիր:

Ես ցեցված էի, ինչպե՞ս այդ մարդը հոգեփոխվեց: Ես նրա մեջ տեսա վիթխարի ուժ, արթմնության գրգիռ:

— Դե՞՛, — գոշեց իշխանը, — պատասխանեցնեք այս հովվին, ժողովրդին:

Կաթողիկոսը ձեռքերը բարձրացրեց.

— Հնազա՞նդ եմ...

Իշխանը գետնից բարձրացրեց խալը, Գոհարից վերցրեց սուրը:

— Ներող եղիր, Քրիստոսի քույր: Այս մարդիկ մոյորված են, ահա ուղիղ ճամփի կանգնեցին: Ամեն ինչ հարթվեց: —

Դարձավ կաթողիկոսին: — Պատրաստի կերակուրի վրա ևս եկել, Տեր Ներսես: Իմացիր, մի երկրում միայն մեկ տեր պետք է լինի ու մի աստված: Մեկ տեր: Արյուն անել շեմ ուզում: Հոգնել եմ արյուն թափելուց, թեկուզ թշնամու: Պահանջա է՝ անծպառուն կատարել հայոց մեծ ժողովրդի հրամանը:

Տաս օր հետո կաթողիկոսը Մելիք-Ավան-Եղան իշխանին ներկայացրեց հազար հինգ հարյուր վանական, ինչպես հրամայված էր: Գերագահը նրանց հանձնեց Սուր Ավագին, նրան հարյուրապետի աստիճան շնորհելով: Հաշտվեց Ներսես կաթողիկոսի հետ:

Իրար հետեւից եկան Սիսականի, Գեղարքունիքի զորախմբերը՝ Զագեձորի Մելիք-Օհան իշխանի զիխավորությամբ: Գերագահը որոշեց զորք չկանչել Արարատյան նահանգից ու Նախիջևանից: Նրանք հսկում են պետության արևելքը:

* * *

Այս ես եմ՝ վաճառական-խոջա Արքահամ, Նոյի հիմնած Երևան քաղաքի սերմ: Իմ զործակից մարդիկ, նույնիսկ էջմիածնի վեհափառ կաթողիկոսը, որ զուսպ մարդ է, ինձ ուղղակի Արքահամ Երևանցի են կոչում, և դա ինձ, իհարկե, շոյում է: Այդպես են ինձ անվանում նաև Հայոց Արևելից Կողմանք Միջնարցախում, որ արդեն երեք հարյուր տարի է, մեր պետական մարմնի միջուկն է:

Գերագահ իշխանն ինձ հրավիրեց իր զորակայանը և խընդրեց միշտ լինեմ իր հետ: Ես դա զրեթե անտարբեր ընդունեցի: Ինչ ուզում է թող կատարվի հետո: Եթե մեկը հիմա ինձ հարցնի իմ մասին, ապա կասեմ՝ շղիտեմ թե ինչ եմ ես և ինչ պիտի լինեմ: Ես ինձ թողել եմ քախտի քմահաճույքին:

Լոռներից իջել ու մոտենում ենք Հայոց հյուսիսի մեծ քաղաք Գանձակին: Այդ դաշտատեղ քաղաքում միայն հայեր են: Եղվարդի դաշնագրով Նազիր շահը Գանձակից ես տարել է պարսիկ իշխանազորներին: Գնում ենք պատերազմելու իմ կողքից, ծիռւ վրա ընթանում է գերագահ իշխանի որդի Եսայի բեկը: Սուլում է շահելավարի, երբեմն ձին շափ գցում դեպի Սուր Ավագի զորախումբը, ինչ-որ առնում-տալիս նրա հետ: Երբեմն հրացանը դեմ է անում երկնքում իր համար

Հախսր անող շահեն բազեի, բայց չի կրակում: Թուխ տղա է, գրեթե պատանի, խոսքն ու զրոյցը այնքան գրավիլ, որ թեկուղ մի ամբողջ օր լսեմ, չեմ ձանձրանա:

Մեր առաջապահ զորախմբի հետ է նաև Գեղարքունիքի իշխան Մելիք-Մելիքանի որդի Մանուշար բեկը՝ երեք հարյուրակ հեծյալներով: Մանուշար բեկը մի շքեղ վրան էր բերել Մելիք-Ավան-Եղան իշխանին նվեր: Գերազա՞ր առաջ էլ այդ վրանի մեջ էր զիշերում:

Մի երեկո, աղոթքից հետո, գերազա՞ր ինձ հանձնարարեց թուղթ ու մելան գնել առաջա: Ես փետրե զրիւը թաթախեցի մելանի մեջ, վիզա թեքեցի ձախ ուսիս, որ ճրագի լուսից գլխիս ստվեր լընկնի թղթին ու զրեցի նրա թելադրածը:

«Ի փոքր ծառայեգ շատ-շատ ողջուն քեզ, աստվածքնա-տիր կայսրունի, մեծ ու փառավոր Աննա Իվանովնա: Ահա եկել եմ քո ու մեր զորեղ թշնամի թուրք սուլթանի զորքերին վտարելու մեր Գանձակ քաղաքից: Կարդացի քո ՇՈՒՐԱՊԸ: Մեր բոլոր իշխանները, մելիքները, հոգնոր առաջնորդները, մեր զորքերն ու ամբողջ ժողովուրդը մեծ սիրով ու ցնծալի տոներով ընկալեցին քո և քո նախնի Պետրոս Մեծ կայսեր ողջունն ու խրախուսող խոսքը, բարի թագունի Ռուսաց Ես հայտնում եմ, որ մեր Սղնախն ու Մեծ Արցախը, Սյունիքը, Արարատյան աշխարհն ու Նախիջևանի նահանգը աստծու ողորմությամբ ի մի են իրեն Հայոց կուռ և միաձույլ իշխանակետություն, ի միասին երկու հարյուր հազար ծուխ ենք Մեր բոլոր մեծերը միաբան են, Քրիստոնին հնագանդ զավակների նման բոլորը լսում են մեր խոսքը: Պարսից շահը ձեռք է պարզել մեզ: Ընդունել ենք և գաշնակից ենք նրան: Իմացած եղիր, թագունի մեծ, որ մեր Հայոց երկիրը ու որի հարկ չի տալիս այս է հինգ հարյուր տարի և այսօր: Մեր երկիրը պինդ է, շատ բերգեր ունենք, շատ զորք կա մեր ձեռքի տակ: Ես քեզ առում եմ, կայսրընտիր Աննա, դուստր իվանի, որ մենք՝ հայերս կարող ենք վաթսուն հազար մարդ զնել զենքի տակ իրեն զորք: Մեր երկրում շատ բամբակ, մետաքս, կաշի ու բուրդ կա: Մենք շատ արճին ու պղինձ ենք հանում մեր հողի միջից: Եսատ պղնձի ելքեր ու բոլիք ունենք Սյունիքի Կապանում, Գարդմանի Քարմանում, Քարհատում, Լոռ-

վա Պղնձատանը, մեր Նախիջևանի Երնջակ գավառում ու էլի, էլի տեղեր: Մենք մեր ձուլական բովերում սկսել ենք հրացան ու թնդանոթ սարքել: Այնպիսի հանգեր ունենք, որ երբ ապար ձուլում ենք, կեսը պղինձ է դառնում: Մեր Արևելյան Հայոց երկրի կեսը ծածկված է անտառներով: Մենք ոչ ոքից ա՞չ շունենք: Այսօրվա մեր հոգոր մեր Գանձակ քաղաքը թուրքից ազատելն է: Մենք հույս ունենք նաև քեզ վրա, մեծ թագուհի: Լսեցինք, որ գալիս ես դեպի Շամախի երկիրն ու Բարու ծովաբաղաքը: Բարի լինի: Ես մարդ ունեմ Հաշտարիան քաղաքում, դա բու ժառա գնդապետ Թաղա Ղուղանենցն է, նրանից իմացիր մեր մասին: Մենք քեզ վրա շատ հույս ունենք, հզոր իմփուատրիցա: Եթե դու բարի լինես ու հենց հիմա մեզ երեք-չորս հազար զորք տաս, որ շատ չէ, մենք Յսմանլվին կրշենք մեր Կարսից ու Կարինից անդամ: Ոչ թե տկար ենք ու դրա համար ենք մենք քեզանից զորք ուղում, թագուհի մեծ, այլ ուղում ենք նրա համար, որ մեր ժողովուրդը հավատա քեզ՝ Հյուսիսի տիրակալիդ և մեծով ու փոքրով պինդ կանգնի օսմանլվի զեմ: Մեր տեր թագուհի, ես երեսս ի վար ընկնում եմ քո առաջը ու Հիսուս-Քրիստոսի սիրույն աղաւում՝ շուտ եկ այս մեր երկիրը կամ զորք ուղարկիր:

Սռ զրեցի Մելիք Ավան իշխանի այս վերջին ասածը ես ու նայեցի նրան: Նրա հզոր երեսին որևէ խորհուրդ չկարծես այդ ամենը նա հենց այնպես, առանց որոշակիության թելադրեց ինձ: Ինքն իր ձեռքով մոխրի թիթա թափեց թղթի վրա, որ մելանը ցամաքի, ասաց նույնպես առանց հուղմունքի:

— Ահա հենց այսպես մեր բախտի վրա աստված մոխրի թափեց, երբ Ծուսիո թագավոր Պետրոս Մեծը իր զորքերով հեռացավ Դերբենդից, քսան տարի առաջ:

Նա իր այդ գիրը սուրճանդակով ուղարկեց Ծուսաստան: Սա անելուց հետո բավականին երկար ժամանակ մեն-մենակ մնաց: Գիտեի, որ ամփոփվել է ինքն իր հետ ու զինի է խմում՝ միայն սերկելիի կորիզ նախուտեստ անելով:

* * *

Սուռ Ավագը ամբողջավին տարված է վանականներից կազմված իր զորախմբով: Նրանք հիմա զինվորի հագուստով են, դենք ունեն: Նույնիսկ երթի ժամանակ են վարժվում զինքին:

Մի հանգրվանում Սուռ Ավագը եկավ մոտաւ:
— Վանքից բերած էս իմ զինվորները շատ լամանն են,
հա՞՝, խոջապարոն:

— Ի՞նչ է, դժգո՞հ են, — հարցրի ես:
— Չէ, — ուժգին փոշտաց Սուռ Ավագը: — Ուրախ են, որ
հեռացել են վանքից: Ասում են հիմա որ մենք մարդ դար-
ձանք: Ասում են կապակվենք: Ուզում են կնիկ ունենալ... Որ
կնիկ արմատ են տեսնում, քթեները հոտի են անում, ործ էշի
պիս զում: Ասում են զնանք թուրքին քշենք Գանձակից, որ
քածարմատի մի կուշտ հոտ առնենք:

Ես ևս ծիծաղեցի: Դե, ի՞նչ կա որ, թող ալդպես լինի:
Գնում ենք մեծավ փառոք և թափորական պատրաստու-
թյամբ: Անցանք Գանձակ գետի վերևներով: Դեռ Քարհատ
բերդավանին շհասած, գերագահը սպարապետ Մելիք Աստ-
վածապետին հրամայեց մտնել Զարեքա անապատը: Թե ին-
չո՞ւ շիմացա: Սպարապետը խնդրեց, որ ես էլ հետը դնամ:
Գնացի: Բայց ինչո՞ւ ենք զնում, շհարցրի: Մենք մեր ձիերի
զլուկները շրջեցինք դեպի վերին լեռները: Մի քիչ հետո տեղ
կհամանենք ու կիմանամ նպատակը:

Երևաց Զարեք ամբողը, մոտը Զարեքա վանքը՝ Մոավ
լեռան մի անեղ ձորանցուզի մեջ: Սպարապետը ուզդվեց ոչ
թե բերդի կողմը, այլ՝ վանքի: Կեսօրվա արևը խանձել էր նրա
զմբեթի խալը: Վերևում արծվի պես թառել էր Տրդատ Մեծի
օրերին շինած բերդը:

Մելիք-Աստվածապովը, նրա երկու թիկնապահները և ես,
նրա իսկ հրամանով, պահեցինք մեր ձիերը: Մոտիկ թղենու
թփերը շարժվեցին: Ես նույնիսկ ահ զգացի՝ ա՞րդ է:

Խիստ բրդոտ մեկը դուրս եկավ կլորիկ պտուղներով ճա-
ռագած թղենու թփի միջից:

— Բարով տեսա, տեր սպարապետ: Ես հենց ուզում էի
գեպի ձեզ գալ: Դերբենդից տաս օր առաջ ես եկա:

Նրա ձայնն արշային էր: Այծեմորթի բաճկոնակով էր:

մաքենի գդակը մինչև ականջները խրած։ Միշին հասակի էր, ու մորուքով, թփաձև հոնքներով։ Ինձ ու սպարապետի երկու թիկնապահներին բանի տեղ լդրեց։

— Ռուսները հեռացան Դերբենդից։

— Ի՞նչ, — ակամա թուավ Մելիք-Աստվածապովի բերանից։ Զո՞րքը։

— Այո, զորքը։ Կայսրուհու հրամանն էր։ Երևում է ահ ունի Նադիրից։

Այո, նրա ձայնը ոլ այնքան մարդու էր, որքան արջի Այդ բրդոտից նաև զիտի հոտ էր դալիս։

Թփից գուրս եկավ մի դեռատի, հազիվ տասնհինգ-տասներվեց տարեկան աղջիկ։ Բրդոտը զարձավ ինձ։

— Օս քեզ տեսել եմ Աստրախանում, խոշա Արրաջամ երևանցի։ Օս Թուրքի Արզումանն եմ։ Սա էլ իմ աղջիկն է՝ Կամար Սոլթան, կրակի կոտր։

Աղջիկը երկարաճիտք կոչշիկներ ուներ, կանաչ կապա։ Ուղղակի քարայթ էր՝ խիտ մազերով։ Նրա աշքերում այնպիսի կրակ էր վառվում, որ եթե դիպչի այս չոր խոտերին, կրոցավառի։ Այտին սև խալ ուներ և երր ժապտում էր, խալը շարժվում էր, թուխ մեղու է, հիմա կխայթի։ Նա անփույթ նայեց ինձ ու ավելի անփույթ երեսին խաչ հանեց, այսինքն՝ շարը խափան։ Օս վիրավորվեցի, արեղա՞ եմ, ի՞նչ է, որ մեջս միայն շար բան է տեսնում։ Իսկ սպարապետի առջև հեզ խոնարհվեց։

— Քո զարով մեր ձորք փառավորվեց, տեր մելիք։

Մելիք Աստվածապովն իշավ ձիուց, մենք՝ ևս Եզնից այդ պահին ես նկատեցի, որ բրդոտը Աստվածապով իշխանի կորքի հարյուրապետ Թուրքի Արզումանն է։ Ա՞ս, այզպի՞ս, քեզ նման անտաշ ես ստեղծել աղջկագ։ Մելիքը ասաց.

— Վերջը բվեմի պես թառա՞ծ պիտի մնաս այս ձորում, Թուրքի Արզուման։ Գոնե աղջկադ խնայիք, կվայրենանա։

— Հարկ լինի, էլի հետդ կիմնեմ, տեր մելիք։ Դու քո փոքրացավն ասա։ Հնադանդ եմ։

— Աղջիկդ, տեսնում եմ, հասել-բուսել է։ Երկի շուտով մարդու տանը։ Հույս՝ Պետերբուրգի ճանապարհը լես մոռացել...

Նոտեցին քարերի։ Ես՝ ևս Կամար Սոլթանը ճյուղասա-

լակի վրա, որ հյուսված էր ուռենու բարունակներից, հինգ-
վեց խաշած կարմրախայտ դրեց մեր առաջ:

— Սրանք ոչ թե հայրս, այլ ինքս իմ ձեռքով եմ բռնել
զետից, անուշ արեք:

Մի շարուկ ձռւկ էլ, որ եփած չէր, դրեց սպարապետի
առաջ:

— Էս էլ մեծ տիկնոջ համար, տեր մելիք: Կտանե՞ս:

Սպարապետը շոյեց նրա խիտ մազերը:

— Իսկ դու ոտքե՞ր շունես, Կամար Սոլթան: Ինքդ տար:
Մինույն է, դու պիտի գաս մեր տուն, հորդ տեղ եմ ուղար-
կում:

Ես քիչ մնաց նախատեմ Կամար Սոլթանին: Ազուավի ճուտ,
այդ ի՞նչ լեզվով ես խոսում քո տիրոջ հետ: Սպարապետը
թուրի Արզումանին մեկնեց անջրանցիկ պայտևակում պահած
այն թուղթը, որ մի քանի օր առաջ զերազահի թելադրան-
քով գրել էի ես մուսաց կայսրունուն: «Հասցե թուղթս Պետեր-
րուրդ, ի ձեռն ինքնակալ կայսրուհի Աննա Իվանովնայի: Ան-
րացիկ հասցենողին աստված ողորմի»:

— Գերազահի հրամանն է, որ սա դու հանձնես Սանկ
Պետերբուրգ:

Թուրի Արզումանը ժայռի ճեղքից հանեց իր ձին:

— Գնացի:

Կամար Սոլթանը սատանի պես թռավ հոր ձիու թարթին,
կպավ նրան: Հայրն ասաց, թե աղջկան կթողնի Գանձակում,
ինքը կզնա: Մենք երկար նայեցինք հեռացող ձիավորի ետե-
զից: Ետ կզա՞: Եթե՝ այս, ապա ի՞նչ կը երի մեղ, էլի՞ միայն
հուսադրող թուղթ:

Մութը վրա հասավ:

* * *

Սերասկեր Արիֆ Ահմեդ փաշան ծայրը փայլող դաշույնը
խրեց մերկ աղջկա ծծի տակ: Արյունը սլաքով խփեց: Փա-
շան բեղերով ցանկված բերանի խռովը դեմ արեց արյան
շատրվանին, խմեց, ինչպես ցայտազրյուրից: Երկար խմեց:
Մոնշաց.

— Նո՞րը բերեք:

Երկու ասկյար աղջկա թպրտացող մարմինը քարշ տվին
բարի պաշտգամբ, զցեցին ցածում ծանծաղած զետը: Հուրը
չկարմրեց: Դիակի մեջ այլևս արյուն չէր մնացել:

Այս անգամ էլ, ինչպես անցած յոթ օրերին Դանձակ քա-
ղաքի վրա փշաքաղվեց մայրամուտի կարմրած արեր: Հայերի
բոլոր տներում թուրք ասկյարներ էին շնթռկած: Մազում-
ծնունդով հայի Դանձակը թեթև ինչ հարթ տեղ էր, մեջը մի
ոչ ջրաշատ գետ, որ ալարելով գնում, վախով մտնում էր
Կուր զետի ծոցը: Այս մի օրն էլ բացվեց անգույն ու թաց:
Կուտակ պարիսպների մեջ նեղվող քաղաքը դղբդում էր: Տնե-
րը ճշում էին, շները ոռնում: Կարմիր ապարոշներ զլուխնե-
րին երկու մուեզին տնկվել էին մի բարձր տան կտուրի նա-
մազ-աղոթք էին անում:

— Աղը! ալլա՛հ... Սանջակ ի շերիֆ!

Լույսը բացվելու հետ ասկյարները մոլեգին ներշնչանքով
շարունակեցին ավերել հայերի տները, կողոպտել, սպանել,
լափել: Օդը ճեղքվում էր այստեղ-այնտեղ բռնաբարվող աղ-
ջիկների, հղի հարսների, մորթվող մանուկների աղաղակնե-
րից: Նրանց բարձրակական ողբից մորմոքվում և ճմլվում էին
լսող-տեսնողների սրտերն ու աղիքները: Արյունը ոթում էր
պատերին, դռներին, սպանող թուրքերի մոռմթներին, լցվում
օրորցները: Ասկյարները մանր երեխաններ էին հավաքում,
թերում սերասկեր Արիֆ Ահմեդ փաշային նվեր: Ղաղին բըռ-
նում էր մի փոքրիկի, նրա գլուխը իջեցնում խմորի խոշոր
տաշտի վրա, գանակով կտրում նուրբ կոկորդը: Արյունը լըց-
վում էր տաշտը: Արիֆ Ահմեդ փաշան տկլոր նստել էր տաշ-
տում, տաք արյան մեջ, արյունը փաթաթվում էր նրա ուռած
տիկ մարմնին:

— Ուխա՛յ, — հրճվում էր փաշան: — Կարծես թե ոսկոր-
ներիս ցավը անցնում է:

Ղաղին մի յոթ-ութ տարեկան աղջնակի վրայից պոկեց
շորը, որ մորթի, բայց նրան խոթեց ոտքերի արանքը ու սկսեց
բռնաբարել... Աղջնակի բերանից արյուն ժայթքեց, ընկալ
անշնչացած:

1 Մարդարեի կանաչ դրոշակավ պատերազմի կող:

* * *

Միաձնուհու սեհը հազար դշխանուհին Գանձակ
քաղաքին մոտիկ Հովհաննես Մկրտչի վանքի մեծ տաճա-
րում, սառը սալաքարերին կանգնած երեք-շորս տղամարդու
հետ գաշույնով կտրտում էր սպիտակ եղբերով ոև ու թանձր
թաղիքն կապոցների պարանները: Լավ ճկացող սրեր, խնամ-
քով փաթաթած հրացաններ, քսալուղից փալլիլող ատրճա-
նակներ էր հանում իր ձեռքով, բաժանում քաղաքից մի կերպ
փախածներին:

— Դիմադիր եղեք ձեզ սպանողներին, մարդիկ: Սուրբ
տիրամայրն օգնական ձեզ: Արիացեք, մի թողեք, որ մեր
ժողովրդի վրա իջնի մեզ մառախուղ և խազար անթափանցե-
լի: Ելե՛ք...

Մթության քողով ծածկված դուրս եկանք Մկրտիչ Հովհ-
աննեսի վանքից ու իսկույն մոտեցանք քաղաքին:

* * *

Կոիկ է: Մենք գրո՞ւմ ենք արդեն երեք օր ու գիշեր:
Ես՝ Արքահամ Երևանցիս, Գանձակ քաղաքի այս աղետին
վկա դժբախտս, գիշերային կովի խառնակ մի պահի ինձ գտա
թուրի Արգումանի խմբի մեջ: Նրա հետ էր նաև իր աղջիկ
կամար Սոլթանը:

Կովում էին քաղաքի Երևանյան կոշվող դարպաների առաջ:
Երեւում էր, որ գարպասը պահակող թուրքերը քիչ են, սա-
կավագործ Փաշալի զորքը զբաղված էր քաղաքը կողոպտե-
լով: Ամեն մեկն աշխատում էր որքան կարելի է շատ բան
զավթել, շատ գերիներ ունենալ:

Անսպասելի երեաց Գոհար իշխանուհին՝ երկու, թե երեք
հարյուր շինական մարդկանցով, որ լեռնային գյուղերից էին
եկել նրա կոշակ: Հետիոտն էր, իր զինական զգեստով: Տես-
նելով թուրի Արգումանին՝ դաշտյալ գեղջուկ աշխարհազորով,
ասաց՝ միացիր ինձ:

— Ինչ գնով էլ լինի, պետք է մանենք քաղաք:

Թե ինչ միշոց ու հեարք գործադրեցին նա ու թուրի Ար-
գումանը, շկարողացա իմանալ: Եատ շանցած դարպասը կոր-
ծանվեց ու մենք ներխուժեցինք քաղաք:

Քաղաքի մեջ ենք: Թուրի Արզումանը շինական աշխարհագործ ու իրեն միացած մի խումբ քաղաքացիներով ճեղքեց կողոպուտով ժանրացած թուրքերի մի խառնամբոյս: Խմբերի բաժանվելով, մենք ցրվեցինք այս ու այն կողմ՝ Հայեր փրկելու: Թուրուբոհի մեջ, Գոհար միանձնուհու հետ, ևս ու էլի վեց յօթ գանձակեցի մտանք բավականին ընդարձակ մի տուն: Մի սենակում չորս ասկյար, մինչև գոտիները մերկ, ճարպոտ ու մազմզոտ մարմիններով թրթում էին քրքջալով, նրանք հագած էին թեթև, լայն փոխաններ: Եռկու մերկ աղջկա հերթով զցում էին իրար խախտ: Միանձնուհին հանեց զույգ ատրճանակները:

— Մարդակերնե՞ր...

Թուրքերից երկուար ընկան: Մյուս երկուար սարսափով ժունկի եկան, ձեռքները տնկեցին: Սակայն նրանք ևս ընկան հենց ճակատներին մեխած զնդակներից: Մեկին խփողը կամար Սոլթանն էր: Ասկյարների շորերը մենք հազցրինք աղջիկներին, նրանց զենք տվինք ու գուրս եկանք: Կամար Սոլթանը ցնծում էր: Այս առաջին անդամ թշնամի սպանեց: Ահա նա զինվոր է, զենք ունի:

Մեր զինված խմբերը ժամ առ ժամ ավելանում էին: Քաղաքի Արարատյան անունով թաղամասը արդեն մեր ձեռքին էր: Թուրի Արզումանը Գոհար միանձնուհուն ասաց պետք է ներսից կործանենք քաղաքի մյուս երկու դարպաները: Ուր որ է, մեր հիմնական զորքը կերևա պարիսպների տակ:

— Մտածիր ժողովրդին փրկել, — մոայլ ասաց Գոհարը: — Թուրքը ժողովրդին շարդում է:

Անցանք մի նեղ փողոց: Մի թուրք ասկյար մի աղջկա բոլորովին մերկացրել, նրան դեմ էր արել պատին ու քրքրում էր գաղանազարի: Մինչև մենք կհասնեինք, աղջիկը պատի մեջ խրած երկաթե բիհրը հանեց ու դա խրեց թուրքի բաց փորք: Այդ բիհրից, զիտեմ, շուն են կապում: Աղջիկն ինչպես կարողացավ զա հանել պատից: Երեխ աստծու մատը խառն էր: Ես սկսեցի ավելի խոր հավատալ աստվածային բարությանը: Իշխանուհի Գոհարը ոտքը զրեց զետնին թավալված թուրքի բաց փորին, շոյեց աղջկան:

— Կեցցե՞ս, աղջիկս: Միայն այդպե՞ս:

Նա պլոկեց թուրքի զգեստը, ու հազբերեց աղջկան, մի կողմ ընկած թուրքի հրացանը տվեց նրան:

— Միայն այդպես՝ կովելով, սպանելով: Հետևիր մեզ:

Մենք քայլ առ քայլ խորանում էինք թաղամասերի մեջ: Խառնաշփոթ էր և ես կորցրի Դոհար միանձնունուն: Չի-մացա, թե ինչպես եղավ: Կամար Սոլթանը ևս կորցրել էր հորը: Սակայն շշփոթվեց բնավ ու աստծու անունը տալով հետո բարձրացավ մի տափակ կտուր: Փորսող մոտեցանք երգիկի ցածրիկ թմբին, որպեսզի հրգե՛ների լույսի տակ մեզ նկատող Աինի: Ծայլից եփվող փլավի գոլորշի էր ենում: Խայեցինք ցած: Խայեցինք ու ցնցվեցինք: Իրոք, եռառու կասկարանքի վրա փլավ էր եփվում: Մի թուրք զադի պազել էր նրա մոտ ու փլավքամիշով խառնում էր յուղի մեջ ուղրվող բրինձը: Մոտը աշտանակ էր գրած ու գրա լույսը ողողել էր սենյակը: Ղաղիի ոտքերի տակ ընկած էր խոշտանգված մի աղջիկ՝ սոկե ծամերով ու մերկ: Կամար Սոլթանը ձեռքերը խռովակ արեց ու ձայնը կոշտացնելով՝ գոռաց:

— Դադարիր մարդու արյուն խմելուց, զադի: Ես խո-սում եմ Մուհամեդ մարզարեի մոր բերանով: Դադարի՞ր... Ղաղին փոքր ինչ շփոթվեց, սակայն մորուքը տեկած քըր-քըշաց.

— Դու ինձ բան մի՛ սովորեցրու, ալլահի հրեշտակ, է՛ր-մենի ցեղը գուրս է ալլահի հոտից և պիտի ոչնչանա:

— Իմ անձերն ահեղ է ու քեզ կկործանի, զադի: Դու զա-գանի ցեղ ես:

— Ես,— ներքենից նորից բրբջաց զադին:

— Դու, որ մարդու արյուն ես խմում: Դու կխորտակվես զիցազար կռամոլության մեջ:

Ղաղին հանկարծ ծառս եղավ տեղը ու սենյակում զադ-վրդելով գոշեց:

— Զի՞ննը, զի՞ննը...

Խելահեղ պալղեց կաթսայի մոտ ու արյունոտ ձեռքերով սկսեց փլավը բուռ-բուռ լցնել բերանը: Յուղը մատներից հոսում, ծլլում էր թերերը ետ բաշած ձեռքի արմունկից: Վեր-ցին բուռ բրինձը խոթեց բերանը, յուղոտ սինին բաշեց զըր-խին ու սկսեց լպստել: Կամար Սոլթանը նորից սպառնաց.

— Դու կստանաս ալլահի արդար պատիժը, զադի՛: Դու կսատկե՛ա:

Ղաղին սկսեց ձեռքերով տափտփել հատակը, ինչոք խոսքն բառաշելով: Երևի աղոթում էր: Նրա մոտ ընկած աղջիկը հանկարծ վեր թռավ տեղից, կրակի վրա եռացող պղինձը վերցրեց ու եռման ջրի հետ հագցրեց զադիի լիրկ զլխին: Ղաղին գոռաց մորթվող խոզի պես ու երկար մարմնով տապալվեց գետնին...

* * *

Թաշտի վրա գիշերը նստել է ոն ժանիքները ցցած, տափտակ ու թանձր: Ինձ թվում է, թե ես ու ինձ հետ բաղաքից դուրս եկած Կամար Սոլթանը շնոր կարողանալու ճեղքել խավարի այդ թանձր, անհատակ շերտը: Բայց ահա երկնքում պղնձեն սինիի շափ մի շատ մեծ լուսին երևաց: Եռուով մենք նկատեցինք միմյանց մոտեցող զորքերի երկու կուտակ: Ովքե՞ր են, ովքե՞ր են: Իմ սիրտը բերանեիս հասավ: Աղջկա հետ կատ մի քարի: Զիու ժանը հոտ զգացի:

— Մելիք-Աստվածապով սպարապետի զորքը ահա մատենում է: Տեսնո՞ւմ եք:

Սա ասաց ձիու վրա ժանը նստած մեկը և ես իսկույն ճանաւշեցի նրան: Ախր գա գերազահ Մելիք-Ավան իշխանն է, մեր երկրի տերը: Եռնշա տեղը եկավ և դաշույնս, որ հանել էի ինքս ինձ պաշտպանելու, որի տեղը: Լուսնի կաթից գեղին պսպղացող գետի մյուս կողմին, լերկ բլուրի լանջով իջնուած էր Ջրաբերդի ու Գյուլիստակինի միացյալ զորքը: Երկու խօսմբերն իրար հանգիպեցին: Մեր ետին, հաղիվ մի երկու երեք նետընկեց հեռու, երեսում էին Գանձակ քաղաքի Հրդեհները: Ես ու Կամար Սոլթանը եկել ենք այնտեղից: Գոհար միանձնուեին պարսպից թոկով մեզ իշացրեց բմբովի պես: — Վաղեք զորքին ընդառաջ: Ասացեք...

Քարից պոկվեցի ու ընկա գերազահի ձիու ոտքերը:

— Բուրքը Գանձակը մորթում է...

Զորքը մի ակնթարթում կազմվեց, դասդասվեց՝ իրենց նախնավանդ կարգով: Սպարապետն իր կրտսեր եղբորը՝ Ադամ

բեկին հրամայեց լինել առաջնապահ։ Աղամ բեկն ինձ ձի տվեց՝ արի Հետո։

Մի մեծ, շատ մեծ ամպ եկավ ու կլանեց լուսինը։ Գանձակ քաղաքի պարիսպներն ու ժնդժնգացող քարե ատամնաշշարերը թաղվեցին խավարի մեջ։ Գերազահնը Աղամ բեկին հանձնեց նաև Վարանդայի Մելիք Հովսեփի զորախումբը։ Կամար Սոլթանը, տեսնելով, որ իրեն ոչ ոք բանի տեղ չի դնում, բռնեց Աղամ բեկի ձիու ասպանդակը։

— Ինձ վերցրու Հետո։

Բեկը կարծես դրանից գոհ եղավ։ Հարցրեց աղջկա հոր մասին՝ ո՞ւր է, ի՞նչ է անում։ Կամար Սոլթանը լաց եղավ։ Ախր շղիտի հոր վիճակը։ Աղամ բեկը բռնեց նրա քիթը, սեղմեց։

— Լացդ կտրի՛ք, կաթնակեր։ Մենք ե՞րբ ենք լաց եղել, ոք Հիմա լանք։

Աղջիկը ամուր կպավ նրա մեջքին։

— Ծուազիր։ Քաղաքում կուտրած է։

Աղամ բեկը նրան ևս ձի տվեց։

* * *

Մեր առաջապահ զորախումբը մոտեցավ Հասկիկ գյուղին։ Դա քաղաքին գրեթե կպած ուսուցք է։ Սիրանիների խիւ այգու մեջ, որ հենց պարիսպների տակ էր, ճակատ-ճակատի գեմ առանք հիսուն-վաթսուն թուրք զինվորների։ Սրանք մի-մի հայ աղջիկ ոտքերի տակ խեղած հոշոտում էին։ Մեր բախումը նրանց հետ ուժգին եղավ։ Ասկյարները սպանվեցին զրեթե մի ակնթարթում։ Աղամ բեկը ատրճանակի կոթունով շարդեց մի շավուշի ատամները։

— Դո՞ւ մերկացրիր այս աղջիկներին։

— Ես, — փորձեց անվեհեր երեալ թուրքը։ — Դա ալլահի տված իմ իրավունքն է, հա՛յ! Մի՛ առ ինձնից իմ ավարը։

— Դո՞ւ պղծեցիր կույսերին։

Զավուշի բերանի խոռոշը լայն բացվեց, աշքերը շովեցին կտտաղի։ Կամար Սոլթանը իր դաշույնը դեմ արեց նրա փորին։

— Դո՞ւ...

— Բայց դու կին ես, կի՞ն ես, — զոռաց շավուշը: — Թողինձ տղամարդ սպանի, ո՞չ դու, կի՞ն, ո՞չ դու:

Թոլորս հագանք թուրքերի շորերը, մերը խոթեցինք թամբախուրջինների մեջ: Ազամ բեկը քմծիծաղեց:

— Թուրքի շորը բեզ այլակերպեց: Կամար Սոլթան:

— Քոռանեամ, — փորձեց կծել ազդիկը: — Կարծես թուրքի շորի մեջ դու Գևորգ Զորավարն ես զարձել:

— Երեսում է, ես բեզ իզուր վերցրի հետո, — ձևանալով, թե վիրավորվեց, ասաց Ազամ բեկը:

Դարպանը պահակող ասկյարները ներսում աղաղակում էին: Պարզ է, նրանց վրա գրոհում են քաղաքի ներսից: Կամար Սոլթանն ինձ ասաց, թե իր հայրն է մեզ համար ճանապարհ բաց անում: Մեզ տեսնելով թուրքերը դարպանի փոքր գուրը բաց արին: Կարծեցին թե թուրք ենք, եկել ենք իրենց օգնության: Մեր ձիավոր խումբը խուժեց ներս: Մի ակնթարթ հետո թուրք դափուցինները թրատված ընկած էին:

Հայն բացված դարպաններով հայոց զորքը մտավ Դանձակ: Լույսը բացվում էր: Մենք մի քանի ճյուղի բաժանվեցինք ու արշավեցինք նեզ փողոցներով:

Այսուհեղ-այսուհեղ քաղաքի հայերը՝ մեծ ու փոքր գիմադիր աղաղակում էին: Բոլոր քաղաքացինները, անգամ փոքր տղաներն ու ազգիկները, հագել են ճերմակ պատանք: Ոմանք պատանքի թիկունքներին կարմիր ներկախաշեր էին դաշել, փոքրերը փայտյա խաշեր էին կրում զլուխներից վեր պահած: Քաղաքը դեմ էր կանգնած թուրքերի ամբոխին: Ոմանք զոռում էին:

— Ո՞չ փրկեա մեզ: Ո՞չ...

Սպիտակ ուրվականների թափորներ էին զրանք, որ կարծես բոլորին հենց երեկ են թաղել պատանքով և այս առավոտ են զուրս պրծել գերեզմաններից: Քահանաներն ու ժամհարները իրենց փիլունների ու շուրջառների վրա Քրիստոսի խաշելության պատառներ էին կպցրել:

— Նահատակ սուրբ... Նահատակ կենդանի:

Այս թոհուրոհի մեջ ես կորցրի Ազամ բեկին և ինձ զուս մի յոթ-ութ հազար կանանց ու երեխաների ամբոխի մեջ: Քիչ մնաց ոտնատակ ընկերմ: Կանայք ու երեխաները քարեր, փայտի կտորներ, աղյուսի բեկորներ էին շպրտում թուր-

քերի կողմը: Ես բարձրացա մի ավերակի թմրի, առոճանա-
կովս սկսեցի կրակել ու գոռալ:

— Ո՞չ նահատակ, ո՞չ...

Մեր ամբոխը խելագար աղաղակով հոսեց թուրբերի վրա,
խառնվեց ասկյարներին: Դժոխք է Ասկյարները կրապում էն
հրացաններից, սրերը շողացնում: Կանանցից ոմանք քնկնում
էին, մյուսները թռչում ասկյարների երեսին, մեզրին: Ամանց
հաջողվում էր խել նրանց զենքը, մյուսները բռնցքներով,
առամներով կպչում էին նրանց:

Մեր աջ կողմից մի խումբ տղամարդիկ, նույնպես պա-
տանքված, հարձակվեցին թուրբերի վրա: Ես նրանց մեջ
նկատեցի թուրի Արզումանի բարձր զլուխը, ճանաշեցի նրա
ձայնը:

— Զա՞րկ: Զա՞ա՞արկ...

Զարմանալի ճարպիկ էին հատկապես փոքրիկ տղաները:
Ընկնողն ընկնում էր, ոտքի մեացածը կատվի պես կպչում
ասկյարի կոկորդին, մեկի վրա ութ-տասը աղա, թև ազդիկ,
տապակում ասկյարին, քաշքռում, կծում ձեռք, ականչ, քիթ,
գանակ խրում նրանց կուրծքը, փորը...

Մեծ բազարի մոտից գուրս խուժեցին երեխ հազար, գուցե
ավելի, մանր տղաներ ու ազդիկներ: Նրանք սպիտակ աղաղ-
նիներ արձակեցին օդի մեջ:

Նկատեցի նաև գերագահին: Սուրը մերկացրած նա գրո-
հեց թուրբերի թիկունքից:

— Զա՞րկ: Զա՞ա՞արկ...

Ես ցնծացի: Նշանակում է մերոնք մյուս թաղերում ընկ-
էել են թուրբերի դիմագրությունը և հասել մեզ օգնության:
Այս բանում ավելի համոզվեցի, երբ տեսա նաև Զրաբերդի ու
Գյուղիստանի գնդերը, որ համախումբ ու սրամներկ եկան գետի
կողմից:

Եթե թիւ առաջ մերոնք էին աղաղակում, ապա այժմ թուր-
բերը սկսեցին վայնասուն բարձրացնել: Ով զենք ուներ,
ցած զցեց ու ձեռքերը տնկեց սարսափով:

— Թապլի՛մ... Թապլի՛մ!

Երկինքը մեզրվում էր մարդկային ողբից:

1. Թապլի՛մ — Հաեմելում եմ:

Մի ձիավոր կամար Սոլթանին պոկեց գետնից ու զրեց իր ձիու թամբին: Ես հաղով նկատեցի, որ աղջկան բարձրացնողը Աղամ բեկն է: Նա ձին քշեց նեղ փողոցով: Ես ու ևս մի հիսուն ձիավոր հետեւցինք նրան:

Մի ընդարձակ շինության առաջ մի խումբ թուրքեր իրարանցման մեջ էին: Մեկը, որ շքեղ էր հագնված ու գդակին՝ կարկաչ, գոռաւմ էր: — Զի՞ս: Զի՞ս... Արիֆ Ահմեդ փաշան էր: Նրան ձի մատուցեցին: Հսկա նժույզ էր: Մի ասկյար կղեց, միաշան ոտքը դրեց նրա մեջքին ու իրեն զցեց թամբի վրա: Ես նկատեցի, որ թամբի խեմքն ու կեղը արծաթից են, թամբատակի բժիշուշը՝ ոսկեկար ծովերով մետաքս: Զիու զլուխը պատաժ էր ներկած կաշվով: Իր զդակը ևս կաշվեց էր, առոք ու բրդածե, գաղաթին փետրավոր կարկաչ:

— Փախչո՞ւմ է, — գոռաց Աղամ բեկը:

Մենք մեր ձիերը լարեցինք փախչող փաշայի ու նրա խրմբի եանից: Փաշայի ձին կոխսկրտեց փողոցում վազվզող երեխաների փեղքերը: Նրանց աղիքները փաթթաթվեցին ձիու սրմբակիներին ու քարշ եկան, մինչեւ կտրվեցին: Մենք ձիերը լարեցինք ու հրացաններով սկսեցինք խփել փախչողներին: Փաշայի հետ ճողոպրողներից շատերը ընկան: Մի քանիսը ծովեցին աչ ու ճախ ու անհետացան: Փաշան ևս փորձեց թերզել, զուկակ մտնել, սակայն հենց այդ պահին Աղամ բեկը գալարաթոկ նետեց նրա շլինքին:

— Կանգ առ, շո՛ւն...

Փաշան փորձեց սրով կտրել շլինքը սեղմած թոկը, սակայն Աղամ բեկը հարգածով նրա ձեռքից դցեց սուրը և թոկը քաշելով նրան պոկեց ձիուց, ինքը թռավ նրա մեջքին:

— Խաղաղվի՛ր:

Մեր ետեից քարշ տալով փաշային, մենք գետցինք դեպի Հովհաննես Մկրտչի տաճարը: Այնու կրակոցներ ու աղաղակ շէր լսվում: Երեսի քաղաքում ոչ մի թուրք չէր մեացել: Աղամ բեկն իր այծենականը պոկեց իր վրայից ու զցեց կամար Սոլթանի ուսերին:

— Կմըսես: Քամի է...

* * *

Ամեն տեղ դիակներ են՝ աղբյուրների մոտ, վողոցի մայթերին, հենց մեջտեղը, կտուրներին, դոների շնմերին, Թաղաքի հայերը դիակների մեջից չուզում էին իրենց հարազատներին, պատանում, տանում եկեղեցի: Սպանված թուրքերին համբանք չկար:

Աղամ բեկն իր ետերց տանում էր իր ձիու թամբին չվանով կապած սերասկեր Արիֆ Ահմեդ փաշային: Սա ոստոսառում էր ակամա, վիզր առաջ ձգում, որ թոկի օղակը լիսեղիս Ծս տեսնում էր, որ նրա ծնուաբ կափկափում է: Երբեմն ոռնում էր՝ լուսնի վրա հաշացող գամփոփ պէս:

Մելիք-Ավան իշխանը զորապետների հետ էր: Մեզ տեսավ ու զարմանքից նույնիսկ ժպտաց:

— Ո՞ւ՞ս՝ Սերասկերին եք բերե՞լ: Ես էլ կարծեցի, թե ճղել է բորենին:

Ինքն իր ձեռքով Արիֆ Ահմեդ փաշայի վզից հանեց թոկը:

— Ուշը եկ, փաշա: Թակարդ ընկած զայլի պէս ահից քամակդ բաց ես թողել, հողն ես մուրտառում:

Ժողովուրդը զրմուլով թափվեց մեր զիսին: Բոլորը կատաղությամբ էին նայում փաշային: Ես ափսոսացի փաշայի շահելությունը, երևի հազիվ երեսուն տարեկան լիներ, նաև գեղեցիկ էր: Գահազուխը նրան հարցրեց.

— Զէի՞ր մտածում, թուրք, որ արածներիդ համար աստծու դատաստանին կհասնես:

— Հզորի արարմունքը երբեք շի ենթարկվել ոչ մի գատաստանի, — լափլիփելով ասաց փաշան:

Գերազա՞ց թերվեց դեպի նա:

— Ինչպիսի՞ մահ կնախարնարեիր, սերասկյար փաշաքառամբե՞լ, թե գլուխդ խորին պատի ճեղքն ու թոկով քաշե՞լով պուէիլ: Հը:

Փաշան հոհուաց:

— Դուք ի՞նչ մարդ սպանող եք, հայե՞ր: Դա ձեր գործը չէ:

— Զեղնից կսովորենք, թուրք, — ասաց գերազա՞ց: — Զեր հետեւից կարմիր խնձոր շինք ուղարկել մենք, որ եկել եք մեր երկիրը...

— Մեր երդումն է բնաշինչ անել ձեզ, հայեր: Նաև ձեր քարեկամ սարը Մոսկովի թագուհուն կտոր-կտոր կանենք: մեծ կտորն ականջը թողնելով:

— Մեծ-մեծ ես բրդում, սերասկեր: Թուրքն իր ծոծրակն կտեսնի, կամեցածը՝ ոչ: Ո՞շ...

Նրա ակնարկով հավաքված ամբոխը քարեր վերցրեց: Արիֆ Ահմեդ փաշայի կողքին կանգնեցրին նաև մյուս բռնը-ված փաշաներին: Առաջին քարը մի ծեր կին զարկեց սերասկերի զլիսին:

— Զավակս լավեցիր, գաղա՞ն...

Քարերի տարափ տեղաց փաշաների վրա: Մրանք միայն մի ակնթարթ մնացին ոտքի: Ընկան իրար զլիսի, ժածկվեցին քարակուտի տակ:

Գանձակը զավթած վերջին թուրքերը սատակեցին:

* * *

Երեք օրում մենք քաղաքացիների հետ քաղաքը մաքրեցինք զիակներից, արյան լճերից, որ լլարդացել ու գարշում էին:

Մի առավոտ ողջ ժողովուրդը հավաքվեց Հովհաննես Մկրտչի տաճարում և նրա շուրջը: Պատարագ են մատուցում մեր զոհերի, նաև օրհնանք՝ հաղթանակի պատվին: Աղամ բեկը բռնեց Կամար Սոլթանի ձեռքը:

— Գնանք զնոտում լողանանք:

— Բա պատարա՞զը:

— Մեզ ի՞նչ... Թող իրենք ինչ ուզում են անեն: Օրը տաք է ու ես կարծես որդիոտել եմ: Գնանք լողոնանք:

Աղջիկը խոնարհ գնաց նրա ևանից: Երեսում էր՝ երջանիկ է զգում իրեն ու հալվում է բերկրանքից:

Գանձակի գետը ջրառատ չէ: Սագում է մեր Գեղամի ծովակի Արեգունի լեռների հյուսիսահայաց գաղաթներից ու անցնելով անհամար հայոց գյուղերի միջով, կտրում Գանձակը ու գնում զեպի Կուր:

Աղամ բեկը Կամար Սոլթանին հանեց քաղաքից, տարավ վերև:

— Վերնում գետի մեջ դիակ չկա, իսկ այստեղ կա, — առաջ
նա:

Նրանք հանգեցին ըստ պատշաճին ու մտան ջրի գուլազ
լճակը: Երևի Կամար Սոլթանն այրվում է ու սառը ջուրը ոչ
միայն նվազեցնում, այլ՝ ուժգնացնում է նրան պարուրած
կրակը: Պարզ է, դա այն սիրո բռնկումն է, որ նա ունի դեպի
քեկը՝ խիտ գանգուրներով այդ տղան:

Երբ գուրս էին եկել գետից, Աղամ բեկն իր թիկնոցը զցեց
աղջկա վրա:

— Բաց շորերդ փոխիր դրա տակ:

— Իսկ դու, — աղաշնց աղջիկը, — ինձ մի նայիր, մի՛ եա-
յիր... Բե նայես, կիսենթանաս...

Կամար Սոլթանը ժամերը մղեց: Դրանց ջուրը մի բուռ
լճակ դարձավ գետին ու արագ շորացավ: Աղջիկը կռացավ
գուլպաների քուղերը կապելու, Աղամ բեկը վայրենի կատվի
պես փաթաթվեց նրան ու սկսեց համբուրել բերանը, վիզը.
աշըբը:

Նրանք նստեցին ժառի տակ, իրարից մի քիչ հեռու և
սկսեցին ինչ-ոք բաներ խռովել: Աղամ բեկը մի ոսկեգույն
բղեղիկ զցեց աղջկա ծոցը: Աղջիկը շվախեցավ գրանից,
բղեղների սովոր էր: Բեկը ձեռքը խոթեց նրա ծոցը:

— Բղեղը հանեմ, կկծի..

Կամար Սոլթանը քրքշաց, զգալով, թե ինչպես է խտուտ
գալիս իր կուրծքը և սիրտն ինչպես է հանույթից մարում:
Ա՛խ, տե՛ր աստված: Նա վախեցավ, թե աղայի մատները
կայրվեն իր ծոցում, մանավանդ զգում էր, որ նա դողում է:

— Զե՞ս գտնի, շե՞ս գտնի, — ասաց՝ բրբիջը զսպելով:

Բեկը բղեղը գտավ ու ձեռքը հանեց աղջկա ծոցից: Աղջի-
կըն ափսոսաց, որ շուտ գտավ: Բղեղը ճախրեց կապտին տվող
օդի մեջ, կարծես մի քաղցր երազ մարեց՝ ոսկե թոփշքով:

Արևմուտից առաջ թեթև, թափանցիկ քող է պարուրում
քաղաքն ու վերեկի լեռները: Գանձակի աշտարակները ծածկ-
վեցին կաթեավուն շղարշով: Կեսօրին ժայռերը շիկանում են,
ծծում անտառների ու այգիների խռնավությունը և արծիվն
անգամ շի իշնում իր բնի եղրին՝ քարերը տաք են: Լեռներն
իրենց թուխ ստվերներով սկսեցին ծածկել շրջապատը: Ուր որ
է զիշերը վրա կհանի և բարձր գագաթներին կհանգըն

աստղերը, որոնք, թվում է, պոկվել են ձորերից ու գաշտերից, ևսաել սարերի վրա՝ հոգնած ու անքուն:

Կամար Սոլթանը խոսեց.

— Դու այսօր տեսա՞ր եղբորդ, Աղամ:

— Հեռվից: Բայց ի՞նչ կա, ինչո՞ւ հարցրիր:

— Ես մոտիկից տեսա նրան,— ասաց աղջիկը:— Նրա երեսը, թեև պատաժ էր հոգի ու վշտի խոր ծալքերով, բայց և մի տեսակ գոհ էր: Ի՞նչ է ուսում:

— Ո՞վ, — հարցրեց Աղամը:

— Եղբայրդ:

— Է՛, բա՞ն հարցրիր, շեմ հիշում: Ինչ պատահում է, ուսում է:

— Ես նրա համար կարավ կորսամ,— ասաց աղջիկը:— Ու կտապակեմ: Կերակուրը կղենիմ առաջը, նաև հաց, ու կհեռանամ: Հարսը շպնդը է կանգնի տագոր առաջ, երբ նա ուսում է:

Աղամը զրնգուն ծիծագեց:

— Հիշում եմ, եղբայրս նամակ գրեց շգիտեմ որ թագավորի, թե կայրսի: Աշքովս ընկավի:— Այս թուղթը գրեցավ գերահոշակ Գանձասարի ուխտի գուանը՝ սուրբ Աստվածածնի հոգանու տակ: Տեսնես ինչպիսի՞ն է եղել Աստվածածինը:

— Ճիշտ ինձ նման,— ասաց Կամար Սոլթանը:

— Է՛, Է՛, — մի քիչ կողմ քաշվեց Աղամ բեկը:— Խելք հավաքիր զլուխոց: Դու աղջիկ ես, դու կին պիտի դառնաս ու մայր...

— Դու էլ հայր, չէ՞:

— Ես քո պարանոցից կկախեմ ոսկե մարզան՝ հմայիլ գարդերով, քո մատին զմրուխտ մատանի կղնեմ: Քո վաշկինակով: Քեզ համար կանաչ մախմուրից կապա կարել կտամ, վրան կարճ արխալուղ, փեշերը ոսկեկար: Ես քո ննջարանը կգարդարեմ իսաթայի մետաքսով, Ագուլիսի գորգերով: Ժանեկավոր վարագույր կղնեմ քո պատուհանին, որ տաք շնչի: Ես քո ճակատը կգարդարեմ ոսկե աշբաֆի հերիալ հմայիլով:

Կամար Սոլթանը հաճույքից շիկնեց:

— Եվ մութ զիշերը, հավատարիմ շան պես, հմայիլը կպահպանի ինձ, չէ՞: Աղամ:

— Քեզ համար ոսկեկազմ աղոթագիրք կդանեմ, որ դուք երբ գիշերները ես տանը լինեմ, այլ կովի դաշտում՝ կարդաս ու աղոթես ինձ համար: Եվ եթե բան է ես... Եթե բան է՝ ընկնեմ կավում, ապա դժւ ձեռքերդ վեր կարգես: — Ո՞վ անը, հարություն առուր իմ սիրելիին, ինչպես Քրիստոսը՝ Դաւարին:

Աղջիկը հեկեկաց:

— Նման բան մի՛ ասա: Մի՛ ասա:

— Ես գիտեմ, — շարունակից Աղամ բեկը, — որ Տաթևի գանձաւանն է պահպան մեր Բագրատունի թագավորության դրոշակը: Ես դա կրերեմ ու կպարզեմ քո հարսանյաց հանդեսի գլխին...

Երեկո էր, երբ նրանք մտան քաղաք: Աղամ բեկը կամար Սոլթանին տարավ իր տարեկից զորապետերի մոտ, որ մի գիշետան հավաքված խրախնանում էին: Տղաները թափով վազեցին դեպի աղջիկը, գրկեցին, թացրին օդում ու նստացրին թախտի:

— Օ՛, պաշտելի Կամար Սոլթան: Օ՛, քաջ...

Աղամ բեկը նրան մի գավ գինի զիմ արեց:

— Խմիր:

— Օ՛յ, շէ, Աղամ: Խնչ ես անում: Զէ՛, շէ՛: Ավելի լավ է ես քեզ համար երգեմ:

Հսպասելով նրա խոսքին, ակսեց.

Իցն զի ոչ զիտեն,
Եվ զիտեն զի ոչ զիտեն,
Եվ ոչ զիտեն զի ոչ զիտեն:
Իցն զի ոչ զիտեն,
Եվ զիտեն, թէ զիտեն:

Դավաթը զեմ արեց Աղամին:

— Թու արեշատության, զիսատեր իմ:

Այսպես խրախնացան մինչև աքլորականը:

* * *

Գրաբերդի ժայռե ատամները քրտնեցին զինու գոլից, հարսանքավորների քիթ-քերաններից ժայթքող խոնավ գուրշուց: Երանի միակը ես էի, որ խելքս զինուն շէի տալիս:

Նկատում էի, թե ինչպես նորահարս կամար Սոլիթանը անձնվեր հայացքով բռղի տակից նայում, ինքն իրեն մատադում է ամուսնուն: Նրա նուրբ ոռնչգերը թրթում էին՝ մեջը բոց կարած կրակից: Կրախճանքին զրեթե չէր մասնակցում թթված-փթակած Խորայի արեղան: Ամեն տեղ նա կապած էր Վարանդայի Շահնազար բեկին, ինչ-որ բախում էր նրա ականջին: Շահնազար բեկը հազիվ քան տարնկան լիներ, աւելայն խոշորամարմին էր, կզակը ամուր, հայացքում կորով, նաև, ինչպես նկատեցի՝ նախանձի թույն:

Ներքնում մռնչում էր բարձր լեռներից պոկված Թարթառ գետը, որին մենք Տրառ, Հայաստանի նեղոս ենք անվանում:

Սպարապետ Մելիք-Աստվածապովը միայն մեկ անդամ մոտեցավ ինձ:

— Ուրախ եմ, պարոն խոզա, քո ներկայությունը եղբորս հարսանիքին ինձ համար մեծագույն պատիվ է:

Մինչև ես զլուխ կտայի նրան, մեղնից ոչ հեռու կանգնած Խորայի արեղան շշնչաց: — Ասում են Ավետարանոցի կիրառում նորից է երևացել ահեղ հովազը: Եզ ինչո՞ւ շասել՝ ապրեցրո զքեզ, թե որդի ես աստծո՝ էջ ի խաշեդ: — Ես նրա ասածները ականջիս հետեւ զցեցի՝ նրա նկատմամբ ինչ-որ խորշանք զգալով, զինու զավը մեկնեցի Մելիք-Աստվածապովին:

— Պատրաստ եմ միշտ օգտակար լինելու ազգիս հայոց, տեր սպարապետ:

— Ինչո՞վ, — հարցով նայեց նա ինձ:

— Որ սուր առնեցուն՝ սրով անկցին, — ասացի: — Եղա՞վ չէ, նման բան մեր Գանձակում: Արիք Ահմեդ փաշայի ջախշախ մարմինն է աշքիս առաջ: Սրով եկավ, ախր:

Հարսանյաց թափորը շարժվեց գեափի Երից Մանկաց վանքը՝ նրա սուրբ օրհնությունը հրավիրելու նորապսակների վրա՝ Թրիստոսի պսակով: Գնացին ոչ բոլորը, այլ միայն զույգի հարազատ ջահելները, նաև հյուրերից պատվելի տղաներ ու պերճ հագնված նորահարսեր: Ագամ բեկը խնդրեց, որ ես էլ միանամ իրեն: Չմերժեցի:

Թափորի առջեկց զնում էր պճնված Շահնազար բեկը՝ իր գեղեցիկ տիկնոց՝ Սոնայի հետ: Ինքը Ազամ բեկի խաշեղ-բայրն էր: Իր հետ տանում էր նաև իր ճիավոր հիսնյակը:

Եահնազար բեկը գարձյալ խոժոռ էր ու թթված։ Նրա բրգաճն զգակին ձիու պոշամագի մի փունք էր տեկմած։ Իր հեծյալ-ների գդակակումբերին մարդկային գանգեր էին նկարված՝ ընկույզի կեղևի գույնի։ Ծա մի քանի անգամ փորձեցի մոտեմոտ անել նրան, սակայն նա խուսափեց իմ ընկերությունից։

Հասանք Հասան Զալալյանների տիրույթ Աւլու Պապ մեծ բերդի մոտ եղած Խնձորեսատան պյուղը։ Գեղջուկների ամբախ հոսեց գեպի հարսանյաց թափորը, շգիտեմ՝ նորապսակներին շնորհավորելո՞ւ, թե պարզապես թամաշայի։ Եահնազար բեկը ցասումով եռաց ձիու վրա։

— Հեռացե՞ք, ստո՞ր ումիկներ։ Եկել եք բա՞ն թոցնելու Կորե՞ք...

Եինականները խղճալի տեսք ունեին, շատերը բորիկ, գըլ-խարաց։ Նրանց հայացքները թամաշայի չէին, այլ դեղին ատելություն՝ գեպի այս հարսանյաց ճոխությունը։ Նրանք ոչ այնքան ահաբեկ, որքան գազագած ետես գեղացին։ Դյուզի տանուտեր Միրզեխանը խիստ մերձեցավ Եահնազար բեկին։

— Էն բոզը չի՝ երեսում, — մարակի կոթով բղելով տանուտերի կողը, հարցրեց բեկը։

— Փախավ ինձնից, — ասաց Միրզեխանը։ — Վարժարաններ է բացում, թափառում տեղից-տեղ։ Աստծու անձքը է դարձել։ Եվ ինչո՞ւ ես իմ կյանքը կապեցի այդ երնջի՝ Ասպապ կոշվածի հնտ։

— Բայց երեսում է, որ ձգուում ես նրան, — խեթեց Եահնազար բեկը։

— Զեռագործի վարժարան է ստեղծել մեր ձորում, — թքեց Միրզեխանը։ — Մեղքերին քավություն է տալիս իրը թե։ Քո հոր ապարանքների մոտ ձեռագրատան որք ունի։ Դրո՞ւմ է...

Նորափեսաւ Աղամ բեկն ինձ ասաց, թե զզվում եմ Եահնազար բեկից ու Միրզեխան տանուտերից։ Աղամ բեկը հագել էր կարմիր մահուց տարատ, կապույտ ու ոսկեգույն թելերով գործած շապիկ, որի թեքերը կախ էին ընկած։ Երկար կտրվածքով սպիտակ կապա ուներ՝ եղրերը լաստիկ։ Նրա մեջքը պրկել էին արծաթի փնջավոր զույզ գոտիներ։ Մեզ մոտ նման մետաքսի գոտի հնուց ի վեր միայն աղնվական դասի տղամարդիկ իրավունք ունեին կրելու։ Աղամ բեկը նաև բրդյա բարում է վերարկու ուներ, որ փարաշայի էր նման,

միայն թեքերը նեղ էին ու նուանկյունի, քղանցքները՝ կախ: Նրան մի առանձին շուր էր տալիս կարակուլե բրդաձե գդակը: Ուղերը ծաղկած էին զիտորայծի երկարաճիտք կոչիկներով: Նրա ու հարսի ձիերը սպիտակ էին, շրեղ զարդարված: Կամար Սոլթանի զեղեցկությունը զգիխիլ էր: Երկու զինակիր նրանց ետևից բերում էին մեկական թամրած ձի: Այս կողմերի մեր հայերը հնուց անտի երկու ձի են ունենում ճակատամարտելիս, երբ մեկը հոգնում է, ցատկում նստում են մյուսի մեջքին: Զինակիրները կրում էին նաև իրենց տիրոջ հրացանը, վառողամանը, փամփշտակալը:

Մի զյուշում ևս զիմավորեցին մեր թափորը: Ռազմախումբ էր, եռագույն զրոշի հովանուն: Ինձ ասացին, թե ու Հասան-Ջալալյան արքայական տան զրոշակն է: Երկու-երեք զորական զուտան զրոշի առաջն ընկած, նվազում, երգում էին:

Երևաց Շուռ Ավագը՝ լավ զինված: Նա զյուղի երևելիների հետ հաց ու գիենով առաջ եկած: Նրա զինվորները, իրենց կորովի կեցվածքով, թուխ մուր երեսներով, ներշնչող էին: Նրանք ևս միացան մեղ ու մենք, փոխադարձ ողջույններից հետո, շարունակեցինք մեր ճանապարհը:

Անտառների վրա տիրաբար նստած ամպերը քաշվեցին և արևն ի ցույց արեց իր հրեղեն կենդանությունը: Կամար Սոլթանի երեսին ոսկեզօծված արցունքները շորացան:

Մժակահող զյուղի տանուտերը արծաթով ընդելուզած սուր կապեց նորահարսի մեջքին: Կամար Սոլթանը ցնծաց:

— Դո՞ւ եմ, որ ինձ զենքով եք զարդարում և ոչ թե կատու խրտեացնող զիզի-բիզի բաներով՝ խաշով-Հմայիլով: Լավ է, չեք մոռացել, որ թուրք խաշից զորեղ է: Հավատարիմ եք մեր ուխտին: Հավատացած եմ, որ ձեր այդ հավատարմությունը շի գառնա Հուդայի համբույր: Ինքներդ ապահովեք ձեր դոյլությունը, մերժեցեք փթածը՝ ուկլնս ապրեցոյց, զինքն ոչ կարև ապրեցուցանել:

Աղավնիների երամը խշշաց հսկա ընկուզենիների պուրակի վրայով: Նրանց շուն գեպի աղոթարան էր: Բարի նշան է:

Պատկի արարողությունը կարճ տեսց: Կամար Սոլթանի կամքն էր գաւ նա հորից խնդրեց ինչ-որ: Հայրը քրծերում

գիւթաթթված բան բերեց, տվեց աղջկան: Եկեղեցու բեմի վրա-
յից Կամար Սոլթանը սեավուն մի լաթ նետեց բեմառէջքին:

— Օսմանյան զորական գրոշակ է: Գանձակի կովում ինքա-
խլեցի մի թուրք լավուշից: Խ՞երս: Թող սա լինի իմ պատ-
կադրության ընծան՝ այս եկեղեցուն: Պահեցեք և հիշեցեք
Գանձակի հաղթանակի բանը:

Ժողովուրդը ուրախությունից ցնծաց: Խելու ոչ: Հայոց եր-
կինքը ահա նորից պարզ է ու խաղաղ: Թուրքի ոտքը նորից
կտրեցինք մեր աշխարհից:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ես ինքս ինձ շշնչացի:— Օրհնեալ՝ եկեալն՝ հանուն Տետոն:— Տեղն անշարժ պառկած գերագահը երեխ լսեց ձայնս, առանց աշք բացանելու, ձեռքը թույլ բարձրացրեց.

— Մի մոռանաք, մարդիկ,— զամ բազմանալն անօրինությանն՝ ցամաքեսցի սեր բազմաց: Մի մոռանաք:— Երկար լրեց, նվազող ձայնով ասաց:— Եսայուն պսակենք: Գոնե որդուս հարսանիքը տեսնեմ: Իմ ճանապարհը սպառվեց: Գնալով հասա ծայրին:

Հարկաբաժինը, որ արևկող էր, կարծես սակվեց: Ամբոց բոլորը կծկված-տառապած էին: Մեռնում է Հայոց պետության զլուխ Մելիք-Ավան-Եղան իշխանը: Մի տասը օք առաջ կայտառ, հզոր էր: Քանի խորանում էինք դաշտի մեջ, ողն այնքան խեղդող էր դառնում: Արևը կծում էր կրակի պես, խանձում զով տեղերի սովոր հայ զինվորներին: Խոշա օհան գյուղի մոտ Հայոց զորքը շեշտ հարվածեց Ատրպատականից Հայաստան ներխուժած Փանահ Քառչի թափառական Ատրիշալու ցեղի խառնախուժանին: Ավագակները անցել են Երասխը և ասպատակում են մեր Բարկուշատի հովտում: Նույնի սկ հսկա շինարիների բները կարմրեցին նրանց արյունից: Մասերի կատարներին նազող արագիլները հեռացան դեպի Երասխամերձ բրնձի արտերն ու ձմերուկի մարգերը:

Պարտված ցեղը փախավ:

Հաղթանակած մտան Խոշա օհանի գյուղի վանքը: Միա-

բաները զանգեր հարելով, խանգավառ դիմավորեցին զորքին: Բազկատարած առաջ եկագ Խորայել արեղան, որ հիմա վարդապետ էր, օթհեց գերագահին ու զորքին:

— Արածդ տերունական հաղթանակ է, տեր մեր գերագահ իշխան: Ծնորհավոր... Այս անգամ էլ, սակայն Սարիջալու ցեղի առաջնորդ Զառչի Փանահին հաջողվեց փախչել, զլուխն ազատել:

Ես զարմացած մոտեցա նրան: Չէ որ Զառչի Փանահին մի տարի առաջ, Հոգափերին կամրջի մոտ սպանեց Ծահնազարքեկը ու զիակը զցեց զիտը: Աշբովս տեսա: Խորայել վարդապետը ֆշացրեց շուն տեսած կատվի պես:

— Լեզուդ կուլ տուր, Աբրահամ Երևանցի:

Մի ջահել սարկավագ բեմի խորքից երգեց.

Եազ կզա, կազ կզա,
Ծոցողակով, կողկողակով...

Դեպի տուն էինք գառնում Հակարռ գետի եղեգնուտով: Ուղտաշափ եղեգնապատից հրացանի կրակոց դղրդաց: Գերագահը կախվեց թամրից:

— Ո՞վ էր: Ո՞վ էր խփողը:

Զինվորները կրակ տվին եղեգնուտը ու նրա միջից հանեցին դավագիրին: Սա ասաց, թե ինքը Զառչի Փանահի մարդն է: Նրան կտոր-կտոր արին: Ուրեմն, իրավ, ցեղապետը ողջ է: Սակայն ինչպե՞ս, ինչպե՞ս նման հրաշք կատարվեց:

Մեր ընդարձակ ու հզոր պետության տերն ու պահապանը մենում է թշնամու տված վերքից: Քշերին էր թույլ տալիս մտնել իր ննջարանը: Ահա նա դարձագ իրեն նշխար տվող վարդապետին: Ես նրա հայացքի մեջ անմեղություն տեսա:

— Գնում եմ, Խորայել հայր սուրբ: Կընդունի միայն-տերը:

— Ամեն կողմով արդար ես, տեր իշխան: Բազում են կոշեցեալք և սակավը են ընդունեալք: Դու՝ ընդունեալք, նաև նահատակ: Թշնամու գնդակից եղավ:

Մենող իշխանին այց էին անում Հայոց աշխարհի բոլոր կողմերից: Ծարաթը մեկ անգամ, միշտ միննույն ուրբաթօրը Տող էր զալիս նաև Դոհար միանձնուհին: Մի անգամ էլ

Նա վիրավորի մահճին կավե փոքրիկ անոթ դրեց: Իշխանը զվարթ նայեց նրան:

— Մեռո՞ն է, Գոհար:

— Խնձորեսկ գյուղի սուրբ հոգ է, Մխիթար Սպարապետի շիրքմից:

— Օրհնվե՞ս, իշխանուհի... Մխիթարը եկավ ինձ ապաքինելու, ոչ մեռցնելու:

Սովորաբար նսայի բեկը հոր մոտ էր մտեռմ խրայել վարդապետի կամ ինձ հեաւ: Մեռնողից, ասում էր, վախենում եմ, թեև հայրս է: Ինձ թվում է մեռնողը կամենում է հետը տանել շատերին:

Երբ ներս մտանք մահվան հոտով բռնված խցիկը, որդին հարցրեց:

— Կամքդ ի՞նչ է, հա՛յր: Հրամայիր:

Հարցրեց ու, ինչպես նկատեցի, առ զգաց: Նրա զեղեցիկ երեսը սրվեց, կարծես ոտքը մեխ մտավ: Ոչինչ այնքան ախուր ու ցնցող չէ, քան հզոր մարդուն խեղճացած տեսնելը: Անկողնում մի բաւ դարձած մեռնողը լեռներ ու ցեղեր գղրդացնող, հաղթող առյուծը չէր այլս, այլ մի դժբախտ գոյություն:

— Կանչե՞լ ես,— հարցրեց հայրը որդուն:— Էլի կանչիր:

Դիզակից սուրճանդակներ թուան դեպի Հայոց երկրի զանազան կողմերը:— Գերազա՞ն Մելիք-Ավան իշխանը մեռնում է: Եկեք նրա վերջին խոսքը լսելու:

Նա նորից բացեց աշքերը:

— Զագենձորի Մելիք Օհանին լուր տվե՞լ ես, զավակս:

— Մարդ եմ ուղարկել, բայց դեռ չկա:

— Նոր մարդ ուղարկիր: Մելիք Օհանին խնդրանքս է՝ դապղկա հետ...

Եսայի բեկը խոնարհ գլուխ տվեց: Ես հասկացա՞ զերագանի ուզում է որդու համար կին առնել Զագենձորի Մելիք Օհանի դստերը: Բեկն ինձ հանձնարեց զնալ Զագենձոր՝ Մելիք Օհանին բերելու: Ես նրա խնդրանքն ընդունեցի դժկամ: Մրտիս մեջ ինչ-որ դառը բան ոլորվեց: Ինձ հրամայում են: Բայց զնացի: Ետ եկա մի շարաթ հետո: Մի խումբ ձիավորներով իշանը Զագենձորի բարձրերից ու կախվեցինք Հակարո

գետի նեղ հունի մեջ։ Մեր քարավանի առջևից, որ ութառնութառնինդ հոգի էինք, գնում էր Մելիք-Ծանը։ Նրա հազին զորավարի զգեստ էր, տեղ-տեղ խանձված պատերազմների կրակներից, տեղ-տեղ քրտինքից ու հողակավից սկացած։ Նա կրում էր հենց այն զգեստը, որի մեջ իրեն մելիք էին օժի՛։ Դա նման էր ընկույզի պատյանի, որ ճաքում է։ Ասում էր՝ երեկի հենց իմ այս շորերի մեջ էլ ինձ թաղեն։

Մեզ հետ, ճերմակ ձիու վրա, որի թամբը սադաֆից էր, քմանչը ոսկեթել, սանձն արծաթած, Տող էինք տանում Մելիք Ծանի աղջկան՝ Բեգում օրիորդին։ Զին ճերմակ էր, ինքը կարմիր երիզներով կապույտ կապա հազած, գլխին պալտի-թագ, որ շողշողում էր, ոտքերին կարմիր ճարակոշիկ։ Երբ իմացավ, որ իր ն հարսնացու են տանում, լաց եղավ մորը փաթաթվելով։ Բայց և զգացի, որ հոգում ուրախ է ու դո՞ւ աստծու սահմանածից։ Դե ով իրավունք ունի դժգոհելու աստծուց այս անցավոր աշխարհում։ Նկատեցի՝ ինչ-որ խորհրդավոր գոյություն նրան կապում էր աստվածային էությանը, որի, ինչպես տեսա, երկրպագուն էր ինքը։ Հայոք՝ Մելիք-Ծան իշխանը հպարտ էր, որ խնամիանում է Մյունիքի Առանցահիկ տան հետ, որի արմատները գնա Տիգրան Մեծի երակներում որոնիր։

Գյուղ մտնելիս ձագեծորցիները հետիւտն էին դառնում, մոտենում հեռիթյունից նեխված մատուի կամ եկեղեցու, աղոթում զերմեռանդ, քան նույնիսկ որևէ վանական։ Շինականները զարմանում էին իրենց իշխանի այդ զերմեռանդ ուխտասիրությունից, բայց բան չէին ասում։

Փառական մեծ շենում մնացինք մի ամբողջ օր, նաև մի թաց գիշեր։ Հետո անցանք խիստդիրը, քարախեղդ անտառի ծուղակներով, որ ուղղակի հասնում էր երկնքի մորուքին։ Այս անտառը, կարծում եմ, մարդ տեսած չի։ Տառապելով մտանք լիռան վերեկ մի ճեղքում կուտակված Խծարերդ զյուղը, որ Դիղակի դուռն էր արևմուտքից։ Տներն այստեղ իրար վրա էին, դարպաները քարեկամար։ Գյուղ մտնելը հնարավոր էր միայն իծաշարուկ։

Հասանք Տող։

Դիզակը պատրաստվում էր հարսանիքի:

Ետապելով Տող էին հավաքվում Հայոց երկրի իշխանները, մելիքները, զորապետները, վաճառական այլքը՝ Երեանից, Նախիջևան ժաղարից, Ազուլիսից:

Մի առավոտ, երբ ամրոցի ու Գտիշ վանքի դանգերը զողանցում էին մելամաղձ, ավետելով նոր հյուրախմբի ժամանում, զերագահ իշխանը իր որդուն ու ինձ հասկացնել տվեց, որ իր մոտ թերենը հարսնացուին: Մենք հնագանդ կատարեցինք նրա կամքը: Բեգումը օրիորդը եկավ շքեղ զուզսի մեջ, պախրայի նազանքով ժունկի եկավ մահի մոտ: Իշխանը թուլացած ձեռքը մի կերպ գրեց նրա զլիսին:

— Զի վարել զիտե՞ս, աղջիկս:

— Այու— Բեգումը համբուրեց նրա ձեռքը:

— Զենք...

Բեգումը գոտու արանքից ատրճանակ հանեց:

— Ունեմ:

Իշխանը համբուրեց նրա զլուխը:

— Օրհնում եմ:

Նա մեզ պատվիրեց արագացնել հարսանիքը: Զգում էր, որ մահը ոչ թե իր տան զուրք, այլ արդեն իր կուրծքն է բախում:

Երբ զուրս եկանք, Բեգումը մորը կորցրած հորթուկի պես, փաթաթվեց նշանածին ու մզկտաց:

— Որբանամ ես, մատա՛զդ լինեմ: Զընկճվես, հա՛...

Նրանից նոր քաղած ջրակոտեմի հոտ էր զալիս: Եսային համբուրեց նրա երկար, կաթնասպիտակ վիզը: Ողջ օրը ոչ զուր առավ բերանը, ոչ նշխար: Հասկացա, շի ուզում նշանածի համը կորցնել:

Նորից զանգեր զողանքեցին: Եսայու հետ ես ևս զուրս եկա ամրոցից: Հյուր է զալիս: Ո՞վ է: Ա՛յս, հա՛, Գանձակի պարոնտերը, Գյուլիստանի Հովսեփ թեկն է: Նրանց տոհմական դրոշակն է փողփողում, իբրև կրակի երկինք թռած բոց, նրա ձիավոր հարյուրյակի զլիսին: Գալիս է կնոշ՝ Հերիքնազի հետ: Բեկը համբուրվեց Եսայու հետ, ինձ զլիսով ողջուն մաղթեց:

— Հավաքվո՞ւմ են:

— Եատերն են եկելու էլի՛ դալիս են:

— Խաշենը եկե՞լ է:

— Դեռ ոչ: Երնջակի տերը՝ տիկնոց հետ երեք օր է մեր տանե է: Այնքան գինի է խմել անկուշութ, թե մատով փորին քիզ տաս, զինին կազզա երեսիդ: Ապագա աներըս՝ Մելիք-Ծահանը ևս հետն է: Բայց նա խոզի միս չի ուտում, կարծես իսկամի զույաթ է: Վարանգայի Մելիք Հովսեփն էլ է եղբար՝ Ծահնազար բեկի հետ, որ մեր փեսան է: Թթված է, կարծես մուկ է կուլ տվել, աշխարհի հարկ ու տուրքի իրենից են պոկում: Էլ ո՞վ, հա՞... Ազուկիսի հարյուրապես Տեր-Թումանու կարծեմ էլի կան, ինքդ կտեսնես քո աշքով: Համեցիր:

Հովսեփի բեկը տագնապով նայեց ներքեռում ժավալված Մուղան մեծ դաշտի մշուշին:

— Իսկ այնտեղի՞ց:

— Զապեցինք Փանահ Ալի ցեղապետի ախորժակը: Վատեգ չկա:

Հովսեփի բեկը զլիսարկը հանեց, զլուխը դարձրեց լնաներին: Հայրենի աշխարհն է:

* * *

Եսայի բեկը Իսրայել Վարդապետին խնդրեց մեկնել Գանձասար՝ նրա պապի եղբայր Ներսես կաթողիկոսին ևս հրավիրելու հարսանիքի:

— Գուցե թե, — ավելացրեց տիսուր, — նաև հորս թաղելու:

Նա վարդապետին ուղեկից տվեց Շոռոթի ռազմագնդի պետ Աղամալու որդի Ռամիկ Ալեքսանդրին: Խճճ՝ Արքահամ Երեվանցուս ևս խնդրեց միանալ վարդապետի խմբին:

Խաշենի Ռւկու Պապ ամրոցում եռուն իրարոց էր: Զի էր զիր խրինջում ինչ-որ տեղ, Հրացան էին արձակում, շներ էին ոռնում: Երբեմն բերդի ավագ դուռն այնպես էր ճռնշում, ասես փլզում էր: Դիզակ մեկնելու համար Ռւկու Պապ են հագարվել Աղվանից տան կաթողիկոս Տեր-Ներսեսը, Երևան քաղաքի պարունտեր Մելիք Մանուչարը, Գեղարքունիքի իշխանները՝ ժառաներով, զինվոր թիկնապահներով: Զրաբերդից եկավ Մելիք-Աստվածապետը և մեկը ճամ-

փառ ընկանք գեսի Դիզալի: Բոլորս ձիավոր էինք, երևի մի հիւգ հարյուր մարդ: Ինձ սրանշացնում էին կանալք և հատկաւ, ևս արդեն նշանվելու աղջիկները: Նբանք բոլորը բացերես էին, կիայ հազնված ու հմտւտ ձիավարներ: Նբանցից շատերը, ինչպես իրենց ամուսիններն ու հայրերը, զենք էին կրում: Ես որ զեռ ոտքս շեմ հանել երիտասարդական շեմից նախանձում էի այս տիկինների ու օրիորդների ազատ լինելուն:

Անցանք Խաշին մեծ զետը: Խաշինի Մելիք-Ապրես իշխանն ինձ ասաց, թե ինքը ուզում է մի կարճ պահով մտնել ոչ հեռվում եղած իր տիրույթ Խնձորեստան գյուղը և եթե կամ է իմ, կարող եմ միանալ իրեն: Համաձայնեցի խսկույն:

Կեսօրից առաջ հասանք Խնձորեստան: Նախ շները տադնապ բարձրացրին: Նեղ զուկակի մեջ քուզուց անող, խստ խոշոր ու մուգ կարմիր հավեր փախան՝ իրենց որձակների ճշշին հնազանդ: Մի քանիսը սակայն ճիւլվեցին մեր ձիերի սմբակների տակ: Գետակ կար, ափին՝ լվացք անող կանայք: Նբանք ևս, հավերի հանգով, փախան դեպի իրենց տները: Արագ ցրվեցին նաև եկեղեցու առաջ ինչ-որ առիթով խմբված տղամարդիկ: Բայց Մելիք-Ապրես իշխանն իր հզոր ձայնով սառեցրեց նրանց:

— Կանչեցեք գյուղապետ Միրզեխանին: Եռաւ: Մեծով-փոքրով հավաքվեցեք այստեղ:

Մելիքի զորախումբը ցրվեց գյուղում: Ճիշեր լսվեցին, նաև ծղրատոց: Կին էր, որ անիծում էր շիմացա ում: Շները, որ հետեւմ էին մեզ, կոնձկոնձալով փախան: Զինվորների մըտրակներից հալածված գյուղացիները հավաքվեցին եկեղեցու հրապարակում: Վազելով եկավ նաև մռայլ-մթնդած Միրզեխան գյուղապետը: Սա փորձեց բռնել մելիքի ձիու սահմար, մելիքը ոտքով խփեց նրա քիթմռութին:

— Բոլո՞րն են այստեղ:

— Բոլորը, տեր մելիք: — Միրզեխանը արյուն թքեց:

Մելիքը գարձավ հավաքվածներին, զոռաց՝ ճանաշում եք ինձ: Ամբոխը շպատասխանեց: Մարդիկ ահից հազել էին միմյանց և սոսկումով էին նայում մելիքին: Այս տեսարանը ինձ շատ հետքրբեց:

— Պասանձեկե՞լ եք: Հարցենում եմ՝ ճանաշում եք ինձ:

Նորից ոչ մի ձայնը իշխանի ակնարկով նրա զինվորներք շալեցին իրենց մտրակները: Դրանք օձի պես սուլելով ոլորդեցին խռնված գյուղացիների վրա: Կանայք վայնասուն բարձրացրին: Դյուզապետը շոքեց փոշու մեջ:

— Արյուն մի՛ արա, տեր մելիքը: Ո՞ր մարդը չի ճանաչումքեզ: Պապանձվել են ահից:

— Հը՝,— փրփրեց մելիքը: — Ճանաչո՞ւմ են... իսկ խառզողի տուրքը շեք տվել: Գոռացել եք, թե լենք ճանաչում ոչ աստծուն, ոչ մելիքին:

Ամբոխի միջից դուրս եկավ բավականին ջահել մի շինական ու դիբ տեկվից մելիքի առաջ, մի բան քայլի վրա:

— Դու մեր հոգեառն ես, — գոռաց նա: — Դու, Մելիք-Ապրես, գո՞ւ... Ես... Ես այն զինվորն եմ, որ Պանձակում քո կողքին կռվում էի թուրքի գեմ: Ե՞ս... Հիմա ես լզիտեմ ո՞վ եմ: Մի պատառ անգամ հող լունեմ, հացի երես չեմ ահսնում շարաթներով:

Մելիք Ապրեսը կրծեց բեղի ծայրը: Կարծես աարսուց: Գուցե թե մեղքի, խղճի խայթոց էր գա: Աչա, մտածեցի ես, ուամիկը երես է առել: Վտանգավոր է: Մելիքը թիշ-քիշ մեղմով ասաց.

— Հիշեցի բեզ, զինվոր: Ուրեմն, բարի տեսանք: Ուրեմն, դու կլինես ևնձորեստանի գյուղապետը: Դո՞ւ, զինվոր: Սակայն ասա, ասացեք մարդիկ, ձեզ հայտնի՞ է, արդյոք, որ ձեր գյուղապետ Միրզեխանը գաղտնի զնալ-գալ ունի Մուզանի կողմերին ավարառություն անող ավազակ Փանահ ցեղապետի հետ: Դիտե՞ք:

Նրա ձայնը արձագանքում էր գյուղի վրա ու գղրդում քարայրներում: Ամբոխը սսկվեց: Զինվորը, որ առաջիւ պես ատելության ցցերով էր նայում մելիքին, շրջվեց դեպի գետնին փոված գյուղապետը:

— Սա՞ սա՞... — նա զետնից պոկեց Միրզեխանին: — Պատասխան տուր, դո՞ւ Դու գործակցո՞ւմ ես մեր թշնամուն, այո՞ւ:

Վայնասուն ընկապ: Դյուղի բոլոր շներն սկսեցին ոռնալ: Զինվորները գետնին տապալեցին Միրզեխանին, գանահարեցին: Մելիքը երբեմն հրահանգում էր: — Առավել... — Դյու-

դապետի ուշքը գնաց: Վրան շուր թափեցին, կանգնեցրին ուղի: Ըմբռին ինքը զբոհեց նրա զրա.

— Խոստովանի՞ր...

— Մեղա՞՛, Մեղա՞՛...— արյուն հազաց զյուղալութետը:— Մեղա՞՛: Կինո՞ Ասպրամ տիկինը երբ ինձնից հեռացավ, ես խելքս տանու տվի:

Մելիքը հրամայեց բերել Միրզեխանի շորս եղբայրներին: Բոլորին կապկապեցին, խոթեցին դարձանի կողովների մեջ, շալակով բարձրացրին մոտակա լեռան զլուխը և այնտեղից կողովները զլորեցին գեպի ձորը: Շատերը սօսկումից համբացել էին, ես՝ ևս: Չոված աշքերով բոլորը նայում էին կողովներին, որոնք թափով զլորվում էին՝ զարնվելով քարերի: Մենք շտապեցինք հեռանեալ այդ զյուղից:

Հետապայում, շատ օրեր հետո, հարցրի ու իմացա, որ կողովների մեջ կապած ու սարից զլորածները բոլորը ջախշախվելով մեռել են, միայն զյուղապետ Միրզեխանն է հրաշքով ողջ մեացել: Նա փախել է Ատրպատական՝ Փանաչ Ալի ցեղապետի մոտ: Չար լեզուներն ասում էին, թե Խորայիլ վարդապետն է զաղտնի խնամել, բուժել նրան և հղել ցեղապետի մոտ:

* * *

Արճադույն ժայռերը մեկը մյուսին հեծած բարձրանում էին մինչև անտառապատ լեռան զլուխը՝ մի աճուրդի անդունդ թողնելով իրենց ոտքերի տակ: Անդունդի խորքում զրմռում էր ուռածելած զետք: Արծիվների դարավոր բներ կային ժայռերի խոռոշներում, որ սպիտակել էին ծերտից, և հեռվից թվում էր, թե վիթխախ տաշտակներով թանձր մածուն են թափել ժայռերի վրա: Դեռի նեղշերտ ափին ընկուղենիների անտառն էր, որտեղ արջն իր օրում մարդու երես չէր տեսնի:

Այդ ժայռեղեն զանգվածը միայն մի բարակ թել կածանով էր կապված շրջապատի հետ: Այնտեղ բնական քարայրներ կային, որոնց մեջ մի ժամանակ ապրել էր նախամարդու: Կիսաշրջանաձև անձավների մեջտեղը, հրաշքով բնությունը մի փոքրիկ տափարակ էր ստեղծել՝ փարթամորեն անած աս-

պապի ու հաղարջի թփերով։ Աշնան դալարիքը բարձրացել էր, ու ժայռի ճեղքից բխող ազրյուրը մի պահ թագավորում էր կանաչների մեջ, ապա գահավիժում անդունդն ի վար՝ ջրափոշի գառնալով թռիչքի ընթացքում։

Առավոտք նոր էր բացվել։ Արևի ցնցուղից ժայռի լանջին ծիածանվել էր ազրյուրի գահավիժող ջուրը։ Կանաչ տափարակում կիսաշրջան կանգնել էին քառասուն, թե հիսուն քրծազգեստ ճգնակեացներ։ Շարվել էին կողք-կողքի՝ ուսերն իրար հպած։ Բորիկ էին։ Այժի մորթուց կոչա քրծեր ունեին, որոնք սակայն հասնում էին մինչև ծնկները միայն։ Նրանց կրծքները բաց էին, մորթե գդակները հազիվ էին ժամկում գագաթները։ Բոլորը զգզգված ու կեղատակուր մորուքով էին։ Ցուրաքանչյուրի ուսից մախաղ էր կախված։ Կրծքերին լանջախաչեր կային՝ արծաթից, երկաթից, կոպիտ տաշած փայտից։

Մենք անազմուկ մոտեցանք հրապարակին, սակայն գեռ դուրս չէինք եկել թանձր անտառից։ Մելիք-Ապրեսը մեղ ակնարկեց առաջ զգնալ։ Հրապարակում խոնվածները մեղ, անշուշտ, չնկատեցին։ Ասպարեզի մեջտեղում տնկված էր մի մարդահասակ երկաթե խաչ։ Անապատականները անթարթ նայում էին խաշին ու հանկարծակի գոշում։

— Տե՛ր, լո՛ւր ձայնի իմում։

— Լո՛ւր, լո՛ւր...

Քարայրից դուրս եկավ մի անապատական, փայտն ահապին խաչ ձեռքին։

— Խոնարհվեց քուրս եկավ մի անապատական, փայտն ահապին խաչ ձեռքին։

Քրծազգեստները լորեցին։

— Եկո՛ւր, սո՛ւրը մեր...

Չորս հոգի պատգարակի վրա բերին սև սքեմ հագած ճգնավոր հորը։ Սա պատգարակի վրա նստել էր ուղիղ ու հանդուզն։ Ահազգու հայացք ուներ և փառահեղ, սև մորուք, որ հասնում էր մինչև գոտին։ Նրա լանջախաչը ոսկուց էր, մատներին ազամանդներ էին շողում։

— Եկո՛ւր, սո՛ւրը մեր...— ավելի եռանդով ազադակեցին ճգնավորները և թափվելով վար՝ սկսեցին իրենց ճակատները խփել գետնին։

Պատգարակը ցած դրին: Յզնակեացների առաջնորդն իշագ Նրանից ու երեք անգամ խաչակնեց հավաքվածներին:

— Նեռ է երևացել Արքահամու հոտի մեջ: Աստված-պահանջում է նրան պատժել երկնային կրակով:

— Բող սատարկի, — գագաղած գոշեցին բոլորը:

— Սուտ է մարդու աշխարհը և ունայն: — Առաջնորդը մատր տնկեց երկնքին: — Ամեն վայելը այնոտեղ է: Երանի ամենիցուն, որք երկնշեն ի տյառնե և զնան ի ճանապարհս նորա: Վատշվեր անապատական Ավագ պիզդը, որ քսությամբ մտավ աստվածքնոտիր հոտի մեջ, մեղսալի աշխարհական լինելն առավել համարեց, քան սուրբ միությունս, և խուսափելով՝ վախեոտարար փախավ Քրիստոսի տնից: Բայց ահա, աստծո ողորմությամբ, նա ընկալ արդարների ձեռքը: Որովհետեւ նա խույս տվեց Քրիստոսի ճառագայթով ողողված ուղուց և բռնեց մեղսալիր բնթացս, հրեշտակները հրամայում են՝ խարույկի վրա այրել պժդալի ու պղծագործ Ավագին: Սուսին, Սուսին:

— Օրհնվի՝ երկնքի կամքը:

Միարանները քարշ տալով բերին մի մերկ մարդու ես ցնցվեցի: Ախր սա հարյուրապես Սուս Ավագն է՝ բարձրահասակ, նիհար: Բերանը խցանված էր ուշարի բբոզվ: Նրան կապեցին երկաթե խաչին: Ոտքերի տակ չոր փայտ ու խոփվ դարսեցին:

— Տե՛ր, արդար է դատաստանը քո:

— Ովքեր դուրս կգան աստծո հովիվների խմբից, կայրվե՛ն:

Յզնակյացների առաջնորդը, որ եղան պես չլապինդ մեկն էր, կայծքարով արեթ վառեց ու դանդաղ մոտեցավ խաչվածին: Սակայն նա դեռ չէր հասել մահապարտին, երբ Մելիք-Ապրեսը թվանկ հրացանը ուղղեց վեր ու կրակեց: Զինվորները ևս կրակ բաց արին: Ժայռերը դղրդացին... Առաջնորդը ցնցվեց, ծխացող արեթը ընկալ ձեռքից: Մի բրձագգեաց գոռաց.

— Զորք եկա՞վ...

Առաջնորդը թուավ գեափի միարանները,

— Վերցրե՛ք գավազանները: Ծուտ...

Սակայն նրա կատաղությունն անզոր էր: Մեր զինվորները

օղակեցին նեղ հրապարակը: Առաջնորդը, սակայն, չկորցրեց իրեն, ձողափայտ հափշտակեց, խոյացավ դեպի մեղ: Եթք-վեց, գոռաց յուրացինների կողմը:

— Մի՛ երկեղեք Քրիստոսին հալաժող այս փարիսեցիներից, արդարներ: Պաշտպան կանգնեցեք ասածու տանը: Եկե՛ք, եկեք ձեր մարմինները պատկեցեք սուրբ նահատակությամբ:

Հանդուզն կանգնեց խաչի առջև, սպառնալով գավազանվ ջախչախել իրեն մոտ հկողի զլուխը: Մելիք-Ապրեսը ձիռ վրայից գոշեց:

— Հնազանդկեցե՛ք, անմիտներ: Նայեցեք, թե ո՞վ է կանգնած ձեր զլխին:

— Իսկ դու էլ նայիր. թե ո՞վ է կանգնած քո զլխին, մահացացու արարած: Իմ զլխավերենում ասավածն է: Մենք հնագանդ ենք միայն նրան: Հեռացե՛ք, իշխան, ու մի պղծիր մեր սուրբ ծեսը:

Զինվորները օղապարան նետեցին նրա վրա: Քակարդ ընկած գայլի պես առաջնորդը մրրկաց, փորձեց պոկվել վզին փաթաթված պարանից, բայց մի քանի զինվոր ձիերից թռան նրա մեջքին, ձեռքերը ուղրեցին: Ճգնավորները, որ սարսափով խռնվել էին մի կողմ, վայնասուն բարձրացրին, փետեցին իրենց մորուքները: Մի երկուսը փախչելու փորձ արին, սակայն նրանց ևս բռնեցին: Մի զինվոր երկաթե խաչին կապկապած մահապարտի պարանեները կտրտեց սրով: Մելիք Ապրեսը իշավ ձիուց, անշտապ մոտեցավ ճգնավորներին:

— Այդպես, ուրեմն: Բռնությա՞մբ եք մարդ հավաքում ձեր միարանության որքը: Իմ տիրույթների մեջ մարդ եք որսում, հա՞: Դե, խռոխիր, ճգնավոր ոհմակազմուխ: Ճշմարիտն առա, իսկ եթե ծոել ես, չնեղանաս դահճապետիս ավելորդ արարողությունից:

Առաջնորդը ոռնաց, բայց ոչ ընկուն:

— Մենք օրն ի բռն ժումում ենք այստեղ, հեռու մեղսապարտ մարդ արարածի ոհմակից: Այս Սուլը վանական եղբայր էր մեղ: Փախա՛վ: Փախավ է՛... Ասում են կատվի փախչելը մինչև մարագը կլինի: Բռնեցինք: Նա պիտի պատժի: Մեր համայնքն արդարների է: Մեզանից ոչ ոք սեփական ինչը չունի, մեր ունեցվածքը հասարակաց է: Մենք պահու

Ենք անցկացնում մեր օրը: Մեզ համար խորթ են աշխարհիկ վայելքները: Մի՛ խանգարի մեղ, իշխան, և մի՛ ալպանիր: Եթակ է մեր կենաց ճանապարհը:

— Մարդ ողջակիզելո՞վ, — քրքչաց Մելիք-Ապրեսը: — Դու կենդանի մարդ ես վառում և ասում շիտա՞կ է: Զէ որ նման բանի համար նույնիսկ աստված քեզ պարտավոր է մահ վճռել: Դու պիտի մեռնե՞ս:

— Մի՛ շտապիր անելու այն, ինչ վերուստ է վճռված:

Ծուռ Ավագը, որի բերանից հանել էին բուրդը, թքոտելով ուշքի եկավ, հեաց:

— Մի՛ հավատա սրան, տեր իշխան: Սրան խորթ է քնական դութը: Սա գող է, մարդ խոշոշող: Տարիներ առաջ, երբ պատանի էի, սրանք ինձ խարկանոք բերին այս որջը: Ահա, ասում է, պահոք եմ անցկացնում իմ օրը, բայց ամեն օր միս է խժում, զիշերները թարուն գինի լակում: Գնում է կուսանոց ու շնանում մայրապետի հետ: Այստեղ միայն գողեր են հավաքված: Ամեն օր գեղջուկներից ուլ, գառ, հավ, հորթ են թոցնում, բերում լափում: Հապա նայեցեք սրանց քարայրները: Այստեղ լափելու անսպառ պարեն-պաշար կգտներ: Ինձ էլ ստիպեցին գողանալ: Զեռքս լզնաց: Փախադերի: այս խառնախմբից:

Քարայրները խուզարկեցին: Այստեղից ոչ միայն շոգեխաշուռ ապիտած մսի կույտեր հանեցին, այլև դարազած կաշիներ, գիստորած մորթիներ, ալյուրի պաշար, ձեթ: Նաև տկերով գինի գոտան: Երկու զինվոր անքալով մի սնդուկ բերին զրին Մելիք-Ապրեսի առաջ:

— Բաց արեք:

Կափարիլը ջարդեցին: Ոսկով լիքը քսակներից բացի, նրա մեջ կանացի աղամանդես օղեր, բազպաններ ու այլ զարդեր կային: Նաև եկեղեցական ծանրագին անոթներ ու արծաթե խալեր երևացին: Մելիք-Ապրեսը հռնուաց:

— Ա՞յս է ձեր ժուժությունը: Գո՞ղ եք, զո՞ղ եք: — Նաքար վերցրեց: — Դէ՛, զարկենք զողերի պարապլուխ այս սուստ սրբին: Դէ՛...

Քարերի տարափը ծածկեց ճգնավորների առաջնորդին: Նրա անշնչացած մարմինը քարշ-տվին ու սթեցին ժայռից ցած: Օդում պտտվող անգղներ իշան ձորի խորշը... Ճգնավորները

աղաղակեցին՝ թողություն ու գութ հայցելով: — Մոլորված էնք: — Թափվեցին գետնին ու վայնասուն բարձրացնելով սկսեցին մեղա գալ: Նրանց ծեծեցին: Եռանդուն էր մանավանդ Սուս Ավագ հարյուրապետը:

Ծննավորների մորուքները խուզեցին, զլուխներն ածիլեցին, դարձրին զինվոր:

* * *

Դինետանը մշուշ է եռում:

Սպիտակ, ծանր շօդին բերան-բեղերի խրձերից ժայթքած Գողթանի զինեդոյի հետ փաթաթվում է խաշած մսի շղարշին, բարձրանում դեպի օդայի առաստաղը ու անձրևում խրախճացողների վրա: Քարե պատերն ու զիհի ծանր այսունգերանները բրտնել են ու նրանցից գլոր-գլոր թորվանք է ծորում լավաշի կույտերի, պանրի ու թոնրում խորոված վայրի խոզի զանգվածի վրա:

Եսայի բեկի խնդրանքով ես եկել եմ Երնջակ՝ իշխաններին իր հարսանիքին հրավիրելու:

Գավառի ավագանուն գտա Շաղկերտի նախարարական ամրոց պալատում: Գավառի տանոււներ Հովհաննես Խանդամիրյանը գոշեց խանդավառ.

— Է՞, Արրահամ Երեանցի, դո՞ւ ես: Իսկ ես ահա ուզում էի ողորժաթառ խմել քո հիշատակին: Ուրեմն՝ ողջությունող սիրեմ...

Հազիվ երեսուն տարեկան է Հովհաննես Խանդամիրյանը: Դարբին է, պղնձագործ մոտիկ Փառակայի պղնձի բովերում: Մականունն էլ ունի՝ Կոռո:

— Ինձ տեսած կա՞ս, Երեանցի:

— Հինգ տարի առաջ եմ քեզ տեսել բովի բարայրում, Հովհաննես Կոռո: Իմ աշքի առաջ մի ձեռքով բռնեցիր գուշանի մանը ու բարձրացրիր զլխիցդ վեր: Տեսել եմ:

— Հետո՞ ինչ:

— Հիմա էլ հայրենի իշխանության հզորությունն ես բարձրացնում: Հայոց զերագահ իշխանը քեզ հրավիրում է իր որդու հարսանիքին:

— Հո՛, հո՛... իրեն ի՞նչը, իմ երակներում իշխանական արյուն շկա: Ես շինականի զավակ եմ, ե՞ս...

— Դո՛ւ, — գոռացին հավաքվածները և ոտքի ելան: — Բա հո անզլուխ չե՞նք մնալու: Երնջակի տանուտերը մեռավ: Երեք օր առաջ թաղեցինք նրան: Ինքդ պիտի լինեալ մեր իշխանը, մեր տանուտերը:

— Ե՞ս, — նորից գոլեց Խանդամիրյանը. ու գինու մշուշը նրա զլխաց թռավ:

— Դո՛ւ...

— Ես հասարակ եմ:

— Դո՛ւ...

Ավագներն ու զորապետերը նրան պոկեցին թախախ, թոցրին վեր, այնպես, որ քիչ էր մնում նրա զլուխը զարնվի օդայի բրտնած զերաներին:

— Ցած զրեք, թե չէ կթռե՞մ...

Նա արցի թաթեր ձեռքով ճեղբեց կապայի օձիքը: Կարերը փոշի անելով ճռնչացին, ոսկրե խոշոր կոճակները թռան: Ջահել ցուլ է, զայրագնեց սասաթիկ:

— Բավակա՞ն է, զուժակոյին Հոգեառներ: Մարմինս կերա՞ք...

Նստեց, երկար լոեց, կանգնեց, որոտաց.

— Համաձայն եմ, եթե... Եթե պիտի ափիրերան հլու հնագանդ լինեք կամ քիւս:

Եազկերտցիներ նրան նորից թոցրին օդ:

Դիշեր էր: Երնջակ ու Գողթան լեռնակուտակ աշխարհի վրա կեռ յաթազանի պես կախվել էր կիսալուտինը ու, քած էշի թրիք տեսած որձ ավանակի պես, մեխվել, մնացել: Երկընքում մի բերան սրբելու ամպ չկար: Ռամիկ տանուտերը բորբոքեց հանկարծ, կպագ Նախիջևան քաղաքի պարոնտեր իշխան հարիսիմոսի օձիքին:

— Թո հոր, քո պապի քաղաքում, մեր քաղաքում պարսիկ վաճառականներ ես հանդուրժում, հա՞: Դիտեմ, հաճախ ես գնում Բաղրամն Հեղդար Ալիի կանչին՝ ոսկեփայլ կարթին խարված ձկան նման:

Իշխան Խարիսխմոսը ժանր, լերկ գլուխը նույնիսկ լբարձրացրեց, մոլտաց ներանձնավոր՝ մոռւթը խաշլամայի սինու մեջ խոթած:

— Առեսուրը աստված շունի, Հովհաննես... Ուշքի եկ:
Խանդամիրյանը նրա ասածները լաեց, զինու կուլա էր
քաշել պլախին: Խմեց... Թուխ, ոլոր բեղերը ծծեց, սրբեց կա-
պայի թերով:

— Գիտեմ, գերագահը կհաճա, ինձ ձեզ վրա իշխան տես-
նելով: Ուրիմե, եզան եման ենթարկվեց լժին՝ կամքիս, հլու
եղեք...

Այսպանին մի հիսուն անձ էր՝ գարբին, քարագործ, հյուսն,
պղինձ ձուլող, նախրատեր ու շերամորդ ծաղկող: Ցղնայի
զորաց զլխավոր Ստեփանոս հարյուրապետը բխկաց կուշտ
ու կուռ, մատով սղալեց երկկողմ սրած բեղերը: Ողջ կյան-
քում սեփական հող է երազել: Դրանից է, որ նրան Անհո-
ղին էին ասում: Հացի կարոտ, հողից զրկված գեղջուկի զա-
վակ է, քսան տարի որր ու քաղցած թափառել է աշխար-
հից աշխարհ: Նա քաշեց Հովհաննես Կռողի թեր:

— Իսկ դու, տանուտնը մեր, երկյուղո՞ւմ ես այդ Բազր-
գան Հերդար Ալուց: Հի՛, Հի՛, Հի՛...

— Չո՞ո ու ցավ: — Հովհաննես Խանդամիրյանը զնաց նրա
վրա: — Չէ մի քո բութ զիխից եմ երկյուղում, Անհողին մու-
րող: Պատերի տակ, քո ատոր ծագումի բերումով, խայթում
ես կրունկս, թե ինչո՞ւ եմ ես նոր կին առել: Թեզ ի՞նչ, տռած
խող, օրինավոր կինս վեց ամիս առաջ հոգին ավանդեց: Իսկ
ես, իսկ ես...

Պարտետեր եարիսիմոսը, որ Բագրատունի էր, դարձավ
ինձ:

— Ի՞շո՞ւ պախարակել նմանին, խոզա Արրահամ Երևան-
ցի: Կինը մեռել է: Բա ջանել ամո՞ւրի մնա: Ամուսնացել է
ինձորեսանի տանուտեր Միրզեխանի ձեռքից փախած Աս-
պապ տիկնոջ հետ: Մի շաբաթ առաջ:

— Ի՞նչ, — շամեցի ես:

— Աստվածային է Ասպապ տիկինը...

Նույն հանգով Հովհաննես Խանդամիրյանին պաշտպա-
նեց եան Նախիջեան գյուղագավառի պարոնտեր Աստվածա-
տուր իշխանը:

— Հա՛, Հա՛: Ինչ պախարակելի բան է, է՛...

Աղամալու որդի Ռամիկ Աղեքսանդրը, որ Շոռոթ գյուղա-
քաղցրի դորագոկատի պետն էր, մշուշի մեջ գուլալ երգեց:

Թառերե Չինի,
Կարմիր գինի,
Խճճեք՝ մեզ անուշ լինի...

— Ախնի՛, լինի՛, — գոռացին բոլորը:

Ազուլիսի ավագ քահանա Տեր-Թուման զինված էր ոտքից
գլուխ, բերանը զինի չէր առնում: Ինձ հարցրեց՝ Հավանո՞ւմ
ես այս զինաբրութը: Աևացի՛ այս:

— Ե՞ս էլ, — ասաց նա: — Բայց ես շեմ խմում: Հենց որ
պոռշս կպցնում եմ զինուն, սիրու խառնում է: Ի՞նչ դրժ-
րախտն եմ ես:

Նա հրաժարվել էր քահանայությունից, դարձել աշխար-
հազոր: Գերազա՞հ իշխանը Մելիք-Ավան-Եղանը նրան հարյու-
րապետի աստիճան էր շնորհել: Բայց առաջվա պիս նրան դարձ-
յալ Տեր-Թումա էին ասում:

Բոլորի զլիսի վրայով թռավ Հովհաննես կոռողի կոփնչը:

— Մի՛ բորբոսնեք, է՛լ, ոտք պահեցեք ձեր թրերն ու աստ-
ծու կողմից տղամարդուն տված բնդմնավորող ուժը:

Դուրս թռավ օդայից, ետեսից դուռը բաց թողնելով: Սառը
և թարմ աշնանային հովեր մտան ներս: Ոչ ոք չհամարձակ-
վեց տանուտերի բաց թողած դուռը կրնկին դնել: Տեր-Թու-
ման թռավ, կանգնեց աթոռակի վրա:

— Երբեք ընկճվե՛լ: Հայոց պետությունն իր անկախ վի-
ճակով հենարան է համայն ազգիս հայոց: Եվ ոչ երկյուղեք
ոչ պարսիկից, ոչ թուրքից, ոչ սատանայից: Երբե՛ք...

Խանդամիրյանը ետ եկավ, ձեռքերի վրա բերելով իր նոր
կնոջը՝ Ասպարին: Ես զարմացա՞ քնրշացել է ինձ լավ ծանոթ
տիկինը քողերի մեջ, ծամկալը ոսկե, ականջները պերճացած
մարգարիտներով: Նրա մանրիկ տոտիկները շքեղացել էին
սաղրի քոշերով, որոնք բուրում էին ուրցի նման: Հովհան-
նեսը համբուրեց նրա փորբիկ բերանը, գոլեց:

— Երկրպագնե՛ք զեղեցիկին, պտղաբերին: է՛լ, զորա-
կաններ, է՛լ մարդիկ, ոտքի՛:

Բոլորը վեր թռան տեղերից, ես՝ ես: Դինու գավաթներ դեմ
արին տանուտերի գրկում պերճացած Ասպար տիկնոջը: Սա
ժպտում էր զարնան արշալույսի հանգույն: Գավաթներից մի
երկու կում փորձում էր, ապա համբուրում իր ամուսինը բե-
ղերը: Մենք ցնծում էինք:

— է՛լ, է՛լ,— զոշեց Հովհաննես Կռողքը: — Աստված բարի է, մեծ է, որ ինձ արժանացրել է զրախտի հրաշքին: Ես երեսուն տարեկան եմ: Ես զավակ եմ ուզում, Ե՞ս, Ե՞ս... — Մոտեցավ Տեր-Թումային, բոնեց նրա թուխ, կարճ մորուքը: — Եկեղեցու սևազգեստ շնագայլերը անիծում են ինձ, Հա՞՛, թե ինչու ես կին առա օրինավոր ամուսնուն լքածին: Եկեղեցին ինձ շի պսակում: Թքա՛ծ: Իսկ ձեր պաշտած Քրիստոս աստվածը ընդունակ շեր ջերմացնելու մի որբեալրի կնոջ շեքն անգամ: Ես ձեր... Ես ձեր կարզը Հորե՛մ: Տասնվեց տարեկանից կովում եմ երկրի համար, եկեղեցու համար: Երկիրը ես պահեմ արյունովս, վայելքը վանքի կոտած էշերը լափե՞ն, Հա՞՛:

Երկար ետ ու առաջ քայլեց՝ իր ետևից տանելով բոլորի լարված հայացքները: Նստեց կնոջ դիմաց:

— Կի՞ն իմ, այս մարդկանց հասկացրու, որ առաջին կինս անպտուղ մահացավ, զավակ շլողնց: Ինչպիսի՞՝ անհեծք, որպիսի՞՝ դժբախտություն: Դու ինձ, հավատացած եմ, զավակներ կընծայես: Օ՛, հրեշտակ իմ: Օ՛, կյանք իմ:

Բոլորը թեթեացած հոգոց հանեցին: Ինձ համար զարմանալին այն էր, որ շնորհներով առատ Ասպարագ տիկինը շեր խոսում բնավ: Միայն երբեմն ժպտում էր ինձ ժանոթ հմայքներով: Տեր-Թուման վստահ մոտեցավ Խանգամիրյանին:

— Հանդարտվիր, զորավար: Ինքս իմ ձեռքով կհատեմ այն լեզուն, որ կփորձի թույն շնչել քո անվանե ու պատվին:

Սքանչելի օր է: «Դիշերից մինչև ցառավոտ խնճոյքով արքենան և առավոտյան սլանան թշնամեաց վրա, որպես առյուծներ»: Զհիշեցի, թե նման բան որտեղ եմ կարդացել:

Հովհաննես կռողն իր կնոջը զրեց բարձր թարերին, համբուրեց նրա կուրծքը:

— Ասպարագ իմ, գեղգեղա՞:

Դե, ինչ կա որ, գեղգեղա, երխուփի հովազ: Չէ որ Երընչակ ու Գողթան տանն ես՝ զիննետ ու երգնետ և անխաթար՝ հայի իր ոգով: Տեր-Թուման ուրախ ու բարձր ասաց.

— Գնանք եկեղեցի: Գնանք պսակ անենք ըստ օրինաց:

Մի քանի զորական իրենց ուսերի վրա դրինք Ասպարագ տիկնոջը: Բոլորս զուրս եկանք օդայից: Կապուտշիդ լեռան զույգ գագաթների արանքից ժաղում էր հայոց արևը՝ աշնանային

խոնավ ու աշնանային ցորեն հատիկի ծլարձակմամբ պըտ-
զարաշխ: Հզոր շողացին անհնարին ամուբն Սրնջակ բերդի
ատամները՝ Եղղկերտ զուգաճորդի պահպանությամբ, սարա-
վույթ տեղ, մեն մենակ երկինք միտած ժայռեղին բարձունքի
վրա: Բերդի շուրջ պողպատե կապարի նման երնք զուգահնո
պարիսպներ են գոտևորվում՝ կանգուն և սպառնալի: Ժայռի
կատարին շատ ավաղաններ են կտրված բարե զանգվածի մեջ:
Դրանց մեջ ըրի պաշար է կուտակվում: Թիշ հեռու Սրնջակ
քաղաքն է, ներքնում՝ Զուղան, արևելից կողմը Ապարաններ
ավանը: Սրնջակ գետը, որ վերներում հեղ ու խոնարհ է՝
ալպյան արտաների իր կանաչ անկողնում, այստեղ զառ-
նում է փոթորիկ, իր ոգեսրող աղմուկով թնդացնում Քոնա
զյուղը, պերճաշուր Արևիսը, երգով զնդացող Շոսոթը, ապա
Փորադաշտը, ուր ասում են Նոյը փորեց առաջին զրառուն,
Խոշկաշենը՝ Հոշակիված իր ծիրանագույն կտավով, ծայրին
Կզնուտ քնարահարների զյուղը: Գետն այստեղ ճիպ-ճերմակ
է և փրփրուն՝ Ասպասպ տիկնոջ ծոցերի նման:

Արևից շողացին բերդի բարեծաղիկ աշտարակ-մարտկոց-
ները:

— Է՞լ, ուժի ու հայոց փառքի անկոտրում Սրնջակ, ող-
քույն...

Սա աղաղակեց Հովհաննես Խանդամիրյանը: Դարբնի կոշ-
տուկներով պնդած ձեռքերը տարածեց: — Պանծա՛, արևա-
ծագ: ԽՎ արեգակ, միակ տառված մեր, ցեծա՛...

Կուլայից զինի Հեղեց մեր կողքով վազող նրնջակ զիտի
փրփուրների մեջ:

— Պաղապարվի՛ր, Հող մեր, զուր մեր:

Մտանք եկեղեցի: Մեզ տեսնելով, տաճարում եղած երեք
քահանաները փախան: Տեր-Թուման Ասպասպ տիկնոջն ու
Խանդամիրյանին կանգնեցրեց բեմում, պատից պոկեց երևի
կես փթանոց մի պղնձի խալ, կանգնեց զույգի մոտ:

— Եվ եղիցեն երկորեանք Հոգի ու մարմին մի, Ամեն:

— Եղիցի՝, — զոշեցին բոլորը: — Պակն ընդունելի՛...

Թափորով գուրս եկանք:

Սրնջակ գետի Սրբադան ջրով մենք օծեցինք նորապսակ-
ներին, ապա ինքներս մեզ: Եարժվեցինք դեպի պղնձե բոզե-
րը: Տանուտերը ուրախ կանչեց:

— Ե՞, Հե՞, Հե՞յ, Պղինձ Ղազար, արթո՞ւն ես:
Ժայռածորը արագանքեց գանգի պես:
— Հէ, Հե՞յ...

Ծների ո՞նմակ գամփոեց դեպի մեզ՝ մի-մի հովազ: Ես սոսկացի՝ մի՞թե Վարանդալի Խրխուփի ձորի հովազն է ձագահանած եկել այստեղ: Խանդամիրյանը երկու ձեռքի ցուցամատերը խրեց բերանը և այնպես ուժգին սուլեց, որ մոտակածուից գառան չափ մի կարմրագլուխ ցախաքլոր պոկվեց, թոխը պահճին ծրտելով մի ողջ սպիտակ թիթեռ: Ծները ետքաշվեցին:

Իշխան Աստվածատուրը թքեց գետի երեսին: Թուքը կպավքարից կախված սև մոշաթփի ու մնաց: Նրա վրա մոշ պոտղի մեծությամբ ճանճարուեր հավաքվեցին և թուքի գոնդը, որ մեծ էր, խժուցին մի ակնթաշթում: Երեաց մի հսկա մարդ, մորուքը սև ու գանգուր, վրան մրափոշի: Տեր-Թումա հարյուրապետն ինձ բոթեց, թե ուս է Պղինձ Ղազարը: Պղնձագործը ձեռքին ժանր կռան ուներ:

— Բարով եկաք: Կարծեցի շներս վազրի վրա գնացին:
— Լինո՞ւմ է:

— Մեկ-մեկ, վազր զազանը պարսից կողմերից է զալիս: Մեր էս Կապուտքիոյի լեռներում ամունը քրաէծեր թրթաճանչների պես վխտում են: Հիմա ձմեռը մոտ է, քրաէծերը իշնում են Երասխի կողմը: Գարնան սկզբին ետ են զալու հզիացած, էստեղ ծներու: Նրանց հտկեց էլ վազր է զալու: Աշովս տեսել եմ: Բա ո՞նց:

Սա Դարան լիռն է՝ ոտնատակերը կտրտված, ոսկորները ցցած գոմեց: Ջրաղացի ու երկանքի քարհանքեր են: Պղինձ Ղազարն ասաց.

— Այս մեր քարը նույնիսկ Սպահան են տանում, Բաղդադ էլ: Դե, մոտենանք մի քիլ:

Զորապետերի գինովությունն անցել էր, տեղի տվել թառամած հոգնածության: Հովհանեսս Խանդամիրյանը կնոշն ուզարկեց տուն: Ակսեցինք շրջագայել քարհանքում: Երեշակ քաղաքի հին ավերակները մնացին մի փոքր ցածում՝ թփուտներով խեղպված տափարակ տեղ: Շողաց Շազկերտի եկեղեցու պղնձե խալը, որ քարձր էր: Մենք քացի Ստեփանոս Անհողինից, երեսներիս խալ հանցինք: Միում են այս

Շաղկերտ գեղքավանի ութ հարյուր տեսնը: Ամեն ծխահարկի տակ երեսուն, դեռ ազելի շունչ կա: Են աշխարհ ևս գու, Շաղկերտ: Եվ ոչ միայն դու: Այս երեջակ և Գողթան գավառներում հայի բատնչինդ հազար գերդաստան կա: Այստեղ աղջիկներն ու կանայք երեսները քողով չեն ծածկում, բաց են, ժպաներս, կրծքները լիբը:

Պղինձ Ղազարը մեզ մոտեցրեց վուշի թելից հյուսած խոռոր պարկերի, որ լիբը-ժանր էին:

— Վառող է, տեր տանուտեր:

— Չո՞ր, — ցնծաց Հովհաննես Խանդամիրյանը:

— Կարող ես ատամիդ տակ փորձել:

Պղինձագործը նրան ու մեզ մի-մի հրացան նվիրեց:

— Իմ սարքածն է, — ասաց կարծես ի միջի այլոց: — Չորս հետ գեռ Դավիթ-Բեկի բանակում էի հրացան ու թրնդանոթ պատրաստում: Չեմ մոռացել:

Նա մեզ տարավ իր տունը, որ հենց իր բովերին կից էր: Դեղձենիների վրա տակավին պտուղ կար՝ քաղցրացած, կծկը-ված՝ մի-մի բուռ մեղք: Հենց այգում նա զինեսեղան բացեց: Դեղձ կտրտեց, լցրեց զինու տունի մեջ: Նաև սերկեիլի կորիզ տվեց մեզ բուռ-բուռ:

— Դինին խմելուց կորիզը ծամեցեք, որ շարքենաք, — ասաց տնավարի:

* * *

Ես Արրահամ Երևանցիս: Ես... Դե ես եկել եմ Դիզակից, որ Հովհաննես Խանդամիրյանին հրավիրեմ Եսայի բեկի հարսանիքին: Ինձ այստեղ հզեց անկողնուն գամված գերագաւը: — Դնա բեր: Դուցե թե թաղմանս էլ մասնակից լինի: Եվ ահա Հովհաննես Խանդամիրյանը թափորով մեկնում է: Դնում ենք դեսի Դիզակ: Կանգ առանք թանձր անտառի մեջ: Ես պառկել եմ ժառերի տակ, այծենականով կոլուված: Դիշերվա կետեն ինձ արթնացրին: Զորապետերը կանչում են: Աշքերս ճմուցի: Քնած տեղիս խոտը փոռ է ընկել, իսկ գրա մեջ ուտիմների կուտակ կա, որոնցից զզվում եմ: Երկնքում աստղեր չկան, երկինքը ուն է թանձր ձյութի պես:

— Մարիս վառե՞մ, — հարցըրի ես:

— Պետք չէ, — ասաց Ռամիկ Աղեքսանդրը: — Բուիր
փեշ:

Խարխափելով հասանք Հովհաննես Խանդամիրյանի վրա-
նը՝ հսկա շինարիների տակ: Մարիսեր էին ծխում և ես տեսա-
շատ մեծ մի կազնի, փշակում խմորի փոքր տաշտակի լափ
խալքար, որին ժառը բարձրացնում էր վերև: Ուրեմն, սա Նո-
րակինունքի անտառն է:

Ութ, թե ինք ճի խոնարհ կանգնած էին կազնու մռատ: Մեկը
նույնիսկ մռութը տնկել էր վեր, որ խաշքարը լիզի: Երեխ
աղ է ուզում: Բայց մռութը չէր հասնում: Զիերը բոլորը թամ-
րած էին: Զին մզկտաց: Ավելորդ ճիզ: Նման է, թե տատասկից
թուզ քաղես, կամ մորենուց՝ խաղող:

Հովհաննես Խանդամիրյանը ինձ ձեռքով արեց՝ գնում հնք:
Գիշերվա մեջ, միակ մարիսի կարմիր լույսի տակ, խիստ խոր-
հըրդավոր էր նրա այդ մռայլությունը: Միայն հասկացա, որ
ինքս էլ նրա հետ զեալու եմ դեպի Կապանի կողմերը, այն-
տեղից Դիզակ: Դե, թող այդպես լինի, ինչ կա որ: Նա ինձ
ասաց.

— Լոիր Արրահամ Երևանցի, ինչ կտեսնես ու կլսես՝ զրի
կառնես թղթի վրա:

Ես անշափ ուրեցի նրա վստահությունից: Ես արդեն վա-
ղուց եմ սկսել զրել այն անցքերը, ինչին ականատես եմ կամ
ականչալուր: Բայց ես՝ տրուալ թշվառագույն վատարախտս ու
եմ կրթյալ ու հրահանգյալ քերթողաց համալսարանի իմաս-
տով, նաև չեմ վարժյալ վսեմագույն սովորութերի ճեմարա-
նում, այլ զրում-շարահյուսում եմ ըստ բնական բնդունակու-
թյան իմ:

Այսպես մենք զիշերվա սև փեշերը մեր ձիերի գլուխներով
ու ոտքերով պատառատելով, ինչպես ծխի ամպը, գնացինք:
Մեր առջևից գեռում էր Հովհաննես Խանդամիրյանը՝ կողքին
կինը, նույնպես ձիավոր: Նրա ուրվականն էի միայն տեսնում
և ձիու գավակը, որ երրեմն փայլում էր: Իմ քունք տանում էր
ու ես աղոթում էի աստծուն, որ լզցի ինձ ձիուց քարերի վրա:

Դողթանի Մեսրոպական գյուղի պահակ-գետքերի կանչերն ինձ արթնացրին նինջից ու ես տեսա, որ արևը ժագում է Կապուտջիդ մեծ լեռան թամրից, և որ նա մի տեսակ գեղենավուն սպրդնած է: Մեր գեմը ելավ Ստեփանոս Անհողին զորապետը՝ իր գեղջուկ ռազմիկների հետ: Մեզ հաց ու ջուր տվին, ոչ թե խաշով, այլ մերկ սրբով ողջունելով մեր գալը մի քիչ ծոված եկեղեցու բակում, որ, ասացին ինքը՝ Մեսրոպ Մաշտոցն է կառուցել: Հորթ մորթեցին մեր պատվին: Մեր խուրջինները լցրին հորթի եփած տաք մսով ու հաճարի հացով:

Մտանք մի խոր ձոր, որտեղ շատ աղբյուրներ կային, սակայն այնքան սառն էին, որ մատդ մեջը խոթես, իսկույն կոպիտակի: Վերևի սարերում, որտեղ մի ցաքափուշ անգամ շես դտնի ատամներդ խորգելու, աշնանային ցրտեր էին: Ես նույնիսկ կարծեա մրսեցի:

Այսպիս գնալով, մենք երկրորդ օրվա երեկոյան մտանք Շահապոնիք գետի նեղ հովիտը, զժվարով բարձրացանք նրա խորիսորատը: Հովհաննես Խանգամիրյանը կնոջն ասաց.

— Տեսնո՞ւմ ես, սիրելիս, գետը հեղ ու հանդարտ է: Բայց գարնանը այնպիս է վարարում, գազազում, որ ուղտ էլ է կուտալիս:

Ասեմ, որ մեր այս մի տոհմավագը, թեն ջահել էր ու հոգնոր կոշման շէր, սակայն գանգուր մորուք ուներ, որ գուցե թե խուզես, մի զույգ թաթպան զանա: Դա նստել էր նրա լայն կրծքին, որ հաճախ կիսաբաց էր, թխավուն ու մազախոյվ:

Գետն անցանք: Ես իմ ոտքերից հանեցի ճտքավոր կոշիկներս, որոնց մեջ ջուր էր լցվել ու քամեցի: Խանգամիրյանն ստուգեց՝ հո բեռները լին թրջվել: Տասներկու խոշոր ջորինների վրա, անշրանցիկ թաղիքե կապոցների մեջ հրացան ու փամփուշտ էր: Լավ է՝ չեն թրջվել:

Օրվա վախճանն էր: Արեք թառել էր Շահապոնից խոր կիբճի արևմտյան եղրագծին: Զիերի ու ջորինների ստվերները երկարեցին: Հաղվարեալ էինք խոսում: Մտանք գետի ձախում եղած մի նեղ տափարակ, որ ամայի էր: Խանձված ժայռը ողողվել էին մայրամուտի կրակներով ու թվում էր,

թե ձորը հրդեհվել է։ Ես ևանդամիրյանին հարցրի՝ հեռո՞ւ է մինչև առաջին զյուղը։ Նա զրանից կարծես աշխուժացավ։
— Լուսաբացին կհասնենք Միջնաակ։
— Ծամփի կե՞սն է, — հարցրեց Ասպար տիկինը։
— Կեսից էլ քիչ։

ևանդամիրյանն անհանգիստ էր, շուտ-շուտ շորս կողմն էր նայում։ Նրա մորուքը, կարպետին նստած կատվի պես, թեքում էր մերթ աջ, մերթ ձախ։ Եթե նա այդպես անհանգիստ է, ուրեմն վտանգ կա։ Բայց ումի՞ց։ Ա՛խ, Հա՛ Ասուպատականի ցեղերից, Զառչի Փանահից։

* * *

Մութը միանգամից փաթաթվեց մեզ ու աշխարհը լցվեց տագնապի ձայներով։ Անտեր անդեր, անտեր քամի։ ևանդամիրյանը ձիուց իշավ, կանգնեց մի ազրյուրի մոտ։ Մենք ևս իշանք։ Զորիների բեռները վերցրին, գարու պարկեր հագրին նրանց ու ձիերի զլուխներին, փորքաշները թուլացրին։ Նստեցինք քարերի։ Նեղ դաշտակում կանալը լրիվ խամրել, կծկվել էր, հողն իր ժանր ամայությամբ դիակի էր նման։

Դիշերը անզզի պես իր սև թեսերը տարածեց մեզ վրա։ Ինձ թվաց, թե ընկել ենք թակարդ։ Երկինքը բարձր էր ու նրա գորշության վրա հաղիվ մի երկու աստղ էին ճպում։

Լուսաբացը ճեղքեց վաղորդյան մշուշը և ես յոթ-ութ հսկա ընկուղիներ տեսա մեզնից ոչ հեռու։ Դրանց կատարները դեռ չէին սակեզօծվել։ Ներքեռում խաղողի այգիներ էին ոլորվում։ Թփերը արդեն խանձվել էին։ Աշնան ցորենի պատառապատառ արտերը կանաչին էին տալիս։ Այս Շահապունիք զավառում ութօսուներեք զյուղ կա, բռլորն էլ իշարկե, հայի։

— Հի՞ն զյուղեր են, — հարցրի ևանդամիրյանին։ — Եկեղեցիներ ունե՞ն։

— Ոնց որ մեր աշխարհից Սինես, — խոցեց ևանդամիրյանը։

Երեաց մի շինական երկու այժ առաջն արած։ Մեզնից մինչև նա հաղիվ մի ասպարեզ տարածք էր։ Շինականը բռքիկ էր, ներբաններին ու կրունկներին հաստ ճարեր, որ ինդակալած էին։ Կոշտ կտավից, որ տանու դործ էր, կարճ-փողը վարտիկը ժանրացել էր անհամար կարկատաններից։

Այծենի բանկոնակը հաղիվ էր ծածկում նրա հուժկու կրծքի ու թիկունքի մի մասը: Գանգուր մորուքը նման էր քարամամուռի: Մեզ տեսնելով մարդու աշխերում ուրախ զողեր ցնծացին, հանեց թաղիք գդակն ու զլուխ տվեց: Նրան ողջունեց Հովհաննես Խանդամիրյանը:

— Բարի լույս, մարդ, որ արդար ես:

— Բարին ընդ քեզ: Արդարը դու եղիր: Նայիր որ այծերիս ամբակատակ չանես:

— Ոտքերիդ, տեսնում եմ, փայտե սանդալներ են: Ազքա՞ւ ես:

— Աղքատ ենք ողջ գյուղով,— արագախոսեց գյուղացին: — Ի՞նչ է, մեր ցավին տեղյակ չե՞ս, պարոն:

— Զեզ ցավ պատճառողը անշուշտ, Սարիջալու Ջառչի Փանահն է:

— Նաև նա,— ասաց գյուղացին: — Եան սերմ է: Իրեն խան է հուշակել: Ջինված շափարներ է ուղարկում մեզ վրա: Մենք գյուղովի նրա սարսափի տակ ենք, նրա էշը:

— Հետո, — մթնդեց Հովհաննես Կռողը:

— Է, պարոն, — թթվեց գյուղացին: — Մեր ցավը առաջդ թափեմ, որ ի՞նչ: Ի՞նչ կարող ես անել: Ջառջի Փանահը բկներս կտրում է քոռ դանակով: Մեզանից շատերը տուն ու հող թողած փախել են, հիմա էլ են փախչում: Թոշվոր ցեղերի աշք ները լույս, Պարսկատանից գալիս, նստում են մեր հողերում:

Հովհաննես Խանդամիրյանը հարցրեց տերունական հարկերը ժամ՞նը են:

— Թվեմ, շես հավատա, պարոն տեր, — կծկվեց գյուղացին: — Ես մի տուն եմ: Հա, մի ժուխ եմ, մի երկու-երեք այժով: Մեր տանը թաղնած հարկահան հային միայն մի տարում ես վեց տիկ զինի պիտի տամ, նաև յոթ ձիարեռ ցորեն, մեկ պահար, հինգ ոշխար, մի լիտր շորթան, չորս լիտր աղ, մեկ փոխան, մի զույգ զանդապան, մի զույգ զուլպա, մի զույգ տրեխ, խոնջան, զոտկալի ժապավեն, երկու ունկի վառդի զին, երկու ունկի կապարի զին, երկու ունկի կանեփ, հինգ ունկի ձեթ, հինգ հատ պտուկ, երկու շերեփ, երեսուն գդալ. շորս թի, երկու կողով, վեց ցախավել, երկու դահուկ, շորս հավ, երկու աքաղաղ, տասը սարակ, վեց հարյուր տասն

և երկու զուրուշ ատակ, տարին երկու անգամ ունեցած ոչ-խարի կաթը՝ գարնանը պանիր շինելու և աշնանը մածուն բռնելու համար: Այդքանը տալիս է միայն մի տունը: Գերադասելին ման է: Բայց մեզ մոտ մեռնելը ավելի զժվար է: Մեռածի համար ևս պետք է դրամ վճարես հարկահանին: Հողը հայոց իշխանին է, ասում է հարկահանը, եթե քու մեռելը ուզում ես թաղես, հողիս գինը տուրու Ալսպես՝ մեռնելն էլ բան չէ, ապրելն էլ:

Խանդամիրյանը, որ ինձ պես, գուցե ավելի ցավով լսում էր միջնաակցու ողբը, համբերությունից դուրս եկավ:

— Եղ շան ժիժ կերած իշխանին ինչո՞ւ չի զսպում մեր զերագահը: Քանի գլուխ ունի իշխանը...

— Յոթ, — գոռաց հովիվը: — Յո՞թ... Մենք անգլուխ ենք: Այս, ոտքեր ունենք, գլուխ ոչ: Իսկ մեր գյուղի տեր Շահնազար բեկը յոթ գլխանի գն է:

Միջնաակը բավականին խոշոր գյուղ է, մեջը վարար աղբերակ: Տները հին են, բարաշեն, բարձր պարիսպներով, անցք-լուսամուտներով: Նեղ դարպասի ետեից կատաղի հաշաց մի շուն: Մոտակայքում կով բառաշեց: Մեր ձիերը հազիվ էին ոտքերը հանում ծնկահար ցեխից:

Կանգ առանք եկեղեցու մոտ, այժմարածն էլ մեզ հետ Մի տասը մամոռու խաշքար բռունցքների պես ցցվել էին հողից: Այժմարածը «Հո՞-Հո՞» գոռաց: Տները կենդանացան: Դարպասներից կովեր դուրս արին: Երևացին կանայք, աղջիկներ՝ զրի կուլայով, սափորով: Ետապեցին գետի ազրյուրք ես նկատեցի, որ այս թշվառներից ոչ ոք համոզված չէ, թե մինչև վաղը ողջ կինի: Տե՛ր աստված, այս ինչ դժոխային զիհակում է ապրում այս գյուղը: Եվ մի՞թե միայն սա:

Նստահցինք խաշքարերի պատվանդաններին, ոմանք հենց գետեին: Ասպապ տիկնոց համար ձիու թամբ զրին Հանեցինք ու սկսեցինք ուտել հետներս բերած շոր լավաշը, գաթան՝ պանրի հետ: Ինքս ինձ ասում էի՝ ինչո՞ւ այս գյուղը զինված չէ: Դեն շպրտենք հազար տարվա հնացածը՝ հավաք քո ապրեցուցանն զքեզ: Ո՛, ո՛շ, զենք քո ապրեցուցանն զքեզ: Այ, հզոր զինված են Արցախը, Սյունիքը Երնջակի ու Գողթանի գյուղերը, էլ չեմ ասում Խաչենի ու Դիզակի մասին: Իսկ այս

ձորի մարդիկ, այս անգլուխ ոչխար են, կթան կովեր՝ ծիծերը օտարի ձեռքի:

Խաչքարերի ստվերները, որ ձգվել էին դեպի արևմուտք. սկսեցին փոքրանալ, կծկվել: Օրը սկսվեց: Տղամարդիկ էլ երեացին: Բոլորը գլուխներին սև թաղիքն տափակ գդակներ ունեին: Կոշտ մահուդից խիստ կարճ նրանց տարատները ծվենված էին, ինչպես այժմարածինը, իսկ բուրգը դեպի գուրս կարած մաքենի բանկոնակները կարծես շան ռեխ էին ընկել: Շատ թշերը տրեխ կամ մուճակ ունեին ոտքերին: Միայն կարելի էր զարմանալ, թե ինչպես են այս մարդիկ քարշ տալիս իրենց կյանքը և շեն ճտակուր լինում:

Հանկարծ գյուղից ծայրից գոռոց լսեցինք:

— Է՞, հ՞... Ոչխարը տարա՞ն: Տարան ա՞...

Թոթարերը երեաց խելագարի պես: Նրա երեսն արյուն կար, մորութը զզզզված էր: Արյունը ներկել էր նաև նրա բաց կուրծքը: Նա օրորվում էր, մի կերպ հավաքում շունչը, նորից ողբում:

— Տարան ա՞... Գետի էն կողմից եկած հիսուն ձիավոր դաշտ...

Տներից գուրս թռան տղամարդիկ, կանայք, երեխաներ: Քոլորն էլ սիրտ ճմլող աղաղակով:

— Ի՞նչ, ի՞նչ...

Տավարածը ետ քերեց դեռ գյուղից շնանած նախիրը: Կով ու մողի բառաշում էին՝ թրբելով, շները ոռնացին: Հովհաննես Խանդամիրյանը արմունկը հենել էր խաչքարի գլխին, բներանը մի քիչ ծռած, հոնքի մեկը կեռ նայում էր աշից խելքները կորցրած մարդկանց: Ես տեսնում էի, թե ինչպես է զդածգում նրա աջ այտը: Իսկ ձիերը գարի էին խժում եռանգով: Վերջապես նա տնկվեց ահեղ:

— Ի՞նչ եք վայնասուն անում, թշվառականնե՞ր:

Սև զանգվածը տատանվեց, սառավ սիանզամից: Տղամարդիկ ապուշ հայացքներով նայեցին նրան:

— Կնիկարմատնե՞ր... Ես ձեր խա՛լը թաղեմ: Ինչո՞ւ շեք դեմ ելում ձեզ կողոպտողներին:

Նրա ակնարկով Ռամիկ Աղեքսանդրը քանդեց մեր քեռներն ու այնտեղից հրացան և սրեր հանեց: Նրա հոնքերը խո-

ժռու էին, քիթը սպառնալի՝ պատյանից հանած դաշույն։ Խռն-
դամիրյանը գոռաց.

— Հապա կեանիքը մի կողմ, աղամարդիկ մի գի՞-հա՛-

Տղամարդիկ խոկույն խմբվեցին մի կողմ։ Խանդամիրյանը
բռնեց զյուղապետի օձիքը, ցնցեց՝ ինչպես անում են շան
լակոտին։

— Ինչո՞ւ չեք դիմադրում։ Ինչո՞ւ։

Մարդը գոռաց՝ աշքերը ճակատին թոցնելով։

— Զենք լունե՞նք...

— Բա՛ վերցրեք, կոպալ, խաշերկաթ, քար։ Եռաժանի
վերցրեք, անասուն հո չե՞ք։ Լուծ վերցրեք, բռունցքներով
գեացեք ավաղակների գեմ։

Ամբոխն իսկույն ցրվեց ու շտապելով ետ եկամ՝ երկաթե
ու փայտյա ձողեր ձեռքներին։ Մի երկուսը նույնիսկ ժանդա-
տած սրեր բերին։ Մենք նրանցից մի հիսունի ձեռքը հրա-
ցան տվինք, ինքներս բռները թողած, ձիավորվեցինք։ Խան-
դամիրյանը, մեզ ու միջնաակցիներին տարած դեպի զյուղի
ցածրերը, որտեղ ոչխարի փարախներն էին։ Գուժեանը բոլո-
րիս առաջն ընկած վազում էր.

— Էս կողմ եկեք...

Հառչի Փանահի ցեղի ավաղակների մի խումբ, երեսի հի-
սուն հոգի, իրենց ուժին վատահ, առանց շտապելու, ոչխարի
հոտերը հանում էին փարախներից ու մոտեցնում Արաքսին,
որ հենց մի քանի քայլի վրա էր։ Ավին մերձ տափակ լաստեր
էին օրորվում։ Երեք-շորս հայ հովիզ սպանված ընկած է՛ն։
Ոչխարը համառում էր, գալարվում, եռում ինքն իր մեջ՝
ահ ունենալով զետից։ Նրանք զյուները խոթել էին միմյանց
փորատակեր։

Մերոնք հրացաններ պարսկցին։ Գողերից մի հինգ-վեց
հոգի ընկան ոչխարի հոտին ոտնատակ։ Կատարվեց հրաշըր,
Տամկած ու զմբրած զյուղացիները աղաղակով ընկան ավա-
ղակների վրա՝ իրենց բութ ու ուր գործիքներով, ոմանք կրակ
բացեցին մեր տված հրացաններից։ Փանահի մարդիկ շշմեցին
անսպասելի դրո՛ից, փորձեցին վաղել դեպի լաստերը,
որեր հանեցին։ Սակայն Միջնաակի գեղջուկները ալնպես էին
մոլեզնել, որ այլն անհնարին էր նրանց ետ մղելը։ Նրանք
սկսեցին կոտորել ավաղակներին։ Երևաց զյուղի քահանան,

որ ոչ ծեր էր, ոչ ջահել: Տեսնելով կողոպտիշների դիակները նա դռուց աշուսաբափով:

— Այս ի՞նչ եղավ: Ի՞նչ եղավ... Ախր դուք Փանահի մարդկանց կոտորեցիք, է՛... Վա՛յ մեզ: Փանահը զորքով կու մեր զյուղի վրա: Վա՛յ մեզ...

Քահանայի գոռոցը ցնցեց բոլորին: Ծտկված ուսերը նորից ընկան, տաք զլուխներին կարծես սառը ջուր մաղվեց: Բոլորի մեջ ևս կործանիլ սարսափ նկատեցի: Հովհաննես Խանդամիրյանը երկճյուղ մտրակը քաշեց քահանայի վրա:

— Սոսկո՞ւմ ևս ավագակից, սեազուխ: Փանահն անգութ է, դուք Էլ կրկնակի անգութ եղեք նրա դիմ: Է՛յ, լսո՞ւմ եք: Եթե թշնամի է զալիս ձեզ վրա, ապա դուք ոչ թե ձեր խնդռությունը դեմ արեք նրան, այլ ձեր բռունցքները, ձեր ակուաները:

Ազմկեցին մերթ ողեոր, մերթ հուսահատ: Քահանան բռնեց Խանդամիրյանի գոտիին:

— Մի ճար գտիր, տեր: Մեր արյան մեղքի տակ մի՞ ընկիր:

— Միակ ելքը դիմագիր ելնելն է: Գյուղովի: Ազգովի:

— Մեզ համար այլ ճար գտիր:

— Ուրիշ ճար ու ելք չկա:

Խանդամիրյանը միամիկ Ստեփանոսին թողեց Արաքսի ափին, հրամայեց այս ու շրջակա հայոց զյուղերում աշխարհազորի ջոկատներ ստեղծել: Մեզ հետ բերած զինքն ու զինամթերքը հանձնեց նրան:

Ես ցնծում էի: Այս, այս, ապրելու համար պետք է ժանիքներ ունենալ, ոչ թե Թրիստոսի գառ լինել: Գայլերի ու օձերի մեջ ենք, ինչ խիղճ է՛, խիղճս ո՞րն է, քեզ սպանում են, զավակիդ մորթում, հողդ խլում, իսկ դու մնում ես ապավինած դատարկ խղճին: Այդ խիղճ ասածը միայն հայի՞ն են աըզել: Ես տեսնում էի, որ, այս, իմ աշքերը բացվում են և ես այնպիսի բաներ եմ նկատում, որ շգիտեմ ուրիշ մեկը տեսէ՞լ է, թե՛ ոչ: Ես արդեն հասկանում էի, որ գարին երեք սեռ ունի և ամեն սեռն էլ ծլունակ է:

Ծտապեցինք դեպի Դիզակ:

օ՛, աստվածամերձ Դիկակ, շնորհավոր հարսանյաց հանգեսդ: Եռագր թեև մեղմացել է, բայց չի մարել: Եկող հյուրերի ձիերն այնպես են քրտնած, ասես սատանաները նրանց սապընացրել են: Զարմանում եմ՝ ինչպե՞ս է, որ ես չեմ հակվել ձիում հետ, թափվել հոգ առ հոդ:

Մոռվ լեռան հորիզոնները ոսկեզօծվել էին լուսաբացի շքեղությունից: Ներսես կաթողիկոսը Խորայել վարդապետին, որ իր եղրոր թռուն էր, ասաց.

— Քեզ չի՞ թվում, զավակս, որ Երասխի ափին, Հրեն փայլատակում է մեր նախնի Եսայի Աբումուսե իշխանապետի սրի շողբը:

— Դա հեռավոր հեռովից, ինը հարյուր տարի առաջ եղածն էր,— ասաց վարդապետը:— Խսկ դու, պապ, ավելի լավ է տեսնես Դիկակի այսօրվա տիրոջ սրի փայլատակումը:

Բերդաձոր ավանի մոտ ի մի են խմբվել գեապի Դիկակի Տող բերդն շտապողները: Հասել են: Հովհաննես Խանդամիրյանի կինը՝ Ասպապը արծաթե սափոր ցույց տվեց ինձ: Ի՞նչ է:

— Նախիջևանի օրհնված հոդ: Հենց Նոյի գերեզմանից Բերել ենք գերազանց իշխանի վերքն այս կավով շփելու, գուցե թե լավանա:

Տող բերդող արահետները սարդոստային նման կասյկապում են անտառի ճեղքերում կամ ժայռերի խռովներում զրեթե իրար կապած զյուղերը՝ վայրի մեղվի քթոցներ՝ զգվոտող ու հանդուզն: Փորձիր թեկուզ մատդ կացնել դրանց, խայթող պարսերով կթափվեն վրադ: Թիրս լեռան գագաթին ձյութագույն ամպեր են ծխում: Երբեմն դրանք շառաշելով ճեղքում են՝ շանթված կայծակի մարակներից: Լեռան լերկ գագաթը լուսավորվում էր, անդունդ էին զլորվում հսկա ժայռաբեկորները: Ես սոսկում էի՝ աստված, խնայիր ինձ, մեղքի տեր լեմ:

Աղամ թեկը ցնծում է ինքն իր մեջ: Դե, ինչո՞ւ ոչ, կինը՝ Կամար Սոլթանը ձիու վրա հրեղնն այուն է, որ նույիիսկ շվաք է զցում Հովհաննես Խանդամիրյանի տիկնոջ վրա: Երկու տիկինները շտապ մտերմացան: Կամար Սոլթանը իր թվանկ-

Հրացանն ուզգեց բերդի ցածի ծառերի մեջ մենավոր տնկված սեկածե ժայռի կողմե ու կրակեց: Դարձավ ամուսնուն:

— Ժայռի տակ քարայծ է ընկած: Դնա բեր:

Ինչպե՞ս նկատեց քարայծը, զարմացա ևս: Նա ծիծաղեց՝ այտին փոսիկ առաջացնելով:

Այդպես ծիծաղում էր Խուրխուփի ձորի Ասպապը, որ ապրում էր շեկ հովազի հարեանությամբ: Ո՞վ գիտի, ուցե թե հենց ինքն էր հովազը: Իմ մեջ զղջման նման թթվուտ գոյացավ՝ ինչո՞ւ թանաք-փետուրին զերի դարձա: Ինձ համար ինչո՞ւ բույն շնչուացի թեկուզ Խուրխուփի ահեղ ձորում, հովազի հարեանությամբ: Եվ վերջապես մինչև ե՞րբ անձս հոգնոր կապանքներով խեղճելով զրկեմ ինքս ինձ: Հարսանյաց հանդեսին աղջիկներ ու հարսներ էին հավաքվել: Իմ մեղավորիս զլխում հանցավոր միտք էր ոլորվում՝ լրանե՞մ, հրեն, այն աղջկա ծամերից ու մոռւթս թաղեմ նրա ծոցի բույրերի մեջ...

Կարծիս սրտիս կրակին յուղ ավելացնելու համար կամար Սոլթանն ասաց.

— Մի՛ երկնչիր ոչնչից ու ոչ ոքուց:

Իսրայել վարդապետն ինձ մեկուսի ասաց.

— Դուքն թե պապիս եղբայր Տեր ներսեսին ուղարկներ ժերուական հանգստի:

Ահա թե ի՞նչ... Մտքում ծածուկ իղձ է փայփայում՝ ծերացած պապի եղբար զահին ինքը նստել: Մեղա՛, մեղա՛, — շշնչացի՝ սեփական մտքիցս ահ առնելով: Բայց միտք էր՝ ծնվեց ինքն իրեն, ինչպես պարարտ հողում միանգամից գուրս պրծած սունկ և սկսեց ուռել...

Հովհաննես Խանդամիրյանն ինձ ասաց, թե Սարիջաննու ավազակ ցեղապետ Զառչի Փանահը նորից է ասպատակել մեր երկրի սահմանները: Մի երկու օր հետո, Թուրի Արգումանը, ձիու ետեից քարշ տալով Տող բերեց, նեղալը, ուղտի պես բարձրավիզ մեկին, զցեց Աստվածապով սպարապետի ոտքերի տակ:

— Զառչի Փանահի եղբայրն է, տեր սպարապետ:

Գերին վայրենի աղաղակեց.

— Պատրաստ եմ ընդունելու ձեր տված մահը...

— Անշուշա, — քմծիծաղեց սպարապետը: — Մահն ընդու-

հելք հեշտ է: Դժվարը ապրելն է: Սձարարու և ուխտազանց մարդիկ եք, ավագակ է եղբայրդ և դու Ապրում եք ուրիշի հոգի բարիքներով, հերիք չէ, չեք էլ ուզում խռհեմ հարևան մասը: Ի՞նչ արած, մեռում է ոչնչացնել ձեզ: Եղբայրդ փախել է պարսից արքունիքից, զլխառվելուց՝ գողության համար: Հիմա էլ կողոպտիչ է մեծ շափերի: Ավարառու ցեղ եք:

— Է՞, Հայ իշխան, օ՞, մեծ մարդ: Մեր օրերում ո՞վ չի ազար առնում, — զլուխը գետնին խփելով առաց ավագակը: — Եթե քեզ հարցենք ավարի մասին, ապա դու ասա այսպիս՝ ավարն ալլահինն է, նրա մարդարեինն է:

— Ի՞նչ ազգի ժողովուրդ եք, — հարցրեց սպարապետը:

— Ազգի ի՞նչ է, — զարմացավ գերին:

— Պարսիկ եք, թուրք եք, հարաշ եք, ի՞նչ եք:

— Է՞, Հայ, մեծ իշխան, քո ասածները ստոր ույած-միլլեթ են: Մենք ույած չենք, ազգ չենք, մեր ցեղը ազատ է երկնքի հավքերի պես:

— Ո՞րն է ձեր հայրենիքը:

— Հայրենիքն ի՞նչ է: Աշխարհն դար իուամ է¹: Որտեղ մեր ձիռւ ամբակն ու մեր ոչխարի կճղակն է հասնում, նա մերն է, մեր տուն ու ապրուսուր:

Սպարապետը հրամայեց նրան ազատ արձակել:

— Գնա, ուր կամենում ես: Գնա ու մոռացիր մեր աշխարհի ճանապարհը: Նույնն էլ ասա եղբորդ: Գնա՞:

Սարիշանուն հազիվ քարշ տալով վիրավոր ոտքը, զավազանին հենված գնաց: Մենք բոլորս մի տեսակ դժգոհ մնացինք սպարապետի վճռից: Ի՞նչ նպատակով նա բաց թողեց ոճրագործին, թշնամուն: Ինչո՞ւ: Ամբո ինչո՞ւ: Թե կարծում է նա տափաստանում կկորչի: Ո՞ւր կհասնի սողալով, կադու ինեղված: Երկու օր հետո Կամար Սոլթանը շշուկով, ահովինձ ասաց.

— Ես տեսա Փանահի եղբորը: Մտովի տեսա: Իմ մարի աշքերը տեսնում են նույնիսկ առնետի բնից գուրս գալը: Տափաստանում ամեն ինչ մեռած է: Ավագակը տառապեց մի ոտքի վրա ոստոստալով, սկսեց սողալ: Սողում էր մեջքը

1 Խոյամի ախրած երիկը:

կոտրած օձի պես, ետևից արյան հետք թողնելով։ Նրա վրա խուժեցին տափաստանի բոռ ու բզեզ, փշատի մեծությամբ շնաճանճներ։ Նրանց վտառից իսկույն շքանում էր ավաղի վրա երկարած արյան բիծը։ Մարավից ավաղակը լեզուն հանեց, բսեց քարերին։ Մի երկար, գորշ վտառ ևս արշավեց նրա վրա։ Տափաստանի մկների կծիկ էր՝ գունդ-գունդ, ցից ատամները բաց, մանր ականջները խլշած։ Ավաղակը աղաղակեց սարսափով։ Մի անգոլ թուավ մենավոր քարի ճեղքից, Հրաշեկ մի շնագայլ վաղեց գեպի սողացող մասգունդը, բայց սարսափած ետ փախավ։ Մկների վտառը ամպերի պես, ոչ, մրցյունի երամի պես, փաթաթվեց ավաղակին։ Մի ակնթարթ հետո գետնի վրա տարածված մնացին միայն սպիտակ ոսկորների շաթոն կմախքը և լերկ գանգը։

Ես Կամար Սոլթանին հանդիմանեցի։

— Շատ ահավոր պատկեր ներկայացրիր գեղեցիկ տիկին։

— Իմ հորինածը չէր, — գոշեց նա, — այլ՝ երկնքի ներշնչանքը։ Թե դառնանում ես, ապա դառնացիր աստծու ստեղծած մարդ արարածից։ Ինքս էլ եմ դառնանում, որ մարդը կատարյալ չէ և հազիվ թե կատարյալ դառնա։ Ո՞ւ Մարդը վազում է իր նմանին սպանելու։ Կողոպտում է, գերում։ Մեկ ուրիշն էլ երեսում է երան և ոչնչացնում։ Այսպես մինչև ո՞ւր կհասնի մարդ արարածը։ Ոչ դու կարող ես պատասխան տալ, ոչ մեկ ուրիշը։ Եզ մի՞թե եթե ողջ մարդկությունը մի հավատի ազգ դառնա, նույնը չի շարունակվի։

* * *

Տող բերգի երեք կողմը անդային քարահերձ է, մի կողմը խիստ թեք լեռնալանց պեղում երեքտակ պարիսպներով, Բերգը հզոր իշխում է լեռնաշխարհի վրա։

Սւալարկ ճանապարհն արդեն ամսից ավելի է, ինչ գիշերցերեք դղրդում էր խմբերով եկող ձիավոր-հետիոտն կոշնակների երթից, որ խուժում էին լայն բացած երկաթե ամրակուռ դարպասներից ներս։ Մուտքի գլխին ալեծփում էր հայոց պետական, կարմիր երիղով կապույտ գրոշակը, ցատկող հովազի ոսկեկար զինանիշով։ Մեր Ղարաբաղի այս անտառնե-

բում ու շամբուտներում հիմա էլ հովազ կա և դրան չեն սպանում իրեւ սրբազն կենդանի:

Դերագահ Մելիք-Ավան իշխանը հենց մահմի միջից հրամայեց սկսել հարսանյաց հանդեսը: Խնդրեց իրեն հանել տեսից: Գատգարակի վրա նրան տարան զորակայանի հրապարակը: Մելիքական տան ավագ քահանան կարդաց էջմիածնի կաթողիկոսի օրհնության զիրը, որ բերել էր Երևան քաղաքի իշխան Մելիք-Մանուչարը, հարեցի պես ու ու զաժան կեցվածքով մեկը, որից ես անշափ սոսկում էի:

Հրավիրվածների մեջ արտակարգ շուրջով էր շողում Հովհաննես Խանդամիրյանի Ասպառ տիկինը: Թուրքը, հատկապես պալատական կանայք ու աղջիկները հեզ, բայց և, ինչպես նկատեցի, Խախանձի կրակով էին նայում նրան, աշխատում նրա ուշը դարձնել իրենց վրա: Արտակարգ շքեղ էր Ասպառ տիկինը: Նրա գեղեցկությունը զգիխիլ էր, զգեստը կարծես ոչ թե մետաքսից ու կերպասից, այլ՝ երկնքի կապույտից ու արևի ոսկուց էին հյուսված:

Կամար Սոլթանը նրան ասաց.

— Որո՞վ դու այդքան գեղեցիկ մնաս տիկին:

— Համենայն դեպս ոչ իմ շնորհիվ, քույրիկ իմ, իշխանուհի:

— Բայց ես իշխանական շեմ, — ասաց Կամար Սոլթանը: — Ես ումեկական եմ՝ մի ժամանակ իշխանի ժառա Թուրք Արգումանի գուստը, որ հիմա հարյուրապես է:

— Նշանակում է մենք դասակից ենք, գեղեցիկս, — ասաց Ասպառ տիկինը: — Ես ևս հասարակներից եմ:

— Զի երեսում:

— Հասարակը ավելի վեհ է, եթե բնական ձիրքեր ունի:

Ասպառ տիկինն ու իր ամուսինը նորապատճերի համար ութ ջորերեռ մետաքս ու կերպաս էին նվեր բերել: Բերել էին նաև երեք գուստն, որ ահա ամրոցի մի քարե պատշպամքում երգում ու նվազում են: Ես նաև լսեցի, թե ինչ ասաց Ասպառ տիկինը Կամար Սոլթանին:

— Թող ոք մի ինձ ահ շտա Ավետարանոցի հովազով: Ես նրա ճանկերը կհաննեմ: Նաև թույն պատրաստելու եղանակը լզիտեմ: Այդպիս: Իմ մեջ հարգանքի նոր երկյուղ ծա-

գեց զեպի այդ ահեղ գեղեցկուհին, ինքս էլ շիմանալով՝ ինչ-
լո՞ւ, ինչի՞ց:

Բերդի դարպասներն արդեն փակել էին ու ես՝ գժրախտ
Արրահամ Երևանցիս սոսկում էի ինքս ինձ՝ Ալինի՛ հանկարծ
երեա Խուրխուփի ոգին՝ զեղին հովազի մեջքին նստած:

Բերդի դարպասները փակ էին: Մակայն բոլորի համար
անսպասելի բերդի աշտարակի դետքը գալարափող հնչեց-
րեց՝ ազդ անելով:

— Ժամանեց Ղուզանենց թաղա զնդապետը...

Դա շատերի, նաև ինչ խոսք, ինձ համար, բոլորովին ան-
սպասելի էր: Ես ևս մղվեցի զեպի արագ բացվող դարպասը,
որ երկարուկ ու բարձր կամարների մեջ էր: Գրեթե սլացքով
բերդ մտավ ձիավորների մի ոլ մեծ խումբ, երեի երեսուն-
երեսունհինգ հոգի: Առջեից գալիս էր ոռուական զորքի տար-
բերանշաններով մի զնդապետ՝ վեր սրած բեզերով, թուիս ու
զե՞ն: Ես սպարապետին, որ կողքիս էր, հարցը թե ով է
եկողը:

— Ռուսիո մեջ եղած հայոց հեծզնդի մարդիկ են,— ասաց
նա:— Դնդապետը պարոն թաղա Ղուզանենցն է: Մեր հայե-
րը ոռուաց կայսրուհու ժառայության մեջ զորք ունեն:

Հեծելազորը, շրջապատված բերդականների ցնծության
աղաղակիներով, մտավ հրապարակ: Դնդապետ թաղա Ղու-
զանենցը թամբից ցած թուավ ու կողքից կախված սուրը, որ
շփվում էր սպիտակ, կարմիր ժապավենով տարատին, բարձր
բռնելով մոտեցավ պատվանդանի վրա, շքեղ մահճում պառ-
կած զերագահ իշխանին, համբուրեց նրա ձեռքը:

— Ուրախ կանչի եկանք, տեր զերագահ: Շնորհավո՞ր...

— Դու Ղուզանենց թաղան ես, այլ ոլ եղբայրո՞ւ մափա-
յելը, — ծանր-ծանր ասաց Մելիք-Ալվան-Եզանը: — Որտե-
ղի՞ց:

— Աստրախանից: Մեր հեծելազորը հիմա Աստրախա-
նում է:

— Բարի՞ է ոռուաց կայսրուհին:

— Աստված երկար կենոք պահի նրան: Բարի է:

Հայ հեծյալները ոռուական ձիգ ու պիրկ զինվորազգեստի
մեջ էին, լայնեզր գլխարկներով, լավ զինված: Ոմանք կըրծք-

հերին ոռւսական խաչ-շքանշաններ ունեին: Գնդապետն ասաց:

— Եղբայրս որդուդ՝ պսակվող Ծսայի բեկի համար երկու հարյուր ձիաթամբ ու սարք է նվեր ուղարկել, նաև չորս հարյուր հրացան:

Ավան իշխանը հուզվեց.

— Աստված օրհնի ձեզ:

Հարսին ու փեսային դուրս բերին եկեղեցուց: Վարանդայի մելիք Հովսեփը եղբոր՝ Շահնազար բեկի հետ քառասուն քնահիր գորգ փռեց նորապահենների ոտքերի տակ: Նրանք նաև նվեր արին երեսուն բեռնակիր ուղտ, երեք հարյուր ձի ու հարյուր զորի: Սա լսեցի, թե ինչպես Շահնազար բեկը եղբորը կամացուկ ասաց.

— Մենք կարծես գժվել ենք, հոգիս վկա: Այսքան հարըստություն վատնեցինք:

— Բան չկա, — ասաց Մելիք եղբայրը: — Մենք հո աղքատ շենք: Մի մոռանա, որ մեր տատը Մելիք-Ավան իշխանի հորաքույրն է, քո կինը՝ նրա դուստը:

Սա նկատեցի, որ Շահնազար բեկը գառն է դիդակեցիների նկատմամբ: Ապա տեսա, որ խիստ մտերիմ է Խորայել վարդապետին ու շատ է վատահում նրան: Նա տառապում էր, որ մեծ եղբայր ունի և նա է, ըստ օրինաց, ժառանգել հոր իշխան-մելիք է, իսկ ինքը՝ բեկ, նրան ենթակա: Չեմ հիշում երր, բայց ոչ վաղուց, երբ ևս նրանց տանն էի՝ Ավետարանոցում, Շահնազար բեկն ինձ ցույց տվեց իր հոր ստեղծած գրչատունը, ուր ութ-ինը գրոց մարդիկ էին բանում, նաև գրապահոցը, որտեղ շատ հին ձեռագրեր կային: — Մելիք եղբայրս ահա այս գրքերի մրի մեջ է իր քիթը թաղած պահում: Նրանից ի՞նչ իշխանապետ...

Սա նկատեցի, որ Խորայել վարդապետը Տողում հանգամանորեն հետևում է կատարվող ամեն անցուդարձի, զրանք ըմբռնելի գարձնում իր աշքին ու ականջին, խոր պահում մեջը: Հայոց մեր այս աշխարհը նրան ներկայանում էր իրքե իր վաղվա տիրույթը: Հարսանյաց ժխորը բնավ նրան չի հանում իր ծիրից: Այստեղից մի փոքր վերև Կատարո լեռնագագաթն է: Ամիսներ առաջ ես, Շահնազար բեկի ու Խորայել

վարդապետի հետ, զրա զլիսին էի: Այնտեղից սքանչացա Արաքսի ճերմակ անկողինը տեսնելով, որ ջրի մշուշ էր: Չախակողմիս Խաչենի լեռնազանգվածն էր, մեջը Աղվանից հայոց կաթողիկոսարան Գանձասարը: Խորայիշ վարդապետն այնպես էր Խայտմ Գանձասարի կողմը, որ կարծես կաթողիկոսական այդ գահն արդեն իր տակն է: Հովհանները լեռան զլիսին մատադ արին:— Այս լեռը սուրբ Խաչատակների վայր է,— ասացին մեզ երկյուղած:— Մազ Թթաց Սանեսան կռապաշտ թագավորը հետապնդում է մեր Գրիգորիս սրբի ձեռքով Թրիստոսի հավատն ընդունած իր Մովսես, Դանիել և Եղիա որդիներին ու նրանց հետեւ 3870 հավատակիցներին և, հասնելով այստեղ, բոլորին սրբ բերան տալիս, սպանում:

* * *

Հարսանիքը բուռն էր: Խմում էին տեղական կարմիր գինի, որ երեմն ես էլ էի փորձում: Երբ բոլորի կատարները լավ տարացել էին, Աստվածապով սպարապետը արծաթե մի ծանրագին գոտի զցեց զուռնաշի վարպետի ուսովը:

— Ադա, կլոր բերդապար զլի: Բե՛րդ, բե՛րդ:— Հանեց մետաքսե կապույտ թաշկինակը, որ ասես երկնքի մի պատուիկն էր, ձեռքերը տարածեց:— Դե՛, Հա՛...

Մելիքները, զորապետները, զրանց հետ նաև Թաղա Ղուզաննեցը, երսի մի հարյուր հոգի, կլոր պար բռնեցին: Իմ երակներում ինչ-որ մոռացված ու քնած ցիզեր արթնացան, ինձ թվաց զգում եմ Խրիստի ձորի շոնչը ևս ևս միացա պարզներին: Գետինը զդրդաց ոտքերը հսկաղից: Իմ ոտքերն էլ գտան ինչ-որ կորուսված թրթիռներ: Ես ձուլվեցի զենքի զնզոցով ճայն առած մարմինների փոթորկին: Նորապսակներին կանգնեցրին շուրջպարի մեջտեղում, զորգերի վրա... Մորկվում էր հեթանոս արյունը, որ երեք չի հանգել այս լեռներում: Հարսանքավորները ոսկե ու արծաթե կարկուտ էին թափում նորապսակների ոտքերի տակ: Ցոթ հոգի ուսերին յոթ սպիտակ գառ բերին ու մատաղեցին թագավոր-թագուհու առաջ, դրանց տաք արյունը խաշաճե քսեցին երկուսի ձեռքերին:

* * *

Խրախնանքի երկրորդ օրը հարսանյաց թափորը շքեղ զարդարված հոսեց գեղի Գտիլ վանքը: Խսրայել վարդապետն ասաց, թե իրեն մեծ պատիվ ձև արել, դրեւ նորապսակներին ուղեկցող խմբի մեջ: Վանականները հարայնրոցով վանքի քակից սկսեցին քշել-հեռացնել անհամար մուրացիկ զեղչուկներին: Խրանքը գիշերը կրակ էին արել վանքի բակում, պազել մոտը: Նրանցից շատերը ցնցոտի անգամ շունեին, շուկավել էին մեզարի ու կապերտի բրձերի մեջ: Մուրացիկ ամբոխը կատաղի էր նայում հարսանքավորներին, հատկապես իրենց քշող-հեռացնող հոգևորական մարդկանց: Խսրայել վարդապետը փորձեց նրանց զսպել: Սուռ Ավագ հարյուրապետը նրա լանջախաչը պոկեց կրծքից:

— Դու քո ախոռին զռա՞՝, սև ջորի: Հեռացի՛ր: Դե՛...

Նա լանջախաչը ուղեց տալ մուրացկաններին, բայց նաւշենի Մելիք-Ապրես իշխանը գոռաց նրա վրա:

— Խաչը վերադարձրու տիրոջը, է՛յ, Սուռ, վայել չէ քեզ Ի՞նչ է որու մուրացկան-աղքա՞մ եւ: Դո՞ւ...

— Բա ի՞նչ եմ, — գոռաց Սուռ Ավագը: — Մի ժամանակ զինվոր էի, հետո մուրող-ուղող: Հա՞՝, հա՞՝, ժողովրդի կեսն ինձ պես է: Հա՞՝: Մի պատառ հացի կարուտ են: Հոգիները դուրս է գալիս հարկ ու տուրք տալով: Եկեղեցին էլ մի կողմից է կողոպտում, զրկում ժողովրդին: Պահանջում է՝ տուր Տալիս են, է՛, տե՛ր մելիք: Նշանօրհնենքին տալիս են, պսակօրհնենքին տալիս են: Մկրտելոցը, թաղելոցը, թաղման ավոր պաշտոնեցը տալիս են: Առնում են նաև վասն ննջեցնոց: Բագերեզման օրհնենքը, տնօրհնենքը, քահանայակա՞մնը, Ժատաղարաժի՞նը, հիշմանց հասարակա՞ցը, քառանի՞ցը, կողոպուտը, ժամո՞ցը, անբիժքը և սազմո՞սքը: Ո՞րն ասեմ: Տալի՞ս են, տալի՞ս են... Ժողովուրդը գետի մեջ ընկած գնում է:

Նա խաչը նետեց վարդապետին, նորից փրփրեց:

— Վանքում անօրեն բաներ են անում, տե՛ր մելիքը: Հենց մեկն էս տեր-Խսրայելս: Գլխաներիս երխուսիի ձորի հովազն է դարձել: Ուրեմն ինչո՞ւ ենք արյուն թափել, կովել թշնամիների զեմ: Ո՞ւր է արդարությունը: Հա՞՝, զիտեմ՝ գերեզմանում: Այնտեղ խեղճը կգտնի նման բան: Ո՞ւր ես, Մեխլու վարդապետ, երևա՞:

Մեխիլուի անունը լսելով ևս սոսկացի: Աւրեմն այդ գեղ դեռ մնում է ուսմիկի մշուշված կարկաժում: Այժի մորթի էր հագնում մերկ մարմնի վրա, բորիկ ման գալիս, հաստագլուխ դավաղան ձեռքին: Վայր տարել էր այն հոգնորականին, որ քեզել էր նրա ձեռքը: Գավազանով կիսել է նմանի գանգը: Ասում էր՝ ևս աստծու տունը կմաքրեմ ապական քաշանաւերից: Հինգ հարյուր շինական ու մուրացիկ մարդ է հավաքում գլխին, իրեն հոշակում աղքատի, զրկվածի տեր ու պաշտպան: Աստված հողի վրա է, — ամենուր ազդ է արել նա, — ոչ երկնքում: Ով ուզում է թող հավատա նրան, ով ոչ, թող ապրի ինքն իրենով, իր համար: Խառնամբոխին կոչ է արել տուրք շտալ ոչ եկեղեցուն, ոչ իշխանին: Խլել է վանքերի հողերը, ջրաղացները, ձիթհանքերը, տղել աղքատերին: Կոչեն արյունոտ էր՝ ով մի բարձրաստիճան հոգնորական սպանի, նա կարժանանա դրախտին, ինչ մեղք էլ որ ունեցած լինի: Ժողովուրդը ոշխարի պես հետեւ է նրան: Ամեն զյուղում նա միայն մեկ քահանա է ողջ թողել: Տրել է վանքերի կուսակրոն համայնքները: Մեր Գանձակ քաղաքից ծագած այդ կուսաշատ ելուզակը, որ աստծու տունն էր ավերում, կորավ երուսաղեմի պատերի տակ:

Իտմիկ, զեղչուկ ու մուրացիկ ամրոխը շարունակեց եռմեռալ: Սուս ավագը տեղից-տեղ շտապելով գոշում էր:

— Ե՞յ, Հե՞յ, Մեխիլուն ե՞ս եմ: Ե՞ս եմ: Աստված կույր է, որ չի տեսնում ձեր տառապանքը, մարդիկ: Մեզ կույր աստված պետք չէ:

Նա թռավ, բարձրացավ մի խաշքարի ուս:

— Երկինքը դատարկ է, մեջը որդ կերած դզում: Այնտեղ տառված բան չկա: Աստված ինքը մարդն է՝ լար, թե բարի: Եկեղեցին մարդու սրտի մեջ է: Պիսի փշրել, բանդել սուս աստծու սուս տները, որ մարդ արարածը բարձր մնա թե շարության, և թե բարության մեջ: Հե՞յ, Հե՞յ, ի՞նձ լսեք: Հե՞յ...

Ես սարսափած էի: Իմ աչք զրեթե սպանիչ զարձավ, երբ Սուս Ավագը իսրայել վարդապետի խաչի վրա թքեց:

— Ողորմության պետք լուսեմ, — ասաց նրա երեսին: — Մի կարծիք, թե ես զող եմ քեզ նման:

Մեխիլուն ու զորապետները սկսեցին համոզել մուրացկաններին, որ թողնեն ու հնունան խաղաղությամբ: Բլ ոք

շհակվեց զիշելու: Մելիքները ցանկացան զորքի միջոցով հեռացնել ամբոխին, սակայն սպարապետը արգելեց: Նա հրամայեց բոլոր մուրացկաններին տասական արծաթ տալ, ապա նաև հավաքել ամբոցից դուրս ու կերակրել: Խեղրանքով դիմեց ամբոխին:

— Հարսանիքը մի հարամեք, բարի մարդիկ: Նաև իմացեք, մեռնում է գերագահ իշխանը մեր: Երկիրը որբանում է: Ստացեք դրամը, զնացեք կուշտ կերեք, որ հիմա կտան ձեզ և բավարարվեցեք դրանով:

Մուրացկանների զանգվածը հոսեց դարպասներից դուրս: Նրանց ետևից կարկատանների ծվեններ էին թափվում և վերքերի թարախ...

Հարսանիքը շարունակվեց:

* * *

Հանդեսների երրորդ օրն էր: Խսրայել վարդապետը ինձ բորբոք ասաց, թե կաթողիկոսը, առանց մեկնումնեկին տեղյակ պահելու, Տողից մեկնել է Կատարո ուխտը: Առաջ՝ շինի՞ ձեր գեր իրեն փոխարինող է ընտրում որևէ մեկին, մեր ամենից նշանավոր ու հին սրբատեղում: Իսկ ե՞ս, ե՞ս: — Տեսա, որ նրա արյունը գլխին խփեց: Շահնազար բեկից նա մի արագավազ ձի խնդրեց: Ես էլ հեծա իմ ձին... Կատարոն հեռու չեմ, և մենք գեռ լույսը շրացված տեղ հասանք: Կատարոյի ուխտը հնուց ի վեր եպիսկոպոս ու տեղապահ օրհնելու վայր է: Նաև մեր կաթողիկոսներն են այդտեղ թաթախվում: Ես Խսրայելի երեսին կարդում էի նրա ներքին վճիռը՝ օ՛, պապիս եղբայր, եթե ինձնից ձեռք ես քաշել, ապա վերջդ բարի լի լինի:

Մատուների նեղիկ զուկակում մեր առաջ եկավ Խսրայելի վանական ընկերներից մեկն ու ահարեկ ասաց.

— Սուր Ավագին էս գիշեր բռնել են:

— Ինչո՞ւ: Ովքե՞ր, — սրգեց Խսրայելը, նաև հանդարուվելով, որ կաթողիկոսը այլ նպատակով է եկել ոյս ուխտը:

— Ներս մտեք, տեսեք:

Թարե զանգվածեղ խցում միայն մի կերոն էր վառվում: Դրա բոցը կարմիր էր ներկել մոռած պատերը: Կարմիր մշուշի մեջ հազիվ նշմարեցի կաթողիկոսին ու մի քանի վանա-

կանի: Բոլորն էլ կարծես թաթախված էին արյան մեջ, նույնիսկ կաթողիկոսի լանջախաչն էր կարմրած: Հատակի սալերին փռված էր Սուռ Ավագը, ոտքերն ու ձեռքերը պարաներով սեղմ կապկած: Մեզ տեսնելով կաթողիկոսը մոհաց:

— Ինչո՞ւ եկաք: Ես ձեզ շեմ կանչել: Եկել եք, ուրեմն վկանդեք մժղնիի ու բորբոքիտի պատժին: Դու, Խորայել, երկի, առաջնորդ գառնաս: Սովորիր, թե ինչպես պատժել Քրիստոսի թշնամիներին:

Պատի տակ, անկյունում կրակ էր արված: Մի վանական դրա վրա աղվեսադրոշմի խարան էր շիկացնում: Հեռվում գայլեր ոռնացին: Խցի մի ճեղքից զիշերամուկ ծկլթաց, երկի կրակի հրից նեղվելով: Նույնիսկ կաթողիկոսը ցնցվեց:

— Վկա՞նդեք:

Ես մի փոքր առաջ անցա:

— Դաժան բան ես անում, տեր կաթողիկոս: Անաստված բան մի՛ արա:

Նա ճանճի տղոցի տեղ անգամ շղթեց ասածո, զավազանի ժայրով բռթեց Սուռ Ավագին:

— Մեխլու ես, հա՞: Անաստված ես, հա՞: Ապստամբ ես եկեղեցու դեմ, հա՞:

— Հա՞՝ հա՞՝, — ծիծաղեց Սուռ Ավագը: — Դադախարս ու գործս հաճո շէ՝ քո քիմքին: Դե ի՞նչ: Վախեցողը շեմ: Արա, ինչ կուզես:

Կաթողիկոսը, որ արդեն հարյուրին մոտ էր, զարմանալի ճկունությամբ ոստնեց դեպի նա:

— Նա, ով քար կնետի եկեղեցու վրա, կոշնչանա:

Կրակի մոտ ծնկած վանականը շիկացած խարանը դրեց նրա ձեռքին: Բռնելով խարանի փայտակ կոթունը, կաթողիկոսը պաղպահ Սուռ Ավագի դիմաց:

— Մեխլու ես, հա՞: Հիմա կստանաս վարձդ:

— Դու, կաթողիկոս, ստոր արարած ես, — ասաց Սուռ Ավագը: — Դու հայրենիքի զինվոր ես սպանում: Դու հայրենիքի թշնամին ես: Դու զահին ես:

— Հիմա՝ հիմա՝, — լափլփեց կաթողիկոսը: — Հիմա քո մարմնի վրա կփորձես դահճիս շիկացած ժանիքները: Հիմա կստանաս պատիժ, որ քեզ ուղարկել է երկինքը:

Դրսում հօգագի մռնշոց լսվեց: Ես սարսուացի, հաճախ եմ կրիսուփի ձորում լսել այդ սարսափեցնող ձայնը: Բաց դռնից ներս ուղղվեց հրացանի փող:

— Խարանդ ցած դիր, Տեր-Ներսես...

Տեր աստված: Փրկչի ձայն լսեցի: Հարապատ ձայն, որ գալիս է Խրիսուփի խորքերից: Ռ', Ասպագ տիկին, Հասիր, Քեզ, անշուշտ, երկինքը ուղարկեց: Ես քեզ ոչ քո կերպից, այլ քո ձայնից ճանաչեցի, որ հավիտյան հոգուս մեջ է, իմ բոլոր նյարդերի ու արյանս անոթների մեջ:

Կաթողիկոսը շիկացած խարանը դեն զցեց, սողեսող քաշվեց գեղի խցի մութ անկյունը: Զինվորի հագուստով Ասպագ տիկինը ներս մտավ: Նկատելով Խորայել վարդապետին, զարմացավ ատելությամբ:

— Դու ևս, վարդապետ: Դու էլ...

Դարձավ ինձ:

— Նաև դո՞ւ, Արքահամ Երևանցի:

— Ո՞չ, ո՞չ նա, — շտապեց ասել Սուր Ավագը: — Երկուսն էլ նոր եկան: Արքահամ Երևանցին նույնիսկ հանդիմանեց կաթողիկոսին:

Տիկնող ետեից ներս էին մտել իր ամուսնու զինվորներից երեսի մի քսան մարդ:

Ասպագ տիկինը գաշունով կարտեց Սուր Ավագի կապերը, ատրճանակ գրեց նրա ձեռքին:

— Բոլորի հն...

— Ոչ մեկին, — ատեղը կանգնելով ու իրեն շտկելով ասաց Սուր Ավագը: — Սրանցից ոչ մեկը շարժե մեր գնդակին:

Երկուսով դուրս եկան: Ես հետեւցի նրանց:

Դեռ ներս շէինք մտել Տող ամրոցի դարպասներից, երբ մեզ հայտնեցին, թե գերազան իշխանը հոգին ավանդեց: Մենք երեսներիս խաչ հանեցինք:

* * *

Իրիկնագեմին, երկնքի բոսորի մեջ հրավառվող Տող բերդից երեսում է աշխարհը՝ Դիզափայտի Կատարու լիուան փեշերից մինչև հզոր Երասխը: — Ողորմի՝ քեզ: Ողորմի՝ քեզ, — մտովի օրհնում էի հանգուցյալին:

Թերզի բոլոր շինությունները սև պատառով սկավրը են: Քաջանաները պատարագ են մատուցում փոխնիւթով: Նեղ փողոցներում խունկ էին ժխում: Իշխանական գորքը՝ պիտ ու զինվոր, իրենց սուր, բրդանման փափախներին սև ժապավեններ էին կապել: Ժողովուրդը հոսեց այն եկեղեցին, ուր գրված էր Հանգուցյալի դագաղը: Քահանաների դասը շրջապատել էր բարձր պատվանդանը: Բեմի խորքից արեղաների ու սարկավագների խումբ էր դանդաղ սազմուում: Լռությունը կատարյալ էր, խորհրդավոր: Երրեմն մի քահանա տաշտով սառուց էր բերում, զրանով պատում դագաղի կողերը:

Դիզակի երկեքի բարձրերը պատվեցին ամպերով ու արևի այրուցքը բոլորովին նվազեց: Իշխանները եկեղեցուց Հանեցին Հանգուցյալի դագաղը: Քահանաների դասի ուղեկցությամբ, սգո թափորք ուղղվեց գեղի Գտիչ վանքի տոհմական գերեզմանատունը: Զորքը խիտ շարքերով ուղեկցում էր մեզ: Բարձրահասակ Սուր Ավագը առջեց տանում էր գերազահ իշխանի կապտաթույր նժույզը, ամբողջովին սև մետաքսով պատաժ: Թամբի կեղին զցած էր արծաթե գրվաղներով Հանգուցյալի Հրացանը: Ես հենց իրենից՝ զերագաշից լսել էի, որ այդ եղակի Հրացանը, որի պողպատը ահա թիթե փայլում է, իրեն է նվիրել Դավիթ-Բեկը: Թամբից կախված էր նաև այն ակնակուռ պատյանով սուրք, որ իշխանն ստացել էր Նազիր շահից՝ Եղվարդում: Հովհաննես Խանդամիրյանը մեն-մենակ քայլելով, կարմիր բարձի վրա տանում էր շողշողացող, խոշոր խաչ: Դա էլ Հանգուցյալն ստացել էր նուսի Հովհանը առաջնորդից՝ Սանկտ-Պետերբուրժուում:

Երբ բերդից գուրս էինք եկել, իշխանի անձնապահ գնդի դինմորները սկսեցին Հրացանային Համազարկի ողջնատրության կրակ տեղալ գնդի երկինք:

Երեք էր մեր մեծի թաղումը: Գերեզմանատանը, իմ կողքին կանգնած Զագեծորի Մելիք-Օհանն ասաց:

— Հենց այս շքեղությամբ մենք թաղեցինք Դավիթ-Բեկին: Ինքը՝ Ավան իշխանը ևս ներկա էր: Այժմ էլ նույնն է: Թաղում ենք, բայց ոչ մեր հույսը:

Թաղումից երեք օր անց հենց Տողում գումարվեց Հայոց իշխանականության Գերագույն զլխավոր Ժողովը: Իշխաններն ու տանուտերերը միակամ գերազահ ընտրեցին Զրա-

բերդի Մելիք-Աստվածապով իշխանին, նրա վլաւ թողնելով
նաև զորքերի սպարապետության պատիվը: Նույն ժողովը
եսայի բեկին մելիք հոլակեց իր հորենական գավառով վրա:

Դիզակի նոր տիրոջը իշխան օծեցին հեւց իր հոր թարմ
զերեզմանի վրա: Զորապետներն իրենց սրերը միացրին,
եսայի բեկին դրին գրանց վրա, յոթ անգամ գոլեցին:

— Դու ես մեր տերը, դու...

Սունկի եկան շիրմի շորս բոլորքը, հավատարմության եր-
դում տվին նորընծա գերագահ Մելիք Աստվածապովին:

— Թող քո սուրը հատու լինի մեր վզներին, եթե շեղվենք
մեր երգումից: Եղիցի՝ Եղիցի...

Այնքան ցնցող էին իրար հաջորդող այս եղելությունները,
որ ես՝ գրեթե բան չհասկացա և այս ամենը, որ գրին հանձ-
նեցի, արեցի նույնակես գրեթե անգիտակ:

Շուտով նազիրից հրովարտակ եկավ: Պարսից շահը շնոր-
հավորում էր Հայոց աշխարհի նոր գերագահին: Նրա համար
արքայական ժիրանի էր ուղարկել ու հավիտենական դաշնի
թուղթ:

Խաղաղ, հրաշալի աշում էր Հայոց աշխարհի արևելյան
լեռներում ու հովիտներում:

Լուսարաց էր: Մենք մեր եկած ճանապարհով վերադար-
ձանք Զրարերդ: Կամար Սոլթան իշխանունին, որ ամուսնու՝
Ադամ բեկի ասպանդակակից էր միշտ ու ամեն տեղ, իմ
ներկայությամբ նրան ասաց.

— Ամուսին իմ, մի քիչ արիություն ներարկիր մեր այս
իսրայել վարդապետի երակների մեջ:

— Ինչո՞ւ, կին իմ:

— Հովազից վախենում է, — Կամար Սոլթանը շեղ նայեց
վարդապետին: — Վախենում է շեկ հովազից:

Խսրայել վարդապետը Դավթի սաղմոսից մի երկու շլուղ
շնչաց ու լոելով՝ կծկվեց ձիու թամրին: Այնինչ Ադամ բեկին
ու կինը կտուց-կտուցի դունդունում էին: Ի՞նչ սքանչելի է
մարդկային մտերմությունը: Բայց ես դրանից որկված եմ:

Այսպես սպառվեց 1744 թվականը:

Զորաբերանից մեկը գռաաց.

— Նադիր շահն սպանվեց...

Ես ու Հայոց գերազա՞ն իշխան Մելիք-Աստվածապովը կանգնած էինք Զրաբերդի ամրոցի պատշգամբում: Նայեցինք ներքեւ: Հեացող ձիու վրայից այս բոթը ազդ էր անում մեկը: Մտավ ամրոց: Նրա ձին չորս ոտքերը միանգամից ժայիլով տապալվեց: Չիավորը Հազիվ կարողացավ մի կողմ ցատկել, որ չչնշխավի ձիու տակ: Գերազա՞ը Հանդարտ Հարցըց.

— Մտույգ է:

— Մտույգ: Գալիս եմ Սպահանից: Նադիրին սպանեցին իր պալատում:

Մելիք-Աստվածապով իշխանը երկար լուռ մնաց: Ապա ասաց, թե Հնարավոր է, որ Հայերիս վիճակը բարդանաւ: Օսմանյան սուլթանը անշուշտ հիմա ցնծում է: Պարսիկների մեջ հիմա, անշուշտ, գահակոփիվ է: Այդ լուրը խիստ մտահոգեց ոչ միայն մեր իշխաններին, այլև ժողովրդին ողջ: Քարը գլուխը, թեկուզ սատանան լինի իրանի գահին, միայն թե շնախավի խաղաղ օրվա ընթացքը, թշնամի լմուտենա Հայոց աշխարհի սահմաններին:

Ես մտածեցի զերազառնալ տուն՝ Երևան: Սակայն, երեկ միտքս կուահելով, զերազա՞ն ինձ ասաց, թե մի երկու օր էլ սպասիր, միասին կգնանք:

Երկու օր հետո, լուսարացին մեկնեցինք: Անցանք թարթառ դետք ակունքների մոտով, և երբ արեք նոր էր բոցավառել աշնան առանց այն էլ դեղնած անտառներն ու այգիները, իշխան Սեանա ծովակի ավազանը, մտանք մի գյուղու Դրա գյուղապետը, որ նաև աշխարհագորի զորապետն էր, շատապեց մեզ հրավիրել իր տունը՝ փոքր ինչ հանգստի:

Նոր էինք սեղան նստել, երբ տան բակում չորս հինգ ձիավոր երեացցին: Մեկը Երնջակի Հովհաննես Խանդամիրյանն էր, մյուսը նրա Ասպար տիկինը, մյուսները՝ երեսի թիկնապահներ:

— Հազիվ թե լավ լուրով ժամանած լինի Խանդամիրյանը, — ասաց Մելիք-Աստվածապով իշխանը:

Ամուսինները ներս մտան հոգնած, բայց, ինչպես տեսա, ոչ ընկնված։ Միմյանց ողջունեցինք կարգ-պատշաճին։ Խանդամիրյանն իրեն հատուկ զրնգուն ձայնով ասաց։

— Դեպի Ջրարերդ էի գալիս, տեր գերագահ։ Քաշաթաղի վերևերում իմացա... Շանապարհ ծռեցի։

Նա կազի գավաթով ջուր խմեց, եփած իշխան ձկան մի ամբողջ կես կուլ տալով ասաց։

— Օսմանլուի երկրում զորահավաք է։ Սուլթանի հրամանով զորքեր են կուտակում Կարին-էրզրումի, Արտահանի ու Կարսի շրջաններում։

— Հացդ հալալ կեր, տանուտեր, — մեղմ ասաց գերագահը։ — Կեր, հետո կպատմեն։ — Դարձավ Ասպարագիկնոցը։ — Դու ևս ճաշակիր աստծու տվյածից, դուստր իմ։

Ճաշը կարճ տևեց։ Երեսում է նաև գերագահն է շտապում։ Երբ արդին ափսենները հավաքել էին ու սեղանին պտուկներով թան դրել, գերագահը խոսեց։

— Ի՞նչ լուր ունես Պարսից արքունիքից։

— Խաների մեջ զզվուոց է, տե՛ր իշխան, — հանդարտ պատասխանեց Խանդամիրյանը։ — Ով տեղից էանգեռում է, ձգառում է տիրել իրանի գահին։ Զորքի մեջ շփոթ է։ Վատ օր է ժագում...

Մյուս օրվա կեսօրին մենք արդեն անցել էինք ծովակի եղբերով, մոտեցել Պորտակ գլուզին։ Գիշերը մնացինք քահանայի տանը։ Առավոտյան, երբ զուրս եկանք օդայից, ձիերը հեծնելու, զետինը ծածկված տեսանք երնի երկու թղաշափ ձյունով։ Գեղարքունիքի իշխանն ու տանուտերները հավաքվել էին Պորտակում։ Մելիք Աստվածապով իշխանը կարճ խորհուրդ արեց նրանց հետ։ Միտքը այս էր՝ պատրաստ լինել ամեն անակնկալի։

Գերագահը Երեանում մնաց ամբողջ ձմեռ։ Ամեն օր սուրճանդակներ էր առաքում զեպի Շիրակ, Աշոցք, գեպի Նախիջևանի գավառները։ Աշքը բաց էր պահում, ականջը՝ սուր։ Սուլթան Մուրադի թեկուզ մի փոշտոցը հայտնի էր գառնում նրան։ Այցելեց Արարատյան գաշտի բոլոր զորագնդերին։ Հրամայեց ավելացնել մշտական ժառայության զինգորների ոռչիկը։ Եվրոպայի երկրներին տեղյակ մարդիկ ուղարկեց լեհաց աշխարհը, Վենետիկ, Ամստել, պատվիրելով

այդ երկրների մեծահարուսատ հայերից միշտցներ հավաքել, զենք առնել ու մուսաստանի հարավով հասցնել Հայաստան:

Մարտի առաջին օրերն էին: Գերագաճն ինձ ասաց.

— Ենորհակալ եմ քեզանից, Արբահամ Երևանցի: Աստված հետզ: Ես գնում եմ Նախիջնան, Երեջակ ու Գողթան: Մնաս խաղաղությամբ:

Ես զգացի, որ նա լի կամենում բաժանվել ինձնից ու եման բան ասաց հարգանքից մղված: Ուստի ասացի:

— Ես ևս քեզ հետ կգամ, տեր գերագաճ: Ես այսուհետ միշտ քեզ հետ կլինեմ, եթե տերը ժամանակից շուտ շառնի հոգիս:

Նա գոհ մնաց:

Անցանք Արարատյան դաշտի երկայնքով, Խոր Վիրապում ու Տար-Արագածի գավառում այց արինք տեղի զինվորական զեղերին: Մտանք Նախիջնան քաղաքը, եղանք Շաղկերտում, Ազուլիսում և Սյունիքի լեռնաշղթայի գագաթների արանքով վերագրձանք Ջրաբերդ: Ամեն տեղ գերագաճը հետամուտ էր լինում ու ազմական ուժերի զորացմանը, ժողովրդին ոգեսրում հավատի ներշնչանքով:

Ջրաբերդից նա սուրհանդակ հղեց Սանկտ Պետերբուրի, թե ինչ խորհրդով, շիմացա:

Պարսկաստանի մայրաքաղաքից անվերջ աննպաստ լուրեր էին գալիս: Չորս ամսում շորս շահ են սպանել: Լայնատարած երկիրը զարձել է անպլուս: Նահանգներում ով տեղից թռել, իրեն անկախ թագավոր է Հաշակել:

— Մեր Հարեւան Իրանի այս անհշիտանական, խառնակ վիճակը մեր օգտին չէ,— հաճախ էր ասում գերագաճը: — Թուրքը ժրում է:

Ես երա ասածների մեջ, ո՞վ փառավոր աստված, շվիոթմունքի երանգ լէի տեսնում: Կյանքը Հայաստանում ընթանում էր իր երեկվա հանգարտ հունով:

Երկրի ապահովության համար մեր իշխանը նորանոր ուղիներ էր որոնում: Մի երեկո նա ինձ հարցրեց.

— Սահո՞թ ես Հնդկաց աշխարհին, եղայր իմ:

— Սահոթ լիմ, — ասացի: — Բայց ճանաշելը ցանկալի է:

— Դնա Հնդկաց աշխարհը, Արբահամ Երևանցի: Այնտեղ կհանդիպես մեծ զանառական աղա Մովսես Բաղրամյանին:

Հանդիպիր նաև մեծահարուստ Շահամիր Շահամիրյանին՝
Նրանք կօգնեն քեզ ու դու կանցնեմ օվկիանը: Ինդոնեզ
կղղիների երկիրը: Այստեղ՝ Մակասար քաղաքում է ապրում
Խոշա Սոլիմա Հայը, ծովերում Հարյուրավոր նավեր ունի:
Գնա նրանց մոտ, ասա թող Հայաստանին օգնեն ծովով ու
ցամաքով, ինչպես կկարողանան:

Գերագանն իր անունից կոչ-հրովարտակ գրեց ու ավեց
ինձ՝ բարի ճանապարհ մաղթելով:

Երկու օր հետո ես երեսիս խալ հանեցի, միացա Ագուի-
սից դուրս եկող վաճառական մի քարավանի ու գնացի...

* * *

Վարտնը հեռացել է Արաքսի ընդարձակ հովտից, ոչ ու-
տաստ, այլ բայլ առ բայլ բարձրացել դեպի լեռները՝ ծաղկած
գոտի թողնելով: Ավետարանոց գյուղավան ամրոցի պարիսպ-
ների ճեղքերում ինքնագլուխ բուսած պոշնենու թփերը բող-
քաշել են, երիսուփի ձորում փշատենին բուրում է թանձրու-
թառանդայի գավառը մեծ է շերտ-շերտ լեռներ և մի մեծ,
շատ մեծ գաշտ: Վարանդայի իշխան Մելիք-Հովսեփը, պարս-
պի եռատամ դետքում կանգնած, նայում էր ցածրում կառուց-
վող ինչ-որ շինություն:

— Տպագրական տուն կլինի, Շահնազար, — ասաց եղբորը:
Եղբայրը մասայից պե՞տք է:

— Սարըշալու Փանահը նորից է երեացել մեր սահմաննե-
րում, իսկ դու տպագրատուն ես շինում:

Ասաց: Լեզուն կծեց՝ ինչո՞ւ ասաց: Թռավ Զառյի Փանահի
մեջքին, նրան տապալեց: Ականջին ասաց՝ փախիր, ցեղապետ:
Լողալ գիտե՞ս: Գիտեմ: Նրան քարշ տվեց, զցեց Արաքսի
մեր: — Փախիր: Հոդափերինի կամբջի մոտ էր: Ե՞րբ էր: Է՞:

Առելությամբ նայեց մելիք եղբորը:

— Շարաթ օրը — ասաց, — մեկնում եմ Քաշաթաղի
Միծեռնավանը, ուխտի:

Իր Հարկարաժինը մտավ թթված: Կինը՝ Սոնան գեռ շեմից
խոնարհ գլուխ տվեց:

— Կուզենայի, ամուսին իմ, ես էլ ուխտի գալ Միծեռնա-
վանը:

— Արդելում եմ, — կտրեց Շահնազար բեկը: — Դու ար-
գանդիդ պառազը խնամիր:

Սոնան սպրդնեց: Բեկը հորանջնց գոհ: Հավէ է, իր ատելու-
թյունը գեղի եղայրը հասել է՝ կրակի մեջ խորովվող դդում,
Հիմա կպայթի: Չեռքերը շփեց իրար: Եղբայրն իր համար
արդեն հանգուցյալ է: Եվ ինչո՞ւ է ինքն իր լեզուն սրում: Թու-
րը պեար է սուր լինի, ոչ թե լեզու:

* * *

Միծեռնավանըի շրջակա լեռները կտրտված են ժայռաց-
ցերով, ձորակներով: Հող ու քար երես էին առել մայիսյան
փարթամությունից: Դետի ափերին կուտակվել էին անհամար
ուխտախմբեր: Սուրբ Միծեռին ուխտի էին եկել երկն երան-
սուն հազար մարդ՝ կանայք, երեխաներ, աղջիկներ, աղա-
մանցը թիւ:

Շահնազար բեկի մայրը ծփաց սպիտակ ձիու մրա: Նրա
կապույտ կապայի կարմիր փեշերը տատանվեցին ուրախու-
թյուն էլ քանի անգամ է նա զալիս այս հոշակավոր ուխտա-
տեղին: Նրա հետ էին նրա զրեթե բոլոր կին հարազաները,
բացի Առևայից, աղախիները, աղջիկ թռռնեկները և ութ
ձիավոր զինվոր՝ Շահնազար բեկի զլխավորությամբ: Ամբողջ
ճանապարհին, որ երկու օր տևեց, բեկը քացախած կարաս
էր, բառ շփոխանակեց նույնիսկ մոր հետ: — Հիմա էլ ժառա-
պիտի դառնամ սրան-երան, թեկուզ մորս, — մտածում էր
նա, — և այն էլ ողջ կյանքում:

Զիու վրայից Շահնազար բեկը թեքվեց դարձյալ ձիու վրա
տեկված իսրայել վարդապետի կողմը:

— Խրիստոփի հովազը փախավ, էլի՞:

— Փախավ, — իսրայելը կարծես հառաշեց: — Հիմա Հով-
հանես եանդամիրյանի ծոցումն է քածը:

— Կարոտո՞ւմ ես:

— Բայց ոչ նրան:

Անցան վանքի աջակողմով, ուր մի փոքր ազատ տարածք
էր մեացել: Ալորվեցին անհամար վրանների արանքներովէ
Վանքի միաբանները բեկին ու վարդապետին ողջունեցին խո-
նարճ՝ առատ նվերներ ստանալու հույսով:

Համբարձեսցն զիս
Ի համբարից բերանց յուրոյ,
Զի բարի ճե առինքը քո, քան զգինի...»

Երզը ծաղիկների բույրի նման փովեց վարանդացիների
ուտքերի տակ: Ծանեազար բեկը դրանք կոխկրտեց: Նրա մար-
դիկ վրան խփեցին զարնան ծաղիկների մեջ:

Սկավեց ուխտական շաբաթը:

Դալու երրորդ օրը Ծանեազար բեկն ասաց:

— Ուրախն եմ, որ հետս եկար, Խորայիլ վարդապետ:

Գեացին լողանալու կապույտ-զուլալ գետակում, որ հենց
վանքի մոտովն էր սահում ու մտնում ավելի մեծ մի զետ:

— Յզը ովազ է, շուրը ևս,— ասաց վարդապետը: — Կմըր-
սենք:

— Երեսում է նանի պահած ես:

Ինը լողացավ, վարդապետը՝ գուրս եկավ շրից, շորերը
հագավ հենց թաց մարմնի վրա:

— Պետք է ուխտավորների մեջ լինի հնձորեստանի տա-
նուտեր Միրզեխանը, վարդապետ: Ճանաշում ես:

— Կիտեմ, — ինչ-որ գաղտնիք գուշակելով ասաց Խորա-
յելը:

— Պետք է, որ ծպաված լինի: Պտիր և բեր մոռա:

— Դամանանի՞ն:

— Պտիր և բեր մո՛տո, — կատաղի, բայց ցածր ասաց
Ծանեազար բեկը: — Եթե մատնել ես, կոկորդդ կկտրեմ:

Բեկը ոչ մի անգամ շմտավ տաճար:

Խորայիլ վարդապետը գտավ հնձորեստանի փախատական
տանուտեր Միրզեխանին: Փերնզակի կերպ ուներ, մաստակ,
թել-ասեղ ու նման մանրուք էր ծախում ուխտավորներին:
Խորայիլը երան գիշերը, ծածուկ բերեց Ծանեազար բեկի
վրանը: Ուզեց գուրս զալ, բեկը ձեռքով արեց:

— Մնա:

Մնաց: Երկար լուռ մնաց բեկը, ապա միանգամից բոր-
բորվեց:

— Կաշիդ մաշկիլու եմ, Միրզեխան: Ո՞ւր ես:

— Հրամանիդ հետեից, — կմկմաց Միրզեխանը: — Խո-
նարհ բարեսում է: Ասում է հույսով եղիր, չբազացը մեր աղունն
է աղում:

Իսրայել վարդապետը կռահեց, որ խոսքը Փանահ ցեղապետի մասին է: Միրզեխանը նրա վաշում է ապաստանում: Վիրավոր փախել է Շահնազար բեկի մոտ: Բեկը նրան կազդուրել է և ուղարկել ցեղապետին ի պահ:

Բեկը հայացքով խոթեց Իսրայելին:

— Պատրաստվիր եպիսկոպոս գառնալու, հետո՝ կաթողիկոս:

Իսրայելը պատրաստ էր համբուրելու նրա ձեռքը:

* * *

Նոր գիշեր է: Շահնազար բեկը փերնզակի կերպ մտած Միրզեխան տանուտերին ասաց.

— Այսօր Գոհար միանձեւու դպրոցի զիազակ գործող կույսեր տեսա զանքի բակում: Բոլորը չէին: Երեք: Մեկը՝ Մալայիկ, Հայոան Զալալյան տնից, մյուսը՝ Երնջիկ, Դիզակի քած: Երրորդին շղիտեմ: Իմ մարզկանցից երեք հոգի կլինեն հետդ: Երնջիկին կուղարկեմ Փանահ ցեղապետին:

— Առավոտ, իրիկուն անունովդ է երդվում, — ոգևոր ասաց Միրզեխանը:

— Ունո՞ւմ ես, — բեկը ձեռքը տարավ կողքին դրած գավազնին: — Ունում ես, շուն: Սարըշալլու թլակավածը ինձ ի՞նչ բարեկամ:

— Կտրիր գլուխա: — Միրզեխանը վիզը երկարեց: — Փանահը քեզ ավելի հավատարիմ է, քան իր Մուհամմեդին:

Շահնազար բեկը վեր կացավ:

— Բեկդաժորի ջրաղացում կհանդիպեմ քեզ:

Իսրայել վարդապետը, թեն ցնցված էր այս ամենը լսելոց, բայց և ինչ-որ շափով ոգեոր էր: Հետաքրքիր անցքերի վկա պիտի լինի: Դե, ինչ կա որ: Ինքն էլ ինչ-որ տեղ, թեն մեղա գալով. ինչ-որ տեղ ուզում է ինքն իրենից ազատվել, ինչ-որ շոս բան զառնալ: Ազատվել, այս, ինքն իրենից: Եղթաները իր ոտքերին շեն, այլ՝ հոգու մեջ: Եվ դրանը իրեն են: Իր շղթաները: Եվ ոչ ոքի մեղազիր լի լինում: Անիծում է իրեն ստեղծողների հիշատակները, ինչո՞ւ են իրեն անոռվոր ծեել: Ինքը կուզնեար ասենք Շահնազար բեկի նման լինել: Ազատ է, ինչպես ործ վարազը՝ մերունների հոտի մեջ:

Դիշերը ահուելի թաղնել էր ձորերի ու լճոների վրա: Աւա-
տեկները մրափի մեջ էին: Խրայնել վարդապետը ձին լարեց
Շահնազար բեկի ետևից, երանի տալով նրան: Ո՞ւր է տանում
իրեն: Իհարկե ոչ գժոխք: Նա գժոխքի մարդ չէ: Նրա հետ
կարելի է զնալ վայրի խողի որսի, միայն թե էզ լինի...

Լուսաբացը գեռ չէր ժագել, երբ հասան Բերդաձորի ջրա-
դաշին: Մուլ, մոռացված տեղ էր:

Դրազացպանը մարխը ձեռքին դիմավորեց իր տիրոջն ու
վարդապետին: Բոնեց բեկի ձիու սանձը: Բեկը թռավ ցած:
— Բերել են:
— Բերել են:

Շահնազար բեկը ջրադացպանի գոգը ցցեց փողով զրն-
գացող քամկ: Երեաց Միրզինան տանուաերը: Բեկը ուսով
նրան մի կողմ հրեց: Մտավ ջրադացի մոտի փայտից հյուսած
խրճիթը: Վարդապետին քաշեց ետևից: Միրզինան տանու-
աերը այժենականի մեջ փաթաթած մի քան բերեց, դրեց
դորգով և ատած թախտին: Բեկը այժենականի փեշերը հտ
տվեց: Կարմրավուն լույսի մեջ միանձնուհին դժգույն երեաց:
Բեկը շոյեց նրա ծնոտը:

— Դու Երնջի՞կն ես, չէ՞:
— Ե՞ս եմ:

Երնջիկի ձայնը ըմբոստ չէր, այլ՝ հաշտված խոնարհ, հետ-
պանդ:

Անկյունում երկու աղջիկ էլ էին կծկված: Շահնազար բեկը
Հմբթեց նրանցից մեկի կուրծքը:

— Դու Մալայիկն ես:
— Հասան Զալալյանն եմ...

Շահնազար բեկը դարձավ երրորդին:
— Դո՞ւ:

— Ես որբ եմ,— գողաց աղջիկը: — Ես ուամիկ եմ: Հայրս
սպանվել է Դանձակի կովում: Մայրս...

— Լավիկն ես,— նրա շապիկը պատելով մռմռաց Շահ-
նազար բեկը: — Դե՞... — Նա աղջկանը բարձրացրեց, դրեց
իւրայիլի գրկում: — Վայելիիր:

Երնջիկը բացեց կուրծքը:

— Ինչ կամենում ես, արա ինձ հետ, ողորմած բեկ! Միայն
աղաւանքս է՝ Մալայիկին շլկե՞ս...

Շահնազար բեկը Երնջիկին գցեց Միրզեխանի թևերին:

— Իմ կողմից սրան նվեր տար Սարբալու ցեղապետին:—
Գրկեց Մալայիկին:— Դու իմ բաժինն ես, Մալայիկ:

— Միայն պայմանով, որ քինը դարձնես ինձ,— ասաց
աղջիկը:— Այլապես դու իմ դիակին տեր կդառնաս: Ուրախ
եմ, որ խիզախ ես: Ես վախկոտ ամուսին շեմ ուզում:

Շահնազար բեկը տեղից թռավ, բռնեց որր աղջկա ուսը,
տարավ դեպի դուր:

— Փախի՞ր... Դու ազատ ես: Քո մայրապետ Գոհար իշ-
խանունուն պատմիր իմ բարությունը: Փախի՞ր...

Աղջիկը վազեց դուրս ու ձուլվեց խավարին:

* * *

Կես տարի է անցել Միծեռնավանքի առևանգումից: Եվ
եթե հիմա աշուն է, գեռաս չի նշանակում, թե շատ բան է
փոխվել մեկնումեկի կամ երկրի կյանքում: Մի մազ էլ չի
շեղվել աշ կամ ձախ: Տեր Ներսեսը շարունակում է կաթո-
ղիկոս մնալ և, ինչպես երկում է, բնավ էլ մեռնելու միտք
շունի:

Նո՞ւյնը: Նո՞ւյնը: Նո՞ւյնը: Զզվելի է տաղտուկ նույնու-
թյունը: Ավետարանոց ամրոցը շարունակում է ժայռին պազած
արջի նման փնթփնթալ ինքն իրեն: Կարծես հենց նոր է թա-
թով զարկել, սպանել մի զիթխարի արջառ ու ահա-ահա կհո-
շոտի նրա տակավին շնչող՝ ծուխ անող մարմինը: Մելիք Հով-
սեփը ցնծում է: Տպարանի շնչողը կառուցել, վերջացրել է:
Կարծես մի նոր Անի է հիմնել կամ նոր Գանձակ: Ամեն մարդ
իր զուտնայի տակ է պարում, կրակն իր բաղարձի տակը
քաշում:

Շահնազար բեկը մտրակը շրխկացրեց Միրզեխան տանու-
տերի ուսով մեկի: Տափաստանի փոշի ելավ մտրակի տակից:

— Ուրեմն, իմ նվերը խժուե՞լ ես, Հա՞: Հա՞: Տեղ շես
հասցրել, Հա՞:

Միրզեխանը ծունկի եկավ՝ ոնց որ գետից հանած կատու:
Զայնն էլ կատվի մլավոց էր.

— Վիզա կտրի՛ր, տեր Շահնազար: Մեղք ունեմ: Ունեմ: Մարդ արարած եմ, չէ՞: Մի ամբողջ ամիս Երնջիկի հետ մնացի Արարախ եղեգնուտներում: Տա՞մ, թե՝ շտամ: Հոգիս տուռմ էր՝ տուր, մարմինս, որ կրակ էր ընկել՝ չէր կամենում: Ո՞չ: Մեղք քեզ, իմ տեր: Վերջապես՝ ախր ինչի՞ տամ, է՛: Ինչը կին շունեմ: Երբ ինձ գլորել են սարից...

Շահնազար բեկը նրան քացի ավեց:

— Հիմա ո՞ւր է:

— Երնջի՞կը, — հարցրեց տանուտերը: — Երնջիկը հիմա իմն է, իմ կինը: Ես Փանահ ցեղապետին ուրիշ կին նվիրեցի քո անունից: Փախցրի Մեղքու կողմերից: Դրանում ինձ օգնեց Երնջիկը: Էն խալը վկա, փախցրածս ոնց որ սարում մեծացած կխոտար: Փանահը անշափ գուն մնաց:

Թվում էր Շահնազար բեկը շանսատակ կանի Միրզեխանին: Չարեց: Դե ո՞ր ախմարը իր որսի շանը կտա, կսպանի:

— Այդպէ՞ս: Այդպէ՞ս, — մոլուսց բեկը: — Ո՞ւր է կինդ:

— Հետո բերել եմ, — թերով քթի արյունը սրբեց Միրզեխանը: — Քո տանն է:

— Բերել ես՝ իրրե Մալայիկ տիկնոջս ազախին, այս:

— Կամ բը քոնն է, — զլուխ տվեց տանուտերը: — Դու միշտ բարի ես, տեր իմ: Համաձայն եմ:

* * *

Հնդկաց աշխարհում մնացի երեք ամիս: Շոգից մոլեզնող թմրություն էր ամեն տեղ: Կիսամերկ գեղջուկ հնդիկները մատներով փորում են թթված հողը, կորեկ ցանում մեջը: — Օ, Բուգդա, օգնիր: — Գետերը այնքան մեծ են, որ մի եղրից մյուսի վրա տնկված սրբազն Բուգդա աստծո վիթխարի տաճարները հաղիվ են եշմարդում: Գետերում խլրում են դոմեշի մեծությամբ ձկներ, գետացուկեր: Ծյուղերից սարքած խրճիթները փլվում են հսկա վիշապ-օձերի գալարվող մարմինների տակ:

Հայ մեծահարուստները լսեցին ինձ, կարդացին զերազակի նամակը:

— Զայնն հայոց աշխարհի:

Լոեցին մի ամբողջ ամիս: Մի ամբողջ ամիս հետո ասա-

թիմ: — Մենք ստուգեցինք, իմացանք, թե դու ով ես, Արրա-
համ Երևանցի: Բարով ես եկել: Իմացանք: Հիմա դո՞ւ իմա-
ցիր: Այս է մեր զնիոր՝ օգնել Հայրենիքին: Օգնել զենքով,
ուկով: Էլ ինչո՞վ... Կուղարկենք ծռվով, Ղրիմ: Այնտեղից...

Ինդուեզի Մակասարում Խոշա Սոլիմա հայը լաց եղավ:

— Ա՞յս, Հայրենիք իմ: Ա՞յս, գժրախտ ժողովուրդը: Երեք
օվկիանոսային նավ եմ Նվիրում Հայաստանին: Նավերի բեռ-
ները զենք՝ Հրացան, վառող, թնդանոթերը: Ո՞ւր ուղարկեմ:

— Ղրիմ, — սա ացի: — Ղրիմի ժողովրդի կեսից ավելին
հայ է:

— Գիտեմ, — ասաց Խոչա Սոլիման: — Հետները առևտուր
ունեմ:

Այսպես եղավ իմ արածը: Հիմա տուն եմ գալիս: Մի շա-
բաթ առաջ Երնջակում էի՝ Հովհաննես Խանդամիրյանի ու
Ասպապ տիկնոց տանը: Հիմա Ավետարանոց եմ հասել: Մի
Երկու օր Հետո կմեկսեմ Զրաբերդ:

Այստեղ բոլորը հարազատի պես են վարվում հետո՝ Մե-
լիք Հովսեփը, նրա տիկին իշխանուհին, Շահնազար բեկի
երկու կիները, առաջինը՝ Սոնան և նորը՝ Մալայիկը:

— Ես քեզ տեսել եմ մեր վարժարանում, պարուն Արրա-
համ, — ասաց Մալայիկը: — Դու եկել էիր մեր մայրապետ
Գոհար իշխանուհուն այցի: Տեսել եմ: Իմ նկատմամբ հա-
տուկ խնամք էր ցուցաբերում նա:

Օ՛, Շահնազար բեկ, բարի եղիք երխուփի նոր հովազի՝
Մալայիկ խաթունի հետ: Նա հավատարիմ կլինի քեզ, ինչ-
պես սեփական ձեռքը: Նաև գոհացիր տիրոջից, երխուփի
հովազն ոյլան լի ճանկուտում քեզ, լի թքում վրագ: Ենից
վախեցած կատվի պես նա հիմա ծվարել է Երնջակի զորա-
պետի ութերի արանքում: Այո՛ շնից վախեցած, մրսող կատ-
վի պես...

Շահնազար բեկը ամրոցում իր նոր կնոջ Մալայիկին
առանձին հարկ է հատկացրել: Երբեմն, երբ գնում եմ եկե-
ղեցի, նեղ պատուհանից Մալայիկի աղախինը լեզու է ցույց
տալիւ հնձ: Բեկի մայրը խոցոտվում է: — Բա սա բա՞ն է,
որ որդիս արեց: Երկրորդ կին է պահում: Երբեմն նա դիմում
է մեծ որդուն: — Փրկիր մեզ ապականությունից: — Մելիք-

Հովսեսից ձեռքերը թափահարում է: — Հեռո՞ւ, հեռու ինձ մի
քաշեր ձեր զզվոտոցի մեջ: Հեռո՞ւ:

Երբ ես մնկնել եմ Հեղեաց կողմերը, Հենց իմ մնկնելու
օրը վախճանվել է սրանց հայր Մելիք Հուսեինը: Ըստ հետոց
սրբացած կարգի, ավագ որդին է զրավել նրա իշխանական
աթոռը: Սոնաւ, որ Շահնազարի առաջին և օրինավոր կինն
է, հեազանդ է ընդունել ամուսնու նոր կնոջը: Ամուսնուն
միայն ասել է.

— Նոր թշնամիներ վաստակեցիր, զինատերս: Նոր կինդ
եալենի Հասան Ջալալյան զարմից է: Նրա տերերը գանակ
կարեն քո զեմ:

* * *

Երկրի գունդն սկսեց հակառակ պտտվել՝ ոչ թե ձախից
աջ, այլ՝ աջից ձախ: Ո՞չ, ի՞նչ եմ ասում, երկիր գունդը զա-
հավիժում է դեպի անդունդ, ետեսից քարշ տալով նաև զըգ-
բախտ արևին: Դե, ի՞նձ ինչ: Այս օձը, որ ինձ շի կծում, թող
հազար տարի ապրի: Բայց մեղա, մեղա, այս ի՞նչ դուրս
տվի:

Մի երեկո, եկեղեցուց տուն գալիս, Շահնազար բներ և դ-
րորն ասաց.

— Ատրպատականի Մարաղա գավառի վերիլ-նայիրը գնա-
ցել է Սպահան, քեզանից բողոք անելու նորընծա Ազիլ շա-
հին, եղբայր իմ:

— Գլուխը քա՛րը: Մեր երկիրը օտար շահ ու օտար թա-
գավոր շի ճանաշում: Մենք ինքներս ենք մեր զլխի տերը:

— Գնացել է շահին բողոքելու, որ իբր գու և Դիզակի Մե-
լիք-Եսային ուզում եք Մարաղայից վոեցեք իրեն՝ շահի
նայիրին:

— Մարաղան ևս մերն է, հայինը, որ զավթել է պարսիկը:
— Ասում են՝ իբր կողոպուտի, ավարի համար եք անում:

— Պիտի զործենք ակն ընդ ական, — ասաց մելիրը: — Մեր
Հողը պետք է ետ առնենք: Մարաղան նոյի ծննդյան օրից
հայինն է: Իսկ կողոպուտ-ավարը օրհնված է: Հենց իրենց
Դուռանն է ասում՝ եթե քեզ հարցնեն ավարի մասին, ապա
դու ասա ավարն ալլահինն է, նրա մարգարեինը:

Դիշեր է: Ես կամեցա զնալ իմ սենյակը, սակայն Շահնատ-
դար բեկն ինձ կանչեց: Է՛, քեզուս ախորժակին քացախ արեց:
Գեացի: Ապարանքի ընդունարանում կերոնենքր ու շատ ջաներ
էին վառվում: Մելիք եղբոր պատվին Շահնազար բեկը կե-
րուխում էր սարքել:

Խրախճացանք, վայելեցինք լիովի:

Դիշերվա կեսին Շահնազար բեկը հրաժեշտ տվեց եղբորն
ու վերադարձավ իր հարկաբաժինը, որ երկարուկ ձգված ամ-
րոցի ծայրին էր, զորանցներից ոչ հեռու: Ես նորից կամեցա
զնալ իմ օթևանը, բայց այս անգամ էլ բեկը շթողեց:

— Եղիր ինձ հետ, — կորովեց նա: — Այս զիշեր զու վկա
կլինես զարմանալի բաների: Ե'կ:

Ինչոր տեղից գուրս եկամ Միրզեխան տանուտերը՝ ինձ
անձանոթ շորս զինվորի հետ: Մենք մթության մեջ մտանք
Մելիք-Հովսեփի հարկաբաժինը: Մեծ գուան մոտ պահակող
ծառան փափախը հանեց՝ բեկին ողջունելու: Շահնազար բե-
կը տապարի բութով հարվածեց երա զլիսին: Պահակն ընկապ
առանց նույնիսկ ճշակու: Բեկը Միրզեխանին ցույց տվեց եղ-
բոր երեխաների սենյակները, որ երեքն էին, միմյանց կից:
— Վերջացրե՞ք...

Իմ ձեռքը քաշելով, ինքը մտավ եղբոր ննջասենյակը: Պա-
տի մեջ խրած կերոնը թույլ լուսավորում էր ընդարձակ մահ-
ճակալի բարձերը: Երկու զլուխ անփույթ հանգչում էին զրանց
վրա:

Շահնազար բեկը առաջին հարվածը տվեց եղբոր կրծքին,
ուղիղ սրտին: Պահակը դժվարով դուրս հանեց, մոլեխինդով
խրեց նրա կեռչ բաց ծեմքի արանքը: Մելիք Հովսեփին ընկապ
մահճակալից, վերջին ճիգով հառաջեց.

— Դու Պարաբաղն սպանեցի՞ր, Շահնազար շուն:

Փոքրերի սենյակներից դուրս եկան Միրզեխանն ու մյուս
երեք դահիճները:

— Բոլորին վերջացրինք:

Հատակին, արյան մեջ գալարվում էր մի աղջնակ: Սա զո-
շից:

— Հորեղբայր, մեզ կոտորում են, փրկի՞ր:

Շահնազար բեկը ուրբը դրեց մեռնող աղջնակի կոկորդին,

սեղմեց: Աղջնակը դադարեց թպրտալուց: Ես, որ սոսկումից
քարացել էի, բռնեցի բեկի թեր:

— Ի՞նչ արիր, ի՞նչ արիր: Ինչո՞ւ ինձ վկա դարձրիր այս
նախնիրին:

— Վկան էլ հանցակից է, — Հանդարտ ասաց Շահնազար
բեկը: — Գետնը:

Դուրս գալով հղոսր հարկարաժնից, բեկը հեծավ ժառա-
ների մատուցած ձին, քշեց զորանոց, արթեացրեց զորապետ-
ներին:

— Մելիր Հովսեափը ոչ ևս է...»

Ենեց խոր, ցնծությամբ գոշեց.

— Այժմ վարանդայի մելիրը ե՞ս եմ: Ե՞ս եմ...

Նա ձիու թամրից վերցրեց կաշվե խոշոր խուրզինը, ոցեց
ավագ զորապետի ստքերին:

— Զորքին ոռճիկ սուլու: Յուրաքանչյուրին տասնհինգ ոսկին:

Ավեարաբանոցի առավոտը բացվեց արյունով: Շապավագ
եկավ հարայիլ վարդապետը: Շահնազար բեկը քրքջաց նրա
երեսին:

— Հիմա, կարծում եմ, զո՞ւ կլինես, իսրայել վարդապետ:
Սուրբ Ամարտակ գահը անձիդ է սպասում:

Մի ժողովոց սրի պես միրճվեց թիկունքս:

— Փախաշ՝ վ, փախաշ՝ վ... Փախցրեց օձի ճտին: Փախաշ՝ վ...

Երջվեցի ետ, Մալայիկ խաթունն էր ճշացողը, մի ձեռքին
ճապուկ սուլու, մյուսին՝ ատրճանակ:

— Սուրբ Երնջիկը փախաշ՝ վ: Հասցրեց թոցնել մելիրի հղ-
բող փոքրին՝ Եսայուն ու փախչել: Եթե իմանայի՛...

— Բայց, բայց, — կմկմացի ես, — ինչո՞ւ ես զայրացել,
չէ՞ որ քո աղախինը մարդ է փրկել, երեխա է փրկել սրածու-
թյունից:

Մալայիկ խաթունը քրքջաց: Նրա հայացքը ճեշող էր: Մի՛-
թե սա է երխափորի հովազը:

— Իսկ ես իմ ամուսնուն եմ փրկում՝ վարանդայի իշխան
Մելիր-Շահնազարին:

Արեք ելավ տափաստանից ու կարմիր ներկեց Հայոց աշ-
խարհը: Խրխուփի ձորում մոնշաց ահուսարսափ շեկ հովազը:
Ես ցնցվելով նայեցի ձորին: Ասպազի հիմնած զրատունն

ավերված էր... Տպարանի շենքը կիսատ մնաց: Հովազն արթ-
նացավ արյան հոտից: Լեռների վրա իր ոսկեծուփ մաղերն
էր փետում հայոց երկինքը:

* * *

Ես շտապեցի մեկնել Զրաբերդ՝ Հայոց գերագահ իշխանի
մոտ: Շահնազար բեկը եկավ ինձ ճանապարհելու:

— Ինչ տեսար, այն էլ կպատմես աշխարհին, խոչա Ար-
քանամ Երևանցի: Ներող եղիր, որ քեզ ինչ-որ շափով ան-
հանդստացրի:

— Մակայն, բեկ, դու եղբորդ սպանեցիր:

— Իշխանությունը եղբայր, որդի, հայր, մայր չի ճանա-
շում, — մոռալ ասաց Շահնազար բեկը: — Նաև պատշաճ է,
որ դու ինձ այլևս «բեկ» չասես, այլ՝ մելիք, իշխան: Երթառ
քարով: Իմ գուոր միշտ բաց կլինի քո առաջ: Երբ կամենաս,
համեցիր:

Երկու օր հետո ես արդեն Զրաբերդում էի: Գերագահի
մոտ էին հավաքվել Հայոց աշխարհի բոլոր իշխանները: Եկել
էին նույնիսկ հեռավոր Նախիջևանից, Երևանից, Լոռուց: Ան-
զուսպ գրգռված էին բոլորը:

— Անհապաղ պետք է զորքով մեկնենք Վարանդա, ոչ ն-
շացնենք ապօրինի մելիքին, — պահանջում էր եաշենի Հա-
սան Զալալյան Մելիք-Ապրես իշխանը:

— Հիմնահատակ կործանել Ավետարանոց գավաճան բույ-
նը, — գոշում էր Դիզակի-Մելիք Եսային:

— Պատժե՞լ...

— Մի՛ շտապեք, — հանդարտ խորհուրդ տվեց գերագահ Մելիք-Աստվածապով իշխանը: — Պետք է կշռադատել իրա-
վիճակը, որպեսզի ունիներս շինելու տեղ, աշքներս չհանենք:

Նրա այս մտածածը ինձ բավականին հուսադրեց, Յս իշ-
խաններին ասացի՝ եղածն արդեն եղել է: Չի հարկավոր
կրակի վրա յուղ լցնել: Այնպես արեք, որ Վարանդան մնա-
ձեր համակարգում:

— Ներող կլինեք, — ավելացրի վերջում: — Ես իրավունք
չունիմ խառնվելու պետական ձեր զործերին, բայց իրքն

աշխարհ՝ տեսած, փորձ ունեցող մեկը, այսպիս խորհուրդ
կտայի: Զգուշացեք պառակտումից: Դա միայն թշնամու օգ-
տին կլինի:

Գերագահի խնդրանքով ես պատմեցի իմ առաքելու-
թյան մասին: Ներկայացրի, թե Հնդկաստանի, Ինդոնեզի-
այիրն ինչպիսի պատրաստակամությամբ են ընդունել մեր
խնդրանքը, ինչ օգոստուսին են առաջելու մեջ Նկատեցի, որ
իմ այս հայտնածները այնքան էլ իշխանների, հատկապես
Խաչենի ու Դիզակի տերերին շհետաքրքրեցին: Նրանց ուշքը
իրենց վերագործածության օգակում է: Մելիք-Շահնազարը,
որ Մելիք-Խսայու քրոջ ամուսինն է, իր արարութ վեասել է
Դիզակի պատիվը:

Մի երկու օր հետո զերագահն ինձ ուղարկեց Վարանդա՝
Մելիք-Շահնազարի մոտ: — Աշխատիր մեղմել շարի մոլոց-
քը, Աբրահամ եղբայր:

* * *

Ավետարանոցում կատարյալ անդորրը էր: Ոչ մի խրինա-
ծածուկ բան չտեսա: Երևութակա՞ն է: Դժվար է ասել: Մելիք-
Շահնազարն այս անգամ էլ ինձ դիմագործ, ընդունեց սի-
րալիք:

— Աւախ եմ, որ եկար, խոշա Աբրահամ: Իմ իշխանա-
կան զբագիր-քարտուղարն իրեն կախել է: Տիմար... Գոհ
կլինեմ, եթե դու փոխարինես նրան, ոչ ինձ ժառա, ոչ, այլ
իրեն ինձ օգնական ու բարեկամ:

Ես ընդունեցի նրա առաջարկը: Կարծում եմ նման պարա-
գայում ես առավել օգտակար կլինեմ ազգիս:

Ապրում եմ իշխանական ապարանքում, ինչպիս ձուկը՝
շրում: Մելիք-Շահնազարը դադար շուներ: Ջրազգած էր զոր-
քով, հաճախ էր մեկնում իր իշխանության տակ եղած զյու-
ղերն ու ավանները: Զարմանալի շռայտությամբ թեթեացնում
էր զյուղացիների ու արհեստավոր մարդկանց վիճակը, հոգե-
վոր գասի հետ մտերիմանում:

Բայց նորից շտեսնված բան պատահեց: Թե ասեմ դրան
ևս տեղյակ չեմ, շագատաք, մարդիկ: Բայց ի՞նչ, ի՞նչ: Ասա-
ցի տեղյակ չեմ, պրծավ-գնաց: Ուզո՞ւմ եք երդվեմ...

Փախստական տանուտեր Միրզեխանը, որ նոր էր եկել Զառչի Փանահի մոտից, ինչ-որ կասկածելի լուրեր էր հաղորդում մելիքին: Ահա նա ասաց, թե Մելիք-Ապրեսի կրտսեր եղբայրը կաթված է ստացել, հիվանդ է: Կինը՝ Թագուհին օրը մի ոշխար է մատաղում Գանձասարի ուխտին:— Օ՛, տեր ողորմած, ապարինիր, փրկիր ամուսնուս:

Մելիք-Շահնազարը հռչուաց:

— Չքնաղ եղնիկ է այդ Թագուհի խանումը: Գիտեմ, շատ եմ տեսել: Ինըը հրեշտակ է, ամուսինը՝ կռւած ջորի: Խոզի առաջ մարզարիտ են զրել: Ոչ երկնքում կա նման չքնաղ կին, ոչ մեղսածանը երկրի վրա:

* * *

Մի երկու շաբաթ հետո Շահնազար բեկը ինձ կանչեց իր օթեանը: Բանալիով կողապած մի գուռ բաց արեց:

— Նայիր, սա՞ է, Արրաջամ Երևանցի:

Դորդի վրա, գորգով ծեկները կծկած նստած էր Մելիք Ապրեսի հիվանդ եղբոր կինը՝ Թագուհին: Ես ետ-ետ գնալով, կպա սկատին:

— Այս զիշեր բերի: Բերել ավի:

Կաշենի Մելիք-Ապրես իշխանը իր տանու քահանային ուղարկեց Մելիք Շահնազար բեկի մոտ:— Եղբորս կնոջը ետ տուր, զող Շահնազար բեկ:— Մելիքը բանբեր քահանային ապատակեց ուժդին:

— Թե քո տերը տղամարդ է, թող զա իր հարսին հանի ծոցիցս:

Քահանան ընկալ նրա ոտքերը:

— Հասկացիր, զու քանզում ես հայոց տունը: Մեր հարսին ետ տուր: Ետ տուր:

Դիզակի Մելիք-Ծաային ես մարդ ուղարկեց Շահնազարի մոտ:— Դու անպատվում ես քո օրինավոր կեռջը՝ Սոնային, որ իմ քույրն է: Ուղղիր ծուռ ընթացք, փեսա իմ, այլապես քեզ շանսատակ կանեմ:— Շահնազար բեկը երկար քրքչաց այս մի բանբերի երեսին ես: Բերել տվեց իր կանանց՝ Սոնային ու Մալայիկին: Թագուհուն կանգնեցրեց ոտքի, երեքին ստիպեց համբուրգել:

— Համբուրգիցեք, — զոռաց նա: — Երեքդ մի մարմին ու
մի հոգի: “Ի՞ն”...

Աչից երեքն իրար փաթաթվեցին: Լաց եղան...

— Այսպէս, — հետո Շահնազար բեկը: — Այսպէս: —
Եսայու բանբերին հրեց դուրս: — Դնա քո տիրոջը պատմիր,
ինչ որ տեսար:

Ո՞չ, ո՞չ: Այս բանին ևս ես տեղյակ լիմ: Տեղյակ շեմ:
Ֆեղ է ընկել Հայոց տունը: Գերազահ իշխանը միայն մի ան-
գամ ինձ հարցրեց Մելիք Շահնազարի արարքի մասին: Բազ-
մակի՞ն է: Հարցրեց ի միջի այլոց, ոչ կրքով կամ ցավով:
Պետության զլուխն է՝ իր զգացմունքների ու, հատկապես,
խոսքերի մեջ շափականց զուսպ: Սակայն ցեցն արդեն կա,
իշխան, և դու քեզ մի՛ պարուրիր միայն պետական գործերի
զրահով: Մանր անձրեսից էլ է հեղեղ ծնվում: Մելիքը նսային
խոռվ է Շահնազարից՝ անպատճեց իր քրոջը: Մելիք-Ապրեսը
թշնամացած է, անշուշտ, իր եզրոր կնոջը հափշտակողի դեմ:
Ա՛յս, այս կանա՛յք... Աշխարհ են ավերում, կյաները ու գա-
հեր կործանում: Հայոց երկրի բոլոր կողմերից քրթմնչոցներ
են լսվում Մելիք Շահնազարի դեմ: Նա հոհում է միայն: Բո-
ղոքներն ու անեծքները նախ ինձ են համում: Ես զրանք, պարտ-
քիս բերումով, հաղորդում եմ մելիքին: Մելիք-Աստվածա-
պով իշխանը որեւ ցուրտ բան չէր նետում Շահնազարի վրա:
Իմ միջոցով ողջունում էր նրան, հարցնում զորքից, ժողո-
վրդի վիճակից:

* * *

Գետում ենք Շիկաքարի բերդը: Հին անունը մոռացվել է,
հիմա Շուշի են ասում: — Շուշի բերդը պետք է նորոգեմ, —
ցանկություն հայտնեց Մելիք-Շահնազարը: — Թշնամիներս
շատացել են:

Նա հարյուրավոր քարագործ վարպետներ, նաև մի քանի
ճարտարապետ էր հրավիրել իր տիրույթների զանազան կող-
մերից՝ իր այդ նպատակը զլուխ բերելու համար: Ես զիտեի՝
այս մարդի ինչ վճռում է, անդարձ է, պետք է հասնի զրա-
կատարմանը: Հարցրեց՝ հի՞ն է:

— Շատ հին, — կռահեցի, որ հարցը Շուշուն է վերաբե-
րում: — Քիւը-քիւը էի մի երկու հազար տարվա է:

Նոր էինք մտել ահաւառ, երբ մեր դիմաց գուրա եկավ մի
քահանա: Անծանոթ էր, տառապած, զլխի մազերը խռիվ, ու-
քերը հազիվ էր բարչ տալիս: Մեզ տեսնելով նա փլվեց մի
հակա ծառի տակ, սկսեց ճանկուտել ծառի բունք:

— Մորթեց, կոտորեց...

Մենք իշանք ձիերից: Քահանային ջուր տվինք, ջուր լըց-
րինք նրա զիլախն, մեջքին, կրծքին: Սա թափահարեցի նրան:
— Ի՞նչ է եղել, խոսիր:

— Կդիմանա՞ք լսածներիդ, — հեկեկաց նա: — Ո՛, ահեղ
աստված: Մեղրու Եվանիձորից եմ: Ու բախտավոր... Զառշի
Փանահ ցեղապետը եկավ մեզ վրա... Կովեցինք սակավ ու-
ժերով: Եռւնը կողոպտեց զյուղը: Հասցրեց մի բառասուն
երեխա ու մի հինգ-վեց կին գողանալու: Ես միացա դժբախտ
զավակներիս: Մեզ՝ զերիներիս անցկացրին նրանի գետը:
Մտանք Ատրպատական: Հասնելով իր ամառային մի որչը,
ցեղապետը հրամայեց կանգ առնելու: Նա գարձագ ինձ: — Թանի
որ քո կամոք եկար, մուրտառ քեշիշ, ապա ինքդ ընտրիր քեզ
տալիք մահվանդ ձեր: Սա նրան ասացի նախ ինձ սպանիր,
հետո երեխաներին: Ցեղի տղամարդիկ, երևի երկու հարյուր
արևախուռմեկը, ոռնացին արյուն ձարավի: Նրանց վաշի
կենտրոնում, որ իրը թե աղոթառեցի է, խլրտացին դժբախտ
զերիները: Երեխաները մաեր էին, հինգ-վեց տարեկան: Նորին
ցեղապետի առաջ զցեցին եղրորս երկու մանրիկ տղնիներին:
Նրանց դրին քարերի վրա ու սկսեցին հանգամանորեն մոր-
թել: Ես աշքերս վակեցի: Փանահը եղունգներով բացեց կո-
պերս: — Նայիր, քեշիշ: Մուհամմեդի մոր պատվին զուրբան
ենք անում: — Փաքրիկները, երեխաները զեպի երկինք, պառկել
էին անշարժ, նույնիսկ վիզեները երկարել Արբահամի գառան
նման՝ կտրեցիք: Նրանց պնչերից արյուն ոթեց: Ականջիս
հասան իմ եղրոր կնոշ, էլի կանանց ծկլթոցները: Սարաջա-
լուցիները նրանց բռնաբարում էին մեկը մյուսից խլելով:
Ախ, հարազաւնե՞րս: Մեղա-, մեղա... Իմ պոռշներն այն-
պես էին ուղել, որ ես նույնիսկ չէի կարողանում թքել դա-
հիմների կողմը: Զառշի Փանահը արի ծայրով սկսեց խոցոտել
մանուկ աղջիկների կրծքերը: Արյուն էր ժայթքում: Ցեղա-
պետը բեզերը դեմ էր անում արյան սլաքներին ու խմո՞ւմ:
Խմո՞ւմ...

Քահանան սկսեց խելահեղ ցատկութել: Մելիք Շահնապարը մտրակով հարվածեց նրա բաց զիխին:

— Սուստ ես խոսում, շունե:

Քահանան ձեռքերը տարավ զիխին: Մատներն արյունութեցին: Մելիքը նորից զարկեց նրան:

— Սուստ ես խոսում, ստահակ: Եթե այդպիս է, հապահելու ուղղ եմ:

— Աստծուց էր,— տակավին չըմբռնելով, թե ինչ է կատարվում իր հետ, ինչո՞ւ են իրեն զարկում, աղաղակեց քահանան:— Ես շիմացա, թե ինչպես ինձ զցեցի մոտիկ խանդակին ու փախա...

Մելիքը գոտու արանքից հանեց երկփող ատրճանակը ու կրակեց քահանայի մերկ փորին: Մա ընկավ...

Երեք օր մնացինք Շուշում և վերադարձանք:

* * *

Ավետարանոցը կծկվել էր երխուսիի գեղին հովազի ահից: Ամբոցը, որ փոքր ինչ հարթ տեղ տարածված մեծ գյուղի կրծքին էր, դեպի գետը երկարած մի բարձր ժայռաճյուղի վրա, պարուրված էր սենյով ու խնկի բույրով: Դարպասը խուլ ու պինդ փակ էր: Մելիք-Շահնազարը զենքի մեջ ծանրացած, աշուղ աշխեռով լափում էր շորս բռլորը: Զգաց՝ մոտենաւմ է կինը: Բայց ո՞ր՝ Սոնա՞ն, Թագուհի՞ն, թե՝ Մալայիկը: Հայ, թագուհին է, մույկերի խշշոցից որոշեց:

— Տուն մտնենք, զիխատերս:

Ամուսինը քիթը ձգմգեց: Կինը երեսը ծվատել է: Լուր է սուացել, թե հայրը մեռել է: Երեսը ճնապել է եղունգներով, ինչպես ընդունված է իրենց մեջ: Հիմար սովորույթ՝ ազետ ու բոի:

— Մորդ եղրայրը շի երեսում,— ասաց Մելիք-Շահնազարը:— Նա, էլի՞, հեծորեստանի տանուտեր Միրզեխան-բեկը:

Թագուհին գունատվեց՝ ամուսինն ինչո՞ւ է սպասում նրան, որ ապստամբ է ու փախստական: Թագուհին թեև երեսը ծվատել էր, թեև վշտի ծանր բռդ կա ուսերին, սակայն նույնիսկ նման դժբախտության պահերին նրա ձայնը զրնպուն էր.

— Ո՞վ իմանա: Գուցե թե...

— Կարիքը կուպոցդ, — խեթեց ամուսինը: — Գույհ թե
ինչ...
Թագուհին այրվեց հոգու խորքում, սակայն միայն հեղ
գլուխ տվեց:

— Մորս եղբայրը եկել է...

— Սատկելու բաներ եք բոլորդ էլ, — զուեց Մելիքը: —
Եկել է ու նո՞ր ես առում ինձ: Գիտեմ, բոլորդ էլ առում եք
ինձ:

— Ուշքի եկ, ամուսին իմ: Այդ ինչե՞ր ես առում...

Մելիք Շահնազարը ոստոստալով վազեց, մտավ իր այդ
մի կնոջ հարկաբաժինը: Գոռաց ետեից հասած կնոջ վրա:

— Գինի բե՞ր: Հե՞... Հե՞... Հասկացիր, ամուսինդ մելիք է,
տեր է: Ես այլևս ոչ մի թագավոր ու իշխան չե՞մ ճանաշում...
Չո ամուսինը, քո, ձեր...

Կինը արտասվեց:

— Ջապիր քեզ, զիխատեր իմ:

— Վե՞րջ, վե՞րջ, — ավելի ցասկու գոռաց Մելիք-Շահնա-
զարը: — Հայոց Գերագույն գահաժողովը առում է ինձ, դեմ
է, որ ես եմ իմ հոր իշխանության ժառանգը, որ ես,
ե՞ս... Ի՞նչ եղբայր, ի՞նչ բան: Ես եղբորս չեմ, որ սպանել եմ,
ես սպանել եմ իմ թշնամուն: Այս, թշնամուն: Թե ուժ ուներ,
թող նա ինձ սպաներ:

Թագուհին նրան նայեց շեշտված տառապանքով: Ամեն օր
կրկնվում է նույն խելագար տեսարանը: Իրեն էլ թոցրեց, կին
դարձրեց, աշա մյուսների հետ պահում է իր տունը: Հասել
է ուզածին՝ ինքնիշխան է: Բայց նորից մնացել է նույն կա-
տաղածը: Բոլորը զարհուրում էին նրա հայացքից: Թագու-
հին ինչ-որ շափով խղճում էր ամուսնուն՝ ինչի՞ է ձգտում,
իշխանության: Աշա ունի, ձեռք բերեց արյուն թափելով՝
սեփական արյունը: Ուրեմն է՞լ ինչից է խենթացած:

Թագուհին զինի և ուտելիք բերեց նրա համար: Զեռքերը
ծալած կրծքին սպասեց մինչև կուտեր, կիսմեր: Ապա ջուր
լցրեց նրա ձեռքերին, որ յուզը լվանա: Օժանելիք թափեց նրա
շորերին: Պարակից հանեց մազաղաթե աղոթագիրը ու
ժունկի գալով, փորձեց ինչ-որ կարգալ: Ամուսինը կոպիտ
խլեց արծաթե պատյանով մի բուռ մատյանն ու շպրտեց մի
կողմ:

— Թթի՛ր այդ գրքի վրա, թթի՛ր, — գազագեց նա: — Վերջ
տուր աշքերդ գրոց վրա մաշելուց: Իշխանուհի ես, չէ՞: Զբահ
հազիր՝ ծնկակալներով, բազկակալներով, «աղամիարտ» հա-
զիր, սուր վերցրու, հետո եղիր իրրն զինվորս, մինք անե-
լիքներ ունենք: Իշխանությունը միայն զենքով է պահպամ:

Նա ցատկուելով դուրս փախավ: Կարծես կրակի վրայով
էք գնում:

Թագուհին անզոր փլվեց հատակի գորգերին:

* * *

Մոտեցող ոտնաձայնից Զառչի Փանահ ցեղապետը զգու-
շացավ: Բայց, ո՞չ Սանոթ ձայն է, կարծես անելքրան:

Ներքնախցի դուրս ետ գնաց անազմուկ:

— Քնա՞ծ ես, — ներս մտնելով հարցրեց Մելիք Շահնա-
զարը:

Փանահ Ալին քորեց մազմզու ժնութը:

Նրանք միմյանց նայում էին խոր վստահությամբ: Սա-
կայն դա նաև գալլային կասկածանք ուներ: Մելիքը թեքվեց
զեպի նա:

— Զարդվե՞լ ես:

— Երնջակի գորապետ Հովհաննես Խանդամիրյանը մեծ
ուժերով եկավ իմ զեմ: Ատրպատականում էի: Շվանիձորի
վրեժի համար եկավ: Մեզ չարդեց: Այս ինչ անարդար բան
է, չեն թողնում, որ մարդ իր ավարը վայելի: Փախա...

Փանահը երկար քորրոքվեց: Ապա քիշ-ինչ մեղմացավ,
հարցրեց:

— Չեր Գերազույն Գահաժողովը ընդունե՞ց քո մելիքու-
թյունը:

— Քեզ ի՞նչ, — ատամներով ճպվլտաց Մելիք-Շահնա-
զարը: — Ամեն տեղ քիթդ մի՛ խոթիր, ցեղապետ: Համենայն
դեպս դու բարեկամ ունես: Դա ես եմ:

— Փոխարենը դու կստանաս տասնապատիկ, — ասաց
ցեղապետը:

— Դուք՝ սարքալուներդ շան ծիծ կերած եք, — քրթմբե-
շաց մելիքը: — Դուք ուղար սիրու կիսորովեք, երբ նա ձեզ
անց է կացնում անապատով: Գիտեմ:

— Բայց գու ինձ փրկեցիր՝ նախատելու համար:

— Սպասիր,— նրա ձայնը խեղղեց տանտերը: — Ես քո իմացած վանքի հավապահներից չեմ, Եթե... Եթե... Կոկորդդ քամակիցդ կհանեմ: Հիմա զեր կաց:

— Ո՞ւր,— զռտին ձգեց ցեղապետը:

— Գնում ես:

Մելիք-Շահնազարը փախստական ցեղապետին յոթ օր թաքուն պահել էր իր տանը: Հիմա պետք է ետ ուղարկի: Ո՞վ է ում մուրհակը կարդում այս խառնակ աշխարհում: Պահատք ես, տո՛ւր: Մուրհակը երկու երես ունի՝ առալու և առենելու:

— Սպասիր կանչիս,— հանձնաբարեց ցեղապետին: — Մարդ ունե՞մ: Գոնե մի երեք հարյուր քեզ նման ավագակեներ հավաքիր:

Նույն զիշեր նա Փանահ Ալուն Միրզեխանի միջոցով ժաժուկ հանեց Ավետարանոցից ու ճանապարհեց դեպի Ատրպապատական: Մնաց քարեն նեղ պատշգամբում կանգնած: Հեռվից, սարերի մի փեշին կրակ տեսակ՝ թարթող, ճպող: Մեկ, երկու, երեք... Ուրեմն ցեղապետն ապահով անցել է: Ազդանշանն ընկալեց:

* * *

Լուսադեմին մանր քայլերով անցավ երկար միջանցքով: Ետ դարձավ ոտնաձայնից: Տանուտեր Միրզեխանն է: Սա զլուխ տվեց, կանթեղի լույսով նրան ընդառաջեց դեպի նույն այն խուցը, ուր քիչ առաջ պահում էին Փանահին:

— Բերի՞ր:

— Սպասում է քեզ,— խոնարհվեց տանուտերը:

Խցիկը լավ լուսավորված էր: Պատերը ժաժկված էին զորգերով: Կեցցե՞ս, հասցրել ես ամեն ինչ... Այսպես մտավի զիմեց Միրզեխանին: Չնայած նրա ժողոված բերանին, որի անկյունից մի ժանիք էր ցցված՝ խոզի կեռիք: Չհանի՞:

Պատից սիրամարգեր էին նազում: Գորդ է: Ո՞վ քերեց: Եզրէբը սպիտակ են, սիրամարգերը՝ ոսկեգույն: Ախ, չէ՞ հայրենական է, իրենն է այս զորգը: Զիու երկու զլուխ էլ են ճախրում, հետո վարդեր, որ հենց հիմա կթափվեն: Մայրերին հայոց գրեր: Է՞, զահլես տարաք:

- Մահմի անկողնում նստած էր Երեշիկը:
 — Ահա, Երեշիկ փախստական, դո՞ւ ես:
 — Ե՞ս եմ, — Երեշիկը կանգնեց, իր շքեղությամբ լցնելով
 շրջապատը:
 — Ի՞նչ արիր եղբորս լակոտին: Ինչո՞ւ փախցրիր նրան:
 Ի՞նչ արիր:
 — Մեռավ, — երեսին խաչ հանեց Երեշիկը: — Անվերջ
 հիշում էր արյան մեջ թավալվող մորը, մորթված քրոջն ու
 փոքրիկ եղբորը: Չգիմացավ, մեռավ:
 — Իսկ դու գեռ ողջ ես, բո՞ւ, — քրքչաց մելիք Շահեա-
 զարը: — Զրադացում, հիշում եմ, հնագանդ էիր այս ցուլին՝
 Միրզեխանին: Ահա նորից ընկար նրա ճանկը:
 — Ընկա, տեր մելիք, — ասաց Երեշիկը: — Ճակատիս
 դիրն է:
 — Ապրել ուզո՞ւմ ես:
 — Նույնիսկ աղքահարի ճիճուն է ապրել ուզում: Ուզո՞ւմ
 եմ:
 — Ուրեմն՝ հնագանդին կամքիս:
 Երեշիկ տիկինը սկսեց արձակել մետաքսն կապայի կրծքին
 կոճակները, որոնց տակ թրթում էին լիքը ստիճաները:
 — Մերկանա՞մ:
 — Ո՞ւ, — խենթ գոռաց մելիք Շահեազարը: — Ո՞ւ, ո՞ւ...
 Այխ, շար սատանա: Դու հզոր անձ ես: Դու գեղեցիկ ես: Դու
 ինձ պետք ես, բայց ոչ սրակես էգ: Դու, դո՞ւ... — Հեաց թան-
 շելով, նստեց մահճակալին, ծնկները տրորեց: — Լսիր, կին,
 որ կախարդող ուժ ունես: Աս ուզում եմ եաշենի իշխան-մե-
 լիք տեսնել Միրզեխան տանուտերին:
 — Եաշենի Մելիք-Ապրելը վախճանվեց, — ասաց Երեշի-
 կը: — Կամքը քոնն է: Հրամայիր:
 — Դու պետք է դառնաս Մերզեխանի օրինակոր կինը:
 Միծեռնավանքից հետո քա համը նրա բերանից չի հեռա-
 նում:
 — Ասել է՝ ինձ իշխանուհի՝ ես դարձնում: Իշխանուհի՝
 լինեմ:
 — Եզ իմ բարեկամը: Ինձ հավատարիմ:
 Հաջորդ օրը եկեղեցում Մելիք-Շահեազարն իր ձեռքով
 կատարեց Երեշիկի ու Միրզեխանի պսակը:

Մելիքի ժառաներից մեկը ինձ կանչեց իշխանի մոտ: Ես վրազելով մտա Մելիք-Շահնազարի գիվան-սրահը: Դեռ շեմից մաղթեցի:

— Մեր տեր Հիսուս Քրիստոսը քեզ պահապան, իշխան:

— Զահես տարար, էլի՛, — ձեռքերը թափահարեց Մելիք-Շահնազարը: Կարծես վրան գրոհող իշամեղուների պարս էր հեռացնում: Նրա մոտ կանգնած էր հսրայիլ վարդապետը Մելիքը շարունակեց իմ գալով կիսված խռոքը:

— Վարդապետ, գուցե միտք ունես զինվորական դառնակու, հա՞, ասենք՝ հարյուրապետ: Իմ վարանդա գավառի յուրաքանչյուր տուն մի զինվոր է տալիս ինձ՝ զենքով, հագուստով, իսկ դու, որ դարձյալ իմ հպատակն ես, զինվորի մի կոշիկ անգամ շնու տվել ինձ: Զկա աստված, բացի ալլահից:

— Սակայն գու, տեր մելիքը, քրիստոնյա ես, — երկուտասաց վարդապետը: — Ուրեմն ինչո՞ւ ես ալլահին դիմում:

— Ալլահ արքա՛ր, — աղաղակեց մելիքը: — Էդ էլ իմացիր, մուսուլմանը կռվի պահին նման բան է գոռում: Եթե հազընաւակ ունենամ, ես էլ ալլահին կրիմեմ ծնկատարած: Ինքդ էլ նույնը կանես հանուն այն բանի, որ կաթողիկոս նստես մեր գլխին:

— Նա ոստնեց դեպի կողքի մեծ դիվան սրահը, ձեռքով ինձ մոտ կանչեց:

— Տես: Տես ու գրի առ, ինչ-որ տեսնում ես այստեղ: Հա՞, գրիր: Ես ինչ պակաս թագավոր եմ: Իմ ունեցվածքը... Միայն տուգանքներից իմ հանգուցյալ մելիք եղբայրը... Թո՞ւհ, ինչ սատանա մտավ բերանա: Իմ մելիքը ությունը միայն ժողովրդից գանձվող տուգանքներից տարին շահում է քսան հազար ոսկե դրամ: Գրի՛ր, գրի՛ր: Այդքան: Վարուցանքի միջինը և հունձքը իմ ույան անում է ինձ համար ձրի՝ երեսուն հազար ոսկու: Իմ աշխարհում զինի վաճառելու համար ինձ վճարում են տասնյոթ հազար ոսկի: Գրի՛ր, գրի՛ր: Աղքատ շեմ:

Նա իսրայել վարդապետին ցույց տվեց այն հարսառւթյունը, որ եղրորն սպանելուց հետո կողոպտել էր նրա տնից: Որոշ իրեր արյունուտ էին, տեսա, որ դա վարդապետին շիհետաքրքրում: Նրան գալթակղել է մելիքի ասածք՝ քեզ կա-

թաղիկոսության կհասցենմ։ Կողոպուտը մեծ էր։ Միայն բռցախուու ուսկի գրամ քառասուներկու հազար, արժաթե գրամ երեսունհինգ հազար։ Այդ տարի, նրա մելիք եղբայրը, մինչև սպանվելը, ծախել է տասնութ հազար ջվալ ցորեն, մուրհակաթերթով հավաքել է հիսուն հազար ոսկի։ Ահա տասներկու հարուստ խոնչա, յուրաքանչյուրի վրա տասներկու արծաթ աման, գինու երեսուն սուրհափ թաս։ Մի մեծ արահի շորս պատերի տակ շորս շատ խոշոր մոմակալներ են դրված։ Հանգուցյալ եղբայրը կառչել է այս մոմակալներից մեկին, որ պոկի ու դրանով պաշտպանվի եղբորից, չի կարողացնել, շատ ծանր է։ Ես նրա եղբին ևս չորացած արյան բիծ նկատեցի...

Մելիքն ինձ ու վարդապետին ցույց տվեց շորս խոշոր, պղնձե թեյահովիլ, որոնցից մեկը կարող էր վեց դույլ ջուր տանել։ Ես շատ հավանեցի մելիք եղբոր երկու շատ հին, շքեղ սրերը։ Մելիքն ասաց, թե դրանք եղբայրը գնել է հատք երեք հազար ոսկով։ Պատից կախված էր սպանված մելիքի խրխա-մուշտակը, որ սև սամույրից էին, յուրաքանչյուրը երեք հարյուր կոճակները ոսկուց էին, յուրաքանչյուրը երեք հարյուր մասիալ կշիռով։ Մամուլը այլ երեք մուշտակ ևս կային, որ պատկանել են սպանված մելիքի կնոջը։ Ես հիշեցի այդ դժբախտին՝ իմ աստուն, գեղեցիկ, առավածավախ։ Այս այն խաթունն էր, որ նորահարս եղած ժամանակ Ամառասի վանքը կողոպտելու եկած թուրք զորապետ Սուկեյման բեկին հրապուրել է իր զգիսիլ գեղեցկությամբ ու սպանել իր ձեռքով։

— Ողորմի հոգուն, — ակամա դուրս թռավ բերնիցաւ։

— Ո՞ւմ ողորմի, — թթվեց Մելիք-Շահնազարը։

Ես իսկույն միտքս շրջեցի։

— Այս մուշտակը կարող վարպետին։

Անթիվ անհամար էին աղյուսագույն մահուդի կտորների թոփերը՝ շարդաթ, շալիա, գում, ֆինգի երեք մեծ մաֆրաշ լիթը թափիշ էր, հինգի աշխարհի դալամքար ճոթեր, եղդինի մետաքս, Ագուլիսի ու Թավրիզի ապրեշում։ Մի սենյակ ուղղակի լցված էր սպիտակ բամբակի հյուսվածքներով, մի այլը՝ հյուրերի համար տասներկու ընտիր անկողին, երեսները թափիշով ժամանակ, ծոպերը ազնիվ մետաքս ու դալամքար արած։ Խալիներն ու գորգերն անթիվ էին, Մելիքը մեզ ցույց տվեց

նաև Զինի շանթեր՝ բյուրեղյա ամանենքը, տասներկու խռո-
շաների վրա: Հրամայից բաց անել ու ցույց տալ մեծ վրանը,
ասելով թե երկարությունը տասնհինգ, լայնությունը տասը
արշին է: Նաև վրանենքը կային երկտակ կտավից կարած, մեջ-
տեղը շահմաթի ոճով զարդեր: Ուներ զալմընական վրան-
ենքը, որ թաղիքից էին, արցախյան կաշվից թամբեր՝ զարդար-
ված արծաթով, արծաթապատ բնտիր հրացանենքը, երկարա-
փող ատրճանակիներ:

Այս ամենը ցուցակ արեցի: Մելիք-Շահնազարը ավելաց-
րեց:

— Գրիր: Գրիր նաև իմ անձնական որձ ձիեր՝ քսան, չո-
րիներ՝ շորս հարյուր, մատակ ձիեր՝ հազար, գոմեշներ՝ հա-
զար երկու հարյուր, եզներ վեց հարյուր, կովեր երկու հազար,
ոշակար հարյուր հազար: Գրիր, գրիր: Նման հարստություն
իրանի շահը հազիվ թի ունենա:

Նա ինձ ու Խորայել վարդապետին մասնակից արեց իր
հային: Մատուցում էր Թագուհի տիկինը՝ լուռ, խորաբ,
վշտով ծանրացած: Կուշտ ուտելուց հետո Մելիք-Շահնազարը
վակեց զեպի եկեղեցի:

— Դնանք ազոթքի մեր հոգիների համար...

Երբ ծունկի էինք եկել, շշուկով ասաց.

— Դե, ուրեմն, զուրն իր ճամփան զտավ: Խոզակեռիք
տանուտեր Միրզիխանը գո՞չ է իր նոր կնոջից: Դարձել է նրա
ստվերը: Այս, խաչ իմ զորավոր, այդ ի՞նչ տաճար է կինը,
որի շերին տղամարդը խոնարհում է առավել երկուղած,
քան բո սրբությանը:

— Երեցիկը կախարդող է,— ասաց վարդապետը, երկի
հիշելով նրա հետ Խրիսուփի ձորում անցկացրած օրերը:

— Կախարդ է,— հաստատեց մելիքը:— Նրա ձեռքերով
կարելի է օժ հանել բնից:

Ես տարվեցի ուտելով: Սթափվեցի ականչա քերող վարդա-
պետի ձայնից:

— Պարսից նոր շահը բարի է սարբաւու ցեղապետի նկատ-
մամբ:

— Շունը շնից, — ասացի:

— Երկուսը մի տեից, — ասաց մելիքը:— Բայց ես պատ-

բաստ եմ ինձ կնքահայր գարձնել այն շանը, որի թեկուզ
հաշոցը ապահովում է իմ գահը, իմ իշխանությունը:

Մի քանի օր Հետո Մելիք-Շահնազարը Ավետարանոց կան-
չեց Միրզեիսան տանուտերին: Սա եկավ գոռող ու երշանիկտ
Երևում է անշափ գոհ է իր նոր կնոջից: Մելիքը հաբցրեց: —
Հո լե՞ս մոռացել սարդզալու ցեղի հանդրվանի տեղը:

— Դրա ճանապարհը գիտեմ, ինչպես իմ տան գուոր, —
պատասխանեց Միրզեիսանը:

Նույն գիշեր մելիքը Միրզեիսանի միջոցով երկու պարկ
ուսկի ուղարկեց Փանահ ցեղապետին: Գնալուց առաջ տանու-
տերն ասաց.

— Բուրի Արզումանը կովում ծանր վերք է ստացել, բայց
չի սատկել: Լավացել է:

— Հա՞: Լուրջ վտանգ է: Բուրիշ:

— Գնդապետ Բաղա Ղուզանենցին գերազահը ճանապար-
հեց պատվով: Շամախու վրայով զնալու է ուսւի Հողը՝ Ասա-
րախան: Շամախու խանը ուղարկ ահից շի կտրի զնդապետի ճա-
նապարհը: Գերազահը նրան ուղեկից է զրել Մելիք-Շայուն:

Մելիք-Շահնազարը ինչոր շափով տագնապնց: Կոպիտ
հրեց Միրզեիսանին:

— Գեա՞, գեա՞: Ժամանակը ոսկի է:

Մի բիշ Հետո ինձ ասաց.

— Պետք է մարդ ուղարկել Պարսից նոր շահի մոտ՝ ըն-
ծաներով:

Ես նրան ասացի, թե հայերս մեր սեփական պետությունն
ունենք՝ Հայոց Գերազույն Գահաժողովը, ուրեմն ինչո՞ւ: զնանք
շահի ոտքը:

— Ես այլևս շեմ ճանաշում ձեր այդ իշխանապետությունը:
Ինք իմ երկրի ու իմ զիլիի տերն եմ: Կուզենայի որ այս բանը
պարսից նոր շահը ևս իմանար:

Մյուս օրը, երբ նա ինձ ու Խորայել վարդապետին սեղա-
նակից էր արել, նրան ասաց.

— Մեկնիր էջմիածին:

— Մեռն բերելո՞ւ, — զարմացավ վարդապետը:

— Բ՛չ, — կտրեց Մելիք-Շահնազարը: — Եպիսկոպոս օծ-
վելու:

Նա դղոցից հանեց նախօրոք պատրաստած խնդրագիր՝

Ամենայն Հայոց կաթողիկոսին: Դրանով աղերսում էր զիհ-հափափին, որ Խորայիլ վարդապետին եպիսկոպոսական պատիվ չնորհի: Խորայիլը ուրախությունից քիչ մնաց ընկներ երա ոտքերը: Մելիքն ասաց:

— Քո Խստավայրը կլինի Ամարասի վանքը, քո տունը՝ իմ ամբողը: Երբ կստանաս աստիճանդ, կգաս ու քեզ համար անկախ կապրես Ամարասում: Ես իմ երկիրը դուրս եմ դնում նաև Գանձասարի հոգեոր թեմից: Վե՛րժ:

Նա վարդապետին հինգ հարյուր սոկի տվեց:

Սա էլ խաչհամբույր՝ կաթողիկոսին:

Ոսկիները հաշվեց երկու անգամ: Մատը թափ տվեց վարդապետի վրա:

— Տե՛ս, Խորայիլ, թե սրանցից թեկուզ մի հատ լափել ես, վիզդ կացնով եմ կտրելու: Երթաս բարով:

* * *

Խորայիլը էջմիածնից ետ եկավ եպիսկոպոս օծված: Մելիք-Շահնազարն ինքն իր ձեռքով նրան բազմեցրեց Ամարասի սրբազն աթոռագահին:

— Հույս, որ քեզ կաթողիկոս էլ պիտի տեսնեմ:

ԳՅՈՒՆ ԶԱՐՅԱՐԴ

1750 թվականի աշունը նման է մի տարի, երկու տարի առաջ եղածին: Տակավին տաք հող, բամբակի կոկոնի պայթյուն, խաղողի ծանրած թփերի ոսկելվորվում, հանախ մոայլ, սակավ պարզ երկինքը: Օտար շատ ճանապարհներ ոտքի տվի անցած լորս-հինգ տարում, շատ ծովեր անցաւ: Արարի Բասրայում իր լեզուն գրեթե կորցրած նավատեր հայը ուզածըս զնով առնում է իմ ապրանքը, իրենն ինձ կես զնով տալիս: — Ա՛խ, զուրբան եմ Հայաստանին, հայի պետությանը: Բարեկ խոսե մեր հողին: — Սանկտ-Պետերբուրխում արրեջումի գործառուն հիմնած աստրախանցի հայը փաթաթվում է ինձ, հյուրասիրում Ամստելդամի կանդակով, լոնդոնի շաբարով: — Ծուսի բարեգութ թագուհին միտք ունի վերականգնելու հա-

թագավորությունը։ Աստված օգնական։ — Հինգի Կալկա-
թայում հայերն ինձ տարան մի երեսուն տարի առաջ իրենց
շինած սուրբ Նազարեթ եկեղեցին։ — Տիգ ու գիշեր աղոթում
ենք հայոց պետության արևատություն կամենալով, ո՞վ Ար-
քանամ Երևանցի, ո՞վ բարի լուր բերող։ — Պիզանոյում աղո-
թեցի հայոց վանքի տաճարում։ Պիզանոյի հայ կաշեգործ-
ները ինձ տարան ծով, հյուրասիրեցին Արմենին նավակա-
յանում։ — Կզնանք, ետ կզանք մեր հայրենիքը, — ասացին
ինձ։ — Ողջո՞ւն հայրենիքին։

Չինի հախճապակի էի բերել Գանձակ։ Դեռ բեռներիս կա-
պերը բաց չէի արել, երբ ինձ հրավիրեցին Զրաբերդ։ — Պար-
սից զահի նոր տիրակալ շահը դեսպան է ուղարկել մեր աշ-
խարհը։ Արի։

Ես անշափ հպարտացա գերազա՞ն իշխան Մելիք-Աստվա-
ծապովի կոշով՝ զնալ հայրենի իշխանապետության նոր մայ-
րաբերդը։

— Սալամ։ Այդ դո՞ւ ես Սաֆար Ալի Արդուլ Հասան միրզե։
Էլին դո՞ւ ես։ Ուրախ եմ։

— Ես եմ, — խոնարհ ողջունեց շահի դեսպանը, որին
ծանօթ էի տակավին Մուզանից։ — Ես եմ, և ուրախ եմ, որ
ձեր երկրում եմ, խոչա։ Կարծես ընկել եմ իմ մոր փորբ։

Դեսպանը բարձրահասակ, բարեղեմ էր, Նադիրի թագա-
ղը ման օրերին, որ տասնչորս տարի առաջ եղավ, նա զրեթե
պատանի էր։ Այժմ կատարյալ երիտասարդ է։ Մենք բարե-
կամացանք։ Ես նկատեցի, որ նրա աջ ականջի բլթակին խո-
շոր, ու խալ կու։ Նաև ազնվական արտաքին ունի, շարժու-
վարքը՝ բարեկիրթ։

Իմ Զրաբերդ գալուց մեկ, թե երկու շարաթ հետո, ան-
սպասելի երևաց անբեղ ու անմորուս, զրեթե պատանի մի
զորական, հրաշեկ ձիու վրա։ Ես առաջինը նկատեցի նրան։
Չիուց իշավ, սպառնալի ասաց։

— Աղմուկ շանես, միայն զերազա՞ը պիտի իմանա, թե
ով եմ ես, խոչա Արքահամ Երևանցի։

— Բայց դու, — զարմացա ես։ — Բայց դու կի՞ն ես...

— Հոտառությունդ սիրեմ, — ասաց նա։ — Ես Երնջիկն
եմ։ Տանուտեր Միրզեխանի կինը։

— Օ՛...

— Բա շա՛ն, — խուլ քրքջաց Երնջիկ տիկինը: — Տղամարդու զուգութեա սա՞զ է զալիս ինձ: Այդպէ՞ս: Ես եկել եմ Գոհարիշխանունու խորհրդով:

Ես ցանկացա նրան տանել գերագահի մոտ: Չուզեց:

— Զի հալ կավոր: Ինչպես աննկատ եկել եմ, այնպես էլ պիտի հեռանեամ: Լավ է, որ քեզ հանդիպեցի: Ուր որ է լույսը կրացվի: Հայտնիր Մելիք-Աստվածապով իշխանին, որ սարը-ջալու Փանահ Ալի ցեղապետը մեկնել է Սպահան՝ արքունիք: Մեկնել է յոթ ուղտարես նվերներով: Գնացել է Իրանի նոր թագավոր Իրամահիմ շահին կաշառելու, որ իրեն խանի տիտ-գոս շնորհի: Իմացիր:

— Ի՞նչ դառը բան, — կտրտվեցի ես: — Կոտանա՞:

— Հավանական է, — Երնջիկը թռավ ձիու թամրին: — Ու-կին թագավորին անգամ կկզացնի: Կողոպտած ոսկի է, Հայի քրտինք: Մնաս բարով:

Նա գնաց՝ իսկույն անհետանալով: Ես վազեցի դեպի գե-րագահի ապարանքը:

Լույսը բացվեց:

* * *

Գեսպան Սաֆար Ալի Արդուլ Հասան միրզին մեր գերա-գահին հայտնեց, թե Սպահանում սպանել են նաև Իրամահիմ շահին: Գերագահը մոայլվեց երկար:

— Հիմա ո՞չ է ձեր թագավորը, պատվելի: Այս հ՞նչ արագ են փոխվում ձեր շահերը:

— Այժմ թագավոր է դրված Նադիրի թռո Շահ Ռուհը:

— Երեսի նրան էլ եվես կանեն:

— Գիտեմ: Իրանի խաները չեն քնդունում նրան: Ասր-պատականն իրեն անկախ է Հռչակել, Գիլանի խանը՝ ևս:

— Իսկ ավագակ Ջառշի Փանահը:

— Իրամահիմ շահը հասցրել է նրան խանի տիտղոս շնոր-հել, — ասաց դեսպանը: — Ասրպատականի ու Գիլանի խա-ները քնդունել են Փանահին, օգնում են:

Ես գարմանում էի, թե պարսից դեսպանն այս ամենն ի՞նչ ճանապարհով է իմանում: Բայց ավելի զարմանալին այն էր, որ Սաֆար Ալին այս լուրերը մանրամասն հաղորդում

էր մեզ, նաև կարծես սիրահոժար, կարծես մեզ օգուակար լինելու մղումով:

Չմեն այդպես անցավ: Գարնանը Եիրվանի կողմերում գտնվող թուրի Արդումանը հապշտապ եկավ Զրաբերդ:— Փանահ Ալի խանը բերդ է շինում Բոյլակունութ:— Էռոր ցեցող էր: Փանահն իր ցեղախմբով անցել է Արարու, մտել Կուր գետի ձախափեյակը, ուր հայոց հին Բոյլական քաղաքի ավերակներն են, որ հիմնվի այնտեղ: Եիրվանի Հազի Չելերի խանը զորքով պաշարել է եկվոր ավազակին, աւելայն շի կարողացել հաղթել ու հեռացնել նրան:

— Կոխվը ժանր է եղել, — ավելացրեց թուրի Արդումանը:— Հազի Չելերի խանը շատ կորուստներ է տվել ու սախոված քաշվել Բոյլականից:

Ամենից շատ դառնացավ Մելիք-Աստվածապով իշխանը:

— Գործերս բարգացան: Եթե մինչեւ այսօր Զառչի Փանահը սոսկ պղնձե դրամ էր, առանց անվան ու վավերի զրի, ապա այժմ զիր ու վավերական դարձավ իր այդ հաղթանակով:

Հայոց զորքը իսկույն արշավեց Բոյլականի վրա:

Հասկանալով, որ պարտվելու է, Փանահ խանը թողեց Բոյլականն ու իր խառնախմբով քաշվեց-Հեռացավ:

— Չարիքը ավելի մեծ է, քան ինքը ևս զգում, տեր իշխան:

Սա ասաց Գոհար վանամայրը: Երեաց հանկարծակի, սեղվերի վրա զորականի այծենական ուսերին: Տակավոն դրսում ցուրտ է: Գերազահ իշխանը խոնարդվեց հոշակված կին զռարակետի առջեն, որ թեև հիմա քաշված միտնանունի էր, աւելայն հմայքը և ազդեցությունը ճնշող էր: Կանգնած էին դեմքիմաց, դղյակի քարե մի կացարանում, որի միակ նեղ պատուհանից գարեան թույլ արեն էր մարմրում:

— Իմացիր, գերազահ իշխան մեր, Փանահ ավագակապետը Խորասանից բերել է իր ցեղի ոհմակը և խցկվել մեր աշխարհի վաղեմի զաշտ Տիգրանակերտի ավերակների մեջ: Տեղյա՞կ ես:

Մելիք-Աստվածապով իշխանն իրեն վատ զգաց՝ տեղյակ չէ: Գոհարը նկատեց դա: Նրա ձայնի մեջ դժգոհ երանդ կար:

— Փանահը, որից կաշառակուր լինելով, Պարսկաստանի հերթական սպանված թագավորը խան է Հոչակել, բուն է դնում մեր տան մեջ։ Մի՞թե կհանդուրժես դա, տեր գերազա՞ն։

Դե, ուրեմն մենք՝ հայերս, այժմ ստիպված պետք է լինենք տատերազմելու երկու ճակատով՝ հայոց ուխտից հեռացած Մելիք-Շահնապարի ու Փանահ-խանի դեմ։

Զորքը շտապով մեկնեց նոր շարիքի գեմ։ Մեզ միացավ նաև Գոհարը, այս անգամ սակայն զորապետի հանդերձով, բարակ ոտքերով ու աղեղված բաշով ոսկեզույն, բարձրագույն ձիու վրա։

— Զեմ կարծում, թե դու, գերազա՞ն իշխան մեր, ինձ ևս չես վերցնի քո զորքի մեջ։

— Սակայն, — տարակուսեց սպարապետը։ — Սակայն դու Քրիստոսի աղախինն ես, վանամայր։ Եզ...

— Ո՞չ, — քմծիծաղեց Գոհարը։ — Ես միայն մեկի աղախինն եմ, դա հայրենիքս է։ Հանկարծակի շպաս, իշխան։ Մելիք-Շահնապարը զորքով միացել է Փանահին։

Այս ժանր նորությունը ցնցեց Մելիք-Աստվածապովին։ Սակայն նա ցույց շտվեց իր տագնապը։ Նարունակեց գնալ դեպի Տիգրանակերտ, որին այս կողմերում թառնակյուս են ասում։ Նա մի հեծյալին երկու ձի էր տվել, որպեսզի եթե մեկը հոգին, ոտքից ելնի, հենց արշավի ժամանակ զինվորը հեծնի մյուս ձին։ Գնում էինք երեք խմբով։ Ջրաբերդի զորքը, նրա աշից՝ Գյուլիստանի ու Դիղակի զունդը, Մելիք Ծային, ծախուց Խաչենի Մելիք-Ապրեսը՝ իր ութ հարյուր ձիավորով։ Երբեմն որեւէ զորապետ սուրհանդակ էր հղում սպարապետի մոտ՝ պահ մի դադար շառնենք, իշխան։ Նա ձեռքը թափ էր տալիս։

Զիերից սկսեցին պայթել։ Հեծյալը հազիվ էր հասցնում թոշել կողքից սլացող ձիու թամբին։ Խելահեղ երթ էր։ Խաչենի հովիտն անցանք փոթորկի պես։ Ճանապարհից փոշի չէր ելնում։ Գիշերը լավ անձրև էր եկել։

Փանաճ խանը մտրակը ձեռքին մոտենում էր ավերակ բերդը կարկառող քարագործ մարդկանց խմբերին:

— Ծառպեր! Ծառ-պե՞ք...

Եինարարներին վերահսկող ևնձորեստանի տանուտեր Միրզեխանը, որ հիմա իմ ամուսինն է, ստվերի պես հետեւում էր նրան, նրա ամեն խոսքից ժպտում, լպրծուն գլուխ տալիս:

— Ոչինչ մի՛ խնայիր, Միրզեխան բեկ! Վարպետ թե բանվոր որքան փող ուզեն, առոր, միայն արագացրու բերդի կառուցումը:

Փանաճը մոռը էր ու խոժոռ՝ որսկանից հալածված գայլը: Թփածն հոները կիտել էր, կապույտ շրթունքները սեղմել, կարծես լեղի էր կուլ ավել, Ահով էր նայում բարձր լեռների կողմը: Այնուեղից վտանգ էր սպասում:

— Արա՞գ: Ա-րա՞գ...

Հին քաղաքի ավերակներում, որ տեղ-տեղ արդեն վերաշինել էին և դրանցից գուրս՝ դաշտում խոնվել էին Պարսկաստանի արքելլան խորքերից աշնանը խանի բերած քոչվոր ցեղերը: — Հայաստանը շենքաթ է, — իր քոշվոր ցեղի մարդկանց ասում էր Փանաճ խանը: — Այնուղ ջրերը շարքաթ են, խոտերից կաթ է ծլում, երկինքը գուզալ է: Ես ձեզ կհանձնեմ Հայաստանի Ղարաբաղը և գուք այդ շենքաթը կվայելիք որդոց-որդի: Իմացեք, ես հային կդարձեմ ձեր ժառան, ձեր որկորը կերով լցնող ստրուկը:

Նրան լսել էին բազմաթիվ ցեղեր ու եկել: Ինքն շտապում էր վերջացնել բերդապարհաների կառուցումը՝ հանապազան ունենալով հայոց գորքից:

Ես՝ դժբախտ Երեցիկս, դժբախտ, բայց ոչ երբեք հուսահատ, որ Միրզեխան տանուտերի կինն եմ այժմ, ուշաղիր հետեւում էի այս ամենին:

* * *

Երեցիկ տիկինը ետ քաշեց վրանը կիսող վարագույրը:

— Օ՛, փառապանծ Գոհար իշխանուհի, հեղ միանձնուհի, համեցեք: Ուրախ եմ:

Գոհար իշխանունին հավատաց նրա անկեղծությանը, սակայն բրդրջաց մտքում՝ և և և գժրախառը, թե զու, երեկվասանունի իմ տիկին՝ գեղեցկության խառապումով, զու, որ իմ հեռավոր-անցած օրերի պատկերն ես և՝ ընդամենը:

Երնջիկը վանամոր համար երկու քարձ զրեց գորգերին:

— Ա՞՞ւրճ:

— Ոչ, Գինի:

Երնջիկը մի սրվակ սպիտակ գինի բերեց ու երկու շինական բաժակ: Վբանից դուրս քարի ու փոշու հոտ էր: Փանահ խանը նորոգում է Տիգրանակերտ բերդը, որ իր համար որզ դարձնի, հենց այստեղ՝ տափաստանի այս ծայրին:— Ա՛խ, այդպես: Եզ զու, Մելիք-Շահնազար, քո մարդկանցով եկել ես թշնամի խանին օգնական, հա՞...

Երնջիկ տիկինը ինքնազման է ու զեհ: Այդպես էր ինքը՝ Գոհարը, նրա տարիքում, նրա գեղեցկության տեր եղած ժամանակ:

Գինին խմեց առանց հաճույքի:

— Նախ ո՞վ տիրեց քեզ, Երնջիկ:

— Միրգեխան տանուտերը:

— Բոնությամբ:

— Շահնազար քեկի հրամանով: Կապկապեցին ձեռքերս ու ստքերս:

— Հետո՞...

Հարցրեց զզմանքով: Եռնեն էլ պատառ չի վերցնի կապկանման տանուտեր Միրգեխանի ձեռքից: Նրանից աքիսի զարշ հոտ է զալիս: Սակայն ահա Երնջիկը զող տանուտերի զուգակիցն է, նրան հու:

Գոհար իշխանունին հարցրեց՝ չե՞ս մտարերում քո գպրանցը:

— Ոչ, — կտրուկ պատասխանեց Երնջիկը: — Ո՞ւ

Նրա ձայնի մեջ կերպեր կար: Շնորհաց՝ ասաց՝ «այսոյի» փոխարեն: Ա՛խ, դու, զեղեցիկ էզ, տեսնում եմ՝ խորհրդավոր նպատակ ունես: Սակայն՝ ինչ: Ինքը բացվեց:

— Ըս ամեն ինչ կանեմ, որ իմ ամուսին տանուտեր Միրգեխանը դառնա Խաչենի միահեծան տերը:

Գոհարը միանձնունու զզիստի տակ շոշափեց ատրճա-

նակն ու կարճ սուրբ: Չմորթի՞ այս քածիե: Բայց ցնցվեց՝
ոչ, դա չէ, դա չէ իր նպատակը:

— Դու, — ասաց, — գո՞հ ես քո որձից:

— Սիծեռնու վանից զրադացում ինձ բռնաբարեցին, Ակե-
ցին:

— Հետո՞ ինչ: Գեղեցիկի ճակատագիրը դա է: Հետո՞ ինչ:

— Ես, — Երնջիկը կոացավ դեպի Գոհարը: — Ես, հասկա-
ցիր, այլևս չեմ ուղում իմ անձը իբր՝ ուրիշի թերժացք, մա-
տուցել մեկնումեկին:

Նրա ասածը Գոհարին ողերեց: Դեմք հրեշտակ էր՝ մաք-
րության ու աղնվության փայլատակումով: Գոհարը կրկնակի
սիրեց նրան՝ իր նախկին սանուհուն: Դժբախտությունը նրա
մոտ ուժ ու մաքրություն է դարձել:

— Ես հետանդ եմ տանուտեր Միրզեխանին:

— Սակայն, ասաց Գոհարը, — նա դավաճան է: Նրանից
տարիներ առաջ հեռացել է իմ սիրելի Ասպարու:

Երնջիկը նորից կոացավ դեպի Գոհարը:

— Ամենից առաջ դավաճանին պետք է խոթես ժնկներից
արանքն ու... Տանուտեր Մերզեխանը, հանձին ինձ, ոչ թե
կին, այլ մի պոռնիկ էք ունի: Ես հոհում եմ նրա վրա: Ես
հաղթող եմ: Դինիդ խմիր, Գոհար միանձնուհի: Խմիր ու մի
քրքրիր հոգիս, նա վիրավոր է:

— Մենք Մեհրուժան դավաճան ենք ունեցել: Գնաց պար-
սից արքայի ոտքը՝ հայոց զեմ, հավատն ուրացավ: Պարսիկը
նրան թագ խռատացավ...

— Ստացա՞վ:

— Իհարկե՛ մահվան թագ: Այդ թագը նրա զլխին հագ-
ցրեց Սմբատ Բագրատունի ասպետը՝ շիկացրած երկաթի օղ՝
մահվան թագ:

— Հետաքրքի՞ր է: — Երնջիկի աշքերը փայլատակեցին:

Գոհարը նորից զինի խմեց: Որոշեց հեռանալ թշնամու
ճամբարից՝ թաքնաբար, ինչակես եկել էր: Երնջիկը բռնեց նրա
ձեռքը:

— Խորհուրդ է գիշերով գրոհեք, բերդի արևմտյան կող-
մից: Այդպես ասա հայոց սպարապետին՝ գիշերով, աննկատ:

Ես ամուսնուս կփախցնեմ: Նա դեռ պետք է ապրի, ես նպատակներ ունեմ: Մեզ շնչուապերի:

Գոհարն շտապեց վերադառնալ Հայոց զորքի բանակատեղին:

* * *

Տիգրանի քաղաքը Խաչենագետի դաշտակ Հովահի եղբին էր, նրա ձևին ափին: Միջից ծագում էր Զրաբերդ տանող մեծ ճանապարհը:

Մելիք-Շահնազարի օգնությամբ Փանահ խանը հասցրել էր բերդի պարիսպները կարկատել: Հին Հայոց եկեղեցու գմբեթը խորտակեց ու մզկիթ դարձրեց: Քաղաքատեղում ընդարձակ բաղար էր ստեղծել ու մի ոչ մեծ պալատ՝ իր համար: Դրանից ձգվում էր մեծ գաշտը ու մարում Կուր գետի փեշնրին: Այդտեղ, ուր գրեթե ձմեռ չէր լինում, սփռվել էին Փանահ խանի խորասանի խորքերից բերած անհամար քոչվոր ցեղերը, իրենց ու վրաններով, ոչխարի հոտերով, ուղտերով:

Փանահը դաշն էր կնքել Ատրպատականի պարսիկ խաների հետ՝ Հայոց գեմ: Իրեւ դաշնի անխախտ կնիք, Ատրպատականի խանն իր մի գեռատի գտարիկին նվեր էր ուղարկել Փանահին: Սա ցեծում էր՝ օ՛, ողորմած ալլահ: Այդ նվերը հենց երեկ էին բերել: Փանահ խանի հրամանով նրա տասներկու կանայք սկսեցին զուգել նրա նոր տիկնորդու: Լուսարացին պետք է մաներ առագաստ: Նրան ճոխացրին Հայկական դիպակներով, ասիղնազոր կապայով, արծաթե ու սակե զարդերով: Թեև պարտկուհին դառնանում էր, որ Հայրն իրեն կին է ուղարկել մի մարդու, որի երեսն անզամ չէր տեսել, բայց իր ցավը ցույց չէր անում ոչ ոքի:

Երեկո էր: Սուփրի էին Հավաքվել խանի բոլոր կիները, ցեղի երեսլիների խանումները, Հաստ ու բարակ, առուղ և սլացիկ: Հրավիրվածների մեջ էր նաև Երնջիկ տիկինը: Բոլորը բուրում էին օժանելիքի թանձրությամբ, շարքաթ իւմում, Հնդկական թխվածք ու արաբական շամիլ-մազայով քաղցրացնում իրենց քիմքերը: Խանի կանանց ուշքը նորեկի վրա էր: Նրանց Հայացքները խանդուտ էին, նախանձից այրվող, սակայն նրանք միայն ժպառում էին հեզ: Նորահարօք շրեղ նազում էր սենյակի կեսը բռնած զորգերի վրա: Ոտքը դնում էր

մուգ-արյուն վարդերին: Աղարտվում էին ժիածանի երանդները...

Դուների մոտ, կանանցից փոքր ինչ անջատ, բարձերի վրա նստած էր հնդկուհի զրբաց-գուշակ մի կին՝ բարձր հոնքերով, որոնց մեջ տեղը խոշոր, կապույտ խալ էր դաճված: Նրա հագուստը պարզ էր՝ սպիտակ քողերով, քոշերը նույնպես սպիտակ, եղբերին խորհրդավոր նախշեր: Կանայք ուրախ էին, որ իրենց շրջապատում հայտնվել է հնդկուհի գուշակը: Ամենքն աշխատում էին սիրաշահել նրան, սրտներում առ ունենալով աստծու զորությամբ օժտված մարդարեռուհուց:

— Որոշված է,— մեղմ, զարմանալի խոնարհ ձայնով տաց գուշակուհին: — Թեզ, նորահարս խաթուն, մեր տեր տատվածը տասնմեկ տղա կտա ու քեզ նման շքնաղ մի դուստր:

Բոլորը խոնարհ ժպտացին նրան:

— Բերանդ տաճա՝ ր, աստծո դուստր: Եղիցի:

Նորահարսը աշբերը փակեց, մատները կից անելով դարձրեց երկնքին... Մետաքսե գոտու արանքից մի բուռ արծաթ հանեց ու թափեց գուշակուհու ծնկներին: Կողքին նստած կանանցից ոմանք ցանկացան թեկուզ մի-մի հատ արծաթ հափրշտակել, սակայն սարսափեցին նորահարսի ահեղ հայացքը նկատելով: Գրբաց-գուշակուհին հանգարտ հավաքեց դրամները, համրեց, դրեց կապայի զրպանում:

— Թերեւայի որբերը կարոտի մեջ են: Այս դրամը նրանց կրաժանեմ: Օրհնվի ծնունդով, շքեղ խանում, և թող քո ամուսնու մեջը երբեք քամի լընկնի:

Նա սկ թելերով հյուսած մի կիսալունաձև հմայիլ զցեց նորահարսի վզովը:

— Միակն է ալլահը երկնքում: Մի ոսկեհյուս տնակ ունի նա ու մի սիրամարդ կին: Միակն ես դու այս աշխարհի վրա, զյոզալ, և քո ամուսինը քեզ առավել կսիրի, քան իր ձիուն: Այդ թալիսամանը քեզ կփրկի սատանայի դավերից ու քո ամուսնու աշքը քեզ վրա քաղցր կպահի: Դու կհարստանաս այս լուսաբացին և աշխարհը քո արեով կերպվի: Աստված թող քո ամուսնու ձիու վրնջոցը Մեքքայում և Ռումի սուլթանի ելորդ պալատում հնչեցնի:

Կույր նվազողներ բերին: Գիշերային խնջույքը տաքացավ:

Ու ոք շնկատեց, թե ինչպես գուշակուհին դուրս եկավ սրահից ու մերկելով խավարին, գնաց դեպի մեջիդի գարպասները:

Նրա առաջ բաց էին բոլոր դռները...

* * *

Մելիք-Աստվածապով իշխանն ուսերից պոկեց մթագույն թիկնոցը, ուղղեց արծաթած դաստակով թուրք, գոտու արանքում պահող զույգ ատրճանակները լիցքավորեց: Գյուղիստանի Մելիք-Հովսեփը հարցրեց.

— Սկսե՞նք:

— Ական գրեք պարիսպների տակ, — հրամայեց գահագլուխը: — Նախ անցքեր բանանք պայթեցնելով:

Մի խումբ զինվորներ մթության մեջ, վառողի տակառիկներ ուսերին, սողացին դեպի վերջերս միայն հյուսած պարսպի հիմունքները: Այդպես խլուրդներն են միարձվում հողի մեջ կամ քարի տակ: Հուսնի մահիկը նազանքով ճեմում էր հեռավոր կապույտի մեջ: Մի քիչ հեռու լուսաստղն էր ցնծագին ժպտում:

— Սկսե՞նք:

Զորքն անաղմուկ կապավ պարիսպներին: Վառողով լի տակառները հազցրին ականների մեջ, որ իրենք էին փորել հապշտապ, վառեցին պատրույզները ու հեռացան հեռու:

Ահուիլի դղրդոցը ցնցեց օդը: Դրա արձագանքը զորվեց դեպի հաշենագետի վերևները:

Լուսինը ծածկվեց փոշու ամպերից ու աշխարհը կրկնակի մթնեց:

— Ու ոքի շխնայել:

Հայոց հետեւակն ու հեծելազորը պարսպի բացվածքներով խուժեցին պայթյունների գղրդոցից սոսկացած, շփոթված, քնարամ թերգալանը: Սկսեցին գրոհել ցեծ բազարի հղութերին կուտակված մարտկոցները: Երկու թնդանոթ ձեռքերի վրա անցկացրին պարսպի փլվածքով, սարեցին ու ոմքահարեցին զորանոցները: Մի քանի շինություն կրակ ավին:

Մեշիդից գուրս եկավ հեղկուհի գուշակը, մի պահ նայեց կրակից բոստացած երկնքին ու զնաց դեպի մոտեցող հա-

յերի մի զորախոռություն: Հայ զինվորները բանի տեղ չդրին հընդ-կունուն: Սա ձեռքերը տարածելով՝ գոշեց:

— Ե՞ւ, տեր գերազահ, հետեւիր ինձ:

Հնդկունին վրայից պոկեց ճերմակ քողերով զիսի փաթ-թոցը: Գերազահ իշխանն ու նրա հետ եղածները ախ արին: Իրենց առաջ կանգնած էր Գոհար միանձնուհին՝ աղամարդ զորականի զգիստով:

— Հետեւիր ինձ, ապարապետ: Փանահ խանը առազաստի մեջ է, իր նոր կնկա ծոցում: Հետեւիր ինձ:

Կատարյալ գժոխսք էր: Հրետանուց կործանված զորանոց-ների փլազմաներից լեզարուառ դուրս էին պրծնում Փանահի զինվորները, նրանք, որ շէին մնացել փլատակների տակ: Բոլորը խելագար փախչում էին: Հայերը հրացանազարկ էին անում նրանց անխնա: Ամանք հասնում էին կործանված զար-պատճերին, սակայն ընկենում էին կամ սրահար, կամ զնդա-կից խոցված:

Գոհար միանձնուհին գերազահի զորագունդը առաջնորդեց գեղի Փանահ խանի պալատը...

Կանայք, որ տաքացած էին խնդույթով, ահեղ աղմուկ զցեցին, վազվզելով կիսախավար սենյակներում:

Թուրի Արզումանը բաց արեց մի սենյակի դռու, որից թարմ փայտի հոտ էր գալիս: Ներս մտավ: Հատակին թափ-ված էին ջարդված ամաներ, շերտեթի լճակներ կային զոր-գերի զրա: Գիշերային կերտուխումը հարամվել էր հարեմի զիսին: Սակայն նա սթափվեց իսկույն: Բարձր մահճակալ-առագաստի մոտ կանգնած էր պարակուհի նորահարսը՝ զու-նատ, դողդող, զրեթե կիսամերկ: Հատակին թափված էին Փանահ խանի զգեստը, զիսարկը:

— Փախա՞վ ամուսին, խանդ, փախա՞վ,— զոշեց հարյու-րապետը, սուրբ տատանելով:

Կինը փորձեց ճերմակ քողով ծածկել մերկոթյունը:

— Ինչո՞ւ խուժեցիր տունս, հա՞յ իմ ննջարանն իրա-վունք ունի մտնելու միայն իմ զիսատերը:

— Իսկ նա փախել է, հա՞: Թո շորերը հագել փախել է, հա՞: Եվ քեզ լքել է, հա՞: Լքել-փախել... Եվ գու նրան մարդ ես համարում, հա՞: զեղեցիկ, տկլոր խանում: Հա՞...

— Գոհար, — ծղրտաց կինը:

Թուրի Արգումանը նրա ծղրառոցը լլսեց: Հմայվել էր նրա մերկությամբ: Նրա սուրը կախվել էր թույլ, կարծես երբեք չէր ուղղվելու: Դեմք հրեղեն սյուն էր, որ շողում էր թիկունքից ընկած արեի ոսկով: Նրա վարդապույն մարմինը հրդեհվում էր: Բորիկ ոտքերը կարծես այրվում էին մանուշակի գույնի կապայի բոցերից: Ինքն էլ շիմացավ, թե ինչպես ասաց.

— Դու զեղեցիկ ես:

— Քեզ ի՞նչ...— Կինը շնչում էր շար: Նրա աշքերից կայծեր էին թափվում, հիմա-հիմա կվառեն աշխարհը: — Ինձ սպանիր: Սպանիր, վերջանամ, հա՛յ...

— Քեզ արգեն քո հայրը սպանել է, եղնիկիդ զցելով առզի բերան՝ Փանահի երախալ: Քե՞զ...

— Ես անարատ եմ...

Դրսում աղաղակ էր: Հայ զինվորները շարունակում էին կոտորել Փանահի խանի մարդկանց: Թուրի Արգումանը վրայից պոկեց այժենակաճը, դրանով փաթաթեց պարսկուն: Սա շդիմադրեց, թուրացած ընկավ նրա ձեռքերին: Հարյուրապետը նրան գուրս տարավ...

Տիգրանակերտում հայերը ամեն ինչ հավասարեցրին հողին: Քանդացին այն ամենը, ինչ Փանահ Ալի խանն էր շինել, նույնիսկ մեշիդ գարձրած եկեղեցին: Ավերակերին հեռու ու մոտիկ տարածված խաշնարած ցեղերը հապշտապ հեռացան Հայաստանից:

* * *

Տիգրանակերտից մի կերպ գուրս պրծնելով, Փանահի խանն ու տանուտեր Միրզիխանը ոտքով կտրեցին խաշեն զետի նորը և երբ լույսը բացվեց, մտան ժայռերի խոռոշներն ու տապ արին գալլի որդում: Խանն ասաց.

— Կնկա շորերն ինձ զզվեցնում են, Միրզիխան քեկ: Մի հնար գտիր:

Կարծես թե տանուտերը կնկա շորի մեջ իրեն թագավոր էր զգում: Մտքումը ահեղ հարց է՝ ինչ եղավ կինը՝ Երնջիկը: Մնաց: Խանի կանանց հետ էր: Սպանվեց...

Երկրորդ զիշերը աղվեսների պես անցան Հայ զյուղերի

մոտով, երբեմն վազելով, երբեմն սողեսող: Վերջապես հասան Կարկառ գետին, անցան, ու հենց ուզում էր լույսը բացվել, թաղվեցին Ավետարանոց գլուղի վերեի անտառում: Մտան մի կաղնու փշակ:

— Ուտել եմ ուզում,— ասաց Փանահ խանը:

Եղավ մի պահ, որ Միրզեխանը մտածեց սպանել նրան ու զնալ Հայոց մեծ իշխանի մոտ... Բայց սարսափեց սեփական մտքից: Հենց քիչ առաջ Փանահ խանը կրկնեց նրան տված խոսումը՝ երբ ես ամրանամ իմ իշխանության մեջ, ապա քեզ եմ տալու եալենի մելիքությունը, Միրզեխան: Իսկ ով չի կամենում իշխանություն ունենալ, նա պարզապես ավանակ է:

Խանն արթնացավ կարճ ու տագնապած քնից, խզաց.

— Մելիք—Շահնազարն իր տա՞նն է:

— Իր տանն է՝ Ավետարանոցում:

— Պետք է մեր մասին լուր տալ նրան:

Երկու դիշեր ու երկու ցերեկ մնացին ժառի փշակում: Միրզեխանը խոռոշից դուրս էր սողում, մասուր կամ մոշքաղում, ուտում ինքը և տալիս նաև խանին: Մի անգամ ես նրա մեջ միտք ժագեց՝ սպանել Փանահին, սակայն այնպիսի գող բռնեց մարմինը, որ քիչ մնաց ահից գոռա: Այլևս այդ մասին չմտածեց և դրանից իրեն հանգիստ էր զգում:

Բախտը երեք դուռ ունի, երեքն էլ փակ:

Սակայն աստված դուրը բացնց նրանց համար: Դա նզագ փշակում նրանց թաքեվելու շորրորդ օրը: Երկուսն էլ անվերջ աստծու անունն էին տալիս ու օգնություն աղերսում նրանից: Ով հենվում է աստծուն, նրա գործը կհաջողվի:

Մի շուն մոտեցավ նրանց թաքստոց փշակին, հոտոտեց, ապա ետևի ոտքերով հողը փորելով, երկու թի երեք անգամ հաշաց: Միրզեխանն ու Փանահը ահից փաթթաթվեցին միմյանց: Շունը որսի էր: Տեսնես ո՞ւմ է բերում ետևից: Փախրստականներն արդեն տակները թրչել էին, երբ փշակի առաջ, շան մոտ տնկվեց... Ո՞վ: Շունչները պահեցին:

— Ա՛, Փանահ, զողո՞ւմ ես...

Միրզեխանի շունչը տեղը եկավ: Եկվորը Մելիք-Շահնազարն էր: 0՝, բախտ, քեզ ցերեկով էինք ման զալիս, զու զիշերով եկար:

— Դեպի քո տունն էինք գալիս, — տեղը շտկվեց Փանահիսանը: — *Shtanov* և ես վիճակներս, եղբայր իմ:

— Իմ ժառայի վիճակից վատթար ես:

— Բայց դու ինձ կփրկես, — ասաց խանը: — Դու պարտավոր ես դա անելու:

— Ակն՝ ընդ ական, — ասաց *Մելիք-Շահնազարը*: — Քո արած ոճիքներն այնքան շատ են, օ՛, Փանահիս ճրո խան, որ հազիվ թե փորում տեղավորվեն: — Անզուսպ ժիժաղեց: — Կեհկարմա՞տ եք դարձել: Հո՛, հո՛... Կնկա փոխանով եք փախել: Թե մեկը ձեր փոխանները հանի, իբր թե կնկա... Ահից լեզանաք կլինի՝ ցցված ժանիքներդ տեսնելով:

Խանն ու տանուտերը նրա ասածից զողացին: *Մելիք-Շահնազարը* գնաց, շունը թողնելով թաքստոցի առջև: Հենց որ փորձում էին շարժում անել, շունը տնկվում էր ահեղ, ատամները ժնգժնացնում: Բայց ահա և մարդ երևաց: Աա տղամարդու զգեստներ ցցեց թաքնվածների վրա:

— Հագեք: Դուրս եկեք ու հետեցեք ինձ, — ասաց մարդը: — Դե՛, հա՛: *Մելիք-Շահնազարը* ձեզ է սպասում: Դե՛, հա՛... Հո՛ որդինա՞ծ շեք:

Խանն ու *Միրզեխանը* թեթևացած շունչ քաշեցին: Գնացին նրա ու շան հետ: *Մի* փոքր խորացան անտառում: Ազրյուրի մոտ պաղել էր մելիքը և խոզի խորոված է ուտում: *Միրզեխանի* բերանի ջրերը գնացին: Փանահի կոկորդը լցվեց թուրով:

— Հիմա քեզ հետ ինչպե՞ս վարվեմ, խա՞ն:

Մելիք-Շահնազարը բերանից խորովածի ու զինու հոտեր փշեց նրանց մոռթերին: Նրա մոտ պաղած ութ, թե տաս իր զինվորները մի լավ հահացին:

— Դե ասատ քանի՞ անգամ փրկեմ քեզ, ստոր մունելու կու

— Զեմ կարծում, թե դու քո մատով քո աշքը կհանես, — ասաց խանը: — Կարծում եմ քո մայրը քեզ ոշխար շի ծնել, այլ՝ աղվես:

— Քեզ էլ՝ գայլ, — ժիժաղեց *Մելիք-Շահնազարը*: — Նըստի՞ր: Դու էլ նստիր, *Միրզեխան*:

Երկուսն էլ նկատեցին, որ մոտիկ ժառերից մարդիկ են կախված: Լեզուները հանել էին, աշքերը լոել երկնքին, որ փայլատակում էին մայրամուտի կարմրից: Նրանցից գար-

շահուա էր գալիս: Մելիք-Շահնազարը մի գավաթ գինի դեմ
արեց Փանահ խանին:

— Միմյանց լավ ճանաչենք: Սառերից կախածները քո
մարդիկ են, հիսուն հոգի: Գողության էին եկել:

— Հասկանալի է,— ասաց խանը:— Գողին կամ պիտի
սպանել, կամ վաճառել:

— Հիմա էլ դու ես իմ դերին: Այդպե՞ս չէ:

— Սուր լեզու ունես, մելիք եղբայր:

— Եթե թուրս բթանում է, լեզուս եմ սուր պահում: Եթե
քությանը ինձ նեղություն տա, կկտրեմ:

— Միայն այդպես:— Խանը նորից գինի խմեց:— Ինչ որ
մարդուն նեղություն է տալիս, պիտի ոչնչանա, թեկուզ դա
նրա աջ ձեռքը լինի, կամ զավակը: Չեմ կարծում թե դու,
Մելիք-Շահնազար, այնքան տխմար լինես, որ անձիդ օգուտը
չհասկանաս ու կտրես իմամ Ալիին գրավ դրած իմ գլուխը:

Մելիք-Շահնազարը գիշերով նրանց տարավ իր ամրոցը:
Թաքուն տարավ ու թաքուն մտցրեց իր հարկաբաժնի մի նեղ-
վածք սենյակ:

— Համբերեցեք:

Ամեն օր նա իր տարօրինակ հյուրերի համար ուսելիք ու
սառ ջուր էր ուղարկում: Հյուրերը լզիտեին, թե ինչ է սպաս-
վում իրենց, սակայն այն մահվան տազեաւ շունեին:

Ութ, թե տասը օր հետո, գիշերով Մելիք Շահնազարը
վառվող կերոն ձեռքին մտավ հյուրերի խուցը: Երկար նայել
Փանահ խանին:

— Գիրացել ես, խան իմ: Շահած-պահած մսացու մերուն
ես դարձել: Քո բարեկամ Ալորպատականի խանը քեզ շատ է
սիրում, այդպե՞ս է:

— Երկի նա յոթ օր սուդ պահի, երբ լսի իմ մահվան լու-
րը, — ասաց խանը:

— Յոթ օր էլ կուրախանա, երբ քեզ տեսն:

Խանի շրթունքները ծովով կցին:

— Սազրո՞ւմ ես: Սատանայի ձի՞ն ես նստել:

— Ձի՞,— խրինջաց Մելիք-Շահնազարը:— Երկու չի
պատրաստ են դրսում: Չեզ կուզեկցի Ալորպատականի խանի
մարդը, նա ևս ձիավոր է: Երա երդմանը ես հավատում եմ:
Ես ձեզ կկանչեմ... Կկանչեմ Երթաք բարով:

Նա նրանց հանեց Ավետարանոցից, զրեց ձիերի վրա, հանձնեց Աստվատականի խանի մարդուն:

— Աստված ձեզ հետ:

Մի օր հետո Փանահն ու Միրզեխանը անցան Արաքս գետը և մտան Պարսկաստան: Միրզեխանի մտքի մեջ Երնջիկն էր: Այս, տե՛ր աստված, փրկիր նրան:

* * *

Այս ե՛ս եմ, ե՛ս եմ: Ես՝ Պարսից շահի էլլի-դհսպան Սաֆար-Ալի Արդուլ Հասան միրզես, արդեն ընտելացել եմ Հայոց կյանքին ու թվում է գտել եմ իմ նախնի բույնը: Երբեմն մտածում էի վերադառնալ արքունիք ու խնդրել, որ ինձ մի ուրիշ գործի դնեն, սակայն գուհանում էի վիճակովս, մանավանդ, որ Պարսկաստանը ալեկոծվում էր ինչպես փոթորկված ծով, իրար ետևից գահեր նետելով ջրեղեն անդումների մեջ... Ինչո՞ւ տաշեղ գառնամ այդ ծովում: Ինչո՞ւ Հայերն ինձ հետ վարվում են Հարգանքով, նաև երբեմն զիջումներ անելով, եթե ես, մարդկային բերումով, քայլս ծուռ եմ դնում:

Մելիք-Աստվածապով իշխանը շքախմբով մեկնեց իր երկրի արևմտյան մեծ քաղաք Երևան: Ինձ էլ տարավ հետը: Երեւանի խաղաղ հյուսում էր արևային իր մեղվափեթակը: Գերագահը օրնիբուն Երևանի իշխանների հետ էր, զորքի մեջ:

Մի օր իմացա, որ Աստվատականի խանը դհսպանություն է ուղարկել Հայոց աշխարհի վերագահ իշխանի մոտ: Ես շտապեցի տեսնելու իմ երկրի մարդկանց: Նրանք յոթ հոգի էին, բոլորը երկելի անձեր: Գլուխ ունեին թավրիզի Շեյխ ուլ Խալամին, որ բավականին շահել էր, սրամիտ ու ինչպես երեւաց՝ հանդուգն: Երբ այց արի նրան, նա գրեթե զոռաց վրաստ:

— Այստեղ դու գյավուր հայերի՞ն ես սատար լինում, էլլի միրզե:

Ես ձեռքս, որ բարձրացրել էի սալամի, թափով ցած բերի:

— Լեզուգ կարճ պահիր ու ձայնդ հնազանդ, խանի մարդ: Ես շահի էլլին եմ հայերի երկրում ու դու որևէ իրավունք չունես ինձ վրա: Եթե բանը իրավունքի վրա դնենք, ապա դու իմ ստորագրյալի վիճակում կգտնես ինքինք:

Եելիս ուզ իսլամը հասկացավ, որ սխալ արեց, ներողություն հայցեց ինձնից ու մենք հաշտվեցինք: Մեկ, թե երկու օր հատու հայոց գերազա՞ն իշխանը ընդունեց խանի պառվիրակներին: Նրանց ընդունեց ոչ թէ Երևանի իշխանի շքեղ պալատում, որ գորգերով ու բյուրեղյա քահերով պերճացած էր, այլ մի անշուր սենյակում, որի հատակին նույնիսկ գորդ չկար: Ինքը՝ Մելիք-Աստվածապով իշխանն նստած էր հասարակ աթոռակի, պատերազմական զենք ու զգեստի մեջ, զլիսին բարձրագույն իշխանության նշանակ խաշակիր արծիվ, որ սակի չէր, այլ հասարակ պղնձից: Եելիս ուզ իսլամը երկար ու բարակ ողջունեց: Նրա լեզվից մեզը էր ծորվում, բայց մեզը, որ շինովի է, ոչ բնական և զա ներկաները զգում էին: Իր խանի անունից նա արտնջաց, որ հայերը խախտում են հայոց ու պարսից թագավորի միջն կնքված գաշնի պայմանները: Մելիք-Աստվածապովը բարձր քրթաց դեսպանի երեսին, փոքր ինչ թերզվեց զեսպի նա:

— Իսկ ասա, էլլի՛, արդյոք, պահպանո՞ւմ է քո խանը մեր հաշտության պայմանները: Չի՞ խախտում նախ ինքը: Ասա՛: Դէ ասա:

Եելիս ուզ իսլամը ինչ-որ ժամմամեց, ժամովեց ու ես խըզնացի՝ նրան ստորացած վիճակում տեսնելով: Չէ որ, ինչ էլլինի, իմ երկրի պատկերն է նա այս պահնին:

— Կգա օր, որ ես քո խանին կկախեմ իր արտաքնոցի պատից հենց միայն այն բանի համար, որ նա ապաստան է տալիս թուկից փախած Փանահ ավագակին, նրան օգնում է ամեն ինչով, որ նա մտնի մեր տունը և զավթի մեր հողք Ամա կերավ, հա՛...

Այսպիս նրանք խոսեցին այդ օրը:

Հաջորդ անգամ Աստրապատականի դեսպանին հայոց գերագա՞ն իշխանն ընդունեց արդեն պալատում: Սա շատ շքեղ էր և այնքան լուսավոր, որ դեսպանները նույնիսկ շփոթվեցին: Նրանց, ինչ խոսք, նաև ինձ թվաց, թէ թագավորական պալատում ենք: Դերագահը նստած էր երենոսի գահի, որ ընդելուզված էր անհամար թանկագին քարերով, քաղկակալներին՝ առյուծներ, մի թաթով խաշ, մյուսով սուր բռնած:

Պատվիրակներին ներս բերեց Սուռ Վարդապետ հարյուրապետը: Եելիս ուզ իսլամի ականջին ասաց:

— Ծունկի եկեք:

Պարսիկները ծունկի եկան այս անգամ արդեն փափուկ դույներով շողացող գորգերի վրա: Շեյխ ուլ Իսլամը շողոքորթ ողջունեց հայոց մեծին: Գերագահը թեև գիտեր, թե նա ովէ, բայց ընդհատեց նրա շողոմ խոսքերի հոսանքը:

— Ինչո՞ւ ես եկել իմ երկիրը, Շեյխ ուլ Իսլամ պատվելի:

— Իմ տիրոջ՝ Աստրապատականի խանի աղջիկը քո գերին է:

— Հետո ի՞նչ: Գեղի է, ուրեմն գերի է: Զէ որ քո տերն իր աղջկան ուղարկել էր իմ թշնամի Փանահ ցեղապետին նվեր, իրրե անկողնու էգ:

— Իմ տերը մեծ սպի մեջ է, օ՛, բարի իշխան: Դու արձակիր նրա աղջկան ու նա խոստանում է հավիտյան բարեկամ լինել հետդ՝ քո թշնամիների զեմ:

— Իմ թշնամին քո խանի ընտրած փեսացու Փանահն է, — շանթեց Մելիք-Աստվածապովը:

— Ալլահի կամքով այսուհետև միայն բարեկամություն կլինի մեր միջև: Կերպվենք Ղուրանի վրա:

— Զեր երգումը բառասունք չունի, — որոտաց հայ իշխանը: — Դուք անբարիշտ ու խարերա եք, դուք աղուհաց մոռացող եք: Դուք մեր թիկունքում դանակ եք սրում մեր զեմ: Դէ, հիմա դանակը կտեսնեք:

Գերագահն այնպես էր խոսում, որ սարսափում էին ոչ միայն պարսիկ դեսպանները, այլև ահ էին զգում նրա յուրայիներն ու ես: Շեյխ ուլ Իսլամը անվերջ զլուխը կպցնում էր դւանին, երդում իր բոլոր սրբություններով, որ այլև նեղություն չեն տա հայ գյուղերին, կպատժեն Փանահ Ալուն: Երբ գահապլուխը փոքր-ինչ հանդարտվեց, դեսպանն ասաց.

— Իմ տերը մշտ զերեղին է խոստանում քեզ, տեր գերադահ: Երեք հարյուր ոսկի, հիսուն ընտիր նժույգ, վեց հազար ոչխար...

— Ուզում էիր ութ հազար ասել, այդպես չէ՞՝ իշխանի քրքոցից պատերը զնզացին: — Այո, այո, հենց այդպես էլ ասած կլինի քո խանը: — Ժամանակ շտվեց նա: — Մոռացիոտ մարդ ես երեսւ, Շեյխ ուլ Իսլամ էլլի: Ես իմ մոռացկոտ ժառաների ականջները կտրում եմ:

Գեսպանը խոստացավ կատարել նրա պահանջը և աղաւից ազատ արձակել խանի աղջկան: Նա նորից երդվեց մեր

կրոնի բոլոր իմասների գլուխներով, որ իրենք այլևս ոչ մի
նեղություն չեն տա հայերին:

Մելիք-Աստվածապովը ձեռքը բարձրացրեց ու խստու-
թամբ կտրեց.

— Հասկացա՞նք: Հերիք է գուրս տաս, դեսպան Եկյիս ուզ
իւլամ: Քո խանին հայտնիք գերեզինը, այլապես ես նրա
դատեր արյունոտ շապիկը միայն կուղարկեմ իրեն:

Այդ օրը իշխանական ճաշին գերազանց ինձ ևս մասնակից
արեց ու ես շատ գոհ մեացի: Հատկապես ինձ գուր էր զալիս
հայերի հարիսա կողմով կերակուրը, որի համը կարծես
մանկությունից բերանիս մեջ է: Բայց որտե՞ղ եմ կերել, չեմ
հիշում:

Երբ ճաշը վերջացրել էինք, գերազանց իշխանը Եկյիս ուզ
իւլամին մեզմ հարցցեց.

— Հո շե՞ս մոռացել, թե ինչ գերեզին պիտի տա խանը իր
դատեր համար:

— Աչ, ո՛, տեր...

— Կրկնիր:

— Երեք հազար ոսկի, հարյուր նժույզ, ութ հազար ոչխար:

— Այդպէս,— ծիծաղեց գերազանց: — Յոթ օր հնառ,
կիրակի օրը, իրիկնամուտին իմ մարդիկ քեզ կապասեն
ջուղայի մոտ, Արաքսի գետանցում: Ճանաշո՞ւմ ես: Բարի՞
իմ մարդիկ կրերեն քո խանի աղջկան: Կտաք, կառնեք:

Հայերը դեսպանին ճանապարհեցին: Գերազանց գնաց
եկեղեցի՝ առավոտավա աղոթքի: Ինձ էլ ասաց՝ եթե կուզես,
արի: Ես սիրով գնացի: Եկեղեցում տեսա Աստրապատականի
խանի աղջկանը՝ իրեն փրկած Թուրի Արզուման հարյուրապե-
տի հետ՝ կողք-կողքի: Խանի աղջիկը, իրոք, չքնաղ էր, ինչ-
պես հին բանաստեղծներն են ասում՝ Եիրազի հրեղեն վարդ,
և կարծես ուրախ էր: Ես զարմացա գերազանցի վրա, ինչո՞ւ
է իման գանձ փոխանակում մեռած ոսկու, ձիերի ու ոշխարի
հետ: Անշափ զարմացա, երբ տեսա, թե ինչպես է խանի
աղջիկը ժումը գնում, խաշակնքում ճիշտ և ճիշտ հայի պետ-
երը դուրս էինք գալիս, ես պարսկերեն նրան հարցրի: . . . Հո-
վատափո՞խ ես եղել, սիրուն խանում: — Աչ, աւաց նա: —
Ես իմ հաւատտին հաստատ եմ: — Որի՞ն: — Իմ սիրուն: Իմ
հավասն իմ սերն է: — Ես սարսափեցի ու ալլահին աղաշե-

ցի ներել այս կապը կտրածին: Այնուամենայնիվ ։ արցը հ՝ Հարյուրապետը սրտո՞վդ է:— Նա իմ հոգին է:— Սիրո՞ւմ է բեզ:— Շատ լեզվիդ տվիր, էլլի՛ միրզե: Քեզ ի՞նչ...

Մի երկու, թե երեք շաբաթ հետո Արաքսի անցրից վերադարձավ Հայերի զորախումբը՝ Թուրի Արզուման Հարյուրապետի զլխավորությամբ: Նրանք խանի աղջկան տարել էին փոխանակելու ոսկու, ոչխարի ու ձիերի հետ: Ետ էին եկել ոշխար ու ձիեր բերելով, նաև ոսկու պարկերը, նաև, օ՛, ալլահ, փրկիր, բերել էին իրեն՝ խանի աղջկանը:

Թուրի Արզուման Հարյուրապետը ահա թե ինչ պատմե՞ն ինձ:

— Մենք ապրում ենք թշնամիներով շրջապատված, էլլի միրզե: Արյունախում ու նենդ են ձեր խաներն ու բեկերը: Վատ չի լինի, եթե մենք Հայերս նրանցից սովորենք խարել, խորամանել, կեղծել: Այդպե՞ս... Խանի դուստրը շուգեց վերադառնալ իր հոր տունը: Նա հիմա իմ կինն է:

Խանի աղջիկը բաց արեց զիրկը և Հարյուրապետին ընկալեց լիովին:

— Օ՛, իմ տերս, իմ սիրելիս...

Նրա թրթուն քողի փեշերը ետ գնացին ու նա բուրեց խենթացնող:

— Քաղցրացիր իմ Համբույրներով, փրկիչ իմ, և հոգիդ Հարուստ պահիր: Ո՞ւմ է պետք այն զեղեցկությունը, որ շրջապատված է հոգու աղքատությամբ:

Մոմերի լույսերն ընկան պարսկուհու աշքերին ու դրանք հրավառվեցին:

Գերագահ իշխանը Թուրի Արզումանին հազարապետի աստիճան շնորհեց: Կամար Սոլթանը իր ամուսին Ազամ բնելի հետ եկավ հորը շնորհավորելու: Փաթաթվեց պարսկուհուն:

— Այ զեղեցիկ քույրիկս, հորս համար հոգատար կնիկ կլինես, հա՞: Նա շատ է տառապած: Մորս վաղուց է կորցրել, ես նույնիսկ չեմ հիշում նրան:

Ես հիացա այս արարից: Մարդը, ինչ էլ լինի, մնում է մարդ, եթե աստված նրան խիղճ ու արթուն դատելու կարգություն է տվել:

Մի շաբաթ հետո պարսկունու դիակը հանեցին Հրազդան
գետի մի փրփնչանից: Ճնշող բան էր: Ի՞նչ եղավ, ինչպես
զբամույն գարձակ դժբախտը: Ու ոք չգիտեր:

Այդ օրը Կամար-Մոլթանեն ինձ ասաց.

— Ամեն բան չէ, որ պետք է զրես քո այդ դավթարի մեջ,
միրզի ազա: Պարսկունին ինձգովեց գետում լողանալիս, ինքն
իրեն... Ռաքն ընկնում է քարի արանք ու... Այդպես:

Խոր շնչեց, ոռւնգերից կրակ թափվեցին:

— Իսկ ես ի՞նչ պատասխան տայի մորս ուրվականին,
որ ամեն զիշեր կախվում է գլխիս ու խեղում ինձ: Ես մորս
վրեժն եմ առել...

Ես սարսափեցի:

ԳԼՈՒԽ ՀԱՆԴԵՐԸՐՄԻ

Տարիներն անցնում էին իրար ետևից: Հայոց աշխարհի
իրավիճակը որբան բարդանում էր, այնքան զերազա՞հ իշխան
Մելիք-Աստվածապովը դառնում էր զգոն, հեռատես, ջրչա-
հայաց: Մենք երա մոտիկներս երա մեջ երկյուղ կամ շփոթ-
մունքի շնչին պահ անդամ շտեսանք: Նա շարունակում էր
իր ձեռքում ամուր պահել Հայոց պետության զեկը: Գրեթե
շնոր անդրագաւոնում այն ցեցող իրողությանը, որ Վարսնդա-
յի մհլիք Հովոնիքը սպանվեց իր եղբոր՝ Շահնազար թեկի
ձեռքով և որ սա ինքնազլուխ իրեն մելիք է հողակել ու ան-
շատվել Հայոց ուխտական միարանությունից: Մելիք Շահ-
նազարի յուրաքանչյուր արարք, նույնիսկ այն թի ինչպես է
ամեն երեկո նա իր կնոջ խնամքով լոգանք ընդունում, հայտ-
նի էր դառնում զերազահին: Ջրարերգում և, անշուշտ, ողջ
երկրում միայն մեկ-երկու հոգի գիտեին, որ տանուտեր Միր-
զեխանի կինը՝ Նրնչիկը Վարանդայի դավաճան Մելիքի
գոյակից աստծո ամեն օր օրենք լուր էր ուղարկում ջրարերդ:
Ես սրանշանում էի Նրնչիկով: Աստվածային կորով ունի այդ
գեղեցիկ տիկինը, երեկվա միանձնուհին: Իր կանացի բարե-
մասնությունները նա լիովին զոհարերել է ազգին ու հայ-
քենիքին:

Հայոց Գերագույն Գահաժողովին հավատարիմ էր մեծ զորակայան Զրաբերդը: Նրա հետ էր երբեք շվամտող Դիզակը, որ արդեն, Վարանդայի օտարացած սեպով կտրված էր: Միաբանության շղթայի մի օղակը առաջվա պես Խաչենի մելիքությունն էր ու անընկանում Գյուլիստանը: Գանձակ մեր մեծ քաղաքի պարունակը Մելիք Հովսեփի գրեթե պատանի որդի Մեծլում բեկն էր: Նա իր իշխանության տակ եղած քաղաքից ու շրջակա գյուղերից ամեն որ ոգևորից լուրեր էր առաքում զորակայան: Այդպիս հայոց ուխտին հավատարիմ էին Զագաձորը, Կապանը, Գողթան-Երնջակը՝ իրենց ամբապինդ զինվորությամբ, Արարատյան աշխարհը, Գեղարքունիքը: Մելիք-Աստվածապով իշխանը վաղուց մտադիր էր պետության մայրաքաղաք Հոշակել Երևանը, գերագահությունը Արցախից տեղափոխել այնտեղ: Սակայն իրազրությունները փոփոխվում էին արագ և նա իր այդ նպատակը հետաձգում էր:

Միաբան իշխանները գերագահ Մելիք-Աստվածապովին հաճախ ուղղակի պատին էին սեղմում: — Զորքով գնանք դավաճան Մելիք-Շահնազարին ոչնչացնենք: — Գերագահը շեր արձագանքում նրանց այդ պահանջին, մի բան, որ ինձ համար տարօրինակ էր: Միայն մի անգամ նա նրանց ասաց.

— Ներքին թշնամությունն արտաքին վտանգից առաջել կորսարեր է: Կարծում եմ պետք է հաշտության ուղիներ գտնել:

Նա իրագացի է: Մելիք-Հովսեփը թաղված է, այլևս նրան ետ չես բերի: Առկա է՝ Վարանդայի տերն այժմ Շահնազարն է: Իսկ Վարանդան հզոր է՝ ամեն կողմով և բռնում է երկրի հարավ-արևելքի ամենից կարևոր դիրքը: Ուրեմն, պետք է ելք գտնել Մելիք-Շահնազարին ետ քաշելու իր բռնած դավաճանական ուղղուց:

Գերագահին լսում էին: Նա կարողանում էր իր կամքը ոչ թե բռնությամբ, այլ՝ համազելով ներշնչել իշխաններին ու զորքին: Պարզ է, նա ոչ թե վախենում, այլ զգուշանում էր նոր կորուստներից:

Պարսից զեսպան Սաֆար Ալի Արդուլ Հասան միրզեն մեկնեց իր երկիրը: Նրան ճանապարհ զնելուց հետո գերագահն ինձ ասաց.

— Ծտապիր Երնջակ՝ Հովհաննես և Խանդամիրյանի մոտ նախորդական քաղաքում մի պարսիկ նախկին զեքիլ-վերակացու՝ Հեյդար Ալի կոչվածը իրեն խան է Հռչակել ու նեղություններ է տայիս մեր Երնջակ-Գողթան միավորումին:

Ես մեկնեցի Երնջակ՝ Շաղկերու:

* * *

Դինետան մշուշը եռում է: Բերան-բեղերից ժայթքող գոլը, փաթաթվելով գինեցովին, անձրևում է խրախճացողների վրա: Ամրոցի հակա օդայի քարե պատերը, զի՞հ ծանր սյուն-զերանները քրանել են և նրանցից զլուր-զլուր դեղին հեղուկ է ծորում լավաշի կույտերի, սանրի ու խաշած մասի սինիների վրա: Երնջակի ու Գողթանի զորապետ-առնուտեր Հովհաննես Խանդամիրյանը արջի թաթեր ձեռքերով ճեղքեց կապայի օձիքը: Կարերը ճռչացին, փղոսկրե կռնակները թռան աջ ու ձախ: Զահել ցույլ է, մոնշաց:

— Բավակա՞ն է: Հոգիս կերա՞ք...

Աւշ աշնան գիշեր է: Երնջակի ու Գողթանի լեռնակուտակ գավառների վրա կեռ սրի պես կախվել է կիսալուսինն ու թարմ թրիք տեսած համառ էշի պես չի էլ շարժվում տեղից: Տանուտերը նորից բորբոքվեց, կապավ նախիջնան քալաքի:

— Ինչո՞ւ ես հանդուրժում պարսիկ Հեյդար Ալի խանին քո քաղաքում, մա՞րդ: Ինչո՞ւ: Ահա երեք ամիս է, շնթռկած է քո տանը:

Իշխան Խարիսխմոսը ծանր, լերկ զլուխը մի կերպ բարձրացրեց.

— Զարմանալի ես, տեր մեր: Հեյդար Ալի խանը Պարսից շահի կողմից դեսպան է ուղարկված Հայաստան: Ես ի՞նչ կարող եմ անել:

— Իսկ ինչո՞ւ չի գնում գերազանի մոտ:

— Ասում է սպասում եմ իմ թագավորի նոր կարգադրությանը: Գերագահը տեղյակ է նրա ժամանելուն:

— Թեզ հայտնի՞ է, որ շահը նրան նենդ նպատակով է ուղարկել մեր երկիրը: Արաքսի այն ափին դեսպան Հեյդար Ալի խանը զորք ունի պահած, հենց մեր թթի տակ...

— Մակայն ես ի՞նչ կարող եմ անել, — աղաղակեց իշխանը: — Դեսպան է: Դեսպան է: Ինքդ ինչպես կամ ենում ես, վարդիր նրա հետ:

Հովհաննես Խանդամիրյանը նրա վերջին խոսքերը լլսեց երևի: Գինու կուլան քաշել էր զլխին: Խմեց... Թուխ, ուռը բեղերը ծծեց, սրբեց թերով:

— Հանգուցյալ գերազա՞ն Մելիք-Ավան իշխանն ինձ նշանակեց ձեր զլխին տեր ու զորապետ: Այսպես... իմ իշխանությունն ընդունեց ու հաստատեց նոր գերազա՞նը: Ինքնիրդ էլ եք համաձայն եղել: Ուրեմն՝ եղան նման ենթարկվեցեք կամքիս:

Մի հիսուն մարդ էր հավաքված՝ զորապետեր, ու անոււերեր, իշխաններ: Ագուլիսի պարոնտեր Ստեփանոս իշխանը բխկաց կուշտ ու կուռ, մատով հարդարեց երկկողմ սրած բեղերը:

— Իսկ դու, զորավար մեր, մի՛ երկուողիր: Ա՛ ունե՞ս այդ դեսպան Հեյդար Ալի խանից: Հա՛, հա՛, հա՛...

Հովհաննես Խանդամիրյանը զնաց նրա վրա:

— Խոնչոցգ կտրի՛ր: Զէ հա՛ քո խոտոր լեզվից էլ եմ երկուողում: Ականջս գերազա՞ն հրամանին է: Թե ազդ արեց... Այսպիս տեսա ես Շաղկերտը: Պինդ է, ամրանիմն:

* * *

Մի օր Հովհաննես Խանդամիրյանը դարբնի իր տաք ու կոշտ բնույթով ինձ ասաց.

— Դեսպան Հեյդար Ալին իմ բարեկամությունն է որոնում:

— Երկի մտքումը ժուռ բան կա, — ասացի ես:

— Էհե՛, միամիտ ես, խոչա Արքահամ: Ե՞րբ է պարսիկը հայի հետ շիտակ եղել, որ հիմա լինի: Վա՛յ հավատացողին:

Տագնապները պատճառներ ունեն: Իրանի նոր շահը ուղում է ոտնատակ տա Հայաստանի հետ կերած պայմանի գիրը, Ատրպատականի խանին քըս է տվել մեզ վրա, զինում է Զառչի Փանահին: Այս ամենին գումար եղավ դավաճան Մելիք-Շահնազարը:

Հայոց երկնակամարը նորից է ժածկվում սև ամպերով:

Մի առավոտ Հովհաննես Խանդամիրյանն ինձ առաց, թե Դեսպան Հեղդար Ալի խանը ցանկություն է հայտնել ինձ հետ որսի գնալ Երասխի շամբուտները:

— Պատրաստվիր՝ դու էլ: Խանն իր որսի շունհ էլ է հետը բերելու Գիտե՞ս, շունին իր շան անունը ոչըմենի՞ւ է զրել: Ես սարսափեցի:

Ոչ մեծ խմբով մեկնեցինք որսի:

Երբ իջանք մի ձոր ու բարձրացանք մի ոչ ցցուն լեռ, մեր հանդեպ շինական մարդկանց մի համախումբ բարագան դուրս եկավ: Զինվորները ուղեցին զենքի զիմել, կարծելով թե Փառաւաշակին ենք հանդիպել, սակայն Հովհաննես Խանդամիրյանը Նրանց անդորրացրեց:

— Դժբախտ հայեր են:

Մեծ-փոքր, կին ու տղամարդ կոլուված էին գեղնափոշում մեզ:

Զիերի, ավանակների, նույնիսկ եզների վրա տեսային իրեր էին բեռնած, նաև ոտքերը իրար կապած հավերի վիզեր, խուրդիններում վորքը երեխաներ, որ զլուխները հանած, անհույս նայում էին շես էլ կարող ասել՝ մե՞զ, թե երկնքին: Հովհաննես Խանդամիրյանը ձին պահեց:

— Ի՞նչ մարդիկ եք:

— Հայ քրիստոնյաներ, տեր իշխան, — առաջ գալով ցառումով, տառապանքով աղաղակեց բավականին շահել, կորպի մի շինական: — Ընդունելի՞ն է:

— Ո՞ր գյուղից եք:

— Քհանդամի տակից, — զրեթե գոռաց նույն շինականը: Նրա հանգով մյուսները, երեխ մի յոթ հարյուր ծեր, չահել, երիտասարդ, երեխա, իրենց բերանների խոռոշները բաց արին ու կրկնեցին:

— Քհանդամի տակից: Մակվա կողմից ենք: Թշված պարսիկ խանի զորքով: Հե՛, Հե՛յ...

Ավանակները սկսեցին զռում, լեզուները հանած թանշին տվող շները ոռնացին, բեռներին ճանկերով կառշած կատուները մլավեցին: Թշվաց, թե հիմա բոլորը կճաքեն անհույս ությունից, հերսից:

— Ուրիմն հեռանո՞ւմ եք ձեր տեղերից, — հարցրեց Խանդամիրյանը:

— Ի՞նչ հեռանալ: Փախշում ենք ստույգ մահից: Մակվախանը զանակը խոր է խրել մեր բուկը:

— Դեպի ո՞ւր...

— Դեպի Հայաստան: Դեպի ձեզ: Է՛լ, Հայաստան, եթե դու տեր չկանգնես մեզ, ապա զյուղովի աշխներս կփակենք ու մեզ կցցենք Երասխի երախը: Այս, այս:

Խանդամիրյանը գուրգուրեց դժբախտներին: Ահազին գրուցեց հետները, բավականին հուսադրեց ու նրանց ուղարկեց Շաղկիրս:

Հասանք որսատեղ: Նստեցինք, սպասեցինք շահի դիսպանի գալում: Մյուս օրվա առավոտյան փողերի ձայներ լսեցինք և շան հզոր հաշոց: Ահա, ուրեմն, Հեյզար Ալին զալիս է... Նա երևաց երեսուն, թե քառասուն ձիավորների հետ: Այդքան, ոչ ավելի:

Մերոնք, որ հանգած խարույկի շորս բոլորումն էին, վեր կացան:

Հովհաննես Խանդամիրյանը ու էլի գորապետներ ծույլ, ոչ եռանդով գնացին դեսպանին ընդպառաց: Սա ձիու վրա էր, նիզակը դիբ տնկած, որի զյսին ձիու շորացրած պոշ էր, իբրև թագավորական նշանակ: *Տեսե՞ք*, տեսե՞ք, մոնղոլի ու թաթարի ժառանգ եմ և իմ աստվածն ու հավատարիմ կինը ձին է: Սատկել է իմ աստված ձին, և ես նրա սուրբ ագին եմ ոգահում: *Տեսե՞ք-տեսե՞ք*: Խանդամիրյանը բռնեց նրա ձիու սանձը: Դա ինձ դուր չեկավ:

— Ուրախ եմ, խան, որ քեզ տեսնում եմ իմ տիրույթում: Թող Քեարեն¹ անիծի ինձ, թե ուրախ չեմ:

Դեսպանին ուղեկցող սարբազներից² մի քանիսին իսկույն հետիւոտն դարձան ու օգնեցին, որ իրենց տերը ձիուց իջնի: Խանը մի պատառ բորոն հաց զեմ արեց Խանդամիրյանին: Սա հացը թաթախեց աղով, կիսեց-կեսն ինքը զրեց բերանում, կեսը՝ խանը:

Երկու պարսիկ բարապան, շղթայի ծայրերը ձեռքերին

1 Քեարեն. — մուսուլմանական նշանավոր տաճար, ուխտատեղի:

2 Սարբազ — պարսիկ զինվոր:

փաթաթած, հետիուն բերում էին դեսպանի որսի շունը: Դա էրկ մեջքով, ինչպես իր տիրոջ ածիլած գլուխը, հորթի շափ դազան էր, երախի մեջ, որ բաց էր, մի ամբողջ գոնի կտեղավորվեր: Սա նկատեցի, որ շան վզից ուսկեպատյան թալիսման ու ոսկե ճարմանդ է կախված: Խանը բարապաններին հրամայեց շանը կրակի մոտից մի քիչ հեռու տանել: Դարձավ խանդամիրյանին:

— Որը բարի սկսվեց, արբար:

— Այո, — հաստատեց մեր զորապետը: — Քիչ առաջ փաթառական հայ գեղջուկների հանդիպեցի: Մի կերպ սպրդել են Մակվա խանի ճիրաններից: Ուղարկեցի Շաղկերտ:

— Ներող եղիր, ո՞վ աստծուց սիրված, — ասաց Հեյդար Ալին: — Եատ ես երես տալիս ստոր ուսմիկին: Չէ՞ որ այդ փաթառականները քոնը շեն, այլ՝ թագավորական են, Մակվա խանի սեփականը: Դու, եղբայր իմ, նրանց պետք է գանձարելով ետ տայիր իր տիրոջը: Դրանք շահական զորքի կերակրողն են, զինվորի հացը, ոռնիկը: Ինչպե՞ս կարելի է զինվորի բերնի հացը կտրել:

Թեև գեսպանը խոսում էր մեզմ, բարեկամի շեշտերով, նույնիսկ համախմանով, սակայն, եթե ոչ շատերը, զոնես ես նկատում էի, որ նրա աշքերը նենգության քուրաներ են, որ բորբոքվում են գուցե հենց այդ լպրծուն, քծնող ժպիտներից:

— Է՞ս, եղբայրս, — շարունակեց նա: — Ինչո՞ւ վշտանալ գեղջուկի համար: Խայան ի՞նչ է, որ նրա ցավով տապակվես: Մեռնում են, թող մեռնեն: Չէ որ թե ինձ, թե քեզ և թե այդ ստոր ուսայալի համար մահը մեկ է, միշտ կա, և հայիվ մեկն իմանա, թե երբ կժամանի: Ճարմանում հմ՝ ուսյան ի՞նչ է, որ նրա համար դու տառապում ես:

Այս ամենն ասաց խոնարհ խրառատուի հոգատարությամբ: Ինչ զիմակ էլ հազնի նա, միենույն է, նրա բերանով խոսում է ինքը՝ շարյաց հրեշը: Սա զարմանում եմ՝ այս ի՞նչ դյուրին է հոգին ծռելը:

Տեսնելով, որ իր քարոզները որևէ արձագանք չեն գտնում խանդամիրյանի մոտ, Հեյդար Ալին նայեց երկնքին, հովտին ու այլ բան մտածելով՝ ասաց:

— Անշուշտ, հաջող որս կունենանք:

— Այս, — համաձայն գլխով արեց Հովհաննես Խանդամիրյանը: — Քո պատիվը գդակ է իմ գլխին, ողորմած դեսպան:

Նստեցինք: Հացից բանից կերանք, նաև շարքաթ խմեցինք: Խանը ոտքի կանգնեց:

— Որսը շսկսե՞նք:

— Սկսենք, — վեր կացավ նաև Խանդամիրյանը: — Սկսենք: Քարայծերը հիմա իջնում են դեպի Արաքսը՝ ջրի:

Պատրաստվեցինք: Խանդամիրյանն ասաց, թե առաջներս վարազներ են գուրս գալու, իսկ վարազին սովորական զիրման մանրով շես խփի, պարզ է, պետք է, ուրիմն, հրացանները լիցը անել խոշորագնդակ փամփուշտով: Նա սարբազներին հարցրեց՝ ինչո՞վ են լիցքված իրենց թվանքները: Նրանք ասացին՝ զիրմա-վառողով:

— Չեղա՛վ: Որս անելու փոխարեն, ինքներդ որս կդառնաք:

Սարբազներն իրենց հրացանները տվին մեր զինվորներին, որպեսզի մերոնք վարագ ու արջ սպանելու փամփուշտ լիցքավորեն: Հայ զինվորները սկսեցին զրազվել նոանց զենքով: Հովհաննես Խանդամիրյանը մոտեցավ շան շղթան բըռնած բարապանին:

— Թագավորի լայադ շուն է: Անունն ի՞նչ է, բարապան:

— Էրմենի, — պատասխանեց բութ մոռութով բարապանը:

— Ո՞վ է նման անուն դրել շանք:

Խանն աշխունքով փորձեց բան հասկացնել բարապանին, սակայն շնապահը շըմբանելով նրան, շարունակեց:

— Մեր տեր խանն է այս շան անունը դրել «Էրմենի»: Մենք բոլորս սրան «Էրմենի» ենք կոչում:

Խանդամիրյանը ոչնչացնող հայացքով նայեց Հեյդար Ալի խանին:

— Այս-որսն սկսենք:

Դեսպանի գույնը գնաց: Մի ակնթարթ հետո սարբազները, որ քառասուն, թե հիսուն հոգի էին, կապկաված ընկած էին խոտերի ու շոր ցախի վրա: Խանը երկար ոտքերը ժայեց:

— Ներիր, իշխան: Հա՛յ, ներիր: Միամիտ բառախաղ է ստացվել: «Էրմենի...»:

Խանդամիրյանն իր սամի մատներով բռնեց դեսպան խանի կոկորդն ու ծուռնկը գնելով նրա կրծքին՝ խեղղեց։ Քատմնելի տեսարան էր, բայց ևս մեծ հաճույք ստացաւ։ Եանը, որ զարգած էր դնշակալով, փորի կողմից մեկնեցին Հեյդար Ալի խանի կրծքին ու կապկապեցին։

Եանն ու խանին իրար կապաժ զցեցին մի խոր վիճ։

* * *

Եղանակը ցըսի էր։ Դե, մտնում ենք 1751-ի ձմեռոց ծոցը։

Եաղկերտը ծխում է խազաղ։ Մակվի գաղթականներին տեղավորել են հոգատար, խնամելով։ Նրանք սկսեցին եռանդուն կարկատել երնջակ քաղաքի հին ավերակները։ Փառք շատ, աստված, մեր երկրում մի ավերակ էլ է կենդանանում։

Ջրաբերդից սուրբնանդակ եկավ Եաղկերտ։ Գերազահից հրաման է բերել՝ շտապ մեկնիր նակորզան ու Միջնավան։ Այնտեղ միացիր Մելիք-Եսային իշխանին ու մեկնիր Եամախի, դիմավորելու Ռուսաց կայսրունու զեսպանին։

Մենք իսկույն մեկնեցինք դեպի արևելք։ Նախիջևան քաղաքից, որ մեր թիկունքումն է, այլևս վտանգ չկա։ Նրա մեջ շնթռկած դեսպան Հեյդար Ալի խանը թաղված է իր սիրեկան շան հետ։ Արաբսի այն ափին եղած պարսկական զորախումբը հեռացել է։

Խանդամիրյանը մի տեղ իմ ձեռքով, ինձ թելադրելով, նամակ գրեց Պարսկաստանի նոր թագավորին։ — Մեծ շահ, մեր երկիրն ուզարկած քո դեսպան Հեյդար Ալին անասունի մեկն էր։ Լակել էր անհավատը։ Խեղդվեց Երասխ գետում։ Դիակը շգտանք։

Մտանք մեր Ռոդովալատ։ Այս ժայռաճեղքի փոքրիկ քաղաքի քալանթարը, որ տեղացի հայ էր, իր զորաշոկատով ընդառաջ ելավ։

— Ինձ էլ հետդ տար, զորավար։

— Ոչ, — հրամայեց Խանդամիրյանը։ — Տեղդ մեա ու շարունակիր հակել Երասխի գետանցը։

Մեղքի բերդում երկու օր զորապետը հետեւց տեղական զորախմբի վարժանքներին։ Գոչ մնաց։

Վերջապես դուրս եկանք Երասխի նեղ կիրճից, Հանդի-

պեցինք մուրացկանի ձև ու կերպարանքով մի բարձրահասակ հայի: Սա նույնիսկ լթերվեց արահետից, որ մեղ ճամփատա: Իսկ արահետով անցնել հնարավոր է միայն իծաշարուկ՝ մի ձին մյուսի գավակին կպած: Մարդը ցնցոտիների մեջ էր, ոտքերին սև կոշտուկների մեկը մի գորտի շապն ու խոր ճարթերով, որոնց մեջ մրջյուն կարող էր տեղավորվել: Խոշոր գլուխ ուներ՝ թերված աչ ուսին: Մի զինվոր գոռաց:

— Է՞լ, ոչլոտ, ճամփատուր: Չես տեսնո՞ւմ, իշխան է գալիս:

— Զահլես մի՛ տար, Հիսուս-Քրիստոսից մերժված մեղավոր, — գոշեց մարդը:

Ես տեսա, որ նրա ձայնը բնավ էլ մուրացկանի շէ, այլ՝ խրոխտ է, զրնգուն, նաև կուշտ: Նրա ալքերը կրակոտ էին, հայացքում երկյուղի նշույլ շկար: Ուսից կախված էր կաշվի մաշախ, ձեռքին ուներ կեռակտուց, հաստ մական: Ես կասկածեցի՝ մի՞թե սա մուրացող է:

— Ո՞վ ես, Է՞լ, ո՞վ ես:

— Դե ձեզ ի՞նչ, — վերջապես տհաճությամբ մի կողմ քաշվելով, գոշեց մարդը: — Չեզ ի՞նչ, թե ով եմ:

— Բայց չէ՝ որ մենք կարող ենք հենց հիմա քեզ շանսատակ անել:

— Հո՛, Հո՛, Հո՛, մե՛ծ բան է, — կատաղի աղաղակեց մարդը: — Ամեն տեղ նույնն եմ լսում՝ կսպանեմ, սատակ կանեմ: Մեկն էլ չկա ասի՛ կփրկեմ, կփրկե՞մ...

Մի քիչ մեղմացավ, հառաջեց.

— Մարանդից փախստական եմ: Մարանդը, հրե՛ն, գետի էն մի կողմին: Մարանդի հայությունն եմ: Փախանք... Առաջ ընկա՝ գաղթականության համար ճանապարհ որոնելու խեկ դուք շանսատակ կ կանեք:

Մենք նրան վերցրինք հետներս: Խանդամիրյանը հրամայեց նրան ձի տալ: Ճարպիկ թռավ ձիու վրա:

Լեռների շորացած խոտերի բույրերը վերջացան: Զգացվեց նրասիր գետի գաղջ գոլը: Զիերը փոշտացրին, զինվորներն աշխաւացան: Երեսում է մոտենում ենք բնակավայրի, զա հուշեցին ձիերն իրենց փոշտոցներով: Այն էլ ասեմ, որ մեզ հետ էր զորապետի տիկին Ասպարը, որ թեթև վետզետում էր ձիու վրա: Նոր չէ, որ զիտեմ նրան: Ասպարի քըն-

ՔԸՉԱՆՔԸ ոգևորիլ էր: Նշանակում է մենք խաչ ու հույս ունենք:

Երասխ գետն իր պղտորությամբ հենց մեր կողքին է՝ վրան գետային ռիջին բաղեր: Գորշ տափարակը կրակ շնչեց մեր երեսին, կարծես մտնում էինք թանրատուն: Մեր պլխավերենում Արամազդ լոռան հավերժող սառցաշերտերն էին՝ ժայռային վիճերով:

Հոգհաննես Խանդամիրյանը ձիու զլուխը շրջեց գեպի արեգածագի: Խնձ նպատակներ ունի, շղիածամ: Կարծես զրասնում էի, ձիու բաշը երբեմն շոյելով: Չհարցրի ճանապարհը բերելու պատճառը: Առհասարակ իմ սկզբունքն է իշխաններին հարց շտալ:

Դունվում ենք Բարեկուշատի մեծ դաշտի նախաշեմին, որին այստեղ Քաշունիք են ասում: Լավ երեսում է գեպի Կասպից ծովը ձգվող հարթավայրը, որ հենց այս մեծ դաշտի շարունակությունն է՝ կտրված Երասխ մեծ գետի անկողյոնով: Այսաւանապատ աւարտքներ էլ կային, որի երեսին նայելուց սարառում էի, ինչպես օձ տեսնելիս: Հեռվում երեվում էին այգիներով գանգուրված օազիսներ՝ գավառի մի քանի շեն մնացած հայցը զյուղ զյուղերը: Խանդամիրյանը, շղիտես ինչու, խուսափում էր մտնել այդ զյուղերը: Դնում էինք դրանց շրջանցելով:

Դեմ առանք բավականին ընդարձակ ավերակների և ես կռահեցի, որ սա հայց հին նակորզան բաղաքն է: Կամեցա երեսիս խաչ հանել՝ ողորմի ասելով այս մի մեռածին, բայց շարի: Ավերակների մոտ, իր ճերմակ ալիքները բարերին զարնելով, անցնում էր անտեր-անտիրական մնացած Արշկան գետակը: Փլատակների միջից շնագայլեր փախտան՝ ատամ-ները ժնգմնգացնելով՝ ինչո՞ւ խախտեցիք մեր մեռած թագավորության անդորրը: Հին եկեղեցին կիսաքանդ կիսախուլ ճիշ ունի: Չի՛, Չի՛... Սուրբ Եղիշե:— Չի՛: Փշաքազվեցի կարծես մորս անթաղ դիակը տեսնելով:— Չի՛...

— Սա մեր հին նակորզան բաղաքն է, — ձիու վրայից ասացի Հոգհաննես Խանդամիրյանին:— Սուրբ Եղիշեի զլուխն այստեղ է թաղված:

— Այսի՞նքն... Անո՞ւնը

— Անունը Ղիշի վանք: «Չի» ասած նորոգման տարին է, որ արել են ուղիղ շրու հարյուր ութսուն տարի առաջ: Ես սպասեցի, որ նա էլի հարց կտա, բայց չտվեց՝ պետք է քո ավերակը: Իսկ փախչող շնագալլերը ոռնում են: — Չի... Չի...

* * *

Դեմ առանք մարդկային մի բավականին խոշոր զանգվածի, որ զլորվում էր ապականող ավազափոշու մեջ: Եինական ամբոխ էր՝ երեխա, կին, ժեր, էշեր, ձիեր: Նույնիսկ եղներն էին բեռնված շուլուփալասով, պղնձե ամաններով:

— Է՞յ, ո՞վ եք, ի՞նչ եք:

— Մարանդի հայերն են, — ասաց մեզ միացած մարանգացին: — Չե՞ք տեսնում մեր վիճակը: Այսպիսի թշվառության մեջ էլ ո՞վ կլինի, բացի հայից: Քոշում ենք, փախչո՞ւմ ենք...

— Ախր ինչո՞ւ Ախր ո՞ւր...

— Զառշին բկներս կտրում է քոռ դանակով: Փախչում ենք դեպի սառած լեռան մյուս երեսը:

Հովհաննես Խանդամիրյանը ժանր իշավ ձիուց: Մենք՝ ևս մեզ միացած մարդը, որ շարացած պատասխանեց, ավելի շար գոռաց.

— Իսկ դու ո՞վ ես, է՞յ... Ո՞վ ես, որ մեզ հարցում ես անում:

Ամբոխն սկսեց աղմկել, ոռնալ, ճշալ: Խանդամիրյանը դոռաց:

— Վե՞րջ տվեք ձեր սիրտ ուտող լացուկոծին: Թող ձեր ավագները մոտ դան:

— Փախչո՞ւմ ենք: Կորչո՞ւմ ենք, — ոռնացին մեծաքանչերու:

— Փախչո՞ւմ ենք: Կորչո՞ւմ ենք, — արձագանքեցին փոքրքրը՝ աղա-աղջիկ, մանրիկ թաթիկներով, ահով լցված աշքերով, անհույս ձայներով:

Հովհաննես Խանդամիրյանի դեմքը սկսեց վարդագունել պլինին խփած արյունից: Նրա քունքերը նկատելի շարժվում էին, բարի վրա մեկնված մողեսի փորի պես: Նա ձիուն խթանեց ուժզին: Չին ժառս եղավ, սակայն զսպելով սանձի պըրկ-

վածքով, կանգնեց հտկի ոտքերի վլու: Խանդամիրյանը մըտ-
րակը ճռճեց բարկությամբ:

— Որ գնում եք, հապա ո՞ւմ եք թողնում ձեր հողը, ձեր
առնեն ու տեղը, ո՞ւմ:

Ամբոխի միջից մեկը բղավեց.

— Ե՞լ, մի քիչ կամաց գոռա, իշխան: Տեղդ տաք է, հա՞:
Մեզ օր չի տալիս ավաղակ ջառչի Փանաճը: Մեզ կեղեքում
է, մեզ լլկում է, մեր պատիվը արորում է շունը: Խսկ մենք
պահապան ու տեր շունենք: Գնում ենք այս անիծված աշ-
խարճից կորնչելու: Չըվո՞ւմ ենք...

Այսպես աղաղակեցին, հառաշեցին, գոշեցին բոլորը:
Խանդամիրյանը սկսեց խոսել հանդարտ, համոզող: — Գնում
եք ո՞ւր: Հենց որ գուրս գաք մեր Հայաստանի սահմաններից
ձեզ կլափեն լեռնարնակ ցեղերը: Ազ գեանք՝ զտանգ է, ձախ
գեանք՝ ճախսորդություն, վերև ու ներքեն՝ նույնը: Ամեն տեղ
բաց երախներ ու սուր ժանիքներ կան: Դուք ինքներդ ձեզ
կորսոյան եք մատնում:

Երկար այսպես խոսեց նա, վերջում, երկի համոզվելով,
որ իր քարոզը ինչ-որ բանի հասցըց, ասաց.

— Օտարության մի՛ ձգտեք, մարդիկ: Էլի ձեր տեղերում
է ձեր փրկությունը՝ զենքով, շարին դիմադրելով:

Գյուղացիները, որ հափշտակված նայում էին նրան,
սկսեցին տատանվել: Կանայք հեկեկացին, երեխաները վայ-
նասուն արին:

— Վա՛յ մեզ: Հիմա մենք ի՞նչ անենք: Դեռը մեզ տանի՛...

Նրանց քահանան, որ երիտասարդ էր, ցածրահասակ, մկան
դնչով ու ականջներով, բարալիկ ձեռքով բռնեց Խանդամիր-
յանի ձիու սանձը:

— Դու մի՛ խառնվիր մեր գործին, տե՛ր իշխան, քո ճա-
նապարճը գնա խաղաղությամբ: Մենք հեռանում ենք ոչ մեր
կամեցողությամբ, այլ՝ ստիպված:

Խանդամիրյանը ցասկոտ նայեց նրան, դարձավ շինա-
կաններին:

— Սրա՞ն եք լսել, հա՞՝ այս մատաղ խժողդ կատվի՞ն,
հա՞:

Ես նկատեցի, որ հուսահատված, մոլորված փախստական-
ների երեսներին, փոշու շերտի տակից, հույսի նման բան

երևաց: Նրանցից ութ-ինք մարդ, որ սաստիկ նման էին միմյանց, առանց վարանելու եկան, առկվեցին ևանդամիրյանի առաջ:

— Ահա մենք, տեր իշխան: Ասելիքդ ի՞նչ է:

Ես նրանց հարցումի մեջ նաև հանդիմանություն նկատեցի՝ մենք թողել ենք մեր տունն ու արտը ու փախշում ենք՝ աշխարհից կորչելու, իսկ դու ինչ կարող ես անել, է՞յ: Հը՛: Նրանց աշքերում սարսափ էր:

— Պպիտի հեռանաք,— երկար լսելուց հետո վճռական ասաց Հովհաննես ևանդամիրյանը:

— Այլապէ՞ս...

— Կոտորիմ բոլորիդ:

Դեղուկները պատռեցին իրենց շապիկների օձիքները:

— Ի՞ն կոտորիր, էլի՞...

ևանդամիրյանը բռնեց նրանցից մեկի լզար, քաշքված մորթով վիզը:

— Լոի՛ր, լոի՛ր...

— Հա՛, ի՞նչ անենք,— նորից ազադակեցին շինականները, այս անգամ սակայն զիջելու պատրաստ:— Ասում ենք անտեր-անտիրական ենք: Երնցակի հզոր իշխանը մեռել է, Հայոց սպարապետին, ասում են, սպանել են, նրա զորքը, ասում են, ցրվել է: Հայի իշխանություն, ասում են, այլև չկա: Մենակ ենք մնացել, ուզում ենք գոնե փրկել մեր թրշ-վառ զավակներին:

— Ո՞վ է նման ստեր հաշում,— ձայնը ցածր անելով խստորեն հարցրեց ևանդամիրյանը:— Երնջակի զորապետը ե՞ս եմ: Ե՞ս եմ: Հայոց զորքի սպարապետը ողջ է առաջվապես: Մեր զորքը համախումը ու կուռ է: Ո՞վ է նման կործանիչ սուս փշել ձեր զլուխներին:

Բոլորը նայեցին քահանային: Մի կին ծղրտաց:

— Մեր օծված տերտերն է ասում, մեր այս քահանան:

Հովհաննես ևանդամիրյանը մտրակն իշեցրեց քահանայի զլխին: Նրա ակնարկով երկու զինվոր ձիերից իշան, քահանային կապկապեցին:

— Սուս է խոսել այս սե սատանան, շինականնե՛ր: Երեւամ է նա շարին գործակից է: Մեր աշխարհն ամուր է, մեր իշխանությունը՝ հզոր: Ոչ մի թշնամի այսքան ժամանակ չի

կարողացել մտնել ու չի մտնի մեր տունը։ Մեր ժողովրդի սուրբ կտրուկ է իր բռոր թշնամիների ու այս քահանայի նման վախկոտ շների շլինքներին։

Գաղթողները թափվեցին իրենց քահանայի վրա։ Նրան այնքան ծեծեցին, որ նա ուշաթափ ընկավ։ Լիկած պարկի պես նրան զցեցին մի ջորու բեռան վրա։ Խանդամիրյանը ժողովրդին հրամայեց հետեւ իրեն, ինքն ընկավ գաղթական ամբոխի առաջն ու գեաց։ Բոլորը հլուհնազանդ հետեւցինք նրան։

Ծուտով մտանք նակորդանի ավերակները։ Մի բլրի վրայից Խանդամիրյանը ձեռքը մեկնեց զեմի ավերակները։

— Այս քաղաքատեղին ձեզ, մարանզցիներ։ Հսո՞ւմ եք, աստծու լրածներ։ Սա ձեզ, ուս ձեզ՝ և հոդ և փլատակներ։ Եկեղեցի էլ ունի՝ թվին ԶԻ՛, ԶԻ՛... Հիմա կդառնա ի՛, ի՛... Կմս, ի՛մը։ Այդպես Ծխեցեք ավերակները։

— Բա որ Փանահ խանը նորից գա։

— Կովեցե՛ք։ Սատկեցրեք։ Կովեցե՛ք... Զի, Զի... .

Երկու օր ու երկու զիշեր մենք մնացինք նակորդանի ավերակներում։ Զորքը օգնեց, որ զժրախտ գաղթականությունը մի կերպ տեղափորվի փլատակների մեջ։ Խանդամիրյանը առաջինը մեզ հանդիպած մուրացկանին գյուղապետ կարգեց, տաս հրացան տվեց նրան, նաև թրեր։

— Պահեցեք երկիրը, հայեր։ Երկիրը ձեռքից մի զցեք... .

Մաքրեցինք եկեղեցին, Մի տիրացու կար զաղը ակաների մեջ։ Խանդամիրյանը նրան քահանա օծեց իր ձեռքով։

Մենք շարունակեցինք մեր ճանապահութեան մեջ հանգանակ լանջից նայեցի ետ՝ ցած։ Նակորդանի ավերակներից ծխեր էին բարձրանում։ Հովհաննես Խանդամիրյանը ինձ ասաց, թե ոչ ոք ընկածին չի օգնի։ Հասկացիր։ Սուա բաներ են՝ աստված, Թրիստոս, խիղճ, գութ։ Մարդը մարդուն ուտուղ զագան է։ Կարողանում ես ինքդ քեզ պաշտպանիր, փրկիր։ Զէ՛, մեռիր։

Հատ հետո ասաց։

— Նակորդանը կենդանացավ, Նակորդանը կապրի աստծով։

Ես մտածեցի՝ իսկ ինչ պակաս աստված է ինքը։

Այս, աստված է, մեռածին կենդանացնում է, Բայց ամ-

սափեցի իմ այս մտքից ու երեսիս խաչ հանեցի: — Մեղադիք, աստված: Ներիր, ների ը...

Դաշտի ամայության վրա ստեպ-ստեպ ճախրում էին վիթխարի արծիվներ: Նրանց ստվերները, գառների հետապնդող գալլերի նման, վազում էին խանձված հողի վրայով...

Երասխի ափին Հովհաննես Խանդամիրյանն ուրախ դիմավորեց իրենից մի քանի տարով մեծ Դիզակի Մելիք-Եսայուն: Ես Խանդամիրյանի մեջ մի քիչ, այս, մի քիչ հեղություն նկատեցի: Նաև իմ զարմանքը շատ եղավ, որ Երնջակի տերը ինչպես անսա, չեր շտապում իր զգացմունքները թաքցնել: Մելիք Եսային հարցրեց զեսպան Հեյդար-Ալու մասին: Խանդամիրյանը միայն կցկուուր բաներ ասաց: Նրա արդ զսպվածությունն ինձ հասկանալի էր:

Գնացինք զեսպի Միջնավան: Կես ճանապարհին մի բարձրահասակ հետիւտն դիք կանգնեց Խանդամիրյանի ու Մելիք-Եսայու առաջ:

— Իսկ ինձ չեք կանչում, հա՞: Ես, ի՞նչ է, աստծու ստեղծածը չե՞մ:

Նրա մորուքը փառահեղ էր, լավ խնամված: Արծվային հպարտ հայացքը մատնող էր: Նա ու Խանդամիրյանը մի պահ կասկածի վարանմունքով նայեցին միմյանց:

— Բայց զու ո՞վ ես, հանդուզն մարդ, — հարցրեց Մելիք-Եսային՝ ճիգ անելով հիշել՝ որտե՞ղ է տեսել այդ ահարկու աշքերը, թանձր մորուքը: Իսկ որ տեսել է, ինչպես նկատեցի, կասկած շուներ:

— Ես բաղցած եմ գալլի պես: Նաև մրսում եմ, — ասաց մարդը: — Հրամայեք ինձ կերակրեն ու զգեստ տան: Հրագեր արեք լինել ձեզ սեղանակից, ապա կիմանաք, թե ով եմ ես: Իսկ դուք դիտեմ, թե ովքեր եք: Օգնեցեք ինձ և ես կրացվեմ: Այս աշխարհում նույնիսկ շունը շի առանց շահի հաշում:

Մելիք-Եսային փայլատակեց: Երեկի հարկավոր էր լսել նաև նրա ձայնը, որ շսիւալվեր:

— Ոհո՛, զու պատվելի ֆուանգմասոն ես: Հիշեցի: Ահա թե ի՞նչ... Հիմա մենք քեզ կուշտ կկերակրենք ու քո հոգնոր կոշումին և դիրքին վայել զգեստ կտանք: Միայն վախենում

եմ, որ այդ զգեստը կարճ լինի քեզ վրա ու քո վրայից էլ մեռելի հոտ դա: Ֆուանգմասոնի այն զգեստը, որ քեզ պիտի տանը, իմ ձեռքով կախաղան հանված քեզ նման մի ուրացողի հագին էր:

Ես այս ամենը լսեցի գարշուրանքով: Պակաս նեղված չէին նաև մյուսները: Այնինչ ֆուանգմասոն հայր քմծիծաղում էր մորուքի մեջ:

— Լավ է,— ասաց նա:— Ուրախ եմ, որ դու, իշխան, շես մոռացել ինձ: Կարծեմ ընդամենը մեկ անգամ ենք իրար երեսի նայել:

— Փարախից ոշխար գողացող գայլին շե՞ս մոռանա, — ասաց մելիքը: — Թո գայլային հայացքը մատնեց քեզ: Եկել ես հոտից գառնե՞ր թոցնելու:

— Ինչո՞ւ սպանեցիր իմ հավատակցին, — կծի հարցրեց ֆուանգմասոնը: — Աստծու հավատի դռները բաց են բոլորի համար:

— Հռոմի պապի շունն էր քո գավանակիցը, — հանդիստ ասաց Մելիք-Եսային: — Մեզ մոտ վաղուց ի վեր կարդ է՝ ում թեկուզ մի կորեկի շափ կասկածում ենք դավանանքը ուրանալում, սպանում ենք:

— Վատ շէ...

Մի շոր վեհություն ու մի երերուն ժածկամտություն տեսան մուրացկան ձեացնող այս կաթոլիկ հայի մեջ: Նրա աշքերում, նույնիսկ սարդոստյան կնճիռների արանքում թունագոր միշտաներ էին ժվարած:

Մի քանի օր նա մեզ հետ էր: Մելիք-Եսային նրա հետ վարդում էր ինչ-որ շափով զիջող: Անվերջ նրան հարցնում էր իր դավանանքի մասին: Միսիոներ հայր ասաց, թե ինքը ցանկանում է Ամարասում դպրոց բաց անել:

— Դավաճան Մելիք-Եսահաղարի որչո՞ւմ, — հարցրեց Մելիք-Եսային: — Օհո՛, նշանակում է քո այդ վիզը, որ բավականին հաստ է, պետք է կտրվի:

Մելիք-Եսայու ձայնն այնպես հզոր էր, որ մոտիկ ժառերին թառած կաշաղակները փախան: Ֆուանգմասոնը փնթփնթաց.

— Ընորհակալ եմ: Հիմա դուք ձեր ճամփան գնացեք, ես՝ իմ:

Նրա կապայի թերը ետ գնաց: Նա շտապեց դաստակը ժամանակ:

— Ասում է հայ եմ: Բայց տեսա, սոֆոլիի նման ձեռքին սատանայի պատկեր է դաշված: Էս մարդը...

Մելիք-Ծսային ֆրանզմասոնին մոտ կանչեց:

— Չեռք տուր հրաժեշտի, մարդ, կարդ է:

Եվ, իրոք, նրա դաստակին սատանա էր դաշված: Ծսայու աշքերը թռան ճակատին:

— Խարո՞ւմ ես... Լրտե՞ս ես...

Ֆրանզմասոնի ուսապարկից, որի մեջ իրը թե հիվանդ քրոջ համար քաղցրավննիք էր տանում, հետով թխած գաթայի միջից շորսծալ թուղթ հանեցին: Զառչի Փանահ ցհղապետի նամակն էր՝ զրած Մելիք-Ծահնազարին: Մասոնը լփորձեց էլ կեղծել: Արդեն բռնվել է: Իսկ նամակը օձի լեզու ուներ: Շնուրուի մի գնդապետ ու նրա մարդիկ Բաբվից գալիս են Ջրաբերդ, պետք է նրանց ոչնչացնել... Մեր մի ցման վայրը Քանդակ գյուղի կիրճում...»:

Մելիք-Ծսային դարձավ լրտեսին:

— Խոստովանի՞ր:

— Ամեն ինչ պարզվեց, — ասաց լրտեսը: — Այո, ինձ Փանահ խանն է ուղարկել: — Դարձավ Ասպապին: — Սուր աշք ունես, խանում: Ինչպես նկատեցիր ձեռքիս դաշած սատանան:

— Աստծո կամեցողությունն էր, — երկյուղած ասաց տիկինը:

Լրտեսը քրքջաց, որ ձիու խրխինչի էր նման:

— Հավատա, խանում, ոչ մեր պաշտած սատանան կարող է թեթևացնել մարդու տառապանքը, ոչ էլ քո Քրիստոսը կփրկի ձեզ: — Դարձավ Մելիք-Ծսայուն: — Այս բան մի՛ հարցրու ինձ, Մելիք Ավան-իշխանի զավակ Մելիք-Ծսայի, և թող քո այդ մտերիմ իշխանը ևս բան չհարցնի: Վեհ եղիր, ինչ ուզում ես արա հետու: Միայն ինձ դավանան մի՛ դարձրու, մի ստիպի, որ ես դավեմ իմ տիրոջը, որ Փանահ խանն է:

Եվ իրոք, նա այսու ոչինչ շասաց: Նրա վզից ծանր քար կապեցին ու զցեցին նրասխ գետը: Ասպապ տիկինը երեսին խաչ քաշեց: Դե, մարդ սպանեցին:

Շտապեցինք գեափի Քանդակ: Մելիք-Ծսային մանը կծմը-

ծող, շնանանների պես խայթող մտքերի մեջ էր: Հայոցում
էր ինքն իրեն՝ ինչո՞ւ մտքից չի հեռանում այդ Փանահը: Ի՞նչ
անենք, որ ավագակապետ է: Եամախու պարսիկ խանն էլ մի
կողմից զգվացրեց: — Չարիք է Փանահը, — պետք է իրացյալ
ուժերով ոչնչացնենք նրան: — Այսպես ասաց Եամախու խա-
նը, երբ մի քանի ամիս առաջ ինքը նրա տանեւ էր: — Խանը
նաև խնդրեց, որ իր վերաբերմունքի մասին տեղյակ պահի
Հայոց աշխարհի մեծերին: Այնը՝ Բեգում խաթունը՝ քնքշան-
քով ասաց:

— Դե, դու, իմ գլխի տե՛ր, վստահիր ինքդ քեզ: Ի՞նչ
սքանչելի առավոտք է, զգո՞ւմ ես:

Եսային ձիու վրայից շոյեց նրա շքեղ զարդարված գլուխը:
Կինը զգացվեց սաստիկ: Այնպե՞ս կուզեր հենց ձիու վրայից
փաթաթվեր նրա զգովը և մի պինդ համբուրեր, բայց քաշվեց
զինվորների ներկայությունից: Բացի, դա, ամուսինը կար-
ծես մի տեսակ աճ ունի ավագակապետից:

Երբ արդեն լեռների ուսերի տակ էին Բեգում եաթունն
ասաց.

— Գուցե թեքվենք դեպի Թիրսի անտառները: Այնտեղ
վայրի խոզերը շատ են:

— Սիրոտ վարազի խորոված է ուզում, — հարցրեց Մե-
լիք-Եսային:

— Նաև նստենք մի փոքր դադարի:

— Եղավ:

Կինը փլվեց երշանկությունից, ամուսինը, որ իրասածի էր,
նաև հաճախ բռի ու կոպիտ, զիշեց: Ուրախ էր, որ Եսային
ամուս կամք ունի ու խիստ է, թեև ընդամենը քանյոթ տարին
լրացավ վերջերս: Իրասածի է, բայց իրեն շմերժեց:

Ջուն կա արահետների վրա: Բայց ձյունն աճա հալ ըն-
կած վաղում է՝ լզիտես որ կորցրածը գտնելու, գուցե թե
ինքն էլ կորչելու:

Նաև տաք է:

Մոտեցել էին Թիրսի ստորոտին, երբ Կառկառ գետի ճեղքից
երեսուն-քառասուն ձիավորով դիզակցիների դեմ ելավ Գյու-
լիստանի Մելիք-Հովսեփը: Մելիք-Եսային ուրախացավ ան-
դուսպա:

— Է՛, ողջո՞ւյն, եղբայրս: Էս ո՞ր խաշից:

— Բարեկամը բարեկամին հեռվից է տեսնում, Մելիք-
Եսայի: Ողջո՞ւն: Ողորմի հորդ:

— Քո հորը նույնպես: Այս ո՞ւր:

— Դե ի՞նչ, — այլ բան ասաց Մելիք Հովսեփը: — Լսել եմ,
եղել ես Շամախու խանի մոտ:

— Զեռքիդ բամի ունես, տեր Հովսեփ: Մտածում էի քեզ
էլ լուր տալ: Հրոսակ Փանաճը կապը լրիվ կտրել է:

— Մեջքին Մելիք-Շաճնազար հենարան ունի:

Զիերը քշեցին կողք-կողքի: Արաճետը կարծես ցնծում էր
Բեգում խաթունի, ինչպես և Ասպար տիկնոջ կանացի բույ-
րերից: Հովհաննես Խանդամիրյանը հարցրեց.

— Կայսրուհու դիսպանը դո՞ւրս է եկել Աստրախանից:
Աստրախանում մեր Շաղկերտը առևտրական տուն ունի:
Իմացիր, եղբորն սպանած Մելիք-Շաճնազարն ուզում էր գոր-
ծակցել դիսպան Հայդար-Ալի խանի հետ...

Բեգում խաթունը ցնցվեց Շաճնազարի անունը լսելուց:
Հիշեց, թե ինչպիսի կատաղի հայացք ունի: Այդպես փայլում
են հովազի ալքերը, երբ որս է տեսնում: Ա՛յս, տե՛ր աստ-
ված, այդ զազանը թշնամությամբ է լցվել իր ամուսին՝
Եսայու դեմ:

Մելիք Հովսեփից խոսեց:

— Շաճնազարը դարձյալ մարդ է ուղարկել Ատրպատա-
կանի կողմը՝ Փանաճ ցեղապետի մոտ: Նոր դավեր է հյուս-
վում մեր շուրջը:

Մելիք Եսային քրքչաց ամուր բռնելով ձիու թամբիրի կեղը:

— Հոր փորողն ինքն է ընկնում մեջը: Ես մազաշափ ան-
գամ աճ չունեմ այդ Շաճնազարից: Միայն սիրու ճաքում է
քրոջս համար, որ նրա օրինավոր կինն է: Հիմա երեք կին
է պահում, մեկը՝ քույրս: Բայց ես նրա անուկները սրիս կո-
թով կցնցիսիմ:

Լուցին երկար:

Հացի նստեցին անտրամադիր: Մելիք Եսային ձեռքը նույ-
նիսկ շտարավ խորովածին, որ բուրում էր գրգռող: Հովհան-
նես Խանդամիրյանն ասաց, թե լավ կլինի, որ գերազաճը
հավատարիմ լրտես մարդ ունենա սարքալուների ցեղապետի
մոտ:

— Ի՞նչ է մտքինդ, — հարցրեց Մելիք-Եսային:

— Պետության գլուխը անգամ բարեկամի մոտ իր ականջն
ու աշքը պիտի ունենա ուր մնաց թշնամու մոտ լունենա:

— Ի ազնիվ միշոց չէ, — ասաց Եսային:

— Հ՞մ, — տարակուսեց Խանդամիրյանը: — Երկրի տերը
պետք է քիչ մտահոգվի ազնվության մասին: Լրտեսությունը
թագավոր է կործանում կամ փրկում: Փանահ խանն ամեն
առավոտ, նամազ անելուց առաջ իր ձեռքով մարդ է մոր-
թում, թողնում թպրտալիս, ինքը կողքին նստում իր նամազն
անում, լափն ուսում:

Նորից գնացինք:

Դեռ չէինք հասել մեր երկրի հյուսիսի սահման կուր գետի
եզրին եղած մեր Քանդակ ավանին, երբ Զրարերդից ձիավոր
սուրճանդակ հասավ մեզ: — Ետապ վերադարձեք: Ռուսաց
դեսպանը լի հասել Շամախի: Նրա ճանապարհը փակել էն
պարսից թագավորի զորքերը: Դեսպանն ստիպված ետ է
դարձել:

Մեր գլխին կարծես սառույց թափվեց՝ սուր-սուր, խոշոր
բեկորներով:

Ետ եկանք Տող՝ զարդված, փշրված: Նորից փակվեցին մեր
հույսի գոները: Հոգհաննես Խանդամիրյանն իր մարդկանց ու
կնոջ հետ նույն օրը մեկնեց Երնջակ:

ԵՐՈՌՈՒՄԱՍ

ԳԱԼԻՆ ԱԼԻԱԶԻՆ

Արյան մեղքի մշուշը, ինչպես վառվող դիակի ծռւխ, չէ՞ հեռանում Ավետարանոցի վրայից: Այդ մահաճուտ ծխից Մելիք-Շահնազարը ոչ թե ցավում կամ զզչում էր, այլ՝ գազազում: Նրա ավագ կինը՝ Սոնան իր սևավոր սենյակից թաքուն անիծում էր նրան: Մյուս կինը՝ Թագուհին միայն հեկեկում էր, մոռութը թանձր բարձի փափկության մեջ խրած: Այնինչ Մալայիկ խաթունը, որ կրտսերն էր կանանցից, ցընծում էր հոգալով, ամեն բանում խրախուսում ամուսնուն:

Ինձ Ավետարանոցի ամրոցում տեսնելով, Սոնա տիկինը հեծեցաց.

— Օ՛, անմեղ հոգի Գոհար մայրապետ, դու դավաճանի որք ես ընկել: Ինչո՞ւ եկար:

Միտքս է՝ Մելիք-Շահնազարին խոնարհեցնել դեպի Հայոց ուխտը: Պետք է, օ՛, մարդիկ, Մանասերի նման բարեկամներ որոնեցեք ձեր թշնամիների մեջ: Ո՞ւ աղոթիվ, և ո՞ւ հույսով դեպի վերին տերը: Ո՞ւ Ոչ էլ այս ամրոցից մի քիչ վերև գտնվող սուրբ Ղիշիի ուխտի միջոցով, որտեղ ես նոր վարժարան եմ հիմնել, որի սառը բարերին հաճախ եմ ծնրադրում: Նրան դիմելով չէ մեր ազգը վտանգի երախից հանելու հեարը: Տիմար են նրանք, ովքեր գետն ընկածի համար ափին ծունկի եկած միայն աղոթում են: Ո՞ւ Պետք է ձեռք մեկնել խեղզողին: Ասում են, եթե մաքուր հոգով զիմես աստծուն, նա օգնական կլինի քեզ: Դատարկ հույս, ցնորք: Ոչ թե անթուրիդ տակ բար պահիր՝ հարվածելու հակառակորդիդ,

ինչպես անում են ոմանք միամիտների դասից, այլ աղ ու
հաց մեկնիր նրան՝ բարեկամության կողմով:

— Իմացիր, Սոնա տիկին, մենք շատ զժբախտությունների
ենք ենթարկվում:

— Բայց ոչ տիրոջ կողմից, — աշով ՀՀնջաց նա:

— Մարդու օգտակար խորհրդատուն ոչ է տեր աստվածը
կամ նրան սպասավոր ոմն, այլ՝ իր ցավը, մարդկային ցա-
վը: Օգտակար օգնականը մարդու ցավն է: Նման մարդը բա-
րի ու հոգատար է լինում:

— Աստված եթե մի ձեռքով վերցնում է, երկու ձեռքով
տալիս է:

Ինչպիսի՝ մոլորություն: Աստծու էությունը ես լավ գի-
տեմ: Նա միայն վերցնում է, այն էլ հինգ հազար ձեռքով:
Սակայն, միենույն է, ես աղոթում եմ նրան և օրհնում: Այս-
օր էլ ես վատ շեմ աղոթել ու օրհնել նրան: Սակայն դու
խուլ ես, ո՞վ ամենազոր կոշված, և ես շեմ կարող վերահասու
լինել քո գործերին:

Երեկոյան, երբ ես իմ համեստ ընթրիքի հոգսումն էի, այս
անգամ Թագուհի տիկնոջ սեղանակցությամբ, ինձ այցի եկավ
ինքը՝ Մելիք-Շահնազարը: Թագուհին խօնարհ կանգ-
նեց, ես՝ ոչ: Մելիքը նատեց...

— Մեղադի՞ր ես ինձ, ո՛, սրբուհի, ո՛, երեկվա իշխանուհի,
որիդ զենքի շառաւը այժմ էլ մեր լեռներում է: Մեղադի՞ր
ես, որ ես սպանեցի եղբօրս...

— Ո՞չ, — ասացի ես:

Նրա աշքերը փայլ տվին, նրա հոգում կարծես լույս ճա-
ռագեց:

— Հասկա ինչպե՞ս...

— Մեղադիր կլինեմ, եթե փորձես հայրենիքդ սպանել...
Հետրավոր էր, որ եղբայրդ քեզ սպաներ: Սակայն դու նենգ
ես... Եզր ինչպես տեսնում եմ՝ ողջ ես: Նենցն ու վատը ողջ է
մնում մենամարտում:

— Ի՞նչ կկամ ենայիր, ո՞վ ահեղ ոգի:

— Որ դո՞ւ սպանվեիր...

— Ինչո՞ւ:

— Որ հազարներն ապրեին, որոնց դու ծախում ես...

— Բայց ես իմ բախտի նժույգը գտա:

- Եթե շարունակես այդպես, դու, Մելիք Շահնազար,
կորցնելու ես քո բախտի նժույգը, ասել է՝ զլուխոց:
— Մի՞թե, մի՞թե...
- Դու ավելի վատթարն ես, քան Քրիստոսին խաչողը:
— Աստծո մեղքն է, — ասաց: — Նրա ստեղծածն եմ:
— Դու կսովես քո արարքից, ինչպես սատանան՝ Քրիստոսի ջրից:
- Ես ինքս բաց արի իմ բախտի դուռը:
— Բայց նա կփակվի հավիտյան: Եթե աստված բացի իր ողորմության դուռը, ապա դու դժոխքի կրակների մեջ կայրվես: Իմացիր, Մելիք-Շահնազար կամ սատանան է քո մեջ,
կամ դու ես սատանայի մեջ:
- Դու կախարդ ես, սրբունի:
- Իմացիր, — ասացի ես, — ճակատագիրը քամու պես
բան է, մի օր անպետք քուրքը կհասցնի երկինք, մյուս օրը
երկնքից մտերիմ աստղ կգլորի ցած: Եթե լավ նայես ինքն
քո ներսը, ապա կտեսնես, որ դու չես այս աշխարհի տեր
սրբանվեր Վաշագան թագավորի զարմ, այլ՝ ե՞ս:
- Ինչի՞ց դատենք:
- Յուրաքանչյուրիս ունեցած խելքից: Այսպես՝ ինչո՞ւ ես
վայրենի ցեղապետ Փանահ խանի քամակը մտնում, մարդ:
— Նա ինձ զինակից է:
- Նա՝ այդ Փանահ թափառական հոգազը ուզում է կործանել մեր Զարարազը, նաև քո տունը: Մեր Զաղեձորում մի
ռամիկ կար: Չմեռը նա մի սառած օձ է գտնում, դնում ծո-
ցում, բերում տուն: Օձին տաքացնում է սեփական մարմնի
վրա՝ մեղք գալով: Եվ երբ օձը տաքանում, ուշքի է գալիս,
խլրտում է նրա ծոցում ու խայթում թույնով: Խամիկը մե-
ռավ: Եվ եթե դու կուզես զրա իսկությունն իմանալ, տեր
մելիք, ապա ես կտանեմ ու ցույց կտամ քեզ նրա զերեզմա-
նը, որի վրա զիր չկա, այլ օձ է քանդված:
- Ուրիշ ի՞նչ ունես ասելու ինձ, Գոհար իշխանունի, օ՛,
միանձնուն սքեմներով սրբունի:
- Քանի որ քո եղբորն սպանելով իշխանության տեր
դարձար, ապա հիշիր՝ ինքո Հուդայի կերպար տվիր քեզ:
Նա քմծիծաղեց:

— Դատարկ բաներ են: Վերջը: Ո՞րն է ասելիքդ: Ո՞րն է ելքը:

— Քեզ կհաստատենք քո իշխանության վրա: Մեռածի ետևից ոչ ոք չպիտի մեռնի...

— Պայմանը:

— Վատարիր քո տանն ապաստան տված Փանահ ցեղապետին: Եղիր Հայոց Ռվատին հավատարիմ: Եվ դու կստանաս այն բոլոր շնորհները, որ ուներ եղբայրդ, գուցե թե առավել...

Մեր այս զրույցին սարսափով ունկն էր գնում թագուհի տիկինը: Ես նրան խզմում էի: Մելիք-Շահնազարը եռմեռում էր ինքն իր մեջ:

— Զեր միտքն է Փանահին կտրել ինձնից: Զե՞ր հաջողին Այս, դժբախտաբար հզոր է այս մարդը: Նա ինքն իրեն չի կեղծում:

* * *

Մելիք Շահնազարը արժաթե պատյանով բավականին ժանր մի սուր մեկնեց Փանահ խանին:

— Այս սուրը հինգ հարյուր տարվա է: Նա մեր իշխանական տան ոգին ունի իր մեջ: Ես սա ընծայում եմ քեզ: Նա քո բազուկներին անընկճում ուժ կտա:

Դանվում էինք Ամարասի վանքի իմ օթեան-առաջնորդարանում: Օրը աշնանային էր: Մելիք Շահնազարի կողով Փանահ խանը ահա նորից է եկել Հայատան, Հետք բերելով հարյուր ձիավոր սարրազ և տանուտեր Միրզեխանին: Նա համբուրեց թրի կոթունը:

— Երդվում եմ միշտ լինել քեզ զինակից ու հավատարիմ, տե՞ր Մելիք-Շահնազար, եղբայր իմ: Պատրաստ եմ կովելու քո թշնամիների զեմ:

Իմ սիրան ինչ-որ տեղ ցավաց: Բայց դա շատ կարճ տեղեց: Դե, ինձ ի՞նչ, թե ում մահակն ում քամակում է: Ես արդին եպիսկոպոս եմ: Այս, ես՝ իսրայելս եպիսկոպոս եմ: Իմ իշխանության տակ է Ամարասի այս վանքը, իմն են նրա բոլոր կալվածները, որ ինձ է շնորհել Մելիք-Շահնազարը:

Գիշերը ժածուկ վերադարձանք Ավետարանոց: Մելիք-

Եահնազարը Փանահ խանի ու նրա զորքի հետ փակվեց իր ամրոցաբերդում։ Բերդը, որի մեջ էր նաև իշխանական գրդակը, կատարյալ անառիկ էր՝ հզոր պարիսպներով, մարտական աշտարակներով, երեք կողմը քարա՞ներձ անդունդներու Այդտեղ էր տեղազորված նաև Վարանդայի զորքը՝ երեք հազար մշտական զինվոր՝ հեծյալ ու հետեւակ։

Շուտով, Փանահ խանի խորհրդով, մելիքն սկսեց կրկնակի ամրացնել բերդը, թեև անհնարին էր դա առնելը, եթե միայն տերը շմատնի։ Մի օր, երբ անցնում էի իմ կացարանի մոտով, իմ երրեմնի հոմանուհի Սրբակի տիկինը քրքչաց ինձ վրա։— Ես թքեմ քո երեսին։ Դու էլ, դու էլ Հուգայի ոգի առար։— Ես փախա... Նույն օրը Մելիք-Շահնազարն ինձ ուղարկեց Խաչեն՝ իր թշնամի Մելիք-Ապրես իշխանի դուռը։ Եղբոր ընտանիքը կոտորելիս, Խրիստուրի էգ հովազը կարողացել է փախցնել Մելիք-Հովազի շորս տարեկան մի տղազավակին։— Լակուրը հիմա Մելիք-Ապրեսի տանն է։ Գնա, որ բերես։

Ես զնացի Խաչեն՝ Ուլու Պապ բերդը, Մելիք-Ապրեսին հորդուցի, որ նա Մելիք-Շահնազարի եղբոր զավակը տա իրեն։ Մելիք-Ապրեսը համբերատար լսեց ինձ ու հանդիմանելով ասաց։

— Եվ դու, աստծուն սպասարկող եպիսկոպոս, եկել ես անմեղ երեխային տանես, որ ուրացողը, եղբայրասպանը նրան էլ մորթի, հա։

— Ո՞չ, ինչո՞ւ, տեր մելիք, — մեղա գալով ասացի ես։— Մելիք Շահնազարը նման բան չի անի, չէ։ Չէ որ նա իր տանը իր զավակի պես պահում, խնամում է իր եղբոր մի աղջկան։ Քեզ մոտ եղած երեխան Շահնազարի հարազանն է, իր եղբոր զավակը։ Շահնազարն ուզում է ինքը պահի, խնամի իր եղբոր որդուն։ Բարի է նրա նպատակը։

Մելիք-Ապրեսը ինձ վոնդեց իր տնից։ Ես ետ եկա ու նրա մերժումը հայտնեցի իմ իշխանին։ Նա բան շասաց։

Մելիք-Շահնազարն ու Փանահ խանը ժաժուկ պատրաստցին պատերազմի։ Հայոց գերազահ իշխանը, իր զորքերի հիմնական մասով գտնվում էր Գանձակում։ Առիթից օգտվելով, բորենու զգուշությամբ, բոլորովին աննկատելի, խանն ու Մելիք-Շահնազարն իրենց միացյալ զորքերով մի զիշեր

անսպասելի նույնիսկ ինձ համար, պաշարեցին Ուլու-Պառ
բերդը: Ես անզամ տեղյակ չէի, որ նրանք Ատրպատականից
բերել են տվիլ ոչ միայն Փանահի Սարրջալու ցեղը, այլ նաև
Զուանշիր, Քարիրլու, Օթուզիրի անուններով ռազմաշունչ ցի-
զերը: Դրանց խնամքով թարցրել էին թանձր անտառների
մեջ: Իմ մեջ խղճի խայթի պես բան առաջացավ՝ Մելիք-Ապ-
րեսին տեղյակ պահել օտար զորքերի իր տան շեմին լինելու
բանը: Սակայն այս թույլ միտքն իմ մեջ ցնդեց:— Մի՛ խաղա-
կրակի հետ,— ներշնչեցի ինքս ինձ:— Քեզ ի՞նչ: Ինձ չկծռզ
օձը թող հարյուր տարի ապրի:

Մելիք Շահնազարը բերդի տակից գոշեց:

— Է՛յ, Մելիք-Ապրես, եղբորս որդուն տուր ինձ:

Մելիք Ապրեսը վերևից քար ցցեց:

— Տամ, որ նրան էլ սպանե՞ս:

Է՛ս, ինչ կարող ես անել, ամեն զործում աստծու մատը
խառն է: Կարծելով թե Մելիք-Շահնազարը մեն-մենակ, միայն
փոքրաթիվ զորախմբով է եկել, այն էլ ոչ թե պատերազմելու,
այլ եղբոր որդուն տանելու, Մելիք-Ապրեսը անխոհեմ եղավ:
Իր փոքրաթիվ զորախմբով նա զուրս եկավ բերդից ու հա-
մարձակ գրոհեց մելիքի վրա: Մելիք-Շահնազարը ցնծաց.

— Տիսմա՞ր, քո ոտքով ես զալիս դեպի քո մահը:

Ես հանգ արի գոռալու՝ ե՛տ դառ, Մելիք-Ապրես, թակար-
դի մեջ ես ընկնում: Ե՛տ դառ, փակվիր քո ամբոցում, քայց
նորից նույն սանձող ուժը փակեց բերանս՝ քեզ ի՞նչ: Քեզ
ի՞նչ...

Անտառում թարցրած զորքերը շորս կողմից արշավեցին
Խաշենի փոքրաթիվ զինվորների վրա... Թե ինչ անունի
սպանդ եղավ, շեմ կարող նույնիսկ մտովի պատկերացնել: Միայն այսքանն ասեմ, որ ոչ թե մեկի վրա քսան, այլ քա-
ռասուն մարդ գրոհեց: Ինչ սքանչելի է... Մելիք-Ապրեսի
մարդիկ, շընկրկեցին տեսնելով որոգայթը, այլ խիզախ գրո-
հեցին թշնամիների վրա... Բայց ընկան մեկիկ-մեկիկ...

Ընկա՞ն...

Փանահ խանն իր ձեռքով կտրեց Մելիք-Ապրեսի գուխը,
հազցրեց նիզակի ծայրին: Եվ ինչո՞ւ է աստված ինձ այսպի-
սի ստոր հոգի տվել: Ահա թշնամին կտրեց արյունակցիս

զգուինը, իսկ ևս միայն թուքս եմ կուլ տալիս՝ լեշից կշտացած շան պես:

Մելիք-Շահնազարն ու Փանահ խանը մտան Ուլու-Պապ բերդը: Կողոպուտը սոսկալի էր, նույնիսկ եկեղեցու պատկեր-ները պոկեցին, խժուեցին: Մելիքն ու խանը Միրզեխան տառնուտերին հուակեցին ներքին ևաշեն գավառի տիրակալ: Ես ևս շնորհավորեցի նրան:

— Գոհ եմ, — ասացի, — նաև անշափ կուրախանաւ տիկինդ՝ Երնջիկը: Դե, հիմա նա իշխանուհի է: Ո՞ւր է:

— Թողի Ավետարանոցում, — ասաց շլացած Միրզեխանը: — Չասացի էլ, թե ուր եմ զնում: Երեխ հիմա տրտմում է առանց ինձ:

— Դե, շուտով կխնդա, կուրախանաւ:

Մելիք Շահնազարը ներքին ևաշենի բոլոր ծիսերը նվիրեց ինձ: Էլի լինի մի տաս հազար ծուխ կա: Վայելիր: Գոհ ևս:

Հաջորդ օրը մենք վերադարձանք Ավետարանոց: Խանն ու մելիքը շտապում էին: Ուր որ է Ուլու Պապի անկման լուրը կհասնի Գանձակ, Մելիք-Աստվածապով գերադանչ իշխանին...

Զյուն եկավ:

* * *

Ավետարանոցում օրն ինձ համար բացվում էր ցնցում-ներով: Խելքան ջանում էի մտքից պոկել իմ մեղսագործ լինելու զգացումը, չէի կարողանում: Ես տառապում եմ... Մի լուսադեմի բոլորովին անսպասելի իմ կացարանը մտավ Մելիք-Շահնազարի ծեր ու ծյուր մայրը:

— Բարի լույս շեմ ասի քեզ, սև՝ մարդ: Մեր լույսը խավարա՞ծ է:

Ես զարհուրում էի՝ ինչպես է այս կինն ապրում իր տան դժոխքում, ինչպես է հանդուրժում իր որդուն սպանողին: Նա նստեց, սկսեց մորմորվել, ծերունական լորացած գլուխը ծեծելով: Ատելությամբ նայեց պատից մոայլ նայող սրբերի պատկերներին ու թքեց նրանց վրա:

— Հոգիս առե՞ք... Առեք, պրծե՞ք: Է՞: Մեղք եմ: Փրկեցեք ինձ տառապանքից՝ ինձ մահ տալով: Խո՞ւ ե՞ք:

Սրբերն ու շոր պատերը միայն սառը կլանում էին նրանքառաշանքը, թողնում անարձագանք: Ախր աճեղ աղետ թափվեց նրա զլխին, մի որդին սպանեց մյուսին, ապա զավաճանեց ազգին, հայրենիքին: Նա այսպես մորմորվում էր, երբ նրա ինձ մոտ լինելուն անտեղյակ, իմ խուցը մտավ Մելիք-Շահնազարը: Շան պես զամփոնց մոր վրա:

— Ի՞նչ ես ուզում, շար ոզի: Հրե՛շ...

— Դիա՞կու, — աղաղակեց մայրը: — Քի՞չ արյուն արիր, հիմա էլ աղջիկ թռոնիկիս կին ես տալիս Փանաչ Ալուն, հա՞:

— Ա քեզ ի՞նչ, — զոռաց Մելիք-Շահնազարը: — Աղջիկը եղրորս որբն է, ասել է՝ իմն է, կուզեմ շան կտամ, կուզեմ զայլի...

— Բայց նա իմ թռոնիկն է, — մղկաց մայրը: — Եթե նրան շան տայիր կամ զայլի, բախտավոր կլինեի:

Սարսափած ներս մտավ հազիկ տասնչորս տարեկան աղիկը:

— Տատի, փրկիր ինձ: Չեմ ուզում խանին: Չեմ ուզո՞ւմ...

Հորեղբայրը տեղից ժառս եղավ, բռնեց նրան, որ շարզիւ ևս հազիկ կարողացա դժբախտին խլել զազազած Մելիքից: Տատը ծղրտաց.

— Զհամարձակվե՞ս...

— Պիտի տա՞մ, — հեաց Շահնազարը: — Պիտի տա՞մ:

— Ինձ մորթիր, հորեղբայր, — աղաղակեց աղջիկը: — Ինձ սպանիր, իմ դիակը տուր շներին:

Նա նորից փաթաթվեց տատին: Տատը նրա ձեռքը բռնեց, դուրս եկավ: Մի՞թե Շահնազարը սսկվեց: Պառավն ո՞ւր տարավ աղջկան:

Տատը թռուան հետ վազեց միջանցքներով, կպավ Փանաչ խանի կացարանի փակ դռանը:

— Դուռը բա՞ց, բա՞ց... Դուռը բա՞ց:

Դռները ետ զնացին: Իշխանուհին մտավ ներս: Փանաչ խանը մեկնված էր հատակին, զորդերի վրա, զլուխը կարմիր մետաքսե բարձի:

— Վե՛ր կաց, ավագա՞կ, — զուեց Մելիք-Շահնազարի մայրը: — Քո դիմաց իշխանուհի է: Վե՛ր կաց շնթռկած տեղիցդ:

Խանը ծուլորեն նստեց, ձեռքերը տարածելով հորանցից:

— Ի՞նչ է կամենում երեկի խաթունը:

- Հեռացի՞ր մեր տնից, շո՛ւմ:
- Եթէ դա քո որդի Մելիք-Շահնազարի կամքն է, — ասաց
խանը: — Հենց հիմա կհեռանամ:
- Ես Շահնազար անոնով որդի շունեմ: Չունեմ...
- Խանը լոյիրշ քրքչաց: Նա ձեռքը մեկնեց տատի փեշերին
կպած աղջնակին:
- Ա՛յս, ոու գեղեցիկ էլ ես, կատվի ձագ: Մոտեցի՞ր...
- Սղցիկը ծղրտաց: Տատը ֆշացրեց խելադար:
- Ձեռքդ քեզ քաշիր, շո՛ւմ: Գո՛զ, սրիկա: Շո՛ւմ...
- Նա կապայի փեշի տակից կեռ գանակ հանեց ու թռավ
գեղի լոյիրշ կանգնած խանը: Մակայն կծկվեց զլխին հասած
բռունցքի հարվածից: Խփողը որդին էր՝ Մելիք-Շահնազարը:
- Դանակդ քո փո՛րը խրիր, ջաղու:
- Իշխանուհին հազիկ կարողացավ ոտքի ելնել: Կում արեց,
թքեց որդու երեսին: Ծղրտաց:
- Հեռացրու այս շանը մեր տնից, Շահնազա՞ր: Մպանիք
այս ավաղակին, մելի՞ք: Ինձ՝ քո մորը: Խելքի եկ: Խելքի եկ...
- Նա թռավ որդու վրա ու շոված մատներով խրվեց նրա կո-
կորդը:
- Կիսեղդեմ: Կիսեղդեմ... Դավաճան, ուրացո՞ղ, եղբայ-
րոսսպա՞ն...
- Որդին ոլորեց մոր ձեռքերը, կապկակեց նրա մետաքսե
շալի տուտով, ու շպրտեց սենյակից դուրս, այնտեղ կանգնած
ժառանիերին:
- Տարե՞ք... Տարե՞ք...
- Բոնեց եղբոր աղջկա ժամերից, փալասի պես նետեց խանի
զիրկը:
- Հեազանդվի՞ր, քած:
- Աղցիկը կատվի թոիշքով ցատկեց քաց պատուհանի գո-
ղին ու իրեն զցեց անդունդ... Մելիք Շահնազարը հանդարտ
դուրս եկավ: Նրան հետևեց խանը: Մելիքը նրան ասաց.
- Ներող եղիր, որ քեզ անհանգստացրին իմ ցեղակից-
ները, խան:
- Զարմանում եմ, — ասաց խանն ուսերը ձգելով: — Ալ-
աեղ զու տե՞ր ես, թե՞ ծառա:
- Մելիքի մայրը միջանցքում գոռում-նշում էր.
- Մատկեցրե՞ք Փանահ ավաղակին: Նա քանդում է հա-

յոց տունը։ Սպանեցեք Մելիք-Շահնազարին, նա դավաճա՞ն է...

Որդին ոչ պակաս կատաղի գոռաց։

— Ես քեզ մահու կտամ, ջագու...

— Ես արդեն մեռա՞ծ եմ։ Ես կիսեղեմ քեզ և ձեռքերս շնորհուա:

— Զզա՞մ, Հրե՞շ, — մոր զլիսին հարվածներ տեղաց որդին։ — Ընկիր ոտքերս, զզա՞մ։

— Երբե՞ք...

Նրա շրթունքները արյունոտ բացվում էին որդուն ուղղած նղովի անեծքներով։ Մելիք-Շահնազարը գոռաց իր ծառաների վրա։ *

— Վերջացրե՞ք սրան։ Ես խելազարվո՞ւմ եմ...

Սառաները թոկով կապեցին պառավին ու կախեցին ամրոցի աշտարակից։ Ցածում անգղների սվաճվաքը հոշոտում էր նրա թոռնիկ աղջնակի զիակը։ Շուտով անգղները ժանրծանը բարձրացան դեպի աշտարակը և սկսեցին ծվատել նաև իշխանունուն։ Նրանից մնաց բոլորովին ճերմակ կմախոք՝ ճերմակ ոսկորների չաթոն, որ զեղին լույս էր տալիս զիշերները...

* * *

— Այս վայրերը քեզ ժանո՞թ են, պարոն խոչա Արրահամ։

Սա ինձ հարցրեց Ազուլիսի զորախմբի պետ թումա հարյուրապետը։

— Հրամանք, ժանոթ են, — պատասխանեցի ես։

Ես ու նա գալիս ենք Զրաբերդից։ Գերազահ իշխան Մելիք-Աստվածապովը դժվարով տարավ Խաչենի անկման լուրը։ Մահացու սեպը, որի զլուխը վարանդան էր, ավելի խոր խրվեց երկրի մարմնի մեջ՝ Խաչենագետի հովիտն ի վեր։ Ես գերազահին հարցրի՝ ո՞րն է հիմա մեր անելիքը։

— Մեկնեցեք Երնջակ, — պատվիրեց նա։ — Հրամանս է Հովհաննես Խանդամիրյանին՝ ամուր նստել տեղը։ Թող լզադեպի մեջ։ Իր վրա ևս վտանգ կա։

Եվ ահա ես ու թումա հարյուրապետը, իր երեսուն ձիավորով, Զրաբերդից հասել ենք Գողթան՝ Որդուատ քաղաքի

մոտերքը, գնում ենք Երասխի կիրճն ի վեր: Շաղկերտ ամրոցավանի առաջ խոնված ամրոխի պատը մի կերպ արմունկներովս ճեղքելով, մոտեցանք Հովհաննես Խանդամիրյանին: Նա կանգնած էր զենքերի մեջ հուրհրատող կնոջ մոտ: Թումանարյուրապետը գոշեց:

— Լո՛ւր մեզ, զորապետ, լո՛ւր մեզ:

Նախկին քահանա Թուման բարձրահասակ էր, շիկավուն, նաև միամիտ ու պարզ վարմունքով: Խանդամիրյանը շլրջվեց մեր ձայնի վրա:

— Եփածը սառչո՞ւմ է, թումանարյուրապետ: Ախ, դու է՛տ, խոչա Արքահամ: Ի՞նչ կա:

— Գուցե թե այլևս եփելու բան չմնա,— ասացի ես:— Ջրաբերդից ենք գալիս...

— Գլո՞ւխ եք բերել:

— Առայժմ գլուխ ենք թաղում:

— Այդպե՞ս,— զոմոաց զորապետը:— Մելիք-Շահնազարը թշնամի ցեղապետ խոթեց մեր աշխարհի կողը, հա՞:

— Է՛հ, — ասացի, — նման նզովյալից ի՞նչ էիր սպասում: Նա շրջվեց, աջը սրի պես բարձրացրեց: Շուրջն աղմկող զորքն ու ժողովուրդը պապանձվեց: Ես թափով քաշեցի նրա հուժկու ուսը:

— Բայց դու լո՛ւր մեզ, զորապետ: Խաչենի Մելիք-Ապրեսն սպանվեց: Խաչենն ընկա՞վ...

Կարծես թե զսեց իմ հավարը: Կարծես թե հենց նոր տեսավ մեզ:

— Ատրպատականից պարսիկ զորք է գալիս մեզ վրա: Հա՞...

Ինձ թվում էր, թե մեր բերած բոթը քարե կարկուտի պես պիտի տեղար Շաղկերտի վրա, ցնցեր դարրին զորապետին: Բայց նման բան չեղավ:

Սա Մյունյաց աշխարհի Երնջակ գավառն է, մի քիչ ձախում, արմունկ-արմենկի՝ Գողթանը: Երկուսն էլ Կապուտջիդ մեծ լեռան Մասիսահայաց ճյուղերի ամփոփն են՝ խիտ ու կուտակ: Մեծ ավանի մոտով հզոր քրքջալով դեպի Երասխ է գահավիժում Երնջակ զետը: Նրա ափերը խեղդված էին անհամար քարատներով, բերդանման մանր աշտարակնե-

բով։ Ավանի մի մասը պղնձի բովեր ու արհեստատներ էին՝ մուրճերի աղմուկով, փութսերի հրաշունչ երախներով։ Խանդամիրյանը բռնեց ձեռքս, ինձ խոթեց կողքի շիկացած բովը։ Այդտեղ թնդանոթ էին ձուլում։

— Պատրաստվում ենք, — ասաց Հպարտ։ — Իրանի շահը հաջողել է գաղտագողի նախիջնան քաղաքը զորք խոթել, խան դնել՝ էլի Հեյդար Ալի անունով։ Վտանգ է։

Թումա հարյուրապետը գնաց իր տունը՝ Ազուլիս։ Ես հանգրվանեցի Շահկերտի պղնձի բովերում։ Այրվում էի տեսդից։ Զգիտեմ ինչ ուղի եմ բռնել։ Առևտուրի գործերս թողած, տեղից-տեղ եմ վազվզում։ Այս մտքերն էին տանջում ինձ։ Թվում էր, թե հոգիս փրկելու համար ելք չեմ գտնելու։

Գիշերվա կեսին ինձ արթնացրին։ Ահա, հիմա էլի նա՝ ուսմիկ զորապետն է կանչում։ Խցից դուրս եկա շկամ։ Գյուղամիջին, ձիու վրա ինձ էր սպասում նա։

— Գիտեմ, որ հմուտ ես ձի վարելում, խոչա Արրահամ նստիր ահա այս նժույզը։ Մի քիչ վայրենի է, բայց կզապես։

Ինձ մոտեցրին մի կրակոտ ձի։ Ես թափով թուա նրա մեջքին՝ ու հեղ մտածելով՝ փրկիր ինձ, տե՛ր աստված։

Գնացինք։ Զորապետը հետք վերցրել էր ընդամենը տասը ձիավոր։ Ո՞ւր ենք գնում։ Ինչո՞ւ։ Զհարցրի։ Մրտիցս արյուն է կաթում։ Դե, բախտն ինձ ուր ուզում է թող տանի։ Տանի՛… Մենք ջարդում էինք մեր ձիերի կողերը։

Գիշերվա կեսին մտանք Ցղնա մեծ զյուղը։ Հանդարտ քնած են մարդիկ։ Երանի՛ ձեզ։ Մեղ զիմավորեցին հարյուրապետ Տեր-Թուման, էլի մի երեք հոգի։

— Հը՞՝ — ձիու վրայից հարցրեց Հովհաննես Խանդամիրյանը։

— Ցղնայում հարյուր մարդ հավաքվեցինք։ Սպասում են հրամանիդ։

— Համո՞ղ են։

— Բոլորը։ Միայն զենք է պետք։ Ընշաղուրկ ուամիկներ են։ Տաս հոգի վանքի զյուղերից են փախել եկել։ Հավաքեցինք։

Մի երկու ժամ հետո մտանք Ազուլիս։ Գեղեցիկ քաղաքը խեղվել էր երեսը ձորերի մեջ։ Տներն այստեղ բարձր էին, երբեմն լորս հարկ։ Մի տան պատուհանները լուսավոր էին

ու ես նկատեցի ներսի պատի որմնանկարները։ Երեխ Նաղաշ
Հովնաթանի գործն էր։ Ազուլիսում ևս զորագունդ էր կազմ-
ված։ Քաղաքի պարոնտեր Ստեփանոս իշխանը վազեց Խան-
դամիրյանին ընդառաջ։

— Պատրա՞ստ եք։

— Քեզ ենք սպասում։

Հովհաննես Խանդամիրյանը ձիու վրա ողջունեց աշխար-
հազորային գնդին, որ երեխ մի երեք հարյուր հոգի էին։
Զեռքերը թափահարում էր կրքով։

— Դուք բոլորդ ոռճիկ կատանաք, իմացեք, ձեզ կհազ-
նեմ, կպահեմ կուշտ։ Եղբայրներ, ով հող չունի, կստանաւ
իմացեք, թշնամուց ավարը՝ գերի, զենք, ձի, կանանց, հաց,
բոլորը ձերն են։ Զերն են։

Իշանը Թովմա առաքյալի վանքի խոր դամբարան-նկուղը,
որտեղ սրբի գերեզմանն էր։ Ճրագ արին։ Սառը խցում խեամ-
քով յուղած, դարսված էին երեխ հազարից ավելի հրացան,
արկղներով փամփուշտ։ Զորապետը հաստ թաթերով շոշա-
փեց զենքը։ Նրա երեսին կարմիր երանություն հայտնվեց։
Կարծես նոր նշանված է ու շոշափում է սիրելիի դիմքը։

— Գոհ եմ ձեզնից, ազուլիսցիներ։ Այ, սա գործ է։ — Իշ-
խան Ստեփանոսին ասաց։ — Կարծում եմ Ազուլիսում առատ
կտավ կճարպի։

— Այո, կճարպի։

— Կաշի էր։

— Կաշի էր։

— Տասնհինգ օր քեզ ժամանակ, իշխան, — ասաց Խան-
դամիրյանը։ — Աշխարհազորիդ հազցրու, կեցցրու զորա-
կան զգնատի ոճով։ Զինիր ու սպասիր կոշիս։ Քաղաքացինե-
րին ասա շգախենաք, տռուզ բողկեր, կտավի, կաշվի ու
ամին ինչի համար կվարձատրեմ։

Վերադարձանը ողևոր։

* * *

Շաղկերտում ինձ առացին, թե Գոհար միանձնուհուն
տեսնող է եղել Մեսրոպավան զյուղում, որ Կապուտջիղ լեռան
ցածրի մի ճեղքում է։ Ես զարմացա՞ ինչո՞ւ է այդ խորհրդա-

վոր զորավար-միանձնուհին եկել այս կողմերը, ի՞նչ նպատակ է հետապնդում: Ես մարդ ուզարկեցի Մեսրոպավան, սակայն նրան այնտեղ շգտան: Ասացին, թե տեսել են, որ գիշերով մեն-մենակ բարձրացել է գեղի Կապուտջուղի վերև-ները... Ես սոսկացի մի՛թե սքանչելի հոգին գնում է մարելու սուրբ Մեսրոպի բարայրներում...

Առավոտյան Հովհաննես զորապետն ինձ եմ մասնակից արեց իր նախաճաշին: Դինի խմեց՝ բուռ-բուռ եփած լորի խժուելով: Զորապետ է, բայց դեռ վրայից ուամիկի, դարբնի հոտ է գալիս: Դրեթե գոռաց.

— Հա՛... Պարսից շահը ձգտում է կտրտել Հայաստանը: Ես գրա դի՛նը... Նախիջևան քաղաքում նոր խան է շնթոկացրել, որ հայի նախիջևան նահանգը խլի Հայաստանից: Հիմա էլ Փանահ շանն է խօթում Ղարաբաղ, որ հայի այդ հողն էլ խլի: Ես նրա՛...

Կրծոտեց երկար, թագ, գինով ցողված բեղերը:

— Եռն Մելիք-Շահնազարը հետն է նույն լափը զխկտում: Նաև տանուտեր Միրզեխանը: Իրա՞վ եմ:

— Միանդամայն, — ասացի շտապելով:

Նա կազի գավաթն ուժգին գարկեց բարե սանդին:

— Կմորթե՛մ...

Ես սարսուացի: Երկար լոեց, լորու կարմրավուն կլեպները մատով հանեց բերանից:

— Ժրել է այս նոր Հեյդար Ալի խանը: Խի՛, խի՛... Խնշո՞ւ չէ: Պարսկաստանում գգվոտոց է, առիթը ճանկել է ուզում: Նոր շահին ոսկեհուռ թուր է նվիրել, նաև գանձ: Գա՞նձ... Շահի ոռոր պաշելով, կաշառելով, մեր զեմ կոտոշներ է հանում: Այնտեղ էլ Փանահ ու Մելիք-Շահնազարն են նրան հենարան, քըս են տալիս մեզ վրա:

Երնջակ բերդը հենց Շաղկերտ ավանի գլխին է, ահռելի բարձր ժայռի վրա: Անհիշելի հին է, միշտ հայոց նախարարության ամրոց ու միջուկ: Այսօր էլ Պատերազմների ժամանակ ժողովուրդը բարձրանում էր այդ բերդը, փակվում այնանդ, իսկ զորքն իշնում էր գեղի Երասխամերձ տափերը՝ եկող թշնամիներին ընդառաջ: Այդպիսի բանի՛ հազար տարի... Բերդից մի փոքր վերև, գետի ակունքների մոտ Փառակայի պղնձե ելքերն են: Այդտեղ է հայը ձուլել առաջին

պղինձը, որով ապշեցին Եղիպտի փարավոններն ու Բաբելոնի քրմերը: Այժմ էլ ահա գործում են թանկ մետաղի այդ ելքերը:

Հեռնամեղքերում, ինչպես և Երասխի քարավազներում դարանած զետքերը զրեթե ամեն օր պարսիկ լրտեսներ էին որսում, բերում Շաղկերա: Դրանք կամ շահի, կամ Հեյդար Ալու, կամ Փանահ ցեղապետի մարդիկ էին՝ վարձու սրիկաներ, ուղարկված մեր կողմերը: Հովհաննես Խանդամիրյանն անձամբ հարցուփորձում էր նրանց, ապա կախում բերդի պարսպից:

Այնուամենայնիվ տագնապը աաստկանում էր: Ամեն ինչից երեսում էր, որ ժանր պատերազմներ են լինելու: Խանդամիրյանը մտածեց ջրաբերդից օգնություն խնդրել, սակայն չարեց: Չէ որ այնտեղ էլ հայ մելիքները դժվարին կոխվներ են մզում Մելիք-Շահնազարի ու Փանահ խանի միացյալ զորքի դեմ:

Երնջակը մնացել էր մեն-մենակ:

* * *

Խախիջեան քաղաքից եկող ճանապարհի մի կապում ևս պահակ էր դրված: Խանդամիրյանը զրեթե ամեն օր այց էր անում այդ պահակին: Ահա նորից նա այնտեղ է, ևս էլ հետք:

Լուսաբացի նման բան էր: Մեր զետքը ազդ արեց, թե մոտենում է Հեյդար Ալի խանի զորքը: Զորահարթում ցորենն արդին հնձել էին, խրձերը դիզել: Խանդամիրյանը սուրհանդակ ուղարկեց բերդ՝ թշնամին գալիս է: Նա հրամայեց հավաքել ցորենի դեղերն ու բերել, կուտակել նեղ ու երկարուկ ձորանցքի խցանում:

Թշնամին, որ տասնապատիկ ավելի ուժեր ուներ, դասավորվեց կիսալուսաձեւ: Թմրուկներ զարկեցին ու սեպ դառնալով մղվեցին գեպի ձորի կապը: Մերոնք խրձերով ցորենը կրակ ավին: Մի ակնթարթում կրակը ծառս ելավ երկինք ու տարածվեց գեպի արտերի խողանը: Թշնամու առաջապահ գունդը ետ-ետ մղվեց: Հովհաննես Խանդամիրյանը մի գունդ հանեց դիրքերից ու կողքի ձորի միջով աննկատ հասցրեց թշնամու թիկունքը...

Ճակատամարտը եռաց...

Կեսօրին մեզ հասավ մեր բուն զորքը: Խանդամիրամբ
անցավ նրա գլուխն ու մղվեց առաջ: Հելդար Ալի խանն իր
բանակի միջուկն ուղղեց դեպի նա: Ժայռերի ուսիչ գործա-
ցին մեր երկու թնդանոթները: Ընուժքերը ծանր վճռացին արե-
վից դեղնած օդում և ընկան պարսիկների խմբավորման մեջ-
տեղը:

Կոիվը բորբոքվեց:

Սևեր հագած կանայք ու աղջիկներ երևացին կովի դաշ-
տում՝ վիրավորներին օգնելու: Ես միացա նրանց: Ասպապ
տիկինը Շաղկերտում հիվանդանոց էր ստեղծել: Կանայք,
նաև շատ պատանիներ, վիրավորներին հանում էին ճակա-
տամարտի կրակներից, տանում գյուղ, տեղավորում եկեղե-
ցիներում ու տեղերում: Վենետիկում ուսանած մի շաղկերտ-
ցի ծերունի վիրաբույժ անդադար շարժման մեջ էր: Եվրոպա-
յից էր վերջերս եկել հայրենի տանն սպառելու իր կյանքի
մնացորդը: Նա հմտորեն զարմանում էր վիրավորներին: Եր-
բեմն վիրավոր էր մեռնում: Քահանաները բուրվառով խունկ
էին ծխում մեռնողի գլխին, սուրբ մասունքի նշխար գնում
բերանում: Հաճախ նշխարն ընկնում էր մեռնողի բերանից:

* * *

Դիշերը զադար եղավ: Տեր-Թումա հարյուրապետը հենց
զենքերը վրան մտավ եկեղեցի:

— Ինչ էլ լինի, մենք պետք է տիրոջը մատուցենք մեր
հոգու ընծան՝ սուրբ պատարագով:

Նա ավետարանը ձեռքն առավ, ատրճանակը զրեց նրա
բաց էջին ու զվարթ կարդաց: — Դարձու սուրբ քո ի տեղի յուր,
զի ամենեքեան, որ սուրբ առնուցուն, սրով անկանիցին:

Եկեղեցում հավաքածները, նաև նրա զինվորները ծունկի
եկան և նրանց աղոթքի միապաղաղ խշողը սփռվեց խնկի
բույրի հետ: Ապա սկսեցին խմբովի երգել: Տաճարի քարե
կամարները զնդացին՝ մեղմիկ արձագանքով: Ոմանք բուր-
վառներ խնկարկեցին: Թուման Քրիստոսի միս ու արյուն
նշխար-մեռնոնով հազորդեց իր զինվորներին: Հենց եկեղեցուց
նա իր զորախումբը տարավ ճակատամարտի:

Կեսօրին նա ձիռ վրա կանգնեց մոտս: Նրա սրի ծայրից

արյուն էր կաթեթում: Քահանայական փիլոնը տեղ-տեղ արյունու էր: Թամբախուրզինից պղնձե սրվակ հանեց, մեկնեց ինձ:

— Գինի է, խոչա Արքահամ, մի կում արա:
Ես սրվակը ետ ավի:

— Մեղա՛ քեզ: Դու քահանա ես, սուր ունես ձեռքիդ, արյուն ես անում, հերիք չէ, հիմա էլ զինո՞վ ես արքենում:

— Անե՞ծք ես տալիս,— քրքջաց Թուման:— Ուզում ես,
որ շունչս անկողնո՞ւմ փշեմ: Է, հե:

Նա ձիուց ցած թուավ, կոացավ արյան մեջ ընկած մի
պարսիկի գիակի:

— Է՛, հե՛... կերել, տողել է շունը: Ձոթ փութ կլինի, էն
խաշը:

Վիրավորներ հավաքող կանալը մի հիսուն զերի պարսիկ
զինվոր առաջներն արած քշեցին զեպի զյուղ: Նրանց զենքերը
պլոկել էին, զդակները պատռատել, կոշիկները հանել: Մի զերի
խելագար զոռաց:

— Օ՛, շեյթա՛ն, շեյթա՛ն: Զեղ թնդանոթ որտեղի՞ց, հա-
յեր: Երկերից կրակ թափվեց մեր զյուին: Զէ՛, լէ՛, ինքս տե-
սա իմ աշըռվ: Երնկից թեավոր օձեր էին թափվում մեզ
վրա: Շեյթա՛ն, շեյթա՛ն... Այս հայերի երկրում զներ են
ապրում, ալլահը վկա:

Այս անգամ էլ լիովին ջախշախովեց Շեյդար Ալի խանի
զորքը: Ինքը՝ խանը հազիկ կարողացավ ճողոպրել:

Շաղկերտը ցնծում էր:

Գերիների խմբերը ահուղողով էին նայում հաղթողներին:
Հայ զորապետները խոնվել էին ամրոցի հրապարակում:
Մարտի մեջ ապանված պարսիկների զյուիները կտրեցին
լցրին մեծ-մեծ քվալներ, բռնեցին ջորիների ու հանձնելով
պարսիկ զերիներից ութ հոգու, ուղարկեցին Սպահան, շահին
նվիր:

* * *

Մելիք Շահնազարը հարբած օրորվեց զեպի Փանահ խանը:

— Զեղ համար մի էնպիսի որք շինեմ, խան իմ, որ նա-
դիրն էլ զերեզմանից թե կանգնի, գա, կրունկիդ էլ չի համենի:
Վեր կաց, զնում ենք:

— Ո՞ւր:

Մելիք-Շահնազարը խփեց նրա ուսին:

— Գնա՛նք: Գնա՛նք: Զզվում եմ, երբ ինձ հարցակոյն են անում:

Նա գլուխը դեմ արեց աղբյուրի գուղին, փնչացրեց զրի սառնությունից: Այդպես երկար մնչաց-փնչաց զրի տակ, քազով հարվածեց ծառայի փորին:

— Չորացրո՞ւ գլուխս: Գինին թռա՛վ, թռա՛վ...

Քիչ հետո նա ու Փանահ խանը, հիսուն ձիավորի ուղեկցությամբ, դուրս եկան բերդից, անտառն անցնելով՝ իջան Արկաթալի և Շոշ գյուղերի արանքը: Մելիքը խրինջաց ձիու նման:

— Այստեղ Մխիթար սպարապետը ջարդեց թուրքական բանակը: Հե՛, հե՛: Հայրս էլ հետն է եղել: Ոսկորները տեսնո՞ւմ ես: Քսանհինդ հազարանոց թուրքի բանակը այստեղ կործանվեց: Հե՛, հե՛...

Էլի գեացինք: Հանկարծ մելիքը շրջվեց դեպի ինձ:

— Է՛յ, իսրայել եպիսկոպոս: Հի՛, հի՛, երեսուն տարեկան էլ չկաս, բայց արդեն քեզ «Հայր» են ասում: Հա՛յր... Զէ, չէ մի էլ ի՛նչ: Երբ կաթողիկոս դառնաս, կթքես էջմիածնի վրա ու քու գահը կունենաս: Պապիդ եղբայրը շի՞ սատկել դեռ:

— Ոչ,— դառնանալով որ այդպես կոպտում է ինձ, հնագանդ պատասխանեցի ես:— Ապրում է:

— Երեխ հարյուր կա, չէ՞:

— Պետք է որ լինի:

— Ուրեմն, կաթողիկոս դառնալուդ օրը շեմին է: Հա, ինչ էի ասում: Մխիթար սպարապետը միտս եկավ: Նրա էն իբը... էն Գոհար խաթունը, որ միանձնուհի է, ո՞ւր է:

Ես տեղյակ չէի, թե որտեղ է Գոհար միանձնուհին, ուստի պատասխանեցի թե շզիտեմ: Նա ինձ հանձնարարեց լուր իմանալ նրանից:

Սկսեցինք բարձրանալ ժայռերով ծրարված հսկա լեռը, որ սիս էր՝ ահեղ թեք լանջերով ու բարձր, շատ բարձր կատարով:

— Սա Շոշ լեռն է,— խանին ասաց Մելիք-Շահնազարը:

Մեր ձիերը հազիվ էին ժագլցում անհամար կեռմաններով կածանը, որ նեղ էր՝ արծաթե զոտու պես:

Այդպես մի հինգ ժամ, զուցե թե ավելի, մենք ելանք Զիերը քափ ու քրտինքի մեջ հնում էին, ուսւզներից արյունոտ փալինք էր թափվում խանձված հողին, քարերին: Եթե զլուսդ բարձրացնես լեռան գագաթը տեսնելու, զլիսարկդ կզլորվի:

— Հին անունը ի՞նչ է, — հարցրեց Մելիք-Շահնազարը՝ կառշելով ձիու բաշին, որ շահի ոռքն ի վար:

Ես ասացի, թե այս Շոշ լեռան անունը հնում Շիկաքար էր: Աւթերորդ դարում Սյունիքի ու Արցախի հզոր տեր Սահլ Սմբատյան իշխանը բերդ է շինել: Հիմա բերդը ավերակ է:

Շիկաքար-Շոշում մի հիսուն տուն հայեր կային, որ ո՞վ զիտի, ո՞ր Նոյի ժամանակներից ապրում են ժայռերին կառշած: Հայերը, որ Շահնազարի հպատակներն էին, իրենց տիրոջն ու խանին զիմապորեցին զլիսարկները հանելով, բայց ոչ ընկում: Նրանց այդ պահվածքը ես վտանգավոր գտա: Մելիքը առավ նրանց բարենք, ձեռքը պարզեց լեռնագագաթի երկարությամբ:

— Այստեղ բերդ սղիտի լինի, բերդ-քաղաք:

Գրպանից մի բուռ ոսկի հանեց խփեց զետնին:

— Բերդ-քաղաք: Շուշի... Շուշի: Այս լեռը քեզ եմ նվիրում, իմ խան: Փանահ խան: Քեզ: Թե ջերմախտից տառապես ու քեզ զցես այս բարձրը, կրուժիկս տեղնուանեղը:

Նրա ձայնը գղրգում էր հին բերդի ընդարձակ ավերակների մեջ:

— Քեզ...

Տանուածեր Միրզեխանը խոնարհ կրկնեց նրա զոռոցը:

— Քեզ...

1753 թվականի դարնան վերջն էր:

Երբ հեռանում էինք Շուշուց, Խաչենի տեր Միրզեխանի երնջիկ տիկինը ինձ մեկուսի ասաց:

— Հույս, տեր Խորայել, որ չես մռացել Խուրիսուփի հռվազի ժանիքները:

Ես ցնցվեցի: Քանի՞ մեկ այս կինը հիշի հեռավոր օրերի այն սարսափը ու դրանով ապտակի հոգուս: Ես ցանկացա հեռանալ նրանից, բայց նա նորից կծռանց.

— Եռւշին Սարբջալու Փանահին նվիրելով, դուք գերեզման
եք փորում Ղարաբաղի համար:

Ես քրքջացի՝ շեշտ նայելով նրան:

— Ո՞, կի՞ն, օ՞, շեկ հովազ, դու քո իգության հմայքները
նոխացրու, որ քո ամուսին տանուտեր Միրզեխանը շղզի
քեզանից:

Եռւտով Փանահ խանը մեկնեց Աստրատական ու այնտե-
ղից բերեց իր Սարբջալու, Սոֆուլու, և էլի մի քանի թափառա-
կան ցեղեր: Ես նրանից իմացա, որ պարսից նոր շահը նրան
ուսկի է տվել՝ Եռւշին ամբապնդելու համար: Մելիք-Շահեա-
զարը առատ իսոստումներով թավրիզից հինգ հարյուր հայ
գերդաստան տեղափոխեց, բերեց Եռւշի: Այդ հայերը, որ
զզվել էին Պարսկաստանի խառնակ վիճակից, արհեստի
մարդիկ էին:

Ամբողջ ամռանը Փանահ խանն ու Մելիք Շահեազարը
անքուն, անդադար բանելով, վերականգնեցին Եռւշի բերդի
կիսափուլ պարիսպները, պնդեցին նրա Դանձակյան դարպա-
սը, արահետը սեղմեցին այնպես, որ եզան սայլ անդամ
շանցնի:

Աշնանը Փանահ խանը գնաց Շամախու ու Եիրվանի կող-
մերը, այնտեղից ևս մուսուման ցեղեր բերեց, տեղավորեց
Եռւշի բերդ-քաղաքում: Դրանք Փյուսյան, Կարաշարլի, Զինլի,
Դամրլի-Հասանլի, Ղըզլ-Հադիլի, Սաֆի-Քյուրզիլի, Վյոյ-Ահ-
մեղլի, Սահաթլի, Քենաքերլի կողմու վաշկատուն ցեղեր էին:
Խանը նրանց անսահման իրավունքներով օժտեց, ընդար-
ձակ հողեր պարզելով: Մելիք-Շահեազարը հոշակեց, թե այն
հայ արհեստավորն ու վաճառականը, որ կդա նորաստեղծ
Եռւշի քաղաքում ապրելու, քսանհինգ տարի հարկատուրք չե-
տա, նրանից մաքս շեն վերցնի: Երկու հզոր հայ վաճառա-
կան ու արհեստավոր ընտանիքներ ևս եկան պարսից կող-
մերից, ու բույն դրին Եռւշիում: Թաղաքը խտացավ, ծավալ-
վեց, դարձավ մարդաշատ: Հայերը բնակվեցին լեռնագագաթի
վերին թերությունում, մահմեդականները՝ ցածի:

Այսպես սկսվեց 1754 թվականի գարունը:

Մելիք-Շահեազարը Հայոց աշխարհի սրտում օտար խա-
նական որչ շինեց, զրանով նա Ղարաբաղի գերեզմանի առա-
ջին քարը դրեց: Մեր հայոց արեելքում, ուր մի մուսումանա-

կան խրճիթ անգամ շետք, բնավորվեցին քոշվոր խմբեր: Մելիք-Շահնազարը Շուշվա հին եկեղեցիներից մեկը նվիրեց Փանահ խանին: Սա տաճարը վերափոխելով դարձրեց մըզ-էկիթ: Իմ ներկայությամբ Մելիք-Շահնազարը Խաչենի տեր, իր դրաժու տանուտեր Միրզեխանին ասաց:

— Երբ մենք կործանեցինք Ուլու Պապ քերդը և զիյատեցինք Մելիք-Ապրես իշխանին, ինչ-որ մեկը հասցրեց փախցնել եղբօրս տղային: Նրա գոյությունն ինձ հանգիստ շի տալիս: Գտիր նրան ու բեր ինձ՝ մեռած թե՝ ողջ:

Ես սարսափով նայեցի տանուտեր Միրզեխանին՝ մանկասպա՞ն կդառնա: Նա միայն ժամում էր: Այդպես կատուն է առամեները բաց անում՝ մկան վրա հարձակվելիս: Ես ցանկացա միջամտել, խնդրելով, որ մանուկ փախստականին շհետապնդեն, սակայն նորից նախատեցի ինձ՝ քեզ ի՞նչ, քեզ ի՞նչ: Տիրողը ե՞րբ է մարդ եղել, որ հիմա լինի, քեզ ի՞նչ... Քեզ շատ համարեցին նույնիսկ մի աղախին էր: Շատ... եանի հարեմը բերել են՝ երեսուն կին: Իսկ իմ միակ էզին խեղոնել են:

Մի երկու շաբաթ հետո, երբ ես նորից Մելիք-Շահնազարի մոտ էի, նրան սեղանակից, անսասելի երևաց տանուտեր Միրզեխանը: Կապերտի մեջ փաթաթված ինչ-որ գրեց մելիքառջնե, կապերտի ծալերը ետ տվեց: Դրա միջից դուրս եկավ Մելիք-Շահնազարի եղբօր՝ Մելիք-Հովսեփի փոքրիկը՝ որին դայակը կարողացել էր կոտորածից փրկել: Տղան սաստիկ գունատ էր, վախեցած, նրա նիշար ծնութը դողում էր, ոտքերը ծալվում էին: Բայց նա կարողացավ խոսել:

— Դու իմ հորեղբայրն ես, չէ՞ն, մելիք ապա:

— Ես եմ:

Երեխան փաթաթվեց Մելիք-Շահնազարին:

— Էս քեռին փիսն է, փի՞սն է: Ուղում էր ինձ ուտի: Չես թողնի, չէ՞ն, հորեղբայր:

— Հըմ...

Մելիք Շահնազարը նրա ձեռքին մի պատառ գաթա գրեց, վրան մեղք քսելով:

— Երեխ սոված ես, քանա: Կե՞ր, կե՞ր:

Հացը դեռ երեխայի բկումն էր, երբ մելիքը դաշույնով կը տ-

բեց նրա կոկորդը, արյուն կաթկթացող գլուխը բարձրացրեց կարված կոկորդից ընկավ հացի պատառը: Ես ակամա մըդկըտացի:

— Այս ի՞նչ արիր, տեր մելիք: Այս ի՞նչ արիր, դու ինձ վկա դարձրիր քո մարզասպան արարքին:

Մելիքը քրքջաց երկար:

— Բա թողնեի էս լակոտը ապրե՞ր, մեծանա՞ր: Թողնեի, որ ինքն իմ վիզը կարե՞ր՝ հոր ժառանգությանը տեր դառնաւ համար: Այս՝ Դու տիմար ես, տեր իսրայել:

Ես նրան խեղակցի թույլ տալ երեխայի մարմինն ու զլուխը թաղելու իմ վանքում: Նա համաձայնեց: Իմ ձեռքով հողի փոքրիկ փոսին հանձնեցի երեխայի մարմինն ու զլուխը, դրանք իրար կացնելով: Ես մի ամբողջ զիշեր աղոթեցի նրա համար: Ինձ թվում էր, թե ես երկար շեմ դիմանա այս ցեցումներին: Սակայն նորից բռնւցքով հարվածեցի սեփական բերանիս: — Քեզ ի՞նչ: Քեզ ի՞նչ...

Շուշին շարունակում էր մարդաշատ գառնալ: Փանա՞ խանն ու Մելիք-Շահնազարը նորաբնակներին այնպիսի արտօնություններ սահմանեցին, որ բազմաթիվ վաճառական, նաև արհեստի տեր ընտանիքներ եկան եւապանի Հայիձորից, Երնջակի Շաղկերտից, Գողթանի Ագույսից, Մեղրուց:

Հայոց Գերագույն գահաժողովը մի քանի անգամ զորահավաք արեց՝ Շուշի վրա հարձակվելու նպատակով, առկայն, ի ուրախություն մեզ, դրանք ձախողվեցին: Մի գեղքում, երբ Ջրարերդի զորքն ուղում էր շարժվել դեպի Շուշի, Գուգարքի կողմերից օսմանլու բանակներ արշավեցին դեպի Գանձակ: Հայկական զորքը մեծ ճիշգով միայն կարողացավ երամ գնտի ավագանում ետ վանել թուրքական վտանգը: Մի այլ անգամ, երբ նորից էր գերագահը պատրաստվում Շուշուց քշելու Փանա՞ խանին, Կովկասի լեռնարնակ ցեղերի հորդաներ հոսեցին դեպի Վրաստան ու Հայկական Հյուսիսը... ի՞նչ դաժան ճակատագիր: Եվ այս Փանա՞ն ի՞նչ բախտավոր աստղի տակ է ծնվել, որ կարծես աշխարհը միայն հոգատար է նրա նկատմամբ:

Օ՛, Սոգոմ-Գոմոր, Հեռացի՛ր ինձնից: Օ՛, խաչ, ինձ մի՛
լրիր և մի՛ նկատել տուր, որ իմ ձեռքերը ևս թաթախում եմ
ազգիս արյունով: Եվ դու, Խաշենի Մելիք-Ապրես իշխան, ին-
չո՞ւ խարվեցիր ստոր Մելիք-Շահնազարի ձայնին ու ընկար
Փանահ Ալի բորենու երախը: Խսկ ես, որ կարող էի քեզ
զգուշացնել, գոռալ, փրկել, նման բան չարի... Մեղա՛-մհ-
զա՛...

Սակայն՝ ոչ, ո՞չ: Մի մեղադիր լինիր ինձ, աստված իմ,
տեր իմ: Ինչո՞ւ հապա դու ինձ ստոր ստեղծեցիր:

Ես ամեն լուսաբացի ժունք եկած եռոյն ազոթքն եմ անում:
— Մեղա՛, նահատակվող Ղարաբաղ, մեղա՛...

Մելիք-Շահնազարն ու Փանահ խանը Խաշենի մելիք են
դրել տանուտեր Միրզեխանին: Ես զարմացած եմ՝ հապա ին-
չո՞ւ շի ցնծում Երևիկ տիկինը՝ իմ հովազը... Նա՛... Օ՛, բախտ
անիծված: Շամախու ետին մի ջրաղացպանի դուստրը հիմա
իշխանուհի՛ է: Խաշենն ընկել է, Վարանդան Փանահի զինա-
կիցն է, Դիզակի ուժերը հեռու են, նրա զլիին ևս սև ամպեր
են կուտակվում: Զագեծորի ու Կապանի տները հազիվ են
կարողանում իրենց ապահովել պարսից կողմերից անվերջ
գեղի իրենց հովիտները խուժող թուրք ոհմակներից, Երնչակն
ու Գողթանը տեսական կոփվների մեջ են պարսից խաների հետ:

Ոչ մեղա գալով, այլ ի ցույց հավատացյալ ժողովրդին, ես
աղաղակում էի.— Տե՛ր, գոնք հիմա խաղաղություն պարզեիր
դժբախտ աշխարհիս:

Ի՞նչ եղավ, այս ի՞նչ եղավ: Գերազահ իշխանից սպառնալի
վերջնազիր ստացա:— Դու, դավաճան Խորայել եպիսկոպոս,
Հեռացիր մեր աշխարհից... Ուրեմն սքողի վարագույրս պա-
տրոված է: Ուրեմն՝ կատարվել է սատանայի կամեցողու-
թյունը: Ահա ես ինձ ճանաշեցի, ինձ գտա՛: Դե, ուրեմն,
մեսա բարյազ երբեմնի իմ շիտակ ճանապարհ: Ես՝ Խորայել
եպիսկոպոս այնա մեռած եմ նույնիսկ ինքս ինձ համար:
Չկա՛մ... Այլևս գարձի ճանապարհ շունեմ: Չկա՛: Էշ նստելը
մի կորուստ ու պախարակություն է, էշից իջնելը՝ կրկնակի:
Եվ հենց այն բանը, որ ես գարձի ճանապարհ չեմ ուզում,
ինձ ավելի էր զորեղ գարձնում:

Ահեղ տնկվեցի Մելիք-Շահնազարի ու Փանահ խանի առջև:

— Հետո՞ւ:

Բարկությունս խեղզեց ինձ:

— Վարձս եմ ուզում...

Հոգուս հեռավոր մի անկյունում հազիվ զգացվող խլքրտուք եղավ: Կուգենայի, որ հենց հիմա ինձ կտոր-կտոր անեինո Ռվ իմանա, գուցե թե հոգիս մաքրվի կատարածս մեղքերի մրից:

Մելիք-Շահնազարը ծանրագին նվերներով ինձ ուղարկեց էշմիածին: Երեք ամիս հետո ես սուրբ իշման վայրից Ամարավերադարձա կաթողիկոս օժված:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՒԹ

Վարդավառի տոններն են:

Ուխտեկ ժողովրդի անթիվ-անհամար խմբեր խոնդել էին ոչ միայն իմ գահաբառ Ամարասի վանքի պարիսպներից ներս, բակում և գավթում, այլև սփովել էին տաճարների շրջակայքում, այդիներում, մանրկոհակ ձորակներում: Ոչ միայն վանական եղբայրները, ես նույնիսկ քիթ սրբելու ժամանակ շունեի: Պետք է ընդունել ուխտավորներին, նրանց մասունք տալ, վերցնել նրանց բերած ընծաները, օրհնել մատաղի ոշխարները՝ օրը պակասը-պակասը, էլի մի յոթ հարյուր զուխ:

Ամառը կիսվել է: Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնն է: Մարդիկ իրենց տները զարդարել են եղանուկանալ ճյուղերով, միմյանց վրա առատ ու անխնա ջուր են ցանում: Դե, ախր տոն է: Ի սկզբանե սա հեթանոս ծաղկավառ էր: Ինքը՝ մեր սուրբ էլուսավորիլը այդ տոնը շրջեց դեպի հաշվածի պաշտամունքի սեղանը:

Զնդում է ամառային տապ երկինքը: Զնդում է Ամարասի տաճարը: Իմ կաթողիկոսական խոյը-թագը վեհ շողում էր գետնաքարշ ամրուսի վրա: Իմ ուշադրությունը զրավեցին երկու տարօրինակ ուխտավոր: Սրանք քաշված էին, խիստ հեղ ու խոնարհ: Կարծես ոչ թե զառ էին բերել, այլ հենց իրենք էին եկել մատաղվելու սուրբ Պրիգորիսի շիրիմին: Նրանք վանքին առատ նվերներ տվին: Այդքան բարիք հազիվ թե երկու զյուղ տային: Ես կասկածեցի նրանց՝ մի՛թե սովո-

բական շինական են կամ արհեստի մարդիկ: Իմ մի սարկա-
վագի միջոցով իմացա, որ նրանք ասում են, թե իրենք Գի-
լանից եկած բրուտներ են: Ես հրամայեցի նրանց տեղավորել
առանձին խցում: Կասկածո օր առ օր սաստկանում էր: Սար-
կավագին հանձն արի մանրամասներ իմանալ նրանց մասին:

— Եիստ սակավախոս են,— ասաց սարկավագը: — Միայն
մի բան են հարցնում՝ արդյոք Մելիք-Շահնազար իշխանը
դալո՞ւ է ուխտի, եթե այս՝ ե՞րբ: Այս բանն իմ տագնապը
սրեց: Ինչու են այս գիլանցիները հետաքրքրվում մեր իշ-
խանով: Ի՞նչ նպատակ ունեն:

Տաճարում, պատարագի ժամանակ, որտեղ ծունկի էին
եկած նաև գիլանցիները, ևս անսպասելի նկատեցի, որ նրան-
ցից տարեցը ինձ խստ ծանոթ է: Հեռվից հեռու զննեցի նրան
ու սարսուացի: Ա՛խ, դո՞ւ, ծպտված քավթառ, ևս քեզ ճանա-
շեցի: Դու Զագեձորի Մելիք-Օհանն ես: Կերպարանափոխվել
ես, մորուքդ ու բեղերդ խուզել, իբր թե քյոսա ես: Ա՛խ,
դո՞ւ... Երեկոյան, երբ իմ սարկավագը նրանց համար ուտե-
լիք էր տանում իմ սեղանից, իմ կամքով, ևս նրան հանձնա-
բարեցի գիլանցիներին ասել, թե վաղը առավոտյան Մելիք-
Շահնազարը կլինի այստեղ: Լուր է տվել: Սարկավագը ետ
եկավ:

— Պատվերդ կատարեցի, վեհափառ:

— Հետո՞ւ:

— Տարեցը իմ ասածը լսելով ցնծաց: Նրա աշքերը փայ-
լատակեցին անողոք:

Ո՛, աստված մեր, ոտքիդ փոշին գառնամ, որ դու շտխմա-
րացրիր ինձ, ևս շվագեցի գիլանցիների խուցը, շասացի թե
քեզ ճանաշեցի, Մելիք-Օհանն: Ո՛, աղվե՛ս:

Առավոտյան սարկավագն ինձ ասաց, թե գիլանցին ան-
հանգստանում է: Ինձ հարցրեց՝ ինչո՞ւ շի եկել Մելիք-Շահ-
նազարը: Մի՞թե շի գալու: Այս, այս, այդ գու ես, Մելիք-
Օհանն: Միտքդ կռահեցի: Քեզ ճանաշեցի: Ինչպես մոռանամ
Պավոս մարգարեի խրատը: — Եղիցին մարդիկ, որ ամենայն
ժամ ուսանին և երբեք ի գիտության ճշմարտության ոչ հա-
սանին:

Երեկոյան թաթախման սուրբ մասունքին թույն խառնեցի

և ուղարկեցի իրենց Գիլանից ուխախ եկած համարողներին Տիշերը նույն սարկավագը տագնապով արթեցրեց ինձ:

— Գիլանցիները մեռան: Մեռա՞ն...

— Չա՞յնդ...

Ես նրա հետ շտապեցի գիլանցի կոչվածների խուցը: Այս, երկուան էլ՝ ծեր ու երիտասարդը դեղակուր մեռած էին, առածված հատակի սալ քարերին: Դիակները զննեցին: Ազադի զրապանից հանեցի նրա կնիքը՝ «Մելիք Օհան»: Թեթևացած շունչ քաշեցի: Նրան շրջեցի զրուխը դեպի աղոթարան և, ովք հրաշը, նա շարժվեց, զարարվեց: Նրա աշքերը բացվեցին:

— Եռեւ Շահնազարը փրկվե՞ց...

Փորձեց կանգնել: Ես սուրս զրի նրա թաթերին: Ճիզով ևս գուշեց:

— Դո՞ւ ինձ դեղակուր արիր, Խորայել:

— Ե՞ս:

— Պղծեցիր թաթախման սուրը մեռոնը:

— Ես փրկեցի իմ ամբողը՝ Մելիք-Շահնազարին:

Ես հառաչելով նորից տապալվեց ու շոնչը փչեց:

Ես բնավ մեղքի խայթ չզգացի: Դե, աշխարհ է, հակատագիր է, ո՞ւր կարող ես փախչել վերումատ սահմանածից: Այս անգամ էլ ինձ բնավ մեղսագործ չզգացի: Այս սատկածը պարարտացել էր իր իշխանական փառքով, ինձ շէ՞ր ընդունում: Ես իմ գործն եմ անում, իսկ խիզճ, զութ-մութ ասվածները մաշված, ծակծկված զուլպաներ են, հանիր սուրիցդ, գեն զցիր:

* * *

Աստծու շնորհած խաղաղ երեկո էր: Վարանդայի գավառը մանրակոնակ լեռներով ու անտառով գանգուրված բլուրներով ծփում էր՝ իր արքայաշուր զգեստը երբեմն-երբեմն փօխելով՝ կանաչի, ապա ծիածանի գույնի, ապա բաց կարմըրի ու թրթռուն կապույտի: Արևի հրեղեն ջահը հանզլում էր կառկառ զետի ալիքների զրկում: Իրիկնային մշուշի մեջ կուլ էր գնում Եղիշեի զանքը: Ամեն ինչ կախարդական ու զեղեցիկ էր ու անս շրջակայրի հրեղեն շունչը թափանցում էր մինչև իմ մարմնի ուղին ու ծուծը: Ես հիացմունքով էի:

հայում ներքեմ գաշտի ապրափոխիկ գույներին ու լոիկ ունկընդում ոչ հետվում խշացող անտառի ձայներին: Բայց և մի տեսակ տիսուր էի առեղվում այս աշխարհի գույներին, հետզհետե մշուշին կուլ զնացող գաշտի հեռուներին: Իմ հոգին պարուրված է անշոշափելի թախիծով և մի ժանր ու ճընշող բան էր սեղմում իմ կոկորդը:

Իմ ականջները լցվեցին մոտիկ եկեղեցու գանդերի ձայները: Ես աշքերս փակեցի՝ խորը վայելելու երկինք տանող ու ցավերից մարդու հոգին մաքրող այդ մելոտ ու նաև ինչոր տեղ մաղձու դողանջները: Ինձ թվաց, թե ես ինքս ինձ գոտահենց այս վայրկյանին՝ ժայռերի ստվերների մեջ, ուր լսում եմ ժայռերի աղոթքը: Ես նույնիսկ խղճացի Մելիք-Օհանին: Թեև արդեն հասակն առած էր նա, բայց պարթե էր, խոշորեկակող աշքեր ուներ ու մի միամիտ հավատ՝ դեպի մարդ արարածը: Նա հանդուգն էր ու շատ ուժեղ, երկաթե լոմ ծալող բազուկներ ուներ: Ես մտածեցի՝ որբա՛ն լավ կլիներ, որ Մելիք-Օհանն իր այդ հզոր ձեռքերով ինձ խեղդեր: Ես բնավ ձեն-ձուն չէի հանի: Զիուս վրա մտովի ծունկի եկա Տիրամոր պատկերի առաջ ու աղօթեցի դժբախտ Մելիք-Օհանի համար:

Մութը վրա էր կոխել: Ես հասա Ավետարանոց: Ինձ խույն տարան Մելիք-Շահնազար իշխանի մոտ: Ես թամբախուրզինս վերցրի ու երբ մտել էի իշխանական դիվանը, ցեցվեցի՝ այս ո՞ւմ ոտքն եմ եկել: Խուրզինից հանեցի կտրոված գլուխը ու զցեցի իշխանի ոտքերի տակ:

— Չագեձորի տեր Մելիք-Օհանի զլուխն է: Ընդունիր:

Մելիք-Շահնազարը ցնծությունից իրեն կորցրեց ու շռքելոք մոտեցավ կտրված գլխին: Ես զլուխը զետնից թացրի:

— Չագեձորի բոլոր եկեղեցիները և վանքերը հանձնիր Ամարասին՝ ինձ, իշխան: Այս զլուխը, կարծում եմ, էժաններից չէ:

Ես հրովարտակ ստացա՝ Չագեձոր գավառի բոլոր ծխերն ու եկեղեցիները իմն են: Հրովարտակը դրի խուրզինիս այն աշքում, որով բերել էի Մելիք Օհանի զլուխը և հանգիստ վերադարձա Ամարաս:

Զորիս, որ սպիտակ էր, մանր քրքուց: Վանքի պարսպի

ներսի պատանկյունի հակա թղենուց կապած երկու եիեր նկատեցի, նրանց մոտ Միրզեխան տանուտերն ու նրջառուփի հովազին՝ Երնջիկ տիկնոջը։ Ես նախանձի ատելությամբ շանթեցի Միրզեխանին՝ մարգարիտը խողի առաջ են լցրել և եցի Միրզեխանի ձայնը։

— Ո՞, տիկինս, քո գեղեցկությունն ավելի շքեղ է, քան գեղեցկության համբավը առ հասարակ։ Քո տռափանքն ավելի մեծ է, քան ինքը՝ վայելքը։

Ես փակեցի ականջներս։ Այս, ոչ մի կերպ չեմ պոկի հոգուցս նրխափորի կիրքը։ Երնջիկը մի անգամ հող վերցրեց նրխափորի սրբազն քարայրից, աղի նման թափեց զլիսիս։ — Մտքումս, — ասաց, — սրբի անուն եմ տալիս, բայց որի՞նը, չգիտեմ։ — Երբ նրխափորի ժանիքներից Գոհար միանձնուհին ազատեց ինձ ու Երնջիկ տիկնոջը՝ նրխափորի շեկ հովազին, շոյեց նրա ճերմակ պարանոցը։ — Շտապիր գտնելու քո կյանքի սեփական արահետը։ Մի կարծիք, թե գետն ամեն օր գաթա է բերելու, և թե քո բախտը միշտ քեզ կճանաշի։

Ես սարսափում եմ Գոհար միանձնուհուց, երբեմնի այդ հզոր զորավարից։ Մի վեց ամիս առաջ նա ինձ դեմ արեց պատին։ — Եթե ընկում տեսնեմ, ասաց, եթե նեղված տեսնեմ Ղարաբաղը, Ղարաբաղի հայի հոգին, ապա կցերազանմ քո շլինքը կտրելն ու աստծու երեսին թքելը։ — Ես նրան հարցրի՝ որն է հայի այսօրվա անելիքը, ինդիրը։ — Զարմանում եմ, ասաց, կաթողիկոս ես ու ետին մոնթի շափ խելք շունես։ Այսօրվա մեր միակ ցավը, միակ խնդիրը Շուշի քաղաքը փրկելն է Փանահ ազակից, Ղարաբաղից օտար ոտքը կտրելը։

Եադկերտից եկած, Շուշի քաղաքում բնակվածներից էր իմ ծանոթ մի զարգար՝ ոսկերիչ իր գերդաստանով։ Նա նույնիսկ շցանկացավ իմ շնորհավորանքն ատանալ՝ իր զալու առթիվ։ Մելիք-Շահնազարին ասաց կորովով։ — Ես չեմ եկել Շուշի՝ քո գործակիցը լինելու, տե՛ր մելիք։ Ես չեմ եկել Սարըշալու ցեղապետի ստրուկը լինելու։ — Բայց, ասաց մելիքը։ — չէ որ նորաբնակներդ, այդ թվում նաև դու, ազատ եք ամեն հարկ ու տուրքից։ — Զարգարը հոհուաց նրա երեսին։ — Ազատությունը, ասաց, հոգու է, ազգային է։ Դու օտար

մեկին բերիր դրիր մեր գլխին՝ Սարըզալու մի ավագակապեաթի: Դու խարեռությամբ ինձ և շատերիս բերիր Շուշի: Սակայն իմացիր, տե՛ր իշխան, Ղարաբաղը երբեք քո մականիտակ չի ընկճվի ու չի դառնա օտարին կեր ու կուր: Ժամանելու մեկ կամ տաս տարով չեն շափվում, այլ՝ հարյուրամյակներով: Մի էարծիր, թե դու և քո դրածոն Ղարաբաղը կմարսեր:

* * *

Կիրճի վրա վիթխարի արծիվ էր ճախրում, այն էլ այնքան ցածր, որ նրա ժավալուն ստվերն ընկնում էր կողքի ընթացող Մելիք Հովսեփի ու նրա զորապետ Շուռ վարդապետ Ավագի ձիերի վրա, երբեմն խրանացնում նրանց: Արահետը նեղ էր, հազիվ երկու ձիեր էին կարողանում գնալ իրար կից: Նրանց ետևից զալիս էր Մելիքի թիկնապահ ջոկատը: Մելիքն ու զորապետն իրենց զոտիների արանքում խրած ունեին զույգ ատրճանակներ, նաև դաշույններ: Թիկնապահները հրացանակիր էին:

— Փանահ խանը երևում է պինդ է շնթռկել մեր տանը,— ասաց Մելիք-Հովսեփ իշխանը: — Այլապես հազիվ թե մեր գերազահ իշխանը այդպես տագեապեր: Նրա այս հրավերի մեջ ես հուսահատություն եմ զգում:

Շուռ վարդապետ Ավագը բան շասաց: Ինքն ավելի լավ զիտի վիճակը: Հայոց իրենց երկրի վրա կախված վտանգը մեծացել է: Մենակ են մնացել Զրաբերդի ու Գյուլիստանի իշխանապետությունները: Մելիք-Շահնազարը վարանդան դրեց Փանահի ոտքերի տակ՝ որ դռնից ուզում ես, մտիր, խան: Հետո երկուսով վերցրին Զալալյան տան իշխանությունը ու դա հանձնեցին գավաճան Միրզեանին, սրան մելիք հոշակելով եալին գավառի վրա: Դիզակը հեռու է ու կտրված: Բարկուշատն ու Զաշենդորը ժանր օրեր են ապրում: Չկա հզոր Մելիք-Օհանը: Ո՞վ կլինի այդ գավառի տեր իշխանը, հայտնի չէ: Երնջակն ու Գողթանը անհավասար կոհվների մեջ են պարսիկ խաների գեմ: Երեանին նորից է թուրք սուլթանը սպանում: Գեղարքունիքը ժանր կոհվներ է մղում հյուտիսից եկած լեռնականների դեմ:

— Պետք է հաշտվեինք կատարվածի հետ,— ասաց Մելիք Հովսեփը: — Պետք է ընդունեինք Շահնազար բեկի իշխանությունը, եթք նա եղբորն սպանեց ու ինքը տեր դարձավ Վարանդային:

— Կարծո՞ւմ ես,— տարակուսեց Սուռ Ավագ զորապետը:

— Հիմա ի՞նչ ստացվեց: Դավաճանը դիմեց մեր թշնամուն և նրա օժանդակությունն ստացավ:

Երեկոյան դեմ, Թարթառի նեղոց կիրճում գերագահ իշխանի մարդիկ կտրեցին մեր ճանապարհը:

— Թեքվեցիք ձախ, մտնենք Հաթերք: Գերագահը ձեզ այնտեղ է սպասում:

Մի կես ժամ հետո արդեն Հաթերքում էինք: Մի տան ընդարձակ քակում մեզ ընդունեցին Մելիք Աստվածապովն ու Թուրի Արզումանը: Հանգստացանք մի փոքր, մեր վրայից մաքրեցինք ճանապարհի փոշին:

Հայոց գերագույն գահաժողովը գումարվեց գրեթե կիսով: Գյուղիստանի Մելիք Հովսեփը չսպասելով գերագահի խոսքին, գոշեց:

— Ել համբերելու տեղ չմնաց: Ի՞նչ ենք թառել մեր ծերպերում: Պետք է ժողովրդին ոտքի հանել: Պետք է սկսել...

— Այո, պետք է սկսել, — հազանեցին մյուսները: — Պետք է գնալ ու կործանել Փանահ խանին, նրա զաշնակից Մելիք-Շահնազարին: Այլապես մեր վերջը վատ կլինի:

Մեկը կարծիք հայտնեց, թե հարկ է նոր խնդրադիր ուզարկել ուստաց կայսրուհուն: Թե հարկ լինի՝ նահատակվենք Վարդանանց սրբերի պետ:

— Նահատակվելը մերժում եմ, — կտրուկ ասաց գերագահը: — Նաև պետք է կովել՝ հաղթելու ու ապրելու հավատով: Իմացեք, այժմ հազիվ թե ուստաները կարողանան օգնական զորք տալ մեզ, Եվրոպան նրանց զոռում է: Մեր հույսը զնենք մեզ վրա:

Այս Հաթերք մեծ գյուղը Թարթառ գետի միջին հոսանքի վերևներումն էր, հին բերդավան: Զորահովիտը խիստ ամրապինդ վայր էր, զրա միջուկը Հաթերք բերդավանը, որ շքեղացած էր լեռան անտառամած մի լանջի: Ահեղ ժայռերի ու անմատչելի գիրքի շնորհիվ գեռ վաղնջական օրերից հեթանոս հայերը պաշտամունքի վայր էին գարձրել այս տեղը,

այս պնդոցը, այստեղից դեմ ելել արևելյան տափաստան-ներից երևացող կիսավայրենի ցեղերին։ Այստեղից են Հայերը վանել սակերի, ապա Հռների, խազարների, արաբների ներխուժումները։ 1248 թվականին Կողմանք Արևելից Հայոց գահերեց իշխան Հասան-Ջալալ Դոլան, որ գարձագ ինք-նակալ թագավոր, ամբացրեց կիսավեր քերդավանը և դարձ-րեց իր աշխարհի ամուր միջուկներից մեկը։ Այդ ժամանակ-ներից այս ամբոցավանը ոչ միայն ուժի և դիմադրության բռունցք է՝ թշնամիներին ի սարսափ, այլև մտավոր լույսի կենտրոն։ Միջնաբերդը շրջափակված էր Հաստարեստ պա-րիսպներով։ Բուրգերը թանձր էին, աշտարակներ՝ ամբա-կուռ։ Հասան-Ջալալ Դոլա թագավորը այստեղ նաև ապա-րանքներ է շինել, որ ավաղ, հիմա փլատակ են։ Դեռ երեսում են ժայռերի մեջ կտրած ամբարանոցներ, զինեաներ, շտե-մարաններ, որ ժածկված են հողով։ Դարերի ավերիչ ձեռքը այստեղ կործանել է շատ բան։ Ո՞ւ, թշնամու ձեռքով շն ավերվել այս պնդոցները, այստեղ ոչ մի թշնամի ոտք չի դրել։ Ահեղ ժամանակն է կործանել անկործանելին։ Հաթեր-քի շուրջը, թանձր ժառապուրակներում ահա երեսում են անց-յալի փառքերի բեկորներ՝ պալատի սալահատակ, հրաշալի կամարի մի նշխար։ Կանգուն է միայն հին դոյլակի հրաշա-կերտ հորինվածքով ամարաթը։ Սա իր քարե քանդակներով, կառուցման հմայքներով զմայլացնում էր բոլորին։ Այս, լրիվ կանգուն է՝ խաշաճե ու բարձրաթոփչը։ Նրա քարերին երե-վում են Հայոց լեռներում բնակվող հավք ու շորքոտանու, հովտային պտուղների ու բույսերի պատկերաբանդակներ, որ ասես կննդանի են, շնչում ու բուրում են։ Կառուցող վարդա-պետն այս քարերին շարժում է ավել, լեզու զրել նրանց բե-րանում, որ խոսում են դարերի հեռուներից։ Պատերի մեջ երեսում են նաև հեթանոս իմաստներ՝ խիստ ու վեհ։ Ասում են, թե երբ Հասան-Ջալալ Դոլա թագավորը առաջին անգամ եկել է այստեղ, այնքան խունկ, կնդրուկ ու մոմ են ծխել, որ զրանց բայցրերը հասել են Մոռվ լեռան կտտարին, սփրո-վել Կուր գետի հովտով մեկ։ Այդ ժամանակ քաղաքի կերպ ու ոճ է ունեցել ահա խազաղ ծխացող այս Հաթերը մեծ ավա-նը։ Ներքեսում ընկած ընդարձակ հովիտը պերճ էր զրեթե միմյանց կից շենքերով, այգիներով, որ նույնպես ճոխ էին։

Գերագահը Գյուլիստանի մելիքին ասաց, թե ոռուաց Ծլիզավետա կայսրուհին դեսպանություն է ուղարկել Կոստանդնուպոլիս՝ թարձր Դոան ու սուլթանի հետ հաշտության եղբեր որոնելու Շատերիս գլխին ասես սառը ջուր լցրին:

— Մտո՞ւյզ է:

— Մի կարծեք, թե միայն մենք ենք Մուսաստանի ձայնը որոնում, ձեռքը հուսում:

Գերագահը Հայոց ժողովի մասնակիցներին խնդրեց այդ մասին ոչ ոքի ոչինչ շասել: Թող միայն իմանանք մենք ու մեր մեջ մնա: Քաջությունը մենակ ու անօգնական է, եթե պակաս է խելքը, թշնամուն մոլորեցնելու, խարելու ուժը:

Գերագահը տառանդում էր: Եթե Ելիզավետա կայսրուհին սրտանց է կամենում օգնել Հայերին, ապա ինչո՞ւ է դեսպան ուղարկել թուրքի սուլթանի դուռը:

Ժողովը վճռեց պատրաստվել պատերազմի Փանահ խանի դեմ: Որոշվեց Զագեծորի սպանված մելիքի փոխարեն նորը նշանակել:

Դժվարին, սակայն և ոգևորող օրերի էինք սպասում:

* * *

Մելիք-Աստվածապով գերագահի եղբայր Աղամ բեկը, որ տակավին երիտասարդ է, հաճախ է հարցով կպչում ինձ՝ ի՞նչ երկրում ենք, ո՞ւր ենք հասել: Իջնում ենք Մեծ Կովկաս լեռնաշղթայի դժվարին անցքերով: Իմ վաճառական քառավանի ծիերն ու ջորիները, որ երկու հարյուր զլոյն են, տառապած, բրտնած տանում են բեռներս: Ինձ հետ տուն է դառնում նաև Աղամ բեկը, իր տասնյոթ տարեկան որդու՝ Մեծլումի ու իր տասներկու զինվորների հետ, որ բերում է նրա կենք Հայրը՝ Թուրի Արգուման Հարյուրապետը: Ես Աղամ բեկին հանդիպեցի ուսի Մողոնկ քաղաքում: Հիմա համախումբ իջնում ենք մեծ լեռան միակ անցքով: Շուտով դեմ առանք սառուցներից պոկված սպիտակ փրփուր կախ գետին: Ամեհի անկումներով սա գալաքում է գեղի հարավի հորիզոնները: Աղամ բեկը նորից կախվեց շլինքից՝ ո՞ր գետն է, հաջորդ հանգրգանը որտե՞ղ կլինի: Ասացի՝ սա կախ գետն է, սրա հոսանքն ի վար կիշնենք մինչեւ Կախավան:

— Հայի՞ երկիր է կախը:

— Հայի, հայի: Գետը, ինչպիս տեսնում ես, կախված է լեռան ուսից, գրանից էլ անունը՝ կախ:

Ավանի քարզանսրահի տեր հայը հոժար ընկալեց մեզ: Նրա որդիներն ու ծառաներն իրար խառնվեցին: Լվացվեցինք օճառով, հանգարավեցինք: Աղամ բեկի ցանկությամբ մտանք գինետուն: Դրա տերը նույնիսկ վախեցավ մեր Տորքի պիտաք հակա գինվորներից, մանավանդ, երբ սրանք սկսեցին ուսել ազահ, ինչ խոսք, նաև խմել: Մի անկյունում հեզ նստած էին երկու աշուղ՝ սազերը ծնկներին: Աղամ բեկը մի կուլա գինի ու Կուր գետի ձուկ ուղարկեց նրանց համար: Աշուղների երզը գարձավ հոգու մեջ լցվող մեռոն:

Թէ խամ հաքնիս, թէ զար հաքնիս,

Կու շինու զումաշ, նազանի...

Զգացի, ահաս՝ Աղամ բեկը խիստ կարուտեց զար ու զումաշ կնոջը՝ կամար Սոլթանին: Ախր երեք ամիս է, ինչ տնից հեռացել է:

Երեք ամիս առաջ Հայոց Գերազույն գահաժողովը Աղամ բեկին ուղարկեց Ռուսաստան: Երեք ամիս նա ու հարյուրապես Թուրքի Արզումանը, գոնեղուու ընկան: Հիմա ետ են զառնում Հայաստան: Ի՞նչ են տանում իրենց հետ, հե՞շ դատարկ խոստումներ, միայն խոստումներ: Աղամ բեկը ձեռքը զարկեց սեղանին:

— Զզվել եմ...

— Ինչի՞ց, հայը, — կարեկից հարցրեց որդին: Հայը կոպիտ շոյեց նրա զլուխը:

Թէ խամ հաքնիս, թէ զար հաքնիս...

Երզը լցվում էր ուղիղ գինու գավաթը, հետո կոկորդները, և զնում դեպի սրտի խորշերը: Երդ ու գինի ու՝ խարված հույսեր... Դատարկ են ետ զառնում տուն:

Գիշերը քնեցինք միննույն քարե օդայում: Խցեանի տերը քաշքավելով ասաց՝ զուցե ձեզ համար բողե՞ր բերեմ: Աղամ բեկը բռնեց նրա օձիքը:

— Փսխածդ լափի՞ր, ավանակ:

Օրորվեց հարբած: Որդին նրան պառկեցրեց թախտին,

ծաժկեց այծենականով, գնաց ձիերին ակը տալու՝ ծառաները
թիմարե՞լ են, ալավ տվե՞լ են: Ետ եկավ, պառկեց խռմփաց-
նող հոր մոտ:

Դինեմշուշը տանում-բերում է: Որ տանում ես, էլի ի՞նչի՞
ես ետ բերում, ա՞յ մշուշ: Դեմը կանգնեց սեր հագած միանձ-
նուշի Գոհարը: Աղամ-բեկը քնահարամ գինեկուր շշնչաց:—
Օ՛, իշխանուշի Գոհար: Օ՛, միանձնուշի: Հրամայի՛ր: Լուր
տուր Կամար Սոլթանիցոց: Իսկ այստեղ բոզեր են առաջարկում
ինձ: Փրկի՛ր, ո՞վ աստվածակերպ:— Ես նրան դուրս տարա,
կուացրի առվի վրա, սառը ջուր լցրի զիխին:

— Սթափվիր, բեկ, Ուժ հավաքիր...

Նստեցինք դեմ դիմաց՝ նա, նրա, որդին, ես ու Թուրի Ար-
զումանը: Կարծես մեռելատան ենք՝ ի՞նչ է, ի՞նչ է: Աղամ
բեկը նորից հանգ արեց երգելու, բայց նայելով իմ երեսին,
որ երևի դեղնակապ էր, շրթունքներս սեղմ, հայացքս՝ զսպող,
սթափեցնող, երգը գինեհամ թուրի հետ կուլ տվեց: Գինու
մշուշը լիովին ցնդեց զիխից: Ցնդեց, այս: Զլինի՞ տեղը թթված
անիմաստություն մնաց: Բայց ոչ, ահա դղրդաց նրա ձայնը:

— Դատարկ ենք տուն դառնում, է՛... Դատարկ:

Ես նրան ասացի, թե Կառկառ գետի ցածրերում երկու
ամիս առաջ նոր ճակատամարտ եղավ: Մեր զորքը նորից
չարդեց Փանահ խանին: Շունն իր շնացեղ Մելիք-Շահնա-
զարի ու տանուտեր Միրզեխանի հետ, որին մելիք են հոշակել
ուրիշի տան վրա, փախավ մտավ Շուշի բերդը: Այսպես:
Իմացիր: Միրզեխանին Սուր վարդապետի ճանկերից խլել
է կինը՝ Երեզիկը, փրկել: Իսկ Շուշին անառիկ պատյան է
դարձել եղբորդ համար: Փանահ խանը հինգ անգամ դեսպան
ուղարկեց եղբորդ մոտ՝ արի հաշտվենք:

— Հաշտվե՞ց, — զրեթե զոռաց Աղամ բեկը:

— Ո՛չ, ո՞չ...

— Եթե հաշտվի, վիզը կկտրեմ, թեկուզ եղբայրս է:

Բեռնվեցինք մեկնելու: Իշանք Կապաղակ հայոց բերդա-
վանը, այնտեղից Պարտավ անցնելու: Սակայն... Անսպասելի
Կապաղակ եկավ ձիավորների մի ոչ մեծ խումբ: Բոլորս զար-
մանքով տեսանք, որ խումբը բերում է տղամարդու զգեստ
հագած Կամար Սոլթանը: Նա նույնիսկ զիխարկը հանեց, որից
շաղ եկան առատ մազերը: Զիու վրայից թռավ գեալի որդին:

— Մեժլումս... Ախ, ախ: Այնպես եմ կարոտել ձեզ...
Երբ փոքրինը դադար էինք առել ու Կամար Սոլթանը
խաղաղվել էր ամուսնուն ու որդուն գտնելու հուզմունքից,
նա ինձ ասաց.

— Գերազա՞ն իշխանի հրամանն է, որ դու, երեսի Արքա-
համ Երևանցի խոջա, մեկնես Սպահան՝ պարսից շահի ոտքը:

— Իբրև ի՞նչ, — շշմեցի ես այդ անակնկալից:

— Իբրև Հայաստանի գեսապան: — Նա ինձ մեկնեց մի
բավականին հաստ ծրար: — Անելիքդ շարադրված է այդտեղ:
Մանրամասն:

Կապաղակից դուրս եկանք առավոտ ծեզին: Մի քիչ հետո
մենք բաժանվեցինք: Աղամ բեկն իր մարդկանց հետ մեկնեց
գեպի Պարտավ, ես՝ հարավ, գեպի Բաղկանի մեծ գաշտը:
Կանցնեմ Կուր ու Երասխ գետերը, կմտնեմ Փայտակարան:
Այնտեղ՝ Բաղավան փոքրիկ քաղաքում հավատարիմ մար-
դիկ ունեմ, կօգնեն ինձ:

* * *

Տափակ տարածված Սպահան քաղաքը արթնանում է
բարձր, գեպի վճռ նեղացող մինարեթների ծկլթոցներից:
Ամեն տեղ խուժող, գանգ ծակող այդ բարակ ոռնոցներից արթ-
նանում է մրափած քաղաքը: Ես՝ ևս: Արթնանում ու սարսա-
փում եմ՝ նորից թաղավոր են սպահել: Նորից մի հինգվեց
հազար գլուխ պիտի կտրվի այս անիծված քաղաքում: Շունելի
եմ գալիս՝ երեսս գեպի Երուսաղեմ: — Օ՛, բարեգութ ասո-
ված, բռնիր այն ձեռքը, որ կբարձրանա իմ երկրի վրա: Օ՛,
երկինք, տառապում եմ անվերջ ավերմունքների վկա լինելով:
Օ՛, տե՛ր...

Ես Հայաստանի գեսապանն եմ Պարսից աշխարհի մայրա-
քաղաքում և զարմանում եմ, որ ահա գեռ կենդանի եմ: Եր-
բեմն նույնիսկ շեմ հավատում, թե գլուխս չի կտրված, շո-
շափում եմ երկու ձեռքով և շգիտեմ՝ ուրախանա՞մ, որ գլուխս
տեղում է, թե՝ ողբամ: Ախր այնքան գլուխներ են թոցվում
այս աշխարհում, որ թե լցնես ծովը, ջուրը կկանգնի: Սպա-
հանում ինձ զիմավորել է իմ բարեկամ Սաֆար Ալի Արդուլ
Հասան միրզան: Եահի հրամանով նա ինձ տեղավորել է

պալատի մի հարկաբաժնում և պատիվներ է տալիս: Աշնան որր քամի է սուրում արքայական մուայլ պալատների արանք-ներով: Կարծես հեռուներից հաղար զիրիլ բերող այդ քամին դժգո՞հ շառաշելով Սպահան զցեց նաև Փանահ Ալի խանի ծառա-դեսպանին: Դա սաստիկ մտահոգեց ինձ: Վիրավորանքս մեծ եղավ, երբ թագավորը ինձնից առաջ նրան ընդունեց: Փանահ խանի մարդը մեզրից կոտրատվելով Շահ Ռուհի առաջ և ոչ մեկ անգամ ու մեկ օր, այլ յոթ անգամ ու յոթ օր աղերսեց:— Խղճա, օ՛, բարեգութ, մեղքացիր քո ստրուկին, որ ես եմ՝ Փանահ խանս՝ քո թշնամիների թշնամին: Զեհքդ դիր զլխիս, օ՛, հզոր, որ քո սաստող սրով կործանեմ հայ ցեղը՝ քո թշնամուն:

Այսպես օրը հինգ, թե յոթ անգամ իր աղերսանքի խընդրանքն էր թափում պարսից թագավորի ոտքերին Շուշում շընթըռկած խանը: Եվ եղավ օր, որ մարգարեի փոխանորդ թագավորը կակղեց, ինչպես բեղուինի մեկը, որի ուղարք գողացել են անապատում: Ինչպես ինձ հայտնեց Սաֆար Ալի միրզան, շահն իր մտերիմներին ասել է՝ ավելի լավ է Փանահ շուն ունենամ, քան Աստվածապով հայ դաշնակից:— Ես Սաֆար Ալի միրզային խնդրեցի արագացնել իմ ներկայանալը շահին: Նա ուսերը վեր քաշեց:

— Դժվարինս կամեցար, եղբա՛յր իմ: Շահ Ռուհի ջարդում է այն քարն անգամ, որն իր վրա թեկուզ բնականից խալ ունի:

— Բայց,— ասացի, — չէ որ մենք՝ հայերս ձեզ հետ դաշնունք՝ շահ Ռուհի պապ մեծ նադիրի ձեռքով հաստատած:

Սաֆար Ալի միրզան քորեց աչ ականջը, որի բլթակին սե խալ կար, հազար բռան մեջ:

— Մենք զիտենք, որ դուք՝ քրիստոնյա հայերդ ողորմած եք լինում, երբ մեկին տեսնում եք վշտի ու վտանգի ցավի մեջ, խիղճ և զութ եք ցույց տալիս նմանին:

— Մի՞թե վատ բան ենք անում դրանով, — զարմացա ես

— Ոչ միայն վատ, այլ՝ վատթար:— Նրա ականջի խալը կարծես եռակի սեացավ:— Օրինակը հենց ձեր Մելիք-Շահնազարը: Զէ՞՞ որ նա ողորմաց Փանահ ավազակապետին և այն էլ քանի՛ անգամ...

Ես նրան ասացի՝ կաշվիցդ դուրս եկ, Սաֆար Ալի Արդուկ

Հասան միրզա հանուն քո, հանուն աստծու, հաջողիր, որ քո շահն ընդունի ինձ: Նա համաձայն գլխով արեց: Սակայն շահը միայն խոստանում էր՝ վաղը, մյուս օրը կընդունիմ:

Այսպես մի ողջ ամիս սպառվեց: Ես միրավորված գտառ միայն ինձ, այլև իմ հայրենիքը և, առանց շահից իրավունք առնելու, հեռացա Սպահանից ու շտապեցի Հայաստան: Իսկ աշունն արդեն սպառվում էր, հայոց լեռներում ուր որ է կակսվի ձմեռը՝ երկար ու տաղտկալի: Զրարերդում ամեն ինչ խաղաղ ու անվրդով էր առաջվա պես: Գերազա՞ն իշխանը լսեց ինձ, գլխով արեց:

— Հավանում եմ արարքդ, Արքահամ Երևանցի: Այն, որ Քքել ես Շահ Ռուհի տան վրա ու հեռացել, ողջունելի է:

Ես մնացի նրա տանը: Հետզհետե նկատեցի, որ մեր այս մի հզոր իշխանի հոգերանության մեջ ինչ-որ խաթարում կա: Երևի տատանվում է՝ կդիմանա՝ մոտեցող արհավիրքներին: Սակայն իմ այդ կասկածի մեջս գաղտնի էի պահում, ինչպես գարշելի մի հիվանդություն, և նկատելու շէի տալիս: Իսկ մեզ հանող լուրերը ուռած էին, տագնապալի:— Գարնան գալու հետ Շահ Ռուհը արշավելու է Հայաստանի վրա:— Լուրերի միջուկը սա էր՝ երբեմն գունադարդած, երբեմն խունցը բրած: Մելիք-Աստվածապովը հուսադրում էր՝ նման քամիներ առաջին անգամը շենք տեսնում, գա էլ, գնա էլ:

Մի անգամ, միասին ճաշելիս, ես գերազա՞ին ասացի.

— Լսել եմ, որ Բաքվի ու Ատրպատականի խաները Փանականի հանու հետ դաշն են կռել՝ մեր դեմ, տեղյա՞կ ես, տեր գերազա՞:

— Տեղյակ շեմ,— ասաց Աստվածապովը:— Բայց շեմ դարմանում:

Մի անգամ, երբ լավ տաքացրած օդայում ես ու ինքը նարդի էինք խաղում: Թուրի Արզումանը եկավ ու նրան զեկուցեց, թե Ղարսի մեջ շնթոկած թուրք փաշան մարդ է ու զարկել Փանականի մոտ, ասելով պատրաստ եմ օգնելու բեկ՝ հայերի դեմ:

— Գանձակում կոտորված իր զորքի վրեժն է ուղում հանի թուրքը, — ասաց գերազա՞ը, զարերը հանդիստ ձգելով տախտակին:— Գա էլ, գնա էլ:

Այսպես գրեթե ամեն օր:

Չմեռվա ընթացքում գերագահ իշխանը երեք անգամ մարդ ուղարկեց Պետերրուրդ՝ ուսւաց կայսրուհու մոտ: Երեքն էլ ետ չեկան, ավելի շուտ՝ տեղ չհասան: Կցկառուր լուրեր ստացանք, թե մեր մարդիկ Դերբենդում անհետացել են, անշուշտ Դերբենդի պարսիկ խանի սադրանքներով: Ջրաբերդը նորից երկու անգամ պատվիրակություն ուղարկեց Սպահան՝ շահ Ռուհի մոտ, հարցումով՝ արդյո՞ք Պարսկաստանն իր խոստման տերն է, կպահպանի՞ իր դաշինքը Հայերի հետ, որ կնքվել է Եղվարդում համատեղ թափած արյունով, համատեղ ձեռք բերած Հաղթանակով: Այս պատվիրակները ևս անհետացան...

Այնինչ Հայոց աշխարհի ձմեռը մանում էր իր ճերմակ մալանչերը՝ հավիտենականության անխախտ հրամանով:

* * *

Հեյդար Ալի խանը առուսարսափի մեջ էր: Պարսից գահը նորից երերում էր, ձեռքից ձեռք ընկնում գրեթե ամեն տարի: Ինքը՝ Հեյդար Ալին, որ սոսկ դարուղա էր՝ շահի հարկանքանը Նախիջևան քաղաքն ուներ իր Հայ իշխանը: Արքայական Հարկերն ինքը խանն էր հավաքում, ուրիշ այլ իրավունք չուներ: Նախիջևան քաղաքն ուներ իր Հայ իշխանը: Արքայական Հարկերն ինքը խանն էր հավաքում, ուրիշ այլ իրավունք չուներ: Ամեն տարի ինքը մեծագույն դժվարությամբ, մի կերպ ժողովում էր տուրքերը: Իսկ ահա արդեն մի տարի է Նախիջևան քաղաքը հրաժարվում է հարկ տալուց: Քու շահները խոզի ճուրի պես մորթվում են իրար ետնից, ո՞ւմ հարկ տանք, — ասում են քաղաքացիները: — Եվ ինչո՞ւ տանք: — Քաղաքում տաս հազար ծուխ Հայ է, հազար ծուխ պարսիկ: Նրանք իրար հետ ապրում են մի շապիկի մեջ՝ միակամ ու միմյանց բարեկամ: Ոտքները զրին մի շմշկում ու գռաացին՝ հարկ շենք տա՞...

Հարեւան Երնջակում իրենք իրենց են հայերը և Սպահանին մի ժակ բրինձ անգամ շեն ուղարկում: Խանը լուրեր է ստանում, թե Հովհաննես Խանգամիրյանն ուզում է արշավել Նախիջևան քաղաքի վրա և իրեն վոնդել: — Հայստան է, հայի քաղաք է, — ասում է, — դու ո՞վ ես, ի՞նչ ես: Հեռա-

ցի՛ր մեր տնից: Եթե շահին հարկատուրք է պետք տալ, ինք-ներս կհավաքենք, կտանք:

Խանի կլոր ճակատը բրտնում էր ու նա կորցնում էր արիու-թյան վերջին փշուրն անդամ: Այժմ էլ ահա մտովի բարկա-նում է իր ազգական Շահ Մուսի վրա: Մի տարի առաջ բարձ-րացավ գահ, բայց մի զինվոր էլ է չի ուղարկել Նախիջևան: Ետին մոլլայի նման տարվել է աղոթքներով, շեյխների ու սե-յիդների հետ Ղուրանի փթած վեճերն է պարզաբանել կամե-նում: Բաց է թողել երկրի սանձերը: Երկիրը կործանվում է եերքին ահեղ ցնցումներից:

Դեռևս աշխանը խանն անցել է Արաքսը, պարսից կող-մերից ինը հարյուր պարսիկ վարձել, բերել իրուն զորք: Դրանք իր զլխին շարիք են դարձել: Ուտում-խժուում են, փորները պարարտացնում: Բայց և ինքը հույս ունի այդ վարձկան զոր-քի վրա՝ Երնջակի դեմ:

Խանը իր վարձված զորքի պետերին հավաքեց խորհրդի: Կանչել էր նաև քաղաքի քալանթար իշխան Խարիսիմոսին: Իր նեղ աշբերն այնպես էր կկոցել, որ ներկաներին թվում էր, թե մեջքից մախաթ են խրել ողնաշարի մեջ: Իշխան Խարի-սիմոսի ծիծաղը բռնում էր ցանցառ թեղերի տակ: Այս նոր նշանակված խանը, որի անունը նույնպես Հայդար Ալի էր, նման էր կողոպտված վաճառականի: Գիտի՝ խանը մեծ երկ-յուղ ունի Հովհաննես Խանդամիրյանից և վերջերս, զրեթե ամեն օր աշխատում է, որ հետը լինի Խարիսիմոսը: Խանն իր գորապետներին հրամայեց հենց այսօր քաղաքի զանազան մասերում եղած իրենց ընակարաններից իրենց ընտանիքնե-րով տեղափոխվեն ու ապրեն իր հետ՝ պալատում: Խարիսի-մոսը նրան ասաց.

— Քաղաքում սով է, խան: Զարհուրելի բաներ են լինում: Մի պարսիկ տղա կտրել է մեռած քրոջ ստինքն ու կերել:

Խանը սարսափից գունատվեց:

— Ի՞նչ անեմ: Ի՞նչ անեմ:

— Էշի մաի համար հայ ու պարսիկ վաճառականները բուռ-բուռ ոսկի են տալիս:

— Հա՞՛, ի՞նչ անեմ:

— Քաղաքը հանձնենք Հովհաննես Խանդամիրյանին: Ու-րիշ ելք չկա:

Այս անել ահի մեջ էր Հեյդար Ալի խանը, երբ Դողութայակետի կողմից, որ Հայոց Դարոյնք աշխարհն էր, բոլորովին անսպասելի իր մոտ երեաց Դողութայակետի զորքերի թուրք փաշան:

— Մի՛ վշատիր, խան,— անփոյթ նստելով տանտիրոջ մատուցած գահավորակին, մտերիմ ասաց փաշան: — Ես պատրաստ եմ երեք հազարանոց բանակով գալ և օգնել քեզ:

Հեյդար Ալի խանը շտապեց շարքաթով ու ալժիրյան սուրճով Հյուրասիրել նրան՝ մտքում ընկնելով ալահի ոտքերը և փառք տալով նրան:

— Սակայն ո՞ր պայմանով, փաշա:

— Չնշին, — լկտի ասաց փաշան: — Պայմանն այս է: Դու թույլ կտաս որ ես կողոպտեմ Նախիջնան քաղաքը, ինչ ուզեմ, անեմ զյավուր հայերի հետ: Եվ զիտես սա կլինի իմ վարձու իմացիր, ինչքան գերի վերցնեմ, իմս կլինի, դու գրանց վրա իրավունք շպիտի ունենաս: Ընդունելի՞ է:

Հայդար Ալի խանը, որ բարձրահասակ էր, ձիային մռութով, քիչ մնաց ընկնի նրա ոտքերը:

— Ընդունելի է: Համաձայն եմ:

Մի շաբաթ հետո թուրք փաշայի գորքն անցավ Շահթախտի հին կամուրջն ու մտավ Նախիջնան:

* * *

Երբ բարձրացանք Կապուտջիզ լեռան թամբը, մեր առաջ բացվեց հեռավոր ճերմակ հորիզոն, որի բարձրում լողում էր Արարատ լեռան սպիտակափառ գագաթը, ինչպես առաջաստքացած նավ ծովի մեջ: Ներքեում Արարսի հովիտն էր՝ կապույտ և անշարժ: Լեռան զյուին սարսափեցնող լուսիլյուն էր:

Սկսեցինք գլորվել գեազի երեշակ գետի ակունքները, որ ընկնենք Շաղկերտ: Ես թեթևացած հառաջեցի:

— Իմացիր, հարյուրապես Տեր Թումա, — ասացի ինձ ուղեկցողին: — Մի տաս անգամ անցել եմ Կապուտջիզի այս գոնապանը և միշտ փոթորկի միշով, ահը որտումս: Հիմա փառք աստծուն, խաղաղ է:

Իմ քարավանը, որ այնքան էլ մեծ չէ, հասավ Մեսրոպական գյուղը: Այդտեղ մեզ ընդառաջ եկավ Հովհաննես Խան-

դամիրյանը: Ես պատկառում եմ այդ քարձրա՞ասակ, թուխ մազմորութով, կորովի գարբնից: Ուկեթել կարերով պատմունան ունի հազին, պղնձե սազավարտ և կարմիր, երկարաճիտք կոշիկներ: Նման բան հագնում են միայն իշխանական զարմի մարդիկ, իսկ ինքը ուամիկի ժագում է: Արծաթե պատյանով թուրը խաղալիքի պես քարշ էր ընկել նրա կողքից, գոտու մեջ խրած էր ատրճանակ, աչ ձեռքում զիք բռնել էր երկարակոթ նիզակ:

Մայրամուտը երկար ստվերներ զցեց Երնջակ գետի կիրճին և կիրճը խաղաց կապույտ ջրերի հրաշքի ու երկնային գույների ժամանքի մեջ: Խանձված ժայռերի տակից հանկարծ պոկ էր գալիս ցերեկն այնտեղ մակաղած քարայժերի հորան ու խելակորույս արագությամբ նետվում զեպի ձորի խորխորատները:

Նախ ինքը՝ Հովհաննես Խանդամիրյանը մոտեցավ զետին:
— Սպասեք,— ասաց,— ես անցնեմ, հետո դուք: Եթե անցնելու է...

Նրա նժույգը հոտոտեց ջուրը, գլուխը քարձրացրեց, նայեց մյուս ափին, խրխնջաց արծաթահունը ու մտավ զետը... Մյուս ափից նա ձայն տվեց:

— Անցեք: Անցնելու է:

Մի քիչ էլ գնացինք: Երեաց Շաղկերտը: Զիերը, ախոռի մոտիկություն զգալով, խրխնջացին:

Շաղկերտը խաղաղ ծխում էր՝ կապույտ լեռների արանքում քարուրված: Երնջակ բերդի մարտկոցներում զետք զինվորները փող հարեցին: Թնդանոթաձիգները քրքչացին հուժկութեաւ:

Արդեն յոթ-ութ տարի է, ինչ այս լեռներում ոչ հրացանի ձայն է լսվում, ոչ թնդանոթներն են հազում: Խաղաղ էր Շաղկերտ՝ ամեն մեկն իր առօրյա հոգսի ետևից: Շատերը նույնիսկ բանի տեղ շղրին իմ վաճառական քարավանը:

Միջնաբերդի դարպասից դուրս մղվեցին մի քսան ձիավոր: Հովհաննես Խանդամիրյանն ուրախ գոշեց.

— Է՞, հե՞... Վերջապես եկանք: Է՞, հե՞, տեսեք, է՞, Խոջա Արքահամ Երևանցուն էլ եմ բերել, Տեր Թումա հարյուրապետին էլ: Սրանց ձենները երկու տարի կա, լինք լսում:

Շաղկերտի զինվորները, որ հրացանակիր էին, խանդա-

վառ ողջունեցին իրենց առասպելական զորավարին: Հովհաննես Խանդամիրյանը կապույտ նժույգի վրա նստած էր թեթև, վեճ: Նրա սաղավարտը փայլում էր նոր ներկից: Առիթը եկավ ու ես նրան հարցրի:

— Նախիջևանից ի՞նչ տեղեկություն կա: Քաղաքի մասին է խոսքս:

— Հե՞լ,— թքելու պես պատասխանեց նա: — Այս մի նոր վերիլ-վերակացուն, որի անունը նույնպես Հեյդար Ալի է, օսման երկրից Նախիջևան է բերել երեք հազար թուրք զինվոր: Եուն շան որդի...

Նա իր Կուան շեմին հետիունն գարձավ: Քարե աստիճան-ներով ցած վազեց Ասպազը ու խոնարհ ողջունեց ամուսնուն: Նրա երեսից կարուտի շերտեր էին թափվում: Խանդամիրյանը շույց նրա զլուխը, աշբով արեց ինձ:

— Կինս խելառ մոզու պես է, վազում է, շիմանալով, որ կարող է ոտքիս տակն ընկնել:

— Ողորմի կնոջդ ծնողներին, — ասացի ես:
Խանդամիրյանը քրքչաց.

— Դու քեզ ականջները թակած էշի նման մի՛ պահիր, խոչա Արբահամ: Մեռածներին ոչնչով չես օգնի, օրհնությունդ ողջերին տուր:

Հաջորդ առավոտ ինքը՝ Խանդամիրյանը եկավ ինձ մոտ: Ես զննող նայեցի նրան՝ ահ ունի՛ պարսիկ խանի մեր աշխարհ՝ բերած թուրք զորքից: Ես նրա սրված դեմքին, աշքերի մեջ որևէ տագնապ չտեսա:

— Այդպե՞ս, — ասաց նա՝ շգիտեմ ում դիմելով: — Մեր տան մեջ օտար պալար բռւսավ՝ Փանահ խան:

Ես նրան ասացի, թե միաբան մելիքները պատրաստվում են կործանելու Շուշին: Արդյոք՝ ինքը կարո՞ղ է զորքով միանալ նրանց: Նա այնպես նայեց ինձ, կարծես ես օրորոցի մանուկ էի:

— Հեյդար Ալի խանը թուրք վարձկան զորք է բերել, միաբանի Նախիջևան, զլուխը՝ Մուստաֆ Քեմալ փաշա: Այս-տեղից մի քայլ հեռանամ թե չէ, շունը կկործանի Երնջակն ու Գողթանը:

Այո, հայոց միաբան ու միահավաք աշխարհի կողերը

դանակներ են միտճված՝ մեկը Շուշի՝ Փանահ Ալին, մյուսը՝ Նախիջևան՝ Մուստաֆա Քեմալ փաշա թուրքը:

— Հույսներս ինքներս մեզ վրա դնենք, — ասաց Հովհաննես Խանդամիրյանը: — Աստված մեռած է մեզ համար: Մեղա՛, մեղա՛... Թեկուղ քավթառ աղվես էլ դառնալ, այլևս խաների հետ լեզու չես գտնի: Օձի պոլը կտրել ենք: Պոլը, ոչ գլուխը:

* * *

Երնջակում ապրում ենք ժայռերի ճեղքերում պատանված, ինքներս ու մեր աստվածը: Ջրաբերդի հորիզոնից զրեթե ձեռն-ձուն չէր գալիս: Որևէ լուր չունեինք նաև Երևանից: Նախիջևան քաղաքը միտճված պարսիկ խանն ու թուրք փաշան կտրել էին մեզ Երևանի հետ կապող միակ ուղին՝ Գալլի Դրունք լեռնանցքը:

Մի օր Հովհաննես Խանդամիրյանն ինձ ասաց հենց հիմա մեկնիր Նախիջևան, պարոն խոշա Արրահամ: Աչից ես կծկվեցի: Չլինի՞ թե վերջս է: Իմ գլուխը կամ Հեյդար Ալին կկտրի, կամ թուրք Մուստաֆա Քեմալ փաշան: Անցել եմ հազար միորմանքների միջով, մի օր, անշուշտ, աղետի եմ գալու:

— Հետդ կլինի թումա հարյուրապետը, — ասաց Խանդամիրյանը:

— Որ դիակս բերի՞:

— Որ միասին գլխատվեք, — ծիծաղեց զորապետը: — Քնիքրովի մահը, ասում են, հարսանիք է: Չեմ փորձել: Մի՛ ոչնչանա, խոշա Արրահամ, վերջդ չէ: Եռոսթի զորապետ Մտեփան Անհողինը երեկ Ջուղայում կալանել է Հեյդար Ալի խանի մի եղբօրն ու մեծ որդուն: Հիմա նրանք այստեղ են:

Իմ շունչը տեղը եկավ:

— Պատա՞նդ:

— Դու և թուման ապահովված եք: Չեմ կարծում, թե Հեյդար Ալին այնքան ստահակ գտնվի, որ քու և թումայի զատարկ գլուխների համար իր եղբօրն ու որդուն զոհի: Կնա:

— Ինչո՞վ:

— Ասա՛ պահանջս է Մուստաֆա Քեմալ փաշային հեռացնել Նախիջևան քաղաքից: Այդպես:

— Ուրեմն՝ բարեկամացիք թշնամուդ թշնամու հետ,— առացի,— այդպէ՞ս:

Թեև ինչ-որ շափով խաղաղ էին Երեջակն ու Գողթանը, բայց Հովհաննես ևանդամիրյանը, ինչ խոսք, նաև շատերը, նաև ես, զգում էինք, որ լեռների ընդերքում կրակ կա: Կպայթի¹: Նույն օրը ես ու Թումա Հարյուրապետը մեկնեցինք: Նախիջնան քաղաքը Շաղկերտին մոտ է, ձիով մի ոչ լրիվ օրվա ճանապարհ:

Եվ ես երեմն գառնանալով-զողում եմ մեր բախտի անվերջ երերմունքից ու երկնքի խոռվ լինելուց մեր հայ ազգից: Աշնանային օրը բացվում էր հնձած արտերի գեղին թախիծով, դալարիթի վանող անգունությամբ: Եվ ձիու փոնչալն էլ այսպես դան էր, որ կարծես այդ փոնչոցը թե կաշի քարի, քարը կճաքի: Ես հենց այնպես թողնում եմ, որ ձիս իր մոռթը խորի խոզանի տակից ցցված կանաչի մեջ: Օրը դալկանում է մրգահամ քամիներով:

Իրիկնամուտի մշուշը կարմրեց սպառնալի, ապա ցրվեց՝ տեղը սպիտակ աղուկեղի թողնելով: Երևացին քաղաքի եկեղեցիների գմբեթները, արար խալիֆի տիկինն Մումինն խաթունի այստեղ շինած մզկիթի կանաչ-կլոր գագաթը՝ սպառնալի բռունցք, տափակ տների վրա: Դեռ քաղաք շմարած մեզ ընդառաջ եկան երկու պարսիկ ձիավոր: Մեկը ձեռքը կպցրեց ճակատին, գրեց սրտին:— Ոզքույն հայ իշխանի մարդկանց: Սալամ սուրհիւ:— Թումա Հարյուրապետը չոր հարցրեց՝ զուով ես:— Ես Հելդար Ալի խանի նայիրն² եմ, համեցեք:

Նա մեզ տարավ միշնարերդ, ուր խանի պալատն էր, նաև իր կացարանը: Իսկույն փլավ ու շարբաթ բերին: Օրը արդեն մթնում էր: Նայիրն ասաց.

— Ապահով եղեք, ո՞վ իմ ազնիվ հյուրեր: Հավատացած եմ, որ մեր խանը ձեզ ձեր երեսի զրով ետ կուղարկի:

— Որպեսզի ապահովի իր եղբոր ու որդու կյանքը:

— Ի՞նչ, — շշմեց նայիրը:— Չեմ հասկանում:

— Խանի եղբայրն ու մեծ որդին մեր իշխանի պատանդներն են՝ Շաղկերտում կալանված:

Նայիրը գունատվեց: Երեկի ոչ իրեն, ոչ իր խանին հայտնի

1 Սուրհի — քարի: 2 Նայիրն — գործակալ:

շէր տակավին, թէ ինչ է կատարվել իրենց հարազատների հետ: Նայիրը մեկին ինչ-որ տեղ ուղարկեց ու նո նկավ, ծալապատիկ նստեց մեր գիմացը: Պարզ է, մարդ ուղարկեց խանին հայտնելու, թէ իր որդին ու եղբայրները գերի են Շաղկերտում:

Մեր եկեղեցիների զանգերը դողանջնցին: Ես ու Թուման մեր երեսներին խաշ հանեցինք: Նայիրն ասաց.

— Դուք մարդկանց աստծու տունն եք հրավիրում անշունչ, մեռած պղնձե ձայնով: Մուհամմեդ մարդարեն մարդու ձայնով է դա անում:

— Երկուսն էլ աղբահոր զցելու բաներ են,— ասացի նրան: — Զեր Մուհամմեդը ևս մի բարի պառուղ շէր Կարծիմ ետ ամուսնացել է Ալշե անունով մի աղջկա հետ, երբ աղջիկն ինը տարեկան էր, ինքը՝ հիսուն: Ինչ վայրենի բան... Աղջիկը զգվում է քավթառից, երեսին շպրտում: — Դու էլ կարծում ես, թէ մարդարե՞ ես, հա՞: Դու սո՞ւտ ես, սո՞ւտ ես: — Այդպե՞ս է եղել:

— Այդպես,— ասաց նայիրը: — Դե, ո՞վ իմ անա:

Երբ պատրաստվում էինք քնելու, պարսիկն ասաց.

— Զարժանալի ժողովուրդ եք դուք հայիրդ: Դուք նման եք ձեր լեռներին: Զեր կերպարանքները խիստ ու ահարկու են, նայվածքները զեհ ու խոժոռ, նաև ինչ որ տեղ կոպիտ:

— Այդպես է, — ասացի ես: — Մենք բուսել ենք այս լեռներում: Մեր լեռները մեզ իրենց նման են ստեղծել:

— Ասում են, թէ դուք ուզում եք ձեր թագավորությունը վերականգնել:

— Մենք արգեն բորբոքել ենք մեր հայոց թագավորության մարած կրակը, որ թեև երբեմն ուժը նվազել է, բայց երբեք չի մարել:

— Կհաջողե՞ք:

Կերոնի գեղին լույսը թրթուաց: Զարմացա՝ հարցը այս պարսիկը տվե՞ց, թէ՞ սենյակի գեղնած պատը: Դա նաև իմ ներքին, մշտական հարցն էլ էր, որ կպած է կոկորդիս: Ինչ-որ երկյուղ պատեց սիրտս, անմատշելի խորհրդավորություն տեսա պարսիկի երկարավուն, հնդկական թխությամբ մռութին:

— Զեր եկեղեցիները լի են զրբերով, — այլ բան ասաց

Նայիքը: — Գրքերի թագավորություն եք ստեղծել ձեզ համար, որ ի՞նչ...

— Ես այնքան շեմ պատկառում աիրոջ գոյությունից, որքան զրքերից, — ասացի ես: — Դրանք ինձ համար մի-մի մարդարե են, մի-մի սուրբ:

— Թղթե սրբով աշխարհ շես պահի: Հայի մոլորություն է, մեջը՝ վտանգ:

Ողջ գիշեր պարսիկի ասած այս խոսքերն էին գանիս մեջ:

Լուսարացի հետ ես գուրս եկա քարե պատշգամբ: Այս ընդգարձակ խորշից լավ երևում է քաղաքը: Քաղաքը, սակայն, կարծես մեռած է: Ոչ մի հայ բաց շարեց իր արհեստի տունը կամ խանութը, որ երեկի մի քանի հազար են: Ով իմանա, գուցե թե զրանք կողովազած են: Եկեղեցիները ևս լուս են: Միայն ահա մինարայի զլինից զղբառում է մի պարսիկ մոլլա:

Խանական սարայ պալատը ևս սկսեց արթեանալ: Սա միշնարերդ է բլրի վրա, տակը նախիջնան գետը, գրանից քաղաքը ջուր է կլանում աղուգաների խիտ ցանցով: Կավե այդ խողովակներն իրենց վրա ունեն Արտաշես աշխարհակալ արքայի կնիքը, որ տեսել եմ թրծած կավի լանջին:

Քաղաքի պարիսպներից գուրս նոյի բրդածե դամբարանն է: Այնտեղ ես եղել եմ ու տեսել հայի սեակ զրեր: Դրանց լեզուն սակայն ինձ անմատչելի է: Դրանից ես դառնանում եմ: Մարդկության հայրը՝ նոր մարդդ նոյր իր հանգստարան վայրը ընտրել է նախիջնանի այս բլուրը, տեղ, ուր ինքն առաջին անգամ իջավ Արարատի զլինից, գրանից էլ նախիջնան: Նոյր վախճանվել է հող մշակողի զգեստով, խաղողի որթ տնկելիս: Դե ես հավատում եմ զրան, ողջ ընտանիքով՝ էշ ու եղով, առյուծ-օձով իջել է Արարատ լեռան գլխից, նավով թիավարել Արաքս զետի ցրերի վրայով, պտտել ողջ Այրարատյան դաշտում և իր համար ապրելու տուն ընտրել այս բլրի վրա: Նոյի նավից մի այնպիսի թնդյուն է զղբդացել, որ պատանում եղած նոյի ու նրա որդի, թռո ու ծռռերի կանանցից երեսունը, որ հողի են եղել, վախից պառուզը վիժել են: Դրանից էլ գետի մերձ Զուղայի սահանքին ասում են Վիժք: Ես զարմացա՛ ինչո՞ւ քաղաքում թուրք զորք լի երևում:

Ո՞ւր են: Ետևիցս ոտնաձայն լսեցի: Քաղաքի իշխան Խարիսխմոսն էր:

— Բարի լույս, խո՛ջա:

— Մի՞թե բարի, — զարմացա ես: — Ո՞ւր է, քաղաքումդ թուրքի զորք չեմ տեսնում: Չկա՞ր:

— Կար, — ասաց իշխանը: — Այս զիշեր անսպասելի քաշվեցին Երասխի մյուս կողմբ: Ինչո՞ւ Տեղյակ չեմ:

— Ուրեմն մենք՝ ես ու թուման անտեղի ոտք թակեցինք եկանք:

— Մուստաֆա Քեմալ փաշան հեռացավ: Թեև երկու օր մնաց մեր քաղաքում, բայց հասցրեց ահագին վնասներ տալ, նաև շատերին գերեց: Փաշալի հեռանկուց առաջ զնացի գերիներին տեսնելու:

Խարիսխմոսը այնպես էր խոսում, կարծես վերհիշում էր վաղուց մոռացված մի լնչին բան:

— Այնպես դժբա՛խտ էին: Փաշան շորս հարյուր հայ էր հափշտակել:

— Սախեցի՞ն:

Ոտարորիկ էին, ցնցութիների մեջ: Աղջիկները զրեթե մերկ էին, տրորված, ճմրթված, ոտներին արյան բծեր: Հրեա գերեվաճառներ տեսա: Սրանք թափվել էին գերեներերի գլխին, սակարկում էին՝ վեց զուռուշ, ավելին շեմ տա: — Զէ, տասը զուռուշ: — Զէ, վեց, այլևս սրա վրա հալ կա՞, արյունը ծծել ես: Մի գեղնած, մազերը զգգիզ աղջնակ փաթաթվեց ոտքերիս: — Դո՞ւ ինձ գնիր, հայ, Գնիր, քո շունը դառնամ: Մի կին, որ երևում էր, բարեկիրթ ընտանիքց էր, կրծքին սեղմած պահում էր մեռած մանկանը: — Եկե՞ք... Եկեք զավակիս միսը կերե՞ք: — Մի թուրք շավուշի հարցրի՝ բանիսո՞վ ես տալիս շունչմարդը, քանի՞ զուռուշ: Զեմ էլ հիշում ինչ ուզեց: Ես հարյուր գերի գնեցի, նաև մեռած երեխային՝ մոր հետ: Մեռածին էլ ողջ գին տվի: Գերիներին ուղարկեցի Շաղկերտ: Հարյուր գերի: Գնեցի դրամով: Գնեցի... Մյուսներին թե ինչ արին, չգիտեմ: Թուրքը դաժան կողոպտեց նախիջնան քաղաքը, հերթը Երբնշակին ու Գողթանին էլ կհասնի:

Արևը սկսեց իջնել Կապուտջիղ լեռան գլխից: Դե, էլ ի՞նչ, թուրքը հեռացել է: Այլևս ինչո՞ւ մնամ այստեղ:

Ես ու Թուման Հարյուրապետը ահա վետվետում ենք մեր
ձիերի վրա։ Վերադառնում ենք Շաղկերս։

Արևը տաքացրեց մեզք։

* * *

Նորից պղտորդից, սեացավ Հայոց երկինքը։

Պարսից գաշին նոտած Զենդ Քերիմ անունով շահը ներ-
խուժեց Հայաստան։ Այս լուրը Շաղկերս հասավ դղրդոցով։
Առաջիններից մեկն էլ ես էի, որ դա լսեցի իմ խլացած ականջ-
ներով։ Լուրը ցնցեց նաև Հովհաննես Խանդամիրյանին։ Նա
միանդամայն վստահ էր, որ Պարսկաստանի հետ կնքած
խաղաղությունը անխախտ է։ Գոնե ինձ այդպես էր թվում։
Երևի մեղք եմ կատարում։ Նախիջևան քաղաքի Հեյդար Ալի
խանը հիմա բացեիրաց գոռում է։— Օրը եկել է։ Մենք Նա-
խիջևան քաղաքի Հայությանը ճիտահան կանենք։ Նրա պա-
լատում վխառում էին Զենդ Քերիմ շահի ուղարկած պաշտոն-
յաները, որուապետները։ Սրանք խանին գոգոսւմ էին մեր
Երնջակի դեմ։ Նրանք ոչ միայն վեց հազար զորք էին քերել,
այլև շահական հրովարտակ՝ քաղաքի Հայությանը լիովին
կողոպտել, մինչև վերջին ուղը հագաքել և ուղարկել իրեն՝
շահին։ Այս, տեր ասուված, այս ի՞նչ նոր ազետ հղեցիր մեզ,
մեր ո՞ր մեղքի համար։

Նախիջևան քաղաքից մի քանի փախստական Հայեր ըն-
կան Շաղկերս։

— Օգնեցե՞ք։ Հեյդար Ալի խանը մեր իշխաններին բան-
տարկել է՝ Խարիսկմոսին, Աստվածատուրին, Բոլորին։ Բըռ-
ել է նաև քաղաքի Հայ վաճառականներին, արհեստի տերերին,
տոհմավագներին։ Շահը վեց հազար զորք չէ, վեց հազար
զազան է մտցրել քաղաք։ Շահը խանին քըս է տալիս ձեր զեմ՝
ոչնչացրու Երնջակն ու Գողթանը։

Իմ ծնկները կարծես կորտեցին։

Ծուտով Հայտնի գարձավ, որ Զենդ Քերիմ շահը Պարս-
կաստանի արևելքից ու Հարավից մահմեդական անհամար
ցեղեր է անցկացրել Երասխը ու տեղավորել Նախիջևան քա-
ղաքում և նրա շրջակայթում։ Իրավիճակը այնքան լարվեց, որ
բոլորիս թվում էր, թե ահա-ահա երկինքը կփլվի։ Ամեն

ինչ կատարվեց զարմանալի արագ։ Հիմա այս ի՞նչ եղավ, ինչ ստացվեց։ Մեր մեծ Հայստանից, որի կեսն է մնացել մեզ՝ ինքն իրեն, իր վաղեմի իշխանապետությամբ, երկինքը լիովին խռովել է։ Մի՞թե եղածն էլ պիտի կորցնենք։ Ես ձեռքերս կառկառում էի աստծուն։— Լուր մեզ օգնություն, տե՛ս։

Բայց երկնքի ականջը խուզ է, աշքը կույր՝ թան կերած շան նման, համենայն դեպս այդպես է մեզ՝ հայերիս համար։

Հովհաննես Խանդամիրյանը կատարյալ ուազմունակ զորք էր ստեղծել։ Նայում ես, հպարտությունդ լցվում է աշխարհով մեկ։ Զորքը զնդերի է բաժանել, զնդերը՝ հարյուրակների, տասնյակների։ Այնպիսի հրամանատարներ ունենք, որոնց նույնիսկ փռանկի Կառլոս Մեծը կնախանձի։ Բայց ահա այդ փոքրաթիվ, աղնիվ ու ինքն իրենով գոհացնող զնդերի վրա ահռելի ուժեր են հավաքվում՝ գրոհելու՝ սև ամպ ու թուխպ, ուզտերով, թնդանոթներով, հղփացած խաներով։ Եղ շատ, շատ՝ անապատի ավազը քեզ օրինակ։

Հետագայում, ոչ շատ օրեր հետո, այլ գրեթե նույն այդ ժամանակ, մեր Թումա հարյուրապետին հաջողվում է ծագրաված պարսիկ զինվորի կերպով թափանցել գծոխք զարձած երբեմնի շեն ու շքեղ նախիջևան քաղաքը։ Ահա թե ինչեր պատմեց նայ նախիջևան քաղաքի սուրբ Գևորգ եկեղեցին բանտ են դարձրել։ Հեյդար Ալի խանը հրամայեց բանտարկված հայ իշխաններին ու տանուտերերին հանել բակ։ Բարձր պարիսպների շուրջկալի մեջ ենք։ Երկաթե ծանր գռները փակեցին։ Սուրբ Գևորգի զանգակատան գերաններից մարդիկ են կախված՝ շար ուրբած թոկերով։ Ես սարսուցի։ Այս զրանք քահանաներ են, նաև ծանոթ վարդապետ կա՝ լեզուն հանած։ Դանզին սև ագռավներ են թառած ու կտցում, պոկում են լեզվի միաը, ծրառում խաչքարերի վրա։ Բանտարկյալներին հանեցին։ Նախ նկատեցի Խարիսխմոս իշխանին։ Հազիվ ճանաշեցի, գրեթե մերկ էր, մարմնին այնքան զերքեր, որ շես համրի։ Գլուխը կնդած էր ու ամրողովին արյան մեջ։ Աշքերից մեկը բութ գործիքով հանած էր։ Նրա ձեռքերն անզոր կախվել էին, զլերը կտրած ոշխարի ոտքեր։ Երեսում է զահիճը հոգերը ոլորելով՝ ձեռքերը արմունկներից հանել է։

Նրա մոտով հազիվ քայլում էր նրա պատանի որդին՝ նույնական խոշտանգված: Աստվածատուր իշխանի քիթը, ականջները, շրթունքները կտրտված էին ու արյունը թարախել էր: Նա հենվել էր իր եղբոր ուսին ու մի ոտքի վրա հազիվ էր ցատկուում: Նա կում արած արյունը թրեց Հեյդար Ալի խանի ուղղությամբ, բայց նա հեռու էր ու թուրք շհասավ: Խարիսխմութիւնը որդին ծնկեց հոր առաջ ու աշքերը չուց: Նա մեռնում էր: Երկու մոլլա տղային պոկեցին զետնից, շտապելով թլպատեցին:

— Մեռիր իսլամի հավատով:

Բայց նա մեռած էր: Մեռածին թլպատեցին:

Կալանված քահանաների մորուները խանձեցին նավթի կրակով: Այնպիսի հոտ ընկավ եկեղեցու բակը, որ պարսիկ խաները ետ-ետ գնացին ու բռնեցին քթները: Խարիսխմութիւնը խոպոտ գոռաց:

— Միննույն է շուն Հեյդար Ալի, զու մեզ շես կարող սպանել:

Նրա փորբ շիկացած շամփում խրեցին:

— Զես կարո՞ղ:

Հայերի միջից մի ծերունի դուրս եկավ, որին շնանաշեցի: Նրա ծնոտը զարդած էր, երկու բազուկները ևս:

— Ու, ո՞ւ, ո՞ւ...— արավ նա ահեղ առաջանալով դեպի Հեյդար Ալի խանը:— Ո՞ւ...

Մեկը նրա թիկունքից ծանր քար շպրտեց խանի կոզմը: Բայց քարը կպավ թթի ծառին ու ընկավ աղմուկով: Սառից շոր տերեններ թափվեցին: Բնի կեղերը քերծվեց ահազին տեղ ու երեաց ծառի ոսկորը:

Երունուն և քար խփողին վառեցին:

Պարսիկ զինվորները բրերով, սրերով սկսեցին կոտորել խոշտանգված, այլակերպված հայերին: Զինվորների մի ուրիշ խումբ կողքի տաճարից հանեց հինգ, թե վեց հարյուր հայ կանանց ու աղջիկների, մերկացրին նրանց, ու սկսեցին պըղձել հենց մեռնող ամուսինների ու եղբայրների առաջ:

Խանը խրինջում էր ձիու պես: Մյուս խաներին ասաց՝ բհտրեցեր դրանցից, այդ կիներից ում կուղեր: Պետք կգան: Եին են, լէ:

Այս եղեանը ես իմ աշքով տեսա: Այդ օրը երկի վեց-յոթ հարյուր մարդ սպանեցին խաները:

— Մենք այնպես կանենք, որ Նախիջևանում այլնս մի հայ չծրտի: — Դուռը էր Հեյդար Ալի խանը: — Չծրտի...

Թաղաքում տաս հազար հայ ընդունել են իսլամի դինը: Ո՞վ տեր աստված, և դեռ հայեր կան մեր մեջ, որ ասում են հաշտվենք այս գաղաների հետ: Ի՞նչ ստոր բան է մարդ արարածը: Ողորմի՛ քեզ, հայի Նախիջևան քաղաք:

* * *

Հովհաննես Խանդամիրյանն ինձ ուղարկեց Ձուղա: Ուրմիայի Փաթ Ալի խանը ևս գալիս է Հեյդար Ալուն միանալու: — Դու ինչո՞ւ ես գալիս վրաս, Փաթ Ալի խան, — Հանձնարեց նրան ասել: — Չէ որ ես քո նկատմամբ թշնամություն չունեմ: Մտածիր, ես կանցնեմ մեծ գետն ու քո աշխարհը մոխիր կանեմ:

Փաթ Ալին թթված նայեց ինձ, լսեց խոսքս: Հոհոաց՝ սատկած լիշտ տեսած գալի պես:

— Երնջակն ու Գողթանը պարսից շահը նվիրել է ինձ: Ես գալիս եմ ձեզ քշելու իմ տիրույթներից:

Այսպես ասաց: Ես նրա ասածը հաճախ կրկնելով, ետքարձա ու հաղորդեցի Հովհաննես Խանդամիրյանին: Ասպարագ տիրինը ձեռքը բարձրացրեց ամուսնու վրա:

— Կանիծեմ քեզ, եթե երկնշել ես, եթե աշք ես թարթել ահից: Քո գիտակը կուզեմ տեսնել, քան քո երկյուղը:

Խանդամիրյանը հեզ համբուրեց նրա ձեռքը:

Աշնանային օրերը բնավ էին սթափվում շոգից: Հովհաննես Խանդամիրյանը Շաղկերտի ու շրջակա գյուղերի ժողովրդին քաշեց, պնդացրեց մոտիկ Երնջակի բերդում, որ լավ նորոգել էր դեռ մի ութինը տարի առաջ: Նա զորքի զլուխն անցած շեշտակի մտավ Ատրապատական՝ Ուրմիայի խանի տիրույթները և այնտեղից այնքան հաց-ալլուր, ձեթ, անասուն բերեց լցրեց Երնջակի բերդը, որ տաս տարի բավական էր իր ժողովրդին: Զուկեցին նաև երեք նոր թեզանոթ ու պղնձե շատ ոռուրեր: Սպասում ենք խաների միացյալ բանակի հարձակմանը: Իսկ դա շուշացավ:

Ագուլիս քաղաքի աշխարհազորի գունդը՝ լավ հազնված ու զինված տղամարդիկ, նաև հոգևորականներ, բռնեցին Արաքսի Քարավազի անցումը՝ թշնամու հավանական հայտնը կելու դեմ: Ես այցելեցի նրանց ու ագուլիսցիները ինձ վրա սպառիչ տպավորություն թողին:

— Կմեռնենք մինչև վերցին մարդը, — ասացին նրանք: — Սակայն չենք ենթարկվի թուրքին, պարսիկին: Պատանքներ պատրաստիր մեզ համար, խոզա Արքահամ:

Պարսից թագավորի ուխտադրժությունը մեզ՝ հայերին ինչ-որ չափով հանեց թմրությունից: Մենակ Ագուլիսը չէր, ամեն գյուղ իր զորախումբն ստեղծեց ու շտապեց Շաղկերա: Այլևս ոչ ոք չէր մտածում իր մասին՝ կապրի¹, թե՝ կսպանվի:

Պարսիկների ու Դողու Բայազետի թուրք փաշայի միացյալ զորքը Գողթանի ու Երնջակի վրա հարձակում սկսեց Ցղնա մեծ ավանի կողմից: Մերոնք թնդանոթներով հարվածեցին նրանց աջ թևին: Դեմ դիմաց կանգնած, գետնի մեջ խրամված հակառակորդ կողմերը կարծես չէին էլ նկատում միմյանց: Խփում էին թնդանոթներով, հրազենով: Պարսիկները, ինչպես ասացին ինձ, քսանմեկ թնդանոթ ունեին:

Լուսաբացին Շաղկերտի դարպաներից գուրս հոսեցին Հայոց դրոշակակիր գնդերը: Նախ հեծելազորի երկու գունդ դուրս եկավ ու սլացքով գնաց թշնամու հետևակի վրա: Աջից ու ձախից զրոհեցին աշխարհազորային խմբերը: Արաքսի Քարավազի կողմից եկավ Ագուլիսի գունդը ու մտավ մարտի մեջ:

Բախումը շեշտակի էր: Խաները փորձեցին դիմադրել, սակայն նրանց կուտակ զանգվածների վրա թափվեց մեր թնդանոթների կրակը: Ես զարմացա, թե ինչու թշնամին թքնդանոթներով չի խփում մեզ: Սակայն սարզվեց, որ այդ թնդանոթներն այլևս չեն գործելու: Դիշերվա կեսին Շոռոթ գյուղի աշխարհազորը՝ երեք հարյուր հոգի, զաղտագովի մտել է թշնամու թնդանոթների դիրքերը: Մրերով խողխողել են թնդանոթաձիգներին, թնդանոթները ոչնչացրել:

Նախ խուճապվեց թուրքական հետևակը: Հայոց հեծելազորը շեշտակի հարվածեց նրան, երկեկիսեց ու սկսեց բրդեր Երեկոյան կողմ Ցղնայի մատուցներում այլևս թշնամի լմնաց: Հովհաննես Խանդամիրյանը հրամայեց փախչողեն-

րին հետապնդել մինչև Նախիջևան քաղաք ու վերադառնալ: Այդ գործին ուղարկեց նաև Բիստ գյուղի հետևակ աշխարհազորը: Պարսից բանակը ջախջախվեց գրեթե գլխովին: Փոսերում, ձորակներում, քարերի տակ, արտերում դիակը դիակի վրա էր ընկած: Ուր նայում էի, լեշ էր: Անդքերի, բազեների, արժիվեների երամներ երևացին ու սև ամպերի պես սկսեցին պտտվել լուս ուղմագալտի վրա: Պարսիկների անտեր թողած ձիերի մի քանի երամակ խելացեղ սլանում էին նեղ ձորահովտի մի ծայրից մյուսը: Մերոնք արկաններով բռնեցին ձիերն առաջնորդող հովատակներին ու դարձան երամակների տերը:

Հավաքեցինք դաշտում թափված զենքը: Խաների ու թուրք մաշայի վրանները պոկեցինք, բեռնեցինք ուղտերի: Հովհաննես և անդամիրյանի հրամանով ազարը, մինչև վերցին փամփուշան ու դաշույնը կուտակեցինք Եղակերտի եկեղեցում: Դա պետք է բաժանի շինական աշխարհազորին:

Հայոց զորքը պաշարեց Նախիջևան քաղաքը: Շանապարհներ նրան միացան Եռոթ գյուղի աշխարհազորը՝ Աղամալի որդի պարուն Աղեկանորի գլխավորությամբ և էլի գյուղական խմբեր: Թաղաքի արվարձաններն իսկույն դատարկվեցին: Հեյդար Ալի խանը իր զորախմբով փակվեց միջնարերդում, որ մի բարձր բլրի վրա էր, հաստ պարիսպներով, աշտարակներով: Հայերը վիմակործան սարքը հրեցին առաջ, մուհեցրին պարիսպներին: Վերևում թառած պարսիկ զինվորները սկսեցին քարյուղի քրծերով կրակ թափել ցած: Սակայն գա իսկույն մարտում էր՝ լինելով հրեշի թաղիքի թաց մեջքին: Հայերը թնդանոթներով սկսեցին խորտակել հաստարեստ պարիսպը: Փայտե վիթխարի տնակի որովայնում, թեղանոթների հետ թաքնված հրացանակիրները զնդակահար էին անում պարիսպների վրա երևացողներին:

Պատը սկսեց զզրդոցով քանդվել:

Պարսպի գլխին երեաց Հեյդար Ալի խանը՝ զրահների մեջ, գոռոսոց, հոխորշացողը Մի տասնապետ սողոսկեց պարսպի և զրից ներս: Քիչ հետո պարսպի գլխից նա գոռաց:

— Ծնդունիր Հեյդար Ալու ջանդարը, զորապետ:

Նա պարսպի գլխին երեաց միայն մի ակնթարթ: Թափով յառակ ներքն՝ փլամագած քարերի վրա, գրելում Հեյդար Ալի խանը:

Խանը այնպես ջախչախվեց, որ զլուխը թռավ մի կողմ, մարմինը՝ մի այլ: Հայերը ոռումքերով սկսեցին պայթեցնել պարիսպը՝ ներս խուժելու համար: Ահա, ահա անցքը կլայանանա:

Կեսօրին մոտ էր Բոլորովին անսպասելի թնդանոթի երեք շորս ոռումք թիկունքից սուրալով ընկան հայերի վրաւ Հովհաննես Խանդամիրյանը ցնցվեց՝ ո՞վ է իրենց թիկունքից խփում: Խնձէ, ի՞նչ է: Վերջնապահ ջոկատներից մարդիկ վազեցին եկան:

— Պարսից մի նոր բանակ նստեց մեր թիկունքին, — գուծեցին նրանք: — Բանակը առաջնորդում է ինքը՝ իրանի թագավոր Զենդ Քերիմ շահը:

Ամեն ինչ շրջվեց զլխիվայր: Իսկ հաղթանակն արդեն մեր բռան մեջ էր: Հայոց զորքը զլուխը դարձրեց ես: Հովհաննես Խանդամիրյանը հեծելազորի իր փոքրիկ խումբը շեշտակի տարավ պարսից բանակի վրա: Անօրինակ թոհշըով հեծելախումբը միսրճվեց գաշտը զանգված-զանգված բռնած թշնամու բանակի խորքը: Ազ ու ձախ սրահարելով, Հրացաններից կրակելով հայերը հասան բանակի միջուկին, որի մեջ տեղում արքայական վրանն էր: Գրա առաջ, մեծամեծերով շրջապատված կանգնած էր իրանի նոր թագավոր Զենդ Քերիմ շահը: Հովհաննես Խանդամիրյանը զոռաց:

— Դու պիտի սատկե՛ա, շա՛հ: Սոո՛ր...

Հայերը Հրացաններից կրակ տեղացին: Պարսիկներն իսկույն շրջափակեցին շահին՝ տասնյակներով ընկնելով հայերի գնդակներից: Արքայական թիկնապահ զորախումբը, որ երև հազար Հրացանակիրներ էին, չորս կողմից վրա տվին, սեղմեցին հայերի փոքրիկ խումբը, որ շատապում էր զեզի արքան: Մեկիկ-մեկիկ ընկան բոլոր հայերը:

Մայրամուտի կարմիր բոցերը թանձրացան: Սանր վիրավոր Հովհաննես Խանդամիրյանը վերցին շնչում գոշեց:

— Ա՛խ, զժրա՛խտ Հայաստան: Սպանվո՞ւմ ես...

Գիշերը, լուսնի դեղին վարագույրը պատռելով, ես գտա Հովհաննես Խանդամիրյանի մարմինը: Երնջակի կիսավեր եկեղեցու բակում ես փռու փոքրեցի, նշխար դրի նահատակի բերնում ու իշեցրի գերեզման: Ես բուռ-բուռ հող լցրի նրա վրա: Հետո կրծքովս, հետո մարմնովս...

Հեռացա լուսաբացին:

Արևը խավարել էր Գողթանի վրա: Նաև Երնջակի վրա: Նաև ողջ Հայոց Նախիջևանի վրա: Բայց մի՞թե վերջին գերեզմանը օծեցի ես: Այս, անողորմ աստված: Շտապեցի Քրաբերդ: Ի՞նչ անհօվածն ու դժբախտն եմ ես: Այսր ահա նորից սև լուր եմ տանում:

ԳԱՐԻԿ ԱՐԲԱՐԴ

Ջրաբերդը մեռելատան էր նման:

Գայթելով շտապում եմ գերագահ իշխանի մոտ, անիծում ինքս ինձ: Նորից սև լուր եմ բերել ախր: Մակայն ի՞նչ կարող ես անել, այսպիսին է տիրոջ սահմանածը: Հղոր կամարներով ապարանքի շքամուտքը կարծես փլվեց զլխիս: Մելիք-Աստվածապով իշխանը դուրս է եկել: Ինձ դիմավորելո՞ւ Ո՞չ, ես արժանի շեմ նման պատվի: Նա երևաց Ներսես կաթողիկոսի, Թուրի Արզումանի ու էլի մի քանի զորապետի հետ: Ո՞չ, մի՛ զառանցի, ասացի ինքս ինձ, ինձ դիմավորելու շեն դուրս եկել, պարզապես ինչ-որ տեղ են շտապում: Ես մոռացա նույնիսկ բարեկել, բերանս միջից երկու անել, որ ծանր լուրը հայտնեմ: Գերագահն ինքը զլուխը թափ տվեց:

— Գիտե՞մ: Գիտե՞մ: Սև բոլը լույսից էլ արագ է հասնում: Երնջակը կործանվել է: Գիտե՞մ: Հովհաննես հանդամիրյան իշխանը սպանված է:

Ողջ օրը ես անցկացրի նրա զինվորների հետ: Կարծես մեռած էի: Չորս կողմից, ինչ խոսք, նաև երկնքից կործանիչ փոթորիկներ էին շրջապատել Հայոց աշխարհը: Մի բուռ հպարտ աշխարհ՝ իր լեռներին ապավինած մի քաջարի ժողովուրդ, սակայն ընկած աստծու աշթից:

Ամեն երեկո, ժամերգությունից հետո, իշխաններն ու զորապետները հարվաքվում էին ի մի՝ խորհրդի: Ես նկատեցի, որ Ներսես կաթողիկոսը հակված է Փանահ խանի հետ հաշտվելու մտքին: Այդ միտքը, երևում է ծագել է շատերի մեջ ու Քրաբերդ խուժել Երնջակի անկման հետ:

— Զենդ Քերիմ շահը արշավում է Հայաստանի բոլոր կողմերը, — մի անգամ բոլորովին անգերապահ ասաց կաթո-

զիկոսը: — Երնջակը, Նախիջևանը, Երևանն ու Կարբին արդեն
հպատակվել են պարսիկին:

— Ասելդ ի՞նչ է, վեհափառ, — Հարցրեցի ես:

— Եարգա ու Բարգի խաները ընդունել են Զենդ Քերիմի
գերիշխանությունը: Երանք ևս զորքեր են կուտակում մեզ
վրա գալու:

Մի առավոտ, երբ գնացի գերազահ իշխանին սրարի լույս»
ասելու, Նրա մոտ տեսա Փանահ խանի սուրճանդակ մեկին:
Շուշգա խանը հաշտություն էր առաջարկում: Այս անգամ
գերազահը Նրա բանբերին դուրս շարեց իր տնից, ինչպես
արել էր մի քանի անգամ:

— Մի՛ շտապիր, — ասաց նա խանի մարդուն: — Որոշողը
ինքս եմ, ոչ դու:

Ես հասկացա, որ գերազահը հակվել է հաշտվելու: Չգի-
տեմ, ու ինձ ուրախացրե՞ց, թե՝ հակառակը: Բայց ինչ-ոք
դառը կոշտուկ դեմ առավ կոկորդիս: Փորիցս ճիշ ելավ մինչև
բերանս: — Նման միամտություն մի՛ անի, իշխան: Մի՛ մո-
լորվիր, հա՛յ: Բայց միտքս մնաց մեծս, շկարողացա հայտնի
անել, գոռալ, ճշալ: Կամեցա կասկածս ասել գերազահի եղ-
բորը՝ Արով հարյուրապետին, սակայն նա տանը չէր, կեռք
ու մի երկու մտերիմների հետ մեկնել էր Երևանի Մաքենա-
ցոց ովհատը: Ժամանակ գտավ...

Չորս, թե հինգ օր հետո Մելիք-Աստվածապով իշխանը
Փանահ խանի մարդուն ասաց, թե բանակցությունները կա-
նենք Ամարասի վանքում, գալիք չէ, մյուս շարաթ օրը առա-
վույան: Խանը պետք է գա միայն Մելիք Շահնազարի ու
քեզ հետ, միրզա՛:

Միրզան պատշաճից ավելի խոր զլուխ տվեց, երես ցըն-
ծությունը թաքցնելու: Գերազահի ձայնը անզիջում ու հրա-
մայական հնչեց:

— Մեր հանդիպումը պետք է զաղտնի մնա նույնիսկ ասա-
ծուց:

* * *

Նշանակված օրվա նախօրեին, մի մոայլ երեկո, Մելիք-
Աստվածապով իշխանը մեկնեց Ջրաբերդից՝ միայն ութ ձիա-
վորի, նաև ինձ հետ:

Գնացինք:

Ամարասում մեզ դիմավորեց հսրայիլ սրբազնը: Հեզ ողջունեց գերագահ իշխանին, բանի տեղ չդնելով ինձ:

— Վերջապես կխաղաղվի մեր աշխարհի փոթորկոտ երկինքը, — ասաց նա իշխանին: — Թշնամությունը երբեք պրադարեր չի եղել: Ողջունում եմ, տեր գերագահ, որ ընդունում ես քեզ պարզած ձեռքը: Պետք է վերջնական հաշտվել թե՛ խանի, թե՛ Մելիք-Շահնազարի հետ: Դա է մեր ազգի շահը:

Ամարաս էր եկել Փանահ խանը՝ Մելիք-Շահնազարի ու ինձ ժանոթ միրզայի հետ: Փանահը զուգված էր արքայական շուրով՝ ողիսին կարակուլե բրգածն փափախ, զագաթը՝ փոս: Նրա կոշիկները կարմիր էին, մի բան, որ միայն թագավորներն էին կրում: Նա թուխ, նոսր, բայց երկարավուն մորուք էր սահում, որ երբեմն ծալթլվելով խաղում էր կարմիր կապայի օձիքի վրա: Նրանից ոչ պակաս շքեղ էր հագնված Մելիք-Շահնազարը: Միայն սա մորուք չէր պահում, այլ՝ երկար, կոշտ քեզեր, այտերն ու ծնոտը խնամքով սափրած էին:

Մենք իշխանը ձեմքից: Վաերի արեգաները գոլ ջուր լցրին գերագահի ձեռքերին: Լվացվեց օճառով, արքվեց: Խանն ու Մելիք-Շահնազարը հարգանքի այց արին գերագահին, խոնարհ ողջունեցին նրան, մեկը Քրիստոսի կարգով, մյուսը՝ Խոլամի: Աստվածապով իշխանը շրաբճացավ տեղից, կես բերան պատասխանեց նրանց ողջունին:

— Երեկո է, — ասաց նա, — իսկ երեկոն սատանայինն է: Մեր զրույցը կկայանա առավոտյան, լուսո բարության մեջ, որ մեզ կշնորհի բոլորիս միակ տերը:

Ես հսրայելին ասացի, թե ամեն գեպքում համաձայն եմ, որ խանն ու գերագահը հաշտվեն: Հարցրի՝ դու որևէ վտանգ չե՞ս տեսնում այս գործի մեջ:

— Ի՞նչ վտանգ, բարեկամս, — հսրայելը երեսին խաչ հանեց: — Վտանգ չկա: Այս հաշտությունը օգտակար է մեզ:

Ես հարցրի՝ ի՞նչ ցեղի սերմ է Փանահը՝ պարսի՞կ է:

— Ոչ:

— Թո՞ւրք, թաթա՞ր:

— Ոչ, ոչ, — վտանգ պատասխանեց եա: — Ինքը երբեմն տառմ է Սարքալու եմ, երբեմն՝ Զիվանշիր, եակ՝ Կարափափախ: Հավանական է վերջինս:

Կարափափախս քոշվոր ցեղը գիտեմ, թափառում է Ատըր-պատականում, Երասխի գետի այն կողմերին: Հայատանին հարևան է: Այդ երկրում երևացել է մի հիսուն-վաթսուն տարի առաջ՝ հեռավոր Թուրանից:

— Ես հավատացած եմ, որ իշխանը գտնվում է վատահելի ձեռքերում՝ քո տանը, տեր Խորայիլ:

— Հանգիստ կարող ես մնալ խոզա Արրահամ, — նույնիսկ թիւ-ինչ նեղացած ասաց Խորայիլը: — Դերագահը նաև իմ իշխանն է, իմ բարեկամը: Մենք լիովին հաշտվել ենք:

Այնուամենայնիվ ինչ-որ կասկած մնաց հոգուս մի հեռավոր ծալքի մեջ, որ գնալով ուղղում է:

Տեր-Խորայիլը, որ հիմա Արենելից հայոց կաթողիկոս է նստած Ամարասի վանքում, վայելում է Մելիք-Շահնազարի, նաև, ինչ խոսք, նրա բարեխոսությամբ, Փանահ խանի խնամքըն ու առատ հովանավորությունը: Նա նույնիսկ իրեն դուրս է դրել հայոց արենելյան եկեղեցու գահակենտրոն Գանձասարից, որի կաթողիկոսն իր պատի եղբայր Տեր-Ներսեսն է, արդեն հարյուր տասնմեկ տարեկան: Տեր Խորայիլն իր առաջնորդարան գահասենյակը զուգեց շքեղ ու խնամքով: Երկու գահավորակ, որ երենոսյան փայտից են ու, երեսի ութիւնը հարյուր տարվա, դրեց հատակին պարզած տաք գորգերի վրա՝ զեմ դիմաց. մեկը խանի համար, մյուսը՝ գերազահի: Մյուս պատվիրակները, նաև Մելիք-Շահնազարն ու Խորայիլ կաթողիկոսը մնացին ոտքի: Գրեթե միասին մի դռնից ներս մտավ Աստվածապով իշխանը, մյուսով՝ Փանահ խանը: Խանն սպասեց, որ նախ իշխանը նստի: Բանակցության առաջին հանդիպումն անհամ էր՝ փոխադարձ ողջուններ, անցյալը մոռանալու խրատ-խոստումներ: Երկրորդ հանդիպումը կայացավ այդ օրվա երեկոյան: Երբ եկեղեցում կարգ էին կատարում, Մելիք-Աստվածապով իշխանը կաթողիկոսին հարցուեց:

— Դու, տեր Խորայիլ, հավանում ես մեր բռնած այս զորքը:

— Անշուշտ, — ասաց կաթողիկոսը օրհնության հանգով: — Դու իմաստուն վարպեցիր, տեր գերազահ: Միշտ էլ թշնամու հետ հաշտվելը օգտակար է: Մեր՝ հայերիս վիճակը, անշուշտ, ինքդ էլ տեսնում ես, որ գնալով դառնանում է, ուրեմն, ում վրա հույս դնենք, եթե ոչ հարեանիդ՝ լավ է, թե վատ: Պարս-

կաստանը նորից հզորացել է, նրա թագավոր Զենդ Քերիմ շահի սարսափը աշխարհիս կեսը ծունկի է բերել:

— Պապիդ եղբայրը՝ տեր Ներսեսը զառամյալ է: Էսօր-օգուց նա, երեխ, չլինի, կհանգի ի տեր: Ուրեմն, հեռու չէ այն օրը, երբ դու միացնես մեր երկու կաթողիկոսությունը և քեզ համար փառավոր գահ գարձնես Գանձասարը:

— Օրհնվես,— ասաց Իսրայելը:— Ինձ համար՝ ոչ, այլ նրա համար, որ օգտակար ես մտածում ազգի ու Հայաստանի համար:

* * *

Բանակցությունները վերսկսվեցին: Մելիք Աստվածապով իշխանը գահավորակին նստած էր վեհ, հանգարտ: Առնելով իշխանի ու Մելիք-Շահնազարի երեկոյան ողջունը, խոսեց կարուկ:

— Մեր հաշտության պայմանը սա է, Փանահ խան: Հայոց Գերագույն գահաժողովը քո խանությունը, այսինքն՝ քո իշխանությունը ընդունում և ճանաշում է միայն Հայաստանի սահմանից գուրս...

Խանը ցնցվեց: Մելիք Շահնազարը ինչ-որ խոնչաց՝ երկար սուլելով: Գերազահը բանի տեղ շզրեց ո՛չ առաջինի ցիցվելը, ո՛չ էլ երկրորդի մոնշոցը, շարունակեց նույն հանդարտությամբ:

— Քո իշխանությունը, խան, Հայաստանը կմանաշի միայն պարսից Ատրպատական աշխարհի այն լեռներում, ուր քո քեղերն են:

— Ինչպե՞ս,— տեղը տնկվեց խաեր:— Հապա Շուշի³, Ղարաբաղը⁴:

— Դու, խան, ոչ մի իրավունք շունես Հայաստանի ո՛չ Շուշի քաղաքի, ոչ էլ Ղարաբաղ գավառի վրա: Ոչ մի, դա քո հոգերը չեն:

— Դոնե Շուշի քաղաքը ճանաշեցեք իբրև իմ սեփականություն:

— Երբեք:

— Շուշին ինձ է նվիրել նրա օրինական տեր Մելիք-Շահնազարը, իբրև ինձ համար տուն ու բնակություն, — ասաց Փանահը ատամները կրմտելով:

— Կրկնում եմ, — ասաց գերադահը: — Կրկնում եմ, Փառահ խան, Հեռացիր Հայաստանից ու զեա քո բռլվոր ցեղերի թափառավայր Աստրպատական: Այդ գեղքում մենք՝ Հայերս խոստանում ենք քեզ հետ ապրել բարի հարևանությամբ ու խաղաղ:

Խանը գոմոաց.

— Ուրիշ:

Աստվածապով իշխանը վեր կացավ:

— Ուրիշ պայման չկա: Չի լինի:

Նա դիմեց դեպի սրահի դուռը: Սակայն հենց այդ պահին, կողքի սենյակից ներս թուավ խանի երկի բսան-երեսուն զաղաղած մարդիկ, նաև տանուտեր Միրզեխանը ու թափվեցին գերազահի վրա: Ես փորձեցի սուրս հանել ու օգնության հասնել իր վրա թափվածների դեմ կռվող զահերեցին, սակայն ետեղից մեկն ինձ քարշ տվեց, հանեց սրահից ու հրեց գեղի արտաքին դուռը:

— Փախսի՞ր...

Տանուտեր Միրզեխանի տիկինն էր՝ Երնջիկը: Ետեիցս լսեցի Մելիք-Աստվածապով իշխանի մոնղոցը:

— Ղարաբաղն են մորթում...

Ես՝ Արքահամ Երևանցիս վկա եղա այդ ստոր եղեռնագործությանը: Ետապեցի Ջրարերդ: Դուցե թե օգտակար լինեմ զիխատվող ազգիս: Հասել էի Թարթառ գետի հովիտը, երբ անսպասելի դեմ առա Աղամ բեկին՝ կողքին, ձիու վրա՝ կինը: Ինըր առաջինը ողջունեց ինձ:

— Բարի տեսանք, խոչա Արքահամ:

— Մեր բարին խավարեց, — ձեռքերս թափահարեցի ես: — Ետապենք: Ետապենք Ջրարերդ...

— Եղբար...

— Այս, նա:

— Մեռար...

— Ընկավ Փանահ խանի թակարգը...

Զիարշավ անցանք Թարթառի մյուս կողմը: Աղամ բեկը երրեմն ձեռքով հարգածում էր իր զիխին:

— Ա՞խ, եղբա՛յր, եղբա՛յր: Ինչո՞ւ գառան մոլորությամբ զեացիր մտար զայլերի որջը:

Աև ու սուգ օրեր են:

Նախիշնանը զավթած խանը մեծ շուքով եկել է Շուշի
Փանահ Ալուն շնորհավորել՝ հայոց իշխանապետին սպանե-
լու առիթով: Մի փոքր ավելի ուշ իմացանք, թե Սպահանում
ինչպիսի ստոր դավեր են նյութում Հայաստանի գեմ: Պարսից
արքունիքում շնթուկած Անգլիայի ու Ֆրանսիայի դեսպանները
անվերջ գրգռում են Զենդ Քերիմ շահին ու նրա խաներին՝
մեր գեմ: Անգլիան ու Ֆրանսիան միմյանց կոկորդ են կըր-
ժում: Բայց երբ Հայաստան են հիշում, թքում են իրար բե-
րանում: Միմյանցից ոսկոր են թոցնում: Բայց երբ հայերիս
բարեկամ ուստի, նուսաստանի խնդիրն է մերտեղ գալիս, բրի-
տանական թագավորն ու ֆրանսիական կայսրը միանում են:
Նրանք ամեն կերպ խանգարում են, որ ուստի ոտք զնի Արևել-
քի ճամփաներին: Այս երեքի արանքում մենք ենք տրորվում:
Սպահանի, Թավրիզի ու Շիրազի հայ հարուստները կաշառել
են շահի ներքինապես կիզլար աղասուն, շահի մորը, նույնիսկ
բարձրագույն դատավոր դիվանքներին, էլի խաների ու պա-
լատականների՝ խափաններու շահի արշավանքը Հայաստանի
վրա: Բան չի ստացվել: Մեծ վեզիրը անգլիացոց ձեռքին է,
շահն էլ մեծ վեզիրի ճանկերի մեջ է: Անգլիացիները իրենց
շունն են դարձրել նաև շիա կրոնի առաջնորդ Սյուդդեր ու-
Սուլդարին:

* * *

Տանուտեր Միրզեխանը, արիւսապան եղավ, Փանահից
մելիքություն ստացավ ու ատելի դարձավ ողջ հայությանը,
Մելիք-Շահնապարից ոչ պակաս: Նա իր տանը գրեթե շէր լի-
նում: Իր ստքերը քարշ էր տալիս Փանահ խանի հետ՝ նրա
զորքում կամ Շուշվա նրա ապարանքում: Իսկ երբ իր տունն
էր գալիս, ոչ թե ապրում էր իր ծնված գյուղում, այլ փակ-
վում էր վրանում, իր փոքրագունդ զորքի հետ:

Հիմա էլ իր տիրույթումն էր:

Գիշերը կարծեն անսպասելի եկավ: Ոչ մեծ վրանում մեն-
մենակ նստած գիշերաճաշ էր անում: Մնկածալ կռացել էր
տաք խաշլամայով լիքը պղնձի վրա, որ Փանահ իրնն

ապարախիկ խոհաբար-ժառան էր եփել: Մտքի մեջ իր ձեռքով ևս սպանված Մելիք-Աստվածապով իշխանն էր: Զղջան կամ ափսոսանքի որևէ զգացում չէր առաջանում նրա մեջ: Սակայն նեխած հոգում օձի պես երբեմն ահի, երկյուղի կծիկ էր գալարվում: Իշխանի որդին՝ Աղամ բեկն անշուշտ, իմացել է պատահածը:

Անսպասելի ամուսնու վրանը մտավ Երնջիկը: Միրզեխանը նրան ճանաշեց ոտքերից: Գլուխը կախ շարունակեց լափել իր կերը, մեկ-մեկ էլ պղնձե թասից շարքաթ խմել: Ինչո՞ւ է եկել կինը, ի՞նչն է նրան ստիպել տուն ու տեղ թողած ձիու թամրը հարել ու գալ: Իգության կիրքը՝ Հաղի՝ թե: Այս երեք տարվա ընթացքում, երբ ինքը մելիք դարձավ, հաղիվ երեք անգամ է հանդիպել նրան: Կինը ատում է իրեն, ինքը գիտի, խորշում է իրենից: Տանը, լսել է, մնում է իրրե սպառ: Տնեցիներին գրգռում է իր դեմ: Փոքր եղբայրը, որ քսան տարեկան է, սպասում է իր մահին, որ ինքը իշխանության տեր դառնա: Եվ ինչպես կինն իմացավ իր տեղը: Ինքը մի տեղ երկու-երեք օր չի մնում, անվերջ նստավայրը փոխում է՝ գալի ոհմակի պես, իր զորախմբով: Փոխում է, որ թշնամիները տեղը շիմանան: Իսկ կինն ահա եկել է:

Մելիք-Միրզեխանը գլուխը բարձրացրեց: Այս, դիմացը կանգնած էր կինը: Կարծես եկել է իրեն թաղելու: Աշքերից թույն է կաթում: Հանդուզն է:

— Ինչո՞ւ եկար, — մոլտաց՝ մսի համ զկրտալով:
— Եւ շէի կարող քեզ մենակ թողնել այս ծանր պահին, ամուսին իմ:

— Ի՞նչ ծանր պահ: Ի՞նչ է պատահել: Պորտս պատերազմի դաշտում է կապած: Պատերազմի սովոր եմ:

— Նաև դավաճանելու...
Մելիք-Միրզեխանը բազմաթիվ անգամներ է կնոջից նախատինք լսել՝ ինչու միացար Փանահ ավագակին, ինչո՞ւ հեռացար հայ իշխանների միաբանությունից, ինչո՞ւ, ինչո՞ւ... Սակայն այսպիսի կտրուկ սահմանում չէր լսել՝ «Նաև դավաճանելու»: Մի փոքր կարծես կորցրեց իրեն, ապա գոռաց:

— Ի՞նչ, ի՞նչ...
— Սթափվի՛ր, մա՛րդ: — Կինը ծունկի եկավ, որից նա կրկնակի ահեղ երեաց: — Սթափվի՛ր, զզաւ: Հեռացիր օտար,

թշնամի խանից, քավիր մեղքերդ՝ հայրենի իշխանության հետ միանալով: Զզա՞...

Մելիք-Միրզեխանը կապտեց մինչև ականջները:

— Ուրիշ:

— Միայն դա:— Կինն սկսեց աղերսել նրան, նույնիսկ համբուրեց նրա ստքը, փեշը:— Ետ կանգնիր բռնածք ստոր ճանապարհից, ամուսին իմ, մեղք ես, զավակներդ մեղք են, ես դժբա՛խտ եմ: Հեռացիր օտարի ժառայությունից, միացիր մեր ազգին: Աղաշում եմ:

— Բայց ինչո՞ւ դու համաձայն եղար իմ կինը լինել, երբ ատում ես ինձ:

— Հույս ունեի քեզ դարձի բերել, կտրել դավաճանության սկից ու փրկել հաշենը:

Միրզեխանը ատամները կրնտեց:

— Հեռացի՛ր: Չքվի՛ր...

— Դու դարերի անեծքն ես դնում իմ զավակների վրա:

— Էսի՛ր, լոի՛ր...

Կնոջ խնդրանքը դարձավ պահանջ, ցասում:

— Սթափվի՛ր, մա՞րդ: Աղաշում եմ՝ ետ կանգնիր բռնածք ճանապարհից:

— Հա՛, հա՛,— քրքչաց Միրզեխանը:— Քեզ քո Գոհար ազգավն է ուղարկել, իմ թշնամին:

— Ո՞չ, ինձ քեզ մոտ է բերել իմ խիզճը:

— Քո երակներում հովազի արյուն է եռում: Կթափե՛մ: Հեռացի՛ր...

— Երբե՛ք:

— Մի՛ ստիպիր, որ արյուն թափեմ,— ճշաց Միրզեխանը:

— Արյուն արդեն թափում ես,— անզիշում ասաց կինը:— Հայի արյուն ես թափում դու՝ դավաճան, ուրացո՞ղ...

Միրզեխանի կատաղությունը ուժգին խփեց զլխին, աշքերը մթեցին: Սառս եղավ տեղից, բռունցքները սեղմեց, որ հարվածի կնոջ զլխին, բայց հենց այդ ակնթարթում այրող ցավ զգաց փորի մեջ: Նրա ձեռքերը թուլացան, ցանկացավ բղավել, սակայն ձայնը կորած էր: Կինը դաշույնով խառնեց նրա փորոտիքը, դաշույնը դուրս քաշեց, սրբեց նրա կապույտ կապայի փեշով, որ խալաթ էր ստացել Փանահ խանից:

— Դավաճանի վերջն այս է:

Երնջիկ տիկինը դուրս եկավ վրանից, հեծակ ժառի տակ
հեղ կանգնած ձին ու նրա հետ խառնվեց զիշերալին խա-
զարին: Նրան հետեւցին իրեն ուղեկցած երեսուն ձիավոր-
ները, որ պահվել էին ամուսնու նստատեղից մի քիչ հեռու,
անտառի թանձրության մեջ:

Գիշերը խուլ ու խոժոռ թաղնել էր աշխարհի վրա:

* * *

Մութը խոժոռվում էր:

Մեր ետևին մեաց Զրաբերպը՝ բարձր ու աշուելի ժայռերի
վրա, կատարն արևի վերջին շողերից կարմիր: Կողքիս Աղամ
բեկն էր: Անվերջ շատապեցում էր զառիթափի կեռմաններով
հազիվ ընթացող ձիուն: Բավականին մեծ խմբով զնում ենք
մոտիկ Զրվշտիկ անապատը: Ես հենց այս կեսօրին հասա
Զրաբերդ, բեկին պատմեցի, թե իմ ոգբախտ ձեռքերով Զրվշ-
տիկում հողին հանձնեցի եղրոր մարմինն ու զլուխը՝ Հայոց
երկրի գերազահ իշխանին: Բեկը շտապում էր տեսնել եղրոր
գերեզմանը: Շուշիում Փանահ խանի մարդկանցից ստացա
սպանվածի մարմինը, զրա համար բավականին խոշոր գու-
մար վճարելով:

Դեռն անցնելով, մի փոքր ևս առաջացանք Մոռվ լեռան
խորերում: Աղամ բեկը ինձ հարցրեց, թե ինչու զիակը շքերիր
ամրոց, թողեցիր ցածում: Ասացի նախ սաստիկ տառա-
պեցի արդեն բայքայլող զիակը բերելով: Ապա առ ունեի
Մելիք-Շահնազարից: Նրա մարդիկ հետապնդում էին ինձ...

Կիրճի նեղ լեզվակի վրա Աղամ բեկի ապուպապերի բարայր
գամբարաններն էին: Անդունդի խորքից հազիվ էր լսվում
Զրվշտիկ գետակի մոնչոցը, որ զալարվելով զնում էր դեպի
Արցախի մայր գետ Թարթառի զիրկը: Անցանք անդունդի
վրա խոնարհված մի նեղ լեռնաբազուկ: Գրեթե հորիզոն շկար:
Վերևում երկնքի շիկակարմիր մի շերտ էր միայն՝ ծիրանի
գռափ, որ շես իմանա՞ երկնալին ո՞ր հրեշտակի մեջքից է
պոկվել:

— Զրվշտիկ անապատ-տաճարը քո նախնին է հիմնել,—
ստացի բեկին: — Այսինքն՝ Մեծ Հայքի Արևելից կողմանց
թագավոր Վաշական Թարեպաշտը:

— Եղբորս նրա մո՞տ ես թաղել, — Հարցրեց բեկը:

— Հենց նրա շիրմին կից: Օրհնեցի և օժեցի Հապշտապ: Մեն-մենակ էի: Ահա՝ մեծ:

Դեռ անապատին չհասած, անսպասելի մեր գեմը ելավ Աղամ բեկի աներ ու նրա զորաց հարյուրապետ Թուրի Արզումանը: Չիու վրայից հեծեծաց:

— Ասացի մի՛ զնա, մի՛ հավատա խանին: Գնաց բարի մարդը և...

— Լացուկոծիդ վե՛րջ տուր, — խիստ ասաց Աղամ բեկը: Հարյուրապետն իշավ ձիուց: Հզոր անկոտրում մարդ էր, բայց ա՞չա կորացել է մեջքից, ոտքերը հաճախ են ճոճվում: Թուրը խեղճ-խեղճ քարշ է գալիս զոտուց ու երբեմն զնզում քարի դիպչելով:

Վանքի մոտից գեափի իշխանական դամբարանները տանող արահետը ոլորվում էր անդունդի եզերքով: Եատ ներքեվում երևացին մի մեծ գյուղի տափակ կտուրները, եկեղեցու խոյածն գմբեթը: Թուրի Արզումանը կանգ առավ մի ժայռախոռոշի առջև, որ պազած արջի կերպարանք ուներ ու կարծես ոռնում էր: Կարճ սուկեց: Ժայռի խոռոշյաց դուրս եկան երկու զինվոր՝ թրերով ու հրացաններով:

— Կերոն բերեք, — հրամայեց հազարապետը:

Զինվորները զարմանքով նայեցին Աղամ բեկին՝ ի՞նչ ունի այնտեղ: Բայց պատիվ բռնելով հեռացան: Մթին ժայռախոռոշից ճենճահոտ էր գալիս: Աղամ բեկը քիթը բռնեց:

— Կարծես դժոխքի դռանն ենք:

— Աշխարհն ինքը դժոխք-է, — ասաց Թուրի Արզումանը:

Կերոն բերին, լուսավորեցին մեր ոտքերը: Ցածր առաստաղով, երկար ու նեղ բնական քարանձավի խոնավ պատերին, որ իրենց վրա դեռ պահում են նախամարդու շունչը, ժոմավեցին արնագույն լույսի ծվեններ: Գաղքացած աղտեղության ու փթող մաի հոռ ընկավ մեր քթներին: Աղամ բեկը զզվեց, բայց հնագանդ հետեւց ինձ: Ես կանգնեցի իմ ձեռքով արած հողակույտի կողքին:

— Սա՞ է, — հարցրեց Աղամ բեկը:

— Սա է:

— Բաց արեք:

Ես հասկացա, որ բեկը չի հավատում ինձ, մտածում է՝

գուցե ևս խարում եմ, գուցե այստեղ թաղվածը իր եղբայրը չէ կամ, ո՞վ իմանա, ոչ ոք էլ չի թաղված այս թմբի տակ: Նրա կասկածը իմ նկատմամբ հասկանալի էր:

Թուրի Արգումանն ու էլի հինգ-վեց զինվոր բահերով ու թրերով բաց արին գերեզմանը: Վերջապես հասան կարպետի մեջ փաթաթած մարմնին: Աղամ բեկն իր ձեռքով ետ տվեց պատանքը:

— Դու ես, դու ես, եղբա՛յր իմ: Երանի՛ կուրանայի ու քեզ սպանված շտեսնեի:— Նա համբուրեց եղբոր կտրված գլուխը, կրծքին ծալած հողոտ ձեռքերը: Կանգնեց, դարձավ ինձ: — Գոհությունս քեզանից անսահման է, խոշա Արրահամ: Ես հավիտյան պարտական կմնամ քեզ, որ կարողացել ես եղբորս մարմինը փրկել անօրենների պղծագործ ձեռքերից:

Ես մտքումս հազար փառք տվեցի աստծուն: Բեկը նորից համբուրեց եղբոր ձեռքերը:

— Ես կլուծեմ քո վրեժը, եղբա՛յր իմ: Կլուծե՛մ...

Լույսը արգեն բացվել էր, երբ ետ դարձանք, մտանք Զրաբերդ: Կամար Սոլթանը թևատարած վշտով դրկեց ամուսնուն:

— Աստված ողորմի եղբորդ: Ուսերդ մի՛ թուլացրու, երկրի հոգաբ վրադ է, ամուսին իմ: Հզորացիր եղբորդ հիշատակով:

Քահանաների դասր ինձ ողջունեց զուսպ ու խոնարհ: Ինձ ու Աղամ բեկին հրավիրեցին եկեղեցի գերադահի հիշատակին պատարագ մատուցելու: Ինքս ևս մասնակցեցի ծեսին, անվերջ սրբելով արցունքներս, որ, չգիտեի, թե ո՞ր ազրյուրից են այդպես առատ ծագում: Կեսօրին մոտ միայն դուրս եկանք աստծու տաճարից՝ մեր հոգու պարտքը մատուցելուց հետո: Կամար Սոլթանը ամուսնու կողքից քայլում էր բալորովին անշփոթ: Ինձ թվաց, թե նա հար ու նման է երիտափորի հոգագին: Ո՞ւր է: Ո՞ւր է նա՝ Երնջիկ տիկինը, որ սուր է մխրճել իր ամուսնու փորը: Օ՛, ինչ հզորություններ ունեն այս գեղեցիկ արարածները: Ես տեսնում էի, որ ամուսնու վիշտը, նրա բախտի նկատմամբ ունեցած տագնապը բնավ չի խեղճացրել Կամար Սոլթանին: Ինչ-որ շափով նա նման էր նաև մի այլ հզոր ու անընկնառ հոգու՝ Գոհար միանձնուելուն: Ես օրհնանքով եմ տալիս Գոհարի անունը, հպարտությամբ նայում Աղամ բեկի տիկնոջը: Ես հավատում էի, որ ոչ մի

Ճեռքի երբեք շի հաջողվի ընկճել նրա կանացի ուժը: Հեղտությամբ են տղամարդիկ ոչնչանում:

Տանը Կամար Մոլթանը սպո սնդան զցեց: Աղամ բեկը գինի լցրեց, մի գավաթ ինձ մեկնեց, մեկը կնոջը: Ինքը ևս վերցրեց.

— Խմիր, կին իմ, բայց ոչ իրեն ողորմաթաս, այլ իրեն վրեժի երդում:

Կամար Մոլթանը խմելուց առաջ ասաց.

— Դու ինձ համար սիրելի ես աստծուց առավել, ամուսինի իմ: — Բարձրացրեց խոշոր, ու աշքերը, որոնք լիքն էին արցունքներով, ինչպես ձեռքի թասը՝ զինով: — Եղբարդ կորուտը ևս մեղ ապրելու և դիմանալու ուժ կտա:

Նա արծաթե մատուցարանի վրա սկ սուրճ բերեց և Մոլթանի շաքար, մի բան, որ նորություն էր մեզանում: Բեկը հոտ քաշեց սրճի գավաթից: Ինձ թվում էր, թե զինի խմելիս նա մտքում կրկնում է կնոջ խոսքը: «Դու ինձ համար սիրելի ես աստծուց առավել, ամուսինի իմ»: Որքա՞ն նվիրվածություն, ինչպիսի մաքուր անկեղծություն կար շշուկով ասած այդ խոսքերի մեջ: Աղամ բեկը սրճի փինջանը ցած դրեց, վերցրեց կնոջ մի բռաշափ ավետարանը, որի եզրերը քրքրվել էին մատների հաճախակի շփումից, ու սկսեց կարդալ: Կինը բռնեց նրա ձեռքը:

— Դենը զիր, շեմ ուզում, որ դու էլ խրվես այդ տաղտուկի մեջ: Դրանում միայն վիշտ կա, խեղճություն, արցունք: Եվ այդպես ամեն տեղ՝ տանը, պատերազմի դաշտում, զրքերի մեջ: Մեր զրքերը արյունով են զրված, արցունքով կազմված: Երբ նայում եմ մեր դժբախտ հայրենիքին, արյունը սառչում է երակներիս մեջ: Մաս առ մաս կտրտել են մեր մարմինը: Նախիջևանում հիմա մահմեդական օտարն է, Շուշում օտարն է թշնամին, մեր Գողթանում պարսիկ օտարն է, Կարսում՝ թուրքը: Երկրիս մի մասը թուրքի երախում է, մի մասը պարսիկի ու էլի շղիտեմ ինչ շուն ու գելի ճանկերում: Իսկ այդ սուրբ կոշված զիրքը միայն մեռելահոտ է շաղ տալիս շուրջը:

Իմ սիրտը տրոփաց ոչ թե ցավից, այլ գարմանքից: Այս, այդպես է, այս կինն իրավացի է, նաև կարծես նախատում է ամուսնուն: Գուցե թե այլ անզամ Աղամ բեկը շտաներ թեկուզ հեռավոր շափով իրեն ևս առնչվող նախատինքը, կտրեր

Հանդուգնի լեզուն, սակայն կեռք մոտ նա իրեն հեղ ու խոնարհ էր պահում, երևի ինքն էլ շասկանալով՝ զրդապատճառը ինչ-որ զսպող, հնազանդեցնող ուժ կար Կամար Սոլթանի մեջ:

Առավոտյան նա ինձ էլ վերցրեց հետք ու գնաց զորանոց-ները, որ հայրենի Մոխրաթաղ գյուղում էին, բացի բերդապահ գնդից: Թուրքի Արգումանը զորքը շարեց իսկույն, զորական բահանան խռպոտ սաղմոսեց հանգուցյալի հիշատակին:

— Փողե՞ր, — գոռաց Աղամ բեկը: — Փողեր հնչեցրեք Դե՞...

Խելահեղ վարժանք սկսեցեք՝ Զորքը պետք է շուտափույթ պատրաստել կոիվների: Վճռեց իր բանակն ամբողջովին դարձնել հեծյալ:

* * *

Մի գիշեր արթնացրեց ինձ՝ գնացինք Գյուլիստանի Մելիք Հովհաննի որդի Բեկլար բեկի մոտ: Նա Աղամ բեկի տարիքին էր՝ հանդուգն ու անդիքում զորական: Այդ օրերին բնակվում էր իր հոր տիրույթ Թառինչ մեծ ավանում, որ Թարթառի ձախ ափին էր: Այս Գյուլիստանը հայոց Արցախական աշխարհի հին Գյուտական գավառն է, որին ծանոթ էին Հայկ նահապետի գավակները, միշտ Զրաբերդին հարևան ու մարտակից:

Բեգլար բեկին գտանք գյուղի հրապարակում, մեկին պատժելիս: Ես ցնցվեցի: Երբեք նման պատժաձև շէի տեսել: Բեգլար բեկը դարբիններին հրամայել էր կրակի վրա կարմրացնել փլավքամիշ պղնձե անոթը: Մենք հավիկ էինք ոտք դրել հրապարակում, երբ բեկի հրամանով, շիկացած, բոց արձակող փլավքամիշը փայտե կոթավոր երկար ունելիներով դահիճը վերցրեց ու գլխարկի պես հազցրեց մահապարտի բաց գլխին: Նախ այրվող մազի, ապա մօի ճենճածուխ ելավ...

Աղամ բեկը գոշեց.

— Մի՛ արա, մի արա՛...

Մահապարտը մեռած ընկավ: Նրա գլխից գլորվեց տակավին շիկացած փլավքամիշը և դանդի ոսկորները շաղ եկան ծուխ արձակելով:

— Օ՛, եղբայր իմ Աղամ բեկ, բարի տեսա, — գոշեց Բեգ-

քար բեկը՝ բազկատարած մոտենալով իր թանկ հյուրին:— Աշխատ ու գլխիս տեղ ունեա: Ա՛խ, ասացիր՝ մի՛ արա, մի՛ արա, հա՞: Ահա, խոչա Արրահամ, քեզ էլ բարի տեսա:

— Անաստված կերպով մեռցրիր մարդուն, — հեաց Աղամ բեկը:

— Հի՛-հի՛-հի՛, — ծիծաղեց երիտասարդ բեկը: — Բա քո Եղբար նման: Եթե նա Մելիք Շահնազարին ու Խնձորեստանի շուն տանուտեր Միրզեխանին ինձ նման խարաներ, վառեր, սպաներ, ի՞նչ ագռավ էր Փանահ գողը, որ ծրտեր մեր գլխին: Նրանք համբուրվեցին:

Երեկոյան գնացինք մոտիկ Հոռեկա ամրոցի գորանոց-ները: Բեզլար բեկը ձիու վրայից հա խոսում էր:

— Իմ ապուապ Մելիք Արովը, որին Սև Արավ են ասել: Հակ՞ ես, Սև են ասել: Ով մի փոքր անհնազանդ է եղել, էլ շնմ ասում դավաճան, նմանին այրել է խարույկի վրա: Հապա ինչպե՞ս, տեր և եղբայր իմ: Հայրենիք, ազգ պահելը խաղու-ոյա՞ր եմ կարծում: Է՛, հե՞...

Նա ցույց տվեց իր պապ Սև Արովի գամբարանը, որ քա- րաշեն խաշակերպ էր՝ յոթ թզենիների արանքում:

— Թզենիներն իրենք իրենց են բուել: Դանձակի խանը գողացել է այդ մի պապիս սոսկ անունը լսելուց: Է՛, ժամա- նակներ, մարդիկ, ինչո՞ւ փոխվեցիք: Դեպի վատը, վա՛տը: Տեսնում է Թավրիզի խանի շքնազ աղջկան՝ և, հասկանո՞ւմ ես, սիրահարվում: Հա՛, հա՞: Արջի պես այդ բիմբեռ, ուղտի պես ծուռումուռ Սևը սիրահարվո՞ւմ է: Դնում Թավրիզից փախց- նում է խանի աղջկան, այս Հոռեկա վանքում քրիստոնյա կըն- քում, գարմնում իր կինը: Հա՛, է՛, հա՞... Թավրիզի խանը յո- թանասուն անգամ զորքով զալիս է ապուապիս զեմ, յոթա- նասուն անգամ էլ պարտված փախշում:

— Ուրեմն, — ասաց Աղամ բեկը, — քո մեջ պարսիկի արյուն կա՞:

— Երանի՛ շէր պարսիկի խորամանկության կեսն իմը լիներ, հայինը լիներ...

Գիշերը մնացինք Թառինքում:

Մի երկու օր հետո, նույնիսկ ինձ համար անսպասելի, Փանահ խանից բաները եկավ Գյուլիստան՝ Մելիք-Հովսեփի մոտ: — Ականչ արա խորհրդիս, իշխան Մելիք-Հովսեփ, —

պատվիրել էր խանը: — Լսիր, նաև տես, թե ես ինչ վիճակի
հասցրի քո գերազա՞ն Աստվածապով իշխանին: Եթե շեմ ուղում
նրա բախտին արժանանալ, ապա անհապաղ ընդունիր իմ
գերիշխանությունը, Հպատակվիր ինձ:

Մելիքը՝ Հովսեփը բանրերին կրկնել տվեց խանի պահանջը
Լսեց, լսեց, քրքչաց երկար, որից առ զգացի նույնիսկ ես:

— Փանահ ազադակը խենթացել է Աստվածապովի ար-
յունը խմելուց, Հա՞: Կարծում է, թե Հաջողել է, Հա՞: Հայա-
տանի Ղարաբաղը ծունկի բերել: Գեա քո խանին ասա, բան-
բեր, թող իր գերեզմանի տեղը որոշի:

Բեկլար բեկը թափով մոտեցավ Հորը:

— Հա՞յր, թույլ տուր Փանահին ես պատասխան տամ:
Ե՞ս:

Հայրը համաձայնեց: Գրեթե պատանի բեկը Փանահ խանի
գրի թուղթը դեմ արեց բանրերին:

— Կե՞ր: Սամիր ու կեր քո բերած այս թուղթը: Կե՞ր, ու
եր գեաս քու շանորդի տիրոջ մատ, կերածդ կղկղանքիր ու
տուր քո խանին, իբրև մեր պատասխանը:

Պարսիկ բանրերը փլվեց գետեին:

— Ողորմի՞ր, իշխան: Օ՛, բարի մարդ, խղճա՞ անճարիս:

— Մենք ողորմություն արժանացնում ենք նրանց, ովքեր
ողորմել գիտեն: Դուք անողորմ ցեղ եք ու զթության ոչ ար-
ժանի: Իմացեք, ձեր զլիսին մենք այնպիսի պատուհաս կրե-
րենք, որի նմանը չի կատարվել երկերի ներքո, աշխահի
ստեղծման սկզբից և դարձյալ լինելու չէ: Թուղթը կե՞ր:

Բանրերն ստիպված կերավ իր խանի գրի թուղթը:

Վերադարձանք Զրաբերդ:

* * *

Եռշի բերդ-բազարում գժգռէ, ծովորեն բացվում էր ձմե-
ռային գորշ առավոտը: Գիշերը ձյուն էր եկել ու շարունակում
էր տեղալ՝ թացացնելով կտուր ու փողոց Հայոց եկեղեցին,
որ Փանահ խանը մեշիգի էր դարձրել: Նրա մինարեի զլիսից
երկարածոր ծղրտաց մոլլան: Այդ կնառն ձայնը խեղդվում
էր թափվող ձյան վարագույրի մեջ: Ղողանքեց նաև նոր կա-

ռուցած հայոց էկեղեցին: Թափառող անտեր շները ռոնոցով ձայնակցում էին զանգերին ու մոլայի ծկլթոցին:

Ես նկատում էի, որ Շուշին ինչ որ տագնապի մեջ է: Առավոտյան աղոթքի շտապող հայերն ու մուսուլմանները սոսկում էին շների շարագուշակ ձայներից: Շատպում էին իրենց զցել Քրիստոսի ու Մուհամմեդի տունը՝ ծնկաշոք խընդրելու, որ տերը իրենց զթա, խղճա ու զապի քաղաք խուժած թափառական շների ոհմակներին: Մի յոթ-ութ տարի առաջ այստեղ բնավորված մուսուլման շայլին իր հարեան դերձակ հային հարգանքով հրազիրեց շայի: Իրար ողջունելով նստեցին կապերտի պատառիկով ծածկված զետնին, շայ խմեցին՝ շիռնի-շաքարի հետ: Մուսուլման շայլին հայի լեզվով, ճիշտ է կտրոված, ասաց.

— Էս գիշեր խանն էլի մարդ է զիխատել իր պալատում: Աշխարհս զարձրել է Դար ալ-Խալամ: Բող մահի բաժին դառնա Փանահը:

Ես նկատեցի, որ դերձակ հայը վստահեց նրան: Վեր կենալուց հայը ասաց.

— Կեսօրին համեցիր իմ դարզիխանան, եզրայր: Էսօր ճառվ փլազ ունեմ:

Զայլին ուղեկցեց նրան, զառնացած ասաց.

— Խանը շայիս հարկը բարձրացրել է երկու աբասիով: Բա ալլահը կընդունի¹ նման անաստվածությունը:

— Վատ է,— ասաց հայը: — Փանահ ճըռ խանը մեր թաղի եկեղեցու վրա էլ է հարկ զրել:

— Ալլահը զրա վիզը կոտրի:

— Կոտրի:

Ես նկատեցի, որ քաղաքի բնիկ հայերն ու եկվոր մահմեդգականները արդեն ընտելացել են միմյանց, մտերմացել: Եթե խանի ֆառուաշ էր երևում մուսուլմանի տանը կամ խանութում, հարեան հայն խսկույն հասնում էր նրան՝ ֆառուաշը հանկարծ գաղանություն լանի²: Կիսեղի: Իսկ ֆառուաշը գղրդում էր գարնանը գոմից հանած ցուլի պես:

— Հըմ, եղբայրացել եք, հա՞յ, հայ ու մուսուլման:

1 Խալամի ոռեատակ:

Շուշում աստծու օրը բացվում էր նաև մեծ բազարի դղթիքով:

Ես եմ: Այս ես եմ՝ խոչա Արրահամ վաճառականս: Լայն-փեղ կապա ու կախթե արխալուղ ունեմ հազիս, վրան ձմեռային մուշտակի: Ահա ես անշտապ անցնում եմ բազարի խեղդոցով, անհամար կուղպակների ու արհեստի տների արանքով: Ինձ հետևում են իմ շրու ժառաները՝ զինված ու կորովի: Շուշում հայ կանայք արտակարգ գեղեցիկ են ու հպարտ: Երեսները շեն ժամկում ու զարմանալի համարձակ են: Ամեն բայցի խանութպան ու արհեստագոր հայ, թե մահմեկան շտապում են գդակները հանել իմ առաջ:

— Ողջո՞ւն, մեծ բազրգան խոչա: Սալա՞մ:

Ումանց պատասխանում եմ, ումանց՝ ոչ: Ես իմ վաճառական ճանապարհը փոխել եմ: Այլևս պարսից աշխարհը շեմ գնում: Ազուլիսից անցնում եմ Մեղրի, ապա Կապան, ապա այստեղ՝ Շուշի, այստեղից Գանձակ-Շամախի, հետո ուսի հողը: Մուսի թագավորը ութ անգամ պակաս է մաքս վերցնում ասպանքներիս համար, քան թուրքի սուլթանն ու պարսից շահը:

Մոտեցա դեղին տախտակներից հյուսած մի կրպակի: Տերը՝ մուսուլման մի ժիր մարդ, ծոմովեց իմ առաջ:

— Հուզարաբար, մեծ խոչա արբար:

Կողքի նույնակներպ կրպակից վազեց, դարձյալ ծոմովեց հայ փերճզակի:

— Թթի օդի ունեմ, տեր խոչա ազա:

— Բե՛ր:

Ես սկսեցի լուզաքարաբ ուտել ու թթի թունդ բախսի խմել: Քարարչին անվերջ ժպտում է:

— Գիրք շես առնի՞՝, արբար:

— Հեր օրհնած, ես հո իմա՞մ շեմ, ոչ էլ զադի, որ զիրք առնեմ:

— Բայց դու հայ ես, արբար:

— Հետո՞ ինչ:

— Ես հայի զրյանք ունեմ,— ասաց քարարչին:— Հայի լեզվով են:

Նա մի ձեռագիր հանեց գարակից, դրեց սեղանիկի վրա: Ես նայեցի զրբին, շուռումուռ ավի: Զեռազիրը մազադաթյա

էր, կաշվե հաստ կազմով, որի արժաթե պահապանակներն ու պարզերը պոկված էին ու երեսում էին սպի-վերք տեղերքը: Աշքերիս շողարձակումը խեղդեցի կոպերիս մեջ: Դիրքը ետ տվի:

— Էս զիրիլին մարդ փող կտա՞: Պետքս չէ:

— Հատը երեք արասի, — աղերոեց քարարչին: — Վաթառուն հատ ունեմ, ազնիվ խոջա: Իսկի թանկ շեմ ասում:

Վենետիկում հատը հիսուն ոսկով կառնեն, հիշեցի ես: Հանգ արեցի անցնելու: Տիմա՞ր է այս մարդը՝ երեք արասի: — Պետքս չեն:

Քայլեցի: Կ'արարչին հետևեց ինձ: Իսկ իմ միտքը հեծեիս էր՝ կգա՞: Եկավ:

— Հատը երկու արասի:

— Մի արասի:

Ասացի ու սարսափեցի, իսկ եթե քարարչի մուսումանը շհամաձայնի՞: Բայց ահա նրա ձայնը:

— Համաձայն եմ:

Զհավատացի: Իսկ քարարչին ձեռքը դեմ էր արել ինձ:

— Վաթառուն արասին տուր: Թիսի-գա:

Տվեցի: Էլի բան է քարարչու համար: Մի արասիով մի դառ կարող է առնել: Մի գառից էլ հարյուր բաժին քարար կամ խորոված կսարքի: Դե արի հաշվիր: Ախ, շուն շանորդի քարարչի: Էլի շահում ես, այն էլ ինչքա՞ն...

Դրբերը առա, շալակ տվի ծառաներիս:

Տասնմեկ հազար ծուխ ունի Շուշին, որ նոր քաղաք է: Տասնմեկից ութ հազարը հայ: Մեր այս հայերին այստեղ են հրապուրել բերել Փանահ խանն ու նրա թքածը լինող Մելիք-Շահնազար իշխանը: — Ով գա մեր նոր քաղաքում ապրելու, տաս տարի ոչ մի հարկ ու տուրք շի տա: — Այս հրովարտակը հասել է շատ տեղեր: Եկել են անհամար մարդիկ: Ահա երեանյան դարսասր: Ահա Ղազանշեցոց թաղը, ապա Ազուլեցոց, Հալիձորցոց թաղերը՝ խիտ ու կուտակ:

Ես, խոջա Աբրահամս, որ Երեանի զարմ եմ: Ահա ձեզ ասում եմ: Զեզ ասում եմ: Ես ահա կանգնած եմ Շուշվա իշեպահնատան իմ վարձած վաճառանոցի ձեղնահարկ լուսամուտի առաջ ու ատամներս ավլաշոփով մաքրելով՝ նայում եմ ձմեռային Շուշուն: Նկատեցի՝ ձյունեղին մշուց բողք ճեղքե-

լով, մեծ գարպասից քաղաք մտավ ինքը՝ Մելիք-Շահնազարը: Ի՞նքը: Սիրտս խառնեց նրան տեսնելով: Հրացան զարկես, տապալես: Հրացան ունեմ, ատրճանակ էլ և, պարզ է, չեմ զարկի նրան: Պետք է: Անցավ, ութ ձիավորի հետ, ինքն առջևից: Փողոցում եղած մարզիկ, որը ազրյուրը ջրի էր գնում, որը բազար, որը եկեղեցի կամ մզկիթ, փախան այս ու այն կողմէ: Հասնելով Փանահ խանի պալատի գարպասներին, մելիքը իր առաջը կարած զափուզի բաշու վրա գոռաց սաստիկ ու պահանջեց, որ նա խանին անմիջապես տեղյակ պահի իր գալը: Իշավ ձիուց, այժենականի ու բուրդ փափախի վրա նստած ձյունը թափ տվեց: Ես շտապեցի հասնել նրա եռեցից, գլխարկս, որ յոթ ժամ մետաքսից ապարոշ էր, հանեցի:

— Ողջույն, Վարանդայի տիրոջը:

— Ա՞— ցնծաց նա ու նրա բարկությունը կարծես անցավ: — Դո՞ւ ես Խոջա Աբրահամ: Չես երևում: Նորաց դենք...

— Օրից կա, տարուց կա, — ասացի նրան՝ գլխարկս ժամկելով: — Զյուն է գալիս:

— Ես հենց քեզ ճրագով էի ման գալիս: Երեք հարյուր փութ մետարսի բոժոժ ունեմ: Գուցե թե... Հը»:

— Կառնեմ:

Նա ինձ ես տարավ Փանահ խանի մոտ: Ինքը զրեթե վագում էր, ես՝ ես: Պալատական ժառայապետն ու զափուզի բաշին հազիվ էին համում մեր ետեից ու ցույց տալիս թե որ ուղղությամբ զնանք: Մտանք լավ տարացրած պալատը Մելիքը ինձ նստեցրեց գորգերով ժաղկած մի օդայում:

— Սպասիր ինձ:

Պալատի արարողապետն ինձ համար սուրճ ուղարկեց դրանիկ տղայի միջոցով: Ես նայում էի չորս կողմս, սուրճը խմում առանց հաճույքի: Եվ ինչո՞ւ է աստված այսքան ահեղ հայի հանգիստ: Մի տասը տարի առաջ հայոց աշխարհի մեր այս արևելքում ոչ մի օտար ազգ չկար: Հայ էր, երկու հարյուր հազար ծխից ոչ պակաս: Հիմա ահա ցեց է բույն դրել մեր այս մի աշխարհի սրտում: Կրծում է: Կեսը կրծել է:

Վերջապես եկան ու ինձ տարան խանի մոտ: Վազրի աշքերով Փանահը կորովանդամ էր ու բարձրագլուխ, նստած էր դորգերով և բարձերով փափկացրած զահավորակի: Ծնկնե-

բին տարածվել էր իր հարեմի կանանցից մեկը: Էեղիուչի է, նվեր էր ստացել Գյուլիստանի Շամխալ ցեղապետից: Կիսամերկ աղջկան մի կողմ դրեց, մոայլ դարձավ մի քիչ կողմ բազմած Մելիք Շահնաղարին:

— Գալդ բարի շէ, ի՞մ մելիք, իմ աստված:

— Գյուլիստանի Մելիք-Հովսեփին ու Ջրաբերդի սատկած տիրոջ եղբայր Աղամ բեկը քնած շեն: Իսկ դու քնած ես՝ բողի ծոցում, խան իմ: Քնա՛ծ ես: Մելիքները զորք են հավաքում, այսօր վաղը կդան մեզ վրա:

— Ի՞նչ իմ ացար, — խանը թթվեց:

— Մի հարցրու, — մելիքը խլրտաց փափկացրած թախտին, որից դեռ աղջկա մարմնի բուրմունքն էր գալիս: — իմ ժողովակին էլ աշքեր կան: Խորայիլ կաթողիկոսը եղել է նրանց մոտ... Պետք է միջոց գտնել:

— Շուշին անառիկ է:

— Հնարավոր է թշնամին Շուշին ներսից պայթեցնելու Դիղակի Սսային էլ մի կողմից է գալու:

Խանը բերանը բացած լսում էր: Ես նկատում էի, որ նրա մեջ կիրք էր առաջանում՝ հենց հիմա զիխատել իր զինակցին, որ ամեն անդամ շարության վկայությամբ է դալիս մոտք: Սակայն ինչպես ինքը կտրի իր աջ ձեռքը, զանակ խրի իր իսկ սիրտը Ռ՝, տեսնում եմ՝ այս խանը միանգամայն սառը զիխով է կշռում, շափում, ձևում իրավիճակը: Զգում է՝ տեղը նեղ է: Գնաց Ջրաբերդի ու Գյուլիստանի վրա: Փախավ՝ ամեն ինչ կորցրած: Հազիվ է մի փոքր զորագունդ ստեղծել: Դրանով ի՞նչ անի: Գնաց Դիղակի Սսայու վրա՝ փախավ պարտված: Դիղակի Մելիք-Սսային ոչնչացրել է Մուղանի բերանին զրած խանական մի կայազորը՝ հազար երկու հարյուր զինվոր: Դիխովին: Մեկին էլ ողջ շի պահել: Եթե Դիղակն էլ ելք գտնի ու միանա Ջրաբերդին, Շուշին կպայթեցնեն:

— Ասելի՞՞ք:

— Պետք է գործել այնպես, ինչպես Մելիք Աստվածապովի հետ արինք:

— Հաշտությո՞ւն ինդրել:

— Խնդրիր, — երկարածորեց Մելիք-Շահնաղարը: — Դրանով խոնջանից քարը շի ընկնի: Խնդրի՞ք...

Ես զարմանում եմ, թե այս ահեղ տիրակալները ինչո՞ւ

Էն իրենց այդ խոսակցությանը վկա արել ինձ: Ի՞նչ նպատակով Այսպես, նրանք երեք օր ինձ պահպախին իրենց մոտ Ամեն օր ինձ հրավիրում էին ճաշի: Եվ ևս մեծ հաճույքով զայելում էի աստծուց ինձ աված ողբորմությունը, որ շատ առատ էր: Երրորդ օրվա երեկոյան, խանի գիվանում մեռելային լուսթյուն էր: Խանը և մելիք-Շահնազարը զարմանալի հոգատար էին հետաւ Մելիք Շահնազարը զերչապես մի թուղթ հանեց դարակից, մեկնեց ինձ:

— Խոջա Արքահամ, մեր հույսը զու ես: Այս թուղթը հասցըրու ջրարերդի տիրոջը՝ Մելիք Ադամին:

— Ի՞նչ է, — հարցըի ես:

— Մեր խանը Ջրարերդի մեռած մելիքի փոխարեն իշխան է նշանակում նրա եղբայր Ադամ բեկին: Հրովարտակը տար, հանձնիր իրեն: Նաև շնորհավորիր: Նաև...

Խանը արծաթե ֆինջանով շարբաթ մեկնեց ինձ: Սո գլուխը խոնարհեցի:

— Ես Խախոնտրում եմ զինին, խան: Եթե կարելի է նաև...

Նկատեցի խանի աշքերի փայլատակումը՝ ատելությամբ: Բայց ժպտաց ինչպես իշխանատան էժան բոզ:

— Նաև ի՞նչ:

Խանն ու Մելիք-Շահնազարը ինձ հանձնարարեցին, խընդրեցին ամեն կերպ աշխատել իրենց հաշտեցնել Մելիք-Ադամի ու մելիք Հովսեփի հետ: Հատկապես Մելիք-Ադամի: Մինչև լույս մենք այդ բանի շուրջ էինք խոսում, մտածում: Սո նկատեցի, որ թե խանը, թե Շահնազարը սախաված են ուզում հաշտվել հայ մելիքների հետ: Նրանք երդմնագիր տվին ինձ, նաև խոստացան մելիքներին հատուցել բոլոր վիասները, որ ստացվել են պատերազմների հետևանքով:

— Դու, խոջա Արքահամ, — ասաց խանը, — ես շահ կունենաս մեր հաշտությունից, ուինչ առանց փոխհատուցման չի լինում այս աշխարհում: Ուրեմն այսպես, խոջա, զու իրավունք կստանաս իմ երկրում ազատ առևտրի, առանց հարկ ու տուրքի, և մշտապես կվայելին իմ հոգանակորությունը:

Սո մեկնեցի Ջրարերդ:

* * *

Մելիք Աղամին գտա ոչ թե Ջրաբերդի իր տանը, այլ Մոխրաթաղ գյուղում, որտեղ նա պապինական ապարանքներ ուներ: Այդտեղ էր նաև նրա զորքը: Ինձ տարան նրա ապարանքի բարձր ձեղումը: Իմ զարմանքը շատ եղավ, երբ ես նրան տեսա կեռք հետ շինական շախմատ խաղալիս, որին մերոնք ճատրակ են ասում: Նա խաղը կիսատ թողեց, վազեց ինձ ընդառաջ:

— Ռ', եղբորս բարեկամ խոշա Արրահամ, ողջո՞ւն: Տիկինս՝ խաղը զրեթե շահում էր, եկար, ինձ փրկեցիր...

Մարդ ու կին ինձ ընդունեցին սրտարաց և ես դրանից շատ գոհ մնացի:

Առավոտյան բեկը հարցրեց.

— Չինի՞ ոռւսի երկրից ես գալիս:

— Ոչ, եղբորս եղբայր,— ասացի, — գալիս ևմ Շուշուց:

— Ահա՝,— մի ահսակ տրտմեց Մելիք-Աղամը: — Գե, ի՞նչ կա որ, վաճառական մարդու համար բոլոր դռները բաց են:

— Եսանք հրովարտակ է արձակել՝ քեզ քո աշխարհի վրա մելիք հողակելով:

Աղամ բեկը քրքաց:

— Նա ի՞նչ շուն է, ո՞վ է, որ ինձ իշխանություն է տալիս: Հայոց Գերազույն Գահաժողովը ինձ արգեն հաստատել է եղբորս գահին:

Ոչ թե ծառաները, այլ Կամար Սոլթանը սեղան բացեց քարե պատշգամբում, որտեղից լավ երևում էր ոչ միայն ծավալ-ծավալ Մոխրաթաղ գյուղը, այլև Թարթառի միջին հոսանքի շատ շենքը, անտառներ՝ գանգուր, և կանաչ արտերի ծովեր: Մելիք-Աղամը հրավիրեց նաև իր զորապետներին: Մարդ ուղարկեց Գյուլիստանի Մելիք-Հովսեփի ետևից:

Երբ բոլորը հավաքվել էին, իսկ դա իմ գալու վեցերորդ օրն էր, հաճելի երեկո արինք՝ առատ զինի, որ, ինչ մեղքս թաքցնեմ, ես սիրում եմ, նաև վայրի վարազի խորոված:

Ես մելիքին հարցրի՝ ինչ է նշանակում Մոխրաթաղ: Մոխրաթերի կո՞ւյտ է եղել, ինչ է: Նա հարցական նայեց կնոջը:

— Նման բաներ իմ տիկինը կիմանա: Համեց:

— Մոխրաթաղ, — հարցրեց Կամար Սոլթանը նազան-

բավէ Ես նկատեցի, որ նա գմզարությամբ է խոսում։ Ա՛յս,
Հա՛մ, երկուսպիս է, զավակ պիտի ունենա։— Եատ հնում,
երկու հաղար տարի առաջ, այսատեղ մեր Հայերիս Վաշագն
աստծու կրակի ու արևի պաշտամունքի տաճար է եղել։ Դրա-
նից է անունը Մոխրաթաղ, այսինքն՝ սուրբ կրակի-մոխրի
տեղ։

Այդ օրը և գիշերը մենք լիսոսեցինք գործից, սպառեցինք
կերպուխումով։ Մյուս օրը եկավ Գյուլիստանի մելիքը՝ որդու
և իր բանակի զորապետների հետ։ Ես նկատեցի, որ Զքա-
րերզի տերերն ու Գյուլիստանի իշխանները բացառիկ հար-
գում և հավատում են միմյանց։ Դա սրբազն վստահություն
էր իրար նկատմամբ, որ ես քիչ տեղեր եմ տեսել։

— Հիմա որ խոսիր, եղբօրս բարեկամ խոզա։ Հույս, որ
նուշին իմ ետեից կարմիր խնձոր չի ուղարկել։

— Ուղարկել է, — ասացի ես ու նրան հանձնեցի իրեն
մելիքը շնորհելու թուղթը, որ ավել էր ինձ Փանա՞ն խանը։

Բոլորը մի պահ լուցին, նույնիսկ կարծես չէին շնում։
Մելիք Ագամը թուղթը շուռումուռ ավեց մատների արան-
քում։

— Ահա թե ի՞նչ։ Երեկ էլ ասացիր այս մասին։ Կարծում
էի... Եանս նայեցեք, ձմերուկ ուտելուն։ Լսո՞ւմ եք, մար-
զիկ, Փանա՞ն խանը ողորմություն է անում ինձ, իմ իշխա-
նությունն ինձ է շնորհում։ Լսո՞ւմ եք։— Նա ոտքի կանգնեց,
թուղթը վառեց բոցանի կրակով, փշեց մոխրին։— Հե՛յ-
հե՛յ, — գոռաց ցնծությամբ։— Մենք այս մոխրի պես քա-
մոն կտանք Շուշին՝ իր խանի ու դավաճան Մելիք-Շահնա-
զարի հետ։ Հե՛յ, հե՛յ...— Նա կատաղի ինձ նայեց։— Ուրիշ։

— Խանը քեզ ու մյուս մելիքներին հրավիրում է հաշտու-
թյան։ Հաշտություն է խնդրում, — ասացի ես, մտածելով՝
միամիտ մարդ եմ ես։

Բոլոր հավաքածները միանգամայն ժառս եղան տեղ-
ներից, սկսեցին զոռզոռալ, Հայոյիկ խանին։ Նույնիսկ այն-
պիսի հիշոցներ տվին, որ խորթ էին իմ ականջին։ Մելիք-
Ագամը բռնեց իմ օձիքը։

— Դո՛ւ, իսկ դո՛ւ, որ աշխարհի տակուզլիխին ժանոթ ես
ու հաղար ամանից լակ ես լակել, ի՞նչ ես ասում, ի՞նչ խոր-
հուրդ ես տալիս։

Ես հւողիվ պոկվեցի նրանից ու նստելով տեղս, ասացի.

— Խորհուրդ քեզ թող լինի քո եղբոր օրինակը, Մելիք-Աղամ: Եղբայրդ լսեց խաբերային...— Գավաթից մի երկու կում գինի կուլ տվի ու թարմացած ձայնով վերջացրի:— Չհավատաք Փանահ խան շահը: Չհավատաք, այսօր վաղը և հավիտյանս հավիտենից: Չհավատա՞ք...

Մելիք-Աղամը զրկեց ինձ ու ցավացնելու աստիճան պինդ պաշեց երեսս:

— Չհավատա՞ք...

ԳԼՈՒԽ ՉՈՐՏՈՐԴԻ

Փանահ խանը որբեայրի կնոջ աղերսանքով նայեց Մելիք-Եահնազարին:

— Իմ առողջարկը հայերը մերժեցին: Իմ խնդրանքը ուտքի տակ են տվել: Տեսա՞ր:

— Տեսա, — հոգանավոր ասաց Մելիք-Եահնազարը:— Բթացրու Զրաբերդի զլուխը: Կուրացրու Զրաբերդի աշրը: Ես քեզ հետ եմ...

Խանի պալատից սուրճանդակ ու էլշիներ թռան Շամախի, Մակու, Նախիջևան:— Մակվա խան, օգնիր: Շամախու խան, Հասիր: Նախիջևանի Հեյդար Ալի խան, շտապիր: Օգնեցե՞ք... Հայերն ինձ ուտում են...

Այսպես անցան ամառվա ամիսները: Շուշու խանը իր ոհմակի հետ բղավում էր՝ օգնեցե՞ք...

Սեպտեմբերի առաջին օրն է: Արև է, տաք է: Հենց որ լույսն սկսեց գունատ բացվել Թարթառի ձորում, հայոց զորքը պահվեց թանձր անտաների մեջ, տապ արեց: Հայ զինվորները շշուկով իրար ականչի ասում էին:— Մակվա զորքը եկել է: Շամախուց զորք է եկել: Նախիջևանից զորք է եկել: Եկել են մեզ վրա... Եկել են:

Ես ձիուս սանձը նետեցի Թուրի Արզումանին: Հարյուրապետը հարցըրեց.

— Կուազո՞ց է...

— Փանահի զորքը հասավ Թարթառի կամրջին:

Բերդապարսպի ժանգագույն ատամների արանքում կանգնած էր Մելիք-Աղամը: Հանդարտ էր, կարծես խաղաղ երթ էր զիտում: Թրղի գետի նեղ ափին, գոմշանախրի պես կուտակ խլրուում էր թշնամի խանի զորքը: Թուրի Արզումանը աշտարակի ելուստի ցցվածքից հաղորդեց:

— Աշ թևում Մելիք-Շահնազարի զորքն է: Հայի զորք՝ հայի զեմ: Զախում Շամախու զնդերը՝ պարսիկ սարվաղներ...

— Մելիք Հովսեփին ուշանում է, — ասաց Մելիք Աղամը:

Հեռացան պարսպից: Փոքրիկ եկեղեցու դիմաց Կամար Սոլթանն ընդառաջ եկավ ամուսնուն ու հորը, նաև խոնարհարնեց ինձ:

— Օ՛, Գոհա՛ր իշխանուհի: Երբ մեր տեղը նեղանում է, դու խեկույն գալիս ես մեղ հարեհաս: Ողջո՞ւն:

Գիշերը եկավ կարծես սովորականից շուտ: Մելիք-Աղամը հրամայեց զորքին կերակրել: Երկար նայեց թշնամի բանակի կրակներին՝ քանճինդ հազա՞ր: Ինքը ընդամենը երեք հազար կռվող ունի: Երկու հազար էլ Գյուլիստանից կգա՞ Մելիք-Հովսեփը: Ուր որ է՝ կհասնի: Նորից սուրճանդակ ուղարկեց թափինչ: — Մելիք-Հովսեփին հայտնիր, որ արևածագին սկսելու ենք: Ինքը՝ թող աննեկատելի մոտենա թշնամու թիկունքին: Հստա՞կ է: — Սուրճանդակը զույն տվեց ու միայն իրեն հայտնի լեռնային արահետներով շտապեց դեպի թափինչ, որ հեռու չէր:

Հերին, չգիտեմ ինչ հնարքով բերդ մտավ զրեթե պատանի մի զինվոր: Կանգնեց Մելիք-Աղամի առաջ:

— Գեղարքունի զորքը բերինք, տե՛ր իշխան: Ութ հարյուր ծիավոր ենք: Հրամայիր:

Աքաղաղները կանչեցին երկրորդ բերանը՝ զիլ, ոգեսր:

Բաժանվեցինք մասերի: Գնացինք: Մելիք-Աղամն իր անձնապահ զորախմբով սկսեց մոտենալ հակառակորդի ճամբարի միջուկին: Անտառի թանձրությունը կլանեց նրան: Անտառը նիրհած էր: Երկինքն էլ էր նիրհի մեջ: Ժայռերը մրագել էին: Աղամամութն այնպես թանձր էր, որ թե մատ տաս աշք կհանիս: Զինվորները շարժվում էին անազմուկ, նույնիսկ կարծես շէին շնչում:

Անցանք մի նեղ կիրճ ես ու կանգ առանք թղենիների

թփակալի մեջ: Ուր որ է ժայռերի ծերպերը կկապտեն: Յայ-
զածագի սառնությունը թափանցում էր օճիքներից ներս: Մե-
լիք Ազամը մոտեցավ Հրացանածիդ գնդին: Թուրի Արզումանը
ինչ-որ մթթմբթաց: Երեսի գիշերը վատ երազ էր տեսել, ուղեց
ասի՝ մի քիչ էլ սպասենք, սակայն զրեթե իրենից անկախ
մռնչաց:

— Սկսենք:

Հրացանները լիցը արին: Թուրի Արզումանն իր ձեռքով
կայծրար բոցեց, վառեց պատրույզը: Յս անցա մի քարի հան,
միանձնունուս զգեստը հանեցի, հագա զորական հանդիցձաւ:

Արևածագի ծերատ պռունկը երեաց ժայռերի ժանիքների
արանքից և հենց կարծես նրանից բոց առած Հրացանները
դղրդացին...

Ճակատամարտը սկսվեց...

Մելիք-Աղամը ձիու վրա լարվեց պիրկ: Այգակս էր՝ հենց
մոտենում էր մարտի պահը, նրա մարմինը ձգվում, սրվում,
կոշտանում էր, հոնքերը կիտվում էին աշեղ: Սակայն հենց
որ մտեսում էր մարտի խառնարանը, դառնում էր բոլորովին
ուրիշ էություն, նույնիսկ շեմ զում ինքն իրեն: Մի սառը
հանգարտություն էր պարուրում նրան: Մարդ ուղարկեց զյու-
լիստանցիների դիրքերը՝ զեռ զուրս շգար ձորից, պատվերով՝
Հրացանային կրակի տակ պահնեցիք թշնամու կուտակում-
ները:

Արիի պռունկը հենց այդակս էլ սառած մնաց ժայռերի
կեռիկների արանքում: Կարծես առ ընկավ Հրեզին մարմինը: Սուր Ավագը շշմեց, նույնիսկ երեսին խաշ հանեց: Այծերի
հոռեր էին խռնվիլ թարթարոս լանջի ծերպերում: Զհավա-
տաց աշներին՝ մի՞թե այծեր են: Զինվորները զոռացին հո-
վիվների վրա:

— Ո՞վ եք, է՞յ...

— Զագեձորի գյուղերից ենք:

— Էղ էծերն ինչի՞ն եք թերել:

— Բերել ենք Փակաչ խանին ընծաւ: Երկու հազար
գլուխ են:

— Զէ՞-Հա՞,— զոռաց Սուր Ավագը: — Զէ՞-Հա՞: Խանին
դրանց պողերը կուղարկենք, որ կոխի իր քամակը: Ինքը չէ,
մենք կկոխենք:

Զագեձորցի Հովիվները մի հիսուն հոգի էին, այծենի կաղի կապաներ հագած, մի-մի հաստ մաշակ ուսերին։ Նրանց ավագը, որ գանգուր մորուք ուներ և հաստ մեծ քիթ՝ սստի պիճիկ, Հռհուաց՝ մերմակ ատամների շարը ցցելով։

— Այժերով կեռվենք։

Վերեից Հրացանները հազում էին ոչ հաճախ։

— Այժերո՞վ...

Օրն այդպես անցավ։ Իսկ երբ մութը կոխեց աշխարհը, Հովիվները պարկերից մոմեր հանեցին, երկի մի երկու հագար հատ։ Թուրի Արզումանը այնպես ծիծաղեց, որ ձորը դղրդաց։

— Մոմ եք քերել Երից Մանկուքի ուխտին։ Չեր քեռակինները նախշուն։ Հը՞-ը... Ուխտե՞կ եք։

— Չեր ուխտը էս մեր էծերի քամակումն է, — ասաց ավագ Հովիվը։ — Չեր ուխտը շուտով կատար կտեսնես։

Հովիվները, որ զարմանալի էր, մոմերն ամբացրին այծերի կոտոշներին։ Ամեն կոտոշի մի մոմ։ Եվ գիշերը այնպես հանգարտ էր, ասես քամին էլ է մեռել, երկինքն էլ։ Այժերի կոտոշներին ամբացրած մոմեր վառեցին ու այժահորանները քշեցին դեպի թշնամու բանակատեղը։ Թարթառի նեղ եղաշշերար... Այժերը վազեցին ցած... Կրակի հեղեղ իշավ դեպի Փանահ խանի ճամբարը։ Այնահղ երկու սարզադ արթնացան շլացնող լույսերից։ Հենց նրանց զլխավերնում, լեռնալանջերից անհամար կրակներ էին հոսում դեպի ցած։ Երկինքն է փլվե՞լ, աստղերի կրա՞կն է թափվում։

— Է՞ լ, Է՞ լ, Է՞ լ...

Ահից տապալվեցին։

— Է՞ լ, Է՞ լ, Է՞ լ...

Լույսերի հեղեղը մոտենում էր։ Չեր թնդանոթները դղբրդացին։ Դրանց որոտմունքը հազարապատկվեց ժայռերի խոռոշներում, քարանձավներում։ Սուռ Ավագը իր աշխարհակորը քշեց դեպի խանական վրանը։

— Էս կո՞ղմը, տղե՞րք։

Տագնապ գոռացող սարվազի կոկորդը կտրվեց Հրացանի գնդակից։ Քնաթաթախ ու բնահարամ սարվազների խմբերը փախան դեպի գետի անցումը։

— Զուզո՞ւմ է... Երկնքից ջիններ են թափվում մեր զլխին։

Վերևից հայերը ժայռաբեկորներ պլորեցին նրանց վրա գիշերը կատարյալ խենթացել էր: Հողագունդը երեխ դուրս էր եկել իր ծիրից: Մելիք Շահնազարը կոպիտ հրեց խանին:

— Տեղդ փոխի՞ր:

Թիկնապահներով շրջապատված Փանահը վազեց գեպի մելիքի ցույց տված կողմը: Վրանի շուրջը եռմեռացին կոտոշներին կրակի խրձեր բերած այծերը:

Սուռ Ավագը աշխարհազորի խառնախմբերը տարավ դեպի նեղ ձորի բերանը: Սրամերկ շինականները ձիերի երամակների դեմ առան: Անթամբ, անսանձ ձիերը սարսափով փախչում էին գրեթե միմյանց հեծած: Շինականները նիզակները դեմ արին, ալատ դարձան նեղոցքը փակելով: Զիերը ժառածառս լինելով կանգնեցին, խմբվեցին, երեխ մի հինգ հարյուր դլուխ:

— Օհո՞,— քրքչաց Սուռը:— Այ տա՞ , սրանք պարսից խանի ձիերն են: Այ տա՞...

Շինականները բռնեցին ձիերին, որը խուրչինի քուղով, որը կաշվե գոտիով սանձ արեց նրանց պլուխներին, հեծան: Երամակի ետեից խառնաշփոթ փախչելով՝ նեղոցքին հասավ դղրլրաշների մի ամբոխ: Շինականները մի պահ շփոթվեցին՝ ախր կանոնավոր զորք է իրենց դիմացը: Սուռ Ավագը ձիուց թռավ ցած:

— Զարկի՞ր: Զարկի՞ր...

Ղզլրաշները, որ մի երեք հազար հոգի էին, փախչում էին զլինապատառ, շատերը նույնիսկ զենքն էին շպրտել: Նրանց կրնկակոխ հետևում էին շինական աշխարհազորի խմբերը՝ թռուի Արզումանի զլիսավորությամբ:

— Խփեցե՞ք:

Ղզլրաշները բարձրացրին ձեռքերը, աղաղակեցին:

— Հանձնվո՞ւմ ենք...

— Ոչ ոքի լինայե՞լ, — հրահանգեց Սուռ Ավագը:— Սարի ժաղի՞կ են բերել շները: Զարկեցե՞ք...

Կամար Սուլթանը երեաց ինչ-ոք խորչից: Թռավ շինականների բռնած ձիերից մեկի մեջքին, սուրը շողացրեց:

— Բրգեցե՞ք զրանց: Բրգե՞նք... Մեր Ղարաբաղում իր օրում զզրաշ լի ծրատել: Խփեցե՞ք...

Ղզլրաշներին սկսեցին զլորել գետը:

Զորի խորքում, այնտեղ, ուր գետը ծունկ էր տալիս և մի հին կրած մատուռ կար, իրարանցում ընկավ։ Զիու վրայից ես տեսա, թե ինչպես Փանահ խանը ձիու գլուխը շրջեց ետ ու գնաց դեպի իր փախշող զորքը։ Ահա նա մի զորախումբ կանգնեցրեց ու տարավ դեպի աշխարհազորի զիրքերը։ Մելիք Ազամը ձիահարյուրակով շտապեց կտրել նրա ճանապահներ... Խանի դեմ դիմացից հարվածեց Մելիք Հովսեփը։ Զորը լցվեց վայրենի աղաղակներով։ Խումապը խառնաշփոթեց խանի հետ եղած զորքին ևս։ Սկսեցին ծուղակից դուրս գալու ելք որոնել...

Փանահ խանը փորձեց սրով, ատրճանակով ետ պահել փախշող զինվորներին։ Բայց ապարդուն։ Դիմացից, աջից ու ձախից հայերը հրացանազարկ էին անում նրանց։ Ներքեւում Թուրի Արզումանը սրամարտ էր սկսել Մակվի խանի զորախմբի հետ։

Մելիք-Շահնազարը ձիու վրա փոթորկվեց Փանահ խանի առաջ։

- Հետեիր ինձ։ Գլուխդ մի՛ կորցրու։
- Վերջացա՞վ, — հեաց խանը։
- Նոր է սկսվում։ Ամեն ինչ նոր է սկսվում։
- Փանահ խանը ձիու գլուխը շրջեց մելիքի ետեից։
- Արա՛ գ, արա՛ գ, — գոռում էր Մելիք-Շահնազարը։

Թարթառը դղրդում էր ահռելի ջրապառույտներով։ Ալիք-ներն այնպիս էին ժառս լինում, որ ահա ուր որ է, կկործանեն իրենց առջե եղած թաց, մամոած ժայռերը։ Դիմացը, մի քիչ աղում, հայկական հետեւակ աշխարհազորն էր։ Փանահ խանի մեջքով կարծես օձ սողաց։ Սարսուց։ Հայերն սկսեցին քարեր գլուրել փախշողների վրա, վառած խրձեր, նամթի բոցակույտեր նետել։

— Արա՛ գ, արա՛ գ... — առջեից սրտապնդում էր Մելիք-Շահնազարը։

Խանի ձին սպանվեց։ Մելիքը նրան շան լակոտի պես պոկեց զետենից, դրեց իր ձիու թամբ-զավակին։

- Եռնն էլ քո օրին լինի, խան։ Պինդ բռնիր ինձ։

Փախշողների խառնախումանը լեզապատառ իրեն զցեց զետի մեջ։ Լողալ իմացողները դենքը դեն նետեցին, սկսեցին լողալ, չիմացողները ոռնում էին հուսահատ...

Ըստրը ուժգին զարկեց Փանահի զլիսին, երեսին, կրծքին: Մի պահ նրան թվաց, թե սուզվում, խեղզվում է: Մեկը նրա շինքից բռնած գուրս բաշեց: Խանը նույնիսկ զգաց, որ միզեց աշխաց՝ զրի մեջ, քուր կուզ տվեց միզահամ: Ուշքը տեղը եկավ, իրեն խեղզվելուց փրկողը նորից Մելիք-Շահնազարն էր: Նրա վրայից ջուր էր չոռում, լճանում ոտքերի տակ:

— Մի՞ սատկիր, խան, — գոռաց մելիքը: — Մենք փրկված ենք: Հետեմիր ինձ:

Նրանք փախան դեպի Խաշեն: Այնտեղից Շուշին մոտ էր:

* * *

Հավաքեցին թշնամու թողած զենքը, պարենը: Ավարը կրեցին, տարան ջրաբերդ ամրոցը: Հակառակորդի անհամար դիակները հորեցին: Մնան՝ կիթեն, հողը կապականեն:

Կամար Սոլթանը հրամայեց զորքին կերտիչում տալ:

Ամրոցի պարեն-պաշարի մառանները բաց արին, զետնի մեջ թաղած գինու կարասները հանեցին:

Ջրաբերդը ցնծում էր: Նեղ զուկակում և եկեղեցու բակում խռնվել էին զերիների վտառները՝ երենի մի վեց հազար մարդ: Գինով Շուռ Ավագը գոռաց նրանց վրա:

— Հիմի որ ձեզ վրա նավթ լցնեմ ու վառեմ, մեղք ունեմ, իշխ ծնունդներ, ինչո՞ւ կովով խուժեցիք մեր տունը: Հը...

Երբեմն զինու գավաթը դեմ էր անում որևէ զերու:

— Խմիր, պարսիկի տականք՝ հայոց աշխարհի արեշտության: Համար ձեռքներից պրծավ ձեր խանը: Բայց միենայն է, վարտիկը ոտքերն եմ զցելու:

Փողոցներում, բակերում, խեղզված շուկայում զուռնա էին նվազում: Գրեթե բոլորը պարում էին խելահեղ:

Գիշերը մրափեցին ով օրտեղ կարող էր: Մյուս օրը ևս խնջույք արին: Կամար Սոլթանը ոշինչ շէր խնայում զորքի համար:

* * *

Երրորդ օրվա առավոտն էր: Զորանոցները խլրտացին: Մելիք-Աղամը զալիս է զորքին այցի: Շուռ Ավագն ու Թուրի

Արգումանը իրենց զլուխներին մի-մի տաշտ սառը լցրին,
որպեսզի զինովությունը փախցնեն:

— Մելիքը մեղ մի լավ կտաքացնի, — ասաց Սուոր:

— Եատ էլ լավ կանի, — բրթմնջաց Թուրի Արգումանը: — Լակել ենք:

Զգաց, որ զլուխը երեք փթանոց է դարձել, աշքերեւ ուռել
են: Դիմացը մշուշ է: Չի հիշում, թե երեկ, մյուս օրն ինչ է
արել: Սուոր հիշո՞ւմ է: Հազիվ թե: Նա էլ է զլխին դագանա-
կով խփած շան օրի: Հարբած զինվորներին խմբով քշեցին
դեպի զետր:

— Ընկեր ջրի մեջ, է՞յ: Գուցե թե զինու թանձրն անցնի:
Էյ, էյ...

Թեղանոթ ձուռող Զարգար Մելքոնի հեջ վեցն էլ շէ: Խմել
է ինչպես կայի եղբ՝ զետից, և նույնիսկ քիթը շի կարմրելը
լողացան: Ջրվեցին: Նաև ջուր խմեցին շատ: Մի կերպ հա-
վաքգեցին, կանգնեցին զորանոցի հրապարակում: Թուրի Ար-
գումանն ու Սուոր Ավագը իրենց անսովոր ճիգ էին պահում,
երբեմն թափառարում զլուխները: Սուորն ասաց:

— Մելիքը հիմա մեր մեջքերը մի լավ կտաքացնի մորա-
կով:

— Եատ էլ լավ կանի, — մամաց Թուրի Արգումանը: —
Խելքներու տղիւ ենք սատանայի հեղուկին: Ա՛յս, ա՛յս...

Նա զզվում էր ինքն իրենից: Զգում է, որ աշքերի տակ
կապույտ պարկեր են, մեջները կարծես լեղի լցրած, բերա-
նում ճիլջանրու աղուզահար պտուղի համ է, քիթը դարձել է
մասան: Սուոր աշխատեց զինվորագարի ցցվել.

— Հարյուրապետս... Ես... Տեր մելիք: Զեկույցս այս է...

Մելիք-Ազամը հոնքերը խոժոռել էր հաստ, շրթունքները
սեղմել ահեղ: Բայց նկատեցին, որ նրա աշքերում քմծիծաղ
կա՞ ներողի բարություն: Թուրի Արգումանը նույնիսկ մռուցել
էր կոճկել կապայի բոլոր կոճակները, մի երկուար մերակած
չէին: Է՞, է՞հ, կապայի տակից երեսում էր խոնջանի փեղավոր
քուղը: Զինվորներից ոմանք հարբած օրորվում էին: Մի դե-
պատի զինվոր բացել էր բամկոնի օձիքը և ընդհատ-ընդհատ
երգում էր:

Թե ժամիկ ծիրեւ առեմ,

ծիծէրիկ ծերեւ առեմ...

Տասնապետները փորձում էին լռեցնել նրան, շէր ստացվում: Նրան փաթաթեցին, տարան զորակոց: Մելիքը հայացքով ահեղ խեթեց զորապետներին:

— Հակե՞լ եք, հա՞: Հարբած զինվորը սատկած շուն է... Հա՞...

— Մեղավոր ենք, տեր Մելիք,— հազիվ լսելի ասաց Սուռ Ավագը: — Համ էլ: Ախր հազթանակ է...

Մելիք-Աղամը կարակուլն կապույտ գդակը նետեց օդ:

— Պանծա՞՝, պանծա՞՝, Հայաստան երկիր:

Պակը փայլատակեց արեից՝ ամրոցի պարիսպների համայնապատկերի ոսկե մշուշում: Պակերի հեղեղ թռակ գեալի վերի:

— Հո՞ւսուա՞...

Այնպես տաք էր, որ հողից ելած փոշին կարծես կրակ կտրած հալվում էր: Ջորքի ցնծության որոտմումքը սփռվեց Թարթառ գետի խորհրդում, մշուշի պես թռավ, զարնվեց ժայռերին ու հտ եկավ:

— Այս անդամ էլ ջախչախ եղավ մեր թշնամին: Աշք լույս, զորք, ցնծա ժողովը՝ լրդ:

Ամրոցի դիմաց, Թրդի գետի աջի մի ժայռի փոքրիկ խցում ծունկի էի եկել ես՝ Գոհար միանձնուհիս, առջև՝ քարի վրա զրոց մատյանս, զրիլ և մելան: Զեռքերս բարձրացրի գեալի կապույտ երկինքը, աղոթքի շերտեր հղեցի՝ մեզմ շշունչով: Զեռքերս իշեցրեցի, կողքիս զրած մատյանը վերցնելով համբուրեցի ու շարունակեցի զրել: — Եվ եղավ սա թվին հայոց... Ինքս երկյուղածությամբ ներշնչվեցի ինձնով ու այն, ինչ ներկայացրի, իմ հոգու շունչն է...

Թղենու թփից կաքավների երամ պոկվեց խշշոցով: Թփի մոտ երկու ստվեր խառնվեցին միմյանց:

— Այստե՞ղ: Այստե՞ղ...

Զագեծորի հովիվներից մեկն էր: Նրան հպված աղջկը թրթուց պախույի պես:

— Դու ինձ շես լրի, շէ՞:

Հովիվը զլխից պոկեց մաքենի փափախը, սեղմեց կրծքին:

— Երգվում եմ փափախովս, որ իմ պատիվն է, շեմ լրի: Աղջկա թուխ, աղեղ հոնքերը մեղմացան:

— Եվ կսիրես ինձ անբիծ հոգով: Հա՞՝ ջանս:

Հովհակը գրկեց նրան։ Ես զգուիս կախեցի մատյանիս մելանահոտի վրա։ Այս շոր մուայլությունից մտովի պոկվեցի, փախաց... Փախաց դեպի հեռավոր օրերիս ոսկեղենիկ մշուշները, Երևացե՛ք, կորած աստղեր։ Կենդանացե՛ք, մարած կրակներ...

Ահանելի լուսթյուն իջավ հոգուս, ժամանակներն արձագանք չափին կարոտի հառաջանքներիս...

* * *

Հայոց զորքը պաշարել է Եռուշին։

Ջրաբերդի պարտությունից հետո Փանաչ խանն ու Մելիք-Շահնազարը իրենց զորական մնացորդները մի կերպ հավաքել ու փակվել էին Եռուշու պարիսպներից ներս։ Անառիկ ամուր քաղաք-բերդը պաշարած հայերը համոզված էին, որ եթե զենքով չհաջողեն ընկճել զլուխն ամպերի մեջ թաղված բերդը, ապա կստիպնեն, որ նա իր միսն ուտի քաղցից և իր գոները բաց անեն։

Հայոց զորաց ավագանին երկրի իշխանությունը կուտակեց ի մի, դարձրեց ամրապինդ բռունցը։ Պետական գերազույն նոր կորիգ ստեղծեցին՝ Մելիք-Աղամի, Մելիք-Հովսեփի ու Մելիք Եսայու եռյակ իշխանությամբ։ Զորքն ու ժողովուրդը նեցուկ կանդենցին հայ պետական այս նոր կարգ ու կազմին։ Սակայն, ինչ խոսսք, նաև տագնապում էին։ Իրանի բոլոր խաները, որ տասնհինգ տարուց ավել է, միմյանց կոկորդ են կրծում, տարին երկու-երեք թագավոր գահընկեց անում, արդեն միավորվել են Զենդ Թերիմ շահի գրոշի տակ։ Պարսկաստանն ուզըի է եկել ծանր ցնցումներից, նորից զարձել սպառնալի։

1761 անբարի տարվա գարունն էր։

Զենդ Թերիմ շահի զեսպան Սաֆար Ալի միրզան անսպասելի երեաց Եռուշվա պատերի տակ, հայոց զորքի ճամբարում։ Նա հայոց եռապետությանը հանձնեց արքայական կնիքով ու մոհրով պնդած հրովարտակ։ Իրանի նոր Առյուծը, ինչպես անվանում էին Զենդ Թերիմ շահին, ոչ միայն Եռուշի քաղաքի, այլև ողջ Ղարաբաղի զբա միահեծան իշխան է հաստատել Փանաչ Ալի խանին։ Թագավորը խստագույն սպառ-

հալիքով հայերից պահանջում է անհապաղ հանել Շուշու պաշարումը և հնթարկվել Փանահ խանին։ Սպառնում էր մեծամեծ բանակներով ներխուժել Հայաստան։

Ես, Գոհար միանձնուհիս, թողել եմ դպրական գործս և նորից ամփոփվել իմ զորական պատյանի մեջ։ Նորից զորքի հետ եմ, Ես ինձ հանձնել եմ աստվածային շնորհներով օժտված Կամար Սոլթանի խնամքին և երբեմն հեռվից-հեռու, երբեմն երես-երեսի ականատես եմ իրար հաջորդող այս փոխորկուն անցքերին։ Մելիք-Աղամին հարցրի։

— Ընդունեի՞ ես զտնում Զենդ Քերիմ շահի պահանջը։
— Երբե՞ք, — վճռաբար պատասխանեց նա։

Ես գոհ մնացի, նրա տիկինը՝ Կամար Սոլթանը՝ ևս։

Զորապետների եռյակը արքայական գիսպանին հանձնեց իր վճիռ-պատասխանի գիրը։ Իրանի երջանիկ տիրակալ Զենդ Քերիմ շահ, ողջո՞ւյն։ Մենք ողջ երկրով, զորքով ու ժողովրդով քեզ շնորհավորում ենք՝ թագավորելուդ առիթով, որին արժանի ես անտարակույտ։ Քեզանով ուրախ ենք ի խորոց սրտի։ Ո՞վ մեծազոր, ո՞վ աստվածային, զարմանում ենք, որ քո արքայական մեծությունը զորավիդ է կանգնել թոկից փախած ավագակ Փանահին։ Եվ եթե գու իրանի դյուցազնական տան զարմ ես, և գիտենք, այդպիսին ես՝ արիական գտարյուն, ապա ինչո՞ւ ես թիկունք կանգնում ստոր ծագումի անտոհմ ու սեարյուն մի ավագակի։ Ասավածային Զենդ Քերիմ շահ, ողջ եղիր այժմ և հավիտյանս հավիտենից, Զենդ Քերիմ շահ, հիշիր, Հայաստանը քո ոտնակոխ բռնտանը չէ, որ ում ուզես նվիրես։ Մենք՝ Հայերս թագավորություն ունենինք ձեր Դարեհ Վշտապանից հազար տարի առաջ։ Եվ մենք հենց դրանք ենք՝ Հայ։ Իսկ գու պահանջում ես, որ Հայոց մեր երեք հազար տարեկան բնօրրանը ենթարկվի Սարդարութերմացք, ձիագոդ մի անտոհմ ավագակի։ Չի՞ լինի։ Չե՞նք ընդունում։ Մենք ինքներս ենք մեր երկրի օրինական ու բնիկ տերերը։ Եվ չէ որ մեր ու պարսիկներիդ միջն ուխտ ու պայման կա՝ Հաստատված ոչ միայն արքայական երդում կնիքով, այլև աստծու կողմից, որ միշտ արդար է ու բարի, նաև օժտված ու սրբագործված մեր ու ձեր թափած արյամբ՝ օսմանյան սուլթանների դեմ մղած համատեղ պատերազմներում։ Մի՞ն հարավոր է ուրանալ միատեղ թափած արյունը։ Ոչ թե երկ-

յուղից, այլ խղճմտանքի ձայնով ասում ենք, նման բան մի՛ արա, թադավոր մեծ: Հայոց մեծաշխարհի Արցախը իւրեք իրեն է, իր խղճի, իր ձայնի, իր արյան ու երդման տերը Մենք մազի շափ անգամ շենք հեռացել մեր ու ձեր միջև կընքած դաշնի ուխտից և երբեք մի լվի խայթոցի շափ անգամ ցավ շենք պատճառել քո երկրին: Մենք ոչ մեկին ոչ ենթարկվել ենք, ոչ էլ կենթարկվենք: Մենք մերժում ենք ստրկության լուծը և պատրաստ ենք պաշտպանելու ինքներս մեզ, մեր հողը, մեր հավատն ու պատիվը: Այս է մեր հաստատուն խոսքը և անդառնալի կամքը:

Հայ իշխանները իրենց այս խոսքի գիրը հանձնեցին Սաֆար Ալի միրզային ու, թեև վստահ չէին Զենդ Թերիմ թագավորի ազնվությանը, բայց և այնպես նրան ճանապարհոցին գուսադ հարգանքով:

Երբ շահի էլլի-դեսպանը հրաժեշտ էր առաջիս մերոնց, իսկ դա կատարվում էր այն վրանից ոչ հեռու, որի մեջ էի, ևս նկատեցի, որ նրա աջ ականջի թթակին խոշոր, անբնական խռոշոր ուն խալ կա: Իմ մտքում Շուշի հեռավոր կայծեր բռնըկվեցին, Ո՞ւմ ականջին եմ տեսել այդ ուն խալը: Ո՞ւմ մտա Որտե՞ղ... Զեմ սխալվում, տեսել եմ: Տեսել եմ: Կամար Սոլթյանը փաթաթվեց ինձ:

— Բա՞ն հիշեցիր, մայրապես:

Ես սթափվեցի:

Երկար ժամանակ նույն համոզմունքն էր մրճանարում զլուխս՝ տեսել եմ, տեսել եմ...

Տագնապներով էր բացվում Շուշվա օրը, մթնում՝ խտացած խճողանքով: Հայոց զորքը օր-օրի սաստկացնում էր բերդի պաշարումը: Սկսեցինք նաև թնդանոթներով արկակոծել քաղաքը: Մենք իմացանք, որ Փահան խանը վճանել է իր ավագ որդուն՝ իրահիմ խալի աղային ուղարկել Զենդ Թերիմ շահի մոտ: Նրան գիտեինք, հոր նման բիմբեռ ու ժառանասակ էր, տասնութ տարին նոր լրացած: Որդին հորը հարցրել է՝ իբրև պատա՞նդ ես ինձ ուղարկում: — Հայրն ասել է՝ ոչ, ես քեզ կօծեմ ոսկու բեռներով, որ տանես Պարսից թագավորին նվիր: Կգնաս խնդրելու, համոզելու, որ շտապ գա ու փրկի Շուշին: Կգեա՞ս: — Հրամանիդ հեազանդ եմ, հայր. — ասել է որդին: Սակայն... սակայն մի՛ մոռանա մեր շարիաթի կանոնը: Թա-

գավորների մոտ պատվիրակ ու գեսպան կարող է գնալ միայն քարին արած՝ ամուսնացած մարդը: — Այդ առ և տուրին ներկա Մելիք-Շահնազարն ասել է օգտակար է որդուդ շահի մոտ ուղարկելը, խան իմ: Ես ևս հարկավոր կշիռով գանձ կտամ: Ուկին նույնիսկ աստծու փակ գուռն է բաց անում: Քո որդի իրրահիմ հալիլն արդեն արբունիք է: Պատակիր: Ես իմ դուստր Հուրիդադին կտամ տղայիդ կնության: — Նա Ավետարանցից բերել է իր աղջկան, նրան հայտնել իր զնիորդ Տասնհինգ տարեկան աղջիկը լաց է եղել: Հայրը նրան հրել է իրրահիմի ուրբերի տակ: Համբուրի՛ր...

* * *

Կառկառ գետը շառաշելով զարնվում է ժայռերին հենված Մազեն կամրջին, ջրի ցալքուններ շարտում Քարաքերդի պոլոնից կախված թղենու վրանաձն թփին: Թղենին շյուղները իշեցրել է ցած ու ագաճորեն կլանում է ջրի ցալքերը: Երբեմն ցուր է ցողվում նաև Կամար Սոլթանի գոռուզ մազերին, երեսին: Մազերի կաթիլները մնում էին գոհարների պես, այսերինը իսկույն հալվում մորթու տաքից:

Հայոց զորքը կանգնած էր Շուշի քաղաքի տակ՝ նրա ցածրագիր, սաստիկ թեք փեշերին, ապա կիրճերում, նաև ազելի վերենում, ուր սարալեզզակի վրա նեղ անցը էր՝ Երևանյան դարպասը: Զորքը թղենու ոլոր արմատների վրա է թառած, ցածում գետն է, նաև Քարինտակ գյուղը և մի ջրաղաց: Մելիքի թիկնապահ Հարյուրակի զինվորները զիրքավորված են ջրաղացի մոտ: Հանկարծ Կամար Սոլթանը ծղրտաց.

— Նոր դավադրություն է կատարվել: Մելիք-Շահնազարն իր Հուրիդադ աղջկան կնության է տվել Փանահ խանի որդուն...

Ոչ ոք չարձագանքեց նրան:

* * *

Մելիք-Հովսեփը հեաց ձիու վրա:

— Պարսից բանակն անցել է Կառկառ գետը: Մոտենում է Ժեղ...

Հայոց բանակում երկար փողեր հնչեցրին վերեից, Շուշի բերդի աշտարակից վառվող շահեր նետեցին ցած:
— է՛, հե՛, հե՛յ...

Ախր ինչո՞ւ աստված հոգիս շի առնում: Դե եկ, մտաքերիր ինձ, այ ամենակործանիլ ու ամենափրկիլ աստված, առ իմ շունչը, իմ՝ խոշա Արքահամ կոչվածիս հոգին: Առ, է՛, այս ինչքան անկումների եմ վկա:

— Զենդ Թերիմ շահը մեծ զորքով գալիս է մեղ վրա,— գամեց Մելիքը, կարծում եմ պետք է անհապաղ ետ քաշվել Շուշու տակից ու ներկայանալ շահին:

Մելիք Աղամը գունատ նայեց նրան: Չլինի՞ սուրը հանի...

Սուրը հանեց: Բայց ոչ Մելիք Հովսեփի վրա:

— Կեռվենք Զենդ Թերիմ շահի դեմ: Նրա՛ դեմ: Շունը եկել է փրկելու շանը:

Ո՞վ է հասկանում, թե ում մահակն ում բամակում է: Մահակը երկու ծայր ունի...

Հայոց զորքը կազմվեց, կապվեց, գնաց դեպի Կառկառ գետի ցածրերը՝ պարսից բանակների դեմ:

Սառը բամի անցավ Շուշու բերդի առամմերի արանքից: Իմացանք, որ գիշերը խանն ու մելիքն իրենց միացյալ զորքով հեռացել են Շուշուց, խառնվել շահի բանակին:

Մենք իսկույն մտանք Շուշի:

* * *

Աշտարակի հրակնատից մոլող քարի հոտը գրգռեց Մելիք-Աղամի բիմքը: Նա շեշտակի շրջվեց հենց նոր երևացած Շուռ Ավագ հարյուրապետի կողմը: Սրան թվաց, թե իշխանն իրեն հիմա կապտակի:

— Լուրն ուշ բերիր:

— Մի բարկանա, տեր մելիք,— հեղ ասաց Շուռը: — Թե այստեղից անգամ ինձ գցես ձորք, միննույն է, կառվի պես թաթերիս կկանգնեմ: Պարսից զորքերը եկան... Վարարած երասխը քեզ օրինակ:

— Աւրի՞շ:

— Փանահ խանե ու Մելիք Շահնաղարը ընկել են թագավորի ուժքերը:

Մելիք-Աղամը նրա հետ իշավ աշտարակից: Զորապետներին հրամայեց զորքը պատրաստել երթի՝ ամեն ինչով, զենքով, ուտեստով, ձիերի զարու ռեռներով: Կամար Սոլթանը խանդաղատանքով նայեց Ասպար տիկնոջը, ապա նրա ամուսին Սուլ Ավագին:

— Ուրեմն կին առար, հա՞:

— Այո, մեծ տիկին,— հեղ պատասխանեց Սուլ Ավագը:

— Հիշում եմ, մի տաս տարի առաջ հորս հետևմեր տանն էիր, ասում էիր երբեք շեմ ամուսնանա:

— Է՞՞,— ասաց Սուլը:— Նույնիսկ մեր տեր աստվածն է իր խոստումը փոխում օրը մի հինգ անգամ:

— Ասպարը մեծահոգի է:

Նա համբուրեց Ասպարի երեսը:

— Մանրամասն կիմանամ մի ուրիշ օր: Հիմա կովի ենք գնում: Պատերազմ է:

Մի ամբողջ տարի Սուլ Ավագը ջրարերդի մի քարայրում պահեց Շաղկերտից մի կերպ փախած Հովհաննես ևանդամիրյանի այրուն: Աների մեջ էր: Անվերջ մոտենում էր մատուի կամ նաև ատակի խաչքարի, մոմեր վառում, ծնրադիր ազոթում: Ինքն ամեն կերպ աշխատում էր նրան վերադանել գեղի իրական կյանք, պոկել ողիների մոռած աշխարհից: Ինչ էլ լինի, կյանքը քաղցր է, ապրելը՝ պարտազիր: Ջրաբերդի հաղթանակից հետո, մի երեկո, երբ ինքը հոգնած մտավ իր քողամիկը, այնպես ցնցվեց, որ քիչ մեւաց ետ փախշի: Քողամիկի մեջ կանգնած էր Ասպար տիկինը: Սակայն ոչ տաղտկալի սկերով, ոչ հոնքերը մոռած ու ոչ աղոթքի մրմբնչոցով: Հազել էր իր աշխարհիկ շքեղ զուգսը, մազերը հյուսել, հանգուցյալ ամուսնու նվիրած ատրճանակը խոթել արծաթե լայն գոտու արանքը:— Ես վերադառնում եմ դեպի կյանք, Ավագ:— Եթա ձայնը զվարթ էր, վճռականության շեշտերով: Չհառաշեց, ձեռքերը պարզեց ինձ:— Ամուսին իմ...

* * *

Եկել ես, հա՞, Զենդ Թերիմ շահ,— բեղի ծայրը կրծելով
ինքն իրեն ասաց Դիզակի Մելիք-Ծսային:— Հեշտ կու գնա-
ցող պատառ ես համարում մեզ, հա՞: Հետդ պատահք բերե՞լ
ես, որ լեշդ փաթաթեն:

Զենդ Թերիմին տեսել է մի երկու անգամ, երբ Թավրիզի
տերն էր միայն: Հողի սահմանով հարևան են, մեջտեղը Երասխ
գետը: Հաստապոշ պարսիկ է, Նազիր շահին ցեղակից: Երբ
Նազիրը ողջ էր՝ նրան թաքուն թշնամի:

Տողի արծվաբնից Մելիք Ծսային տեսնում է աշխարհը:
Իր տիրույթը ընդարձակ է, թուրքից ցնկնած Փանահն աշք
ունի Դիզակի վրա ևս: Վերևում Դիզափայտ լեռն է՝ Կատարո
գագաթով, փեշերին կուտակ-թանձր անտառներ, հարավը
Երասխի հարթ անկողինը՝ բամբակի ցանքսեր, գարի, որ
մայիսի սկզբին հնձում են, ու անսպառ ցորեն, բրինձ: Պար-
սից աշխարհի հետ կապը Հոդափերին կամուրջն է կամուրջ
շհանդուրժող Երասխի վրա: Դա իր ապուպապ Առան նահա-
պետն է կառուցել երկու հազար տարի առաջ: Է՛, քանդվեր
այդ կամուրջը: Դրա վրայով Հայաստան մտավ Զենդ Թերիմ
շահը: Իր մի այլ պապը՝ Ծսայի Արու Մուսեն ուղիղ հազար
տարի առաջ այդ կամրջի մոտ ջարդեց արարական զորքը:
Հա, եկել է պարսիկ զորքը: Մելիք-Աղամեն ու Մելիք-Հով-
սեփը Շուշվա պաշարումը հանել են, իշել լեռնաշխարհի
ստորոտը, գեմ կանգնել պարսից շահին: Իր զորքը ոչ թե
աշխարհազոր է, այլ՝ մշտական ու կանոնավոր, համախումբ:
Ութ տարի առաջ ինքը օրենք սահմանեց՝ զինվորական պար-
տադիր ծառայություն իր ընդարձակ գավառի սահմաններում:
Ամբողջ զորքը հեծյալ է, սակայն նաև վարժ է հետիոտն մար-
տերի:

— Ի՞նչ ես ասում, կի՞ն իմ, պարսից թագավորը ինքն է
զորքով եկել մեղ վրա:

— Իմ ասածը քո նպատակն է, իմ աեր,— հեզ ասաց
Բեգում Խաթումը:

— Գնա՞մ, թե փակվեմ բերդիս մեջ:

— Եթե դու փակվես, ինքս կզնամ զորքիդ գլուխն ան-
ցած:

Մելիք-Ծաային տրտմեց: Ոչ խեղճությունից, ոչ Դե, ինչ
կա որ, կզնա արքայական զորքի, հենց արքայի դեմ: Կկովի,
թեկուղ թշնամին երեք հարյուր հազար լինի: Կկովի: Ցավն
ուրիշ էր...

Առավոտյան Կատարո լեռան գետքից սուրճանդակ եկավ:
Պարսից զորքն անցել է Կառկառի կամուրջը: Նրան են միա-
ցել Մելիք-Շահնազարն ու Փանահ Ալի խանը: Մելիք Ծաային
զորքը բերդից հանեց: Չի շտապում: Թող թշնամին տափա-
րակներից բարձրանա լեռնառստերը: Այդպես՝ շշտապելով էլ
գնաց: Ծուշի քաղաքը թողեց աջում: Գետն ի վար իշավ ու
լեռնառստի նեղոցքում հանդիպեց Մելիք-Աղամին:

— Նեղո՞ւմ է,— գանդաղ հարցրեց, ավելի գանդաղ իշ-
նելով ձիուց:

— Չէ,— Հեղնեց Մելիք-Աղամը: — Շահը կարմիր խնձոր
է ուղարկել մեզ:

— Կուտը բկին կմնա:

Ցածում Ազուենի դաշտն էր՝ մթնած պարսից բանակի
զանդվածներից: Ճամբարում, շահական վրանից ոչ հեռու,
երեսում էին Մելիք-Շահնազարի ու Փանահ խանի սև վրան-
ները...

* * *

Լուսաբացի հետ ծանր-ծանր շարժվեց պարսից բանակը:
Գիշանգղների երամներ էին ուղեկցում նրան, հետեւ հավա-
քելով հսկայական բանակի թողած աղտեղությունը, կերակ-
րի մնացորդ, նաև հոշոտելու հիվանդ, լքված զինվորներին:

Ռազմական ավագանին Սուլ Ավագին ու Թուրի Արզու-
մանին հրամայեց իրենց հեծյալ հարյուրակներով հեռանալ
դեպի Խաչեն գետի ավազային հովիտը՝ այդ կողմով դեպի
Խաչենի վերեները ընթացող պարսկական բանակի մի ճյուղի
շարժումը կասեցնելու:

Զորախումբը շարժվեց: Աշնան Խաչենը պղտորվել էր, վա-
րարել, մի բան որ զարմանալի էր տարվա այս օրերին: Մի
տեղ Սուլ Ավագը ձին քշեց դեպի մոտիկ խաչքարերի կու-
տակը: Քարերի անտառի միջից անսպասելի դուրս եկան
հիսունի շափ հետիոտն մարդիկ: Նրանք հրացանները բռնել

էին գլուխներից վեր, հորիզոնական՝ որարեկամբ ներ նշանով: Մեկը, որ խիստ բարձրահասակ էր ու երիտասարդ, գդակը հանեց:

— Ողջույն, Սուր հարյուրապետ, նաև քեզ ողջույն, թուրի Արզուման: Ահա մենք եկանք:

— Խոչ մարդիկ եք:

— Էստեղ, մոտիկ Առաջաձոր գյուղից ենք: Եկել ենք մատնելու հայոց գրոշի տակ: Ես ուամիկ եմ, սա էլ իմ պապն է:

Նա ցույց տվեց ամբողջովին ճերմակ հագած, սպիտակ մորուքը գոտուն նստած մի բարձրահասակ ժերունու:

— Պապս է, ասացի: Հարյուրերեք տարեկան: Ոտքը գետին տվեց, թե ես էլ եմ ձեզ հետ կովի գալիս ու եկավ:

Սուր Ավագը համբուրեց ժերունու մորուքը: Սերունին խանդավառվեց.

— Է՞, անունդ լսել եմ, Սուր: Խաչը դեն ես գցել, զենք վերցրել, ոնց որ մեր էնիքը՝ Տեր-Ավետիս քահանան: Պավիթ-Բեկի զորքում: Հա՛, արնդ ապրի: Հա՛, հա՛... Հայի փըրկիւը զենքն է, զե՞նքը:— Նա կոացավ, ցամաքած մատներով մի բուռ հող վերցրեց գետնից: Քսեց երեսին, համբուրեց:— Մեր հողն է, մե՞րը... Հոտ քաշեցեք, մարդիկ, մեր հողից արյան համ ու հոտ կղզաք: Մեր հողը մեր արյամբ է կենդանին: Եկել եմ իմ արյունն էլ տալու մեր Պարաբաղին, որ օտարի ճանկ շընկնի: Մենք մեր արյունով կենդանի կպահենք աշխարհը հայոց, մեր Պարաբաղը...

Դնացին ու իշան Խաչեն գետի մեջ մտնող մի ոչ մեծ ձոր: Գլխավոր զորակայանի հրամանը հստակ էր՝ թշնամու առաջ փակ պահել զեպի Խաչենի վերեները տանող ձորաբերանը: Փա՛կ: Բնականից անհանդիստ, խլրտացող էր Սուր Ավագը: Նաև համառ էր, հպարտ: Երբեք զիխարկ չէր հանում նույնիսկ իր մելիք աիրոջ առաջ: Զորապետներից ոմանք ատում էին իրեն, զիտի:— Մեր զիխին շարիք է դառնալու:— Հարյուրակի հեծյալները հլու-հնագանդ էին, թեև շատերը իրենից տարիքով մեծ էին: Լուս կատարում էին նրա կեսարերան հրամանը: Նաև զիտեին՝ նրա մարդկանցից ոչ ոք թիկունք չի ցույց տվել թշնամուն: Սուրը զիտի զրավել զինվորի սիրուք: Պատժող ձեռք ունի, նաև անուղղելի վրեժների է:

Հնար է գտնում հանկարծակի մխրճվել թշնամու թանձրության
մեջ ու հաղթող դուրս գալ անհույս վիճակից անգամ:

Թուրի Արթումանը հարցրեց:

— Կհաջողե՞նք, Սուռ հարյուրապետ:

— Մի՛ տարակուսիր, կնիկ հո չե՞ս—խեթեց Սուռ Ավա-
զը: Միտքը պարզեց: Դաշտ տեղը վտանգավոր է բախվել
իրենցից հարյուր անգամ մեծարանակ զորքին: Օձին պետք
է հանել բնից, քաշել զեպի լեռնաճեղքերը և... կհաջողեն:

Զորախմբի մեջ էր հակ Ասպար տիկինը՝ վիրագարման
միանձնուհիների հետ: Հազել էին տղամարդու զգեստ, ով
ինչ զտել էր՝ լայնփողը տարատ, կաշվե զոտի, արանքներում
դանակ: Զիերի վրա էին, հինված: Խուրցիններում զանազան
դարման-դեղեր, վիրակապի կոշտ կտավ ունեին: Թիկունք-
ներին սպիտակ խաշանշան էր կարված: Առաջ եկան բարձր
խոսելով, աղմկելով: Զինվորները, զինվոր տղաները, հատ-
կապես ազապները, սկսեցին ձեռ առնել միանձնուհիներին:

— Է՛յ, քույրիկնե՞ր, կովի ժամանակ ինչպե՞ս պիտի փախ-
շեք, հաստ հետույք-գմակ ունեք:

— Երեխ զու ես ճղելու սովոր,— կծեց աղջիկներից մե-
կը, որ շենք էր, կապույտ ալքերով, ունքերը սև:

Աղջիկները լեզու ցույց տվին բամբառակ տղային:

— Դե եթե զու տղամարդ շես, պարսիկը մեր զոտիները
կը անդր:

— Ո՞ւ...— Հառաշեց զինվորը: — Բերան է, բերա՞ն: Ամա-
իմ բեղերով էնենց փակեմ էղ բերանդ, որ...

Աղջիկը ձեռքը գրեց իր կրունկին:

— Այդ բեղերովդ իմ այստեղը կարող ես ծածկել միայն:
Բոլորն այնպիս քրքչացին, որ նույնիսկ ձիերը խրտնե-
ցին: Կատակող զինվորը փլվեց ձիու թամբին: Ամոթից կար-
կամեց:

* * *

Մեծ գաշտի բերանից մինչև զետի եղեգնուտները ծածկ-
վեցին պարսից զորքերով: Գետին նստած սև քաշաթուխաղ է,
ինչ է: Սուռ Ավագը երկար նալեց թշնամու կողմը:

— Հույսներս ինքը՝ միայն տերը:

Խաշենի հովիտը միւրճված պարսից զորաբանակի գլուխն էր պատերազմներում թրծված Քյաղիմ խանը: Զորքը բերում էր երթային կարգով: Պարզ է, չի նկատում իր առջեի դարսեր, ժուղակը: Պարսիկ զորապետները չէին կասկածում, թե մտնում են հայերի օղակի մեջ:

Իրիկնադեմին զորքը կուտակ-խորիվ կանգ առավ նեղ զետուիին: Թազնեց: Միներ արին՝ ուտելու ազահությամբ: Թուրի Արզումանն ու Սուռ Ավագը Առաջաձորի խումբը ուղարկեցին գետի հակառակ կողմը: — Հուսարացից առաջ սկսեցիք: Քարերով: Նախ քարեր գլորեցեք և շատ: — Նստեցին, մնացին: Գիշերը վրա հասավ: Սուռը գլուխը դրեց կնոջ ծնկին:

— Հերիաթ պատմիր:

— Վախենում ես քնե՞ս, ջա՞նս: — Ասպապ տիկինը ձեռքը խոթեց նրա բլուզի արանքով, սկսեց տրորել նրա մեջքը: — Լինում է, չի լինում...

Գիշերը հոսում էր աշնանային տագնապներով:

Մոշահավ ճկաց:

Լուսաստղը վերևից ժպտաց չգիտես ում: Կապույտ մշուշը սկսեց հեռանալ ձորից ու գետը երևաց բավականին հըստակ: Դիմացի լեռնազիսից միանգամբից երեք, թէ շորս հարյուր քարաժայուր գլորվեցին դեպի ձորի նեղոցքում կուտակ մրափած թշնամու բանակը:

— Սկսե՞նք...

Սուռ Ավագի ու Թուրի Արզումանի խմբերը ևս քարեր գլորեցին: Խոկ քար ինչքան ասես կար, Հայաստան է, չէ՞: Կպչում էին մեկին, զոռ անում, «Հը» ու տեղից պոկում: Մի քարը գլորվելիս էլի հիսուն քար էր պոկում տանում:

Զորք դղրդաց...

Հայ հեծյալները, որ հետիոտն էին դարձել, գլորվող քարերի ետից իջան ձորը: Հասան գետեղերք ու ծառերի ետեղից հրացանային կրակ տեղացին փոշու ու քարամրրիկի մեջ խելագար խլրտացող, փախչող, վայնասուն անող պարսիկների վրա...

Երեկոյան անթամբ ձիերի վրա Զենդ-Քերիմի բանակի մեջ ընկավ ահեղ կոտորածից մազապուրծ եղած Քյաղիմ խանը, հազիվ մի երեք հարյուր ձիավորների հետ: Շահը տընկ-

ված էր իր վրանի առաջ: Փախստական խանը աղաղակեց ու երեսի վրա փովեց: Շահը իր կողքի թիկնապահ զինվորից վերցրեց նիզակը, ահեղ հարվածեց Քյալիմ խանի թիկուրին: Նիզակը ճեղքեց խանի փորն ու մտավ հողը:

* * *

Պարսից զորքը, Փանահ խանի, ու Մելիք Շահնազարի առաջնորդությամբ մտավ Շուշի: Քաղաքը սսկվեց հրարխի ժայթքմանն սպասողի նման: Հայ բնակչությունը, որ տասից ինն էր, ահուարսափի մեջ փակվեց տներում: Մահմեդական քաղաքացիները ևս սոսկումի մեջ ընկան: Գիտեին, թե ինչ աղետ է պարսից զորքը՝ անգութ կողոպտող ու ավերող:

Զենդ Քերիմ շահը մետաքսի քմփուշով ժածկված, արծաթով ու ոսկով պատված ձիու վրա մտավ քաղաք: — Վերջապես դու իմ ոտքերի տակ ես, հայի Շուշի: — Զորքը մորեխի պիս փովեց քաղաքում: Կողոպուտը վայրենի էր: Պարսիկ զինվորները, որոնց վարձը կողոպտելու անսահման իրավունքն էր, խուժեցին հայերի ու իրենց հավատակից մահմեդականների տները, եկեղեցիները, մզկիթները: Մեկ-երկու օրում քաղաքի ողջ բնակչությանը մերկացրին մինչև վերջին թելը:

Զենդ Քերիմ շահը իր մոտ հրավիրեց Փանահ խանին ու Մելիք-Շահնազարին: Երբ սրանք ներս մտան, շահը Փանահին առաց.

— Որդուդ ևս հրավիրիր: Ես ուզում եմ նրան տեսնել:

Բերին նաև իրրահիմ Խալիլ բեկին: Սա դոզում էր նկատելի: Շահը շոյեց նրա կզակը:

— Օ, ցնծո՞ւմ ես:

— Քո գալու ուրախության դող է մեջս, Արև աստծո զավակ շահ, — կարողացավ ասել Իրրահիմ Խալիլը: — Քո առջև ոչ թե մենք՝ մահկանացուներս, այլև ինքը՝ մարդարեն պիտի դոզա, որ արժանացավ քո շնորհներին:

Շահը արքայական զավաղանը տնկեց, ապա նրա ոսկեհուսով մանր հարվածեց Փանահ խանի ուսը: Սա ծունկի էր եկել Մելիք-Շահնազարից մի քայլ առաջ ու անվերջ զլուկը խփում էր գեւնին:

— Դու, Փանահ խան, թեև ստոր ժագման սողուն ես,
բայց քո համատարմությունը շինայինցիք Իրանի զահին...

Փանահը հեկեկաց:

— Դու, Փանահ խան, ահա ստանում ես երկնայինի բարեկթությունը, որ ներշնչում է ինձ: Ես հաստատում եմ քեզ քո իշխանության վրա և ոչ միայն անառիկ Շուշին է քոնք, այլ ողջ Ղարաբաղ աշխարհը: Քո հպատակներն են Ղարաբաղի բոլոր հինգ մելիքությունները: Թոնն են: Թոնն են:

Եահը ակնարկեց ինձ և ես՝ Սաֆար Ալի Արդուլ Հասան բեկս, որ հլու կանգնած էի նրանից բավականին հեռու երեւլիների մէջ, ժունկի եկա:

— Տո՞ւ:

Ես շահին մեկնեցի նախօրոք նրա հրամանով պատրաստած ու փերման՝ հրովարտակը: Ոլործուն թուղթը զերցնելով, շահը դա մեկնեց Փանահին:

— Ել տեղիցդ, սիրելիդ իմ Փանահ խան: Ահա քո իշխանության հրովարտակը: Այսուհետ Ղարաբաղ աշխարհի միակ տիրակալը դու ես: Դո՞ւ ես...

Փանահ խանը համբուրեց նրա ոսկեներիզ կոշիկները:

— Դո՞ւ ես: Այժմ վեր կաց ու կանգնիր իմ երեսլի զորագարների ու խաների շարքում: Կանգնիր քո հպատակ ու բարեկամ Մելիք-Եահնազար հայի հետ, նրանից մի քայլ առաջ:

Հինգ օր հետո շահը նորից հրավիրեց խաներին: Փանահին ասաց.

— Հավատացած եմ, որ հպատարիմ կլինես ինձ, Փանահ խան: Հույս ունեմ, որ քո տիրութներից կվոնդես հայ մելիքներին, որ ապատամբ են ու զյավուր ոռւաներին բարեկամ: Ես մեկնում եմ Հայաստանից: Քեզ եմ հանձնում շորտ հազար սավարի հեծելազոր և հինգ հազար սարրազ հետևակ՝ իմ ու քո թշնամիներին կործանելու հավատով:

Նա էլի խոսեց: Ի վերջո մատով մոտ կանչեց Փանահի որդուն՝ Իրրահիմ Խալիլին:

— Դու, զավակս, պատրաստվիր հետա մեկնելու Սպահան: Դու կապրես իմ արքունիքում, և շատ պատիվներ կրատանաս ինձնից:

Ես տեսա, թե ինչպես ցնցվեց Փանահ խանը: Եահը նրա

որդուն պատանդ է տանում հետք: Իր վրդովմունքը ցույց
լտալու համար, խանը ընկավ շահի ուժքերը:

— Դու մեծ ես, դու բարեգութ... 0՛, ալլահի փոխանորդ:

Երեք օր հետո Զենդ Թերիմ շահը հեռացվ Շուշուց: Նա
իր հետ տարավ իր զորքի հիմնական մասը, նաև իրրահիմ
աղային՝ գաղտնի հոկողության տակ:

Հայաստանի լեռնագագաթները ձյունել էին:

* * *

Հայոց զորքը քաշվեց լեռների բարձրները: Դիզակի Մե-
լիք-Եսային վերներով մեկնեց Դիզակ, Մելիք-Ազամն ու
Մելիք Հովսեփը իրենց գնդերով հեռացան դեպի Զրաբերդի
ու Գյուլիստանի պեղոցները:

Զիու վրայից Ասպալը թերվեց ամուսնու կողմբ:

— Հիշո՞ւմ ես Ազուլիսի Թումա ավագերեցին:

— Այս, ի՞նչ կա:

— Սպանվել է: Եկել է Ամարամ՝ գրյանք տանելու դրա-
բոցի համար: Խորայել կաթողիկոսը նրան սպանել է, դիակը
գցել գետը:

— Մի՞թե... Ծուռ Ազագը չէր զգում, որ իր կոշտ մատները
շովել են: Արդեն սկսում են մեզ սպանել՝ մերոնց ձեռքով:
Աչեզ է:

* * *

Հիմա շգիտեմ էլ, թե ինչը ինչոց է: Մեկ տեսար մի քնա-
րեր հանգարանիցուն է պատում ինձ և ես երկների մեջ եմ
ինձ զգում, իրրեն մենավոր մի ամպ: Մեկ էլ էն տեսար, որ
«Հաֆ»՝ թրբում է հողիս: Այսպես՝ ես ի՞նչ իմանայի, որ այս
Շուշի քաղաքում զարունք զալիս է տաք քամիների բերեին
խաղալով: Հու ես քամի՞ չեմ, կամ զարուն, որ իմանամ:
Քայլ ահա ես կարող եմ ձեռքիս ընկուզենի զավազանի սնա-
միցից երեք հարյուր արշին ընտիր մետաքս-արբիշում հանել
ու Շուշվա փերեզակներին զարմացնել:

Քամին հարապից՝ Երասխի կողմերից փշում է ինքն իրեն,
ոչ ոքի կարիքը շունենալով: Պարզապես բերանը կլորացնում

ու փշում է: Փլում է, ոչ կարող ես բռնիս, ոչ էլ ինքդ նրա հանգով փշես... Տաք քամին հանում է իր մեծ-մեծ, հիսուն հազար լիգուն, զրանով լիզում Շուշու տների պատերը, քարերը մաքրում ձմեռը նրանց վրա կպած կովի թրիքից ու հարրած մեկի փսխածից, որ չօրացել է: Հետո սողում է մայթի վրայով, որ սալահատակ է, հավի պես քուզուչ անում, և ինչ-որ մի շնչին բան գտած, ցնծալով, գոռալով, պարելով տանում դեպի մոտիկ անդունդը: Քամին ետ է գալիս, աներևութ լիզուն կոխում տանիքների ու փողոցի քարերին մնացած ձյան տակը, խուսուտ տալիս, քրքրում և... և ձյունը լաց է լինում՝ շգիտեմ, հաճույքից, թե կորուսվելու ահից:

Սիրելի՝ հարազատ Շուշի:

Բոլոր քարերը լաց են լինում: Քամին լիսկացնում է ձյունը, մանում եկեղեցի շտապող կանանց փեշերի տակ, մինչև ծնկների վերևը և թաց ոգնորությամբ խաղտում ինքն իրեն՝ մի տաք անկյուն գտած...

Սարսափելի՝ Շուշի: Ո՞նց ես զիմանում այս անպատճառ քամու խաղերին:

Այսպես եկավ 1763-ի գարունը՝ և անժամանակ հենց փետրվարի շեմին: Իսկ Հայոց լեռնաշխարհը թմրած-քնած էր:

Պարսիկ զինվորները՝ հաստ, բարակ, բարձրահասակ ինչպես ուղտ, կարճ, ինչպես կռատած էշ, քրքրում, ծիծաղում են: Ով փոր ունի, բռնում է փորը և հրճում, ով շունի՝ վիզն է քորում՝ մի ծուռանույթ ժպիտ բարակ, թռնրի պատին կպած քերին շրթունքներին:

Ես աճպարաբություն եմ անում Շուշվա քազար-մեյքանում: Շուշին քրքջում է խենթացած: Պարսիկ զինվորներն էլ են հռչում: Կուշտ ու կուռ են: Փանահ խանը դողում է նրանցից՝ Զենդ Թերիմ շահի թողած զինվորներից, որ հինգ հազար հոգի են՝ հաստ ու բարակ, անկուշտ, պահանջող, լափող: Փանահ խանը կաշվից դուրս է դալիս, որ հացով, մսով, ձեթով, ձավարով, բրնձով լցնի պարսիկ զինվորների անտակ փորերը: Խանը կողոպուտի է ուղարկում իր զորքը: Մրանք մաշկում են ոչ միայն հայ շինականի, այլևս Մուղանի դաշտում ձմեռող քոշվորներին: Որ քերեն լցնեն պարսից բանակի անտակ որովայնը:

Այս, այսպիս եկավ 1763 թվականը:

Իսկ Շուշին՝ ոմանք կուշտ ու կուռ, ոմանք սոված զկրտացող, քրքջում է իմ աճպարարությունը տեսնելով:

Մեկ էլ հանկարծ մեկը գոռաց:

— Է՞յ, բռնեցե՞ք զրան: Դա սկի էլ հնդիկ աճպարար չէ: Դա Մելիք-Աղամ իշխանի զորապետ Սուռ Ավագն է:

Ես նայեցի դա զոռացողին ու տեսա, որ հաշենի ճըռ Մելիք-Միրզեխանի եղբայրն է: Ես իմ ձեռքի զավագանը տընկեցի ու վազեցի դեպի նա:

— Եռ' և, նորի՞ց ես դավաճանում:

Զինվորները թափվեցին վրաս ու ինձ քարան Փանահիանի մոտ:

Տարան: Ետևիցս զալիս էր Մելիք-Միրզեխանի եղբայրը՝ ահով, երբեմն հա-հս անելով, զոռալով:

— Դրան պինդ պահեցեք, դա մեր շահի ու խանի թշնամին է: Է՞յ, հա՞յ...

Մի ողջ զիշեր ու նաև մի ցերեկ ինձ բանուարկված պահեցին: Ինձ ծեծեցին սաստիկ: Ես թքում էի ինձ խոշտանգող-ների վրա:

— Ալյուծ եք կտրել, հա՞յ, կապկպած անձիս վրա: Ես ձեր...

Ալյուծ ծեծված, արյունվա ինձ նորից զցեցին խանի առաջ: Մնկներս ժալվում էին, սակայն ես ճիգ արի, մնացի ստրի վրա: Այդ էր պակաս, որ ես ընկնեմ խանի առաջ: Խանը այլանդակ հարբած էր:

— Ինչո՞ւ էիր եկել Շուշի:

— Քեզ ի՞նչ: Քո քաղա՞քն է, ինչ է:

— Չեսո ի՞նչ,— ասացի, — լեզուու կկտրես, ո՞չ հոգիս,

ո՞չ հավատս: Հետո ի՞նչ...

— Քո տերը, դու և քեզ նման մի քանի խելառ մտածում եք հայոց թագավորություն ստեղծել:

— Այո, այլպիս:

— Բայց, — չպիտեմ ինչից, ինչ-որ շափով, մի փոքր մեղմացավ խանը: — Բայց չեք տեսնո՞ւմ, որ դուք հայերդ ընդունակ շեք թագավորություն ունենալու:

— Օհո՞ւ, — ասացի արյուն շաղ տալով բերնիցս: — Ուշքի՞ն, ուղտապան ցեղի զարմ: Հայը թագավորություն ունեցել

է ամբողջ երեք հազար տարի, երբ քո նախնիք միսը հռում էին լավում: Ամբողջ ձմեռ ես մնացել էի իմ զորքի մեջ՝ լեռներում: Ես սպասում էի, որ ճանապարհները բացվեն, շորանան, որ նորից արշավենք քեզ վրա՝ ավագակ Փանահ խան: Ես հող հերկող, արտ ցանող շինականից ավելի շատ բան եմ սովորում, քան աստվածային պատգամներից:

— Դուք, հայերդ,— ասաց խանը,— պետք է հասկանաք, որ այլևս ոչինչ շունեք անելու, քան իմ իշխանությունը հլու-հնագանդ ընդունելու:

— Բայց այդ իշխանությունը դու զենքով չես նվաճել, այլ՝ գողացել ես: Դո՞դ ես, զո՞դ ես: Եվ հիմա այդպես մտածում ես միայն քո վախսկուության մղումով:

Նա սկսեց գավազանով ինձ հարվածներ հասցնել: Ես զիք տնկվել էի նրա առաջ: Նրա ամեն հարվածից հետո ես քըրքը զուամ էի:

— Մե՛կ էլ, մե՛կ էլ...

Եվ միայն մտածում էի Ասպասիս մասին՝ կողքա իմ բռնվելը իմանալով: Երկի իմացել է: Եռշվա հայերը անշուշտ լուրջ թոցը են Զրաբերդ:

— Մե՛կ էլ, մե՛կ էլ...

Ծնկներս ծալվեցին, բայց ուշքս վրաս մնաց:

Ինձ քարշ տալով տարան բանտ: Ես ինձ քարշ տվող շուշեցի պարսիկին ասացի խելք հավաքիր, մա՞րդ ես, թե՝ անասուն: Եթե ինձ սպանես, իմացիր, իմ մարդիկ քեզ ու քո զավակներին կրակի վրա կվառեն ողջ-ողջ:— Զգացի, որ ինձ զցեցին խցի սալերին: Մի կերպ շրջվեցի գեղի քարերը՝ շնչելու քարերի հոտը՝ կժու, բայց սթափեցնող:— Տե՛ր աստված, միայն ուշքս պահիր վրա:

Այսպես մի քանի օր...

Երկի բանտարկությանս ութերորդ օրն էր: Ցերեկը ինձ նորից խոշտանգեցին: Այս անգամ խանը պահանջեց, որ ես հավատագոխ լինեմ, ընդունեմ իսլամը, նույնն առաջարկեցին նաև նրա մոլաներն ու Շեյխ ուղ իսլամը:

— Եթե մեր հավատին գաս, Գյուլիստանի իշխանությունը քեզ կհանձնեմ...

Սա ասաց Փանահ խանը: Այս անգամ ես ուժ շունեցանրա վրա թքելու: Երթունքներս ուռել էին:

Դիշերը, կիսախավարում մեկը կռացավ վրաս, թաց բամբակով սկսեց մաքրել երեսիս շորացած արյունը, ուրած աշբերա: Հետո գարման դրեց վերքերիս:

— Բայց դու ո՞վ ես, — մի կերպ հարցրի ես:

— Հուրիզադը:

Նա քնքշանքով համբուրեց ինձ:

— Դիմացի՛ք, եղբայրիկս:

Այս, սա իրրահիմ ևալիլի կինն է, Մելիք-Շահազարի դուստրը:

— Դիմացիր:

— Բայց դու պիղժ ու ապական շան ցեղ ես, — ասացի նրան: — Ինձ ձեռք մի՛ տուր: Ինձ մի պղծիր:

— Հանդարտվիր, — քնքուշ ասաց նա: — Մեղա եկ նախատինքիդ համար:

Հուրիզադն այսպես ինձ այցելում էր դրեթե ամեն գիշեր:

* * *

Բանտի հսկիչ նայիրը խոշոր բանալիները զնգզնգացնելով եկավ ինձ խցիկից հանեց, տարավ կիսամութ միջանցքներով ու մտցրեց մի ընդարձակ խորշ: Ես չգիտեի օրվա որժամն է:

— Սպասիր, մինչև գալս, — ասաց նայիրն ու դուրս եկավ:

Սենյակը մի նեղ, երկաթե վանդակապատ անցք ուներ, որտեղից արևի լույսի մի գալուկ շերտ վախվորած ներս էր թափանցում, առանց տաքացնելու սառը քարերը: Ես շէի կարողանում կռանել, թե ինչու նայիրն ինձ բերեց այստեղ: Նաև երկու օր է, ինձ շեն խոշտանգում: Գուցե իմ խցիկը փոխում են: Լավ կլինի, այստեղ մի քիչ ընդարձակ է ու ահա լույս ունի, ես կարող եմ նույնիսկ ճեմել:

Այս տարակուսանքն ինձնից չէր պոկվում: Խանը իմ գրլին նոր, գուցե ավելի դաժան խաղ է սարքում: Համենայն գեավս ես իմ մարմինն ու հոգին պատրաստեցի նոր խոշտանգումների:

Նայիրը ետ եկավ, թեթև ծափ տվեց: Վանդակի մյուս կողմին իսկույն երեաց անբեղ ու անմորուա մի քսամնելի արարած՝ ոչ մարդ, ոչ կապիկ: Նա ավելի շուտ պառավ կնոջ

էր նման, քան տղամարդու: Դահիճ է, մտածեցի ու նույնիսկ կամեցա քրթալ նրա մազակուծ երեսին: Նա մոտեցավ վանդակին ու ինձ ինչ որ ասաց: Ես զգվեցի նրանից փշող ժանր հռտից: Սակայն նա իսկույն անհետացավ: Երկար ժամանակ ցանցի մյուս կողմին ոչ ոք չերևաց: Ինձ այստեղ բերող նայիրը չէր խոսում, միայն մի ժուռ ժպիտ էր զժվել նրա խոշոր բերանի անկյուններում, որ ասես զիվական մտքից էր ժաղել ու մնացել: Հուռ էի նաև ես: Չէի ուզում նրան հարցնել, թե ինչու ինձ բերեց այստեղ:

Ահա նորից երեաց քսամնելին, որին ես դահիճ էի համարում: Նա ամուր բռնել էր կարպետի սև շուլով ժածկած մեկի թևն ու զրեթե զոռով մոտեցնում էր վանդակացանցին: Ու բռնվածի երեսն էր երեսում, ոչ էլ ոտքերը: Իմ սիրտն սկսեց արսփել: Նոր զժրախտություն զգացի, աշքերս լայնացան ու բերանս նույնիսկ բաց մնաց:

Դահիճը ոսկրուտ մատներով պոկեց վանդակի մյուս կողմին կանգնածի վրայի շուլը: Կարծես իմ զիխին կայծակ հարվածեց: Ես մռնշացի ու նետվեցի դեպի վանդակը: Նրա մյուս կողմին կանգնած էր իմ կինը՝ Ասպառը: Նա ճշաց.

— Արիացի՛ր, ամուսին իմ...

Ընկավ ուշաթափ: Դահիճը զրպանից մի գեղեած սրվակ հանեց, խցանը դուրս քաշելով՝ դեմ արեց կնոջս քթին: Ես ատամներովս բռնեցի երկաթե վանդակը ու սկսեցի թափահարել: Բերանիցս արյուն ժայթքեց: Կատաղի շրջվեցի դեպի էր համար անհոգ անտարբեր նստած նայիրը:

— Օգեի՛ր, մա՞րդ...

Նայիրը զլուխն օրորեց:

— Դա իմ իրավունքից վեր է:

Ես անզորությունից միայն մռնշում էի: Դահիճը ուշը բերեց Ասպառին: Կինս կանգնեց տանքված, տրորված, ինչպես ոտքի կոխան զարձած շուշան: Նրա շրթունքները ճաբել էին, աշքերում այնքան տառապանք կար, որ հերիք էր զուցեթե մի ամբողջ սերենդի:

— Ես մաքուր եմ: Լսո՞ւմ ես, ամուսին իմ, և մաքուր եմ... Սրանը չկարողան: Երեք օր է: Երե՛ք...

Ես ինձ բոլորովին կորցրի: Զգիտեմ ինչ անեմ: Եթե հեար ունենայի, հենց հիմա ես ինքս վերջ կտայի կնոջս ու ինձ:

Սակայն իմ ձեռքերը կապկաված էին, Դահիճը բրդութ թաթերով գրկեց Ասպապին: Կինս ճշաց, սկսեց ոտքերով ձեռքերով, զլխով հարվածել նրան:

— Մի՛ արա, մի՛ արա, շո՞ւն...

Ձեռքերս լարվեցին թիկունքիս: Ծո գալարվում էի կատաղած, մատներս պրկելով... Անսպասելի զգացի, որ ձեռքերիս կապերը կտրտվեցին: Նույնիսկ զարմացա ձեռքերս արձակ տեսնելով: Թուա հոհուացող նայիրի վրա:

— Օգնի՛ր, փրկիր կնոջս...

— Ծո կտրտեցի թուա կապերը, մարդ,— ասաց նա: — Դա Հուրիզադ խանումի կամքն էր, նրա հրամանը:

Վանդակի մյուս կողմին երևաց մեկը: Ձեռքին դաշույն ուներ: Դա մինչև գաստակը խրեց դաշնի թիկունքը՝ երկու թիակների արանքը: Նայիրը բռնեց թես:

— Գնացինք: Շտապիր: Քեզ ու կնոջդ նա՛ ազատեց, նա՞ Հուրիզադ խաթունը: Փախէ՛ք...

Քիշ հետո գաղտնի անցքերով նա ինձ ու կնոջս հանեց քերդից:

— Աստված ձեզ հետ: Գնացեք: Զեր օրհնանքը նախ Հուրիզադ խաթունին տվեք, հետո ձեր աստծուն:

Երկու օր հետո ևս ու կինս արդեն տանն էինք՝ Թառինչում: Ասպապը, փաթաթվեց ինձ:

— Ես երեխայով եմ, ամուսին իմ: Այս առավոտ զգացի...

Գարունը Միջնարցախի տափաստաններից հասավ նաև լեռները:

* * *

Թարթառի գետահերձ դետքը մրափի մեջ էր: Հաղարապետ Թուրի Արդումանը մեն-մենակ թիկն էր տվել խրճիթի առջեն, ծիրանի ծառի: Սառի բունը տաք շոյում էր նրա մեցքը: Ջինվորները քնած էին մի քիշ ցած, երես ձորակում, ուր քամի լէր հասնում: Փորձեց մեռած կնոջը հիշել, սարսափեց: Փորձեց լուսածագի աղոթք հիշել: Զհիշեց: Քմծիծաղեց ինքն իրեն: Խնչ աղոթք, է՛... Մտքով խրվեց պատերազմների մշուշների մեջ: Ցնցվեց՝ լիազված ընկերների ճերմակ ու-

կորների փայլատակումը մտովի տեսնելով։ Ա՛խ, ա՛խ։ Կնո-
շը գոնե թաղեց իր ձեռքով։

Երջապատի մութ ամայության մեջ նույնիսկ եղինջի ցո-
զուն չէր շարժվում։ Թարթառ զետք, որ ցերեկը խաղաղվում
էր երկուստեր իրեն խեղդող ժայռերի արանքում, հիմա հո-
խորտում է։

Թուրի Արզումանի երեսը յոթ սապեաջրով լվացած էր,
քունը չէր տանում։ Դիշերարվի հայացքով նա զիտում էր
ցածի գաշտը։ Ոչ հեռվում, կապույտ մշուշի մեջ հազիվ նըշ-
մարգում էր հայրենի գյուղի լեռը՝ գլխին մարտական աշտա-
րակ։ Կուր գետի կողմից եկող ճանապարհը այս է քանի տա-
րի է, ամայի է։ Փանահ խանի ահից այլևս Եամախուց, թիֆ-
լիսից, Աստրախանից վաճառական քարավաններ լեն երե-
զում Հայաստանի այս կողմերում։

Բայց ահա ճանապարհին մի սև կծիկ գալարվեց։ Արջի
բնտանի՞ք է։ Զիու հոտ առավ։ Կծիկը մի պահ անհետացավ
բլուրների արանքում, սակայն նորից երեաց։ Զիու հոտը զգա-
լի դարձավ։ Պահակող զինվորները մոտեցան։ Դաշտի հորի-
զոնից միանգամից դուրս պրծավ կլոր, կալի շափ լուսինը,
շրջակայքը հստակվեց կաթնածառագ։

Թուրի Արզումանը ցատկեց տեղից։ Եկողը հաշենի տա-
նուտեր Միրզեխանի կինն էր՝ Երնջիկը մի քանի ձիավորով։

— Ի՞նչ է պատահել, ի՞նչ է եղել։

Երնջիկն իջավ ձիուց, մինչև ինքը կհանեն օգնելու։

— Ողջույն, Թուրի Արզուման, որ արդեն հազարապետ
իս, պարզապես ճանապարհին սաստիկ հոգնել հմ։ Տեղ արա,
քնել եմ ուզում։

Առանց սպասելու, նա քայլ արեց զեպի ծիրանին, սամույր
բուրբը դցեց չոր խոտի վրա, պառկեց։

— Մի բանով ծածկիր ինձ։

Թուրի Արզումանը խրճիթից բերեց իր ճամփորդական
կապերար և զրանով խնամքով ծածկեց արդեն խոր քնած
տիկնոջը։

Նստեց իր տեղը։

Լուսնյակը բավականին նկատելի բարձրանում էր։ Երկրն-
քում ամպի պատափիկ լկար։ Ժամերը սահում էին ժանր,
անազմուկ, երկյուղած։

Թուրի Արգումանի սիրաը խտղտաց: Մեջն արթնացավ մոռացված մի զգացմունք: Հիշեց իր կնոջը, որին Փանա՞խանի մարդիկ սրախողապող արին: Գնացին, կորա՞ն, հանգա՞ն... Քահել էր մի ժամանակ ինքը, տաք ու հաճելի էր իր խրճիթը, կինը, փոքրիկ աղջնակը, օջախը: Բայց ամեն ինչ կորա՞վ... Նրա հոգին այլևս չշնորհացավ որևէ սրտի քնքշանքից: Նրա ընկերը դարձավ ձին, անկողինը՝ զենքը, կյանքը՝ կոհվ-կրակի մեջ:

Երնջիկ տիկնոջ շնչառությունից ելեջում էր նրա լիքը կուրծքը: Կապայի օձիքի արանքից երևում էր նրա ճերմակ վզի մի մասունքը: Սաղիկնե՞րն են այդպես բուրում, թե՝ մաճառդինին: Նկատեց, որ տիկինը քնած վիճակում սաստիկ անհանգիստ է: Թնի մեջ երբեմն խոսում էր, որից բան չհասկացավ: Կարծես տառապած, տագնապած մի ողջ աշխարհն էր իր մոտ: Նրա մեջ կարեկցանք արթնացավ գեպի անա իրեն ապավինած այս կինը՝ դավաճանի, ստորի երեկվա կողակիցը: Սակայն կարեկցանքի այդ բռնկումը տեղնուածեղը ցնդեց: Զէ՞ որ սա դավաճանի կին էր: Մեղրը՝ շան մորթու տկի մեջ: Նա փորձեց առել Երնջիկին, սակայն հիշեց՝ լէ՞ որ նա՛ սպանեց դավաճանին:

Արեք երեաց: Տիկինն արթնացավ: Վրա նստեց, քնատ աշքերը տրորեց ջղային:

— Է՞լ, ո՞վ ես, ո՞վ ես,— գոռաց Թուրի Արգումանի վրա, սակայն ցեցվեց զղալով:— Երեիր ինձ, Արգուման հազարապետ: Թնից եմ:— Վեր կացավ՝ հրեղեն սյուն:— Անքուն մնացիր ողջ դիշեր, Արգուման: Երեի հափշտակված ինձ էիր նայում, երեի մարած հուշեր էին արթնանում մեջդ: Երեի... Կնոջ գիտեի: Զկա՞ն եանն սպանեց: Երեի կարուում ես անշափի: Դժբա՞խտ մարդ, օդի ունե՞ս:

Թուրի Արգումանը գգմաշափի ուլատկից թթի օդի լցրեց փայտե փոքրիկ գավաթների մեջ՝ մեկն իրեն, մյուսը տիկնոջը: Տիկինը հոտոտեց օդին, շեշտ նայեց հազարապետին:

— Բարի լույս, Արգուման: Բարի լույս...— Օդին կով տվեց, լավաշի մի սպատառիկ դրեց բերանում:— Երեի գիտես, որ ես սպանել եմ Մելիթ-Միրզեխանին:

— Գիտեմ: Ամուսին էր... Սպանեցիր:

— Մի շան, որ մտել էր տունս՝ հողաթափերս գողանալու

Երկար լուր մնացին: Թուրի Արզումանը հանդ էր անում որևէ բան հարցնելու, տիկինը միայն ձեռքն էր թափ տալիս՝ պետք չէ:

Չենք հեծան ու մեկնեցին գեղի լեռը՝ ջրաբերդ ամրոց: Երբ գետն անցել էին, Երնջիկը շրջվեց գեղի կողքից եկող հաղարապետը:

— Ինչո՞ւ ես թամրի վրա եռումեռ զալիս: Զէի՞ր սպառում:

— Կեցցե՞ս: Դավաճան Միրզեխանը սատկեցրիր: — Թուրի Արզումանը թեթևացած հոգոց հանեց: — Երեք զլիանի վիշտի մի զլուխը թոցրիր: Աստված մեծ է:

— Երեկ գիշեր նույնպես մարդ սպանեցի:

— Ո՞ւմ, — հաղարապետը սրվեց: — Ո՞ւմ:

— Եռաւանոց անապատ քաշված մի միանձնու՞ն:

— Բան չեմ հասկանում, — ավելի սրվեց Թուրի Արզումանը: — Ո՞ւմ:

— Ի՞նձ, — Երնջիկը հզոր ծիծաղեց: — Ի՞նձ, որ անձս խեղդի էի կուտակրոնի սեհրով: Հիմա նայիր, շե՞ս տեսնում, որ սեհրի մեջ չեմ: Չես տեսնո՞ւմ, որ զինված եմ, նույնիսկ խումբ ունեմ՝ տասներկու կտրիմ: Մեջս սպանեցի Քրիստոսի աղախին դարձած թշվառին: Մնացի ինձ հետ, իմ բնական կոշումով: Լքեցի վարժարանս: Ո՞ւմ է պետք նման թեկուզ սրբարան, երբ երկրիս մեջքը կոտրվում է: Ես ինձ նվիրում եմ հայրենիքի փրկության գործին և... անդարձ:

Օրը լրիվ բացվեց:

Ոչինչ ինձ համար այլևս արժեք չունի: Զզվանքով եմ հիշում վարժարանիս քահանային, նրա ծնկաշոք աղոթքները, ժամասացությունը, որին զրեթե միշտ ներկա էի լինում: Քահանան համախ էր խաչը մեկնում ինձ: — Զորավոր լինեա, թշվառների պահապան դուստր Քրիստոսի միանձնու՞ի Երնջիկ:

Այս, ոչինչ ինձ այնքան բավականություն չի պատճառում այժմ, որքան իմ ձեռքով արյուն թափելը: Իհարկե միայն թշնամու արյուն: Մելիք-Միրզեխանը ևս թշնամի էր, որի կինը դառձա՞ նրան սպանելու մտքով: Փորոտիքը թափեցի, փորային գեղին արյունը գարկեց դաստակիս: Դաստակ բշտել է այդ զզվանքից ու ինչքան իմ զինվոր տղաները վայ-

թի խոտեր են գնում վրան, վերքերը լեն անցնում։ Հաճախ եմ հանդիպում Թուրի Արզումանին ու քրքջում նրա երեսն ի վեր։ Իսկ նա միայն հեղ ծիծաղում է, գլուխը տարուքեռում։

— Ամեն ինչ քեզ սազում է, — ասում է ինձ։ — Նույնիսկ երբ թշնամու գլուխ ես կտրում։

— Երևի, — մի անգամ ասացի նրան — մի օր էլ իմ գլուխը կտրած կտեսնես մեկի ձեռքին։

* * *

Մելիք Ազամն ու նրա որդին Մեժլում բեկը, շաբաթը մի անգամ անգայման այցելում են ինձ։ Իմ զինվորների համար, որ արդեն հարյուրտաս մարտիկ են, բոլորն իմ նախկին հպատակները, ամուսնուս ատողներ, նա զենք է բերում, վառող, լցոնած փամփուշտ, երբեմն նաև նոր հրացան, որ շգիտեմ որտեղից է ձեռք բերում։ Չեմ հարցնում։ Մեկ-մեկ էլ Շամախուց՝ իմ հորենական տնից են ինձ այցի գալիս իմ ողջ մնացած հարազատները։

Այսպես եմ։ Ես այսպես եմ, մարդիկ։ Իսկ թե աստված կրնգունի՞ ինձ իր դրախտում, թե ոչ, դրա մասին բոլորովին շեմ էլ մտածում։ Ես հիմա վայրենի ձի եմ։ Զէ, չէ, էպ հովազ եմ՝ պոկված կրխափորի բարանձավներից։

Գյուղը մի ակնթարթում ինչ կարողացավ շալակն առավ։ Մեծ ու փոքր առանց խուճապի գնացին գեպի Թիրա լիռան ապաստարանները։ Փանահ խանը զորք է ուղարկել մեր զյուղը կողոպտելու։ Ուղարկել է իր զորապետներից մի նայիրյուղբաշու, որին շեմ ճանաշում, բայց ասում են դանակ զնես րկին, աշք չի ճպի։ Ես իմ տղաներին զյուղ ուղարկեցի ու նրանք գյուղացիներին, որ հագար հոգուց ավելին էին՝ մեծ ու փոքր, ապահով հասցրին լիռան սառցաճեղքերին։ Այդ զյուղից ութսուն տղա եկան մոտս։ — Մեզ զինվոր վերցրու։ — Ես նրանց զենք ավի։ Միայն իմ զինվորները գիտեին, որ ես կին եմ, զյուղացիները՝ ոչ։ Ես հարյուրապես տղամարդու զենքու ունեմ, դա ինձ համար կարել է տվել Թուրի Արզումաներ։ Այդ համազգեստն ինձ շատ է դուր գալիս, միայն բանկոնիս ուսագլուխներն են մի քիչ մեծ։ Դե, բան չկա, ես

դրա դաստարկ տեղերը բուրգ լցրի: Աշխատում էի իմ ձայնը
կոշտել, տղամարդկային դարձնել: Երբեմն հաջողվում էր:

Լեռան ուսից նկատեցի, որ Փանահ խանի զինվորները
կողոպտեցին զյուղը, ապա բեռներով ժանրացած մտան զյու-
ղի մոտի վանքը՝ դա ևս կողոպտելու: Վանահայր վարդա-
պետը կտրեց նրանց առաջը և գավազանը տնկելով գոռաց:

— Մի՛ պղծիր աստծու տունը, անօրեն կողոպտիշ: Հե-
ռո՛ւ...

Մյուս վանականներն էլ փայտեր վերցրին, երեկ քսան
հոգի: Փանահ խանի մարդիկ շան տեղ էլ չդրին նրանց, սկսե-
ցին կողոպտել տաճարը, կից շենքերը, վանականների խցե-
րը, ուսումնաբանը: Նրանք հանեցրն տաճարի բյուրեղապակ-
յա ջահերը, որ իմ ապուապն է Երուսաղեմից բերել տվել: Հափշտակեցին պղնձե անոթները, արծաթե սրբությունները,
դորգեր, վարագույրեր, ամեն ինչ: Վանականները դիմադրում
էին, սակայն Փանահի զինվորները նրանց գանահարում էին
անգթորեն: Նայիր յուզբաշին գագազած վարդապետին սրով
տապալեց, դանակով կտրեց գլուխը և նետեց խաշքարերի
վրա: Թոլոր քարերն արյունոտվեցին:

Այս ամենը ևս և իմ մարդիկ տեսանք լեռան վերեկ ճեղ-
քից: Ես կանգնեցի:

— Գնացինք:

Ասեմ, որ վանքը բարձր պարիսապների մեջ էր, ամուրեր-
կաթե գոնով, միայն մի կողմն էր բաց, այն էլ խոր կտրված-
քով անդունդ էր: Իհարկե, ես կարող էի հարձակվել հենց
այն պահին, երբ խանի ավազակները ներխուժեցին վանք: Սակայն այդպես շարի, որպեսզի ավազակները ծանրանան
կողոպուտի բեռներով, գզվուտան միմյանցից պատառ խլե-
լով, որպեսզի իմ գործը հեշտանա և ես զո՞ւ շունենամ:

Ես իմ մարդկանցով վանք մտա ամենահարմար պահին:
Խանի երկու հարյուր զինվորները, նույնիսկ նայիր յուզբա-
շին, բեռնվել էին կողոպուտի պարկերով, ոմանք հազիվ էին
ժանրության տակ փոխում իրենց ոտքերը:

— Անձնատո՞ւր եղեք:

Ի՞նչ երկարացնեմ: Ասում են թոկի երկարն է լավ, խոս-
քի՝ կարճը: Իմ մարդիկ զրոհեցին կողոպտիշների վրա, նրանց
զինվորները խլեցին, բեռները՝ ևս: Ես նստեցի մի խաշքարի

պատվանդանի: — Թող յուզրաշին առաջ գա: — Ես լավ տեսաթուրք նայիր-յուզրաշուն, որի մասին առասպելներ էին պատմում:

— Գո՞ղ ես, — Հարցրի նրան: — Ասում են շատ քաջառիուններ:

Նա կրծոտեց բեղերի ժայրերը:

— Այս վարդապետին դո՞ւ սպանեցիր, թո՞ւրք: — Ես քրքչացի, ահանելով, թե ինչու ես է յուզրաշին դոզում ահից: Ինք իմ ձեռքով կտրեցի նրա զլուխը: Մյուսներին իմ տղաները կապկապելով հրեցին զեպի անդրանդի եղերը ու այնտեղից զլորեցին խոր կիրճ...

Նոր էինք վանահոր մարմինը պատանել, օձել ու թաղել, երբ լուր բերին, թե Փանահ խանի մի ուրիշ զորախումբ բարձրանում է գեպի լեռը՝ այնահեղ ապաստանած զյուղացիներին կոտորելու: Ես շտապեցի վերել:

— Հանուն հացի, հողի ու հայրենիքի:

Սա իմ սովորական խոսքն էր, որ ասում էի ճակատամարտից առաջ: Բայց ես չկարողացա ժամանակին հասնել թշնամուն: Թուրի Արզումանը, որ շտապել էր իմ ետևից, շրջապատել էր թուրք-պարսիկների այդ զորախոմբին ու ոչընչացրել:

Մենք հավաքեցինք ավարը, սպանվածների զենքը, նաև զգեստը և ժողովրդին իջեցնելով լեռան ճեղքից, տարանք տեղափորեցինք իրենց զյուղում: Գիշերը մնացինք այդ զյուղում: Թուրի Արզումանը խեղճ-խեղճ ասաց.

— Շորերդ փոխիր, Երնջիկ: Թեզ ուզում եմ տեսնել կանացի քո զգեստի մեջ: Տղամարդու շորերդ զզվելի են...

Ես կատարեցի նրա կամքը: Հազար իմ՝ աշխարհական զգեստը, նույնիսկ օձվեցի, ինչպես մի ժամանակ էի անում: Մինչեւ գիշերվա կեսը մենք խրախնացանք բուռն: Ես ու թուրի Արզումանը քնեցինք մի լոր, փոքրիկ քարայր-խրճիթում:

Նոր էի աշքերս փակել, երբ երեսիս համբուլյոններ զգացիւ ես խանդաղատանքով նայեցի ինձ վրա կոացած, ինձ համբուլը թուրի Արզումանին:

— Ի՞նչ ես անում, խե՞նթ:

— Երկինքը փլվել է սրտիս վրա, Երնջիկ: Էլ համբերելու ուժ շունեմ:

— Ի՞նչ է ուզածդ, — կարծես հենց այնպիս շշնչացի ես:

— Որ դու իմ կինը լինեա:

Ես շոյեցի նրան:

— Սո՞ւ, Արգուման, սո՞ւ... իմ ձիոքով սատկած Միբ-զեխանը կլոի: — Ես փաթաթվեցի նրան ու ինքս էլ համբռ-րեցի: Անշափ խղճացի Թուրի Արգումանին: Տեսա, որ նա վաղուց կանացի քնշքանը չի վայելել:

Առաջոտյան, երբ ձիերը հեծանը ու հեռացանք գյուղից, նկատեցի որ Թուրի Արգումանը անշափ երջանիկ է: Ինքս, չգիտեմ՝ երջանիկ էի, թե՛ ոչ, սակայն գո՞ւ էի, որ շոյեցի մի խանձված հոգի:

Ճանապարհին մտանք մի գյուղի եկեղեցի ու պսակվեցինք: Երբ գուրս էինք գալիս այդ գյուղից ևս, Թուրի Արգումանը ձիու վրայից թերվեց դեպի ինձ:

— Աստված քո հոգին ու անձք թող իրենը համարի, Երբն-շիկ: Հիմա դու իմ կինն ես, իմ սրտի այտնը: Սառնամանիքը դնաց: Ես ջերմության էի կարոտ, ես կյանքի էի կարոտ, որ դու տվիր ինձ:

— Ստացա՞ր, ամուսին իմ, — ասացի ես:

— Եթե ես ոչինչ շունենամ քեզ նվիրելու, — ասաց նա, — ապա իմ կյանքը կնվիրեմ:

Մեր ձիերը ժփում էին զեպի Զրաբերդ:

* * *

Զորապետները համախումբ կանգնած էին ճանապարհի մեջքին: Մոտիկ մոնշում էր Կառկառ գետը: Քարի զարնված ջրի ցալքունը երբեմն հասնում էր Մելիք Աղամի ու Մելիք Հովսեփի ոտքերին, նաև ցողում երեսները: Երնջիկ տիկինը ամուսնուն՝ Թուրի Արգումանին շէր թողնում, որ սափրովի: Հիմա ծիծաղում էր նրա գանգրված մորուքին շողացող ջրի կաթիլները տեսնելով: Ամուսինները իրենց զորախմբով մի քիչ ցածր տեղ էին՝ ժայռի խոռոշում: Մելիքներն ու զորա-պետները լնկատեցին, որ ձորի կեռմանում ձի-ջորիների բա-գականին մեծ մի քարավան երևաց: Նրանք լսեցին Երնջիկ տիկինոց հրամանը:

— Կա՞նգ առեք, է՞յ...

Քարավանի մարդիկ, որ մի քսան հոգի էին, ահից քարացան։ Մելիքները շտապեցին ցած։ Տիկինը գոռում էր։

— Առաջ եք խոսում, շան ցնկնածներ։ Դուք Փանա՞ խանի դայլերն եք։

— Ո՞չ, ո՞չ — աղերսում էին պարսիկները՝ ձեռքները տնկած։ — Մենք ապրեշում, չիթ ու կտավ ենք տանում Շուշի վաճառելու։ Մենք անշառ մարդիկ ենք…

— Ո՞չ, — սասա ասաց Երնջիկ տիկինը՝ ձեռքը սպառնալի թափ տալով ամուսնու վրա։ — Դու լսի՛ր, քու բանը լի։ Է՞յ, պարսիկ ու թո՛ւրք, դուք զենք եք տանում խանի համար։ Է՞յ, դուք գալիս եք Պարսկաստանից։ Այո՛, այո՛ — Նա բռնեց քարավնապետի օձիքը, որ մի բարձրահասակ պարսիկ էր։ Ա՛, Հիշեցի, քեզ, աղվե՞ս։ Դու զենք էիր բերում դավաճան Մելիք-Միրզեխանի համար։ Հիշեցի։ Հիմա էլ…

Երնջիկի երեսին գաժան վճիռ կար։ Նա ձախ ձեռքով բռնեց քարավանապետի կզակը, աշով թեթև ինչ կեռ դաշույնը քաշեց նրա կոկորդով։ Նրա այդ ճարպիկ արարքից նույնիսկ ամուսնու սոսկաց։ Ինչո՞ւ այդպիս վարվեց կինը, առանց բեռներն ստուգելու, միանգամից։ Բայց արդեն ուշ էր։ Տիկինը կտրած զլուխը ցցեց Մելիք-Աղամի ոտքերի տակ։

— Էլի կտանաս նման նվերներ, տեր մելիք, ողջ լեռ։

Նա չեր սխալվել։ Իրոք՝ քարավանի բեռները զենք էր՝ վառող, ձեռքի ոռումբ, որ հազվագյուտ բան էր, նորաձեւ հրացաններ, որեր։ Դրանք Զենդ Քերիմ շահն էր ուղարկել Փանա՞ խանին։

Կեղծ վաճառականների կտրած զլուխները լցրին չվալների մեջ, բեռնեցին մի ջորու։ Երնջիկ տիկինը կեշու կեղև պոկեց, նրա կոկ երեսին գրեց։ — Փանա՞, ստացիր իմ այս նվերները։ Նորից կտանաս։ — Ուրախ նայեց մոտը մոայլ կանգնած կամար Սոլթանին։ — Է՛, քույրիկս, երանի՛ քեզ, որդիդ արդեն նշանվելու է։ Ինչպե՞ս ես։

— Աստծուն փառք, իմ հոր կին։

— Այո, — ժպտաց Ասպապ տիկինը։ — Այո, հորդ կինն եմ, բայց… Բայց Հիշիր, ես լավ լողալ գիտեմ։ Այնքան եմ թոթոացել Թարթառի փրփնջաններում և, ինչպիս տեսնում ես, զրախեղդ շեմ եղել։

Գլուխներով բեռնված ջորին մի զինվոր հասցրեց Շուշվա գարպասներին: — Ինձ ներս թողեք, էլ: Դուռը բաց արեք: Իսրայել կաթողիկոսից նվեր ձմերուկ եմ բերել: — Դարպասի փոքր դուռը բաց արին: Զինվորը ջորու սանձը տվեց պահապանին: — Զորին էլ քեզ: Ամա ձմերուկը շուտես, հա՞՛, օձի լեզի է: Տար քու իւանի բերանը խոթի:

Դիշերը մեկնեցին զեպի Քիրս լեռան մթիշները:

Հայերն այսպես աշխարհից մեկուսացած, շրջափակած էին պահում Շուշին: Երնջիկ տիկինը շոյեց ամուսնու մազմբզոտ երեսը:

— Բայց ես քո կի՞նն եմ...

Անտառը խշշում էր աշխան հմայքներով:

— Դու իմ կինն ես:

— Այս, լավ է պոռշդ շճաքեց, երբ տեսար, թե ես ինչպես կտրեցի էն ավազակի զլուխը: Մի՛ վախենա, ամուսին իմ, էլի դու ամուսինս ես, ես քո հեազանդն ու հլուն: Նույնիսկ կարող ես ինձ ծեծել... Բայց ահա ես քեզ հարցնում եմ՝ ամուսին իմ, դու ո՞վ ես: Ո՞վ ես:

— Իմ հոր անունը Սարդիս է:

— Իշխա՞ն էր:

— Չէ, հա՞՛, թագավո՞ր էր: Մելիք Ադամի հոր հովիվն էր: Հովիվը...

— Հետո՞ւ: Կա՞:

— Կա: Այ, մենք շկանք՝ ես ու դու: Երկուսս շկանք: Նա կա:

— Գժվեցի՞ր ամուսին իմ:

— Ես էլ հովիվ էի՝ տաս-տասներկու տարեկան: Ոյսար էի արածացնում մեր սարերում: Երբեմն գնում էի Երից Մանկունք վանքը, նայում, թե վանական եղբայրներն ինչպես են զիրք գրում, զիրք կարդում: Նրանք ինձ զրանանալ դարձրին: Այ, այդպես...

— Մեռնե՞մ ուսյալ ջանիդդ

Տիկինը քրքչաց գո՞ն:

Փանահ խանը գրեթե պաշարում մեջ էր: Պարսից շահի հրովարտակով նա ստացել էր Ղարաբաղի խանությունը, սակայն դա ոսկոր էր կոկորդին դեմ ընկած: Հայոց իշխանապետությունը իրեն քնազ էլ ընկճած չէր զգում: Ճիշտ է, ինքը կարողացել էր լիովին տիրապետել Մելիք-Շահնազարի վարանդա գավառին, նրա հետ ձեռք-ձեռքի տված, նաև իր ենթակայության տակ էր Խաչենի մելիքության մեծ մասը, սակայն հայերի իշխանությունը տակավին չէր նվաճված: Հայ երեք մելիքները՝ Զրաբերդի ահեղ Մելիք-Աղամը, որի անունը լսելուց խանի մազերը ցցվում էին, Դիզակի Մելիք-Եսային ու Գյուլիստանի Մելիք-Հովսեփը ժանրակշիռ զորական ուժ էին ու անվերջ բռունցքներ էին դեմ անում իրեն: Զիները Շուշվա անառիկը, հազիվ թե ինքը կարողանար զլուխը վրան պահել:

Նա սկսեց վազվզել իր պարատում, գոռալ, ճշալ:

— Հասե՞ք, օգնեցե՞ք: Իմ քարավանը կողոպտե՞լ են, իմ շահի մարդկանց զիխատե՞լ են:

Իր զիվան սենյակում ջվալով զրված էին շահի մարդկանց զլուխները: Ինքը թիշ զլուխ չէր կտրել, սակայն սարսափում էր, երբ յուրայինի կտրված զլուխ էր տեսնում:

— Հասե՞ք...

Նա հրամայեց ձերբակալ անել զլուխները ձմերուկների տեղ իրեն բերած պահապանին: Այդպես խելագար վազվզում էր պալատում, երբ նրա առաջ կանգնեց Մելիք-Շահնազարը:

— Ի՞նչ է եղել, խան իմ:

— Գլուխնե՞րը, զլուխնե՞րը...

— Է՞, թող կտրված լինեն, չո քո՞ զլուխը չէ:

Մի ամբողջ օր հարկավոր եղազ Մելիք-Շահնազարին, որ խանին ուշքի բերի: Մի քանի օր անց Փանահ խանը մեկնեց Պարսկաստան: Հույս ուներ, թե պատանդ տարած որդուն մի կերպ կկարողանա ետ ստանալ: Նրան փոխարինեց Մելիք-Շահնազարը: Սա իր երեք կանանցից միայն Թագուհի տիկնոցը Ավետարանոցից բերեց Շուշի: Օր-օրի անհանգստանում էր: Ամիսներ են անցնում, իսկ Փանահ խանը շի վերադառնում, նույնիսկ լուր չունի նրանից: Թեև Շուշվա պարհապներն

անտարիկ են, դարայաները փակ, բայց ո՞վ խմանա, ինչ է մտածում սատանայի ժայրը: Իր երեք օրինավոր կանանցից բացի, Մելիք-Շահնազարը նաև վեց հարճ էր պահում: Ահեղ էր բոլորի նկատմամբ: Գոռում էր անգուստ:

— Այնպիս մի՛ անեք, որ ես նաև կինապան դառնամ, որդեսպան դառնամ: Այն, ինչ հակառակ է անձիս ու կամքիս, պիտք է ոչնչանա, թեկուզ դա իմ աստվածը լինի:

Նա ինչ-որ շափով միայն փափկանում էր մեծ տղայի, թագուհուց ծնված Զումշուդ բեկի մոտ, որ արգեն տասնութ տարեկան էր:

— Իմացիր, ամեն ինչ ես քեզ համար եմ անում, զավակս Զումշուդ, — ասում էր նրան: — Քեզ համար ես նույնիսկ եղարս լինայեցի...

Որդուն երեմն թվում էր, թե հայրը զզում է: Նա համախ էր փաթաթվում մորը:

— Ես հորս ատում եմ, մայր, ատում եմ:

— Լոի՛ր, լոի՛ր, — սարսափում էր մայրը: — Մի մոռանա, որ նրա համար ոչինչ, նույնիսկ որդի գոյություն չունի, եթե...

Անվերջ տագնապող լուրեր էին խուժում Շուշի: Միրզենիսի կինը գեացել միացել է թշնամի մելիքներին, սրանք սպառնում են Շուշին տակնութքա անել: Ի՞նչ եղավ Փանահ խանը: Խա՞նը: Գնաց ու գոնե լուր ուղարկեր իր մասին: Ի՞նչ եղավ: Անվերջ զինի էր խմում, տապակած լոր խմում, որ իր սիրած ուտեղիքն էր:

Նման մի զինեմշուշ երեկոյի կանչեց դառն մոտ հետպանդ կանգնած ժառային:

— Բեր:

Սառան անհետացավ ու իսկույն ետ եկավ, բերելով մի զեռատի ազգիա: Դրան հենց այդ օրը իրեն նվեր էր ուղարկել Շուշվա Շեյխ ուլ Խալամը: Բարալիկ, բարակավիզ պարսկուհի էր՝ թուխ մուր: Աղջիկը ուսերի քողը ետ տարավ՝ դայլի ճանեկ ընկած անզոր եղնիկի ձագի պիս: Նրա մերկությունը շողաց մոմերի դեղին կրակներից: Մելիքը զինու զավ մեկնեց նրան:

— Բարի՛, բարի՛... Կսիրե՛ս ինձ:

— Երբեքը, — շշնչաց աղջիկը: — Հնազանդ եմ, բայց սիրելու ու: Մարտուկ եմ, քո իրը, ապրանքը՝ լեզուս փակ: Մելիքն աղջկան նստացրեց ծնկներին: — Խմի՛ր: — Արյո՞ւն է:

Մելիքը նորից ժափ տվեց: Սառային հանձնարարեց կանչել իր թագուհի կնոջը: Թագուհին ներս մտավ գունատ, այլալված: Նրա շրթունքները դոզում էին անեծքի շեշտերով: Ամուսինը փաթաթվեց պարսկուհուն:

— Վկա եղի՛ր...
— Ո՞ւ գառնա, շլինքիդ փաթաթվի:
— Նրեք օճ ունեմ արդեն, մեկը՝ դու: Ի՞նչ ես ուզում, կի՞ն:
— Քո մահը: Քո կործանումը:

Մելիքը հարճին գրկեց, գանդաղ մտավ կողքի սենյակը: Քիչ հետո ետ եկավ, ձեռքերի վրա բերելով խեղդված, մեռած պարսկուհուն:

— Մերժում եմ Շեյխու ուլ Բոլամի նվերը, — ասաց բոլորովին հանգարտ: — Հանուն քո, թագուհի տիկինս:
— Երանի ամեն գործում այդպես լինեիր, — ասաց կինը:
— Ի՞նչ է ասելիքդ:
— Միացիր հայ մելիքներին:

Մելիք-Շահնազարը շարունակում էր լուս գրկում պահել մեռած հարճի մարմինը: Կինը ծունկի եկավ նրա առաջ:

— Քանի որ շունը բնումը չէ, լթիր նրան, ամուսին իմ, մարդ... Շուշու զոները բաց արա իր տերերի՝ հայերի առաջ: Օ՛, աստված սիրես, միացիր հայ իշխաններին: Պարաբաղի փրկությունը դրա մեջ է: Դարձիր խոտոր ճանապարհից, ամուսին իմ:

Մելիք Շահնազարը օրորվելով մոտեցավ նրան:

— Ուրիշ:

— Միայն այդ: Կամ ինձ սպանիր, սպանիր այդ քածի նման:

Մելիք-Շահնազարը իր ձեռքով խեղդված, դիակացած պարսկուհու մարմինը բարձրացրեց զլխից վեր ու զրանով՝ դիակով հարվածեց կնոջը՝ ուղիղ զլխին: Նա իր ծառաներին հրամայեց զիակը կապկակել կնոջը և նրան ողջ-ողջ թաղել:

Փանահ Ալի խանը Ջենդ Քերիմ շահի բանակին հասավ Կապուտան լնի արևելքում, շահի հետեւից բարչ գալով: Դա տեսց ամբողջ երեք ամիս: Խանը առատ-առատ կաշառում էր շահի պալատականներին՝ աղալելով, որ իրեն թույլ տան շահին տեսնելու:

Վերջապես Ջենդ Քերիմը ընդունեց նրան: Եաւ սառն էր, սակայն ասաց, թե ուրախ է իր բարեկամին տեսնելով: Խանը սիրտ արեց.

— Ես Հայաստանում քեզ համար հուսալի ոտնատեղ ստեղծեցի, ո՞վ արքա, ո՞վ տիեզերքի կենտրոն: Ես Ղարաբաղի կեսը զրել եմ քո ոտքերի տակ: Հուսով եմ փոխհատուցում կստանամ քո արդար ձեռքից:

— Աստծու ողորմությամբ,— ասաց շահը: — Քո ժառայությունների փոխարեն դու կստանաս քո որդուն՝ Իրրահիմ Խալիլ աղային, որ իմ պատանդն է:

Կապուտանի մոտից բանակը՝ շահի հետ մեկնեց Շիրազ: Փանահ խանը ևս գնաց, հույսը սրտի մեջ: Դե, այնաեղից արքան իրեն ու իր որդուն առն կուղարկի: Շուշի, Խոստացավ: Երբեմն, երբ հանդիպում էր շահին, գետնատարած ասում էր.

— Մեծ շահ, ես կարուել եմ իմ տուն ու տեղին:

— Շիրազում դու կզմայլվես Իրանի մեծ բանաստեղծների երկնքով:

Դեռ Շիրազ չհասած Ջենդ Քերիմ շահը Փանահի որդուն՝ Իրրահիմ Խալիլ աղային ետ տվեց:

— Դեռ քո քաղաքը, Իրրահիմ Խալիլ խան: Խան, խան: Այժմ Շուշվա խանը գու ես: Հիշիր, եթե մազի շափ անգամ անհավատարիմ եղար Իրանի գահին, կը առատվես... Դեռ: Խսկ հայրդ կմնա ինձ մոտ:

Իրրահիմ Խալիլ խանը համբուրեց նրա փեշը:

— Հայրս անշափ գո՞ն կմնա քեզնից, արև արքա:

Ասաց, լավ հասկանալով, որ շահը այժմ էլ իր հորեւ է պատանդ պահում, իրեն զսպելու, սեղմելու նպատակով:

Շահն այլևս լցանկացավ տեսնել Փանահ խանին, որ իր բանակում էր, ամեն տեղ իր հետ: Փանահը ողորմ էր ինքն

իրեն՝ հկավ որդում ազատելու, ինքը պատանդ մնաց: Բայց
մի անգամ ևս նրան հաջողվեց խոսել շահի հետ:

— Թույլ տուր հեռանամ իմ երկիրը, իմ տունը, ո՞վ շահ,
ո՞վ մեծ:

— Սիրով,— շահը նույնիսկ ժպտաց:— Թույլ եմ տալիս
գնաս քո երկիրը՝ Խորասան: Հայաստանը չէ քո երկիրը, Փա-
նահան, դու ծնվել ես Խորասանում: Գնաս բարով...

Նրան գրեթե աքսորեցին Խորասան:

* * *

Փանահան Ալին Խորասանում ապրում էր ինչպես գայլը՝
վանդակում: Ողբում էր իր վիճակը: Ելք էր որոնում փրկվե-
լու, հասնելու Շուշի: Երկար անքուն գիշերներ ու մթնած ցե-
րեկներ հնար որոնելուց հետո, վերջապես զտավ: Իր հետ
եղած յուրայինների հետ խորհրդակցեց: Բնքը ստից կմեռնի,
ցույց կտա, թե մեռած է: Իր մարդիկ իրեն կդնեն դագաղի
մեջ ու կտանեն Հայաստան՝ Շուշի: Այդպես կփրկվի: Բավա-
կան է իրեն հանեն Խորասանից և կհաջողվի փախուստը:

Եվ ահա մի օր նրա ծառաները հայտնեցին Խորասանի
նայիր խանին, թե Փանահը մեռավ: Խանը թույլ տվեց նրա
զիակը տանել ուր ուզում են: Սուս մեռած Փանահին դրին
դագաղի մեջ, ծածկեցին կարպետով: Հենց այն պահին, երբ
դագաղը ուզում էին բառնալ ուզտի մեջքին ու հեռանալ, երե-
վաց Խորասանի խանի բժիշկը:

— Պետք է մեռելին զմռսել,— ասաց նա՝ խանի հարա-
գատներին:— Ճանապարհը երկար է, եղանակը ամառային
առթ, դիակը կփրթի ու խոլերայի համարակ կսփռի:

Առանց սպասելու մեռելատերերի համաձայնությանը,
բժիշկը երկար խանշալով խառնեց Փանահ խանի փորը և
փորոտիքը թափեց... Հետո ինչ-որ կավանյութ լցրեց Փանահի
փորը:

— Այժմ ուր ուզում եք տարեք:

Ոչ ոք շիմացավ, որ այդ բժիշկը հայ էր:

1763 թվականի շող ամառն էր...

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ամարասից Շուշի տանող ճանապարհն ինձ համար այնքան սովորական է գարձել, որ արդեն սկսել եմ ձանձրանալ, ինչպես միևնույն շապիկից, որ մարդ հագնում է շատ երկար տարիներ: Իսկ տարին չի էլ հարցնում՝ ուզո՞ւմ ես, որ ինքը երկարի, կրունկի վերքի պես, թե անցնի ակնթարթում, ինչպես տեսածդ ցանկալի երազը:

1780 տարվա մեջ ենք: Աստծո ողորմածությունն է, որ դեռ կամ, ապրում եմ: Չեմ ուրանում արարչի բարությունը: Ինչպես մոռանաս գայլառհմակի հարձակումը անձիդ վրա, երբ փրկվում ես աներևակայիլի հրաշքով:

Իրրահիմ խանի տանու մոլլան քրքրվելով, ժամածովելով քնատ աշքերն ու բերանը բացուխուփ արեց, հորանջեց կուշտ, գնաց դեպի հենց վերջերս անտաշ զերաններից շաթած մինարեն: Նրա մետաղային ձայնը գլուաց, ծոր տվեց, վազորդյան ազան շաղ տալով քաղաքի վրա: Նրա հանգով, բայց ավելի կոշտ զողանջեցին քաղաքի հայոց տասնութ եկեղեցիները, ոչ այնքան մաքուր պղնձի, որքան քարեղեն արձագանքներով:

Շուշի քաղաքը արթնանում էր:

Երկու օր ու գիշեր է վերեկից հեղեղ-հեղեղ թափվում է կարծես իր մոր՝ երկնքից հալածված անձրնը: Քաղաքի նեղ, զառիթափ ու զառիվեր փողոցները թաց են, տները թաց ենե թաց է նաև Մելիք-Շահնազարի անկողինը: Քրտնում է հշխանը զլխից մինչև ոտքերի թաթերը, բարձից գոլորշի է ելնում:

— Ա իս, տեր Խորայել, փրկի՞ր... Հիվանդ եմ, ճար արա՞...

Գոռում է՝ էշի պնդերի նմանող հաստ ոռունդեղը թրթռաց-նելով: Անկողին ընկավ մի ամիս առաջ: Պարսից թագավորից սուրհանդակ եկավ Շուշի:— Իբրահիմ Խալիլ խանը դո՞ւ ես:— Ես եմ: Այդ ահը նրան դարձրել է պողակովում պարտված ցուլ: Կծկվում է աղիքների գալարումից, քիթմոռութից լորձ է հոսում:

— Նորին մեծություն մեր արև արքայի հրամանն է՝ անհապաղ ներկայանաս իրեն:

Այսպես եղավ: Խանը մեկնեց: Ե՞տ կգա... Մելիք Շահնազարը ընկավ՝ պողակովում պարտված ցուլ: Կծկվում է աղիքների գալարումից, քիթմոռութից լորձ է հոսում:

— Փեսա խանս չեկա՞վ:

Ավետարանոցում չեր, այլ՝ Շուշի բերդում: Հետը բերել է զորքը, ընդոժին աղախինների երամը, ժառաները, իր երկու կանանց, բոլոր հարճերին, զավակներին: Որչ մտած արջի պես փակվել է բերդում: Ոռնում է ահից: Իբրահիմ Խալիլից լուր չկա հրես արդեն երկու ամսից ավելի: Խանը տակավին չահել է, անփորձ: Հայ մելիքների ծերակույտը բռունցք է հավաքում Շուշի գեմ...

Դեղագործ բերել տվի Թիֆլիսից: Հիվանդին խնամում էր նրա մեծ կինը՝ Սոնան: Ինքն էր նրան մտցնում բաղնիք, իր ձեռքով լողացնում, մարմինը յուղում կաթնուկ բույսի հյութով, բացախով, վարդաշրով ծեծում նրա սպիտակ, թթված խմոր հիշեցնող մարմինը: Մելիքը գոռում էր ինձ վրա:

— Աղոթիր խուկ աստծուն, Խորայել կաթողիկոս: Ոչ հոգուս, այլ՝ մարմնիս համար:

Այսպես ամեն օր:

Վերջապես Սպահանից ես եկավ Իբրահիմ Խալիլը: Դա իմանալով Մելիք-Շահնազարը անկողնուց դուրս թռավ:

— Ո՞ւր ես, ո՞ւր ես, իմ փեսա, իմ հույս:

Ապաքինվեց: Լավացավ: Միայն հնում էր, վերմակի վրա դրած նրա մազմզու ձեռքերը դողում էին: Երբեմն ցնցվում էին բեղերը:

— Ուրի՞շ...

— Ասելիքս հստակ է,— վեհ կրկնեց կինը:— Եթե դու անցնես հայոց հայրենի իշխանության գիրկը, ապա մեր

Ղարաբաղը հավիտյանս փրկված կլինի: Ինչ վերաբերում է մեր փեսա Իրրահիմին, ապա մենք նրան շենք զրկի, նրան կթռղնենք Եռւշին, իբրև նրա պարոնտեր:

Մելիքը բարձից պոկեց գլուխը:

— Ռորի՞շ:

— Այլ ասելիք շունեմ,— խոր շունչ քաշեց Սոնա խաթունը:— Կամ դարձի եկ, կամ դավաճանի անարգանքով կիջնես զերեզման:

Մելիք-Եահնազարը լպրտած ձեռքը խոթեց քրտինքից թաց բարձի տակ, հանեց երկփող ատրճանակիը... Ես քնավ ցըրնցվեցի կրակոցից: Ինձ ի՞նչ... Կրակն ինձ վրա չէր: Սոնա խաթունը բռնեց փորն ու ընկավ...

— Անխիղճ, ես երեխով եմ...

Ես ինձ զցեցի հիվանդասենյակ: Անկողնում նստած մելիքը բրդշում էր՝ աշբը թպրտացող դիակին...

— Մեռա՛վ, — ձեռքերը տարածելով հեկեկաց Մելիք-Եահնազարը:— Սիրելի կինս մեռավ, տեր Իսրայել: Կաթված էր, ակնթարթում խփեց, տարավ: Հասկացա՞ր, այդպես ազդարա ամենուրեք: Կինս ինքն իրեն մեռավ...

Կարծես հենց նրա մի այդ անամոթ ստից երկինքը ցըրնցվեց, դողաց, առ առավ ու ետ քաշեց անձրևի համատարած վարագույրը: Եռւշին փայլատակեց լվացված քարերի մաքրությամբ:

Տասնյոթ տարի առաջ էր...

* * *

Նորից Մելիք-Եահնազարի մոտ եմ: Նրա փեսա Իրրահիմ եալիլ խանը հեղ նստած, նրա խորհուրդներին է ականջ դնում:

— Կրկնում եմ, — թեյլ խոշոր կումերով խմելով կիսատ խոսքը շարունակեց Մելիք-Եահնազարը:— Պետք է վերացնել Դիզակի տիրոջը՝ Մելիք-Եսայուն: Հասկացա՞ր, խան իմ: Դիզակին շողոքորթիր, խարիր: Խարի՛ր, է՛... Դրավիր, նենզիր, սպանիր: Ես պետք է Դիզակը ևս տեսնեմ քո ոտքերի տակ:

Հրաշալի է գործում սատանայի ոհմակը: Իրրահիմ խանի

արցունք երդումները Շուշուց հոսեց գծպի հարևան Դիզակի:— Օ՛, տեր Մեղնի Եսայի, որ հարազատս ես, զբանշխ եղայրը, իմացիր, հայրս խոտոր ճանապարհի էր, քեզ թշնամի դառնալով: Հայրս չկա արդեն տասնյոթ տարի: Աստծուց նա ստացավ իր արժանի պատիժը: Արի երկուսս էլ մեղանից պոկենք խռովության շերտերը, հաշտվենք, դու ինձ՝ հայր, ես՝ քեզ որդի:

Շուշում օրը լուսանում էր այս շողոքորթ ազերսով, մթնում նույն մտքի խտությամբ: Իր պապոնց իշխանապետության հետ հաշտվելու ամենից եռանդուն քատագովը Դիզակի տան դուստր Հուրիզադ խանումն էր: Նա ևս տեսնում էր, որ Դիզակի հարմությունը ցաք փշի խուրծ է իր հոր՝ Մելիք-Շահնազարի ու իր ամուսին Իրրահիմ խանի բկներում: Խ՞նչ անել,— ձեռքերը կտրտելով, գլուխը ուոցնելով ինքն իրեն հարցնում էր խանուհին:— Խ՞նչ անել: Բայց այդ ո՞ր կինն է, որ սատանային եթե ոչ կողակից, առա համախոհ չէ:

Մի երեկո Հուրիզադ խանումը կանգնեց ամուսնու ու հոր առաջ:

— Ես կգնամ Դիզակ, մորս հոր տունը՝ բանակցելու:

Նրա ասածն այնքան վճռական էր ու այնքան ինքնավրսահ, որ հայրն ու ամուսինը բնավ չկասկածեցին նրա մտքի ու գործի հաջողությանը: Երկուսն էլ ցնծացին:

Այսպես եղավ: Խանուհին եռանդուն պատրաստվեց մեկնելու Դիզակ: Նա սկսեց մեծագին նվերներ պատրաստել հարազատների համար: Մտավ Շուշու հայ ոսկերիշների տները, թանկագին քարեր գնեց նրանցից: Շամախուց բերել տվեց թոփերով ֆուանկի ատլաս, Պետերբուրգի սամույր մորթիներ, որոնց թե մթության մեջ ձեռք ես տալիս, կապույտ կայծեր են արձակում: Նրա պահանջով հայրը Ավետարանոցից երեսուն վիշապագորդ ուղարկեց, Դիզակ տանելու համար, միայն ոչ իբրև իր նվերը, այլ՝ խանի: Այդ զոհողությունը մելիքն արել է առանց ափսոսների, նույնիսկ քրքրչացել:— Է՛, բան չկա, տարեք: Հավատացած եմ, որ այս իմ գորգերը նորից կվերադառնան իրենց տիրոջ տունը, գուցե թե արյան բժիրով:

Իրրահիմ խանը երեք նառ ուղարկեց ևս հանձնեց իր կնոջը՝ Դիզակ տանելու:

Այսպես հարուստ բնո-բարձերով Հուրիզադն ու ես մեկնեցինք Դիզակ: Եքախմբում զինվոր շվերցը եց:

— Ես հաշտության ու բարեկամության ուխտով եմ գնում մորս հորանց տունը, — ասաց նա, — ոչ թե սպառնալիքով: Զինվոր պետք չէ:

Հարեմի ներքինից, զորեպաներից ու երեք ուղտերը խնամող տղամարդկանցից բացի, մեկ էլ ինձնից, եթե ինձ էլ տղամարդ հաշվեք, այլ այր շվերցը հետք: Եքախումբը պերճացրեց գեղեցիկ աղախիներով ու իր երկու պարակուհի գայակեներով:

Գնացինք ձիավոր և ուղտավոր երթով: Գարնանային պերճությամբ փարթ էր եղել Միջնարցախ Ղարաբաղը: Խանուհին հրամայեց հանդրվանել Կատարը ուրբ ուխտի վայրում, որ ճանապարհի կեսն էր: Ինձ ասաց.

— Թեև ես օտար հավատի տեր մեկի կինն եմ, տեր կաթողիկոս, սակայն երեք չեմ մոռանում, որ աղախին եմ Հիսուս Քրիստոսի:

Մյուս օրը, մայրամուտի բոցերով ողոզված, մոտեցանք Գորոգ իշխանանիստ բերդին, որ ավելի հին` Տող ամրոցի գիմացն էր, բարձր լեռան գագաթին: Մեր առջև գղրդոցավ բացվեցին բերդի ժանր դռները: Նրա երկարուկ ու բարձր կամարների տակ, շքեղ զարդարված նժույգի վրա երևաց Մելիք-Ծսայու տիկին Բեգում իշխանուհին, նույնական պերճ զուգված բազմաթիվ ձիավոր կանանց հետ: Խումբը երկկիսվեց աջ ու ձախ, տեղ տալով մեր անցի համար: Բեգում իշխանուհին խաշակնեց մեր կողմը:

— Օ՛, ամուսնուս քրոջ գուտառ Հուրիզադ խանում, համեցիր: Քո այցը մեր տուն աստվածային շնորհ է:

Նրանք համբուրվեցին հենց ձիերի վրայից թեքվելով գեպի իրար: Ձեզացին նրանց ոսկե ու արծաթե զարդերը: Բեգում իշխանուհին իր մեջքից հանեց ոսկե խնձորաշափ կռւմբով արծաթի գոտին ու դա կապեց Հուրիզադի մեջքին: Խանուհին իր ակնահուռ զգեց նրա ճիտը:

— Զէ՞ր կարող արդյոք, անձիս դիմավորելու դար նաև գլխատեր Մելիք-Ծսային, որ իմ քեռին է:

— Բայց չէ որ դու, Հուրիզադ խանում, քո ամուսնու հետ

շեւ և կել,— ասաց թեզում իշխանուհին:— Զէ՞ր կարող քեզ
հետ նաև նա գար:

Զիերի պայտած սմբակների դափրը խլացրեց նրա ձայնը:
Իշխանուհին մեզ տեղավորեց գղյակի իր հարկարաժնում:
Երեք օր՝ առավոտից երեկո Հուրիզադի խնդրանքով, թեզում
իշխանուհին նրան ման ածեց Դիզակի նախարարական, ապա
իշխանական տան հին գերեզմանատներում: Նա ու թեզումը
մոմեր էին վառում մամուած շիրմաքարերին, բռունցքների
պիս տնկված գամբարան-մատուռների խորշերում, առատ
խունկ ծխում: Ծա նրանց համար կարդում էի քարերի զրերը,
մեկնում զրանց իմաստը:— Այս քարի զիրը հազար հարյուր
տարվա է:— Այս մեկը՝ իննը հարյուր հիսուն: Սա է մա-
տուռ-շիրմի Սահմի, որ է որդի Սմբատ Խոստովանողի, եղբայր
Աշոտ Առաջին Հզոր նախարարի: Այս Սահմ Սմբատյանը հաղ-
թեց և րոնեց թարան պարսիկ անօրենին, որ մի ահեղ աս-
պատակող էր, տիրել էր Ատրպատականին ու Հայաստանի
մի մասին... Հաղթեց Սահմը Թարանին, սպանեց պատերազ-
մում, գերեց նրա եղբորը՝ երեք հազար երեք հարյուր պար-
սիկ ասպատակողների հետ... Եվ սա եղավ, ինչպիս քարի
զիրն է հուշ անում, Քրոնիկոնի 837 թվականին:— Ծա մատ-
ներով մաքրում էի քարերի մամուռները ու նրանց տակից
բաց անում մեր պատմության մատյաների խոսքը...

* * *

Վերջապես մի օր, առավոտյան, իր տիկնոջ և էլի պա-
լատական այրերի հետ Մելիք-Եսայինին այց արեց Հուրիզա-
դին:

— Բնավ շեմ կամենում, որ դու, քրոջս դուստր, շտապես
թողնել իմ տունը: Ոչ զրա համար, այլ որ... Այլ կցանկանալի
իմանալ դալուդ նպատակը: Ծա քեզ լսում եմ: Բարի դալուստ,
իւանի տիկին:

Նա ոչ զենքը հանեց վրայից, ոչ էլ ճամփորդական այծե-
նականը: Միայն նստեց: Հուրիզադը յուրայիններին հրամա-
յեց նվերների բեռները ներս բերել: Մինչ նրա կամքը կկա-
տարեին, խնդրեց հավաքել իշխանական ողջ ազգատուժը:
Եկան շատ կանալը, երեխաներ, սակավ թվով իշխանազուն

այրեր: Հուրիզադն ինքն իր ձեռքով բաց արեց իր բեռների մաֆուշները, թաղիքի անջրանցիկ կապոցները: Բեգում իշխանուհուն ընծայեց հատը բերած ոսկեղեն զարդերը:

— Վայելիր, քեռակին իմ: Եքեղ գորդերը փոեց Մելիք-Եսայու ոտքերի տակ: — Ճանապարհում միշտ այսպիս կանաչ կարմիր լինի, մորեղբայր իմ:

Մելիք-Եսային դժգոհեց.

— Սակայն հանուն ինչի՞ ես անում այդ ամենը, Հուրիզադ իսանում:

— Ես ու իմ ամուսինն աղքատ չենք, պաշտելի քեռի: Անշուշտ կարոտության մեջ չես դու ևս: Նվերն աստծուց է: Այս գորգերը քեզ ընծայ է ուղարկել քո փեսան, որ իմ ամուսինն է: Վայելիր:

Մելիք-Եսային քմծիծաղեց, բռնեց գորգերից մեկի ծայրը, որի վրա տառեր էին հյուսված:

— Ես այս գորգերը տեսել եմ քո հոր՝ Մելիք-Եահնազարի տանը: Ինչպես թե իբրահիմ իսանն է նվիրում:

Ես գունատվեցի: Գաղտնիքը բացվո՞ւմ է: Դրությունը փրկեց Հուրիզադը:

— Այս, մորեղբայր իմ, սրանք՝ այդ գորգերը հորս սեփականն էին: Բայց մի՛ մոռանա, որ հայրս դրանք օժիտ է տվել ինձ, իսկ օժիտը, որ ստանում է հարս զնացող աղջիկը, պատկանում է նրա ամուսնուն:

Ես թեթևացած շունչ բաշեցի:

Մեկ առ մեկ տնտեղելով իր բերած նվերները, Հուրիզադը դրանք հանձնեց Բեգում իշխանուհուն, յուրայիններին ակնարկ արեց գուրս գալ օթախից: Ես ևս հանգ արի գնալու, սակայն նա ձեռքով արեց՝ դու մնա: Բեգում իշխանուհին նույնպես ակնարկով իր տնեցիներին խնդրեց հեռանալ: Մնացինք մենք շորսս՝ իշխանը, իշխանուհին, Հուրիզադն ու ես: Խոսքը բացեց Հուրիզադը:

— Արդյոք, իմ քեռուն ցանկալի՞ է լսել իմ ամուսնու և իմ խոսքը, որի համար եկել եմ:

Մելիք-Եսային ընդգծված արժանապատվությամբ ասաց.

— Այս ամրոցում տակավին կենդանի է հայոց փառքը, իսանուհի: Երսի պիտի կրկնես այն, ինչ ոչ մեկ, այլ շատ

անդամ են քո ամուսինն ու քո հայր մելիքը առաջարկել ինձ՝
մոտե նստած կաթողիկոսի բերանով:

— Սակայն իմ բերածն առաջարկ չէ, քեզի, այլ՝ խոնարհ
խնդրանք:

— Որ հաշտվեմ ամուսնուդ հետ, այս:

— Միայն դա:

— Բայց ես չէ, որ թշնամություն եմ սերմանում իբրա-
հիմ խանի գեմ, այլ՝ ինքը իմ գեմ: Ես չէ, որ վեասներ եմ
պատճառում նրան, այլ՝ ինքն ինձ:

— Պետք է մոռանալ անցյալը, — ներշնչող ասաց Հու-
րիկադը: — Պետք է խորը թաղել գժտության որոմը, որ այլևս
չժիկ:

Զափաղանց ծանր էր ինձ համար այս թեև խաղաղ, բայց
մեջը կրակի լիցքեր պարունակող խոսքային փոխհրաձգու-
թյունը: Մելիք-Եսային վեր կացավ, ուղղեց ուսերից քիչ-ինչ
առած այժենակաճը:

— Ներող եղիր, քրոջ դուստր, ես տեղ եմ շտապում:
Ջրուցը կշարունակենք երեկոյան, եթե հաճելի է քեզ:

* * *

Ընթրիքից հետո, սուրբ մատուցեցին: Ջրուցում էինք հե-
ռու-անցած անմեղ բաների մասին: Մելիք-Եսային ժալապա-
տիկ նստած էր գորգերով փափկած թախտին: Սառա պատա-
նին նրա համար երկար կոթով մորճ լիցքեց թամբարու շո-
րացրած խոտով: Խափշիկի զլիապատկերով ժխամորճը վա-
ռեց կայծքարով ու տվեց իշխանին: Հուրիկադը ոչ առանց
հիացմունքի ասաց.

— Օ՛, քեզի իմ, թամբարո՞ւ ես ծխում: Անունը լսել եմ,
բայց շեմ տեսել: Անշուշտ, ծխելու այդ խոտը և այդ զեղեցիկ
մորճը ոռւսի թագուհին ուղարկած կլինի քեզ, այս:

— Խորհուրդ կտամ, որ քո ամուսինն էլ ծխի այս թամ-
բարուից:

— Պետերբուրգի՞:

— Ռուսական, — ասաց Մելիք-Եսային: — Խորհուրդ կտամ,
որ իբրահիմ խանը մոռանա Սպահանի ճանապարհ...

Նա սկսեց հաճույքով շպացնել ծխելու մորթի պոշը, առատ ծուխ արձակել:

— Քո ամուսին իբրահիմ խանը պետք է միայն Շուշի քաղաքին տեր մնա: Միայն Շուշիին: Երբեք աշք չդնի իմ կամ մի այլ հայի հողի մի պատառիկին անգամ: Քո ամուսինը պետք է հարկ վճարի հայոց պետության գանձատանը, ինչ-պես անում ենք մենք՝ բոլոր գավառներս: Պա՞րզ է:

Ես թեր առած ճախրում եմ... Կաթիլ առ կաթիլ տված հարվածները իրենց զործն անում են, ահա-ահա ժայռը ճաք կտա: Վերջապես... Ես հստակ ընկալեցի Մելիք-Եսայու տառապանքը: Գլխի մեջ բիշը է ցցված՝ ի՞նչ անել, ի՞նչ անել: Զրաբերդի ու Գյուլիստանի զինվորությունը հեռու է իրենից, իր աշխարհի ու նրանց գավառների մեջ երեք թշնամի սեպեր կան՝ Շուշին, Շուշվա զուգանորդ Խաչեն գավառը և Վարանդան: Խաչենի տերը հիմա խանի դրածու Մելիք-Ղահրամանն է՝ տանուտեր Միրզեխանի որդին: Մի տարի առաջ իրար ետեղից մեռան Մելիք-Աղամն ու Մելիք-Հովսեփը: Նրանց փոխարինում են որդիները՝ Մելիք Մեժլումն ու Մելիք Բեկլարը: Դրանք, այս, հեռու-հեռու են, նույնպես շրջապատված անհամար թշնամիներով: Այս, շոշափում եմ Մելիք-Եսայու տագնապները՝ ի՞նչ անել, ի՞նչ անել: Շոշափում եմ, սակայն բնավ շեմ կարեկցում նրան: Ինձ ի՞նչ...

Այս ինչ հզոր են անկեզու ու անհոգի ջրի կաթիլները, երբ անդադար հարվածում են միննույն կետին: Բոլորից կտրված, թշնամիներով օղակված Դիզակի հզորությունը ահա երերում է, ինչ թաքցնեմ, նաև իմ ջանքերով:

Ամեն օր երկու-երեք անգամ հանդիպում եմ թեզում իշխանուհուն ու Հուրիզադ խանումին: Դառել են մի հոգի ու մի մարմին՝ քիթ-քթի, ձեռք ձեռքի: Նրանց մոտ տեսա նաև Մելիք-Եսայու որդուն՝ Բախտամ բեկին, որ երեկի տասնվեց տարեկան լիներ: Հուրիզադը նրան զուգել էր նվերներով՝ երկարաճիտք կանաչ կոշիկներ, որոնք զրնդացող, կլորատամ խթաններ ունեին: Հագցրել էր երեանյան կտավից կապույտ կապա, մեջքը պնդել արծաթե գոտիով: Տղան զինից չեր հանում երկնագույն կարակուլ մորթուց կարած գդակը, որ նույնպես խանուհին էր նվիրել: Բախտամ բեկը հորթի հա-

յացքով էր նայում իր արյունակից խանուհուն: Ես, աստված ունեմ, ափսոսացի այս պատանուն: Է՛, չգիտես, որ վիզդ դնում ես կառափի վրա... Սակայն ինձ ի՞նչ... Հուրիզադ խանումը ահա տղային շոյելով ասում է:

— Ես քու հարսանիքին քեզ նվեր կրերեմ հիսուն ձի՝ իրենց թամբասարքերով, դամասկոսյան հարյուր թուր ու ֆռանկի հրացանեներ, բալիկա, լավա, մի քիչ էլ մեծացիր:

Երեկոյան Մելիք-Եսային կիսատ թողած խոսքը շարունակեց:

— Ուրեմն, այսպես, Իբրահիմ խանը պետք է հարկատուինի հայոց պետությանը: Ապա անհապաղ պետք է ցրի իր ունեցած զորքը:

Հուրիզադը ձեռքը գրեց կրծքին, երդումի պես ասաց.

— Կլինի:

— Քո ամուսին խանը պետք է իր բոլոր կապերը խզի իմ թշնամի Մելիք-Շահնազարից:

— Արդեն նրանք գժտվել են:

Որոշեցին հանգիպել Դիզակի ու Վարանդայի գավառների սահմանագլխին՝ Քիրս լեռան մի ձորում: Մյուս օրը Հուրիզադն ու ես հեռացանք Գորող ամրոցից, հրաժեշտ տվինը դիզակցիներին՝ արցունքներ հեղելով: Եռչի քաղաքի դարպաների մոտ Հուրիզադն ինձ պատվիրեց մեկնել հոր մոտ՝ Ավետարանոց: Ես հնագանդվեցի նրա հրամանին:

Դիզակի Գորող ու Տող բերդերի վրա Իբրահիմ խանը տեղում էր իր շողոմ լորձը, նաև արցունքները՝ մեջը թույն: Նաև իմ միջոցով էր նա ոմբաճարում Դիզակը: — Հաշտվենք, Մելիք-Եսայի իշխան, եղբայրանանք: Պարսից շահը, որ հորս սպանեց, մեզ էլ կորսույան կմատնի: Մեր փրկությունը մեր միավորվելու մեջ է: Ես պատրաստ եմ:

Այսպես՝ Իբրահիմ խանը ծանրագին նվերներով, գետնաքարշ երդումներով Դիզակ էր ուղարկում մերթ ինձ՝ Իսրայել կաթողիկոսիս, մերթ իր մեծ վեզիրին, մերթ Եելիսամին: — Հաշտվենք, Մելիք Եսայի, իրար թիկունք կանգնենք մոտեցող վտանգեր դեմ: Ապրենք հաշտ՝ դու քո տանը, ես՝ իմ:

Դիզակը, սակայն, անջիղում էր իր լեռների կոշտության,

իր հողի անկոտրում ոգով: Մելիք Ծաային ընկալում էր մեղ
համբերատար, ապա ցույց տալիս մեր եկած ճանապարհը:
— Հեռացե՞ք...

Այսպես՝ ոչ մեկ կամ տասնմեկ անգամ, այլ՝ շատ, շատ...

* * *

Իրրահիմ խանը, հենց Մելիք-Ծահնազարի խորհրդով,
նրան՝ Մելիք-Ծահնազարին իր բնտանյոր, ափաշքարա Շու-
շուց վտարեց, իր թե նրանից խռով: Զեացավ: Ողջ Ղարա-
բաղով մեկ տարածվեց շշուկը՝ խանը խռովել է աներոշից:
Է՛ճ, սառուցը ճեղք է տալիս: Ինքս, ամենից առավել ևս
էի նպաստում, որ այս սուսոր սփռվի ամենուրեք:

Զատիկ է: Իրրահիմ խանիլ խանը որոշեց նորից ինձ
ուղարկել Դիղակ:

— Առ քարն անգամ ճաք կտա, եթե նույնիսկ կոշիկ կա-
րելու մուրճով անդադար խփես,— ասաց նա:— Նորից պիտի
գնաս Ծաայու ոտքը:

— Նորից կգնամ, — ճնապանդվեցի ևս:

— Չորս զյուղ կտանաս ինձնից, տեր Խարայել: Կտա-
նաս ոչ իրեն վանքիդ կալվածք, այլ իրեն քո սեփականը:

Ես պատրաստվեցի նորից մեկնելու Դիղակ: Այդ իմանա-
լով, Հուրիդադ խանումը ամուսնուն ասաց, թե ինքը ևս նորից
ցանկանում է Դիղակ գնալ ինձ հետ:

— Հավատացած եմ, որ շեմ անպատճի: Մելիք-Ծաային իմ
հարազատն է, հանգուցյալ մորս եղբայրը, նրա տունը մորս
հորանց տունն է, ասել է՝ պապիս օչախը: Պետք է գնամ:

Չեմ էւրող ասել՝ խանը գո՞հ մնաց, թե՝ հակառակը,
բայց համաձայնեց:

Մի ամբողջ ամիս Հուրիդադ խանումը օր ու գիշեր ոտքի
վրա պահելով իր ապարանքը, նույնիսկ ամուսնուն գործի
լժելով, պատրաստվեց նորից մեկնելու Դիղակ: Շուշվա վա-
ճառականների թկներին նորից շոքելով նա բավականին էժան
գնով ճնդկական ակնեղեն գնեց:

* * *

Ես իմ քարավանը Շամախուց ապահով հասցրի Հայաստան և նի Հյուսիսային դռներին, ապա Թարթառ գետի դաշտ անկաղինով մոտ Գուլիստանի Թառինց ամրոցը: Գալիս եմ Աստրախանից: Շամախում հանդիպեցի Սուլ Ավագին, կնոջ՝ Ասպարի ու իր հեծյալ հարյուրակի հետ: Գոհացա իմ քախանից, չէ որ նա ինձ ապահով ուղեկցեց մինչև Հայաստան:

Թառինց ամրոցը մենք տեսանք ոչ խաղաղ, այլ՝ եռման կաթսա: Ինչ որ ժանր բան էր կատարվում Գյուլիստանի իշխանության ալդ հզոր տաեր, որ ես զգվար էի հասկանում: Վախճանված Մելիք-Հովսեփի որդի Բեկլարն է հիմա մելիքիշխան: Նա մեղ ընդունեց զուսպ, սակայն ոչ սառը: Տակավին ջահել էր: Ես նրան տեսել եմ հոր հետ պատերազմի տաք պահերին: Նրա համար խորի էին երկյուղը, մահը: Նա միայն հաղթանակի էր ձգում: Հարցուփորձեց Աստրախանից:

— Հայկական հեծյալ գունդ են ստեղծում աստրախանցի հայերը, — հաղորդեցի նրան: — Ծուսաց կայսրունին ամեն ինչով նպաստում է հայերին: Խոսք կա, թե ոռուները նորից պետք է մտնեն Դերբենդ, նորից պարսից շահին ստիպեն իր զորքերը ետ բաշի թաքվից:

— Կհաջողե՞ն, — հարցրեց նա: — Ծուշվա իրրահիմ խանը նեցուկ է կանգնել թաքվի պարսիկ խանին: Զենդ Թերիմ շահը մտել է անգլիացիների թեսքի տակ, նրանց զրդում է Ծուսաստանի դիմ: Դեսպանություն է հեղեղ Հյուսիսի Եվկողաց թագավորի մոտ՝ զու քո կողմից, ես իմ, նեղենք ոռուին: Անգլիայի թագավորը, թե թագունին, երկուսին էլ ծովի նավերության է տալիս:

Ես ինչ-որ շափով ուրախացա, տեսնելով, որ այս շահել մելիքը հստակ ու արթմենի մտածող է, աշխարհի անցքերին լավատեղյակ, մանավանդ՝ հավատարիմ մեր ուխտին, ինչ-պես հայրն էր:

Իմ պատվին նա խնջույք տվեց: Ճաշկերույթին մասնակից արեց նաև իր սիրունուն: Պարսկունի էր, անունը, ինչպես իմացա՝ թալա խանում: Այնպիսի գեղեցկություն ուներ, որ երեսի ոչ ոք իր օրում տեսած չէ: Անհնարին էր նայել նրա աշքերին, որ այրող էին: Զգում էի, թե ինչպիսի կատաղու-

թյամբ է Մելիք-Բեկլարը սիրում նրան։ Դե, ինչ կա որ, մարդ
է։ Բոլորս էլ մարդ ենք՝ մեղքերի տեր։ Սակայն ո՞րն է մեղքը,
որը՝ ոչ, ինձ համար գժվար էր հստակ որոշել։

Մելիք-Բեկլարը, ինչպես ինձ ասաց իր բարեկամ Սուս
Ավագը, օրինական կին ունի՝ Մարիամ։ Սա Մելիք-Շահնաւ-
զարի առջիկն էր, շգիտեմ որ կնոցից, այսինքն՝ Հուրիզագ
խանումի խորթ քույրը։ Ասպար տիկինը Հուրիզագի անունը
լսելուց կապտում էր։

— Օ՛, ես իմ ձեռքով կխեղզեմ այդ քածին, — ասում էր
նա։ — Հոր նման այդ էղ վագրը ամեն կերպ վնասում է մեղ-
հայերիս։ Մի անգամ սրա եղացր Զումշուդը հարցնում է՝
ինչո՞ւ ես այդպես վարդում, քույր իմ։ Հուրիզագը բռնում է
նրա ականջը։ — Կկարեմ ոչ միայն ականջը, — ասում է եղ-
րորը, — այլև գլուխդ։ Ես իմ ամուսնու իշխանությունն էմ
կամենում հզորացնել, ողորմելի՞։ — Հայի արյա՞ն գնով, —
հարցնում է եղացրը։ — Նույնիսկ քո արյան գնով, եթե հարկ
լինի։ — Իսկ չէ՞ որ գու հայ ես, քո՞ւյր իմ։ — Իշխանությունը
ազգ ու կրոն շի ճանաշում։ Բոլորի իշխանավորները մի ազ-
գից են՝ ոչնչացրու քո հակառակորդներին, մի կրօնից են՝
տիրիր, ուզում ես խաչով, ուզում ես կիսալուսնով։ Տիրի՞ր։

Առավոտյան Մելիք-Բեկլարը ինձ կանչեց։ Ես գնացի ու
նրան գոտ ձիու վրա, զորքի հետ։

— Ես գնում եմ գաշտի կողմերը, Աբրահամ խոշա, —
ասաց նա ինձ։ — Շուն շանօսրդի իրրահիմ խանը նորից է
ժրել։ Քեզ կուղեկցի Սուս Ավագ հարյուրապետը և, հավա-
տացած եմ, որ գու գո՞ւ կմնաս։ Լա՞վ, Այժմ մնաս բարով...

Նա ձիու գլուխը շրջեց գնալու, սակայն ապարանքից
դուրս թռան նրա աղախինները և մի երկու ծառա, սաստի՛
ողբալով։

— Բալա խանումին սպանեցի՞ն։ Սպանեցի՞ն...

Մելիքը կրակվեց ձիու վրա։

— Ինչպե՞ս։ Ո՞վ արեց։ Ո՞վ...

— Մարիամ տիկինոչ հրամանով քո ծառա կալան։ Բա-
լային խեղդեց հենց իր երկար ծամերով, դրանք փաթաթելով
վզին։ Ուշ հասանք։

Դդյակը դղրգաց, սոսկաց, կծկվեց։ Մելիքը ձիուց շիշավ։

— Կողի եմ զեռւմ, — սրոտաց նա: — Թռնեցք Հալային,
կդամ ու... Դե՞...

Հեց այդ պահին կողքի շենքից հրացանի կրակոց ժայթ-
քց: Մելիքը բռնեց կուրծքն ու դանդաղ թեքվեց ձիու վրա-
յց: Մենք բռնեցինք նրան, սակայն նա արդեն անշնչացած
էր... Կրակողը նրա ծառա Հալան էր:

Ի՞նչ սոսկալի բան: Մեկը ինչ-որ տեղից ծղրտաց:

— Այս ոճիրը իրաւում խանի կնոջ՝ Հուրիզադ խանումի
ձեռքի գործն է, է՛ս յ... Արթեացե՞ք:

Այսպիսի կորստաբեր բան կատարվեց: Տապալվեց հա-
յոց զորության մի սյունը ևս: Աստված, երեսում է, լիովին է
երես թեքել հայ ցեղից: Մելիքի զինվորները կտոր-կտոր
արին ծառա Հալային: Սույ Ավագը քարշ տալով բերեց Մա-
րիամ Խաթունին:

— Բո՞դ, դու կոտրեցիր Գյուլիստանի մեջքը: Ինքդ շնու-
թյուն էիր անում ծառա Հալայի հետ ու պարկեցառության քա-
րող թափում: Բո՞դ...

Զինվորները սրան ևս սպանեցին: Այնքան արագ կատար-
վեցին այս ոճիրները, որ ես շշմեցի, ես, որ անթիվ-անհամար
նման գեպերի եմ ականատես եղել:

Մելիք-Բեկլարին թաղեցինք: Նրա սրդի Ֆրեյդունը շատ
փոքր էր, ուստի զորքը Գյուլիստանի մելիք բնարեց Բեկլարի
եղբորը՝ Արովին, որին Երկրորդ կոչեցին, քանի որ նրանց
տոհմում եղել է նաև այլ մելիք Արով:

Այնուամենայնիվ Սույ Ավագը քսանհինք ձիավորով ինձ
ուղեկցեց: Ես շատ սիրեցի նրան: Նրա մեջ ահի, կամ երկյուղի
նշույլ չէի տեսնում:

— Դե, մարդ ենք, — ասում էր նա, — մի կյանք ունենք,
մարդավարի սպառենք: Կուզեկուզ ու ահարեկ ապրելն ո՞ւմ
է պետք:

Նա շատ ուշադիր էր կնոջ նկատմամբ, որին, ինչպես
տեսա, սիրում էր սաստիկ, թեև արդեն հիսունն անց էր ինքը,
կինն էլ, երեխ քառասունի մոտ: Եվ այդ սերը նրանց զար-
մանալի սազ էր գալիս, նաև նրանց խիստ քարի ու, ինչ
ասեմ, կարծես անհոգ էր պահում:

Սույ Ավագը մոխրագույն-բող նժույդ ուներ: Հազնում էր
Հարյուրապետի զգեստ, սակայն դրա տակից, մարմնի վրա,

երկաթե բավականին ժանր խաշ էր կրում, որ նույնպես երկաթե հաստ շղթայով կախված էր վզից: Բայց ես չտեսա, որ նա այդ խաչը համբռւրեր կամ նրանով մաղթանք աներ:

Մի անգամ Սուռ Ավագը բռնում է մի պարսիկ մոլլայի, որ հայ երեխաներ էր սպանում: Մոլլային խոթում է ծնկի տակ, դանակը դեմ անում բեկին: Դեմ է անում, ասում՝ մոլլա, երեք անգամ ասա Քրիստոսն աստված է: Մոլլան ասում է ու կրկնում: Սուրբ նրան բաց է թողնում: Մոլլան հասնում է Եռշի, կատարվածք պատմում իրրահիմ խանին: Սա լսում է, սաստիկ բարկանում:— Ուրեմն, դո՛ւ, մոլլա, ասացիր Քրիստոսն աստված է, հա՞:— Ասացի:— Դետինը մտնես, բա շսուկացի՞ր հավատիդ համար: Ինչո՞ւ ասացիր:— Դու լինեիր, խան, իմ տեղը,— պատասխանում է մոլլան, — ոչ միայն կասեիր Քրիստոսն է աստված, այլ կասեիր՝ Սուռ Ավագն է աստված:

* * *

Որտեղ անզոր է մարդը, այնտեղ աստծու ձեռքը հասնում է իր ողջ ուժով: Եվ չեմ կարող ասել, թե որն է դրանցից արդարը և գործ զլուխ բերողը: Համենայն դեպս ես մինչև հիմա բան չեմ խնդրել աստծուց, որ չկատարի: Չեմ կարծում թե աստված այնքան անզոր է, որ մահկանացուիս աղերսանքը մերժի:

Իմ ու իրրահիմ խանի, ինչ խոսք, նաև Մելիք-Շահնազարի ցանկությունը մեր տեր աստվածը՝ կատարեց: Գուցե դա Հուրիզադ խանումի շնորհիվ էր կամ մեկ այլ չերեացող ուժի, չզիտեմ: Սակայն մեր ցանկացածը կատարվեց: Հրաշալի է: Մեր ջանքերը ապարդյուն շանցան: Ահա ժայռերով կապկապած ու աներեր ուժով հզորացած Դիզակը կակղել է: Մելիք եսային մեզ՝ Շուշում նստած անխօնչ ոգիներիս լուր տվից, թե ինքը գալիս է բանակցելու խանի հետ, ինչպես պայմանագործել էր: Հուրիզադը արլորացավ՝ ամուսնու և հոր առաջ:

— Տասնհինգ տարի է ջանում եք հասնելու ձեր ցանկացածին, շհաջողեցիք: Ահա ես իմ կին տեղովս կատարեցի ցանկալին: Գնացեք, աստված ձեզ հետ...

Ինչոք տեղ ես ցեցվեցի, նաև կարծես թե զդաման նման
քան ծաղկց մէջս: Ախր ահա լիուան հզոր արծիվը զալիս է
գեայի թշնամու թակարդը... Չգիտեմ, կհաջողվէ՞նք, թե՝ ոչ

Պատրաստվեցինք: Ավելի շուտ արդեն պատրաստ ենք
քանի շաբաթ, ոչ, ինչ եմ ասում, քանի ամիս շաբունակ:
Այնուամ մանրակրկիտ էինք մշակել մեր ծրագիրը, մեր անե-
լիքը, որ անգիր զիտսինք դրա յուրաքանչյուր մասնիկը: Այ-
նուամ ենայնիվ երբ լսեցինք, թե Մելիք-Ծսային, պայմանա-
վորվածության համաձայն, զալիս է, շփոթվեցինք: Մի՞թե,
մի՞թե: Ախր անպարտելի հզոր է տեր Ծսային, իսկ նա ահա
զալիս է, միամիտ ձկան պես, որ նետվում է դեպի ոսկե-
սինիկ կարթը... Սակայն մեր այս շփոթությունը երկար շա-
մեց: Խանի վեզիրները թամբած ձիեր մոտեցրին մեզ: Մինք
հեծանք երիվարները: Հուրիզադ խանումը մեր ետեսից ջուր
ցանեց, ահեղ կռնչողով:

— Կամ զրահով, կամ՝ զրահի վրա:

Մենք արդեն վերագտել էինք մեր կորուսված հոգեկան
ուժերը և գնում ենք վատանգին ընդառաջ: Կամ զրահով, կամ՝
զրահի վրա... Ես նկատեցի, որ Իրրահիմ խանի ծնոտը այն-
քան էլ ամուր չէ իր տեղում: Սակայն նրա այդ թուլությունը
վերանում էր, երբ նա ի լուր ինձ կրկնում էր իր աներոջ՝
Մելիք-Ծահնազարի պատվիրանը՝ ինչպես դործել:

Հասանք այն տեղը, ինչպես պայմանավորվել էինք Մելիք-
Ծսայու հետ: Դա Դիզակի ու Վարանդա գավառների սահմանի
վրա էր: Քիրս լեռան հարավահայոց մի ոչ խոր ձորում, որ
պճնված էր կաղնու ու հացի ժառերի թանձր անտառով, մեջը
քարալիկ մի գետակ: Ամսից ավելի էր, ինչ մերոնք այդ վայ-
րում մեր թակարդն էինք լարել՝ բազմաթիվ խրամափռուե-
րով, գետենի մեջ պնդած դիրքերով, լարափռկերով:

Ախ, անիծված աստված, ինչո՞ւ ես դու ինձ այսպիսի
հզորություն տվել: Ինչի որ ձեռնարկում եմ, հաջողում ես:
Չէր լինի՞ն, որ ինձ ստեղծեր իր այլ կտավից, ոչ այսպիսին,
ինչպես կամ այլ թեկուզ Խրիստորի էգ հովազի ոռով:

Մենք՝ հիսուն-վաթսուն ձիավորով իշանք թթու ջուր
առվակի եղերբը, աջից նույն պահին տասնհինգ-քսան ձիա-
վորով Մելիք Ծսային ձախից իշավ ձորակը: Նրա նտեսից
եկող ձիավոր հարյուրակի առաջ դուրս եկան նախօրոք մեր

այդտեղ դրած մարդիկ ու պղնձե սինիների վրա ուտելիք, գինի և թանկազին նվերներ դեմ արեցին Հայ ձիւավորներին: Քահանան, որին ես նշանակել էի Հյուրասիրություն մատուցելու դիզակցիներին, անթերի կատարեց իր պատվերը: Հայ հեծյալները իջան ձիերից, սկսեցին Համբուրել քահանայի խաչը և ընդունել նվերները: Հենց այդ պահին իրրահիմ խանի մարդիկ գալարապարաններ ձգեցին Մելիք-Եսայու և Նրա հետ ձորակն իջած մարդկանց շլինքներին: Դա կատարվեց զարմանալի արագ. ո՞վ տեր ողորմած, կատարվեց նաև աներեւակայելի հեշտությամբ:

Դա մի երջանիկ ակնթարթ էր: Իրրահիմ խանի մարդիկ մեկ-մեկ թռան Եսայու և Նրա մարդկանց ձիերի թարթերը ու քշեցին մեր ցանկացած ուղղությամբ: Մելիք-Եսային միայն մի անգամ հասցրեց գոռալ:— Սուզակ էր... Սակայն Նրա ձայնը խեղզվեց իրրահիմ խանի ըմբիշ-վեղիրի հաստ թաթերի մեջ, որով նա կատկակել էր իշխանի ձեռքերը ու փակել քերանը:

Ախ, անիծված աստված, ինչպես ես ոյուրությամբ հաջողում քո թշնամիների գործը, քո հպատակներին մատնելով:

Մենք Քիրսի ձորակից առողջի արագությամբ փախանք դեպի ոչ հեռվում տնկված Շուշի քաղաքը: Հենց որ ձորակից դուրս եկանք, խանի այնտեղ դրած ձիավորները Մելիք-Եսայու մարդկանց առաջ կտրեցին դեպի Շուշի տանող բոլոր անցքերը: Անցանք Թթու ջրի կապը: Ես նկատեցի, որ մեր թիկունքում, բավականին ետ, Դիզակի փոքրիկ հեծելախումբը անզոր ճակատում է խանի զորքի դեմ՝ իր կալանված իշխանին հասնելու:

Իմ կողքով, հսկա ձիու վրա սլացող իրրահիմ խանն ինձ ասաց.

— Կարծես հաջողում ենք, այս:

— Համբերիր,— շար ասացի ես:— Հասնենք բերզ, նոր կարող ես հպատանալ սարքած գալովզ:

— Նաև քո,— վստահ ասաց նա:

— Ամենից առաջ Մելիք-Շահնազարի, — ասացի ես:— Ո՞ւ, ինչո՞ւ, նախ և առաջ շնորհակալ եղիր քո Հուրիզադ տիկինոցը:

— Որ հայ է, — հոհոաց իրրահիմ խանը:

— Թածը հավատարիմ է քեզ շան նման:

Արշավով մենք հասանք Շուշվա Երևանյան դարպանին: Մեր սլացքի առաջ բացվեցին երկաթի հղոր դռները և խեկույն փակվեցին, հենց որ մենք մեզ զցեցինք ներս: Այս ամեն ինչ կատարված է և մենք ապահով ենք: Երբ անցնում էինք մի տան մոտով, մի հայ գոռաց:

— Դու էլ էշի նման քու երկու ոտքով եկար մտար թակարդ, հա՞, Մելիք-Ծսայիի: Ողբամ զքեզ...

Մելիք Ծսային դալարվեց կապերի մեջ: Զկարողացավ նույնիսկ բան գոռալ, բերանը խցկված էր քրձերով: Շուշեցի Հայի աղաղակը երկնային ձայն էր, որ զնդաց ու փշրվեց իմ գանդի մեջ: Ռւշացած աղդական...

Մտանք խանի պալւատը: Կալանված Մելիք-Ծսայուն և նրա շորս հինգ մարդկանց խեկույն խոթեցին բանտ: Մենք հոգնած, չարդիլած թափվեցինք գորդերի վրա: Նույնիսկ ուժ չունեինք զուր խմելու: Խանի մարդիկ, հատկապես միշտ հոգատար Հուրիզադ խանումը մեզ զրով կշտացրեց և սկսեց ուշքի բերել:

* * *

Գիշերվա կեսին իբրահիմ խանը ինձ ու երկու դահինի հետ անազմուկ մտավ Մելիք Ծսայու բանտախուցը: Թերերը ետքաշեց, մագիլները խրեց կապկապված Ծսայու կոկորդն ու սկսեց խեղդել: Նրա մարդիկ ամուր բռնեցին մելիքի ոտքերն ու ձեռքերը: Իբրահիմ խանը ծունկի եկավ մեռած մելիքից մի քիչ հեռու, գորդի վրա ու սկսեց առավոտյան նամազը: Ես որևէ աղոթք չհիշեցի:

* * *

Մտրակները շաշում էին, գավազանները շառաշում: Իբրահիմ խանը մետաքսով զարդարված ձիու թամբին դիք նըստել էր՝ կուապաշտ կուոք, ձեռքին ձիու պոլ, իրրե իր նախնի ցեղի սրբություն:

— Բերե՛ք:

Նա շքախմբով անցավ ապարանքի փողոցով ու շեշտ կանգնեց Շուշի քաղաքի մեծ բազարի հրապարակում:

— Բերե՞ք:

Իսկ արևը զարմանալի մեղմ էր:

Զինվորները և յօթ կարմիր հագած դաշիճ բերին Մելիք Սսայու հետ բռնված նրա տասնութ ազգական աղնվական-ներին: Տասնութ: — Քի՞ է, — մտքում լափլփեց խանը: Հիշեցի նրա աներոջ խրատը, որ նրան տվեց քիչ առաջ: Բոլորին շապանես, փեսս իմ: Աշխատիր դրանց թեքես իսլամի հավատին: Մահմեդական դարձրու: Հետո դրանց կուղարկենք իրենց տները՝ Դիղակ: Նրանք այնտեղից, ներսից կպայթեցնեն Դիղակի իշխանապետությունը:

Խանը հրամայեց Մելիք-Սսայու դիակը բերել, գնել հրապարակի քարե ատյանին: Բերին: Մեծ շեյխ ուկ-իսլամը բղավեց:

— Մեռնելուց առաջ երանելի Մելիք-Սսային ընդունեց Մուհամմեդի արդար հավատը: Նա իսլամի զավակ է:

Իրրահիմ խանը ձիու վրայից գոռաց կապկապված, ահեղ խոշտանգված տասնութ հայերի վրա:

— Ճանաշո՞ւմ եք երանելի Մելիք-Սսայուն:

Հայերը տառապած նայեցին իրենց իշխանի դիակին: Զայն շհանեցին: Խանը նորից բղավեց նույն հարցը:

— Բոլո՞րդ եք Եգանյան տոհմից՝ Եգանյան:

— Բոլո՞րս...

— Հենց հիմա պիտի դառնանք Եգանօղի: Հենց հիմա: Դա նաև երանելի Մելիք Սսայու ցանկությունն էր: Ընդունեցիք մեր արդար դինը:

— Երբե՞ք...

Այդպես գոլեցին մեր հայերը: Երնի կարծում էին, թե իրենց աղաղակով կարթնացնեն երկնքի խիզճը: Իսկ երկինքը խիզճ ունի^o, որ արթնացնեն: Մեկը արյուն թքելով գոռաց:

— Դու շո՛ւն ես, Իրրահիմ Խալիլ, շնից ծնված շո՛ւն ես:

Ապարանքի իր հարկարածնից այս նախճիրը դիտող Հուրիգաղը բաց պատուհանից հրացանն ուղղեց ու գնդակով սպանեց իր ամուսնուն շուն անվանողին: Խանը ցնծաց: Մպանվածին գլխատեցին: Հավաքվածների հայացքները վալող արյան կողմը գեացին: Խանը հեաց:

— Էլ ո՞վ է ուղում խաշին նահատակ լինել:

Դատապարտվածների երեսների վրա հեղիկ խաղում էր

արելը, նրանց օծո՞ւմ է հավիտենական փառքի լույսով: Նրանք, շկարողանալով կապած ձեռքերով խալ հանել երեսներին, սկսեցին գլուխներով խաշանշան անել:

- էլ ո՞վ է ուզում գլխատվել:
- Ե՞ս, ե՞ս...
- Ե՞ս...
- Բոլո՞րս...

Խմբից առաջ եկավ մի պատանի: Նրա հոգում երեխ հույսի նշույլներ էին բորբոքվում՝ մի՞թե չի գալու փրկիչը: Շեյխ ուլ-իսլամը, նաև, որ մի քանի անգամ երդումով, գլուխ տալով զնացել էր Մելիք-Ծաայու տունը՝ հաշտվելու ուխտով, ատամները փիթած մի դե, բռնեց պատանու ծնոտը:

- Ընդունի՞ր մեր կրոնը:
- Երբե՞ք: — Պատանին արյուն թքեց նրա ցանցառ մոռուքին: — Երբե՞ք...

Շիկացած շամփուրներով խարանեցին նրա մեջքը, ճակատին խաչի նշան դաղեցին: Մարդկային մսի այրվող ճահճահուտ տարածվեց՝ սպիտակ ծուխ: Մյուս բռնվածներին ևս մերկացրին, մեջքների վրա զցեցին գետնին: Մոլլաները նրատեցին նրանց կրծքներին ու սկսեցին միզել նրանց երեսներին: Շեյխ ուլ-իսլամը նույնիսկ վարտիկը իշեցրեց, սկսեց ճարճաք գալով, զոռ անելով կղկղանք թափել մեկի կրծքին: Վերին հայոց թաղից մի կին ճշում էր.

- Մի՞ անեք, մի՞ անեք...

Մութն ընկագ: Խանն իր դահիճների հետ հեռացավ շուկայի հրապարակից: Խոշտանգվածներին թողին արյունլվարներձ՝ որը կիսամեռ, որը գեռ ուշքը վրան: Մեկը կողքին ընկածին հարցրեց.

- Կդիմանա՞նք:
- Ո՞չ:
- Ուրանա՞նք մեր հավատը:
- Ո՞չ:

Լուսաբացին խանը նորից եկավ դահիճների ու մոլեռանդ ամբոխի հետ:

- Ընդունո՞ւմ եք պայմանա:
- Ո՞չ, — զռացին ողջ մնացածները:
- Նրանց սկսեցին կենդանի մաշկել, Բռնում էին վզներից,

դանակով բաց անում մորթին ու, ինչպես ոչխարի փռստն են
հանում, հանգամանորեն մաշկում:

Եռշվա երկնքում հսկա զիշանգղեր երևացին: Արյան ու
լեշի հոտի վրա եկել էին ներքեմ ձորերից: Իսկ ձորերն աղա-
ղակում էին:

— Ո՞ւ...

* * *

Զիերը փոշտում են անտառի խոնավ, թանձր զովից: Անց-
նում էինք Քիրս լեռան սեռով: Ասպար տիկինը ձախ ոտքը
հանեց ասպանդակից, դրեց թամրի կեղին՝ մի քիչ մեղմվի:
Այդ զիշեր մնացել էինք լեռնաճյուղի մի մթին խոռոշում:
Մելիք-Մեժլումը հոտակ է հրամայում:— Թարթառի վերե-
ներում իրրահիմ խանի ավագակներ են երևացել: Երջեցեք
այնուհետ:

Տղերը վայրի վարագ որսացին, միանգամից երեքը: Խո-
րովեցին քարայրում՝ կրակի վրա, կերան: Ասպար տիկինն
անսպասելի ծիծաղեց:

— Դու տեսնո՞ւմ ես, ամուսին իմ, որ մենք աստված-
ներ ենք:

— Դե ի՞նչ կա որ,— չկամ ասաց Սուռ Ավագը:— Ասում
են աստված է մեզ ստեղծել, ուրեմն՝ իր նման:

Հարունակեցինք զնալ՝ միմյանցով հմայված: Երևաց մի
ոչ մեծ բացատ՝ ընկուղենիների ու կաղնիների վարագույ-
րով: Զիերը անհանգստացան: Ասպար տիկինոց ործածին
խրինջաց զիլ: Տիկինն զգուշացավ:

— Այս կողմերին ձիեր կան, խոչա Արրահամ երևանցի,
մեղները՝ մատակ: Իմ հոգատակը մատակի հոտ է առել:

Եվ իրոք, հենց այդ պահին անտառի պատից դուրս եկան
մի խումբ ձիավորներ, երեխ հիսուն-վաթառն, ու մտան բա-
ցատ: Բոլորը հարուստ զուրսով ու զենքով էին: Ասպար տի-
կինը ուշադիր նայեց նրանց:

— Է՛ս, իրրահիմ խանի մարդիկ են:

Ոչ միայն ես, այլև նրա ամուսինը տարակուսեցինք՝ ձիա-
վորների խումբը զեպի Կուրի գետանցումն է գնում, ի՞նչ

նպատակով Սույո Ազագի զինվորները իրենց ձիերը քշեցին
դեպի նեղ բացատը, օղակեցին խանի ձիախումբը։ Ասպապ
տիկինը ատրճանակից կրակեց նրանց գլխավերնում։

— Ով զենք ունի, վայր զցի։ Եռւտ...

Եկվորները ցնցվեցին, շշմեցին իրենց օղակված տեսնե-
լով։ Մի երկուոր ձեռքը տարան դեպի հրացանները, սակայն
մերոնք նրանց զըռեցին իսկույն։

— Անիմաստ է ձեր զիմագրությունը, — Հանդարտ ասաց
Սույո Ազագը։ — Հանձնվեց իսկույն։ Թող առաջ գա ձեր
ավագը։

Քյոսա դեմքով, ազնատված քիթ-մոռւթով մեկը մի փոքր
առաջ եկավ, ասաց, թե ինքը Իրրահիմ խանի նայիր-զա-
փուզիբաշին է։ Խոսեց սարսափած։

— Մենք խաղաղ ուխտավորներ ենք, Հայե՛ր։ Թողեք մենք
վնանք մեր ճանապարհը։

Սույո Ազագը հրամայեց բոլորին իջնել ձիերից։ Երբ նրա
հրամանը կատարվեց, ձիերի մեջ մի սպիտակ չորի տեսանք,
բեռնած երկաշք ջվալով։ Ասպապ տիկինը ձեռքը մեկնեց
տակավին ձիու վրա մնացած, շրեղ հագնված մի տղայի, որ
հաղիվ տաս-տասներկու տարեկան լիներ։ Եռյեց նրա գլուխը։

— Դու Իրրահիմ խանի մեծն ես, չէ՞ս, տղա՛ս։ Մի՛ վա-
խենա, ասա ճիշտը։ Ո՞ւր եք զնում։ Երեկի հայրդ քեզ շատ է
սիրում, որ հաջ է ուղարկում սուրբ Քերրելաւ։ Այս՛։

Տղայի լեզուն բռնվել էր աշից ու նոր միայն պլշած աշ-
քերով էր նայում զորապետի տիկնոջը։ Վերջապես նրա լե-
զում բացվեց։

— Հայրս ինձ ուղարկում է... Ուղարկում է շահի մոտ։
Ուղար... — Նա լաց եղավ։

Նայիր-զափուզիբաշին աղաղակեց։

— Մենք ուխտի ենք զնում, ուխտի՛...

— Ա՞... — զլուխն օրորեց Ասպապ տիկինը։ — Հորու-
թեռան մեջ ի՞նչ եք առանում, ուխտական մարդիկ։ Ժիր,
ժիր խռանեք։

— Բեռք մեր Եկյիս ուլ-իսլամի նվերներն են Քերրելայի
ուխտին։ Ենոան մեջ արծաթե ու պղնձե ամաններ են, նաև
շահներ։

— Ահա՛, Կուզեմ տեսնել։

Տիկինը ոչ թե սուրը, այլ գոտուց կախած արծաթե պատյանով դաշտունք հանեց, քաշեց ջորու բեռան ջվալի հակերի վրայով՝ վերից վար: Պինդ կապերտը ճռնչոցով ճեղքվեց... Մենք զարմանքից նույնիսկ ետ-ետ զնացինք: Զվալի պատըովածքից գետնին թափվեցին կտրված զլուխներ: Ասպայտիկինը բարձրացրեց զլուխներից մեկը:

— Ա՞... Սա Մելիք Ծամայու զլուխն է: Ա՞...

Նրա ձիչը ճեղքեց անտառի թանձրը: Նայիքը գալարվեց դետնին:

— Մի՛ սպանեք մեզ, հայե՛ք, ձեր շունը գառնանք: Մենք հրաման կատարող ենք: Իրաւում խանն այս բեռը ավեց մեզ, որ տանենք Սպահան՝ Զենդ Քերիմ շահին նվեր... Ա՛խ, ամա՞ն...

Քիշ հետո խանի բոլոր մարդիկ սպանված ընկած մնացին՝ շաղախված սեփական արյան լճակներում, որ արագ լերգանում էր: Մերոնք հայերի զլուխները խնամքով թաղեցին բացատի ծայրին եղած մի շատ հին մատուռում... Հավաքեցինը խանի մարդկանց ձիերը, զենքը, շտապեցինը դեպի Զրաբերդ: Սուռ Ավազը հևաց.

— Մեր աշխարհի մեջքի մի ողն էլ կոտրվեց: Դիզակը մորթված է... Տե՛ր աստված, կում անեմ թքեմ երեսիդ:

— Մի՛ ողբա, — խիստ ասաց կինք: — Սպանված է Ղարաբաղի մի առյուծը ևս: Բայց ոչ Ղարաբաղը: Ղարաբաղը կորյուններ ունի: Մի՛ ողբա:

* * *

Սկսվեց լեռնային ցրտակապան ձմեռը: Մենդյան տոները գեռ մխում էին կազանդի ու տավարախաշի մարող բույրերով: Զրաբերդն ու Գյուլիստանը, երկվորյակ եղբայրների նման փակվել էին իրենք իրենց քարեզեն ու անտառեղեն պատյաններում: Նրանք անցած ամռան ու աշնանը ահեղ խոցուել էին Շուշուց արձակված թշնամու անհամար խմբերին: Հրեն՝ հազարավոր լեշեր փուլած Թարթառի հովտում, ձորերում, մանրակոճակ դաշտապատառների վրա:

Դյոյակի եկեղեցում խեղդոց էր: Զրօրհների ծես էին անում մեծ ու փոքր: Հանդարտ, անշտապ ներս մտավ Մելիք-

Մեժլումը, համբուրեց աղոթքի շոքած մոր՝ Կամար Սոլթանի ձեռքը:

— Մայր, իրրահիմ խանն ու Մելիք-Շահնազարը նորից պատերազմով գալիս են մեզ վրա: Դնում եմ: Օրնչի՞ր:

Մայրը բնավ շնուղփեց, շանհանգստացավ: Միայն համբուրեց որդու ճակատը:

— Օրնանքս հետդ: Դնա՞:

Շարունակեց իր աղոթքը: Ես դարմացա՝ Կամար-Սոլթանը բոլորովին հանգիստ ընդունեց պատերազմի լուրը, շղնաց որդուն ճանապարհելու, շարունակեց իր աղոթքը:

Պատերազմի գնացածները ետ եկան հաղթած: Նրանք իրենց հետ բերում էին չորս հարյուր գերի, շատ ձիեր, զենք: Ես տազնապեցի, տեսնելով, որ Ասպար տիկինը բերում է ամուսնու՝ Շուտ Ավագի ձին, նրա զենքերը թամբից կախած: Կամար Սոլթանը ընդառաջեց զորքին, սակայն քայլերն ուղղեց զետի Ասպարը:

— Ո՞ւր է ամուսինդ, կի՞ն...

Ասպարը հետիւտն դարձավ:

— Միայն ոչ սգով զիմավորիր մեզ՝ հաղթողներիս, — հանդարտ ասաց նա: — Ամուսինս սպանվեց կռվում: Նրան թաղեցինք Երիցմանկաց սրբի գավթում...

Երբ ամեն ինչ խաղաղվել էր, ես՝ Արրահամ Երևանցիս վկա եղա Ասպար տիկնոց ու Կամար-Սոլթանի զրոյցին: Տիկինը պատմեց: — Մենք արդեն հաղթե, էինք Շնամուն և Իրրահիմ խանն ու Մելիք-Շահնազարը փախուստի վազեցին: Ամուսինս սրի հարվածով վիրավորեց խանի մի հարյուրապետի: Սա ծովնկի եկավ ու, որքան էլ զարմանալի լինի, աղաղակեց: — Ինձ լիովին սպանիր, Շուտ հարյուրապետ, հայ: Սպանել սովորիր, հայ: — Ամուսինս նստեց մի քարի, վիրավորին ասաց: — Ես քեզ շեմ սպանիր, հարյուրապետ: Ազատ ես, ուր կամենում ես՝ զնա: — Նա իր խուրջինից վիրակապ հանեց, կռացավ հարյուրապետի վերքը կապելու: Հենց այդ պահին...

Տիկինը, որքան զուսպ ու արիասիրա էր, այնքան էլ շուտ փլզող, սկսեց լալ աղեխարշ...

— Հենց այդ պահին տմարդի պարսիկը ատրճանակ հանեց ու մինչ ես կհասնեի ձեռքից խլելու, կրակեց իմ Շուտի

կրծքին: Ես հրացանիս սվյանը խրեցի հարյուրապետի կոռ-
պը...

— Հենց սկզբում պիտի անեիր այդ բանը,— ասաց Կա-
մար-Սոլթանը: — Հայ ենք, չէ՞ մեզ սպանողի նկատմամբ
գութ ենք ցուցաբերում: Մենք պետք է հայի միջից հանենք
քրիստոսային ատելի այդ ջիզը:

Այսպիս սպանվեց սքանչելի Սուր Ավագը:

Մի շարաթ հետո Կամար-Սոլթանն ինձ ասաց, թե Աս-
ուապ տիկինը հեռացել է Զրաբերդից:

— Ո՞ւր:

— Գնաց՝ որոնելու Գոհար մայրապետին: Գնաց՝ աշխար-
հից կորչելու:

Կամար-Սոլթանը ձեռքերով փակեց երեսն ու լուս ար-
տասվեց: 1783 թվականի դարունը փարթամ պճնվեց նորից
զտանգված լեռնաշխարհում:

ՊԼՈՒԽ ԽՐԱԲՐՈՅ

Անտառում հողը լավ տամկել էր՝ տաշտի մեջ հասած
խմար: Ջիերի ստքերը խրվում էին ու ցեխը ճլթում էր՝ պըզ-
պըզակներ արձակելով: Ցածրում՝ անտառամթնի ժայռակու-
տակի մեջ ծիսում էր Վանք զյուղը այս է քանի՛ հաղար տարի:
Մխացող փայտածուխի ու թոնրի հոտեր հասան մեզ՝ ձիա-
վորներիս:

Իշխաններն ու տանուտերերը հագաքվում են զերագույն
գահաժառողովի: Սերունի Ներսես կաթողիկոսին փոխարինելու
շտապեց Խորայել կաթողիկոսը: Սակայն իշխանական ավա-
գանին նրան նույնիսկ թույլ շտվեց մտնել Գանձասար: Մի
տարի առաջ Արևելից կողմանց հայոց հայրապետ ընտրեցին
Հովհաննես Քալալյանց ծերունուն: Հովհաննես կաթողիկոսը
վանքի բակում դիմավորեց Մելիք-Մեծլումին ու Մելիք-
Աբովին: Հասան-Քալալյան արքայական տոհմի այդ շառա-
վիզը կորովի խստությամբ ու անզիջում վարում էր իր ծանր
գործը՝ թե իրբահիմ խանի ու Մելիք-Շահնազարի և թե նրանց
կրունկը լիզող խորայել հակաթոռ կաթողիկոսի որոգայթ-

ների գեմ: Եվ, ինչպես իր այս ութ հարյուր տարվա վանքի պարիսպները, ամուր էր թշնամիների գեմ:

Վանքը բերդի էր նման, զրաից կատարյալ խուլ, պատերը բարձր, հզկված, լեռկի ներսում երկհարկ շինություններ էին՝ միմյանց հյուսված մեղվի բջիջներ վանականների խցերը: Տաճարը սքանչացնող տևսը ուներ:

Մելիքները համբուրեցին կաթողիկոսի աջը: Նրա հետ էր նաև Հասան Ջալալյան իշխան Ալավերդի բեկը: Սա միայն իրավունք ուներ իր հզոր նախնիների տիրապետության մի պատառիկի՝ վերին Խաշենի վրա: Խաշեն գավառի մեծ մասի տերը Ղաջրաման անունով մի հարյուրապետ էր, նշանակված իրրահիմ խանի ու Մելիք Շահնազարի ձեռքով, Ալավերդի բեկը խիստ բարձրահասակ, փափկամորթ, բարակածայն մարդ էր: Նրբ խոսում էր, թվում էր հիմա ժնոտը կպոկվի: Նա խոնարհումներ արեց մելիքներին:

— Էջմիածնից ամենայն հայոց կաթողիկոսը մխիթարիչ զիր է հղել ձեզ, տեր մելիքներ, ձեր հայրերի վախճանվելը ողբալով:

— Այդքան ո՞ւշ, — քմծիծաղեց Մելիք-Մեծլումը: — Դե ի՞նչ, կարգը հաստատ:

Ես նկատեցի, որ Ալավերդի բեկը խիստ նման է իրենից մեծ եղբորը՝ կաթողիկոսին: Նա Մելիք-Մեծլումին ասաց.

— Այսօր Աստրախանից կժամանի ուսւաց բանակի գրնդապետ Թաղա Պուղանենցը: — Նրա ձայնը կարծես ասեղի ծակից էր դուրս գալիս ու ահարեկ մկնային երանգ ուներ: — Օգտակարն ես մտածել տեր գերազահ, որ հրավիրել ես նրան: Եղբայրս՝ կաթողիկոսը ես գո՞չ է: Ախր առանց ոռախ մինք քամու բերան ընկած չոր խոտ ենք:

Մելիք-Մեծլումը զզվեց նրա ծվծվան ձայնից, որի մեջ դժգոհության երանգ կար: Բեկը, սակայն, նորից խոսեց:

— Զեր հայրերը եղբայրաբար հարազատ էին միմյանց: Հույս, որ դուք էլ նրանց նման մի անձ ու մի հոգի կլինեք՝ հանուն մեր տառապած ազգի:

Նրանք հավաքվեցին մյուս օրը ևս: Այս անգամ Հովհաննես կաթողիկոսը նստած էր գահին: Մի կողմում եղբայրն էր՝ Ալավերդի բեկը, մյուսում՝ մի եպիսկոպոս, որին չէի հանա-

շում: Մելիքները խոնարհ համբուրեցին նրա ազը, Կաթողիկոսը խոսեց շարականի ձայնով:

— Եղմիածնի վեհափառ Ղուկաս կաթողիկոսը միսիթարանի թուղթ է առաքել ձեզ, որոյակենք իմ Մելիք-Մեջլում և Մելիք Արով:

Նա կնիքով ու սև ժապավենով կապած թղթի փաթեթ մեկնեց Մելիք-Մեջլումին: Սա համբուրեց վեհափառական կնիքը, ավեց Ալավերդի բեկին:

— Կարգու: Ես զրի սևն ու սպիտակը հաղիվ եմ ջոկում:

Բեկը կարդաց, աշխատելով պարզեցնել խրթին բառերը և նոր սիրածիր և ողջոնառաք օրհնության նամակին՝ ժանուցումն լիցի սիրելիներիդ մերոց և հարազատ որդվոց սրբոյ Աթոռոյն Եղմիածնի: Ջի ընդ որում խրատիմք ի հոգեշահ բանից զրոյց՝ լալ ընդ լացուս, որպես ասե Պողոս, և լինել միսիթարիչ սպավորաց, որպես ասե Միրաք: Մի պակասցիս ի միսիթարութենե սպավորաց, այժմ զի ժամանակ լալու է, և լացակից լինելու վշտացելոցդ սրտիվ: Գարձյալ միսիթարելու ձեզ, վասն որո հարյալ ի սուզ մեծամի տրտմությամբ լինիմ ձեզ լացակից, քանզի միայն ի ներկայումս լսեցինք փոխումն ի կենցաղոյս ազնիվ սիրելիներին մեր և հորն ձեր պարոն Մելիք-Ազամին ու պարոն Մելիք-Հովսեփին: Արք դիտենալով, հիրավի ընկանք սպի մեզ և ի տրտմությունն, զամնզի զրկվեցինք մեր աշխարհի միսիթարիչներից և միսիթարիչներից բազմաց, որ կաք այդ կողմերում: Դրանք էին հայերն չեր պարոն Մելիք-Ազամ և պարոն Մելիք Հովսեփ... Ապա ինչպես լլացեմ անբախտությունս իմ, Բազում սիրելիներ լուսնենալով, սակավներից ես զրկվեցի: Նրանք ոչ միայն մեզ էին միսիթարիչ, այլև մերազնյաց բազմություններին: Վախճանվեցան արժանիները բազմաց գովությունների: Մեռան պատվեցյալներն ժռդովրդի, ծերական ալեռք զարգարված, օտուակարքն բազմաց, այլև բոլոր ազգին, հաեգան ուրախությունն հասարակաց սրաի: Արդ, ահա մեր միշից պակասեցան այլքն պիտանի և անձքն բարեշուր: Հավելեցան առ աստված: Դուք նորից եղաք վշտալի, վասն որի ազնելացան մեր կրկին ցավերը: Ոչ միայն նրանք մեզնից պակասեցան, այլև դուք մեծ տրտմության դիպեցաք: Բայց զի ոչ մարդու երկրավորն է այս զործը, այլ Աստծու երկնա-

վորի, որին փառք տանք գոհումակությամբ հանդերձ, հորմեած դրեսը զի նա դասակից սրբոցն հանգուցեալոցին արացեած է ձեզ ձեր մեծ սպից մխիթարի: Արդ ուրեմն հիշելով անուն լուսահոգվոցն ի փրկարար սուրբ պատարագոջն, ասեմք:— ՏԵ՛Ր, լուսավորեսց հոգիք նոցին և շնորհեաց թողություն ամենից սխալանացն, գասեաց ընդ սուրբս յուր և ընդ նուսին պատակեացն: Եվ հոգվովն սրբովն վշտացեալ սիրտ ձեր մխիթարեսցն, և հանդերձ ամենայն ընտանիոր ի խնամս և ի գթությունս յուր պահեացն: Փրկեսց ամենայն շարե և սուրբ զվարճացուացն և սուզն ու տրտմություն ձեզնից փարատեսցն: Արդ գրեմ հոգեսորգոց մերոց, զի մի ավելի բան շափն այսմ հետեւ տրտմիցիք, այլ բավական համարելով, որ մինչև ցայժմ կրեցիք, մխիթարվերիք: Եվ նույն ճշմարիտ սերն և հավատարմությունն, որոնք լուսահոգիքն ձեր ունեին առ սուրբ Աթոռս և առ մեզ, այսուհետեւ գուր պարտիք առնել, բայտ որում հարանց ձեր փոխարինողն դուք եք...

ՄԵԼԻՔ-ՄԵԺԼՈՒՄԸ, որ բարձր, կապույտ կարակուկ գդակը հանած և զլուխը կախ, ձեռքերը կրծքին հեզ խաշած լսում էր Ալավերդի բեկին, հանկարծ անփույթ նայեց կաթողիկոսին:

— Բայց մենք պետության հոգսով ենք եկել, տե՛ր կաթողիկոս: Իսկ ահա դեմ առանք լացուկոծի: Մեր երկուսի կողմից դու պատասխան գրիք էջմիածնի վեհին: Ինչ ուզում ես գրիք, նման դատարկ բաների մեզ մի խառնիք:

— Համբերություն ունեցիք, զավակ իմ գերազահ, — խիստ ասաց կաթողիկոսը:

Անսպասելի եկավ Դիկակի ՄԵԼԻՔ-Բախտամը: ՄԵԺԼՈՒՄԸ ողջագուրվեց նրան, հարցրեց կարեկից:

— Սա՞նր է վիճակդ:

— Եա՞ս...

Կաթողիկոսը խլրուաց տեղը: Սկսեց աղոթք ՀՀնջաւ, հերթով խաշակներելով իշխաններին: Նրա ողբածայնը զայրացնում էր ՄԵԼԻՔ-ՄԵԺԼՈՒՄին: Ինչո՞ւ ողբալու իր ու Դյուլիատանի ընդարձակ գավառները հզոր զրահի պես ջարդում են իրահիմ խանի ատամները: Իր ուժերի մի ճյուղը խաշենի կիսահոգտում է, մյուսը՝ Թարթառի բերանում, երրորդը... իրրահիմ խանը հիսուն անդամ եկավ իրենց վրա և, ջախջախ

փախավ: է՛, հա՛, նրան թիկունք է կանգնած Պարսկաստանը՝
ջենդ Թերիմ շահը: Հասկացանք: Իսկ մենք հո այստեղ դար-
ման չե՞նք ուսում:

Կաթողիկոսի աշբերում արցունքներ նկատեցի: Գերագահը
հեղ ասաց.

— Տեր կաթողիկոս, դու մեռելաթաղի սո՞ւզ ես անում,
ի՞նչ է:

Տեր-Հռովհաննեսը կերկեր նայեց նրան:

— Չեմ հասկանում քեզ, զավակ իմ...

— Եթե չես հասկանում, ապա լոիր: Ես շհասկացող առաջ-
նորդ չեմ ընդունում:

Մյուս մելիքները, նաև երեսուն, զուցե ավելի վահական-
ները, նույնիսկ Թուրի Արզումանը դաժան ու զժզո՞ւ նայեցին
Զրարերդի երիտասարդ տիրոջը: Կաթողիկոսի եղբայր Ալա-
վերդի բեկը հառաջելով, որ լսելի էր, իր տրամությունը ցու-
ցադրեց: Կաթողիկոսը շտապելով շվեկացրեց համբիշի սալի հատիկները:

— Ասելիքդ ի՞նչ է, որդյակ իմ Մելիք-Մեժլում:

— Ասելիքս այս է, տե՛ք: Դու անուղի ու անձրագիր ես
վարում քո հոտք: Ես տեսնում եմ, որ դու հատուկ նպատակ,
հստակ անելիք շունես:

Նրա այդ ասածը ես դժկամ ընկալվեց շատերի կողմից:
Միայն Մելիք Արովն ու Մելիք Բախտամը համամիտ զիխով
արին: Մեժլումը դաժան շարունակեց:

— Անզամ ճաշճի ճիճուն որոշակի ժրագիր ունի: Իսկ
մենք... իսկ դուք՝ վահականներդ անելիքի հստակություն
շտամեր, ընթանում եք բախտի բամու կամքով: Զեղենից շա-
տերը հենց միայն զնզեկություն են անում:

— Մի քիչ խոհեմ խօսիք, զավա՛կս,— նրան ասաց քըրտ-
նած, կարծես նաև ծանր շնչող կաթողիկոսը:

— Զգվել եմ խոհեմություն ասածիցդ, տեր կաթողիկոս:
Այնքան խոհեմություն արինք, որ հայի աշխարհը դրինք կոր-
ծանեան եզրին: Մեր այդ պաշտած խոհեմը մի ժակ գարի
շարժե...

Մելիք-Մեժլումը բնավ շզզաց իր ասածից: Հիշեց՝ հիմա
կինը օրոր է ասում իր փոքրիկ որդուն: Դիզակի Մելիք-Բախ-
տամը հաղաց.

— Ես Մելիք-Մեծլումի գաղափարին եմ: Մեր հույսը պիտի
մեզ վրա դնել, ոչ աստծու, որի գոյությունը չեմ էլ զգում:
Հորս՝ Մելիք-Եսայու պատարա՝ զն ենք անում: Խարվեց...
Քրար ետենից խարվում ենք: Խարվում եք, ողորմելի իշխան-
ներ:

Կաթողիկոսն անշափ նեղված էր զգում ինքն իրեն: Վեր-
ջապես նա երերուն հարցրեց:

— Ի՞նչ անենք, ի՞նչ անենք, իշխաններ: Ա՛խ, տե՛ր աստ-
ված...

— Պատանքի սավան՝ կարենք ինքներս մեզ համար, —
բոլորովին հանգարտ, որի մեջ արհամարհանք կար, ասաց
Մելիք-Մեծլումը: — Բահ վերցնենք, ինքներս մեզ համար
գերեզման փորենք: Էլ ի՞նչ...

Դրսից ձիերի ռատնաձայներ լսվեցին: Վանական հայրերը
դրսից դեպի գուռը: Մելիք-Մեծլումը քմծիծաղեց՝ թշվառ
զախկուտներ, մինչև ե՞րբ այդպես սողալով, գլորվելով ապ-
րեք: Մինչև ե՞րբ:

Վանքի ընդարձակ բակում երեացին երեխ քսան-քսան-
հինգ անձ ու ձի: Ես ճանաչեցի նրանց առաջնորդին: Դա Աստ-
րախանի հայոց հեծզեղի հրամանատար ոռւսական բանակի
զնդապետ Թաղա Ղուզաննեցն էր: Մյուսը, որին ես զիտեի,
ոռւսական բանակի սպա էր՝ Ստեփան Դավթյան: Իշխանները
ոգևորվեցին, մոռացան քիչ առաջվա լեզվակոփվը, միմյանց
նկատմամբ թոցրած ատելությունը, ողջագուրվեցին նորեկ-
ների հետ: Գնդապետին, Դավթյանին ու նրանց մարդկանց
հանգիստ տվին: Իշխանները ևս մտան իրենց կացարանները՝
փոքր ինչ նեցելու:

* * *

Մինչ այս, մինչ այն, լույսը բացվեց: Վանքի գաղտնարան-
ներում պահակող վարժարանի սաները սրթօրթացին անքնու-
թյունից: Նրանք նկատում էին նույնիսկ բազե հազարի մո-
տենալը վանքի բարձր գմբեթներին, ուր ապաստանում էին
ներմակ ու կապույտ աղավնիներ:

Հավաքվեցինք կաթողիկոսի մոտ: Նորից տաճարի մգաւ-
հուտ, պլշած աշքերով սրբեր, խելի ու մոմի բույրեր: Բոլորս

անհամբեր սպասում էինք Թաղա Ղուզանենցի խոսքին: Ի՞նչ
բեռով է եկել ոռուաց գնդապետը: Նա ասաց:

— Ընկերս Ստեփան Դավթյանն է: Նա կայսրունու կող-
մից նշանակված է պրեմիեր մայոր: Ռուսաց արքունիքը
սրտանց ողջույններ է ուղարկել ձեզ, իշխաններ, Հոգևոր
հայրեր, քեզ՝ ժողովուրդ հայոց: Անձս եղավ Եկատերինա
կայսրունու աստվածահամ ընդունելությանը: Նրա խնամքը,
իմացեք, մայրական ու մեծ է մեր հանդեպ: — Ես, — ասաց
Եկատերինա վեհուհին, — իմ մեծ նախնի Պետրոս Մեծի եր-
գումը՝ հայերիդ պաշտպանելու գործում, ընդունում եմ իրեն
սիմվական անձիս պատիվը:

Եկատերինա կայսրունուն Հյուսիսի Շամբիրամ են անվա-
նում, լսել եմ: Ասում են կայսրուհին հաճույքով է լսում իր
անվան այդ զարդարանքը: Ասում են՝ զե՞ս է, զեղեցիկ,
հպարտ, նաև... վավաշուր:

— Իշխան Գրիգորի Պոտյումկինին տեսա ծովափին, —
շարունակեց Թաղա Ղուզանենցը: — Կայսրունու հանձնարա-
րությամբ գնացի մոտը...

Ասում են Պոտյումկինը կայսրունու նվիրյալ սիրականն
է: Սա էլ հիշեցի՝ ես՝ Արքահամ Երևանցիս: Միժադեցի ինքս
ինձ վրա՝ քեզ ի՞նչ: Մեզ ի՞նչ... Իշխան Պոտյումկինը Ռուսիո
հարավի փոխարքան է, ամենից զորեղ անձը ողջ Ռուսաս-
տանում: Ասում են հարեմ ունի իր պալատում՝ երկու հար-
յուր զեղեցիկ կին, նաև ծաղրածուներ, երաժիշտներ: Այս
անգամ ես ավելի շարացա ինքս ինձ վրա՝ քո գո՛րծը չէ,
մեր գո՛րծը չէ:

— Իշխան Պոտյումկինին մտերիմ է մեծահարուստ Հով-
հաննես Լազարյանը: Սա ես ընդունեց ինձ զրկարաց: Նոր
Ժուղայի սերունդ է: Կայսրուհին և իշխան Պոտյումկինը Լա-
զարյանին ու ինձ ասացին: — Մենք կվերականգնենք հայոց
թագավորությունը: Հայաստանը, վերջապես, կազատենք
պարօիկների ու թուրքի վտանգից:

— Պարզ է, — ինձ ասաց Մելիք-Մեժլումը: — Կայսրուհին
ձգտում է ամուս պատվար ունենալ Օսմանլուի դեմ: Թող լի-
նի՛, լինի՛: Դա միայն հայիս օգտին է: Լինի՛:

Դե, պարզ է, Եկատերինան Պոտյումկինին շատ է պար-
տական, իր փրկիչն է: 1762-ին ինքը՝ իշխան Գրիգորի Պոտ-

յոմկինը պալատական հեղաշրջում կատարեց ու Եկատերինային գահին դրեց, որ թուլ, անարի Պյոտր Երկրորդի կինն էր:

— Հիշեցի, — ասաց մելիքը, — թե հայրս ինչպես էր ուրախացել այդ հեղաշրջումով:

Այնուհետև կայսրուհին նվիրվեց իրեն գահ բարձրացնելին՝ հոգով ու անկողինով: Հիմա Պոտյումկինը Աստրախանի, Նովոռոսասիլյան և Ազովի գեներալ-նահանգապետն է՝ փոխարքա: Նա՛ ծունդի բերեց Ղրիմի թուրք փաշային ու Գիրեյ խանին, Ղրիմը միացրեց Ռուսաստանին: Այս, կարծես բացվում է հայոց խավարամած երկինքը:

Հովհաննես կաթողիկոսը, որ նույնպես ոգնորվել էր, դառը նայեց հավաքված իշխաններին:

— Է՞՞, օ՞՞, շկան երեկվա հզորները՝ գահազուխ Աստվածապով իշխանը, պարսից գահը դղրդացնող Մելիք-Ավանը, շկան Յային, Աղամը, Հովսեփը:

Ասաց, երկար լուեց, սակայն և ինչ-որ շափով սրտապնդվեց

— Բայց, ոչ, կան: Կան նրանց նման հզորներ: Փառք առածուն: — Աշխատեց երկյուղը վանել: Հավաքի վերջում ասաց: — Պետք է թուղթ ուղարկենք Ռուսիո ամենազոր ու քրիստոնապատկ թագուհի կայսրուհուն: Մենք՝ Արևելից Կողմանը հայոց աշխարհի իշխաններս և ժողովուրդը ողջ հպատակում ենք քոյլիդ կայսերական մեծությանը: — Ենչեց խոր: — Համաձա՞յն եք:

— Համաձայն ու միակամ:

— Ընդունո՞ւմ եք Ռուսիո հպատակությունը:

— Լիովին:

Մելիք-Մեծուրմը սակայն ձեռքը բարձրացրեց:

— Ընդունում ենք, եթե գա միայն խոստում ու թուղթ լինի, այլ՝ ուազմական օգնություն, եթե ուսւները թեկուդ երեք գունդ զորք տան մեզ, եթե նրանք հարգեն մեր պետության լիակատար անկախությունը:

Թոլորը հարցական նայեցին թաղա Ղուզաննեցին ու պրեմիեր մայոր Ստեփան Դավթյանին: Մելիք-Մեծուրմը սակայն խօսքը չէր վերջացրել:

— Հիսուն տարի է ուսւի թաղավորները միայն խոստում-

Ներ են անում մեզ: Եթե հիմա էլ նույնն է, Թաղա Ղուզաննեց, եղբայր իմ, ապա թողիր ու հեռացիր մեր երկրից:

Գնդապետը թեթև գլուխ ավեց նրան, կաշվե ուստապայուսակից հանեց կարմիր թուփատիպի մեջ գրած կայսրուհու հրովարտակը:

— Դեռևս այս տարվա ապրիլի վեցին նորին կայսերական մեծություն Եկատերինան հրամանագիր—ուկազ է հզել գեներալ-պորուչիկ Պավել Պոտյումինին, որ բանակած է Ղզլարում՝ հրամայելով զորքով գալ Հայաստան՝ ձեզ օգնության:

— Բայց հիմա արդեն հունիսն է և ոչ լույսը կա, ոչ ստվերը, — նորից ասաց Մելիք-Մեծլումը:

— Ուշանալն իր պատճառներն ունի, — ասաց գնդապետը:

— Նաև կորստարեր հետևանքները:

Գնդապետը մի այլ թուղթ հանեց:

— Սա առաջինի կրկնությունն է, արձակված մայիսի տասին: Սրանով ոգնորված ես եկել հմ ձեզ մոտ: — Նա կարդաց ու թարգմանեց գեներալ Պոտյումինին տրված հրամանը: — Պատրաստվիր զորքով մեկնել Հայաստան, օգիր հայերին, որ դուրս վռնդեն Շուշին գավթած Իրրահիմ խանին, ամրապնդեն Հայոց անկախ ու ազատ պետությունը՝ Հայաստանի արևելքի այդ մասներում: — Այսպես, իշխաններ, ոռւսական արշավանքը նշանակված է եկող տարվա ամռանը:

Կաթողիկոսը թեթևացած հոգոց հանեց: Մելիքները համակիր նայեցին գնդապետ Թաղա Ղուզաննեցին: Նա պետք է իրենց գոհության զիրը, որով համաձայն են ընդունելու ոռւսաց Հովհանավորությունը, հասցեի կայսրուհուն, Գնդապետն ասաց, թե այդ զործին մեծապես նպաստում է մեծահարուստ Հովհաննես Լազարյանցը: Ես զիտեի, որ սրա Հայոք մեծամեծ ծառայություններ է մատուցել Պետրոս մեծ թագավորին, ապա իր սպայական խմբով 1736 թվականին տեղափոխվել Ղզլար ու ամրացել այնտեղ: Նրա հետ զործակցում է նաև Ռուսաստանի Հայոց առաջնորդ Հովհանի արքակիոպոս Արդության-Երկայնաբազուկը:

Հայոց Գերագույն գահաժողովը Հովհանի Արդությանին լիազորեց իրքն Հայաստանի գեսականը կայսրուհու մոտ:

«0», մեծ ու օգոստոսափառ կայսրուհի, դու քո աստվածային լուղությունը և կայսերամեծ վատահությունը տրամադրիր նրանք:

Առանձին թուղթ գրեցին իշխան Գրիգորի Պոտյումկինին:—
Մեր հայերիս ու Հայաստանի բախտը քեզ ենք վստահում,
մեծափառ իշխան: Աղաջում ենք, շտապիր զորքովդ գալ մեր
երկիրը՝ Հայաստան: Մենք ամեն ինչով պատրաստ ենք քեզ
զիմավորելու:

* * *

Մելիք-Մեծլում իշխանը Գանձասարի վանքի մեծ տաճարի կնողուղին անկել տվեց Հայոց իշխանապետության դրոշակը: Պոռաց վանական հայրերի վրա:

— Աշքներդ շորս արեք: Ահա մեր դրոշակը: Անվտանգ պահեցիք մեր պատիվը: Չերկեչեք, ինչ ցանց էլ ձեր դեմ հյուսի երբահմ Խալիլ ավագակը: Նրանից ահ շունի ժողովուրդը, եկեղեցին էլ թող շունենա: Կուզեմ երր ոռւսը գա, մեր պետական անկախության դրոշակը տեսնի մեր աշխարհի երկնքում:

Սկսեց գինի խմել՝ դրոշակի փողփողումով թներ առած: Կայսրուհին հույս է ուղարկել՝ իր մատանի կնիքը վրան:— «Իմ այս գիրը ավելացնում է իմ հատուկ հարգանքը գեղի հռչակավոր ժողովուրդը Հայոց: Զեր նկատմամբ ես, Հաղթություններով զարգարված օգոստափառ կայսրուհիս, մայրական խնամք ունեմ: Ես իմ մարդասեր ձեռքը պարզել և պաշտպան եմ կանգնում ճնշված Հայաստանին, հայերիդ ազատելու ձեզ մշտապես կրծող անօրենների ծնուտներից: Դուք հաստատուն հույս դրեք Եկատերինայիս անհաղթելի գենքի վրա:»

Մելիք-Մեծլումը Հովհաննես կաթողիկոսին ասաց.

— Կարծես թե կատարվում է մեր իզձը: Հույս, որ ոռւսաց զորքը կժամանի Հայաստան:

Կաթողիկոսը լայն խաշակնեց նրան:

— Իրավն ես խորհում, իշխան: Ով ոք իցե, որ մայրենի զթոց և խնամոց հանդիպեցի և նինդիցե և կամ ով իցե, որ իր փրկութենե հրաժարիցի:

Մի շաբաթ հետո հայոց գերազույն գահաժողովի հպատակության գիրը վերցրած Գանձասարից գաղտնի դուրս եկավ գնդապետ Թաղա Ղուզանենցը՝ Թուրի Արզումանի ուղեկցությամբ։ Նրանցից հետո նույն ունեվ գուրս եկավ կաթողիկոսի եղբայր Ալավերդի բեկը։ Առաջինը գնաց Ռուսաստան՝ հույս բերելու, երկրորդը...

* * *

Ամարաս ավանը թաղված էր գիշերային մառախլապատիավարի մեջ, մատ ցցես՝ աշք կհանես։ Նույնիսկ շուն չէր հաշում։ Միայն վանքախցերից մեկում էր կերոն վառվում՝ առատ լույսով։ Երկու բարձր պատուհանները ծածկված էին թանձր վարագույրներով։ Գահավորակին փլված իբրահիմ Խալիլ խանը կանաչ ու գեղին ճառագումով պտտվող աշքերը հառել էր Ալավերդի բեկի նեղ, կարծես շուն լիզած երեսին։

— Ուրեմն այդպե՞ս...

Ալավերդի բեկը զլուխը խփեց դետին։ Ես քո ծառան եմ, քո շունը։ — Գլուխը բարձրացրեց։ — Այդպե՞ս։ Հայոց Գերագույն գահաժողովը ընդունեց Ռուսաստանի հպատակ գառնալու վճիռ։ Շուտով հայերը սուսի զորք կրերեն քո դեմ։

Նա հայոց ժողովի երգմնագրի իր ձեռքով օրինակած պատճենը դրեց խանի ծնկներին։

— Հիմա կտա՞ս ինձ վերին Խաչենի մելիքությունը։ — Սամժմեց լեզվի տակ, մտքի այրոցքով։ — Տո՞ւր։

Մի եղբօր շինածը մյուս եղբայրը բանդում էր։ Նա խանին մի այլ, ոլործուն թուղթ ևս մեկնեց։

— Դա ի՞նչ է, — ցասումեց խանը։

— Եշմիածնի կաթողիկոսը ևս աղերսագիր է հզել Ռուսաց կայսրություն։

— Կարդա։

Ալավերդի բեկը կոկորդը քերեց, սկսեց կարդալով թարգմանել էջմիածնի կոնդակը՝ հզած Պետերբուրգ։

— Զի հայտնի է մեծագույն աստվածամիրությանդ ձեռում, որ ողորմելի ու խղճալի ազգս մեր հայոց, նույնպես և ազգն վրաց շատ տարիներից սկսած մինչև ցայծմ կան անկյալք՝ ի ներքո ծառայության այլազգեաց... Մենք մեր կյանքն

անց ենք կացնում բազում տառապակրությամբ և պիս-պիս
նեղուակրությամբ։ Եվ մանավանդ զերչին տարիներիս, երբ
կարմրագլուխները բարձրացան, մեր վիշտն ու նեղություն-
ները բազմացան, այսինքն՝ հավատի ուրացություն, զերեվա-
րություններ, քաղաքների, գավառների ու գյուղերի ամա-
յություններ... որ պատահեցան և պատահում են մեզ՝ հայոց
և վրաց։ Մրանք մեզ են հասնում Շուշիին տեր դարձած Փա-
նահի որդի իրրահիմ խանի ձեռքով, որ մարդագող է, շաղ-
խակեր և վայրենաբարու... թե որքան արդյոք գերիներ տա-
րան և որքան մարդկանց սպանեցին, որքան հողակավոր
վանքեր և գպրոցներ անմարդաբնակ արին և որքան եկեղե-
ցիներ քակեցին ու միաբաններին և անոթները զերի վարե-
ցին՝ թե վրաց և թե հայոց, ոչ կարեմ ընդ զրով արկանել...
Թեև մերազնյա ժողովուրդը ոչ մի, այլ բազում անգամ հաղ-
թեցին անօրեններին, սակայն ոչ կարեցան նրանց ոտքը
կտրել մեր երկրից։ Վասն այսօրիկ անպատմելի աղետից և
անճառելի դառնություններին, անճար և անօդնական մնաց-
յալ, հավատով գալիս ենք առ բազմազոր բարեալաշտությունդ
ձեր, հուսալով և ապավինելով ողորմածություն զերափառու-
թյանդ ձեր, վասն օգնականությանս ի ձենչ խնդրելով, հեար
գտներ փրկելու մեզ։ Մեծավ հույսով ձեզ ենք ակնդեռ սպա-
սում։ Աղաշում ենք, ինչպես հոգում եք ձեր օրհնյալ ու բար-
գավաճյալ ազգին, խնդրեմք նույնպես հոգաք ազգիս մեր
ողորմելի հայոց և ազգիս վրաց...»

Ալավերդի բեկը վերջացրեց ընթերցելը, սակայն շարու-
նակում էր նայել թղթին, կարծես նրա տողատակերում սա-
տանայի կոտոշներ էր տեսնում։ Վերջապես բարձրացրեց
զլուալը։

— Լսեցի՞ր, խա՞ն իմ։

Ամարասի վանքը ինքն իրենով հոտում էր ձմեռային
տաղտուկի մեջ։ 1784 թվականի ծննդյան օրերը անգույն,
անհրապույր էին։ Զգալի ցուրտ էր սառնամանիք շտեմնող
մեր հայոց այս դաշտապատափ վրա, որ վարանդա գավառի
ցածրերն էին։ Վանքի ավագ դռան ճակատը զարդարող բարե-
հակա խաչի եղրերին նույնիսկ սառցե բարակ կեղե էր բանել։

Ես էի խանին գաղտնի բերել վանք, որ հանդիպի Ալա-
վերդի բեկին՝ ևս կաթողիկոս Խորայելու Անվերջ ներսուգուրս

և անում, մատեներիս փշելով: Թրբրվում եմ էջմիածնի ու Դարաբաղի միաբան մելիքների դեմ:— Տանե Աղուանից կաթողիկոսությունն ինձ շտվիք, Հա՞: Մերժեցիք, Հա՞: Հասան-Զալալյան Հովհաննեսին տվիք գահը: Այդպէս: Դե հիմա կմարսենք...

Իբրահիմ խանին ու Մելիք-Շահնազարին երեկ եմ ծածուկ վանք հրավիրել:— Եկեք, նոր վտանգ է մոտենում ձեզ:— Խոկ մոտեցող վտանգի մասին ինձ հայտնեց Գանձառարից իրր թե սուրբ Գրիգորիսի գերեզմանին ուխտի եկած Ալավերդի բեկը:— Սթափիք, զգոնացիր:— Հիմա երեքն էլ ինձ մոտ են՝ մեկուսի կացարանում:

Արեք հասավ մոտիկ լուսավորիչ և Խազեղ լեռնագոտիների կնգուղներին, որ ցից էին: Նրանց վրայի ձյան հալավը շողաց: Սխեցին լեռնաճյուղի հայոց բազմաթիվ զյուղերը: Դեպի Արաքս իջնող հովտի երկնքում ցածր ճախրում էին մի զույգ սպիտակ արծիվ: Մեր այս հովիտը անիծված-գեղեցիկ էր՝ մեջը Ամարաս գետակը, որ ահա տապ է արել ցրտից ու ծույլ գնում է դեպի Մուխանք դաշտի խորերը: Չգիտեմ ինչու, ինձ հանկարծ անկենդան երեաց իմ վանքը: Ցուրտը նեղեց: Ես ձեռքո թափ տվի ու արագ մտա իմ հյուրերի կացարանը:— Մրափե՞լ եք, անասուններ: Վե՞ր կացեք:— Սակայն խանն ու մելիքը հագնված կանգնած էին: Նրանց հետ էր Ալավերդի բեկը՝ տարիքն առած եղ, թփակալած հոնքերով, սուր, կատաղի կղակով:

— Ուտելու ժամն է, տիարը, բերե՞մ:

Դուրս եկա իմ պատանի խոհարարին պատվերներ տալու: Զգտաւ: Նրա արտազգեստն ընկած էր քարե սեղանին՝ վրան ձեթի ու ճարպի հետքարծեր, ես շոգից լարված օձ կտրեցի: Դուրս թռա խոհանոցից, վազեցի դեպի պարսպի գաղտնի անցքը:— Փախել է շան որդին, — ծղրտում էի ինքս ինձ:— Հուր է տանում Ջրարերդ, որ, որ... Սակայն հենց գաղտնի անցքի վրա կուացած տեսա խոհարարին, փորձում էր անցքի հորարերնին դրած ժանր սալաքարը շրջել: Ես շուրջառիս տակից հանեցի երկայն դաշույնս, հարվածեցի խոհարարի մեջքին, ուղիղ ձախ թիակի տակ: Պատանին ընկապ:

— Զհասցրի... Անիծվեա դու, դավաճան իսրայել:

Հանդարտ ետ եկաւ: Ես իմ ձեռքով կերակուր մատուցեցի հյուրերիս: Խոսեցի բոլորովին անվրդով:

— Մելիք Մեծլումը հայոց իշխանապետության դրոշակը նորից է տարածել քո տիրույթների վրա, խան իմ, ի տես աշխարհի:

Ես թիթի օղի խմեցի, մազմզոտ ձեռքս տնկեցի Ալավերդի բեկի մռութին:

— Գո՞ւ, գո՞ւ... Միշտ ուշանում ես:

Հիշեցի խոհարարի թավալված դիակը: Ուզում էր մեր այս գաղտնի հավաքի մասին հայտնել միաբան մելիքներին: Ստացա՞վ... Գլուխս տնկեցի:

— Հասկանո՞ւմ եք, ոռւսը գալի՞ս է: Ռո՞ւսը... Սթափվեց՞ք: Մի ձեռքով կառչեցեք իրանի գահին, մյուսով բռնեցեք ոռւսաց հզոր կայսրուհու քղանցքը: Կայսրուհու ոտքերը լի-զեցեք...

* * *

Աստրախանում տակավին ցուրտ էր, թեև արդեն մայիսի կեսերն էին: Ինձ հետ առաջինը նավից իշավ Թուրի Արգումանը: Նրա երեսի թրի հարվածի սպին կապտել էր: Հագավ կոշտ բրդե թաթպանները: Զայնն էլ էր կոշտ:

— Ցուրտ է, զգո՞ւմ ես,— առանց ինձ նայելու վրթաց նա:— Հանկարծ քիթս շիողնե՞մ այստեղ:

— Դու ասա զլուխդ շիողնես,— ասացի ես:

Թուրի Արգումանը կատաղի նայեց ինձ ու մեղմվեց.

— Ազո՞ւմ ես, խոչա Արբահամ, որ կռավում ես: Այդ ո՞ւր:

— Զուղայից եմ գալիս,— պատասխանեցի ես:— Ծամ-փաս գեպի Աստրախան է:

Թուրի Արգումանն ափ իշավ իր տասը-տասներկու զինվորների հետ: Իշավ նաև զնդապետ Թազա Ղուզաննեցը: Ես նրան բավականին լավ գիտեի, ինքն էլ՝ ինձ: Թուրի Արգումանը ինձ լիովին վստահեց, ասաց պատվիրակ է գնում ոռւսաց զորքի մոտ: Առաջարկեց ինձ էլ միանալ իրեն: Համաձայնեցի: Մի քանի օր հետո մեր պատվիրակությունը Աստրախանից մեկնեց Գիորդիսկ՝ գեներալ Պոտյումկինի

զորակայանը: Աստրախանի Հայերը ընտիր ձիեր նվիրեցին մեզ: Թուրի Արգումանը Թաղա Ղուզանենցին Հարցրեց՝ զեներալ Պոտյումկինը կնյագ-իշխան Պոտյումկինի եղբայրն է:

— Զէ,— պատասխանեց գնդապետը: — Միևնույն ազգանունն ունեն: Պավել Սերգեյիչը, որ ազնվական է, մի տարի առաջ է կայսրություց նշանակվել Հյուսիսային Կովկասի կառավարիչ և զորաց հրամանատար: Խիստ հաճելի մարդ է:

— Մեզ համար ի՞նչ հարիսա է եփում:

— Կտեսենքս կիմանաս:

Հինգ օր ձիավարեցինք, մինչև հասանք Կովկասի լեռան ոտնատակերը: Այստեղ արդեն զրեթե ցուրտ չէր: Կամա մեծ գետի ընթացքն ի վեր գնացինք ևս երկու օր: Հասանք Գեորգինակ նոր շինած բերդը, որի մեջ արդեն ժողովուրդ էր հավաքվում: Բերդը Պոդկամակ վտակի մի կեռմանում էր, բլրի վրա, ջրապատճեցի ոլորքով պնդած: Մայրամուտի կարմրով սղողվել էր գետն ու տափաստանը: — Է՛, հա՛ նորից ուրիշի դոներ ենք ծեծում, — դառը մտածեցի ես: — Հետո՞ւ: Շահ կլինի:

Զինված պահակազոր երևաց: Ռուսները սիրալիր ընդունեցին մեզ՝ Հայերիս, տեղափորեցին բերդի մի կացարանում, որ զորանոցներին կից էր: Առավոտյան մեզ հրավիրեցին Պոտյումկինի շտաբս-կարինետը: Գեներալը զվարթ ասաց.

— Նորին գերազանցություն իշխան Գեորգի Պոտյումկինը, թող միշտ նրա անունը սիրելի լինի, ինձ հանձնարարել է ընդունել ձեզ՝ Հայաստանի պատվիրակներիդ, իրեւ եղբայրական այց:

— Գոհ ենք, — ասաց Թուրի Արգումանը: — Հայոց իշխանները մեզ պատվիրել են բանակցել իրենց անունից ձեզ հետ:

— Ուրախ եմ, — ասաց գեներալը: — Իմ տեր մեծափառ իշխանը իմ միջոցով ձեզ հարցնում է՝ Մեծ Հայաստանի երկիրը, ընկենելով օրենքով անմաքուր թուրքերի և պարսիկների ձեռքը, այնքան երկարատև գերությունից հետո էլ պահում է այնքան ուժ, որ կարեռ է ազատ հռու համար: Գերությունը և զանազան ճնշումները արդյոք շե՞ն ոչնչացրել սրբաերի մեջ ազնիվ զգացմունքները:

— Ո՞չ: Լիազորված ենք ողջ ժողովրդի անունից ասել,

որ թեև մենք շրջապատված ենք թշնամիներով և թեև մեր Շուշին գերզած է, բայց երբեք ստրուկ չէ: Ազատության կովի կրակը մեր մեջ հղոր է և ուշնչ լի մարի նրան ո՞չ այսօր, ո՞չ էլ եկող ժամանակներում:

— Բարի՞, — պիխով արեց զեներալը: — Մեծափառ իշխանը ապա հարցնում է՝ բանականության ուժը, օրենքը և հավատի ամբությունը ձեր հայերիդ մեջ արդյոք այնքա՞ն ներգործություն ունեն, որ սրտերի ներքին տրամադրությունը հակված լինի խորտակելու նրանց ճեղող լուծը:

Մեր երկիրը՝ Կողմանք Արևելից աշխարհը իր վզին լուծ չունի, ձերդ բարձր բարեծննություն, — պատասխանեց Թուրի Արզումանը: — Մենք վտանգի մեջ ենք, բայց ոչ լժի տակ: Լժի տակ է Արևմտյան Հայաստանը:

— Հասկանալի է: Ասեմ, որ ընդհանրապես դիտված է, որ բոլոր այն մարդիկ, որոնք առեւրով են զբաղված, խլացնում են իրենց մեջ ամեն մի զգացմունք, պահպանելով միայն ազանություն՝ դեպի իրենց շահն ու վաստակը:

— Դուք, պարոն զեներալ, և նման հարց տվողը, ներեցեք, լավ շեք ճանաշում հայ ազգին: Հայերը միայն վաճառականներ շեն, ինչպես կարծում են ոմանք: Հայ ժողովուրդը գյուղացի, արշեստավոր, շինող ու ստեղծող ազգ է: Վաճառական հայերը ևս ուժ են:

— Իսկ նրանք՝ այդ առեւրական հայերը կցանկանա՞ն իրենց ներկան փոխել ավելի լավ ապագայի հետ:

Թուրի Արզումանը ձեռքը մեկնեց ինձ:

— Թող այս վաճառական Արքահամ Երևանցին ասի: Ես կոկորդմ մաքրեցի և խոսեցի համոզող:

— Հայ վաճառականները Հայաստանի համար իրենց կյանքն անգամ շեն խնայի: Մենք պատրաստ ենք մեծամեծ գումարներ հատկացնել հայրենիքի փրկության գործին:

— Իսկ քրիստոնեական հավատը արդյոք ուժնոր կերպո՞վ է ազգում հայ ժողովրդի վրա և բարեպաշտությունը կարո՞ղ է ժողովրդին դրդելու առիթ դառնա:

Ես նրան ասացի, թե հոգևորականությունը նաև ուղմական, ու ինչ խոսք, պետական ուժ է ժողովրդի համար: Հավատը նրան հենարան է:

— էջմիածնի կաթողիկոսի աստիճանեւ ի՞նչ հարգ ունի
Հայերիդ մեջ:

— Մեր թագավորությունը սպառվելուց հետո, պետական
իշխանությունը, թեև ոչ լիովին հզորությամբ, բայց բավա-
կանին ուժով անցավ կաթողիկոսին:

— Ժողովուրդը հնագա՞նդ է մելիքներին:

— Լիովին, — այս անգամ պատասխանեց Թուրի Արքու-
մանը: — Ժողովուրդն ու մելիքները պատշաճ հարգանք են
մատուցում կաթողիկոսին:

— Բարի՛: Զեզ՝ հայերիդ պատկանող երկիրն ո՞ւմ տի-
րապետության տակ է այժմ գտնվում: Սա ևս հետաքրքրում
է իշխան Պոտյումկինին ու կայսրունուն:

— Արևմտյան Հայաստանը օսմանյան սուլթանի տիրա-
պետության տակ է, Արևելյանը՝ գրեթե ազատ: Միայն պար-
սիկ խաններ են նստած Երևանում, ու Նախիջևանում: Սակայն
դրանք ձևական բնույթ ունեն ու երերուն են: Ղարաբաղը,
Արցախի ու Սյունիքի մելիքությունները բոլորովին անկախ
ինքնիշխան են՝ պետական մի կուռ կազմակերպության մեջ:
Եռուցում նստած Իրրահիմ խանը պարզապես զող հոր զող
զավակն է, որ ապօռինի իրեն խան է հոշակել գավաճան
Մելիք-Շահնազարի օգնությամբ: Նրան ոչ ոք չի ընդունում
իրուն իշխանավոր: Նա Ռուսաստանի կատաղի թշնամին է:

— Թանի՛ հայ իշխանատներ կան Արցախի Ղարաբաղում:

— Հինգը բուն Ղարաբաղում, երկու հզոր մելիքությունները
Սյունիքում, մեկը Գեղարքունիքում: Սրանք կատարյալ կազ-
մակերպված իշխանապետություններ են, բացի Վարանդայի
Մելիք Շահնազարից, որ անցել է թշնամի խանի կողմբ:

— Որքա՞ն ժողովուրդ կարելի է ենթադրել Ղարաբաղում:

— Հայերը Ղարաբաղում և Սյունիքում միլիոնուկիս են:
Վրաստանի հայերը՝ մեկ միլիոն: Կես միլիոնի չորսի Պարս-
կաստանում, Ծամախու և Բաքվի խանության մեջ:

Դենքրալը քարտեղ փոեց սեղանին, խնդրեց ցույց տալ,
թէ Դերբենդից սկսուծ որտեղ ոռուսական կայազոր կա, ինչ-
պես կարելի է զնալ Եռուշի ու Գանձակ: Թաղա Ղուզանենցը
մանրամասն սկսեց ցույց տալ այդ ուղին, թվելով թե մի
կայանքից մյուսը քանի՛ ժամկա ճանապարհ է: Նաև ցույց
տվեց, թե ինչպես կարելի է զնալ Նախիջևան ու Երևան:

— Բարի՞, — ասաց գեներալը: — Կայսրուհին հարցնում
է՝ մենք՝ ոռւսներս կարո՞ղ ենք պաշար ստանալ մեր զոր-
քերի համար:

— Մենք պատրաստ ենք հիսուն հազար զինվոր կերակ-
րելու, — պատասխանեց Թուրի Արզումանը: Նա մանրամասն
տեղեկացրեց, թե որ գավառը ինչքան մասցու և հաց կարող
է տրամադրել կայսերական զորքերին և քանի տարի: — Այդ
առումով մի՛ անհանգստանաք: Ի՞սարկե, վայ այն զորավա-
րո՞ն, որ իր զորքին կուշտ չի պահի: Ամեն ինչ կապահովենք:

Մեր դեսպանությունը մի ամբողջ ամիս մնաց Գեորգիևս-
կում: Պոտյումկինը պատրաստվում էր մեզ ճանապարհելու
Աստրախան, այնտեղից՝ Մոսկվա: Նա մեր պատվին զորա-
վարժանը կատարեց բաց դաշտում, հենց այն զորքը, որ շու-
տով ինքը պիտի տաներ Հայաստան՝ Թուրի Արզումանի
ուղեկցությամբ: Գեներալը վերադարձավ իր կայանքը բավա-
կանին դու: Վրանի մոտ նրան ներկայացրին երկու պարսիկի:

— Ովքե՞ր են, ի՞նչ են:

Զեկուցեցին, թե Ղարաբաղի տեր իբրահիմ խանի գեա-
պաններն են, ձերդ...

— Ի՞նչ, ի՞նչ, — գեներալը չար նայեց խանի մարդկանց: —
Ղարաբաղի տերը հայ ազգն է, հայոց Գերագույն գահաժո-
ղովն է, ի՞նչ խան, ի՞նչ բան:

— Մեր խանը ընդունում է ոռւսներիդ զերիշխանությունը
Ղարաբաղի վրա:

Գեներալը բարձր ծիծաղեց:

— Ռուբիշի երկիրն եք ուրիշին տալի՞ս: Էյ, էյ: Իբրա-
հիմն ո՞վ է, որ դեռ Ղարաբաղի անունից խոսում է: Ղարա-
բաղը Հայաստան է, հայի երկիր: Միայն հայն իրավունք
ունի նրա վրա: Յը՞ց, ցը՞ց...

Եփոթված, վիրավորված պատվիրակները խնդրելու պես
ավելացրին.

— Մեր բարեղութ իբրահիմ խալիլ խանը, վերին ներ-
շնչանքով և իրանի զոր տիրակալ Զենդ Թերիմ շահի համա-
ձայնությամք...

Գեներալն այս անգամ ծիծաղեց զրնդուն:

— Օ՞խ, օ՞խ: Ինչ շահ, ինչ բան: Դուք այդ ինչ լափ եք
խժոռում, ա՛յ մարդիկ, և դեռուա՞ն եք... Իրանի շահ Զենդ

Քերիմը ոչ ևս է, ոչ ևս է... Մեռած է: Մեռել է: Պարսկաստանում հիմա թագավորում է Ալի Մուրադ շահը: Յըց, յըց... Խանի մարդիկ գլխիկոր վերադարձան տուն:

Այսպես սպառվեց գարունը:

Դեներալ Պոտյումկինի երաշխավոր գրով մենք պատվիրակներս վերադարձանք Աստրախանն: Այսուղի մեզ էր սպառում մեր Գերագույն գահաժողովի կողմից կայսրունու մոտ դեսպան նշանակված Հովսեփի արքեպիսկոպոս Արզությանը: Առանց օր կորցնելու, մեր գեսպանությունը մեկնեց իշխան Գրիգորի Պոտյումկինի մոտ: Թաղա Ղուզաննեցը մնաց Աստրախանում:

Ֆելդմարշալը հայոց գեսպաններիս ընդունեց ճոխ ու շքեղ: Որոշ ժամանակ մեզ հանգիստ տվեց, ապա մի առավոտ հրավիրեց իր զորակայանը: Մենք սիրալիր, բայց և արժանապատիվ ողջունեցինք նրան: Հովսեփի Արզությանը նրա համար թարգմանեց իրեն ու կայսրունուն հղած զբությունները: Կարդաց թավշե ձայնով: Ֆելդմարշալը մեղմ գլխով էր անում: Նույնիսկ հուզվեց:

— Բարի՛, բարի՛: Աւեմն հայերդ ողջ ազգով ընդունո՞ւմ եք ոռւսաց մեծ հովանավորությունը, մտնում մեր ողորմած կայսրունու հոգատակության ոլորտը: Բարի՛, բարի՛...

Երեք օր հետո իշխանը իրեն սեղանակից արեց հայ պատվիրակներիս, հարցրեց՝ ինչքա՞ն զորք կարող եք տրամադրել ինձ հայերդ:

— Ամենաքիչը երեսուն հաղար, — պատասխանեց Թուրի Արզումանը:

— Բարի՛...

Մյուս հանդիպումն ավելի հուսալի էր: Իշխանը շողացնելով իր ֆելդմարշալական զուգսը, հանդիսավոր ասաց.

— Ծուշու իրահիմ խանը ապօրինի է, բիճ է, և որևէ իրավունք չունի Հայաստանում: Զարարադն այսուհետ իրեն անկախ երկիր՝ կվայելի մուսաստանի հովանին: Ես ամեն չանք գործ կղնեմ, որ ձեր երկիրը կաղմակերպվի հայ ժողովրդի համար ամենանպաստավոր կերպով: Հույս ունեմ, որ այս միջոցով մյուս ուժեղ հայկական նահանգները կհետևեն Ղարաբաղի օրինակին:

Հայոց Գերագույն գահաժողովի երաշխավորությամբ Ար-

զությանի դնապանությանը միացավ նաև հին իշխանական տան ժառանգ՝ Դանիել-բեկ Ավետիսյանը։ Հայաստանի պատվիրակությունը Մոսկվայում իջևանեց Գրիգոր աղա Խալդարյանի տանը։ Սա Մոսկվա գետի ափին, Կրեմլին գրեթե կից առևտրական Տուն ուներ։ Մի հարյուր տարի առաջ այդ նշանավոր գերդաստանը նոր Զուղայից գաղթել էր Հնդկաստան ու այնտեղից ծովերի և օվկիանոսների վրայով առևտուր ուներ Զինաստանի ու Եվրոպայի հետ։ Մի քանի տարի առաջ էր գերդաստանի մի ճյուղը հաստատվել Մոսկվայում։ Դանիել բեկ Ավետիսյանը եվրոպացու զգեստով էր, երկար ու սուր բեղերով, միշտ պայծառ տրամադրված։ Մեզ՝ իր հյուրերին ընդունեց ինքը՝ Գրիգոր աղա Խալդարյանը։ Ես գիտեի, որ նա մի տարի առաջ է Մոսկվա տեղափոխվել Լոնդոնից, որտեղ կրթվել-ուսանել էր Լոնդոնում նա հայկական տպարան էր ստեղծել, հայ տառեր ձուլել ու դա տեղափոխել Մոսկվաւ։ Նա մեզ ցույց տվեց իր ձեռքով տպագրած «Տետրակ այրբենարանի» գիրքը։

— Սա Ռուսիո օրհնված երկրում տպագրված հայերեն առաջին գիրքն է, — ասաց նաև — Եռուսով էլի կլինեն՝ Ներսես Շնորհալու «Հիսուս որդին», նաև «Գիրք, որ կոչի Եղիշե պատմագիրը»։

— Իմ խելքը գրանցից բան չի կտրում, աղա Գրիգոր, — այս ամենը լսելով, հեզ ասաց Թուրի Արգումանը։ — Այ, ուրիշ բան է, եթե գրանցից մի երկուսը տանեմ կնոջ՝ Երնջիկին։ Նա սուրբ գիրքը բերանացի գիտի։ Սակայն, աղա, ավելի լավ չէ՞ր լինի, եթե գրքի փոխարեն գու զենք պատրաստեիր հայ աղղի համար։

— Գիրքն էլ զենք է, — նրա ասածից անհարմար զգալով նկատեցի ես։

— Է՞, — տրտնջաց Թուրի Արգումանը։ — Ասում ես, էլի՛, պարոն խոչա։ Մեր հարեան օսման թուրքը, թեկուզ հենց ացամ-պարսիկը, որ զրի սևն ու սպիտակը չեն ճանաշում, պակա՞ս դորավոր են, կես աշխարհը նրանք իրենց կրկնկի տակ են ճգմել, մեզ՝ ես։

Մենք Մոսկվա էինք հասել ծեղը-ծեղին։ Իշխան Ստեփան Դավթյանը մեզ ասաց, թե ինքը գեսպան է եկել էջմիածնի կաթողիկոսի հանձնարարականով և պիտի մեզ հետ լինի,

մեր իրավունքներին հավասար: Թուրի Արզումանը դրանով ուրախացավ: Իշխան Դավթյանը Եվրոպայում կրթված, դիվանագիտական փորձով օժտված մարդ է ու մեծ հարգ ունի ուստական արքունիքում: Երբ գեռ մենք Ռուսաստանի հարավում էինք, Նոյար քաղաքում, այդտեղ եղած վրաց դեսպանը բավականին ոգևորված խոսեց Դավթյանի մասին:

Եատ երկար ճանապարհ էինք անցել: Համախ էինք հանդիպել Ծամախուց ու Գանձակից Ռուսաստանի խորքերը գնացող վաճառական քարավանների: Այդ քարավաններին, ինչպես և հարավից բարձրացող փոստին, ուղեկցում էին ուստ կողակիներ՝ ապահովության համար:

Մեզ անշափ զարմացրեց Մոսկվայի մեծ ժամացույցը: Մարդիկ, շղիտեմ ինչու, չէին նայում նրան ու անցնում էին անապրեր, միայն եռանգով կազին լրթում: Իշխան Դավթյանը ժանոթացրեց մեզ Մոսկվայի հետ, ավելի շատ Թուրի Արզումանին ու նրա մարդկանց, քանի որ ես մի քանի անգամ եղեկ էի Ռուսաստանի այս հին ու մեծ քաղաքում: Ահա Մոսկվա գետի վրա ձգված Ամենասրբոց կամուրջը, որ զարմանալի էր իր շրեղությամբ ու ամրահիմներով: Մոսկվայի միշնաբերդ-կրիմլում յօթանասուն տաճար, եկեղեցի ու մատուռներ կային, նաև շքեղ էր Կոփածո պալատը՝ Ավերման բազմազմբեթ տաճարի մոտ:

* * *

Մոսկվայից շուրով մեկնեցինք Սանտ-Պետերբուրգ:

Թուրի Արզուման հազարապետն ուղղակի ձուլվեց Ստեփան Դավթյանին, որ, զիտեի՝ Բագրատունի արքայական տան շառավիղ էր: Նա նորից ասաց, թե ինքը անձամբ էլեմիածնի Պուկառ կաթողիկոսի հանձնարարականով է մեկնում արքայանիստ:

Թուրի Արզումանը համախ էր ոգևորվում:

— Այ պարոն իշխան Ստեփան, ինչ լավ է, որ դու էլ ես մեղ հետ:

Պետերբուրգում իշխան Դավթյանին անվանեցին Արտատյան աշխարհի Դեսպան: Վերջապես Հովունի Արզությանը հայ իշխաններին ու ինձ հայտնեց, թե իշխան Դեսպան Պուտ-

յոմկինը պատրաստ է մեղ ընդունելու: Շատ չէինք սպասել, ընդամենը հինգ օր: Արքեալ սկզբունք շքեղ կառքերով մեղ տարավ Ռուսաստանի առաջին մարդու մոտ: Գանիել բեկը հարցրեց:

— Զի լինի՞ն, որ հենց ինքը՝ կայսրուհին ընդունի մեզ:

— Կայսրուհին ամեն ինչ անում է մեծ իշխանի խորհրդով: — ասաց Արղությանը: — Երկրի տերը ֆելդմարշալ Պոտյոմկինն է:

— Նրան հայտնի՞ն է, որ մենք՝ հայերս պատրաստ ենք իրեն ընդունելու մեջ վրա թագավոր, թագավոր հայոց:

— Դա նրա փայտայած երազանքն է:

— Կարծում եմ զա խիստ շահավետ կլինի մեզ:

— Միանգամայն:

Այս անգամ էլ իշխան Պոտյոմկինը հայ գեսպանությանը ընդունեց շքեղ: Երբ Թուրի Արգումանը գոտկատեղից հանեց առանց կոթունի հետը բերած հայոց զրոշակը ու պարզեց, իշխանը նույնիսկ ժամանաց զոհ, մոտեցավ, համբուրեց զրոշակի ժոպերը:

— Գեղեցիկ է, նաև աղնիվ ու վեճ...

Բանակցությունն սկսվեց անկեղծ ու անկաշկանդ: Միայն Թուրի Արգումանն էր նեղվում՝ ոռուերեն այնքան էլ լավ զգիտեր: Իշխանը հարցրեց.

— Զեր խոստացած պարեն-պաշարը պատրաստել եք իմ զորքի համար:

Ես նրա առածը թարգմանեցի: Թուրի Արգումանը զլիսարկը հանեց, զրեց ձնկներին:

— Ամեն ինչ պատրաստ է, առե՛ր իշխան: Ասեմ՝ իմացիր, մեր Երկիրը հացով առատ է: Էլի իմացիր՝ հայն իր վերջին կովը կմորթի ոռուի համար, միայն թե...

— Խնչ զիրը է բռնել Երբահիմ խանը:

— Քո անունից անգամ զողում է, — պատասխանեց Թուրի Արգումանը: — Անվերջ ընկենում է սրա-նրա ոտքերը՝ օգություն աղերսում ձեր՝ ոռուներիդ դեմ:

Այսուհետեւ իրեք, թե լորս անգամ մեծ իշխանը զրուցեց մեզ՝ հայերիս հետ: Իսկ մենք նրանից միայն մեկ խնդրանք ունեինք՝ շտապ թեկուզ փոքրաբանակ զորք ուղարկել Հայաստան: Ասացինք թե զա ոչ այնքան զինական օժանդա-

կություն կլինի, որքան ոգևորություն, որից թշնամիները խունապի կմատնվեն: Կրկնեցինք, որ պատրաստ ենք երեսուն հազար զորք տրամադրել կայսրունու զորակայանին:

Արդությանը Պոտյումկինին ասաց.

— Ետապեցեք մեր հայերին ազատություն պատճառել, ձերդ պայծառափայլություն: Եղեք պատճառ, որ ոզորմած կայսրունու սրբազնասուրը պատկերը դրոշմվի Արարատի սրբառում՝ իբրև Հռւշարձան ամբողջ աշխարհի համար, և թող անդադար բարբառեն բոլոր ազգերը, թե կայսրունին և դուք եք հայի փրկիչը և օրհնեն ձեր պայծառափայլ անունը հավիտյան:

— Կայսրունու և իմ համակրանքը ձեր կողմն է, հայեր,— ասաց ֆելդմարշալը:

— Օրհնյալ լինեք երկուադ էլ,— մաղթեց Արդությանը: — Մեր խնդրանքն է՝ նախ ընդունել ու ճանաչել Կողմանը Արևելից հայոց անկախությունը, ապա օգնեցեք, որ հայ ժողովուրդը Հայաստանի բովանդակ տարածքում ստեղծի ուժեղ պետություն, ինչպես ունեք հեռում: Դրանով Հայաստանը անխոցելի զրահ կդառնա Ռուսաստանի թշնամիների դիմ:

Իշխան Պոտյումկինը մեզ պահեց ևս երեք շաբաթ: Եատ խոստումներ տվեց, երբեմն ակնարկելով, որ ինքը հայերի պատապրման գործով խիստ շահագրգոված է և, եթե հայերը կամենան, ինքը դեմ չէ ստանալու Հայաստանի թագը:

Հույսե՞ր, հույսե՞ր...

Վերջին հանդիպման ժամանակ ոռուսական կողմը հանդիպավոր հայտարարեց, թե նորին մեծություն կայսրունին վրճուել է ճանաչել Կողմանը Արևելից հայոց հայկական պետությունը և կշանա ապահովել նրա անկախությունը, զա հիմք դարձելով համայն Հայաստանում հայկական ուժեղ ու միավորված պետության ստեղծելուն: Մենք տեսանք, որ իշխան Պոտյումկինը կայսրունուն եռանգագին մղում է զեպի մեզ՝ հայերս: — Զերդ կայսերական մեծություն, շտապեցեք իրականացնել ձեր խոստումն ու նպատակը, որով Ասիայում կվերականգնվի մեզ բարեկամ ու զինակից մի ուժեղ պետություն:

Մերոնք ցնծում էին: Մենք համոզված էինք, որ կայսրունին իր խոստումների տերն է, որ զրա կատարումը գտնվում

է Ռուսաստանի ամենուժեղ մարդու՝ ֆելդմարշալ Գեորգի Պայտմկինի ձեռքբուլմ:

Փետերբուրգում մենք վայելում էինք արքայական շնորհներ և Հովսեփ Արզությանի խնամքը: Մի առավոտ նրան լուր տվին, թե Պարսկաստանի Ազիլ Մուրադ շահը դեսպանություն է ուղարկել Եկատերինա կայսրությունու մոտ և որ այդ դեսպանությունն արդեն ժամանել է Պետերբուրգ: Նրան հասվիրեցին արքունիք: Սկզբում արքայիսկոպոսին բավականին տարօրինակ թվաց այդ նորությունը, նա նույնիսկ մտածեց հրաժարվել հրավերից, սակայն գանգաղ սկսեց հագնվել, խաչազորվել, շտապել: Նստեց կայսերական եռաձի կառքը, մեզ ու իր ճանապարհը խաչակնքեց:

— Տե՛ր աստված, բարի՞ է, թե՝ անբարի:

Եղ ես նրա բերանից լսեցի այն, ինչ հիմա կլսեր դուք: Իշխան Պոտյումկինը մեծ դաշնինում մեն մենակ դիմավորեց ինձ: Մենք հին բարեկամներ էինք, ուստի նա մտերիմ շեշտերով ինձ ասաց, թե Ալի Մուրադ շահը Ռուսիո բարեկամությունն է խնդրում: Նա արդեն պալատում է: Մինչև նրան հանդիպելը ցանկալի է ձեզ հետ խորհուրդ անել: Ես ասացի, թե այդ բարեկամությունը, հավատացած եմ՝ ոչ հայերի շահների հաշվին կկայանա:

— Ընդհակառակը՝ հայերիդ օգտին,— ասաց Պոտյումկինը:

Ես նրան հաղորդեցի, որ դեռ տարվա սկզբին՝ Սննդյան օրերին է Պարսկաստանի գահի վրա նստել մինչ այդ իրանի հարավում հոշակված Ալի Մուրադ խանը: Հայտնեցի ինչ պետք նրա մասին, հստակ շիմանալով, թե նա ինչ պատուի է:

Դեսպանության ընդունելությանը Պոտյումկինը մասնակից արեց նաև ինձ, Թող պարսիկներն իմանեան,— ասաց,— որ մեծ կայսրութին ձեր՝ հայերիդ բարեկամնն է:

Արքայական պալատը շողում էր ճոխության ժանրությունից: Ես, որ ծանր զուրսով էի, նեղում էի հարյուրավոր լավտերների լույսից: Եահական դեսպանության ընդունման առարողությունը տեսեց շատ երկար: Այնինչ ես տագնապից դրեթե ճարում էի՝ ի՞նչ է լինելու, ի՞նչ: Զգում էի, որ քըրտինը սառչում է մարմնիս վրա: Ի՞նչ օր է բացվում մեզ համար: Ի՞նչ...

Բարձր դահաթոռին նստած ձիգ ու պիրկ հազնված Եկա-
տերինա Երկրորդը շողում էր կանացի իր սքանչելի, վեհ ու
բաց հմայքներով։ Ես հիշեցի, որ շքեղ գահավորակը, որին
ժանր նստած էր կայսրուհին, հայ ձեռքերի գործ է, հարյուր
քանի տարի առաջ են հայ վաճառականները Հայատանից
նվեր ուղարկել Պետրոս Մեծի հորը՝ Ալեքսեյ Միխայլովիշ
կայսրին։ Իմ ձեռքով քանի՛ անդամ եմ շոշափել մեր հայերի
այդ անդնահատելի նվերը, որին արթունիքում ու Ալմատեն
գահա են ասում։ Եվ ինչպիսի՛ տագնապով է 1660 թվականին
վայրենի տեղերով իշխան Զաքար Սահրապյանն այս թան-
կագին գանձը հասցրել Մոսկվա։ Եինված է սոսու և հաճա-
րենու մի տեսակ փայտից, որ Մասիս լեռան հարավային վե-
շերին է լինում։ Գաճը պատված է ծիսածանի գույներ արձա-
կող թափիշով, կարմիր մետաքսով և դեղին կերպասով։ Հրաշք
շինվածքը ընդելուզված է հավի ձվի մեծությունից մինչև
մատանու չափի 897 ալմաստով, 1298 մարգարիտով, նաև մե-
ղեսիկ, շափյուղա, տպագիռն ու հակինթ թանկագին քարե-
րով։ Ես նրա վրա հաշվել եմ նաև նիշապուրի 1830 փիրուզ,
ժանրակշիռ ոսկե լանջեր ու արծաթե կողեր։ Այս սքանչելի
գործը տեսնելով Ալեքսեյ Միխայլովիշը հասկանում է, թե
ինչ արվեստի տեր են հայերը և Զաքար Սահրապյանի միշ-
նորդությամբ Սպահանից Մոսկվա է բերել տալիս Աստվա-
ծատուր Սալթանյան հոշակավոր գունային պատկերահանին։
Գնա Մոսկվայի Կրեմլը ու նրա տաճարներին և պալատներին
որմերին կտեսնես նրա արած հարյուրավոր գունանկար-
ները։

Ես սթափվեցի հուշերի այս մշուշից, Հստակ հնչում էր
պարսից շահի դեսպանի ձայնը։ Բարձրահասակ, հնդկահագի
պես գունագունատով դեսպանը կարդում էր իր շահի ուղերձը՝
կայսրուհուն։

—... Աստծու օգնականությամբ մեծ Ռուսիո եռամեծ ու
օգոստափառ կայսրուհին, համոզված եմ, որ կճանաշի իմ
թագավորությունը և կընդունի իմ իշխանության իրողու-
թյունը։ Մեծ կայսրուհի, ողորմած աստծու ներշնչանքով, ես
պատրաստ եմ ճանաշել հայոց Արքախի ինքնությունը, առա-
իմ իշխանության տակ եղած Զաքարադը, նախիջնանը և
Արարատյան աշխարհը իր Երեանով ընծա բերել ձերդ կայ-

սերական գաճին, հավատացած լինելով, որ ձերդ բարեզթությունը կճանաշի իմ թագավոր վիճակը...

Ես քիչ մնաց ուրախությունից գոռայի: — Օվսաննա՞: — Իշխան Պոտյումկինը քաշեց իմ շուրջառի սակեցյուսքը: — Համբերի՛ր: — Այլև ինձ ոչինչ չէր հետաքրքրում: Անսպասելի ու միանգամից նոր իրավիճակ ստեղծվեց՝ մեր ողջ Արևելյան Հայաստանը՝ Արաքսից մինչև Կուր գետի ափը փրկվում է: Փրկվո՞ւմ է: Խուսաստանն ստանում է Հայաստան աշխարհի կեսը՝ առանց մի կաթիլ արյուն հեղեղու: Օ՛, ողորմած աստված: Օ՛, գիտակաթ երկինք...

Երբ գուրս էինք գալիս տաճարից, իշխան Պոտյումկինը թվիացրեց իմ ուսը:

— Իե, տեր եպիսկոպոս, հիմա որ Հայաստանի վրա փրկության արև ժաղեց: Ուրախ եմ:

Մի շաբաթ հետո, կայսրունու հրովարտակով, իշխան Պոտյումկինը գեսապանություն առաքեց Պարսկաստան: — Մենք Եկատերինա կայսրունիս համայն Ծուսիո և... և... հաճույքով ընդունում ենանաշում ենք ձերդ վեհության արքայանալը պարսից աշխարհում: Ողջ լեր, Ալի Մուրադ շահ և հավատամեր ամենակողմյա օգնությանն ու նպաստին:

Իշխան Պոտյումկինը ուսւաց գեսապանության մեջ մտցրեց նաև ինձ՝ Հոգսեփ Արդությանիս:

Խուսաց գեսապանությունը մեծ հանդիսությամբ ու շուրջ հասավ Հայաստան ու իշխանեց Եամախի քաղաքում՝ Պարսկաստան անցնելու: Մենք մեզ հետ բերում էինք Մեծ Հույսը Սակամայն...

Համախում ուսւաները լուր ստացան, թե Ալի Մուրադ շահին սպանել են իր ավատականները: Նրա փոխարեն շահ է նստած ինչ-որ ահեղ մի խան, որ Խուսաստանի կատաղի թշնամին է: Դեսպանությունը ետ դարձավ: Ես գլուխս ծեծելով, ողբում էի: Նորից ժանր բար ընկապ հայոց բախտի վրա Այսպիս մթնեց, խավարեց 1784 թվականը ևս:

Երբ հասել էինք Պետերբուրգ, իշխան Բագրատունին ողբաց իմ երեսն ի վեր:

— Օսմանյան սուլթանը ծովի վրայով մեծամեծ զորքեր է մոտեցնում Խուսաստանի հարավային ափերին:

Ես նորից բռնեցի զլուխս: Հիմա կպայթի:

Պետքը ուրագնապի մեջ էր: Նորից է խավարում հայոց արևը: Եռւսով լուր ստացանք, թե Կուր գետի ափին եղած ոսւական փոքրաթիվ զունդը անկարող է զիմադրել Ախալցխայում շնթռկած Սուլեյման թուրք փաշայի ճնշմանը: Խմացա նաև, որ Եռւշվա Իրբահիմ խանը շտապել է միանալ Սուլեյման փաշայի զորքին՝ Ռուսաստանի դեմ: Այս անգամ էլ ոսւաների ճանապարհը փակվեց գետի Հայաստան:

ԳՅՈՒԽ ԵՐԵՎԱՐԴԻ

Զորախումբը մեծ դժվարով մի կեռման ևս ոլորվեց դեպի Մոռվ լեռան վերները: Փոթորիկ էր, ինչ էր: Վարազների մի հորան սլացքով կտրեց արածեաց ու թռավ գետի կիրճի խորերը: Երեսում է վարազներն ինչ-որ աճից բեկված են: Զինվորները հասցրին հրացաններից կրակ բացել ամենի զազանների վրա: Ծատ չէ, մի լորս-հինգը ընկան, թպրտացին դեղնուցքի պես չորացած գետնին և խաղաղվեցին: Լեռան ճեղքից գոռացին:

— Է՞լ, թո՞ւրք եք, զոլորա՞շ եք...

Առաջապահ մի զինվոր ավելի զիլ գոշեց:

— Թուրքը, զզլրաշը դուք եք, չե՞լ, Հաթերքի արծիվներ:

Մի քանի մարդ գուրս եկան ժայռախոռոչներից: Մելիք-Մեծլումը համակրանքով նայեց նրանց, իր Հաթերք զյուղի շինականներ են՝ Թուրքի Արզումանի հետ: Հարյուրապետը հանց զիխարկը:

— Ոզչ լեր, գերագահ իշխան մեր: — Կարծեցինք Իրբահիմ խանի ավագակներից եք:

— Վախեցա՞ր, — խոցեց մելիքը:

— Չէ՝ հա: Դուք ձեր զլխին հովանի աստված ունեք: Փախչող վերի խոզերին էինք ուղղում խփել: Լավ է նկատեցինք, թե չէ մեր կրակը ձեզ կդիպչեր, մեզքի տակ կընկնեինք: Ոզչ լեր, տեր մեր:

Նրանք գնացին կողք-կողքի:

— Մեղքերդ շա՞տ են, Թուրքի Արզուման:

— Որ լցնես էս մեր Թարթառը, զուրը կկանգնի: — Հար-

լուրապետը քրքչաց հզոր: — Էս աշխարհում ո՞վ մեղք չունի: Սակայն, իշխան մեր, ներող եղիր, ի՞նչ բան է մեղքը:

Սպանված խոզերին զցեցին ձիերի վրա: Գնացինք համախումբ: Թուրի Արգումանը կարծես հենց այնպես հարցրեց:

— Էլի՞ թղթերով, աղերսագրերով ընկել ես օտարի դռները, տեր մելիք: Ախր բավական է...

Հաթերը մեծ շենք խլրտում էր: Լսել էր ձորի կրակոցները, խառնվել մեղվաքթոցի պես: Մի երեք հարյուր տղամարդ արդեն զենքով դուրս էին եկել զյուղից:

— Թո՞ւրք է, թուրի Արգուման: Հե՞...

— Մի՞ հաշար: Գերագահ իշխանն է: — Արգումանը գարձագ Մելիք-Մեծլումին: — Իրրահիմ խանը նոր քոչվոր ցեղեր է բերում Պարսկաստանից, որ անդապորի մեր հողերի վրա, մեր արյան վրա, մեր զավակների բերնի հացը կտրի:

Մելիք-Մեծլումը գարձագ ինձ:

— Լսեցի՞ր իսկ մեր էջմիածնի կաթողիկոսը ամեն օր, որի խեցնությամբ, օգնություն է աղերսում սրանից-նրանից: Ո՞ւմ է պետք նման խեցնությունը: Երկիրն ահա այս ուամիկ ու շինական մարդիկ են պահում: Փրկում: Լսեցի՞ր, Արքահամ Երևանցի: Այս շինական մարդիկ նորից են չարդել Իրրահիմ խանին, առանց քո էջմիածնի աղոթքների:

Նստեցինք, մնացինք Հաթերքում: Վտանգ կար: Գանձակի մոտ Իրրահիմ խանի հրոսակներ են երևացել: Եկագ նաև Մելիք Արովը: Ասաց, թե Իրահիմ նոր թագավոր Աղա Մամադ Ղաջարը հոխորուում է, թե ուր որ է կշարժվեմ Հայաստանի վրա:

Հայկական զորախմբերը ճյուղ-ճյուղ լեռներից իշան Շամխոր հայոց քաղաքը, որ փոքր ինչ դաշտ տեղ էր: Շամխորի ռազմաջոկատը ևս միացավ Մելիք-Մեծլումին: Երեք օր հետո երևացին Գանձակի անհամար եկեղեցիների բարձրաթռիչ գմբեթները: Առաջապահ ուղարկած Թուրի Արգումանը ևս եկագ, Հայտնեց, թե Իրրահիմ խանը իր ու պարսից բանակով Գանձակի մոտերքում է՝ Զորակնի դաշտամասում: Մեր զորքը հենց երթից գրոհեց Իրրահիմ խանի ճամբարը: Նախ գղրդացին մեր վեց թնդանոթները: Ճակատամարտը կարճ եղավ: Մերոնց հենց առաջին հարվածից պարսից շահի զոր-

քը, որ եկել էր հեշտ կողոպւտի հույսով, լքեց իրրահիմ խառնին ու ճողոպրեց: Մենք հաղթական մտանք Գանձակ:

Քաղաքի ողջ հայությունը, որ պատնեշի վրա խտացած պատրաստ էր դեմ կանգնելու թշնամու զորքերին, աղաղակցնծությամբ հոսեց դեպի մեծ դարպասը՝ զորքին դիմավորելու:

Զորքը երկար մնաց Գանձակում: Գերագահը փակեց հարավից ու արևելքից եկող ճանապարհների ձորամուտերը, մնաց... Երբեմն որեւ զորախումբ պոկվում էր Գանձակից, հասնում կուրի ու Արաքսի շամբուտները, ոչնչացնում այնտեղ բնակալած թշնամիների պահակազորերն ու կայազօրները, վերադառնում ուղմագալով, թշնամուց խլած ձիերով, պարեն-պաշարով:

Տարին անցնում էր տարու ետեից: Մեր լեռնաշխարհում խաղաղ օրեր էին: Բայց մի՞թե խաղաղ: Շուշին շար ուսուցքի պես խրված էր մեր աղիքների մեջտեղը: Մելիք-Մեծլում իշխանը մտածեց արշավել Իրրահիմ խանի վրա, սակայն Շուշուց զգուշացրին՝ պարսից շահը քսան հազարանոց զորք է հանձնել Իրրահիմ խանին: Էհե՛, էլ ինչպե՞ս ճեղքես այդ ահռելի պնդոցի մեջքը: Պետք է տոկալ ու սպասել մինչեւ պատեհ ու հարմար առիթ գա: Խակ որ նման առիթ կգա, մեզնից ոչ ոք չէր տարակուսում: Հո միշտ քարացա՞ծ չի մնալու հայոց բախտը:

* * *

Ես դանդաղ ճեմ էի անում իմ առաջնորդարանի զբոսայգում: Գարպասների այն կողմից մեկը անսպասելի աղաղակեց:

— Էհե՛, արթեացե՛ք: Արթեացե՛ք: Դուռը բա՛ց արեք...

Բանքեր զինվոր էր, կանգնել էր ձիու թամբին ու մտրակի կոթով զգրդացնում էր դռան փեղկը: Ես իմ շաթրին հրամայեցի զնալ ու բաց անել դուռը: Զիավորը թամբից ցատկեց, սահմանական հանձնեց շաթրիս:

— Տեր կաթողիկոսն արթո՞ւն է:

Ես շտապ մտա վեհարան: Կաղնեփայտե հաստ դուռը, որ նախշած էր մի խոշոր ու երեսուներեք մանր խաչերով, երե-

սուներեքը Հիսուս Քրիստոսի ապրած տարիներն են, բաց թողնելով։ Սուրբանդակն ի՞նչ լուր է բերել այս սուրբլուսին։ Իսկ լույսը՝ արևի առաջին փնջերն ընկել էին դռան խաշերի վրա։ Զինվորը զլուխ ավեց։

— Մելիք Շահնազար իշխանը քեզ կանչում է, տե՛ր իսրայել։

— Հիվա՞նդ է։

— Հիվանդ է։

— Մեռնո՞ւմ է։

— Ինքը կիմանա։

1792 թվականի սեպտեմբերն էր։ Հիշեցի, որ մի շաբաթ հետո Հաղորդման տոները կսկսվեն։

Ծուտով գուրս եկա վաներից։ Մեր ձիերը քայլում էին պեղացած ճանապարհի մեջը ժեծելով։ Առջևից գնում էր իմ շաբթը գավազանակիրը, շալ ձիու վրա։ Մելիքի ծառան գնում էր իմ վեց ծառաների հետ՝ ձիավոր ու զինված։ Ոչ ոք շպիտեր, որ շուրջառիս տակ ես էլ զենք եմ կրում։

— Մեռնո՞ւմ է։

— Երեխ։

Հասանք Ավետարանոց։ Ամբոցի դռների մոտ ինձ խոնարհ զիմավորեց Մելիք-Շահնազարի մեծ որդի Զումշուդ բեկը՝ շիմացա՝ տիսո՞ւր, թե՝ ուրախ։ Երեխ ուրախ՝ վերջապես հայրը մեռնում է, երեխ՝ տիսուր, դե, հայր է, չէ՞։ Ուրեմն այս տղան կլինի Վարանդա աշխարհի իշխանը, որ ամենից մեծն է Կողմանք Արևելից հայոց գավառներից՝ արևմտաքում Բերդաձոր անտառանդունդ գավառակը, որ շփվում է Սյունիքին, արևելքում Մուխանք մեծ դաշտը՝ մինչեւ Երասխ։ Բավականին մի մեծ երկիր, մեջտեղը Շուշին ու Իրբահիմ խանը։

Ես գանդաղ քայլեցի լայն ու երկար միջանցքով։ Ինձ գուր շեկավ Զումշուդ բեկի կեցվածքը։ Երեն պահում է կարծես իրրե արդեն երկրի տերը։ Դիտեմ, չի սիրում հորը։ Միշտ հոր գործերին հակառակ է եղել։ Գուցե թե լուր է տվել Մելիք-Մեժլումին ու Մելիք-Արովին։ Հայրս մեռնում է։ Պատրաստ կացեք։ — Մելիք Մեժլումը Գանձակում նոր զորք է ստեղծում։ Խընազուխ ցուզ է՝ ուր ուզեմ նախիրս կըշեմ։

— Խանին լո՞ւր ես տվել, Զումշուդ բեկ։

— Ինչի՞ն մասին։

— Որ Մելիք-Մեծլուսն ու Մելիք Արովը զորանում են, — խակույն միտքս փոխեցի ես: Ուզում էի հարցնել՝ խանին լուր ես տվել, որ հայրդ մեռնում է: Բայց գուցե չի մեռնում:

— Ինչո՞ւ պիտի լուր տամ խանին, — ասաց Զումշուդ բեկը: — Ես եմ իմ զլուխի տերը:

Ես կուլ տվեցի լեզվիս հասած «այզպես զլուխող կկորցնեած միտքս»:

Նեցարանում շատ մոմեր էին ճրթում: Փափուկ ու լայն անկողնում նստած էր Մելիք-Շահնազարը: Կողքին՝ աջ ու ձախ տանու քահանաներն էին:

— Քարին ընդ բեկ, տեր մելիք, — ողբունեցի, դառնանաւով, որ ձայնս խզզոցով գուրս եկավ:

— Եկա՞ր, — շշնչաց մելիքը:

Երա ձիային երկար դիմքը մաղախոխիվ էր: Չէր սափրովել: Սափրում էր պարսիկի հանգով, հիմա՝ ոչ: Ուզում է հայի կերպա՞ր ստանալ մեռնելուց առաջ:

— Ինչո՞ւ կանչեցիր:

— Վերջա մոտեցել է:

— Ժամանակը չէ: Մեր թշնամիներին կուրախացնես:

Ինձ համար արմունկակալ բազկաթռոք բերին: Ես նկատեցի, որ բոլոր բազկաթռուները երենոսյա փայտից են, փղոսկրինախշերով: Անբավի հարստություն ունի Մելիք Շահնազարը: Ամբոցը պայտում է ոսկու ու արծաթե կույտերից՝ շահեր, աւոթեր, մոմակալներ, կերոններ, նույնիսկ նարդու սեղանի խաղաքար փուլերը փղոսկրուած են:

Դրսում հարյուր հազար ոշխար ունի, տասնմեկ հազար ձի ու ցորի: Կովերին ու եղներին համբանք չկա: Չկա, էլի՞: Պարսից շահը հազիվ թե այդքան ունեցվածքի անը լինի: Իսկ հողը: Հողին ես սահման չկա, նաև անտառներին ու գետերին: Քառասունշորս տարի է տեր ու տիրակալ է Մելիք Շահնազարը: Այս հարստությունը պիտի կորցի՞: Գոնե կեսը կտակի իմ վանքին:

Պարսիկ խոհարարը շինական թել բերեց ինձ համար: Սկուտենդը ոսկուց էր, բաժակները՝ ես, ոսկե շաքարամանը ընդելուզած էր մարգարիտներով:

— Թեյդ խմիր, Տեր Խորայել, — ասաց մելիքը: — Սակայն տես, սկուտենդն ու բաժակները լբոցնես, շաքարամանը՝ ես:

Մելիքը խնդրեց, որ բոլորը գուրս գան, իրեն մենակ թողնեն: Եթե մենակ էինք երկար, անեռուն նայեց ինձ:

— Մորդ ուղարկենք Գանձակ:

— Մելիք Մեծլումի մոտ: Նա քո փեսա իրրահիմի և քո թշնամին է:

— Հե՞րե անիծած, — զրեթե գոռաց Մելիք-Շահնակարը:

Մարդ ուղարկենք Մելիք-Մեծլումի մոտ: Հաշտվենք...

— Ի՞նչ, ի՞նչ, — կապտեցի հո:

Մելիք-Շահնակարի դեղնած դեմքին կարմիր պուտեր երեցացին:

— Ե՞ս քանդեցի Հայոց տունը: Ղարաբաղի տունը: Ե՞ս...

— Բայց քու խաշդ շեն պահեցիր, քո իշխանությունը՝ ամուր:

— Զգողում եմ:

Նա սկսեց արագ-արագ երեսին խալ Հանել:

— Բայց զու խաշդ շեն ուրացել և աստծու առաջ անպարտ ես:

— Մարդ ուղարկենք, ասում եմ, նաև Դիզակ՝ աներոջս տուն: — Նա հենց տակի շորերով զուրս պրժավ անկողնուց, գոռաց ձեռքերը պարզելով ինձ: — Դուրս, դուրս... Երեսդ շեմ ուղում տեսնել: Դուրս...

Ես բոլորովին հանդարտ, առանց այլայլվելու ինձ զցեցի միջանցք: Ընդառաջ եկած Զումշուդ բեկին ասացի Հայրդ խելագարզում է: Մելիքի որդիները շտապեցին հիվանդի մոտ: Միջանցքում մնացի զիք, մենակ: Զումշուդ բեկը սակայն ետ եկավ, ինձ նորից հրավիրեց ներս: Մելիքը հագել էր իշխանական տարազը, նստել ու թե անկողնում, այլ՝ գահավորակին: Հրաշը է՝ կարծես լիովին ապաքինվել է: Դա դառնացրեց ինձ: Զի մոռանում. Ա՛խո, տե՛ր աստված:

— Դինի բերեք, — հրամայեց նա:

Սեղանն իսկույն ծանրացավ զինու կուլաներով, նախուանատով:

— Դու էլ, հսրայիլ, հետս զինի խմիր, որ մեր տեր Հիսուս Քրիստոսի արյունն է:

Որդիները՝ Զումշուդը, Զհանգիրը, Զհանրախշը ու Հոսեինը խոնարհ կանգնած էին մի քիչ կողմ: Դառնալով նրանց, Մելիք-Շահնակարի ասաց.

— Իմացեք, զավակներ իմ, մենք Դոփյան իշխանական տան ճյուղ-շառավիղ ենք: Դոփը մեր մեծ տատն էր՝ արքայաշուր իշխանուհի, որ էր Սարգիս և աշխանի մեծ իշխանի դուռարք, աշխարհ գղրդացնող իվանե և Զաքարե սպասարների բույրը: Այդպես: Իմացեք:

— Իմացանք, — Հազիվ լսելի շնչաց Ձումշուդ բեկը: — Պապերդ ու հզոր տատդ Հայոց աշխարհի նվիրյալ էին, իսկ դու...

— Խաթրվանքը տեսել եք, — գոշեց մելիքը: — Էն որ թարթառի վերներումն է: Մեր մեծ նախնի իշխանուհի Դոփե է շինել, Դոփը՝ հինգ հարյուր հիսուն տարի առաջ, իր որդի Գրիգոր և աշխենացու հետ:

Նա կանչեց տանու քահանային:

— Կամքս զրիր, տերտեր՝ վեց հազար ոսկի տալ Խաթրվանքի վերանորոգմանը:

Ես գազագեցի: Խաթրավանքն իմ իշխանության տակ է, ինչու ոսկին ինձ չի կտակում: Քահանան զրեց նրա ասածը, ապա զրաբար, որպեսզի մելիքի տղաները չհասկանան, ասաց: — Շարունակի՛ր, անիծյալ... Մինույն է, քո հանցանքներին ու մեղքերին թողություն չկա: — Նա նույնիսկ ինձ բանի տեղ չդրեց, չէ որ ես իրենից ոչ պակաս վարժ եմ մեր զրոց հին լեզվին՝ զրաբարին:

— Մեծ իշխանուհի Դոփը թաղված է Հաղբատի վանքում, — Հևալով շարունակեց մելիքը: — Երեք հազար ոսկի Հաղբատին: Գրիր, քահանա, առանձին թղթի վրա զրիր:

— Գրեցի, — ասաց քահանան, նորից կրկնելով նույն անեծքը: — Շարունակիր, անիծյալ...

— Տիրում էր Գեղամա երկրին Սարին, մինչև Վարանդակստեղ...

— Գրե՛մ:

— Դադի վանքի եկեղեցուն հազար ոսկի:

Զի՞ սպասվում: Ձումշուդ բեկը վարանելով նրան ասաց, թե եղբորդ գերեզմանին մատուռ շինիր, Հայր: Նրան...

— Որին ես սպանեցի, Հա՞՝ — Հևաց Մելիք-Շահնազարը: — Նրա վրա՞ մատուռ շինեմ: Թե նրա հույսին մնայի վաղուց շկայի:

— Երկի, — ասաց Զումշուղը դարձյալ վարանելով: — Բայց
եթե նա լիներ, չէր լինի իրրահիմ խանը...

Մելիք-Շահնազարը բրբջաց: Նրա երեսը կարմրեց՝ տեղ-
տեղ սև պուտերով: Նրա տագնապը նորից բռնեց: Կարծես
խննթացավ:

— Հեռո՞ւ, հեռո՞ւ...

Զումշուղը բեկը թթվեց: Մելիքը հեաց երկար, խոսեց նո-
րից:

— Գոհար միանձնուհու վարժարանին շորս հազար ոսկի
և տասը գորգ:

— Շարունակի՞ր, անիժյա՞լ, — այս անգամ շշուկով ասաց
խոստովանահյորը:

— Դու, քահանա, — խստորեն նկատեցի ես, — մեռնողին
անիժում ես, կանոն չէ: Ես գրաբարը հալած յուղի պես գի-
տեմ: Դու անիժում ես...

— Ժամանակ կգա, — շեշտ նայելով ինձ ասաց նա, — ես
այսպես կանիժեմ նաև քեզ, տեր իրրայել: Այս, այդ ժամա-
նակը կդա:

Զումշուղը բեկը հորը դրեց անկողնում, ժածկեց: Տառա-
պիր, մարդ, խեղդվիր մեղքերիդ ժովում: Խըզ զիշերը մնաց
հոր մոտ, հետք պահելով միայն տանու քահանային:

* * *

Մելիք-Շահնազարը զառանցում էր, երբեմն եղրոր անունը
տալով, որին իր ձեռքբով էր սպանել, երբեմն զստեր՝ Հուրի-
զադի: Զումշուղը նրան մի կերպ հարցրեց՝ կանչի՞ Հուրի-
զադին ու նրա ամուսին իրրահիմ խանին: Մելիքը զեղնած
ձեռքը թափահարեց:

— Ո՞չ, ո՞չ...

Զումշուղը նրա ձեռքերը դրեց վերմակի տակ: Խնչեր շեն
արել այս հզոր, անզիշում ձեռքերը: Ա՛խ, եթե զրանք շղա-
վաճանեին ազգին, հայրենիքին: Նա զզվեց հոր ձեռքերից:
Լուսագեմին Մելիք Շահնազարը բոլորովին սթափեց, կար-
ծես նաև առաջվա պես առույդ նստեց անկողնում:

— Էս ազարը զտա իրրահիմ խանի մոտ, — ասաց հրա-
տակ: — Էնտեղ հիմանդացա: Գեացի նրա բանին վերահասու

լինելու, հիվ ընկավ քանա: Վերջս է: է՛, զավակներս, ևս ամենայն ցավի ու գործի մուղայիթ էի: Հիմա...

Որդիները խոնարհ կանգնած էին դռների մոտ, ձեռքները ժայած: Քահանան Ավետարանը ծնկներին սպասում էր մեռնողի վերջին խոսքին: Մելիքը ձեռքով մոտ կանչեց Զումշուղ բեկին:

— Որդի, ևս ահա մեռնում եմ: Էս ազարից ինձ փրկություն չկա: Դու, Զումշուղ բեկ, իմ մեծ որդին ես: Եկ իմ եղածը՝ թե նադդ փող, թե մուրհակով ուրիշին տվածը, թե ժողովրդից չհավաքած հարկերը, թե տավար ու ոշխար, ձի ու գորի, թե իմ բոլոր մուլքերը քեզ հիպա անեմ՝ կտակեմ, քանի դեռ հոգիս չեմ ավանդել:

Զումշուղ բեկը լորեց նրա առաջ:

— Չէ, լալա: Չէ, Հայր: Ես քո մուլքին թամահ շունեմ: Իմ ունեցածը ինձ հերիք է:

Նա ետ-ետ գեալով, կանգնեց իր աեղում՝ դռան մոտ: Հայրը ձեռքով արեց ու կանչեց Զումշուղից փորք որդուն՝ Հոսեյինին: Սա Մալայիկից ծնվածն էր:

— Դո՞ւ:

Հոսեյինը ևս, Զումշուղի նման, հրաժարվեց հոր ունեցվածքը ժառանգելուց:

— Ես ևս ամեն ինչ ունեմ, Հայր:

Զահանգիրը նույնպես հանձն շառավ:

— Չեմ ուզում:

Մոտ կանչեց ամենից փորքին:

— Զահանբախ, որդի, գոնե զու ինձ լսիր: Ես Հայաստանում ջոկովի մարդ եմ, ինձ աշխարհաքա զիտի: Մեռնում եմ: Իմ ունեցած զովլաթին ու հարստությունը ո՞վ պիտի կառավարի: Եկ ես քեզ տիպա անեմ ողջ դովլաթս, առնես տեղս քեզ տամ: Ընդունիր:

— Չեմ ուզում...

Հայրը թռավ աեղից, երկու ձեռքերը կարկառեց երկներին:

— Կանիծեմ քեզ...

Զահանբախը սարսափած ընկավ նրա ոտքերը: Հոր անեծքը զարհուրելի է, զիտեր:

— Մի՛, մի՛ անիծի: Համաձայն եմ... Ինչ որ Հայրը հրամանը անի, որդին պարտավոր է կատարել: Համաձայն եմ...

Մելիք-Շահնազարը մտավ անկողին, վերմակը քաշեց գլխին:

— Տերտեր, զրիր: Հարստությունս ջհանքալու որդուս եմ կտակում, իշխանությունս՝ ջումշուգ որդուս: Դրի՞ք, զրի՞ք: Հոսեինին ու ջհանգիրին՝ բեկություն:

Շարունակիր, անիծյալ,— այս անգամ մտածեցի ես, տեսնելով, որ նա որևէ բան չի տալիս Ամարասին՝ ինձ:

Արևի շողեր ընկան երդիկից:

Մելիքն անսպասելի նորից սթափվեց: Զեռքը մեկնեց քահանային: Սա Ավետարանը տվեց նրան: Մելիքն ավետարանը համրութեց, սեղմեց կրծքին, զրեց ճակատին ու զարմանալի առույդ գոշեց.

— Ո՞վ տեր, թող իմ աղաղակս քեզ հասնի: Խոնարհեցրու քո ականջն ինձ, ո՞վ Եհովա ասաված... իմ օրերը մուխի պիս ցնդեցին, և ուկորներս խոփվի պիս կայրվեն... Ես այժմ անապատի հավալասան եմ և ավերակների քու Վասնզի մոխիրը հացի պիս կերա ու խմելիքս եղբօրս և շատերի արյուն-արցունքով խառնեցի: Բայց դու պիտի ելնես ու Սիոնին ողորմեա, ո՞վ տեր, ո՞վ ահեղ արդարու:— Դլուխը կախեց, շունչը ետ բերեց:— Անձս օրհնիր, ո՞վ տեր: Մեղա՝, մեղա՝ հանցաներիս, և թողություն շնորհիր:

Շարունակիր, անիծյալ: Նա զլուխը կախեց, շունչը ետ բերեց.

— Անձս օրհնի՞ր, ո՞վ Հայաստան: Մեղա՝, մեղա՝ ինձ, ա՞զգ...

Նա մեռավ ավետարանը պինդ զրկած: Ես շարացած հեռացա Ավետարանոցից, ձիս ճաքեցնելով քշեցի դեպի Ծուշի: Ես՝ Խորայել կաթողիկոսս հեասպառ ընկա Խրբահիմ խանի հարկարաժինը:

— Մեռա՝ զ: Մեռավ աներք՝ Մելիք-Շահնազարը: Մեռա՝ զ...

— Հետո՞:

— Կտակն արեց: Մեղա եկավ: Ամարասի վանքին, ինձ ու քեզ, որ նրա փեսան ես, մի քոռ դուռուշ անգամ չկտակեց, շապիկ:

Խրբահիմ խանը բարձր քրքչաց:

— Անհոգ եղիր, Խորայել փափազ: Մի թել անգամ շինք կորցիր: Պատրաստվիր գնանք աներոջս թաղելու:

Խանական ապարանք մտավ Մելիք-Շահնազարի որդի
ջումշուղ բեկի հանձնակատարը: Գլուխը բարձր պահած ասաց:

— Խան, իմ տերը՝ Վարանդայի Մելիք-Ջումշուղը իմ բեր-
նով քեզ ասում է՝ շգաս իր հոր թաղմանը: Զհամարձակվես
ուր զնել Ավետարանոցում: Իմ տեր Մելիք Ջումշուղը ասում
է՝ դու ապօրինի խան ես, իրահիմ Խալիլ, և ինքը՝ Մելիք-Ջում-
շուղը շեղյալ է Հռչակում Վարանդայի քեզ հետ ունեցած դա-
շինքը:

Իրահիմ խանը գունատվեց, գողաց:

— Ինչպես է Համարձակվում:

— Համարձակությունը սրի ժայրին է, խան, — ասաց
քանիքը: — Իմ տեր Վարանդայի Մելիք-Ջումշուղը քեզ
ասում է՝ եթե Համարձակվես երևալ Ավետարանոցի սահման-
ներում, ապա իմ ձեռքով կկտրեմ քո գլուխը:

Ես սաստիկ գազադեցի:

— Ի՞նչ, ի՞նչ...

Բանքերը հանդարտ ասաց.

— Նաև քեզ, ճրո կաթողիկոս Խորայել, արքելում է մո-
տենալ Ավետարանոցին, մտնել Ամարաս: Մելիք-Ջումշուղը
իր հոր թաղման համար հրավիրել է Գանձասարի Հովհան-
նես կաթողիկոսին: Մերժում է քեզ: Նրա կամքն է՝ կամ սա-
տակես, կամ հեռանաս իր աշխարհից:

Խորայել կաթողիկոսի բերանը բացուխուփ եղավ: Նա ըն-
կավ գետնին ու թպրտաց: Մելիք-Ջումշուղի բանքերը լայն
քայլով անցավ Խորայել կաթողիկոսի դիակի վրայով ու գուրս
եկավ...

* * *

— Ե՞տ տուր: Ետ տուր գետը, տեր Մելիք-Մեժլում: Դե-
տին հրամայիր ետ դառնա, գնա գեպի լեռները՝ իր ժագման
տեղը, մտնի այն խորշը, որտեղից ծնվում է: Մտնի իր մոր
փորը:

Մելիք-Մեժլում իշխանը սուփրայից վերցրեց զինու կու-
լան ու թափով շպրտեց թարթառ գետի մեջ:

— Ե՞տ, ե՞տ...

Նրան փորձեցին բռնել-բայց նա կիսահարբած, արմունկ-
ներով իր տղաներին հրեց աշ ու ձախ:

— Ե՞տ, ե՞տ...

Կինը մատանիներով ծանրացած ձեռքերով փակեց երեսը:
— Ուշքի՛ ևկ, Մեժլո՛ւմ...

Գետը նստած զինու կուլան շջարդվեց: Ձրի վրա օրորդվեց՝ մի քիչ տեղ: Նրա բերանից ժայթքած կարմիր զինին հոսաց քրի վրա, նրա ետևից պոշ դարձած գնաց կարմիր մի շերտ՝ զիգզագ, վարանող:

Այսու մեջ էին: Վերևում Հաթերք դյուզն է՝ լեռան բարձր կրծքին: Գյուղ՝ քարեղին ու ժայռեղին բջիջներով հյուսված: Սլանը են ելնում այդ բջիջներից ու աշխարհը դառնում է ծխածածկ մշուշ:

— Միշտ քեզ հետ կլինեմ, — ասաց նույնակես թեթև ինչ հարրած Վարանդայի Մելիք-Ջումշուդ իշխանը:

— Հա՛, հա՛... — քրքչաց Մելիք-Մեժլումը շեղ նայելով բարձրահասակ, գեղեցիկ իշխանին: Զեռքը քսեց նրա գանգուրներին: — Էղ ես որոնո՞ւմ ախպերս: Հե՛... Աշխարհը իգության հոտից է հարբած: Իզություն... Թա՛ ծ...

Կինը փաթաթվեց նրան:

— Խելքի՛ ևկ, Մեժլում, սիրեկան ամուսին:

Նվագողները հնչեցրին իրենց գործիքները: Նրանցից մեկը, որ բոժոժներով թմրուկ ուներ ձեռքին, երգեց.

Ի ներմանեղ արքայական,
Զարթիր նազելիդ իմ, զարթիր...
Եւսու եշտուն արձգական,
Զարթիր, նազելիդ իմ, զարթիր...

— Գինին զնա՞ց, — աչեղ զոշեց Մելիք Մեժլումը: — Գինին զնաց, դու եկար Զումշուդ: Էղի հոտի շգնա՞ս: Զկա՛, շկա՞... Ոչ մի հոտ չի հասնի Ղարաբաղի քարի հոտին: Հա՛, քարի, ոչ ին քածի: Զլքես ինձ, հա՞ ։ Ես հե՞լ, ես հողի փոշի՝ քամու քերնին, Ղարաբա՞ղը լլրես:

Մոտեցավ նվագողներին, երգողից վերցրեց դաֆը:

Զարթիր նազելիդ իմ, զարթիր...

Դաֆը գեն նետեց: Նստեց Մելիք-Աղամի կողքին:

— Եկե՞լ ես: Զորքո՞վ: Իմացիր, իրրահիմ իւանը Եուշում երկար ծոտել չի կարող: Զէ՞...

Աղմկում էր Թարթառ գետը: Ալիքները թոշում էին միմյանց վրա, խենթ պարում, զարնվում քարաժայուերի: Երբեմն

մի կարմրախայտ էր թռչում քարի փրփնջանից, ձգվում գեղի վերև, զետին կախված ուռենիներից կանալ տերև հախոռում ու նորից, փայլառակելով արևի թացից, նետվում ջրերի մեջ:

— Մելիք Շահնազարը սատկել է: — Մելիք-Մեծլումը ժառայից վերցրեց իր այծենական ու մոտեցավ զետին: Երբշվեց: — Ոչ որ հանիցա շգա: Փաթաթվեց այծենականի մեջ ու պառկեց հսկա ընկուզենու տակ՝ քնելու:

Քնելց:

* * *

Առավոտյան բոլորն արթնացան անձրևի շրմփոցից տագնապելով: Մելիք Մեծլումի կինը զարմացած նայեց կողքին: Ամուսինը հետը չէր, տեղում չէր: Ո՞ւր կորավ:

Բայց ահա զետից դուրս եկավ նա:

— Խե՞նթ ես, ամուսին իմ, — տագնապեց կինը: — Այս անձրևին լողանա՞լ:

— Դինովովթյունս անցավ: Դիշերվա կեսից եմ զետի մեջ, կին իմ: Իսկ դու քնում ես արդի պես: — Նա ծիծաղեց, զուրցանեց կնոջ վրա: — Դե լավ, քիթդ մի՛ կախիր:

* * *

Դրսից ոտնաձայն լսեցի: Դուրս եկա քարանձավից: Զեռքով նշան արեցի Մելիք-Մեծլումին՝ Հնետենս ինձ: Զեռքս դրի ճակատիս արևի խրձերին զեմ:

— Ո՞, Երնջի՞կ: Դո՞ւ ես: Ողջո՞ւն: Հետիդ մուրացիկն ո՞վ է:

— Հենց լավ ասացիր, մայրապետ՝ մուրացիկ, — ծիծաղեց Երնջիկ տիկինը, որ աղամարդու զգեստով էր: Ամուսինս է՝ Թուրի Արզումանը, մուրացիկի կերպ տվի...

— Համեցեք:

Քարայրը փոքր էր, հատակն ու պատերը շոր, մաքուր նաև բավականին զօվ էր: Երկու խշտի էին զցած պատի տակ՝ թաղիքների վրա: Մի քանի մոմակալ, մի ջրի կուտեկ զրակալ, որի վրա բաց մատյան էր: Ուրիշ ոշինչ շկար այս ճգնարանում: Խշտիների վրա նստած գերագույն ժողովի ընտրանիները՝ Մելիք-Մեծլումը, Արզով իշխանը, Դիզակի Մելիք-Արասը ու էլի վեց-յոթ հոգի, նորեկները խոնարհ բարեկցին

Երկրի տերերին։ Գոհարը արդեն թառամած աշքերով սեհ-
ուն նայեց մուրացկանին։

— Գեղամ ես, Թուրի Արզուման։

— Ոչ, եկել եմ։ Վերադարձել եմ։

Մելիք-Մեժլումը թթված հարցրեց նրան՝ բայց ինչո՞ւ
ծպտված։

— Ճանապարհները խիստ վտանգված են։

— Այո, — համաձայնեց Մելիք Արով իշխանը։ — Հայի
ճանապարհ է միշտ վտանգներով լեցուն։ Հայի։

— Մինչև Արդերիլից հասա ձեզ, հազար անդամ մահը^ց գեցեց գիմացա։

— Ի՞նչ կար Արդերիլում։ Տեսա՞ր նրան։

Ես անհամբեր դարձա։ Հորաքրոջա թռո Մելիք Բախտամը
կալանգված է Արդերիլի աշեղ բանտում։ Ամունը նրան տե-
սա Դիզակում՝ իր պապ Մելիք-Ավան-Եզան իշխանի՝ Դոռող
քերդում։ Նայում էի ու սրանշանում՝ զահել, կորովի տղա է։
Առաց՝ իրրահիմ խանի զորքը նորից վրա տվեց մեր զյուղե-
րին։ Ինձ տարավ մի նկուզ։ — Ահա... նկուղում երևի մի շորս
հարյուր հրացան էին դարսված՝ կույտ-կույտ։ — Խանի մարդ-
կանց զենքն է։ Մի մասին կոտորեցինք, մի մասը փախազ։ —
Պահում ես որ ի՞նչ։

Հարազատս՝ Մելիք Բախտամ իշխանը պարսից շահին
նամակ է ուղարկում։ «Եա՛, շատ ես քըս անում իրրահիմ
խանին իմ դեմ։ Զգուշացիր։ Ի վերջո իրրահիմ խանը նեն-
գորեն ձերրակալում է Մելիք-Բախտամին։ Դե, ի՞նչ։ Պար-
սից շահը իրրահիմին գրում է թե ինձ տուր խիզախ մելիքին։
Տայիս է։ Հիմա կալանված-շղթայված է Արդերիլի բերդում։
Առում են աշխարհում նման սարսափելի բերդարանտ շկատ։

Ես Թուրի Արզումանին հարցրի՝ տեսա՞ր Բախտամին։

— Անհնարին էր։ Բերդը բաղաքին գրեթե կից է, դաշտ
տեղ, Վերանում շատ բարձր լեռ է Սավալան, գագաթներին
մշտական ձյուն։ Բերդը հսկում է մի ամբողջ գունդ զորք։
Մեր հայերը, որ Արդերիլում հարյուր տուն էին, շկարողա-
ցան թափանցել բերդի ներս՝ Բախտամին ազատելու, թեև
շատ շանացին ու կաշառը շատ տվին։ Մուրացիկի դռնով մի
ամբողջ ամիս թափառեցի Արդերիլում։ Նույնիսկ թափանցե-
ցի Ծեյխ Մեֆիի ու նրա եղբայր՝ Եա՛ Խամայիլի գերեզման

մզկիթը, որ ուստատեղի է շիա պարսիկների համար: Ետեկա դատարկ, մինչև թավրիգ՝ հինգ օրում:

Դիզակի ողնաշարը նորից կոտրված է: Խնձորքախտ վիճակ: Պարսիկները Դիզակի վիզը ուռեցին, դրին իրենց ծնկի տակ:

— Իսրայել կաթողիկոսի մատը խառն էր այդ գործին, — ասացի ես: Վերջապես սատկեց:

Իրրահիմ խանը խարեւությամբ Շուշի հրավիրեց նաև գրժախտ ու միամիտ Հովհաննես կաթողիկոսին: Իր մի ծառայի միջոցով նրան թունավորեց, սպանեց: Մեռնող կաթողիկոսը գոռացել է: — Այ մարդիկ, այ հայեր, աստծու սիրուն, մի հավատք Իրրահիմ շանը: Մի հավատաք թուրքին...

Մելիք Մեծումը քմծիծաղեց:

— Ասում են, բայց՝ հավատում: Աստված մեր ազգի գըլխից հանել է խելքը:

Այդպես է, դառը մտածեցի ես: Հովհաննես կաթողիկոսը խարվեց, հավատաց իր Ալավերդի անունով եղբորը, իր հինգ այլ եղբայրների հետ գնաց ընկազ Իրրահիմ խանի թակարդը: Հուրիգադ խանումը անձամբ ընդունեց հայ եղբայրներին: Զեռքը մեկնեց Հովհաննես կաթողիկոսին: — Շատ շմտենաս քո ալղծությամբ, է՞յ, ավանակ ծեր: — Հոհում է ետին լրրի պես: Ապա հրամայում է կապոտել կաթողիկոսի եղբայրներին: Հա՞... Աչքս լույս: Գու Գաբրիել բեկ, ուս Դանիել բեկ, զու Խորայել բեկ, զու Միսայիլ բեկ, զու Զալալ բեկ: Թագավորական զարմ եք, թե էլ ինչ իշխ օմբա: Ես ինքս եմ իմ մատներով ձեզ խեղզելու: — Կաթողիկոսը անզոր որոտում է՝ բայց չէ՝ որ զու, կին, քրիստոնյա ծնողներից ես ծնված: — Հուրիգադ խանումը փեշի տակից հանում է սուր դաշույնը ու նրանով ժակժկում կաթողիկոսի երեսը, մարուքը, աշքերի տակերը: — Կանչիր քո բիճ Թրիստոսին, թող գա քեզ փրկի եթե կարող է: Կանչիր... Աղվանից տան կաթողիկոսը պետք է միայն Ամարասի Խորայելը լինի, վերջացավ: — Եղբայրներին ինք ամիս պահել է բանտի խցերը և խոշտանդին նրանց: — Եթե ապրել եք ուզում, ուրացեք: Եթե ապրել եք ուզում, Գանձասարի ձեր որդը ինձ պետք է տարին հարյուր հազար թուման վճարի: Եթե ապրել եք ուզում: — Եղբայր-

Ներից շէին բանտարկել միայն մեկին՝ Ալլահնվերդի քեկին։
— Նորից գավաճան։ Նորից գավաճան, — մոմեղեն մատ-
ները կոտրատել սկսեց Երնջիկ տիկինը։ — Մինչև ե՞րբ։ Հու-
րիզադ խանումը գավաճանին պահում է իր հարկարաժնում...
Փառքի մեջ։ — Շան ցեղ է Ասում են Խորայել կաթողիկոսին
ևս սիրական է պահել։ Մեկը սատկեց, մյուսը՝ կա:

* * *

Առավոտյան գերագահ Մելիք Մեծլում իշխանը ասաց։ —
Գեանը Գանձակի Ռուսաց կայսրունու զորքը, գեներալ Բուռ-
նաշղովի հրամանի տակ հասել է Պարտավ, մոտենում է Գան-
ձակին։ Ես՝ օրհնեցի նրա ու նրա մարդկանց հանապարհը և
նամիա զրի հույսով։ Իշխանները գեացին իրենց զորախմբի
հետ։

* * *

Մենք դեռ շէինք հասել գեներալ Բուռնաշղովի բանակած
վայրը, երբ մեր ետեից հասավ հայոց այրուծին։ Դեներալ
Բուռնաշղովը հրամայեց զրոշակ պարզել, նվազախումը հանել
առաջ։ Մելիք Մեծլումը զուսց իրենց զորախմբի
հետ։

— Կնանց որչն էիր մտել, հա՞, Արրահամ Երևանցի։
Քեզնից առաջ իմացա ոռուի զալը։

Ես ահ ունեցա նրա բարկությունից։ Հիշեցի Գոհար միանձ-
նունու արտունզը՝ Էլին՝ խարմելու եք զեռում։

Վեհ ընդունելությունից հետո գեներալ Բուռնաշղովը Մե-
լիք-Մեծլումին ու Մելիք-Արովին ճաշկերույթ տվեց։ Ես էլ
մասնակից եղա զրան։ Մելիք-Մեծլումը գեներալին ասաց։

— Ի՞նչ եք առում, պարոն գեներալ, կտրե՞նք ձեր հացը,
թե՞ ոչ։ Ա՞յժմ էլ պետք է դատարկ հույսերով կերակրեք մեզ։

— Բայց ես ահա Հայաստանում եմ, — ասաց Բուռնա-
շղովը։ Ահա իմ զորքը։ Մտնենք Գանձակ, նոր։

— Գանձակը միշտ էլ մեր ձեռքին է, պարոն գեներալ։
Հենց հիմա էլ կարող ենք մտնել քաղաք։

Մյուս օրը մենք՝ հայերս ոռուական զորքին առաջնորդե-
ցինք Գանձակ։ Մեր քաղաքի ժողովուրդը խալ ու խալվառ-
ներով, մատաղի դաներով ելավ ոռուներին ընդառաջ։

Երրորդ օրը մելիքները գեներալին հարցրին, թե նա ինչ-

բա՞ն զորք կտա իրենց: Կամենում են զնալ Շուշվա վրա, այստեղից վտարել գող իրրահիմ խանին: Գեներալն ասաց՝ շորս հազար զինվոր կտա, նաև թնդանոթներ: Մենք խիստ գոհ մեացինք: Գեներալն սկսեց պատրաստել զորքը:

Քաղաքում հայտնվեց Ասպարու տիկինը ինձ գտավ: Եկեղեցում էի:

— Ինձ տար Մելիք Մեծլումի մոտ: Շտապիր:

— Ի՞նչ կա:

— Աղետ է:

— Ի՞նչ:

— Շտապիր, — զրեթե ճշաց Ասպարու — Կիմանաս, կիմանաս...

Մենք վազեցինք Մելիք-Մեծլումին գտնելու: Գտանք՝ իր կացարանի բակում ետ ու առաջ քայլելիս: Մտահոգ էր, բայց ոչ հուսահատ, կարծես նաև խանդավառ էր: Ասպարու տիկինը քրբրվելով ասաց.

— Ներող եղիր, իշխան իմ: Սանր լուր եմ բերել:

— Ի՞նչ, — ցնցվեց Մելիք-Մեծլումը: — Ի՞նչ...

— Իրրահիմ խանը պարախկ զորքով մտավ Զրաբերդ ու Գյուլիստան: Մայրդ մեզ մոտ էր, եկել էր Գոհար միանձնուն հուն այցի, թուղթ էր բերել նրա մատյանի համար:

— Սպանվեց, — Համբերեց, գոռաց Մելիք-Մեծլումը:

Հանկարծակի ճգնարան բարայրի առջև երեացին խանի մարդիկ, Գոհար միանձնունին կանգնեց մուտքի առջև: — Ջհամարձակվե՞ք ներս մտնել: — Հանեց ատրճանակը, մյուս ձեռքին խաշ էր: Սպասեց.

— Ե՞տ դառեք, շուտ...

Խանի մի յուզբաշի կրակեց նրա վրա, սակայն վրիպեց: Գոհար միանձնունին իր ատրճանակով նրան ոլորեց ձիուց: Եվս երկու հոգու սպանեց, բայց ինքն էլ ընկավ: Ես վերցրի նրա ատրճանակը, որպեսզի պաշտպանեմ քո մորը, Մելիք-Մեծլում, նրա փոքրիկ թոռնիկներին, սակայն եանի ավագակները ապանեցին բոլոր ութ միանձնունիներին, իսկ քո մորն ու երեխաներին փաթաթեցին, տարան: Ես, որ սպանված էի ձեռքրել ինձ, նրանց հեռանալուց հետո թաքառոցից հանեցի ձիս ու ահա եկա... Ճանապարհին խանը արշավել է Թառինցի վրա, թեե շի կարողացել կոտրել թառին-

շեցիների դիմագրությունը, առաջին ինչ-ինչ հնարքով հափշտակել է նաև Մելիք-Արուժի կնոքն ու փախցրել:

Զարմանալին այն էր, որ Ասպարու տիկնող այս գույժը Մելիք-Մեծլումը լսեց սառնասիրտ, առանց զփոթվելու նազաց գեներալ Բուռնաշովի մոտ:

— Զորբը տվեր, գեներալ! Եռշին իմ հերն անիժում է: Մայրս գերի է...

— Առավոտյան կատանաս ու կշարժվես:

Գիշերվա կեսին լսեցինք Մելիք-Մեծլումի աղաղակը:

— Նորից խարեցին:

Թոլորս գուրս թռանք մեր կացարանեներից: Մարտի աղոտ լույսի տակ ամբողջովին կարմրած կանգնած էին մելիքները. Բուռնաշովը և էլի սպաներ: Գեներալը ձեռքերը տարածեց.

— Ի՞նչ կարող ես անել նախախնամությանը, չար բախտի հետ: Մենք ստիւդած ենք հենց այս պահին հեռանալ Հայաստանից, հայեր: Մի՛ հուզվեք, մի՛ տրտմեք: Թուրք սովորանի բանակները ծովի կողմից արշավել են մեր երկրի հարավային նահանգները:

Թուսական զորքը հեռացավ դեպի իր երկիրը, մենք՝ դեպի Ճրաբերդ, Մոռվ լեռան պնդոցները: Ծանալարհի կեսին Մելիք-Մեծլումը թուրի Արզումանին ասաց.

— Նորից հազիր մուրացիկի քրծերդ, Թուրի Արզումանը Շտապ մեկնիր Աստրախան՝ Հովսեփի արքեպիսկոպոս Արզությանի մոտ: Գնա, հասիր, ասա թուսաց կայսրուհուն, որ իր պատճառով Հայաստանը կործանվում է:

Թուրի Արզումանը հարցրեց՝ միայն այդքա՞նը:

— Ուրիշ ոչինչ:

Մի ամիս հետո միայն ետ եկավ Թուրի Արզումանը: Գահաժողովին նա զեկուցեց իր կատարածի մասին, զերդում ասաց.

— Կայսրուհին խորհուրդ է տալիս ձեզ՝ Մելիք-Մեծլում ու Մելիք Արով, որ գուրք ձեր ժողովրդով տեղափոխվեք Դերբենդ: Ասաց ես ձեզ հող կտամ և թոշակ և շատ դյուրություններ:

Մելիք-Մեծլումը մազիլներով խրվեց Թուրի Արզումանի կոկորդը:

— Ի՞նչ պատասխանեցի՞ր: Ի՞նչ...

— Ասացի՝ շենք գա, — գոռաց հարյուրապետը։ Ասացի՝
շենք գա՛...

Մելիքը նրան բաց թողեց, հևաց.

— Այդպէ՛ս...

Երկար լոեց։

— Միայն այդպէ՛ս...

* * *

Թուրի Արդումանը իր ձիավոր հարյուրակը տանում է թրզի կիրճի նեղոցներով։ Նրա հետ եմ նաև ես ու իր կինը՝ Երնջիկը։ Գնում ենք իծաշարուկ, արահետը շատ նեղ է։ Երբ անցնում էինք Գոհար միանձնուշու ճգնարանի մոտով, Ասպար տիկինս ասաց, թե հոգիվները Գոհարի մարմինը թաղել են այստեղ՝ իր ճգնարանի մոտ, թզենու տակ։ Մի քիչ թեքվեցինք ձախ։ Մենք արահետի վրա ձիերի ոտնահետքեր նկատեցինք։ Երնջիկն զգուշացավ՝ ո՞վ կարող է անցած լինել այստեղով։ Ոտնահետքերը շատ էին։ Հարյուրապետը հրամայեց կանգ առնել։ Մի զինվորի պատվիրեցի ձիուց իշնել ու առաջ գնալով՝ իմանալ ինչ կա վերեւում։ Զինվորը գնաց ու ետ եկավ իսկույն։

— Իրրահիմ խանի մարդիկ են, երկի երեսուն ձիավոր։ Մեջները նկատեցի նաև ճըռ մելիք Ղահրամանին։ Մի մեծ թզենու տակ հողը արագ-արագ փորում են։

— Ահա՝ — ձիուց իջավ նախ Երնջիկը։ — Անշուշտ խանի մարդիկ եկել են Գոհար միանձնուշու գերեզմանը պղծելու։ Բոլորս հետիոտն դարձանք։ Հրացաններս մարտի բռնած, թշների ու ժայռերի արանքով աննկատ մոտեցանք ու շրջապատեցինք թզենին։ Այս, ահա Մելիք-Ղահրամանը շտապեցնում է գերեզմանը բաց արած, արդեն դագաղը հանած թուրքերին։ Մենք աղեղվեցինք ու հրացանային միահամուռ կրակ տեղացինք գերեզմանագողերի վրա։ Տղաներից մի քանիսը թռան դեպի ավագակների ձիերը, որ կապոտած էին մի փոքր կողմ ու կրակոցներից խրանել էին։ Այդտեղ էին նաև նրանց հրացանները։ Խանի մարդկանցից ոմանք փորձեցին սրերով դիմադրել, բայց տեսնելով, որ անիմաստ է, հանձնըցին։ Նրանցից բանվեցը Իրրահիմ խանի ցեղակիցներ էին, շորաը՝ Մելիք-Ղահրաման գավաճանի մարդիկ։ Իրեն

սաստիկ ողորմելի պահեց Մելիք Ղաջրամանը։ Երեզիկ տիկինը բռնեց նրա ուսերը, ցնցեց։

— Դոնե սատկելուց առաջ քեզ տղամարդ պահիր, դավաճան։ Զէ որ երևելի կնոշից ծնվածն ես, աղնիվ արգանդի պատուլը։ Ինչպե՞ս եղավ։

Նրանք մեզ ներկայացրին քստմնելին։ Հուրիզադ խանումը կանչեց ինձ։ Դու, Մելիք-Ղաջրաման, որ ոչնչությունից իշխանություն ստացար իմ ու իմ ամուսնու ձեռքից, դարձար Խաչեն աշխարհի կեսի տերը, այժմ պետք է կատարես կամքը։ — Պատրաստ եմ, մեծ խանում, — ծունկի զալով ասացի ես։ — Զիննը աշխարհ է եկել, — ֆշշաց ահեղ տիկինը։ — Զիննը՝ Քրիստոսի բողի կերպարանքով։ Ո՞չ Մարիամ, ո՞չ, այլ՝ Գոհար։ Միանձնուհի, հնում իշխանուհին։ Մեռել է Թաղած տեղը… Ես քեզանից պահանջում եմ նրա մարմինը հանել, գլուխը կտրել ու բերել ինձ։ Ես իմ ոտքերի տակ դրած պիտի պահեմ նրա գանգը…

— Այսպես եղավ, մարդիկ, — աղաղակեց Մելիք-Ղաջրամանը։ — Այսպե՞ս։ Վայ ինձ, վայ իմ գլխին։

Խանի մարդկանց կոտորեցինք սրերով՝ անխնա։ Միայն մեկին պահեցինք՝ զնա Շուշի, լուրը տար քո տիրութուն։

Մենք բաց արինք Գոհար միանձնուհու դագաղը։ Տակավին թարմ էր սրբունու մարմինը։ Նրա կրծքին, խաչի հետ դրված էր նրա գրած Հայոց պատմության մատլանը։ Երբնշիկը թերթեց զիրքը, հողի փոշին հեռացրեց վրայից։ Դրքի վերցին տողերը ցնցող էին։ — Ո՞հ, ավաղ աղետալիր տեսությանս մերու և վատարախտ թշվառությանս…

Այսպես հողի մեջ թաղված էր Հայոց Պատմությունը։ Երեզիկը մատյանը փաթաթեց մետարսեց քողերով ու դրեց ծոցում։

Մենք Գոհար միանձնուհու մարմինը նորից պատանեցինք, օծեցինք խնկով և կընդրուկով ու հին տեղից բավականին հեռու տանելով, թաղեցինք թաքուն ու խուլ մի տեղ, որպեսզի թշնամիները չիմանան։

* * *

Մելիք-Մեժլում գերազանց ինձ ուղարկել է Գանձասար։ — Գահը թափուր է, խոշա Արրաջամ Երևանցի, — ասաց ինձ։ —

Դուցե թե վանականներիցս մեկին հարմար գտնես, ուղարկենք էջմիածին՝ կաթողիկոս օծելու:

Եվ ահա ութ-տասը օր է, ինչ ևս Գանձասարում եմ: Երկիրը տագնապի մեջ է: Գերազահը դորբով գտնվում է Արաքածի հովտում:

Առավոտ էր, Գանձասարի մոտ անսպասելի երևաց Իրաշիմ խանի մի զորայումը երեխ հազար ձիավոր: Նրանց առաջնորդում էր խանի տիկինը՝ Հուրիկադ խանումը: Զիու վրայից նա գոռաց:

— Կործանե՞լ, կողոպտել ապականության այս տաճարը: Բոլոր սևազգեստներին ոչնչացնել:

Ես՝ դժբախտս փախա մտա անտառ, բարձրացա մի հըսկա կաղնու զագաթը, թաքնվեցի ոստերի մեջ: Իսկ թե ինչ կատարվեց վանքում, միայն տերը կարող է ներկայացնել ձեզ, ո՛, դժբախտ արարածու: Խանի մարդիկ՝ խանի կին Հուրիկադի հրամանով ու զլիավորությամբ, նախ կոտորեցին վանքան եղբայրներին՝ մեծ-փոքր: Խուժեցին վանքի զրադրոցը, սկսեցին մորթել, գնդակահանարել, խողիսողել պատանի սաներին, ծեր ռարուններին: Արյունը շատրվանում էր նրանց մարմիններից: Վանքի բակում, հենց ձիու վրայից, Հուրիկադ խանումը մերթ ատրճանակով էր զարկում անզեն, շփոթված մարդկանց, մերթ սրով հատում մեկնումնեկին: Նրա զորքը, որ, այս, երեխ հազար հոգի էր, խուժեց տաճարները: Սկսվեց վայրենի կողոպուտ, ինչ ընկնում էր ձեռքերը՝ թալանում էին, հափշտակում, ջարդում, նույնիսկ մի թել շթողեցին՝ գորգ, կապերտ, արծաթե ու ոսկե սրբություններ, բոլորը հափշտակեցին: Մտան վանքի գրապահոցը, այնտեղ եղած երեխ հինգ-վեց հազար մատյանները, որոնցից շատերին ծանոթ եմ, հափշտակեցին, լցրին խուրցինները, շվալները, պարկերը, բեռնեցին իրենց ձիերին: Ապա խուժեցին ամբարները, ինչ ուտելիք կար՝ ցորեն, ալյուր, յուղ, դարձյալ հափշտակեցին: Սկսեցին պլոկել սպանված վանականների զզեստը, զրանց մորից մերկ թողնելով: Հուրիկադ խանումը սահպ-ստեպ ճշում էր:

— Ոչնչացրե՞ք:

Հարյուրավոր յուզային նկարներ պոկեցին պատերից ու ոտնատակ տվին:

Այս ամենը կատարվեց զարմանալի արագ, դժուայինին խառնիճաղանջի մեջ։ Կեսօրին Հուրիզագ խանումը հրամայեց վերադառնալ։ Զորքը, որ խստ ծանրացել էր կողոպուտով, լեշ կերած անգղների դանդաղությամբ սկսեց վանքից հոսել դեպի ներքն՝ Խաչեն գետի հունը։ Դնում էին հետիոտնի։ Բոլոր ձիերը բեռնված էին կողոպուտով, իրենք՝ զինվորները ևս ծանր-ծանր շալակեներ ունեին։

Ես իշխ կաղնու զլիխից ու որոշեցի փախչել դեպի Զրաբերդ, լուրը տանել Մելիք-Մեծլումին։ Սակայն նոր էի հեռացել արահետից, երբ նկատեցի Զրաբերդի հեծելազորը։ Դրա առաջից սլացքով գալիս էր հարյուրապետ Թուրի Արզումանը՝ կնոք հետ, որ նույնպես զինված էր ու տղամարդու զգնստով։

— Է՞յ, է՞յ... — Թուրի Արզումանը գոռաց վրասի — Ո՞ւր կորան։

— Վանքը լիովին կողոպտել են ու հեռանում են դեպի Խաչենի հովիտը։

Ես բռնեցի նրա ձիու ազին ու վագեցի խելազար։

— Ո՞վ զորքը բերեց։ Ո՞վ։

— Իրրահիմ խանի կինը Հուրիզագ խանումը։

Եզ ինչ երկար բանեմ, քանի որ իմ պատմածներից, ո՞վ մարդիկ, զուք տեսնում եք եղելության պատկերը և մտովի ձերը հորինում։

Թուրի Արզումանի ձիավոր զորքը, որ երեխ հինգ հարյուր հոգուց էր, հանկարծակի, բոլորովին անսպասելի գրոհեց կողոպուտի բեռներով ծանրացած մկուած խանական խառնախուժան ամբոխի վրա ու սկսեց կոտորել...

Մի նոր գժոխքի ականատես եղա։

Զորքի առջեխց գնացող Հուրիզագ խանումը, որ յոթ-ութ թիկնապահ ձիավորի հետ էր, տեսնելով իր զորքի կործանումը, մտավ ձիու ականջը ու քշեց փախուստի... Մի երկու հայ ձիավոր փորձեցին հանել նրան, սակայն սարսափելի կինը ագռավի նման ու ճախրով հեռացավ, անհետացավ հովտի թանձր անտառների մեջ...։

Մինչ այս, մինչ այն, ամառային երկար օրը մթնեց...

Եռաշվարերի դարպասները շտապով քացեցին: Զիու
վրայից Հուրիզադ խանումը հնաց, ընկալ ներս:

— Դալի՞ս է, դեք գալի՞ս է: Դռները փակե՞ք: Դալի՞ս է...
իբրահիմ խանը տագնապով ընդառաջ գնաց նրան:

— Ի՞նչ է, ի՞նչ է:
Տիկինը անզոր կախվեց ձիուց: Խանը նրան գրկեց:

— Ի՞նչ է...

— Եռև շան որդի Թուրի Արզումանը մեղ կոտորեց՝ մեղ,
անմեղներիս: Թուրի Արզուման գյավուրը: Ի՞նչ էի արել ախր...
Գնացել էի իմ իբրավունքը վերցնելու:

Քաղաքը դղրդաց: Պարհապների վրա գետքեր դրին, դար-
պասները պնդեցին կրկնակի:

Հուրիզադ խանումը լողացավ քաղանիքում, հագնվեց,
օծվեց, հնդկահավի շքեղ փքվածությամբ սեղան նստեց:

— Եարբաթ կուզեմ...

Նրա համար անուշ ըմպելիք լցրեց ամուսինը: Նա խմեց,
շոյեց ամուսնու մորուքը:

— Ամեն ինչ արդեն հաջողել էի: Մենք ահազին ունեց-
վածքով հանգիստ տուն էինք դառնում, երբ...— Նա հանկարծ
ծառս եղավ տեղը:— Բերեք Թուրի Արզումանի քածին, Բե-
րե՞ք...

Ներս բերին իշխանուհի Կամար-Սոլթանին: Արդեն տա-
րիքն առած էր, սակայն տակավին ուղիղ էր քայլում, գլուխը
լուսավորված էր խիտ ու ձյունաճերմակ ծամապսակով: Հա-
գուստը կալանավորի ցնցուիներ էին: Իբրահիմ խանը մի
քանի շարաթ առաջ նենգությամբ նրան ձերբակալ էր
արել, երբ տիկինը գնում էր Ամարաս՝ սուրբ Գրիգորիսի
գերեզմանին ուխտի: Նրան բերել են Եռաշի, բանտ դրել,
իբրահիմ խանը լկտի ասել է. գնա բանտ նստիր: Թող քա
ռուսը գա ու քեզ ազատի:

Կամար Սոլթան իշխանուհին դանդաղ առաջ եկավ:

— Բարի լույս ձեզ, մարդիկ:

Հուրիզադ խանումը ձեռքի շարբաթի գավաթը խփեց նրա
մարմարե ճակատին:

— Զհամարձակվե՞ս, քավթա՛ռ, կտրիր շնային լեզուց:
Իշխանուհին ափով մաքրեց ճակատի արյունը:

— Ասում եմ բարի լուս:

Հուրիզադը ծառս եղավ, զոտու արանքից պոկեց կարճ խանչալը:

— Ի՞նչ մահ ես ուզում, սարուկս:

— Միայն ոչ ստրուկի մահ,— Հանդարտ պատասխանեց Կամար Սոլթանը, նորից մաքրելով ճակատի արյունը:— Ստրուկը դու ես, Հուրիզադ խանում: Նաև շմտածես, թե ես, որ արդին աստծու պատժով գերի եմ, կերկնչեմ մահից: Ո՞չ... Ահա իմ վիզը, ազգուրաց քա՛ծ, կտրիր:

Խանուհին խանչալը շեշտակի մխրճեց նրա սիրտը, բռնեց, որ լընկնի, նորից Հարվածեց կոկորդին: Նստեց, հեաց, նորից շարրադի խմեց:

— Եղիր Հանդիսաւ, ամուսին իմ: Եվեղների թագավորը հարձակվել է գյավուր ոռւսների երկրի վրա: Պատերազմ է հեռու հյուսիսում՝ մեր օգտին: Ռուսաց Պոտյումկին իշխանը շտապել է մեր բարեկամ օսմանլու սուլթանից Հաշտություն խնդրել: Ռուսները հեռանում են Սև ծովի ափերից: Մեր թշնամի հայը մնաց մենակ: Զեռքդ պարզիր թուրք սուլթանին ու սուրդ խոր մխրճիր Հայաստանի կուրծքը:

* * *

1795 թվականի ամռանը Հայաստանի արևելքում տոթակեց ու խորշակաշունչ էր: Հողը ճաքճել էր, զետերի ջրերը նվազել էին: Գարնան հմայքները մի գիշերում խանձվեցին:

Զիս հետապառ մոտեցավ Զրաբերդի մեծ դարպասին: Աշտարակի վրա կանգնած էր Մելիք-Մեծլումի տիկինը՝ մեծ զավակի՝ արդին նշանվելու տարիքին հասած որդու հետ: Նա մեռոնած հացանշխար էր զցում թրղի գետի նվազած ջրերի մեջ՝ երկնքից աղերսելով, որ ջուրը չցամաքացնի: Որդին թեթև ժամանակ:

— Հավատո՞ւմ ես, մայր:

— Հավատ քո կեցուցի զքես,— երկյուղած ասաց տիկինը:— Հավատա:

Տիկինը նկատեց ինձ: Երևի շճանաշեց, դրանից էլ բռնեց սիրտը: Որդու հետ նա շտապեց ետ: Նրա տեղը երևաց ինքը՝ Գերազահ Մելիք-Մեծլում իշխանը:

— Մի՛ տազնապեր, — ասաց յուրայիններին: — Եկողք բարեկամս է՝ Արրաջամ Երևանցին:

Ես գալիս էի Վարանդայից: Ինձ ուղարկել է Վարանդայի Մելիք-Զումշուդ իշխանը: Դոները բացվեցին ու ևս մտա լինան գագաթին: Ժանր ու մեծ նստած բերդը, իշա ձիուց: Զիս ինքն իրեն զնաց գետից ջուր խմելու Խմեց, կանգնեց Հսկա ընկուզենիների տակ՝ հոգնածությունը պարպելու Ես մոտեցա գերազանցին:

— Պարսից բանակ է անցել Երասխը, մտել Հայաստան... Բերում է Աղա Մամադ Ախտա շահը:

— Ո՞վ է, ինչ է:

— Ղաջար ցեղից է: Ներքինի է, կոտվել է:

Գիտեմ, տեսել եմ նոր շահին: Ներքինի է: Նրան կոտել են, երբ զեռ վեց տարեկան զյադա է եղել: Հիմա հիսունն անց կլինի, ներքինի կոտած-ախտա:

— Ախտա շահը:

— Այդպես, տե՛ր զերազահ: Ինձ ուղարկեց Մելիք Զումշուդը:

Մտանք ապարանք: Շտապ հավաքվեցին զորապետները, զյուղերի տանուտերները, երնի մի հարյուր հոգի:

— Հզո՞ր է, — հարցրեց զերազահը: Հասկացա շահի բանակի մասին է հարցելում:

— Հարյուր յոթանասուն հազար զորք ունի հետք:

Աղա Մամադը, դեռ խան եղած ժամանակ, մի տարի առաջ, նվաճեց Երանի Քրման քաղաքն ու նահանգը: Ահեղ ներքինին Քրման քաղաքի քան հազար կանանց ու աղջիկներին, բոլորը պարսկուհիներ, գերեց, բաժանեց իր զինվորներին՝ մի կին յոթ-ութ զինվորի: Մարդ արարածի նկատմամբ կատարյալ գազան է, իրեն կոտել են, զրկել տղամարդկությունից, կին վայելելու հաճույքից: Քրմանում հանել է յոթ հազար պարսկիի աշքեր, ձեռքով սկսել է համրել ու կշեռի վրա կշռել այդ յոթ հազար զույգ աշքերը:

— Ո՞րն է արյունկզակի նպատակը:

— Նվաճել Հայաստանն ու Վրաստանը, — պատասխանեցի ես: — Գնում է ոռուներին վոնդելու Դերբենդից, Սև ծովի արենլյան ափերից: Ասում է ես Մոսկվան իմ ձիերի ախոռը կդարձնեմ:

— Օհո՛, — թքեց Մելիք-Մեծլումը: — Կոտած էշիդ ախոր-ժակին նայիր...

— Երեղակից, Գողթանից, Նախիջևանից Հայերը գլխա-պատառ փախչում են:

Մելիք-Մեծլումը զրեթե կծկվեց թախտին: Երկիրը դա-տարկվում է իր բնիկ տերերից՝ Հայից: Խնձ անել: Այս հար-ցը սառցե զնդի պես դեմ առավ նրա կոկորդին: Նաև պա-տասխան կա՝ դիմադրել: Խելահեղ վճիռ ծնվեց գլխում՝ գրա-վել Շուշին, ամբանալ այնտեղ: Կհաջողի:

— Հույս աստված, — քնքանքով ասաց նրա կինը, — Պետք է Հաջողել:

Ինձ հետ իր վճիռն էր հատակում Մելիք-Մեծլումը, երբ դադանի Շուշի գնացած թուրի Արզումանը ետ եկավ:

— Իբրահիմ խանը Շուշուց փախավ Աղա Մամադ շահի մոտ, — Հայտնեց նա: — Հետը տարավ զորքի կեսը: Գնաց՝ Աղա Մամադին Շուշի բերելու:

Վճիռը դարձավ անկասելի՝ գրավել Շուշին:

* * *

Լուսաբաց էր:

Քիրս լեռան կապերով հայոց զորքը մատենում էր Շու-շուն: Բերդաձոր մեծ զյուղից վերև, մի հարթ բացատում, ուր հացի արտեր էին ու անտառը ետ էր քաշված, ևս ու զորքի առաջակալ Թուրի Արզումանը փոշու ամպեր նկա-տեցինք: Հեծյալ հարյուրակը շարունակեց բարձրանալ ժայ-ռախեղդ արահետով:

Շուշի քաղաքը կծկվել էր քարե պատյանի մեջ: Աշքը ար-յունով լցված նայում էր հեռու հարավի ցածր հորիզոնին՝ փո-շու ամպեր երևո՞ւմ են: Իբրահիմ խանը իր մեծ տիկնոց հետ վաղել է Աղա Մամադ շահի զիրկը՝ նրա ամքած անուկները լվանալու: Հիմա նրան ետեր գցած բերում է Շուշի: Փախել է, իրեն փոխարինող թողել իր մինքաշի նայիրին: Թուրք է՝ փրկված, ուռած ինքն իրենով: Մի քանի օր առաջ քաղաքին մոտիկ հայոց զյուղերը ներխուժել են քաղաք՝ ախտա շահից առ ունենալով, նրան դեմ կանգնելու բերդից: Նայիրը հրա-մայել է Հայերի առաջ փակ պահել բերդի դռները, բայց քա-զաքի հայ ժողովուրդը փոթորկվել է նրա դեմ:

Մելիք Զումշուղը մի հարյուրակ ձիավորներով մըրկեց
իր քրոջ ամուսինի խանի պալատի առաջ

— է՛լ, է՛լ, նայիք ես, թե ինչ զիրիլ, ձեռքդ քե՛զ պահիր,
գու ո՞վ ես, որ իշխանություն ես բանեցնամ: Այս քաղաքի
իմն է, հայինն է: Հեռու...

Ինքն իր ձեռքով զնաց բաց արեց քաղաքի գոները: Մէնք,
ոք տասը հազարից ավելի էինք, մատեր բերդաբաղաք:

Նայիք մինըաշին փորձեց իրեն թողած զորքով զիւլադիք
կանգնել, սակայն քաղաքացիները մեծամբով զրոհով զիւլա-
թափ արին նրա զորքը, շատերին սպանեցին: Նայիք
գլուխը ջնջեցին բարով:

— Սատկի՛ր, գու էլ, քո իրրահիմ խանն էլ: Քնացել է
մարդակեր Ախտա շահին է բերում մեզ վրաւ կատկեց-
նե՞նք...

* * *

Մի երկու շաբաթ հետո, զորապետների խորհրդի ժողո-
վում Մելիք-Մեծլումը պարզաբանեց վիճակը:

— Ազա Մամադ շահը զալիս է Հայաստանը կործանելու
Նրան մեր զեմ քըս է տալիս օսմանլու սուլթանը: Հա՛, իմա-
ցեք, շահին գրգռում են նաև Ավատրիայի թագավոր-կայզերը,
ֆռանկի պարոնները: Նրանց գործակալները Ազա Մամադ
շահի մոտ են: Մենք կդիմազբենք, թեկուզ ասոված զա մեզ
վրա:

Տագնապեների մեջ եռում էր Հայաստանը:

Մելիք Մեծլումը հրաման ուղարկեց գաշտում մնացած
զյուղերին՝ շատապ քաշվեցնք գեպի կառկառ գետի վերևներին
ու Քիրսի ծերպերը, պնդացնք այնտեղ: Դաշտի բոլոր զյու-
ղերը կազմ ու կուռ, պարեն-պաշարով բարձրացան լեռները,
խմբվեցին անմատշելի կիրճերում:

Պարսից բանակը ծանր նատեց Եռշվա երեք կողմերին՝
ձորերի մեջ, լեռան լանջերին: Բանակը, իրրահիմ խանի ա-
ռաջակալ զորախմբով, միարձվեց բերդի պարիսպներին մոտ
եղած խանգակները, անհամար վրաններ ու շյուղերից հյու-
սած քողարիկներ շինեցին:

Ակսվեցին ծանր, տեսական կոիվենք: Երբեմն նոյնիսկ
զիշերն էր թշնամին հարձակմում, փորձում պարիսպների
մեջ ճեղք բաց անել:

Պարսից բանակը համալիր զորք ստացավ: Նաև եկան թափառական ցեղերի անհամար խմբեր՝ իրենց բազմությամբ ահ աղջելու մեջ՝ հայերիս վրա: Դե, ի՞նչ կարող էս ասել, իրրահիմ խանի վեզր նորից է ալլու կանգնել, զրեթե մեռած տեղից կենդանացավ:

Պարսից զորքերը փաթաթվեցին բազարի պարիսպներին: Եռուշին կրկնակի օդակով պաշարվեց: Թշնամին սկսեց թընքանոթերով խփել բազարին, փորձել փլցնել պարիսպները:

Որերն անցնում էին կրակի ու կովի խառնարանի մեջ: Հաղիվ զիշերներն էր մի փոքր դադարում կոհվը:

Պաշարման բանհինքերորդ օրն էր:

Որեէ տեղից որևէ օգնություն հռւալ Մելիք-Մեժլումը շէր կարող է նա զիշեր ու ցերեկ պարիսպների վրա էր, զինվորների մեջ: Ամեն տեղ նա հետը տանում էր իր պատանի որդուն՝ Աղամամ բնեկին:

Երբեմն Մելիք-Մեժլումի կինը ընկնում էր ամուսնու փեշը:

— Դու Աղամիս ամեն տեղ հետդ մի տար, իմ զլիսաւենք: Աղամամ փոքր է, մեղք է:

— Վախենում ես մի բան պատահի և ես անժառանգութեամ:

— Ջրաբերդի մելիքությունը կհանգչի...

Տիկինը բրբրվում էր, որ ինքը միայն մի տղա զավակունցավ: Որդին համարձակ ու անվախ էր, նույնիսկ տաքաղուիս: Սակայն այս, միակն էր, Մելիք Խորայելյան իշխանական տոհմի միակը:

— Գոնք ամուսնացնենք որդուս, — հաճախ հառաշելով ինձ ասում էր զիհ տիկինը:

Թուրի Արզուման հարյուրապետի զորախմբի հետ ես մեկ-մեկ դուրս էի զալիս բերդից ու նրանց հետ զրոհում թշնամու զիրքերը: Հարյուրապետի կինը՝ երնջկ խաթունը ամուսնու հետ էր միշտ ու ամեն տեղ: Մի անգամ էլ, երբ մեկնում էինք զիշերային զրոհի, տիկինը ծոցից մի մատյան հանեց, տվեց ինձ:

— Գոհար միանձնուհու զիրքն է: Հանեցինք թաղած տեղից: Այնպես արա, որ հայոց պատմությունը նորից շթաղվի: Նման զրոհները մեջ համար միշտ ցանկալի էին, շահական զորքերին մենք բազականին լավ խոցոտում էինք: Հա-

վարում էինք նրանց զենքը, զինամթերքը, նաև ուսելիքի պարկերը ու ետ գառնում: Էլի ապրուստ է: Մկան շեոք, ասում են, քրաղացի ջրին օգուտ է:

Այսպես գրեթե ամեն գիշեր...

ԿՈՒԽ ԶՈՐՈՐԴ

Ամարասի շրջակայքը, որ քիչ տեղ տափարակ էր, սկացել էր պարակական բանակի զանգվածներից: Որոշ ամբոխված զորաբանակներ ու վրանարեակ էին, գագաթներին ձիռն պուշեր՝ ագուցված բարձր ձողերի: Դրանք զորքի պատկանելության նշանակներ էին, մեկի մազերի մեջ կարմիր ժապավեն, մյուսինը՝ սև, երրորդինը՝ դեղին: Վրաններից այն կողմուր ցորենի արտերն էին, թանձր երամակներով արածում էին բանակի ձիերն ու բեռնատար ջորիները, ուղտերի զորշ հորաններ:

Արքայական վրանը տնկված էր վանքից դուրս, նրա պարսպից մի փոքր հեռու, ուր գետակ կար՝ զուլալ ջրով: Բայց հիմա զուրը կատարյալ պղտոր էր, թարախած: Շահի վրանը յոթ գյբեթ ուներ՝ շիա յոթ իմամների պատվին, յուրաքանչյուրը մի գույնի, ինչպես ծիածանը՝ իր ծագման սկզբին: Վրանի առջև, երեսները գեպի վրանի դուռը կանգնած էին Աղա Մամադ Ղաջար շահի զորապետները, երեխ մի հիսուն հոգի: Նրանց մեջ նաև Իրրահիմ խանը: Նրանց խիտ շարքի մոտ, մի քանի քայլ առաջ կանգնած էր մեծ սարգար-զորպահետը: Վրանի մուտքի առջև, ձեռքերը փորին ծալած, հեղ ու խոնարհ տնկվել էի ես՝ շահի քալաթար Մաֆար Ալի Արդուզ Հասան միրզաս: Տեսկվել էի ու աշքիս տակով նայում էի վանքից վերև ոչ հեռու երկարող ցածր լեռներին, որ զանգուրված էին անտառներով ու խաղողի ալզիներով: Երբեմն մի շոր կածան էր ոլորվում նրանց միջով և ինձ թվում էր, թե ես տեսնում եմ մի վեց-յոթ տարեկան հայ տղայի, որ ջորութիւն տերեւ բեռնած տանում է, հրեն, լեռնալանջին պերճացած Սոս զյուղը: Տեսնում եմ: Զորին սպիտակ է, թթիւ տերեք մայիսյան կանաչ, ճանապարհն էլ է կանաչ: Տղան սուլում է իր համար: Մայթն սպասում է, որ տերեւ բերի, շերամի որպք կերակրեն: Հազար, զուցե երեք հազար տարի է, ինչ այս

Հայոց գլուղերում, այս Սոսում շերտամորդ են պահում, մետաքս ստանում, որ տանում ծախում են հեռավոր ծովերի ափերին:

Ես՝ Սաֆար Ալի Աբդուլ Հասան միրզաս գլուխս բարձրացրի: Իմ խալաթի փեշերը ձգվեցին, կարմիր լաթագոտիս կարծես թուլացավ:

Անգղի պես երկու պարսիկ ձիւավոր անցան Սոսի տակով, ձեռքները գցեցին ջորու կողքից գնացող տղային ու տարան...

Հետո հիշում եմ տղայի ճիշը, որին թլպատեցին Սպահանում և... Բայց իր հայ լինելը տղան չի մոռացել: Մոռացել են բոլորը, գուցե նաև իրենց Սոս գյուղը, որ չիմացավ էլ, թե իր զավակին արջ տարա՞վ, թե տափաստանի աճեղբորենի:

Ես ցնցվեցի, տնկվեցի, գոշեցի ձեռքս բարձրացնելով:
— Հնագանդություն և խոնարհություն...

Վաթսուն տարի է անցել: Ես՝ Սաֆար Ալիս հանկարծակի հիշեցի, որ դա այն ուրախ սուլող տղան ե՞ս էի: Ե՞ս էի: Հայրենի տեղերը մտքիս մշուշը քանդեցին, ցրեցին: Ես էի:
— Հնագանդություն և խոնարհություն, — նորից պողպատե ձայնով ազդարարեցի ես:

Վրանից դուրս եկավ Ազա Մամադ շահը, որին նաև եան էինք ասում: Զորապետները երեսնիվայր փովեցին գետնին: Գլխավոր զորապետ սարդարը երկու ոտքով ժունկի եկավ ու ձեռքերը խոնարհ ծալեց զբանագույն մազ, մորուքի պես բան: Ներքինի շահի աշքերը լիքն էին արյունով, նաև անկենդան էին: Ես նոր բան հիշեցի: Երբ շահը քսան հազար պարսիկ կանանց բաժանեց իր զինվորներին՝ ինձ հարցրեց՝ կին կուզե՞ս: Չուզեցի: Ես էլ, ավա՞զ, շահի պես ներքինացված էի: Կին տանիմ ի՞նչ անեմ:

Մեծ սարդարը, շահի ակնարկով կանգնեց: Մյուս զորապետները, որ փռված էին քիթ ու պորտի վրա, բարձրացան, մեացին ժունկի եկած:

— Խոսիր:

Սարդարը ձեռքը պարզեց դեպի լեռան գյուղերը:

— Դիմագրեցին:

— Հայերը:

— Այստեղ միայն հայեր են: Կովեցին: Մեզանից շատերին սպանեցին: Մենք երեսուն հոգու բռնեցինք:

— Մյուսները...

— Երջակայքի ութ զյուղի ողջ հայ բնակչությունը հեռացավ գետի լեռները:

— Բերեց:

Ես վրանից հանեցի ոսկեհուռ, շարժական գահաթոռք Եահը նստեց խշացնելով մետաքսով ծաղկած արքայական բրդամեջ զոնք: Նրա լայն, ոսկեպատ զոտու արանքում հռալանդական երկու ատրճանակ էին խրված, կոթունները ծալված՝ պողահարող խոյեր: Նստեց, ակնարկեց իրրահիմ խանին:

— Բերեց:

Իրրահիմ խանը սարվաղ զինվորների և գահիմների հետ վանքի խցիկներից հանեց թօկերով միմյանց կապկապած երեսուն հայի: Նրանց մեջ ճանաչեցի Մելիք-Մեծլումի պատանի որդի Աղամ բեկին: Բոլորին մերկացրել էին մինչև զոտիները: Նրանց արյունոտ, խոշտանգված մարմինները փայլատակում էին պղնձե թուրծի երանգներով: Մի քանիսի վերքերից տակապին արյուն էր զնում: Ես՝ Սաֆար Ալի Արդուլ Հասանս սոսկացի՝ Ալինի՛ սրանցից մեկն իմ արյունակիցն է: Վաթսուն տարի առաջ...

Եահը հարցրեց՝ ի՞նչ ազդի մարդիկ եք, է՞լ:

— Հայ ենք, շահ, հայ քրիստոնյա, — բոլորի փոխարեն պատասխանեց Աղամ բեկը: Մյուսների համեմատ, նա քիչ էր խոշտանգված: Նրա ուժը տեղն էր և պառկած տեղից էլ գլուխը վեհ էր պահում:

— Իրրահիմ խանի մարդի՞կ եք: Ապստամբ եք:

— Իրրահիմ խանը ինչ շուն է, շահ, որ մենք նրանը լինենք: Եթե մեզնից որևէ մեկին նույն հարցը տաս, օ՛, ողորմած շահ, քեզ նույն պատասխանը կտա: Իրրահիմ խանը թուկից փախած ստահակ է, վախկոտ ու նենգ:

Այդ պատասխանը զուր եկավ շահին:

— Իսկ զու Մելիք-Մեծլումի տղա՞ն ես:

— Այս, և հպատանում եմ դրանով:

— Աֆարիմ, տղամա: Տեսնում եմ՝ խելք ունես, համարձակություն՝ ևս:

Նրա ակնարկով Ազամ բեկին անջատեցին մյուսներից: Շահը ձեռքի մականը բարձրացրեց.

— Դրան պահեցեք: Մյուսներին՝ ձիակալ...

Իսկույն մի քառան ձի բերին: Նրանց պայտեցին, սակայն պայտը սմբակների վերևից խփեցին, մեխ-բեկոների սուր ծայրերը ցած թողնելով: Գերի հայերին նոր կապերով ամրացրին, պառկեցրին միմյանց կից՝ մեջքների վրա ու ձիերը քշեցին նրանց մարմինների վրայով: Ես իմ ճիշը հազիվ էի պահում՝ մի արեք, մի արեքը... Կարծես հենց ինձ էին ձիակալ անում: Դահճաները ձիերի սանձերից բռնած բաշում էին կենդանի մարմինների վրայով: Սուր-սուր բնեոները խըրպակում էին մարդկանց կրծքները, փորները, կոկորդները, գանգերը և երբ ձին ոտքը փոխում էր, արյուն էր շատրվանում սմբակի տեղից: Շահը հոհուում էր անզուսպ հաճույքից:

Իսկ արեք խանձում էր աշխարհը:

* * *

Պատանի Ազամ բեկը փակված էր վանքի բարեղին մի խցում՝ մենահնակ: Ես՝ Սաֆար Ալիս օրը երկու անգամ այց էի անում նրան: Նոտում էի տղայից քիչ հեռու, հենց գետնին ու Իրանի հին բանաստեղծներից բաներ կարգում կարծես ինձ համար, բայց այնպիս, որ բանտարկյալը լսի: Դուռը բացում էի կամաց, ներս խոթում նախ զլուխս, ապա ողջ մարմինս, ողջունում էի հեզ, կարծես ներողություն խնդրելով: Նկատեցի, որ Ազամ բեկը ճանճրացավ առասպելներից ու բանաստեղծական միապազաղ շնչոցից: Այժմ նա լկամ, կցկուուր էր պատասխանում իմ հարցերին, ինձ համառին ինդրում, որ այլնս իրեն շայցելնմ, շատապեցնում էր իր հետ անել այն, ինչ ի վերը արվելու էր:

— Մի բնավ հույս ունեցեք, թե ես կկատարեմ շահի ու քո կամքը հավատափոխ լինելով՝ կդավեմ հորս, հայրենիքիս: Ես սպասում եմ մարտիրոսավելու պատկին, մարդ: Արագացրու...

— Է՛, ՀԵ՛,— զլուխս տարուրերում էի ես: — Զահել ես, շես հասկանում ինչ հրաշք է արքելը, կյանքը: Զարմանում

եմ՝ ի՞նչ բան է Քրիստոսի սառը խալը, որ հանուն դրա կյանքը պիտի տաս: Ով է այդ խենթը:

— Ե՞ս եմ այդ խենթը, — ասում էր Աղամ բեկը: — Դնա հայտնիր քո շահին, որ ես հայրենիքից թանկ ուշինչ շունեմ:

— Կուզե՞ս վերադառնալ հորդ մոտ: Տո՛ւ...

Ես նրան կերակրում էի առատ: Մեր ուտելիքից Աղամ բեկը զգվում էր, բայց ուտում էր՝ պետք է ապրել, ապրել... Երևի մատաքերում էր իր քիչ, շատ քիչ ապրած կյանքի գրեթե բոլոր օրերը՝ մանկական անմեղ շարաձմիություններից մինչև զենքի վարժվելը, թոփլքի ընթացքում ձի զսպելը: Երբեմն էլ զանանում էր իր բախտի դաժան խաղի վրա՝ ինչո՞ւ ասու ված իրեն մատնեց թշնամու ձեռքը:

Սկսեց հիշել նաև Վարդ անունով աղջկա: Պայծառանալով պատմեց, թե գերի ընկնելուց մի ամիս առաջ ինըը Եռշում հոր հարյուրապետների հետ գինի է խմել: Խշում մոլեգնում էր գինին զլխում: Մոտիկի մի հայր տան պատուհանից մեկ-մեկ երեսում է տանեսերի աղջկի Վարդը և իսկույն անհետանում: Մի քանի անգամ հետը խոսեց: Իսկ մի անգամ...

Զին նստեց, թուազ գեպի այդ տունը: Դարպասի մոտ ձիուց իշավ, սանձը զցեց զլխովը, թողեց, բակի քարե աստիճաններով թռազ վերև... Դուն մոտ աղջկա դայակ պառավը բրոնեց նրա փեշը:

— Կամաց, է՞յ, իշխանի՞կ: Կրա՞կ ես ընկել: Նա մազերն է սանրում:

Դայակը նման էր կծկված, երկուտակված ստանալի: Մութն ընկել էր ու աստղերի ցոլքերը խաղում էին նրա լայն բաց արած աշքերում: Աղամ բեկը մի պահ կանգնած մեաց դռան մոտ, ապա ներս խուժեց ու վազելով նեղ միջանցքում, շիմացավ, թե ինչպես ընկավ ներս: Կիսամութ սենյակում վառվում էին միայն երկու կանթեղի: Վարդը խրտեած ետ նայեց ու թեթև ճշալով, մետաքսն շորով ժածեց գրեթե մերկ մարմինը: Բայց շորի տակից էլ երեսում էին նրա հմայքները: Աղջիկը մազերը ծրարում էր մարգարտե վարսակալով:

— Ա՛խ, սպասի՞ր, Աղամ... ինչո՞ւ եկար: Դնա՛, գնա՛:

Բայց ինքն արդեն զրկել էր նրա խշացող մեջքը: Խոնարհ աշքեր ուներ Վարդը, բուրում էր, վախվորած ծիծաղը ժադկում...

Այս հուշից քաղցր մի զգացում էր պարուրում Ադամ բեկին
և նա մի պահ, մի երջանիկ պահ, մռանում էր, որ գտնվում
է բանտի խցում՝ ամեն վայրկյան մահը հետք:

Երբեմն ես նրան հանում էի բանտից, թույլ տալիս, որ
նա մի փոքր ման զա նեղ բակում: Պարունք նոր էր սկսել
իր կանաչը հյուսել: Սպավոր ուսիների բարակ, լայն ճյու-
ղերը ներկվել էին թեթև-թափանցիկ զմբուխտով, կեռասինի-
ները բողբոշել էին, հողի վրա կանաչ բծեր էին հայտնվել: Մի
օր ես արձակեցի նրա ձեռքի կապերը, թույլ տվեցի, որ
երկար զրունի նեղ բակում:

Մութն ընկավ, իր մտքերի մեջ տարգած Ադամ բեկը
հանկարծ սթափվեց: Չտեսավ Սաֆար Ալուն: Ո՞ւր է, ի՞նչ
եղավ... նա սրվեց, լարվեց: Գնացել է գահին բերի: Պատի
անկյունից պարան ընկավ ցած, Ադամ բեկը բռնեց դրա ժայ-
րը և սկսեց մազլցել վեր: Մի ակնթարթ հետո մեկը պատի
մյուս կողմից կամաց ասաց.

— Յատկիր, հողը փափուկ է:

Ադամ բեկը ճանալեց՝ կանչողը թուրի Արզումանն էր:
Քիչ հետո ձիեր նստած նրանք մտան Սոսի ձորը ու սլա-
ցան դեպի Շուշի:

— Ո՞վ օգնեց:

— Սաֆար Ալի բեկը...

Գիշերվա կեսն էր:

* * *

Հենց որ արեք մայր է մտնում, կիրճի մեջ կարծես կեն-
դանանում են շոգից խանձվող ժառերը: Ծնկուզենին լարում
է հզոր ճյուղերը, նրանից մի քիչ ցած, քարի ճեղքից ժայթ-
քած թղենին պրկում է տերեները, բաց անում զեռ լհասած,
խոշոր, եղան աշըի շափ սև թուղը:

Սոսեցիները քարազիսի ժայռերի ճեղքից դուրս եկան,
իրենց կանանց ու երեխաներին հրամայելով մնալ թաքստո-
ցում: Նրանք խմբվեցին բանահց հենց նոր փախած Ադամ
բեկի ու թուրի Արզումանի դիմուն:

— Ինչպե՞ս եղավ:

— Այս կիրճը կոչվում է Քարինատակ, եղբայրներ, Այս
կիրճը երբեք թշնամու ոտք չի դիպել: Հիմա պարսից շահի
հոտն եմ զգում այստեղից: Թո՞ւ...

— Դու ասա ինչպե՞ս եղավ, — գոռզոռացին գեղջուկ-ները: — Քեզ բան ենք հարցնում, իսկ դո՞ւ...

— Թշնամիաց նոցա զգեցուցի զամոթ: Տեր, այլ ի վերայ նոցա ժաղկեցի սրբություն քո: Տե՛ր, տե՛ր...

— Ովքե՞ր, ովքե՞ր, — գործացին սոսեցիները:

Աղամ բեկը մեկ առ մեկ տվեց ձիակալ արված նահատակների անունները՝ զարմանալով ինքն իր հիշողության վրա:

Քիրսի լեռնաճեղքերից մինչև Մոռվի արևելյան փեշերը դղրգաց նահատակների անունները: Կիրճերն ու լեռնաճեղքերը, որտեղ հանգրվանել էին զաշտային տեղերից փախածեկած երեսուն հազար ընտանիքներ, բռնկվեցին երեսուն հազար հզոր կրակներով՝ խարույկներով: Նրանց կարմիր լույսը գնաց թափվեց Եռւշի քաղաքի վրա, ապա՝ նրան պաշտամ Աղա Մամադ խան շահի զորքերի: — Հրաբուխ է, — երկյուղած ասում էին պարաիկները: — Ամա՞ն, ալա՛... Աշխարհի վերջն է:

Աղամ բեկը գեղջուկների մի վիթխարի ամբոխ ետևից գցած իշավ դեպի Եռշի որոշողը, որտեղ բանակած-մրափած էր պարսից զօրքի մի ճյուղը: Հինգ հազար նավթաջան վառեցին գեղջուկները և զլուխներից վեր պահած թափվեցին մրափած բանակի վրա:

— Զա՞րկ, զա՞րկ... — Գոռում էին բոլորը: Ամենից հզոր Աղամ բեկը: — Զա՞րկ, զա՞րկ...

Այդ զիշեր նրանք ավերեցին շահի բանակի այդ ճյուղը, որ հինգ հազար մարդ էր: Պարսիկները փախան՝ թողնելով այրվող, արյան մեջ զալարվող շատ զիակներ: Այս էլ որերորդ անգամ Ղարաբաղը քաջությամբ խեղճացրեց իր թշնամուն:

* * *

Գիշերային կրակները սարսափեցրին իրրահիմ խանին: Անօքնական այրիի պես նա զլուխը խոթել էր ձիախուրցինի արանքը: Թվում էր, թէ այլևս ուժ չի գտնելու մեջքն ուղղելու համար: Նայելով խավարի աշքին, նա, ինչպես տեսնում էի, սարսափում էր: Եռւշու հայերը երեք հազարանոց զորք էին ստեղծել, միացել հզոր Մելիք-Մեծրումի բանակին ու ահա պարիսպների վրա թառած զեմ են կանգնել մեր թափավորի

զորքերին։ Ես կանգնած էի իբրահիմ խանի թիկունքում։ Հեռքս դրի նրա ուսին։

— Ժամանակն է, որ տուն գնաս, խան իմ։

Խանը ցնցվեց իմ հստակ ու հանդարտ ձայնից՝ ի՞նչ տուն։ Ո՞ւրի Ռո՞ր տունը գնա։ Թռնեց ձեռքս։

— Գո՞ւ եմ, Սաֆար Ալի Արդուլ Հասան միրզա, — ասաց երկուողած։ — Դու ինձ օգնում ես այդ անբարիշտ հայերի դիմ։

— Հայը, — ասացի, — կովում է իր տունը պաշտպանելու համար, իր թշնամու՝ քո դիմ։ Դու Շուշում տուն շունես։ Դու Հայաստանում տուն շունես... Գնա՞նք, գնա՞նք։ Շուտով լույսը կրացվի։

* * *

Լույսը բացվեց։ Ես խոնարհվեցի վրանից դուրս եկած շահի առաջ։

— Հիսուներկու հոգի են, աշխարհի Արև շահ։

— Իբրահիմ խանն ո՞ւրի է։

— Ահա ժունկի եկած։ Եկել է «սալամի»։

— Ի՞նչ մարդիկ են։

— Վարանդա գավառի հայ գյուղապետերն են։ Այս մեր իբրահիմ խանը թակարդ լարեց։ Գյուղապետերը մեղանից մի հարյուր մարդու գերի էին վերցրել։ Ասաց բերեք փոխանակենք ձեր գերիների հետ։ Խակ ինքը հայ գերի շուներ։ Գյուղապետերը, սարսաղացան, եկան... Իբրահիմ խանը նրանց բռնեց։

— Բերեք։

Իբրահիմ խանը վեր թռավ ծնկած տեղից, բերեց հայ գերիներին։ Այս, հիսուներկու հոգի։ Աղա Մահմադ շահը քրքչաց՝ ժանգուտած ատամները ի ցույց անելով։

— Խարվեցի՞ք, տիսմա՞ր հայեր։ Շուշի՞ն եք պաշտպանում։

— Մենք մեզ ենք պաշտպանում, շահ։ Եթե իմանանք, որ դու Շուշի հայերին սրի շես քաշի և Շուշին կթողնես իր տիրոջը՝ հայերիս, իբրահիմ խանին կվոնդես, քեզ կհապատվենք։

Շահի հրամանով իր վրանի մոտ մի քարուկիր պատ շինեցին՝ հիսուներկու նեղլիկ ծակեր թողնելով։ Այդ ծակերի

մեջ մտցրին հայ տանուտերերի գլուխները։ Բերին հիսուն-
երկու կատաղի ջորիների նրանց պիտիներից հաստ պարան-
եր կապեցին, պարանների օղակները հազցրին գյուղապե-
տերի գլուխներին։ Սարվազներն սկսեցին գրգռել ջորիներին
ու քշել։ Սրանք այնքան ձգեցին պարանները, որ մահ-
պարտների գլուխները ի վերջո պոկեցին... Աղա Մահմադ
շահը փորբ բռնած հոհում էր մեծագույն բավականությու-
նից։ Իսկ ես՝ Սաֆար Ալիս, մաքումս, աղոթք էի շշնջում։ Իմ
մեջ մոլեկնում էր իմ մանկության արյունը։ Ետ դառնալով
դեպի վրան, թագավորը իր սարդարին ինչ-որ ասաց, որ ես
լսեցի։

Ես թեթևացած շունչ եմ քաշում։ Շուշին դիմագրում
է անկոտրում, Հայաստանը, նրա Ղարաբաղը տոկում է՝ ահ-
ուիլի թշնամու դեմ ոչ երբեք ընկնվելով։ Ուզեցի հայի աղոթք
հիշել։ Զհիշեցի։ Վաթումն տարի է իսլամի հավատին եմ,
ինչպես հիշեմ։ Զհիշեցի։

Առավոտյան շահն ինձ հարցրեց՝ Սաֆար Ալի, Նադիր
շահի թոռ Շահ Ռուխը ո՞ղջ է։

— Ողջ է, — ծնկածալ գլուխ արի ես։ — Նրան կուրացրել
են։ Կույր ապրում է Խորասանում։

— Բերեք։

Ես շտապ մարդիկ ուղարկեցի Խորասան։

Հահը գազագում էր։ Ահա երեսուներեք օր է ինքը անարդ-
յունք պաշարել է Շուշին։ Նա իմ ձեռքով բարեկամական
նամակ գրեց Շուշում նատած Մելիք-Մեծլումին՝ արի իմ
սարք և հնագանդվիր ինձ։ Պատասխանը կտրուկ էր։ Ո՞չ։ Ո՞չ
երբեք։ — Նոր խոսք հղեց շահը։ — Եկեք ինձ մոտ, Հայեր,
ես ձեր իշխանությունները կհաստատեմ ձեզ վրա։ Ես ձեզ
ինքնավարություն կշնորհեմ ձեր լեռներում։ Լեռնային Ղա-
րաբաղի ինքնավար մարզ։ Պատասխանը նույնն էր։ — Ո՞չ։
Ո՞չ երբեք։ — Հայերի այս պատասխանը իմ սրտովն էր։

Մեպտեմբերի կեսերն էին։

* * *

Իմ ուղարկած մարդիկ Խորասանից բերին Շահ Ռուխ թա-
գավորին։ Սա ընկազ Աղա Մամադի ոտքերը։

— Ինձ կարող ես սպանել, մեծ շահ, բայց աղաւում եմ
խնայիր իմ ժառանգներին։ Խնայիր...

Կույրը նրան տվեց ողջ աշխարհում հոշակված Դուրսի դարիա՝ գոհարի հավի ձվի մեծությամբ հակինթը: Ես դա մի երկու անգամ տեսել էի Նադիր շահի ձեռքին: Այդ հակինթը Նադիրը բերել էր Հնդկաստանից: Դա դեռ երկու հազար տարի առաջ զարդարել էր Հնդկաց աշխարհի արքա Ռուզանդր գրգեթայի թագը:

Աղա Մամադ խան թագավորը վերցրեց հակինթը, հոտութեց, դրեց զբանում: Աղա Շահ Ռուփսի զլխին իր ձեռքով մեջը հալած արճիճ լցրած երկաթե պսակ հազցրեց: Կույր շահի գանգը պայմեց ու լեշը ընկապ զետնին: Աղա Մամադը ոտքը դրեց տակավին թարտացող մարմնի վրա:

— Վերջացավ Ավշարան պիղծ թագավորությունը: Փառք, փա՞ռք...

Ինքը, ասել եմ, ցեղով Ղաջար էր, տեղով Մազանդարաց: Նրա Հայրը խան էր՝ Մուհամմեդ Հասան անունով: Սրան սպանել էր Շահ Ռուփսը, իսկ որդուն, այսինքն Աղա Մամադին՝ ներքինացրել: Երկար ժառայիլ է Զենդ Թերիմ խան թագավորին: Երբ սա մեռավ, Աղա Մամադ խանն իսկույն իրեն շահ հոշակեց:

* * *

Շուշին ազատագրված էր, նորից իր տիրոջը՝ Հայինն էր: Շուշվա Ղազանչեցոց եկեղեցու բարձր գմբեթին, որ նոր էին շինել, փողփողում էր Հայոց արքայական դրոշակը:

Մելիք-Մեծլումը Շուշուց արտաքսել է Իրրահիմ խանի մոլաներին, Շեյխ ուլ-հևլամին, բեկերին: Հրովարտակ է հղել Շուշի բազարի մահմեդական ույայ ընակլությանը: — Դուք մեր՝ Հայերիս եղբայրներն եք ու ազատ կարող եք դավանել ձեր կրոնը, ապրել մեր քաղաքում: Լինենք միմյանց բարեկամ: — Լսեցի, որ Շուշվա մահմեդական ույան գոհ է մնացել և օրհնել է նրան: Ապա իմացա, որ Կողմանք Արևելից Հայոց Գերագույն գահաժողովը Շուշի քաղաքը հանձնել է Վարանդայի տիրոջը՝ Մելիք-Ջումշուլին, նրան լիազորելով նաև բերդերի ուղղմական գործը: Խաչենի Հայ իշխանապետությունը վերականգնվել է: Ղարաբաղի Հինգ բազուկները նորից են միացել, միավորվել՝ ժանր պառակտումից հետո: Մակայն գիտեմ, Աղա Մամադ շահի պատճառած վտանգը մնում էր:

Ղարաբաղը պատրաստվում էր նոր փոթորիկների:

Իրանի Առյուծ իմ տերն ինձ հրամայեց անհապաղ բերել տալ Արդարի քաղաքի աշխարհ բերդում Շահ Ռուխի ձեռքով քանտարկված խաներին: Ես հեծելազոր ուղարկեցի Արդարի, պատվիրելով բերել նաև այնտեղ շղթայված Դիզակի իշխան Մելիք Բախտամին: Արդարիլը Վարանդայից հեռուն էր քնդամենը ծիսարշավի երկու օրվա ճանապարհ: Մի շաբաթ հետո հեծելազորը ետ եկավ, բերելով երեկի հիսունից ավելի շղթայված խաների: Ես նրանց մեջ տեսա Մելիք-Բախտամին: Աղա Մամադ շահը հրապարակում, զորքի ներկայությամբ հարցաքննեց նրանց: Մեկին դիմեց.

— Պարսիկ ես:

— Այո, Արև արքա, — վստահ պատասխանեց կալանված խաներ:

— Ապստամբել ես քո թագավորի դիմ:

— Բայց նա Շահ Ռուխին էր, քո թշնամին:

Շահը ձեռքով թրատեց օդը:

— Գլխատե՛լ: Ով իր թագավորի դիմ սուր է հանում, չպիտի ապրի:

Մեկ ուրիշ խանի առաջ բերին: Նույն հարցը: Նույն վճիռ՝ զլիատեել: Հերթը հասավ Մելիք-Բախտամին: Եղթաները զեզացնելով նա անվարան մոտեցավ: Դե, եկել է ցանկացածը՝ զերչը: Կմեռնի, կպրծնի: Մնաք բարո՞վ, Դիզակի հարազատ լեռները: Զեր զեփյուռից մի երակ հղեցիք իմ անտեր, անթաղ մարմնին:

— Պարսիկ ես:

— Ոչ, — հպարտ պատասխանեց Մելիք Բախտամը: — Ես հայ եմ:

— Հայ, — շահը նույնիսկ թերվեց դեպի նա: — Ո՞վ ես:

— Ես Մելիք Եսայի իշխանի տղան եմ, Դիզակի տերը:

— Ավանի թռող: — Շահը ետ նստեց գոհ: — Հայրդ Եսայի խանը բարեկամն էր, եղբայրն էր: Քո նախնիք մեծամեծ ծառայություններ են արել Պարսկաստանին: Դիզակը միշտ մեր բարեկամն էր: Այդպես: Խնչո՞ւ ես շղթայակապ, բահտված:

— Ո՞ւ, շահ, մի՞թե դա պատմելու բան է:

— Բայց ես ուզում եմ իմանալ:

— Այն գեղքում հարցրու իրրահիմ խանին, — Մելիք-Բախտամը ձեռքը մեկնեց խաների հետ կողմ կանգնած իր-րահիմին: — Նա ավելի լավ կիմանա:

Շահը նույնիսկ շնայեց իրրահիմ խանի կողմը, որ տարածվել էր գետնին:

— Դու, Մելիք-Բախտամ, քո ազգի, քո ժողովրդի համար ես կովկել: Արդար ես: Հորդ պատվին ու հիշատակին... Հայոք բարեկամս էր՝ վեհ, ազնիվ: Նաև պապիդ պատվին... Զըրկվա՞ծ ես իշխանությունից:

— Այս, մեր Դիզակի կեսը զավթեց իրրահիմ խանը: Դրանով նա թուլացրեց իրանի հյուսիսային զարպասը...

— Կուզե՞ս տիրանալ երկրիդ:

— Եթե դա քո կամեցողությունն է, ողորմած շահ: Սակայն ոչ իրրեւ այս իրրահիմի ենթական: Ո՞չ...

— Ո՞չ, ո՞չ, — կրկնեց շահը: — Այս պահից դու ստանում ես քո հոր ու քո պապի իշխանությունը՝ Դիզակը, քո իշխանությունը:

— Խոնարհվում եմ, — զլուխ տվեց Մելիք-Բախտամը:

— Դու ինձ հարկ շես տա, Մելիք-Բախտամ: Դու ոչ մեկից կախում շես ունենա, Մելիք Բախտամ: Դու միայն քո ռազմական ուժերով ինձ օգնական կլինես:

— Ո՞, շահ, թող երկնքի երանությունը քեզ վերադարձնի այն, ինչ երկնային շարերը քեզնից խլել են:

Շահը ինձ հրամայեց արքայական զգեստներով զարդարել Մելիք-Բախտամին: Նրան ընծայեց երեսուն ձի ու այդքան հրացան ու սուր: Ապա արտոնեց, որ նա իր գավառի հայերից զորք ստեղծի ու միանա իրեն:

* * *

Պարսից զորքը շարունակում էր մնալ Հայաստանում: Եվ ինչ կարող եմ ես ասել գժոխային այս աղետին, որ թափվում էր իրար ետևից գժբախտ Հայաստանի գլխին: Ես՝ Սաֆար Ալի Արդուլ Հասան միրզաս, ես աշխարհների կործանման վկաս, որ կույր եմ՝ ոչ աշոք, այլ՝ մտոք: Ահեղ ներքինին ահա անհամար զորքերով սփռվել է Հայոց Վարանդա գավառի Ավետարանոց մեծ ավանում ու ընդարձակ դաշտում: Նրա զորքը հեղեղ-հեղեղ սփռվել է հայոց զյուղերի

ու շների վրա՝ խժուլով նաև և նույնիսկ զերեզմանների քարերը։ Դաշտ ու ստորոտ զյուղերը շտապելով հեռացել էին գեղի լեռների ծերպերը, ուր կորեկն անգամ չէր հաւանում։

Երեկո էր Խոնարհ կանգնած էի իմ տիրոջ ժառայոթյան։ Եահը ակնարկով ինձ մոտ կանչեց։

— Տեղա՞կ ես Սաֆար Ալի, թե որքան է այս Ղարաբաղի հայը։

Ես խոնարհեցի ինչպես կարգն էր։

— Ո՞, աստծու ստվեր Աղա Մամադ շահ, — ասացի, — դու օժտված ես ալլահի մարդարենի շնորհներով։ Ո՞, տիրակալ իմ.. Այս Ղարաբաղի հայությունը հարյուր հազար զերդաստան է։ Ո՞, մեծ... Մի գերդաստանում առնվազն տասնհինգ շունչ։

Ես պատասխանում էի այսպես՝ հավիտյան անիծելով նրան։ Իսկ նա Մազանդարանի վիճվածք էր՝ ահեղ տեսքով, ներքինի հոգով։

— Ո՞, մեծ Խականդարի Զուզար։

* * *

Ավետարանոցի եկեղեցում, որ ապականել էր մեր զորքը, ես տեսա Աստվածամոր պատկերը՝ Թրիստոս որդուն գրկած, ու բոլորից թաքուն ծունկի եկա նրա առաջ։ — Մեղաքեզ, մեծ մայր, և թողություն մեղքերիս, որ ծովի շափ խոր է, անապատի ավազի շափ անսահման։

Մի առավոտ Ավետարանոցից և մոտի զյուղերից մի հիսուն հայ տանուտերներ ու քահանաներ ժանրագին նվերներով եկան Աղա Մամադ շահի ուաքը։ Ես չհասցրի նրանց իմաց տալ, որ նման տխմարություն լանեն, գառան նման զգան գալիք երախը։ Զեզ ասացի։

— Ո՞, մեծ։ Ո՞, անսահման մարդասեր։ Ընդունիր հայ տանուտերների խոնարհումները և բարի եղիր նրանց հետ։

Եահը նայեց ծունկի եկած հայերին, թեքվեց ականջիս։

— Իսկ սրանք կարո՞ղ են իրենց Թրիստոսով դարձան անել իմ ու բո ցավին, Սաֆար Ալի, վերականգնել իմ ու բո որձությունը։

— Ո՞, իմ տեր, — ասացի, — այդ բանն արդեն կորած համարիր հավիտյան։

Եահը հրամայեց հայերից յոթ հոգու առաջ բերել: Սրանք մոտեցան սողեսող: Նկատեցի, որ բոլորը ցանկացան մոտենալ նրան, իմանալով, որ նահատակվելու են: Բայց նրանցից միայն յոթ հոգի առաջ եկան, ինչպես հրամայվեց: Ես մոտեցողների մեջ նկատեցի Մելիք-Ջումշուդի պատանի որդի Հովհաննին: Մոտեցան դափուզիրաշու ցուցմունքով ու դադարեցին մի տասը քայլի վրա: Եահը խոսեց:

— Ես ձեզ հետ շնմ տեսնում ձեր տիրոջը՝ Մելիք-Ջումշուդին:

Հովհաննի բեկը անփոյթ կանգնեց ոտքի:

— Հայրս բարձրացել է լեռները՝ քեզ դիմադիր լինելու, ո՛, թագավոր:

Եահը ցնցվեց:

— Երեսում է երկար լեզու ունես: Լեզուդ, տեսնում եմ, զրախոս ու անհնագանդ է: Ո՞ւր է մելիք հայրդ, պատախունիր:

— Եռշի քաղաքում, ո՛, մե՛ծ:

— Ծուլսներին է սպասում, չէ՞: Այս, երեսում է երկար է լեզուդ, հանիր: Լեզուդ հանիր, տեսնեմ:

Նա ինքն իր ձեռքով, երկար դանակը միսրմելով Հովհաննի բեկի բերանը, նրա լեզուն տակուաճան անելով կտրեց: Երկար նայեց ձեռքից կախված, արյունոտ լեզվին ու շպրտեց մի կողմ: Հրաշք էր՝ Հովհաննի բեկը կանգնած մնաց, նույնիսկ աներեր: Անիզու բերանը նա լայն բաց արեց, որի մեջ լին արյուն էր:

Եահը հրամայեց իր մոտ եկած բոլոր պատվիրակներին նաև Հովհաննի բեկին լցնել Մելիք Ջումշուդի տունը ու տան հետ գտնել: Երկար նայում էր բոցերի մեջ ճարմատող տանը, կրակին: Տան առաջին հարկի բակի սյունից շղթայով կապված մի սպիտակ, շատ խոշոր շուն էր կլանչում: Կրակը հետզհետե հանում էր նրան: Իսկ նա շէր կարողանում ազատվել, պոկվել շղթայից: Ուր որ է կրակը կրանի նաև նրան: Եահը գոռաց.

— Ազատեցե՞ք շանը: Նա կայրվի՞: Եուեր մե՛զք է:

Մի քանի սարված վաղեցին շունեն արձակելու, սակայն շագադած կենդանին թույլ շտվեց, որ մոտենան իրեն: Եահը նորից գոռաց.

— Ազատեք շանը: Մե՛զք է...

Պարսից բանակը դալարվելով, սողալով, գոթորկվելով,
հայոց դատարկ զյուղերն ավերելով, ու դրանց մեջ մնացած
ծեր ու հիվանդ հայերին կոտորելով՝ դիմ առավ Շուշի քա-
ղաքի լեռանը: Թաղաքի պարսիկ աղաներից մի քանիսը ծան-
րագին նվերներով եկան շահին ընդառաջ: Եահը հրամայեց
նվերները վերցնել ու բերողներին կոտորել տեղեռաւեղը:

— Ուշ եք գալիս առաջ:

* * *

Շուշին գիմադրում էր:

Մելիք-Մեծլումը բերդի պարիսպներից այնպիսի հարված-
ներ էր հասցնում թշնամու զրոհող խմբերին, որ սրանք նույ-
նիսկ չէին կարողանում մոտենալ դարպաններին:

— Թեկուզ յոթ տարի պաշարված մնանք, կզիմանանք:
Նոր լուսաբաց էր:

Բերդի գռների մոտ իրարանցում ընկավ: Պատնեշի վրա-
լից Մելիք-Մեծլումը տեսավ դա ու իր թիկնապահների հետ
շտապեց այնտեղ:

— Ի՞նչ է, ի՞նչ է:

Պահակապետը այլայլված ասաց.

— Թաղաքի թուրքերը կամենում են դարպանը բաց
անել շահի առջև:

— Ահա թե ի՞նչ...

Մելիք-Մեծլումը նկատեց, որ դարպանի մոտ, այստեղ-
այնտեղ թրատված ընկած են իր դաշնակից թաղաքացի պար-
սիկներից մի քանի դիակ:

— Ե՞տ դարձեք, — զռաց նա գեռնս աղմկող հիսուն-
վաթսուն թուրքերի վրա: — Ե՞տ: Ե՞տ...

Հենց այդ պահին մեկը թիկունքից ատրճանակով կրակեց
մելիքի մեջքին: Հայերը նրան և մյուս թուրքերին թրա-
տելով՝ կոտորեցին:

Ազամ բեկն ու երկու զինվոր ծանր վիրավոր Մելիք-Մեծ-
լումին հասցրին պալատ: Կինը դողալով առաջ եկավ:

— Սա՞նը է...

— Բան չկա, — ճիգ անելով ասաց Մելիք-Մեծլումը: —
Կապրեմ:

Նրան ներս տարան: Կանայք, նաև տանու բժիշկը շտապեցին դարմանել մելիքի վերքերը: Կինը հեռում էր.

— Դու է՞... ամուսին իմ: Հարազա՞տս...

— Կապրեմ, — հազիկ ասաց Մելիք-Մեծլումը: — Կապրեմ: Եթե մեռնեմ, կին իմ, իմ զինվորներից թաքուն կպահեք մահս, որ չընկնվեն:

Քիչ հետո ուշքի գալով, որդուն ասաց.

— Այն ժերունին, որ հրացանազարկ արեց ինձ, կարծես ծանոթ էր: Կարծես հայ էր: Ստուգեցնք:

Պարսիկների զիակների միջից հանեցին մելիքին խփած ծերունու դիակը: Նա գեռ տաք էր: Հայերը ճանաչեցին նրան ու սարսափեցին: Նրա զիակը բերին ապարանք ու զցեցին պատշգամբի մի անկյուն:

— Ո՞վ էր, — ներսից կանչեց Մելիք-Մեծլումը:

— Հայ է, տեր մելիք, — պատասխանեցին նրան: — Քեզ վրա կրակողը Կուսապատի Ապրես աղան էր:

— Մի՞թե, — զլուխը թուլացած հա զցեց Մելիք-Մեծլումը: — Բա էլ ո՞վ: Որդին իրահիմ խանի սարուկ-կրնկալեզն է: Հայը... Բա էլ ո՞վ է Դարաբազի տունը քանդողը...

Մելիք Զումշուղը հրամայեց բերդում եղած թուրք տղամարդկանց կոտորել անխնա: Ապրես աղայի զլուխը կտրել տվեց ու մի պարսիկի միջոցով ուղարկեց իրրահիմ խանին:

* * *

Իրրահիմ խանը, որ իր կանանցով ու սակավաթիվ զորքով պարսից բանակի մեջ էր՝ շահի հետ, այս մի աներոշ զլուխը պատանքեց մետաքսի մեջ, խնդրեց մեծ խանում Հուրիզադին, որ իր կանանց զլխավորն էր, զլուխը թաղել պատվով: Ապրես աղայի դուստր Վարդը, որ նույնպես խանի հանանցից էր, Հուրիզադից պահանջեց հոր զլուխը:

— Հորս պիտի ե՞ս թաղեմ՝ որեւէ եկեղեցում, քրիստոնյացի կարգով:

— Ոչ մի դեպքում, — առարկեց ահեղ Հուրիզադը: — Ապրես աղային պետք է հանապարհ տամ դեպի Մուհամեդ մարգարեի ծոցը:

— Բայց նա իմ հայրն է, — ճշաց Վարդ խաթունը, — և միայն իրավունք ունեմ նրա վրա, ո՛չ դու, ո՛չ դու:

— Նա ամուսնուս, իմ և իմ հոր հավատարիմ զինակիցն
էր, մեր թշնամի Մելիք-Մեծումին սպանողը։ Լոիր, քա՞ծ,
թե չէ քո գլուխն էլ թաղել կտամ։

Խանի այդ երկու կանայք այսպիս գգվոտացին երկար։
Ոչ մեկը չէր զիշում։ Հուրիզաղը տանու մոլլային հրամայեց
Ապրես աղայի գլուխը թաղել մահմեղական կարգով։ Վարդ
տիկինը գագաղեց։

— Այդ դեպքում քո գլուխն էլ կդրվի նրա հետ։

Նա բազմության ներկայությամբ փեշի տակից հանեց
փայլատակող խենջարը և թափով խրեց Հուրիզաղի մեջը՝
ձախ թիակի տակից... Հուրիզաղը թրմփաց գետնին ու ան-
շնչացավ...

* * *

Մելիք Մեծումը վախճանվեց վիրավորվելու երրորդ օրը։
Այդ զիշեր սոսկալի փոթորիկ եղավ։ Կերներում Քիրս լեռ-
նագագաթի մի վիթխարի ոստը փլվեց ու թափվելով Կարկառ
գետի ակունքներին, հունը փակեց։ Երեք օր գետը ցամաք
մնաց, լճացավ ու հոդե պատնեշը խորտակելով՝ ահուի
հեղեղով իջավ դեպի դաշտ։

Մելիք-Մեծումին թաղեցին, Մելիք Զումշուղը զորքը հա-
մախումը անելով առաց։

— Հայոց Գերազույն գահազուիս իշխանությունը Զրա-
բերդի մելիք է կարգում Մելիք Մեծումի որդի Աղամ Երկրոր-
դին։ Ընդունեցեք ու հնագանդվեցեք նրան։

Շուշվա պատերազմը տևեց ամբողջ երեք ամիս։ Երբ
արդին պարհապների վրա զրեթե հայ կովող չէր մնացել, պար-
սից զորքերը ներխուժեցին քաղաք։ Միայն մի երկու հարյուր
հոգու հետ Մելիք-Զումշուղն ու Աղամ Երկրորդը կարողա-
ցան հեռանալ կործանվող քաղաքից։

* * *

Շուշին գալարվում էր հոգևարքի մեջ։

Պարսկական զորքը երկու-երեք օրում կերավ պրժավ
ներքեի գյուղերից կողոպտած հացն ու անասունը և սովից
ոռնաց։ Զինվորները թափվեցին քաղաքի բնակչության վրա։
Մակայն նրանց ձեռք բերածը լնչին բան էր։ Ուստի շահը

Հրամայեց արշավիլ շրջակա գյուղերը և կողոպտել։ Թուրք թափառական ցեղերը, որ նստակյաց էին գարձել Ղարաբաղի որոշ տեղեր, ժամանակին հեռացել էին դեպի Շամախու և Նուխու կողմերը։ Իր հողին կպած մնացել էր հայր, հայ շինականը, որ մորթվում, այրվում-խանձվում էր նվաճողի կրունկների տակ։ Եռշին, պարզ է շէր կարող ահեղ կողոպտիշների որկորը լցնել։ Ինքը՝ շահը իր զորքի մի մասի հետ բնակվեց խանի պալատում, իսկ զորքի մեծ մասը՝ պալատից դուրս, վրանների մեջ։

Եռշին գալարվում էր։ Քաղաքում եղած փոքրաքանակ պարսիկներն ու սարքալուները ևս հասցել էին մինչև շահի դալը փախչել, մնացել էին քաղաքի բնիկ տերեր հայերը՝ մի հինգ հազար ծուխ։

Ես՝ շահի սենեկապետ ու քալանթար Սաֆար Ալի Արդուլ Հասան միրզաս շտապեցի հայերին հասկացնել, որ խոնարհությամբ ու բնծաներով շգան թագավորի ոտքը։ Բայց քաղաքի հայ խոչաները, տանուտերերը, արհեստանոց համբարության համբարբաշիները և քահանաները, թվով երկու հարյուր հոգի, եկան շահի գուորք, նրանք հետները մեծամեծ նվերներ էին բերել շահի համար։ Ինքը Աղա Մամազն անձամբ ուղևրա հկավ քաղաքացիներին զիմավորելու։

Քավականին տաք ու արևոտ օր էր, ետնաշյա պահը։ Եահը զուգված էր շքեղ ոսկեհուռ թագով, ոսկե զոտին պրկել էր քարակ մերքը։ Կոշիկները երկարաճիտք էին ու կարմիր գիտորայծի մորթուց, որ այդ ժամանակներում հազիվ եվրոպական արքաներն էին կրում։

Աղա Մամադ շահն ընդունեց հայերի նվերները։ Մեկմեկ զննեց ոսկու պարկերը, զորգերը, մետաքսե թոփերը ու ինձ հանձնարարեց զրանք տեղավորել։ Ապա նստեց դահավաք-ռակին, զլուխը տնեկեց, որից ավելի սարսափելի երևաց նրա ներքինի լերկ երեսը։ Կանացի ձայնով ճվճվաց։

— Թի՞ է։

— Այլես բան շունենք, ողորմած շահ, — ասաց հայերից մեկը։ — Ամեն ինչ բերինք ու տվինք ձեզ։ Այլես տալիք շունենք։

— Ունե՞ք, — մոնշաց շահը։ — Ունե՞ք։ Հապա ձեր զլուխերը...

— Անիծված, անիծված, — զոլեցին բոլոր հայերը:

— Եվ ձեր տերը նորից իրաւում խանն է, — մռնչաց շահը:

Մեր զորքը քաղաքը լիովին կողոպտել էր, հասցրել ետին աղքատության: Զորականները գժգուռում էին սաստիկ, ո՞ւ գանձարանից էր դրամ գուրա գալիս, ո՞ւ էլ այս քաղաքի հայերը որևէ բան ունեին այլեմ, որ տային իրենց: Զորական մարդիկ միայն հափշտակությամբ, երեխաների բերնի վերցին պատառ հացը խլելով էին իրենց զոյլությունը քարշ տալիս: Ով հակառակում էր, սպանվում էր տեղնուածզրութումնելի հայերը փորձեցին գանգատվել, բայց ո՞վ էր նրանց լոռով:

Շահի ականջին էին հասնում իր զինվորների տրտումքները՝ կամ մեզ հաց տուր, կամ թույլ տուր գնանք մեր տները: Աղա Մամադ շահը մեղավոր էր գտնում հայերին, միայն հայերին: Նա կարծում էր, թե հայերն իրենց հացը թարցնում են ու չեն տալիս իր զորքին:

— Ունե՞ք: — Նորից զոլեց նա: — Զեր զլուխները:

Ես տեսա, որ շահը ժանտացել է առավել քան լինում էր իր կռտվածությունը հիշելիս կամ կին տեսնելիս, որին տիրելու, վայելելու անզոր էր: Շահը խելագարի պես զլսատել էր տալիս ում պատահեր:

— Գլխատե՞լ: Բոլորին զլսատե՞լ:

Այս անգամ էլ դահճները սրերը մերկացրին ու ընկած հավաքվածների վրա: Մի կես ժամ հետո բոլոր հայ պատվիրակների զլուխներն արդեն կտրված էին ու գարսված պատի տակ: Գլուխների մի բլուր գոյացավ:

Աղա Մամադ շահը նստեց իր ամենի նժույզը և մեր պալատական մեծամեծներով շրջապատված, դուրս գալով միջնարերդից, սկսեց շրջապայիլ քաղաքում: Մի տեղ մի խումբ երեխաներ վաղեցին դեպի նա ահագին աղմուկ աղակով:

— Մեր ծնողներին մի՛ սպանեք: Խիզճ ունեցիր, թագավոր: Գթա՛ մեզ...

Աղա Մամադի ձին խրտեց երեխաների երամներից: Ես հասցրի բռնել ձիու սանձը, որ սա լթոցնի մեջքի տիրոջը:

— Դա՛վ, դա՛վ, — զոլեց շահը: — Զարդե՞լ...

Թիկնառահաճները թափվեցին երեխաների վրա ու սկսեցին
կռառել նրանց:

* * *

Աղա Մամադ շահը Իրրահիմ և ալիլ խանին զուգեց ար-
քայական պատիվներով:

— Ոչ ալահի, այլ իմ՝ Ան-Նասիրիս կամքն է, որ գու
Իրրահիմ և ալիլ խան, լինես Ղարաբաղի տերը, զառնաս
Շուշվա առյօնը ու այստեղից արթուն հակելով, փակ պա-
հես Իրանի հյուսիս դարպասները՝ հայերի ու գյավուր ուսուսի
առաջ: Կամքս է:

Իր բոլոր զորագետերի ու նայիր-նազիրների ներկայու-
թյամբ շահը հրովարտակի զիր հանձնեց անսպասելի շնորհ-
ներից հայված, զուր կտրած Իրրահիմին: Գետնին աւրած-
ված խանը հեկեկում էր՝ զլուխը նրա ուժերին քսելով:

* * *

Երեկոյան, կուշտ ու կուռ ուտելուց հետո, շահը ժունկի
եկավ նամակ-աղոթքի: Ես, իմ պարտականության բերումով,
ալթավայից նրա ձեռքերին զուր լցրի: Խոսեցի ոչ աստծու
ներշնչանքով, այլ՝ սեփական մտահոգությանս բերումով:

— Ով Ան-Նասիր տեր իմ: Թո մի մազն ինձ համար ազելի
թանկ է, քան մարգարեի մոր զոտին: Ինչ որ պիտի ասեմ,
հանուն քո է: Դու լպիտի Ղարաբաղն ու նրա այս Շուշին հանձ-
ների Իրրահիմ խանին: Դա արդար չէ: Ներող եղիր համար-
ձակությանս, ո՞վ հզոր, ո՞վ արդար: Ղարաբաղը պետք է
թողնեիր իր տերերին՝ հային:

Աղա Մամադը աղոթքի ոսկրե ու պղնձե իրերը շպրտեց
իմ զլխին:

— Դո՞ւ, ստոր ստրուկ, ինչպես ես համարձակվում
առարկել ինձ:

— Ես, ո՞վ հզոր, խոսում եմ արդարության անունից:

— Թո ականջները, ստո՞ր միրզա, երևում է, խորթացել
են իմ հրամանը լսելուց: Երդում եմ բոլոր իմամների անու-
նով, որ առավոտյան ես նորից հարյուր հայի զլուխ կկտրեմ
և զրանց վրա կդնեմ քոնք: Մաֆար Ալի սարտեկ: Չքվի՞ր աշ-
քիցս:

Թիշերը ես ծածուկ մտա թագավորի նեցարանը և խնե-

շարս մինչև կոթունը խրեցի նրա փխրուեր, լպրծած կուրծքը:
Եահը կիսով շափ բարձրացավ, զռաց.

— Թշգառակա՞ն, դու սպանեցիր իրանը:

Ես քմծիծաղեցի:

— Ես իմ վրեժը հանեցի, Ես հա՞յ եմ: Հա՞յ եմ...

Ես զուրս եկա ու հանգարտ գնացի հայոց ժամը, զռացի՝
սրբան ուժ ունեի:

— Վեր կացե՞ք: Աղա Մամադ շահը սատկած է: Շուշին
նորից մերեւ է, հայինն է: Վեր կացե՞ք, հայե՞ք, տերություն
արեք ձեր քաղաքին:

* * *

Լուսաբաց էր: Ես մտա Ավետարանոց գյուղի գերեզմանա-
տունը: Զեռիս մի ոչ մեծ, ոչ ծանր խաչքար էր, որ բարձ-
րացրի հանապարհի եզրից, ընկած տեղից: Խաչքարերի ան-
տառը սառը թացությամբ զիմավորեց ինձ: Ես՝ Սաֆար Ալի
Աբուլ Հասանս, որ իմ օրորոցի անունը մոռացել եմ, ծանր
քայլելով քարերի արանքներով, կանգ առա մի բարձր շիրմա-
քարի մոտ:

Կանգ առա ու հիշեցի: Տասու ինձ հաճախ էր բերում այս
քարի մոտ: — Աղօթիր այս քարին, սրա տակ քո հայրն է
թաղված: — Ծունկի եկա, պատյանից հանեցի այս խեն-
ջարը, որով սպանեցի Աղա Մամադ-շահին: Շշնջացի:

— Ես առա քո վրեժը, Հայաստա՞ն:

Սկսեցի աղիողորմ լաց լինել:

Գերեզմանատնից տեսա, թե ինչպես պարսից բանակի
վերջին զինվորն անզամ խելապատառ գուրս թուշվա
Դիզակյան դարպասից, ճողովրեց գեպի Երասխի եղեղնուտ-
ները: Նույն պահին Շուշվա Մոավյան դարպատով ներս մտավ
Մելիք-Ջումշուդը...

* * *

Գիշերը Շուշին նման է բրգածն քերծի վրա տափակած
հսկա կրիայի, որ կարծես լուսնի շարժվելու հետ ինքն էլ է
պատվում իր առանցքի շուրջը, փաթաթվելով շենքերի հսկա
ստվերներին: Այս պատրանքը սակայն ինչ-որ ահ էր պատ-
ճառում քաղաքին, անշուշտ, նաև ինձ:

Շուշին քեած էր: Երևի ողջ քաղաքում միայն արթուն էինք
ես և Աղամ Երկրորդ իշխանը՝ Մելիք-Մեծլումի որդին: Բայց

ո՞ւ, մենք մինակ չենք, մեզ հետ են նաև գրեթե պատանի Մելիք-Փրեյդոնը և տակավին ջահել Մելիք-Զումշուղ իշխանը: Քաղաքի վրա առաջվա պես ժածանվում էր Հայոց գրոշը:

— Ուրեմն այսպես,— ասաց Մելիք-Աղամ Երկրորդը: Մենք նորից, առաջվա պես ոչ մի թագավորի հպատակ չենք ու չենք լինի:

Թեև նա հազիվ քանմենկ տարեկան էր, սակայն պատկառազգու էր և այնքան նման նահատակ հորը, որ հնարավոր էր շփոթել նրա հետ: Մենք վաղուց էինք կանգնած բերդի մի աշտարակի նեղ, քարե մարտկոցում: Խոսում էինք կցկրտուր, նայում լուսնի կաթով ողողված քաղաքին, նրանից վերև ձգվող բարձր լեռնաշղթային, որի գագաթների ձյուները շողում էին կապույտ կայծպեծով:

— Ամեն ինչ պետք է վերջանար հանուն արդարության,— ասաց Մելիք-Զումշուղը: — Աղա Մամադ ջահը, վերջապես, սպանված է: Մենք նորից մեր երկրի տերն ենք: Հայաստանի Լոռու, Շիրակի, Գուգարքի, Գանձակի ու Աղստևի հայ մելիքական իշխանակետությունները մնացին անվնաս՝ իրենց ուժով ու տեղով: Միայն մեր նախիքեանն ու Երևանն են տակավին պարսիկ խաների լծի տակ:

Մելիք Զումշուղը, տանտիրոջ իրավունքով, գինի լցրեց կավե գավաթիները, որ տարողունակ էին, նաև զարդարված հին ժամանակները հիշեցնող նախշներով: Նման զավաթներ ու կուլաներ պատրաստում էին Խաչակապ գյուղի բրուտները:

— Մելիք Արովը մտադիր է գալ մեզ մոտ՝ Շուշի:

Մելիք Աղամը կռացավ ընկերների կողմը, խոսեց շշուկով, ասես երկուուր ուներ, թե իրենց գլխին թառած լուսինը լուր կտա ում որ:

— Իրահիմ խանը ապաստան է գտել թավրիզում, իրանի թագավոր հոշակված Փաթալի ջահի մոտ: Պարսկաստանի նոր ջահը նրան ընդունել է գրկարաց, խոստացել գալ Հայոստանի վրա, նրան հանձնել Ղարաբաղն ու Շուշին: Իմացեք: Պետք է կազմվել, պատրաստվել նոր կոփների:

Աշնան ցուրտ, մառախլապատ օրնը էին: Շուշի վրայով մերթ ամպեր էին սահում գեպի Երասխի կողմերը, մերթ ետ

գալիս Երասխի ջրերով ժանրացած, ու փաթաթվում լիռ-ներին:

Եռշին դարմանում էր իր վերքերը, մաքրում ապակա-նությունը, որ թողել էր ընդամենը քանչորս տարի առաջ այստեղ որջավորված Սարըզալու ցեղատոհմը: Հիմա գրա հետքն ու փոշին կտրված է Պարաբաղից: Խնձ աստվածային պարզեւ Ո՞վ աստված, վերջապես, ահա Եռշին շնչում է ասպարինության թարմությամբ: Երկինքը խաղաղ էր, թոնիք-ներից հացաբույր ծխեր էին բարձրանում:

* * *

Բայց ե՞րբ է հայի աստվածը հոգատար եղել հային, որ հիմա լիներ: Հայոց լեռների խաղաղությունը, ավա՞զ, ձմեռային արևի պես կարճ տեսնց: Փաթալի շահը, զանգված-զանգ-ված զորքերով՝ ուն թուխով, անցավ Երասխ գետն ու ժանր նստեց Ամարասի բնդարձակ գաշտահովովում:

Նորից կովակոշի տագնապներ հնչեցին:

Պարսից զորքի բարձրացրած ապականիչ փոշու ամպերը գեռ նոր էին իշել հայոց կանաչ արտերին, տեսերի կտորե-ներին, մթնացրել արագիլների բարձր բները, պղտորել հա-պիվ զուլալված ջրերը, երբ զորքը եռմեռաց, ալիք տվեց ու արշավեց Եռշու վրա:

Փաթալի շահը գոհ նայեց ուրացած դահրաման բեկին:

— Ինչպէ՞ս բռնեցիր:

— Բռնեցի, — զլուխ տվեց բեկը: Քո հորեղբայր Աղա-Մամադ-շահին սպանող Սաֆար Ալի Աբդուլ Հասան միրզան հայ է: Ես նրան գտա Ավետարանոցի գերեզմանատանը ճգնե-լիս: Բերել եմ:

Սաֆար Ալի Աբդուլ Հասանին կանգնեցրին շահի առաջ Եահը ցասումով հարցրեց:

— Դու արքունիքի սենեկապետ-քալանթար Սաֆար Ալի՞ն ես:

— Ե՞ս եմ:

— Դո՞ւ սպանեցիր Աղա Մամադ շահին, որ հորո՞ւ Բարս խանի եղբայրն էր:

— Ե՞ս, — աներեր պատասխանեց Սաֆար Ալի Աբդուլ Հասանը: — Այս, Ե՞ս:

— Եվ դու, տիրասպան, հայ ի ես:

— Հայ եմ՝ և տակով, և զլխով:

Եահի հրամանով Սաֆար Ալուն թրերով կտրտեցին, հոշութեցին անդամ անդամ և զցեցին պարիսպներից դուրս...

Դիշերը վանքի երկու պատանի արճողա նահատակի մարմններ կտրտանքները հավաքեցին ու ամփոփելով, գաղտնաբար թաղեցին Ամարաս զյուղի հին գերեզմանատանը, իրենք հեռացան դեպի լեռները:

* * *

Փաթալի շահի հարյուր հիսուն հազարանոց բանակը փաթաթվեց հայոց բերդին: Մկավեց մոլեզին պատերազմ: Պարսիկները խփում էին թնդանոթներից, վիմակործան մերժենաները դեմ անում պարիսպներին: Հայոց փոքրաթիվ զորախումբը եռանդով, առանց շփոթմունքի, հարվածում էր թրշնամուն: Շուշին զիմադրում էր: Մեծ ու փոքր պարիսպների վրա էին: Փաթալի շահը ներթափց գոռաց.

— Արյունով ներկելով Մե այգի կոչվող Ղարաբաղը, ևս նրան վարդի գույն պիտի տամ:

Պաշարումը, անհավասար ճակատամարտը, տևեց երկու ամիս: Ամբողջ վաթսուն օր հայերը դիմադրում էին ահեղ բանակին, բնկնելով երբեմն խումբ-խումբ, երբեմն մեկիկ-մեկիկ...

Սպառվեց վառողի վերջին բուռը, վերջին փամփուշտը Սպառվեցին նաև կովողները: Բոլորը ընկած... Ուր նայում ես՝ զիակ է...

Դիակները կոխերտելով Իրրահիմ խանը Փաթալի շահին մտցրեց Շուշի: Թուրի Արզումանը մի խումբ կտրիմների հետ ճեղքեց բերդի արևմայան պատը: Մզվեց գիշերային մարտիւ Մխրճվեց թշնամու մեջ և սկսեց ճամփա բանալ գեպի լեռները... Նրա հետ էին հիսուն-վաթսուն զինվոր միայն և երնջիկ տիկինը՝ իր գալրոցի սանուհիների հետ:

Փրկվածները լեռան գլխից ետ նայեցին: Գերագույն զլխավոր ժողովի վրա թեատարած փողփողում էր հայոց դրոշակը Հանկարծ դրոշակը բռնկվեց կրակի բռցերով: Հրեղեն այսունը եռմեռաց, ճեղքելով երկնքի խավարը: Բերդից հեռացածները ժունկի եկան,

— Մեր դրոշակն այրվո՞ւմ է...

— Մենք այլևս դրոշակ չունե՞նք...

— Ունե՞նք, — գղողացին լեռները: — Մեր դրոշակը հրե-
ղեն ձեռքերով մեզ է կանչում...

Երկար ժամանեակ խավարի մեջ երևում էր կրակի փա-
ռուը...

— Ե՞տ եկեք... Եկե՞ք...

Փախստականները տեղավորվեցին Բերդաձորի ժայռերի
մեջ: Թուրի Արզումանը կուտակեց իր հետ մեացած զինվոր-
ներին:

— Այրվող դրոշակը մեզ է կանչում: Մենք նորից կմտենք
մեր Շուշին: Իմացեք: Պատրաստվենք...

Մարդիկ ուղացան դեպի լեռնաշխարհի հեռավոր ծերպերը:

Երնջիկ տիկինը քարայրի գլխից գոշեց, անկելով իր մո-
գական գավազանը:

— Ելի՞ր, ո՞վ Արցախական աշխարհն հայոց: Ժայթօթիք
Հուրն Հայկա ի վերա թշնամոց բոց...

Նրա ուսումնարանի տղաներն ու աղջկերը հմայված
իրենց վարժուհի տիկինոցով կրկնում էին.

— Ելի՞ր... Ելի՞ր...

Լեռնաշխարհը փոթորկվում էր: Լեռների մեղքերում կու-
տակված զյուղերն ու շեները գորդում էին.

— Ելի՞ր... Ելի՞ր...

Աշխարհագորացին խմբեր շտապեցին դեպի Բերդաձոր:
Թուրի Արզումանի խնդրանքով կինը մետաքսից հյուսնեց նոր
դրոշակ՝ հայոց պատվի բոցը: Դա ամուսնուն հանձնելով,
ասաց.

— Մենք դրոշակ ունենք: Կունենանք միշտ:

Թուրի Արթումանը դրոշակը տնկեց բարձր ժայռի ծերպին
ու ծունկի գալով համբուրեց նրա ծոպերը:

Առավոտ լիներ, թե կեսօր, գիշեր, թե լուսարաց, Բեր-
դաձոր բերող արահետները եռմեռում էին: Գյուղերից ու շե-
ներից շատ ու բազում աշխարհագորային խմբերին էին գա-
լիս: Թուրի Արզումանը կնոքն ասաց.

— Պարսից թագավորը Ղարաբաղը նորից հանձնեց Իրրա-
հիմ խանին:

— Հավիտյա՞նս, — հարցրեց կինը:

— Ամեն ինչ կորած է, — ասաց Թուրի Արզումանը: — Դա-
րաբաղը գերված է:

— Ո՞չ, ո՞չ, — մերժեց Երնջիկը: — Ահա մենք կենդանի
ենք: Կարաբաղին ողջ է: Կարաբաղը գերված է, սակայն
ահա ապրում է մեր այս քարայրներում՝ իր նախնի օրորո-
ցում: Մենք պետք է փշրենք Կարաբաղի գերության շղթա-
ները:

* * *

Ոչ միայն Բերդաձորի պնդոցներում, այլև Մռով լեռան
խորշերում, Քաջաթաղի անտառներում, Զագեձորի լեռնա-
ծերպերում շարունակվում էին կուտակվել կովակովի ահա-
զանգին ելած շինականների անհամար խմբեր:

Խորից այսպես ու կրկին:

Հավաքվում էին, ձայն տալիս միմյանց:

— Է՞յ, հայե՞ր, Ելե՞ք, եկե՞ք: Փրկենք մեր Կարաբաղը,
մեր տունը, մեր պատիվը: Եկե՞ք...

Երբեմն գիշերային լուսիթյան մեջ լավում էր հովազի մոքե-
լոց:

— Խրիուփի շեկ հովազն է, — ամուսնուն ասաց Երնջիկ
տիկինը: — Հեռացել է իր որդից, եկել մեզ հարեան: Լսո՞ւմ
ես մռնչոցը...

Ամարասից փախած արեղաները Թուրի Արզումանին առա-
ցին.

— Թաղեցինք մեր գյուղի գերեզմանատանը:

— Ո՞ւմ:

— Սաֆար Ալի Հեյդար միրզային: Գզզված հազուստի
ծվենում, ընկույզի կեղեի մեջ դրած զիր տեսանը: — «Մար-
դիկ, հիշեցեք, ես հայ եմ: Ես հայ եմ»:

* * *

Առավոտ էր:

Թուրի Արզումանը բարձրից իշեցրեց հայոց զբոշակը,
զբեց պատանի Մելիք-Ազամ իշխանի ձեռքին:

— Բարձր պահիր, բա՛րձր... Գնում ենք:

Երնջիկ տիկինն իր սաներ-սանուհիներին դուրս բերեց
քարայրից:

— Գնո՞ւմ ենք...

Տղաները կարմիր էին հագած, աղջիկները՝ ճերմակ, ճիպ-ճերմակ պատանքներ, ձեռքներին սուր ու հրացան...

— Դեպի Շուշի...

Ճերմակ ճառագայթներով պսակված Երնջիկ տիկինը բարձրացավ մի ժայռի կատար, երկարակոթ չաճ վառեց, սկսեց տատանել:

— Արթնացի՞ր, հա՞յ: Արթնացի՞ր, հայի Ղարաբաղ...

Կրակեց հրացանից երկնքի երեսին:

— Ելե՞ք...

Լեռնախորշերում խլրտացին աշխարհազորի խմբերը, շտապեցին դեպի լեռան ուրս:

Թարձրացավ ժողովուրդը՝ ալիք-ալիք, ապա մըրիկ-մըրիկ իջավ դեպի Շուշի:

Այսպես՝ հեղեղ-հեղեղ հասան Շուշվա պարիսպներին: Երնջիկ տիկինն իր ու իր սանուհիների վրա նավթ լցրեց: Գա արեց բոլորովին հանգիստ, առանց աղոթք հիշելու: Աղջիկները խոնարհ մոտենում էին նրան:

Տիկինը վառեց նախ իրեն, ապա աղջիկներին: Բոլորը բոցավառ իրար ձեռք բռնած վազեցին դեպի Շուշի քաղաքը... Լեռների վրա սփովեց նրանց կանչը...

— Մեր Ղարաբաղը փրկե՞նք: Էհե՞յ...

Գյուղացիների խմբերը, նաև Թուրի Արզումանի զինվորները, նահատակի աղաղակներով վազեցին նրանց ետևից:

— Մենք կփրկենք քեզ, Ղարաբաղ...

Բոցով ու արյամբ ողողված ժողովուրդը մղվեց դեպի Շուշվա պարիսպները: Թուրի Արզումանը մազլցեց պատը, հայոց դրոշակն սկսեց ամրացնել: Քաղաքից հրացանով խփեցին նրան: Թուրի Արզումանը վերջին ճիգով դրոշակն ամրացրեց քարերի արանքում, ինքն ընկավ ու ամուր բռնեց նրա կոթունը:

Երեացին հայերի նոր խմբեր:

— Փրկենք մեր Ղարաբաղ...

Նանջը դղրդաց Ղարաբաղի հորիզոնում:

Այսպես՝ մինչև օրս...

Գրական-գեղարվեստական հրատարակություն

ՍԵՐԱՆ ԿԱԿԱՎԱԾԻ ԿԱՆՉԱՂԻՑՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

ՎՃԵՐ

Литературно - художественное издание

Серо Николаевич Ханзадян

ШУШИ

Роман

Եреван, издательство «Хорурдаки ցրո»

На армянском языке

Խեմքագրության վարիչ՝ Հ. Բ. Կառեկիլյան
Խմբագիր՝ Մ. Ա. Մկրտչյան
Նկարիչ՝ Ա. Ա. Խանզադյան
Գեղ. խմբագիր՝ Զ. Յ. Դանիջայյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան
Վերառութեաց սրբագրիչ՝ Զ. Ա. Կառապետյան

ИБ 6752

Հանձնված է շարժածքի 16. 08. 1990 թ.: Ստորագրված է տպագրության
06. 02 1991 թ.: Ֆորմատ 84×108^{1/32}, թուղթ՝ տպագր. № 21 Տպատե-
սակ՝ «Գրքի տպարան»: Տպագրության բարեր՝ 25,2 պար. տպ. ճամ.,
21,8 հրատ. ճամ.: Տպարանակ 50.000: Պատվեր 1303: Գիրը՝ 6 ու.
Ժնամիքը հրատարակություն, Երևան—9, Տեղյան 21:

Издательство «Нанри», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՀ Կայության նորմերին առնելիք մամուլի կոմիտեի № 1 տպարան,
Օքան, Արագերդյան փող. № 65:

Типография № 1 Комитета по печати при Совете Министров
Республики Армения, Ереван-10, ул. Алaverдяна, 65.

